

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК

HERALD
OF SOCIAL SCIENCES

1(658)

ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ
ЯНВАРЬ-АПРЕЛЬ
JANUARY-APRIL

**ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА
JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940**

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՄԵՆ ԲՈՐՈՒՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՎԱՐԴԱՆ
ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,
ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՀՐՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ,
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

ԱՐՇՐԱՆ ԱՎԱԿՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ԱԳԱՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՄԻՍՅԱՆ, ԳԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԿՅԱՆ, ՎԱՐԴԱՆ
ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԳԱԳԻԿ ԿԱՅԻՆՅԱՆ, ՐԱՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ,
ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ՎԱՉԵ ՕՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՕԳԱՆԵՍՅԱՆ, ԳԵՎՈՐԿ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ,
ՐԱՍԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՎԱՐՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՐԱՏՅԱՆ

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**
Responsible secretary **GAYANE HARUTYUNYAN**

Editorial Board

ARARAT AGHASYAN, ARTSRUN AVAGYAN, HAMLET GEVORGYAN, VARDAN DEVRIKYAN, ALBERT
KHARATYAN, VIKTOR KATVALYAN, RUBEN KARAPETYAN, VLADIMIR HARUTIUNYAN, VACHE
HOVAKIMYAN, NIKOLAY HOVHANNISYAN, GAGIK GHAZINYAN, ASHOT MELKONYAN, GEVORG
POGHOSYAN, RUBEN SAFRASTYAN, YURI SUVARYAN

© Լրագրի հասարակական գիտությունների
© Вестник общественных наук
© Herald of Social Sciences

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ 75-ԱՄՅԱԿԻՆ

Կլիմենտ Հարությունյան – Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի պատմական նշանակությունը և հայ ժողովրդի ավանդը հաղթանակում.....	13
--	----

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Մարության – Հայոց ցեղասպանության և Ռուանդայում կատարված ցեղասպանության նախապատրաստական փուլերի համեմատական վերլուծություն.....	40
Համո Սուքիասյան – Հայ-թուրքական բանակցությունները Բաթումում 1918 թ. հուլիսին.....	50
Վահրամ Բալայան – Շուշին ազգային առաջադեմ գաղափարների ձևավորման և տարածման կենտրոն (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ).....	62
Մհեր Հովհաննիսյան – Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի ներկայացվածության որոշ հարցեր համացանցի ադրբեջանական տիրույթում.....	80
Հայկազ Հովհաննիսյան – Խ. Լազարյանի գործունեությունը 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ.....	97
Վլադիմիր Ռուժանսկի – Իսրայելի ադրբեջանական լրբբին. ծագումնաբանությունը, ռեսուրսները և գործունեության հիմնական ուղղությունները.....	114
Հենրիկ Խաչատրյան – Մարզպանական Հայաստանի վարչաիրավական կարգավիճակը 428-630-ական թթ.	144
Յարութին Գեորգ Սելիմեան (Սուրիա, Հալէպ) – Հայ ատետարանական շարժման սկզբնաւորումը օսմանեան Թուրքիոյ մէջ.....	158
Նարեկ Գրիգորյան – Խորհրդարանական կառավարման համակարգի տեսագործական հիմնախնդիրները.....	168

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Վարդանուշ Պողոսյան – Տեղեկատվական իրավունքի սահմանները և սահմանափակման հիմքերը.....	178
--	-----

Անի Հարությունյան – Մտային պատճառականության խնդիրն արդի մոտեցումների համատեքստում.....	191
Լիաննա Անանյան – «Փափուկ ուժի» կիրառման չինական պրակտիկան.....	199

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Միհրան Գալստյան – Ընտանիքի կայունության հիմնախնդիրները աշխատանքային միգրանտների շրջանում.....	215
--	-----

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Էլմայան (ՌԴ, Մոսկվա) – Ֆինանսական շուկայի մեգակարգավորման զարգացման արդի միտումները.....	226
Միսակ Ավագյան – Աշխատանքային իմիգրացիայի կարգավորման գործընթացները Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում.....	242
Հայկազ Շահնազարյան – Մարդկային կապիտալը՝ որպես գիտելիքահենք տնտեսության ձևավորման գլխավոր գործոն.....	253

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Կարինե Առաքելյան – Անվանի պատմաբանի բանասիրական պրպտումները իր վերջին մենագրության մեջ.....	265
Զարուհի Ազիզբեկյան – Հեքիաթի ժանրակազմիչ առանձնահատկությունները.....	275

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սեդա Խանջյան – Հայտնի ու անհայտ Ալեքսեյ և Անաստասիա Դանդուրյաններ.....	286
Դավիթ Պողոսյան – «Նոր թանգարանագիտության» հայեցակարգային դրույթների արդիականությունը ՀՀ թանգարանային ոլորտում.....	298
Էմմա Զուգասյան (Ֆրանսիա, Մոնպելիե) – Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանի N 2010.108 ձեռագրի նորահայտ էջերը մասնավոր հավաքածուի մեջ. մանրանկարչի ինքնության բացահայտումը.....	313
Շուշանիկ Համբարյան – Մարկոս Պատկերահանի ծաղկած հինկտակարանային տեսարանները 1686 թ. Աստվածաշնչում.....	332
Էլենա Գորշունովա (Ուկրաինա, Կիև) – Արական ակադեմիական պարը բալետային դարաշրջանների փոփոխման ընթացքում.....	347

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Քրիստինե Մելքոնյան – «Case Study» և էսսեի մեթոդների կիրառումը մագիստրոսական խմբերում պատմության ուսուցման ընթացքում.....	358
---	-----

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ֆրինա Բաբայան – Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը (ըստ հարակից տարածքի՝ 2012, 2014 թթ. պեղումների արդյունքների).....	367
Աղավնի Ժամկոչյան – Ակնարկ միջնադարյան Հայաստանի ճարտարապետաշինարարական հարդարանքի մասին (ըստ Դվինի և Անիի պեղածո նյութերի).....	382
Կարեն Բայրամյան – Աշխարհբեկ Քալանթարի անտիպ նամակները Նիկողայոս Մառին.....	398

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Սուքիասյան – Տեղեկատվության և սոցիալական հաղորդակցությունների զարգացման ժամանակակից հիմնախնդիրները.....	414
--	-----

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անուշավան Զաքարյան – Դավիթ Անանունը Հովհաննես Թումանյանի մասին (Դ. Անանունի ծննդյան 140-ամյակի առթիվ).....	430
---	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աննա Ասատրյան – <i>Կոմիտասական</i>	437
Մանե Մկրտչյան – <i>Արարապ Աղասյան</i> , Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով.....	443

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Արսեն Բոբոխյան – Միհրականության, «վիշապ» քարակոթողների և լեռնային տեմենոսների շուրջ.....	446
---	-----

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Աստղիկ Բաբաջանյան – ՀՀ ԳԱԱ ՀԱԻ երիտասարդ գիտնականների 16-րդ միջազգային գիտաժողովը.....	452
---	-----

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Ռոբերտ Բաղդասարյան – Ավետիք Իսահակյանը և Ռուսաստանը (բանաստեղծի ծննդյան 145-ամյակի առթիվ).....	455
Արսեն Հարությունյան – Վիմագրերի հմուտ վերծանողը (Գագիկ Սարգսյանի ծննդյան 70-ամյակի առթիվ).....	460
Նազենիկ Սարգսյան – Էմմա Պետրոսյանի 85-ամյակի առթիվ.....	464

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Հասմիկ Հովհաննիսյան – Գործի նվիրյալը.....	469
--	-----

СОДЕРЖАНИЕ

К 75-ЛЕТИЮ ПОБЕДЫ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ

Климент Арутюнян – Историческое значение победы в Великой Отечественной войне и вклад армянского народа в победу.....	13
--	----

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Армен Марукян – Сравнительный анализ подготовительных этапов осуществления Геноцида армян и Руандийского геноцида.....	40
Амо Сукиасян – Армяно-турецкие переговоры в Батуме в июле 1918 г.	50
Ваграм Балаян – Шуши–центр формирования и распространения передовых национальных идей (вторая половина XIX – начало XX в.).....	62
Мгер Оганнисян – Некоторые вопросы презентации Нагорно-Карабахской проблемы в азербайджанском интернет-пространстве.....	80
Айказ Оганесян – Деятельность Х. Лазарева в период русско-персидской войны 1826-1828 гг.	97
Владимир Ружанский – Азербайджанское лобби Израиля: генезис, ресурсы и основные направления деятельности.....	114
Генрик Хачатрян – Административно-правовой статус марзпанской Армении в 428-630 гг.	144
Арутюн Геворг Селимян (Сирия, Алеппо) – Зарождение армянского евангелистского движения в османской Турции.....	158
Нарек Григорян – Теоретико-практические проблемы системы парламентского правления.....	168

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Вардануш Погосян – Границы информационного права и основания для его ограничения.....	178
Ани Арутюнян – Проблема ментальной казуальности в контексте современных подходов.....	191
Лианна Ананян – Китайская практика использования «мягкой силы».....	199

СОЦИОЛОГИЯ

Мигран Галстян – Проблемы стабильности семьи среди трудовых мигрантов.....	215
---	-----

ЭКОНОМИКА

Ашот Экмалян (РФ, Москва) – Современные тенденции в развитии мегарегулирования финансового рынка.....	226
Мисак Авагян – Процессы урегулирования трудовой иммиграции в странах-членах Евразийского экономического союза.....	242
Айказ Шахназарян – Человеческий капитал как главный фактор формирования экономики, основанной на знаниях.....	253

ФИЛОЛОГИЯ

Карине Аракелян – Филологические изыскания известного историка в его последней монографии.....	265
Заруи Азизбемян – Особенности жанрообразования сказки.....	275

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Седа Ханджян – Известные и неизвестные Алексей и Анастасия Дандуряны.....	286
Давид Погосян – Актуальность концептуальных положений «Новой музеологии» в музейной сфере РА.....	298
Эмма Чугасян (Франция, Монпелье) – Нововыявленные страницы рукописи n 2010.108 из Нью-Йоркского музея Метрополитен в частной коллекции: идентификация художника.....	313
Шушаник Амбарян – Ветхозаветные сцены, иллюстрированные Маркосом Паткераханом в Библии 1686 года.....	332
Елена Горшунова (Украина, Киев) – Мужской академический танец в смене балетных эпох.....	347

ПЕДАГОГИКА

Кристине Мелконян – Использование методов «Case Study» и эссе в магистерских группах при изучении истории.....	358
---	-----

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Фрина Бабаян – Гробница Св. Месропа Маштоца в Ошакане (по результатам раскопок смежной территории в 2012, 2014 гг.).....	367
Агавни Жамкочян – Очерк об архитектурно-строительном убранстве сооружений средневековой Армении (по материалам раскопок Двина, Ани).....	382

Карен Байрамян – Неопубликованные письма Ашхарбека Калантара Николаю Марру.....	398
---	-----

ЖУРНАЛИСТИКА

Гагик Сукиасян – Современные проблемы развития информации и социальных коммуникаций.....	414
---	-----

ПУБЛИКАЦИИ

Анушаван Закарян – Давид Ананун об Ованесе Туманяне (к 140-летию со дня рождения Д. Анануна).....	430
--	-----

РЕЦЕНЗИИ

Анна Асатрян – <i>Комитасакан</i>	437
Мане Мкртчян – <i>Арарат Агасян</i> , Комитас глазами армянских художников и скульпторов.....	443

КРИТИКА И БИБЛИОГРАФИЯ

Арсен Бобохян – О митраизме, каменных стелах «вишап» и горных темене.....	446
--	-----

НАУЧНАЯ ХРОНИКА

Астгик Бабаджанян – 16-ая международная конференция молодых ученых ИАЭ НАН РА.....	452
---	-----

НАШИ ЮБИЛЯРЫ

Роберт Багдасарян – Аветик Исаакян и Россия (к 145-летию со дня рождения поэта).....	455
Арсен Арутюнян – Опытный исследователь эпиграфических надписей (к 70-летию со дня рождения Гагика Саргсяна).....	460
Назеник Саргсян – К 85-летию Эммы Петросян.....	464

СЛОВО ПАМЯТИ

Асмик Ованнисян – Преданный делу.....	469
--	-----

CONTENTS

DEDICATED TO THE 75TH ANNIVERSARY OF THE VICTORY OF THE GREAT PATRIOTIC WAR

Kliment Harutyunyan – The Historical Significance of the Victory in the Great Patriotic War and the Contribution of the Armenian People to Victory.....	13
--	----

HISTORY AND POLITICAL SCIENCE

Armen Marukyan – Comparative Analysis of Preparatory Stages of the Implementation of the Armenian Genocide and Rwandan Genocide.....	40
Hamo Sukiasyan – Armenian-Turkish Negotiations in Batum in July 1918.....	50
Vahram Balayan – Shushi as the Center of Shaping and Spreading of National Advanced Ideas (the 2 nd half of the 19 th century- the beginning of the 20 th century)	62
Mher Hovhannisyan – On some Issues of Presentation of the Nagorno-Karabakh Problem in Azerbaijani Internet Space.....	80
Haykaz Hovhannisyan – Activity of Kh. Lazarev during the Russian-Persian War of 1826-1828.....	97
Vladimir Ruzhansky – Azeri Lobbi of Israel: Origin, Resources and the Main Direction of Activities.....	114
Henrik Khachatryan – Administrative and Legal Status of Armenian Marzpanate in 428-630s.....	144
Harutyun Gevorg Selimyan (Syria, Aleppo) – Genesis of the Armenian Evangelist Movement in Ottoman Turkey.....	158
Narek Grigoryan – Theoretical and Practical Issues of Parliamentary System of Governance.....	168

PHILOSOPHY AND LAW

Vardanush Poghosyan – Boundaries of Information Law and Grounds for Restriction.....	178
Ani Harutyunyan – The Problem of Mental Causation in the Context of Modern Approaches.....	191
Lianna Ananyan – Chinese Practice of Using “Soft Power”.....	199

SOCIOLOGY

Mihran Galstyan – The Problems of Family Sustainability Among Migrant Workers.....	215
---	-----

ECONOMY

- Ashot Ekmalian (RF, Moscow)** – The Modern Trends in the Development of Financial Market Megaregulation..... 226
- Misak Avagyan** – Processes of Settlement of Labor Immigration in Members Countries of the Eurasian Economic Union..... 242
- Haykaz Shahnazaryan** – Human Capital as a General Factor in the Formation of a Knowledge-Based Economy..... 253

PHILOLOGY

- Karine Arakelyan** – The Philological Searches of a Well-Known Historian in the Frames of His Last Monograph..... 265
- Zaruhi Azizbekyan** – The Genre-Generating Peculiarities of the Fairy Tale..... 275

CULTURE AND ART HISTORY

- Seda Khanjyan** – Known and Unknown Alexey and Anastasia Danduryans..... 286
- David Poghosyan** – The Relevance of Conceptual Basics of the «New Museology» in the Museum Work-Field of Armenia..... 298
- Emma Chookaszian (France, Montpellier)** – The Recently Discovered Pages of the Four Gospels N 2010.108 /Metropolitan Museum of New York/ in a Private Collection: Identification of the Artist..... 313
- Shushanik Hambaryan** – Old Testament Scenes Illustrated by Markos Patkerahan in the Bible of 1686..... 332
- Elena Gorshunova (Ukraine, Kiev)** – Male Academic Dance in the Course of Ballet Eras..... 347

PEDAGOGY

- Christine Melkonyan** – Application of the «Case Study» and Essay Methods in Master Groups during the Learning the Subject of History..... 358

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

- Frina Babayan** – The Tomb of St. Mesrop Mashtots in Oshakan, according to the Results of Excavations at the Adjacent Area (2012, 2014)..... 367
- Aghavni Zhamkochyan** – Overview of Architectural and Constructional Decorations of Medieval Armenia (according to the Excavated Materials of Dvin and Ani)..... 382
- Karen Bayramyan** – Unpublished Letters of Ashkharbek Kalantar to Nikolay Marr..... 398

JOURNALISM

- Gagik Sukiasyan** – Modern Problems of Development of Information and Social Communications..... 414

PUBLICATIONS

- Anushavan Zakaryan** – David Ananun about Hovhannes Tumanyan (In Commemoration of the 140th Anniversary of D. Ananun)..... 430

LITERARY REVIEWS

- Anna Asatryan** – The Komitassiad..... 437
Mane Mkrtychyan – Ararat Aghasyan, Komitas as Seen by Armenian Artists and Sculptors..... 443

CRITICISM AND BIBLIOGRAPHY

- Arsen Bobokhyan** – Towards Mithraism, «Vishap» Stelae and Mountainous Temene..... 446

SCIENTIFIC CHRONICLE

- Astghik Babajanyan** – The 16th International Conference of Young Scientists of the National Academy of Sciences of the Republic of Armenia..... 452

OUR JUBILEES

- Robert Baghdasaryan** – Avetik Isahakyan and Russia (On the Occasion of the 145th Anniversary of the Poet)..... 455
Arsen Harutyunyan – Skilled Translator of Epigraphs (On the Occasion of the 70th Anniversary Gagik Sargsyan)..... 460
Nazenik Sargsyan – On the Occasion of the 85th Anniversary of Emma Petrosyan..... 464

WORD OF MEMORY

- Hasmik Hovhannisyan** – The Devotee to the Work..... 469

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ 75-ԱՄՅԱԿԻՆ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՎԱՆԴԸ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ

Կլիմենտ Հարությունյան

Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ history@sci.am
Հոդվածը ներկայացվել է 17.02.2020, գրախոսվել է 17.02.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

1941 թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան ֆաշիստական Գերմանիան, խախտելով ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև 1939 թ. օգոստոսի 23-ի 10 տարի ժամանակով կնքված չհարձակման պայմանագիրը, առանց պատերազմ հայտարարելու, ուխտադրժորեն և հանկարծակի հարձակվեց Խորհրդային Միության վրա: Հիտլերի նպատակն էր կայծակնային պատերազմով մի քանի շաբաթվա ընթացքում ոչնչացնել Կարմիր բանակը, զավթել Խորհրդային Միության տարածքների զգալի մասը, ստրկացնել նրա ժողովուրդներին և ստեղծել գերմանական մեծ կայսրություն: Սակայն Հիտլերը չարաչար սխալվեց. պատերազմի առաջին իսկ օրվանից ֆաշիստական բանակը, որը մինչ այդ 1939-1940 թթ. հեշտ հաղթանակներ էր տարել Եվրոպայում, զավթել նրա զգալի մասը, հանդիպեց Կարմիր բանակի համառ և հերոսական դիմադրությանը: Պատերազմը շարունակվեց 1418 օր և ավարտվեց 1945 թ. մայիսի 9-ին՝ ֆաշիստական Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայով, Բեռլինի գրավումով: Մինչ այդ՝ 1945 թ. ապրիլի 30-ին, Հիտլերը ինքնասպան էր եղել:

Այդ պատերազմը շատ ծանր կորուստներ պատճառեց պատերազմող կողմերին: Միայն Խորհրդային Միությունը կորցրեց շուրջ 27 միլիոն մարդ¹: Կարմիր բանակի կորուստները կազմեցին 11 միլիոն մարդ, ֆաշիստական Գերմանիայինը՝ ավելի քան 13 միլիոն²:

¹ Великая победа над фашизмом 2014, № 2, 5.

² Великая Отечественная без грифа секретности 2009, 376.

1941-1945 թթ. ընթացքում Կարմիր բանակը Մոսկվայի, Ստալինգրադի, Կուրսկի, Կովկասի, Բելոռուսիայի Ղրիմի, Ուկրաինայի, Մերձբալթիկայի և Կարելիայի համար մղված ճակատամարտերում տարավ կարևոր հաղթանակներ և ֆաշիստական զավթիչներին դուրս շարտեց Խորհրդային Միության գրաված տարածքներից: Դրանից հետո Կարմիր բանակը շարունակելով մարտական գործողությունները, ֆաշիստական լծից ազատագրեց Բուլղարիան, Ռումինիան, Հարավսլավիան, Լեհաստանը, Հունգարիան, Ավստրիան և Չեխոսլովակիան, հակառակորդին ջախջախեց Գերմանիայում՝ գերմանական ժողովրդին փրկելով ֆաշիզմից:

Այդ հաղթանակը պատմական մեծ նշանակություն ունեցավ հետպատերազմյան տարիներին մարդկության զարգացման վրա: Կարմիր բանակը մարդկությանն ազատեց ֆաշիստական ստրկացման վտանգից, փրկեց մարդկային քաղաքակրթությունը հիտլերյան ռասսայական գաղափարախոսության ճիրաններից, օգնություն ցույց տվեց Եվրոպայի շատ երկրների ժողովուրդներին՝ ազատագրվելու ֆաշիստական ստրկությունից: Ֆաշիստական ստրկությունից փրկվեց նաև գերմանական ժողովուրդը:

Կարմիր բանակի՝ 1945 թ. օգոստոսի 9-ից մինչև սեպտեմբերի 2-ը տեղի ունեցած մարտական գործողությունների հետևանքով ջախջախվեց Գերմանիայի դաշնակից միլիտարիստական Ճապոնիայի միլիոնանոց բանակը Արևելյան Չինաստանում, Մանջուրիայում: Խորհրդային զորքերը ճապոնական զավթիչներից ազատագրեցին Հյուսիսարևելյան Չինաստանի և Հյուսիսային Կորեայի տարածքները, որոնք 1930-ական թթ. զավթել էին ճապոնացիները, Հարավային Սախալինը (որը Ճապոնիան Ռուսաստանից զավթել էր դեռևս 1904-1905 թթ. Ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ) և Կուրիլյան կղզիները: Հեռավոր Արևելքում միլիտարիստական Ճապոնիայի ջախջախումից հետո Չինաստանը, Կորեան, Վիետնամն ազատագրվեցին ճապոնական զավթիչների ստրկական շղթաներից և բռնեցին զարգացման նոր ուղի:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակը մեծ ազդեցություն ունեցավ նաև համաշխարհային գաղութատիրության համակարգի փլուզման վրա, զարթոնք ապրեց ազգային-ազատագրական պայքարը, որի հետևանքով անկախ պետություններ հռչակվեցին Հնդկաստանը, Պակիստանը, Բանգլադեշը, Բիրման, Ասիայի մի շարք այլ պետություններ:

Պատերազմում տարած հաղթանակի նշանակությունը հայ ժողովրդի համար

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակը պատմական կարևոր նշանակություն ունեցավ նաև հայ ժողովրդի համար: Հիշենք, թե ինչպես կայզերական Գերմանիայի թողտվությամբ նրա դաշնակից Օս-

մանյան Թուրքիան Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կազմակերպեց և Արևմտյան Հայաստանի տարածքում իրագործեց բնիկ հայ ժողովրդի հրեշավոր ցեղասպանությունը, որին զոհ գնաց ավելի քան 1,5 միլիոն մարդ, իսկ շուրջ 1 միլիոնն էլ դարձավ փախստական և սփռվեց աշխարհով մեկ: Դրանով իսկ հայությունը զրկվեց պատմական հայրենիքի մեծ մասից:

Այստեղ տեղին ենք համարում հիշել Վիլիելմ կայսրի արժանի հետնորդ Ադոլֆ Հիտլերի խոսքերը Երկրորդ համաշխարհային պատերազմը սկսվելուց մի քանի օր առաջ՝ 1939 թ. օգոստոսի 22-ին Օբերգալցբուրգում՝ Երրորդ Ռայխի բարձրագույն հրամանատարության հետ հանդիպման ժամանակ: Հիտլերը իր գեներալներին Լեհաստան ներխուժելու նախօրյակին³ հատուկ ցուցում տվեց, որ առաջիկա պատերազմում անխնա կոտորեն լեհերին, հրեաներին, ռուսներին, ուկրաինացիներին, բելոռուսներին, սլավոնական բոլոր ժողովուրդներին՝ ուշադրություն չդարձնելով հասարակական կարծիքի վրա. «Այժմ, մեր ժամանակներում այլևս ո՛վ է հիշում 1915 թ. Թուրքիայում հայերի բնաջնջման մասին», - ցինիկաբար նշեց Ֆյուրերը: Այդ խոսքերը այսօր էլ փորագրված են Վաշինգտոնում գտնվող հրեական Հոլոքոստի պատմության թանգարանի պատերից մեկի վրա: Առաջին անգամ Հիտլերի ասածը հանրությանը տեղյակ է պահվել պատերազմի գլխավոր հանցագործ նացիստ պարագլուխների դեմ իրագործված Նյուրնբերգի դատավարության ժամանակ (20 նոյեմբերի 1945 թ. – 1 հոկտեմբերի 1946 թ.), տպագրվել է «Նյու Յորք թայմս» թերթի 1945 թ. նոյեմբերի 24-ի համարում:

Ուստի պատահական չէր, որ Հայրենական մեծ պատերազմն սկսվելու հենց առաջին իսկ օրվանից հայ ժողովուրդը միասնաբար ոտքի կանգնեց պաշտպանելու իր ֆիզիկական գոյությունը, պատմական Հայաստանի 1/10 մասը կազմող Խորհրդային Հայաստանը, որովհետև նա պարզ գիտակցում էր, թե ինչ վտանգ է սպառնում իրեն, եթե պատերազմում թուրքերի դաշնակից ֆաշիստական Գերմանիան հաղթի Խորհրդային Միությանը: Չէ՞ որ հենց պատերազմի սկզբին Թուրքիան Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ էր տեղաբաշխել մինչև ատամները զինված 26 դիվիզիա (յուրաքանչյուր անձնակազմ բաղկացած էր 20-25 հազար մարդուց) և հարմար պահի էր սպասում ներխուժելու համար⁴:

«Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության մեջ բազմիցս ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին, - նշել է այն տարիներին ԽՍՀՄ թիվ առաջին թերթ «Правда»-ն իր՝ «Հայ ժողովուրդը Խորհրդա-

³ Ֆաշիստական Գերմանիան Լեհաստանի վրա հարձակվեց 1939 թ. սեպտեմբերի 1-ին:

⁴ Տե՛ս Շտեմենկո 1970, 69:

յին Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է» առաջնորդող հոդվածում, - նա գիտի, թե ինչ բան են կոտորածը, ավերը, սովը, բռնությունները: Հայ ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որ կազմակերպել էր արյունոտ չհաղթի նախորդ Վիլհելմ կայսրը՝ Առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին: Այդ նպատակով էլ, երբ արյունալի հրդեհի պես բռնկվեց պատերազմը, որն սկսել էր մարդակեր Հիտլերը Խորհրդային Միության դեմ, ամբողջ հայ ժողովուրդը մեկ մարդու պես ուռքի կանգնեց պաշտպանելու հայրենիքը»⁵:

Պատերազմում մասնակցած հայ ռազմիկների քանակը և հերոսների թիվը

Հայրենական մեծ պատերազմի սկսվելու պահին Կարմիր բանակի շարքերում ծառայում էին շուրջ 60 հազար հայ ռազմիկներ ու սպաներ, որից 40 հազարը՝ Խորհրդային Հայաստանից: Հետագայում զորակոչի և զորահավաքի հետևանքով նրանց թիվն աճեց մի քանի անգամ և հասավ շուրջ 500 000-ի, որից 300 000-ը՝ Խորհրդային Հայաստանից, 200 000-ը՝ ԽՍՀՄ մյուս հանրապետություններից: Եթե դրան գումարենք նաև ԽՍՀՄ դաշնակից պետությունների (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Կանադա և այլն) բանակներում և դիմադրական շարժման շարքերում մարտնչող շուրջ 100 000 հայորդիներին, հետևաբար պատերազմին մասնակցել է շուրջ 600 000 հայ, որոնցից ավելին քան 200 000-ը զոհվել են մարտերում⁶:

Կարմիր բանակի կազմում հայ ռազմիկները պատերազմի հենց առաջին օրվանից մասնակցել են մարտական գործողություններին՝ սկսած հեռավոր հյուսիսի Մուրմանսկի շրջանից մինչև Մերձբալթիկա, ԽՍՀՄ արևմտյան սահմաններով դեպի հարավ՝ մինչև Օդեսա-Ղրիմ: Հայ մարտիկները մարտնչում էին զինվորական բոլոր օկրուգների ու ռազմաճակատների տարբեր զորատեսակների կազմում:

Պատերազմի առաջին օրերին իրենց անմահ սխրանքով ամբողջ երկրով մեկ տարածվեցին Բրեստի ամրոցի կայազորի հերոս պաշտպանների անունները: 1941 թ. հունիսի 22-ից մինչև հուլիսի 20-ը նրանք դիմագրավեցին հակառակորդի մի քանի անգամ գերազանցող ուժերին՝ կաշկանդելով վերջիններիս առաջխաղացմանը: Բրեստի ամրոցի պաշտպանների մեծ մասը հերոսաբար զոհվեց, մի մասին հաջողվեց ճեղքել շրջապատման օղակը և միանալ յուրայիններին, իսկ մի մասն էլ վիրավոր կամ ուժասպառ վիճակում գերվեց թշնամու կողմից: Ամրոցի խիզախ պաշտպանների թվում էին Խորհրդային Միության ավելի քան 30 ազգերի և ազգությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ 500 հայեր: Ավելի քան 200-ը

⁵ Правда, 25 августа 1941.

⁶ Հայոց պատմություն 2010, 577:

զորակոչվել էին Կապանի շրջանից, որոնցից 76-ը մինչև պատերազմը ուսուցիչներ, դպրոցի տնօրեններ և ուսմասվարներ էին դպրոցներում⁷:

Հայ ժողովրդի զավակները պատերազմում աչքի են ընկել ոչ միայն բազմաքանակությամբ (շուրջ 600.000), այլև խիզախությամբ և մարտավարական բարձր ունակություններով: Ընդհանուր առմամբ, հայերից Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել 106 հոգու, որից 4-ին՝ Խորհրդա-ֆիննական պատերազմում (30.11.1939 թ. - 13.03.1940 թ.), 99-ին՝ Հայրենական մեծ պատերազմում (22.06.1941 թ. - 9 մայիսի 1945 թ.), 3-ին՝ հետպատերազմյան խաղաղ շինարարության տարիներին կատարած սխրանքների համար: Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը և լեգենդար օդաչու Նելսոն Ստեփանյանն այդ բարձր կոչմանն արժանացել են կրկնակի. հիշեցնենք, որ պատերազմի տարիներին Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման է արժանացել ընդամենը 115 մարդ (ադրբեջանցիներն ու վրացիները կրկնակի հերոս չեն ունեցել):

Հայ ռազմիկներից 26-ը պատերազմի տարիներին պարգևատրվել են Փառքի եռաստիճան շքանշանի՝ 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճաններով, և դարձել զինվորական Փառքի շքանշանի լրիվ ասպետներ, որոնց իրավունքները ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1967 թ. սեպտեմբերի 6-ի հրամանագրով հավասարացվել են Խորհրդային Միության հերոսների արտոնություններին: Պատերազմի տարիներին Փառքի շքանշանի 1-ին աստիճանով է պարգևատրվել ընդամենը 2500 մարդ⁸: Հարկ ենք համարում նշել, որ երբ 1943 թ. նոյեմբերի 8-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով հիմնադրվեց Փառքի եռաստիճանի շքանշանը, ապա Կարմիր բանակում առաջինը Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվեց սերժանտ Ժորա (Գևորգ) Ավանեսի Իսրայելյանը (17 նոյեմբերի 1943 թ.)⁹: Հետագայում խիզախ զինվորը պարգևատրվել է նաև Փառքի 2-րդ և 1-ին աստիճանի շքանշաններով և դարձել այդ շքանշանի լրիվ ասպետ¹⁰:

Սոցիալիստական աշխատանքի հայ հերոսները պատերազմում

Հայրենիքին մատուցած բացառիկ ծառայությունների համար պատերազմի տարիներին Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման է արժանացել 8 հայրորդի՝ Համո Յոլյան (3.06.1942 թ.), Անաստաս Միկոյան, Իվան Թևոսյան (30.09.1943 թ.), Բագրատ Հարությունով, Նիկոլայ Նարինյան, Բորիս Սալամբեկով, Անդրանիկ Խաչատրյան (5.11.1943 թ.) և

⁷ Арутюнян 2019, 70.

⁸ Ордена и медали СССР 1974, 90.

⁹ Красная Звезда, 20 декабря 1943.

¹⁰ Кавалеры ордена Славы трех степеней 2000, 232-233.

Լևոն Օրբելի (10.06.1945 թ.)¹¹: Հայրենական մեծ պատերազմի ակտիվ մասնակից, ատոմային և ջրածնային ռումբի ստեղծման գործում ներդրած մեծ ավանդի համար ակադեմիկոս Կիրիլ Իվանի Շոլկինին՝ Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյանին, շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի եռակի հերոսի կոչում (1949 թ., 1951 թ., 1958 թ.):

Շետպատերազմյան տարիներին Հայրենական մեծ պատերազմի մասնակից 3 հայ ականավոր գիտնականների՝ «Միգ» կործանիչ ինքնաթիռների գլխավոր կոնստրուկտոր, ինժեներական զորքերի գեներալ-գնդապետ Արտեմ Հովհաննեսի Միկոյանին (1956 թ., 1957 թ.), տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ատոմային և ջրածնային ռումբի ստեղծման ու փորձարկման, Մոսկվայի հակահրթիռային համակարգի ստեղծման աշխատանքների ակտիվ մասնակից, հրթիռամիջուկային վահանակի ստեղծման գլխավոր կոնստրուկտոր Սամվել Գրիգորի Քոչարյանցին (1962 թ., 1964 թ.) և ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ նախագահ Վիկտոր Համազասպի Համբարձումյանին (1968 թ., 1978 թ.) Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչումը շնորհվել է կրկնակի: Նրա առաջարկած ինվարիանտության սկզբունքը, որի հիման վրա մշակվել է պղտոր միջավայրում լույսի ցրման տեսությունը, պատերազմի տարիներին օգտագործվել է ռազմական նպատակներով, այդ տեսությունը հիմք է գիշերային պայմաններում գործող օպտիկական նշանացույցների ստեղծմանը:

1994 թ. հոկտեմբերի 11-ին Վիկտոր Համբարձումյանին շնորհվել է նաև Հայաստանի ազգային հերոսի կոչում: Հայրենական մեծ պատերազմի մասնակից մի շարք հայ ականավոր գիտնականների հետպատերազմյան տարիներին շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Նրանց թվում էին ակադեմիկոս, ինժեներ-էլեկտրատեխնիկ Անդրանիկ Ղևոնդի Իոսիֆյանը (1958 թ.), որը 1941-1975 թթ. Մոսկվայի թիվ 627 գործարանի տնօրենն էր. այդ տարիներին այնտեղ արտադրել են տորպեդներ, շարժական ռադիոկայաններ, սնուցող մարտկոցներ և այլն, ինժեներատեխնիկական զորքերի գեներալ-մայոր Անդրանիկ Մելքոնի Պետրոսյանցը (1962 թ.), որը պատերազմի տարիներին եղել է ԽՍՀՄ տանկային արդյունաբերության ժողկոմի տեղակալ, իսկ հետագայում՝ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի նախագահ, ակադեմիկոս, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ինժեներատեխնիկական զորքերի գեներալ-մայոր Հովհաննես (Իվան) Լյուդվիգի Կունյանցը (1966 թ.), որը պատերազմի տարիներին եղել է Կարմիր բանակի գլխավոր շտաբի փորձագետ և հսկայական աշխատանք կատարել զինված ուժերի հակաքիմիական պաշտպանության բնագավառում, Պարոյր

¹¹ Герои Социалистического труда 2001, 60, 121, 193, 201, 210, 231, 238, 252.

Հաբեթնակի Մաթևոսյանը (1967 թ.), որը 1942-1983 թթ. եղել է Ստալին-գրադի «Կարմիր հոկտեմբեր» մետալուրգիական խոշոր գործարանի գլխավոր տնօրեն, բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ավետիք Իգնատի Բուռնազյանը (1976 թ.), որը պատերազմի տարիներին համապատասխանաբար եղել է Հարավային, Հարավարևմտյան, Կալինինի, Մերձբալթյան 1-ին և 2-րդ Հեռավորարևելյան ռազմաճակատների ռազմասանիտարական վարչությունների պետ, իսկ պատերազմից հետո երկար ժամանակ վարել է ԽՍՀՄ առողջապահության նախարարի տեղակալի պաշտոնը, ակտիվորեն մասնակցել տիեզերական բժշկության ստեղծման ու զարգացման աշխատանքներին, բժշկական ծառայության գնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Իվանի Հարությունովը (1974 թ.), որն այդ տարիներին եղել է 3-րդ Ուկրաինական ռազմաճակատի գլխավոր վիրաբույժը, պատերազմից հետո դարձել ԽՍՀՄ բժշկական ակադեմիայի իսկական անդամ, Ուկրաինայի առողջապահության նախարարության գլխավոր նյարդավիրաբույժ, ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի Ն. Բուրդենկոյի անվան նյարդավիրաբուժության ինստիտուտի տնօրեն, բժշկական ծառայության փոխգնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Հակոբի Աբրահամյանը (1969 թ.), որն ակտիվորեն մասնակցել է Խորհրդա-ֆիննական պատերազմին, եղել Լենինգրադյան զինվորական օկրուգի հոսպիտալի ուրոլոգիական բաժնի պետ, իսկ Հայրենական մեծ պատերազմի տարիներին ղեկավարել Երևանի զինվորական հոսպիտալների ուրոլոգիական բաժանմունքները, այնուհետև եղել է ուրոլոգների համամիութենական ընկերության նախագահը և ուրիշներ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակից հայ մարշալներն ու ծովակալները

1945 թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 69 հայ գեներալ, մեկ ծովակալ (Հովհաննես Իսակով-Տեր-Իսահակյան) և մեկ ավիացիայի մարշալ (Սերգեյ Խուդյակով-Արմենակ Խանփերյանց): Հետպատերազմյան շրջանում պատերազմի մասնակից 83 հայորդու նույնպես շնորհվել է գեներալի կոչում: Նրանցից Ի.Ս. Իսակովին 1955 թ. մարտի 3-ին շնորհվել է Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում. ԽՍՀՄ պատմության ընթացքում այդ բարձր կոչմանն արժանացել է 3 հոգի: 1955 թ. մարտի 11-ին Խորհրդային Միության մարշալի կոչում է շնորհվել Ի.Ք. Բաղդամյանին, 1975 թ. ապրիլի 29-ին Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի կոչում է շնորհվել Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանին, իսկ 1980 թ. մայիսի 7-ին ինժեներական զորքերի կոչում է շնորհվել Սերգեյ Քրիստափորի Ազանովին:

Հետպատերազմյան տարիներին պատերազմի մասնակից հայ ծովային սպաներից 4-ին՝ Վալերիան Իոսիֆի Սուրաբեկովին, Իվան Խաչատուրի Գալուստովին, Աշոտ Առաքելի Սարկիսովին և Վլադիմիր Քրիստափորի Սահակյանին շնորհվել է փոխծովակալի (вицеадмирал), իսկ Արտավազդ Արամի Սագոյանին, Միհրան Կարապետի Պետրոսյանին, Զարմայր Մամիկոնի Արվանդովին և Վլադիմիր Սեմյոնի Փիրումովին՝ դերծովակալի (контр-адмирал) կոչում: Հարկ ենք համարում նշել, որ նրանց փառապանծ մարտական ավանդույթները այժմ հաջողությամբ շարունակում է Խաղաղօվկիանոսյան ռազմական նավատորմի գլխավոր հրամանատար, նավատորմի ծովակալ Սերգեյ Իոսիֆի Ավագյանը (ծնվել է 1957 թ. Երևանում):

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ զորավարներից ու զորահրամանատարներից ծովակալ Ի.Ս. Իսակովը եղել է ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի հրամանատարի 1-ին տեղակալ, ծովային գլխավոր շտաբի պետ, ավիացիայի մարշալ Սերգեյ Խուոյակով – Արմենակ Խանփերյանցը եղել է Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարի 1-ին տեղակալ՝ Ռազմաօդային ուժերի շտաբի պետ, իսկ բանակի գեներալ (հետագայում Խորհրդային Միության մարշալ) Հովհաննես Բաղրամյանը եղել է 1-ին Մերձբալթյան, ապա 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար: Հայ զինվորներից 3-ը եղել են բանակի հրամանատարներ. գեներալ-գնդապետ Ի.Ք. Բաղրամյանը՝ 11-րդ գվարդիական, գեներալ-լեյտենանտ (հետագայում գեներալ-գնդապետ) Միխայիլ Պարսելովը՝ 40-րդ համազորային, իսկ ավիացիայի մարշալ Սերգեյ Խուոյակով-Արմենակ Խանփերյանցը՝ 1-ին, ապա 12-րդ օդային բանակի հրամանատար:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին 8 հայորդի եղել է կորպուսի հրամանատար. գեներալներ՝ Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը՝ 50-րդ, ապա 73-րդ, Հայկ Հովհաննեսի Մարտիրոսյանը՝ 90-րդ հրաձգային, Բագրատ Իսահակի Սուշանյանը՝ 11-րդ գվարդիական հրաձգային, Վլադիմիր Ստեփանի Տամրուչին (Դեմուրջյան)՝ 22-րդ մեքենայացված, Տիմոֆեյ Վլադիմիրի Դեդեոյին (Դեդեոյան)՝ 2-րդ գվարդիական հեծյալ, իսկ գնդապետներ՝ Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը՝ 11-րդ գվարդիական տանկային, Արտեմ Կարապետի Պողոսովը՝ 20-րդ տանկային, փոխգնդապետ Համբարձում Մելիքի Մելիքյանը՝ 106-րդ հրաձգային կորպուսի հրամանատար: 28 հայորդի պատերազմի տարիներին եղել է դիվիզիաների, ավելի քան 100-ը՝ բրիգադի ու գնդի հրամանատարներ¹²:

¹² Арутюнян 2018, 645-648.

Հայկական դիվիզիաները

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Կարմիր բանակի կազմում գործում էր 6 հայկական ազգային դիվիզիա, որոնց շարքերում մարտնչել է ավելի քան 60 000 հայ ռազմիկ: Հայկական 76-րդ լեռնահրաձգային Կ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ դիվիզիան, որը կազմավորվել էր Հայաստանում 1920-1922 թթ. Հայաստանի առաջին հանրապետության բանակի, ապա Խորհրդային Հայաստանի Հայկական կարմիր բանակի վերակազմավորման հետևանքով, 1938 թ. վերակազմավորվել էր ոչ ազգային միավորման: Հայրենական մեծ պատերազմն սկսվելու պահին դիվիզիան 1941 թ. հունիս-հուլիսին, համալրվելով Հայկական ԽՍՀ մարդկային միջոցների հաշվին, կրկին ձեռք բերեց իր նախկին ազգային տեսքը: Դիվիզիայի 16 000-անոց անձնակազմից շուրջ 14 000-ը հայեր էին: Դիվիզիան 1941 թ. օգոստոս-սեպտեմբերին, համաձայն 1921 թ. փետրվարի 26-ին Մոսկվայում կնքված Խորհրդա-իրանական պայմանագրի, Անդրկովկասյան ռազմաճակատի 47-րդ բանակի կազմում մասնակցեց Խորհրդային զորքերի իրանական գործողությանը: Այդ գործողության հետևանքով նախ երկիրը մաքրվեց գերմանաֆաշիստական գործակալներից ու ձախողեց Իրանը Խորհրդային Միության դեմ ներքաշելու հիտլերյան պլանները, ապա նաև լուրջ նախազգուշացում էր ֆաշիստական Գերմանիայի փաստական դաշնակից Թուրքիայի ռեակցիոն կառավարությանը, որը հարմար պահի էր սպասում՝ իրականացնելու Անդրկովկաս ներխուժելու և այն տիրանալու իր վաղեմի երազանքները: Իր պատմական առաքելությունը հաջողությամբ կատարելուց հետո դիվիզիան սեպտեմբերի 10-ին մեկնեց ռազմաճակատ և նույն ամսի 26-ից Հարավարևմտյան ռազմաճակատի 38-րդ բանակի կազմում Ուկրաինայի Պոլտավատի մարզի տարածքում մասնակցեց պաշտպանական ծանր մարտերին: Հետագայում դիվիզիան հատկապես աչքի ընկավ Ստալինգրադյան ճակատամարտում (17 հուլիսի 1942 թ. – 2 փետրվարի 1943 թ.), վերակազմավորվեց 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի, պարզևատրվեց Լենինի շքանշանով: Այնուհետև գվարդիականներն ակտիվորեն մասնակցեցին Կուրսկի ճակատամարտին (5 հուլիսի – 23 օգոստոսի 1943 թ.), Բելոռուսական գործողությանը (23 հուլիսի – 29 օգոստոսի 1944 թ.)՝ արժանանալով Վիտքսկյան, իսկ գնդերը՝ Պոլոցկյան պատվավոր անվանը: Բելոռուսական գործողության ավարտից հետո 51-րդ գվարդիական Կ.Ե. Վորոշիլովի անվան Լենինի շքանշանակիր, կարմրադրոշ հրաձգային դիվիզիան մասնակցեց Մերձբալթիկայի ազատագրմանը և հաղթանակը դիմավորեց Բալթիկ ծովի ափերին՝ Լիտվայի տարածքում: Բելոռուսական և մերձբալթյան գործողությունների ժամանակ դիվիզիան մարտնչում էր 6-րդ գվարդիական բանակի կազմում, որը

մտնում էր բանակի գեներալ Ի.Ք. Բաղրամյանի հրամանատարությամբ գործող 1-ին Մերձբայթյան ռազմաճակատի մեջ:

Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան, որը կազմավորվել էր 1942 թ. փետրվարին Կերչի թերակղզում, Ղրիմի ռազմաճակատի 51-րդ բանակի կազմում մասնակցեց Կերչի ծանր մարտերին, որոնց ընթացքում հերոսաբար զոհվեց դիվիզիայի սիրված հրամանատար, գնդապետ Սիմեոն Գևորգի Զաքիյանը: Նա հետմահու պարգևատրվեց Լենինի շքանշանով, իսկ աճյունը տեղափոխվեց Երևան և ապրիլի 5-ին թաղվեց մայրաքաղաքի Ս.Մ. Կիրովի անվան մանկական զբոսայգում: Այնտեղ կանգնեցվեց նաև հերոս հրամանատարի հուշարձանը: 1942 թ. ապրիլի 19-ի տվյալներով՝ Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 9133 մարդուց, որից հայեր՝ 5744, ռուսներ՝ 1162, մնացածը՝ այլազգի: 1942 թ. մարտի 13-ից հայերեն լոյս էր տեսնում «Հայկական սնայաեր» թերթը: 1942 թ. մայիսի 7-20-ը դիվիզիան գնդապետ Հմայակ Գրիգորի Բաբայանի (հետագայում՝ գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս, զոհվել է 1945 թ. ապրիլի 21-ին Բելոլինի ճակատամարտում) հրամանատարությամբ, Կերչի թերակղզու Արմա-էլի շրջանում դաժան մարտեր էր մղում հակառակորդի թվով մի քանի անգամ գերազանցող ուժերի դեմ ու ծանր կորուստների գնով փակում թշնամու առաջխաղացումը դեպի Թաման: Երբ գերմանացիները 1942 թ. մայիսի 15-ին գրավեցին Կերչ քաղաքը, և դրությունը դարձավ անհուսալի, 51-րդ բանակի զորքերը թողեցին թերակղզին և տեղափոխվեցին Թաման: Թամանյան թերակղզի փոխադրված զորքերի մեջ էր նաև Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան, որը չնայած հսկայական կորուստներին, պահպանել էր իր մարտական դրոշները և անձնակազմի զգալի մասը: Սակայն 1942 թ. հունիսի 14-ին դիվիզիան ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի հրամանով կազմացրվեց:

Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիան, որը կազմավորվել էր 1941 թ. օգոստոս - 1942 թ. մարտ ամիսներին Էջմիածնում, ապա Երևանում և հայերենով հրատարակում էր «Հանուն հայրենիքի» թերթը, Անդրկովկասյան ռազմաճակատի 47-րդ, ապա 18-րդ բանակների կազմում՝ Նովոսիյսկ-Տուապսե շրջանում, մեծ զոհերի գնով փակեց գերմանաֆաշիստական զորքերի ճանապարհը դեպի Անդրկովկաս: Մարտերի մեջ մտնելուց առաջ՝ 1942 թ. սեպտեմբերի 25-ի դրությամբ, դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 11 463 մարդուց, որից հայեր՝ 11 125 (այսինքն՝ դիվիզիայի անձնակազմի 97 տոկոսը), ռուսներ՝ 210, ուկրաինացիներ՝ 67 և այլն: 1942 թ. հոկտեմբերի վերջին, նոյեմբերի սկզբին դիվիզիան առաջին գծից փոխադրվեց 18-րդ բանակի ռեզերվ՝ Տուապսե քաղաք, հանգստի ու համալրման համար: Չնայած վերոհիշյալ մարտերում դիվիզիան անձնագրահարբար կատարել էր մարտական առաջադրանքները, պահպանել մար-

տական դրոշները, անձնակազմի զգալի մասն ու տեխնիկան, 1942 թ. նոյեմբերի 22-ին կազմացրվեց. դիվիզիայի բազայի վրա մի քանի օր անց կազմավորվեց 7-րդ առանձին հրաձգային բրիգադը, որը 1943 թ. հունվարի 3-ից 47-րդ բանակի կազմում մարտերի մեջ մտավ Կրասնոդարի երկրամասում: Այրիլի վերջին և մայիսի սկզբին 7-րդ առանձին հրաձգային բրիգադը վերակազմավորվեց 23-րդ հրաձգային դիվիզիայի, որն աչքի ընկավ Ուկրաինայի և Լեհաստանի ազատագրման մարտերում, արժանացավ «Կիլյան» և «ժիտովիյան» պատվավոր անունների, պարգևատրվեց Կարմիր դրոշի և Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշաններով: Դիվիզիան իր մարտական ուղին ավարտեց Գերմանիայում՝ Էլբայի ափին:

Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիան, որը կազմավորվել էր 1941 թ. օգոստոս-1942 թ. փետրվար ամիսներին Հայկական ԽՍՀ Ստեփանավան, ապա Լենինական քաղաքներում և հայերեն հրատարակում էր «Մարտական դրոշ» թերթը, ռազմաճակատ մեկնեց 1942 թ. դեկտեմբերի 2-ին: Անդրկովկասյան ռազմաճակատի 44-րդ բանակի կազմում դիվիզիան դեկտեմբերի 15-ից մարտերի մեջ մտավ Մոզդոկի շրջանում: 1942 թ. դեկտեմբերի 2-ի դրությամբ դիվիզիան իր շարքերում ուներ 13 837 զինվոր ու սպա, որից հայեր էին 13 460-ը (միավորման անձնակազմի 97,3 տոկոսը): Մոզդոկի մոտից՝ Կուբանի, Ուկրաինայի, Մոլդովայի տարածքներով դեպի Ռումինիա, Հունգարիա, Ավստրիա ու Չեխոսլովակիա ձգվեց Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին: Մարտերում ցուցաբերած խիզախության ու քաջության համար դիվիզիան պարգևատրվեց Բոզդան Խմելնիցկու 2-րդ աստիճանի շքանշանով, արժանացավ Կիրովոգրադյան և Բրատիսլավյան պատվավոր անունների: Դիվիզիան կազմացրվեց 1945 թ. հուլիսի 2-ին Հունգարիայում:

Կովկասյան նախալեռներից՝ Գրոզնի քաղաքի մատույցներից՝ Կուբանի, Թամանի, Կերչի, Ղրիմի վրայով դեպի Լեհաստան և Գերմանիա ձգվեց Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին, որն ավարտվեց Բեռլինի գրավմամբ և Էլբա գետի ափ դուրս գալով, Ռայխստագի պատերի տակ հայ ռազմիկների հաղթական «Քոչարի» պարով: Դիվիզիային շնորհվեց «Թամանյան» պատվավոր անվանումը: Նա պարգևատրվեց Կարմիր աստղի, Կարմիր դրոշի և Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշաններով: Դիվիզիայի 154-րդ առանձին ինքնագնաց հրետանային դիվիզիոնը պարգևատրվեց Ալեքսանդր Նևսկու շքանշանով, իսկ 390-րդ և 400-րդ հրաձգային գնդերին շնորհվեց «Սևաստոպոլյան» պատվավոր անվանումը: Դիվիզիայի անձնակազմից 9 հայ մարտիկներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ 8-ը դարձան Փառքի եռաստիճան շքանշանի լրիվ ասպետ: Հերոսների թվում էին ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը և Սուրեն Առաքելյանը, որոնք իրենց

մարմնով փակեցին հակառակորդի գնդացրային ԴՅՕՏ-ի հրակնատը և կյանքի գնով նպաստեցին մարտական առաջադրանքի կատարմանը: Դիվիզիան կազմավորվել էր Երևանում 1941 թ. նոյեմբեր – 1942 թ. հունվար ամիսներին գնդապետ Սիմեոն Գևորգի Զաքիյանի հրամանատարությամբ, որին 1942 թ. փետրվարի 23-ին փոխարինել էր փոխգնդապետ Անդրանիկ Սարգսի Սարգսյանը: 1942 թ. հունվարի 12-ից հրատարակվում էր «Կարմիր զինվոր» թերթը (հայերեն): 1942 թ. հոկտեմբերի 14-ին դիվիզիայի հրամանատար է նշանակվում գնդապետ Արտաշես Արշակի Վասիլյանը, որը հերոսաբար զոհվում է 1943 թ. հունվարի 10-ին Կրասնոդարի երկրամասի Տիմաշևսկի շրջանի Պոդի բնակավայրի մոտ տեղի ունեցած գիշերային մարտում: 1943 թ. փետրվարի 19-ին դիվիզիայի հրամանատար է նշանակվում գնդապետ Նվեր Գևորգի Սաֆարյանը (1943 թ. դեկտեմբերի 21-ին նրան շնորհվում է գեներալ-մայորի կոչում), որն այդ պաշտոնը վարում էր մինչև պատերազմի հաղթական ավարտը: Ռազմաճակատ մեկնելու նախօրյակին՝ 1942 թ. օգոստոսի 8-ին, դիվիզիան իր շարքերում ուներ 11 782 զինվոր ու սպա, որից հայեր էին 11 674-ը (անձնակազմի 99,1 տոկոսը): 1945 թ. սեպտեմբերին դիվիզիան Գերմանիայից վերադարձավ Խորհրդային Հայաստան և տեղաբաշխվեց Երևանում, Քանաքեռում և Էջմիածնում: Այն գոյություն ունեցավ մինչև 1956 թ. ամռանը և համարվում էր Անդրկովկասյան զինվորական օկրուգի առաջատար զորամիավորումներից մեկը: Այդ ընթացքում նրա հրամանատարներն են եղել գեներալ-մայոր Նվեր Գևորգի Սաֆարյանը (մինչև 1946 թ. հունվար), այնուհետև՝ գեներալ-մայոր Հայկ Հովհաննեսի Մարտիրոսյանը (մինչև 1951 թ. հունվար), գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս Ասքանազ Գևորգի Կարապետյանը (մինչև 1952 թ. սեպտեմբեր), այնուհետև գնդապետ (1953-ից գեներալ-մայոր) Սերգեյ Արկադիի Միանսարովը:

Մեծ հայրենականի տարիներին կազմավորված հայկական ազգային զորամիավորումներից միայն մեկը՝ Հայկական 261-րդ հրաձգային դիվիզիան, չմեկնեց ռազմաճակատ և չմասնակցեց մարտական գործողություններին: Այն կազմավորվել էր Երևանում 1942 թ. դեկտեմբերին: 1945 թ. հունվարին դիվիզիայում հայերենով սկսվեց հրատարակվել «Մարտ հանուն հայրենիքի» թերթը: Այդ ժամանակ դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 8 981 մարդուց, որից հայեր էին 6 632-ը (միավորման անձնակազմի 73,8 տոկոսը): Այս կազմը աննշան փոփոխություններով պահպանվեց մինչև պատերազմի վերջը: Դիվիզիայի հիմնական խնդիրն էր պաշտպանել Խորհրդային Հայաստանի՝ Թուրքիայի հետ ունեցած պետական սահմանը, ինչպես նաև ռազմաճակատի համար երթային գումարտակների պատրաստումը և ուղարկումը: Դիվիզիան պատվով կատարել էր իր առջև դրված խնդիրը: Նրա շարքերում մարտական պատրաստություն ստացած

ավելի քան 10 000 հայ զինվոր մեկնեց գործող բանակ՝ արժանի ավանդը ներդնելով գերմանաֆաշիստական զավթիչների ջախջախման գործում¹³:

Բացի վերոհիշյալ ազգային զորամիավորումներից՝ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանում կազմավորվեցին կամ համալրվեցին 31-րդ, 61-րդ, 136-րդ (15-րդ գվարդիական), 138-րդ (70-րդ գվարդիական), 151-րդ, 236-րդ, 320-րդ և 406-րդ հրաձգային դիվիզիաները, որոնց անձնակազմերը ռազմաճակատ մեկնելու նախօրյակին զգալի չափով համալրված էին հայերով: Այսպես, օրինակ, Երևանում կազմավորված 61-րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմը 1941 թ. դեկտեմբերի դրությամբ 70 տոկոսով համալրված էր հայերով, որի համար այս միավորումը հաճախ համարվել է հայկական¹⁴:

Բացարձակապես հայերով էին համալրված Խորհրդային Վրաստանի տարածքում տեղակայված 28-րդ և 38-րդ պահեստային հրաձգային բրիգադները, որտեղ պատրաստվում էին երթային վաշտեր և ուղարկվում ռազմաճակատ: 28-րդ բրիգադում հայերենով հրատարակվել էին «Մարտական կադրեր» իսկ 38-ում՝ «Հայրենիք» թերթերը:

Հայ պարտիզանները

Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև թշնամու թիկունքում մարտնչող պարտիզանները, որոնց մեջ քիչ չէին նաև հայ ժողովրդի զավակները: Մոտավոր հաշվումներով միայն Ուկրաինայում և Բելոռուսիայում մարտնչել են ավելի քան 2000, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում՝ 500, Մերձբալթիկայում, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ 200, Ֆրանսիայում՝ 1200, Հունաստանում՝ 1000, Հոլանդիայում՝ 800 հայ պարտիզաններ: Հայ պարտիզանները մարտնչել են նաև Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Բուլղարիայում, Հարավսլավիայում, Իտալիայում և Գերմանիայում: Գոյություն ունեին պարտիզանական մի շարք ջոկատներ, նույնիսկ գունդ, որոնք կազմավորված էին առավելապես հայերից: Այսպես, օրինակ, Ուկրաինայում գերմանաֆաշիստական զավթիչների դեմ գործող լեգենդար Կովկասի պարտիզանական միավորման կազմում մարտնչել է 100 հայ ռազմիկից բաղկացած «Հաղթանակ» ջոկատը՝ Սերգեյ Հարությունյանի, գեներալ Նաումովի պարտիզանական միավորման կազմում՝ 250 հայից բաղկացած Անաստաս Միկոյանի անվան ջոկատը՝ Արամայիս Հովսեփյանի, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ Գերմանի անվան պարտիզանական բրիգադի 80 հայից բաղկացած 41-րդ ջոկատը՝ Արտյոմ Սա-

¹³ Հայկական դիվիզիաների պատմության մասին ավելի մանրամասն տե՛ս Հարությունյան 2002, 1-272:

¹⁴ Народный подвиг в битве за Кавказ 1981, 319.

ղումյանի, Ղրիմում գործող թիվ 10 պարտիզանական ջոկատը՝ Արամ Տերյանի, Կրասնոդարի երկրամասի Արմյանսկի շրջանի Ստեփան Շահումյանի անվան ջոկատը՝ Անդրանիկ Մալխասյանի, Լիտվայում գործող ջոկատը՝ Աշոտ Սարաբյանի, Ֆրանսիայում 2000 խորհրդային ռազմագերիներից կազմված պարտիզանական գունդը՝ Ալեքսանդր Ղազարյանի (գնդի անձնակազմում կար ավելի քան 1200 հայ), Հունաստանում՝ ավելի քան 1000 հայից կազմավորված «Ազատության պարտիզանական ջոկատը՝ Բաբկեն Ներսիսյանի, Հոլանդիայում շուրջ 800 հայ ռազմագերիներից բաղկացած, հոլանդական հակաֆաշիստական դիմադրական շարժմանն աջակցող խմբերը՝ Գրիգոր Միրզախանյանի, Անդրանիկ Միրզոյանի, Տիգրան Ալիխանյանի, Հմայակ Բադալյանի և Տելեմաք (Աշոտ) Մարտիրոսյանի գլխավորությամբ: Բելոռուսիայի տարածքում մարտնչած Չապակի անվան պարտիզանական բրիգադի հրամանատարը Խաչիկ Մաթևոսյանն էր, Ստալինի անվան պարտիզանական բրիգադի հրամանատարը՝ Սմբատ Արզումանյանը: Իրենց անձնագրիությամբ ու խիզախությամբ առավել աչքի ընկած հայ պարտիզաններից էին Հենրիկ Զաքարյանը, Վահան Աղաջանյանը, Վահան Գրիգորյանը (Բելոռուսիա), քույր ու եղբայր Հայկ և Թամարա Մարտիրոսյանները, Աշոտ Հայրապետյանը (Ղրիմ), Կրասնոդոնի «Երիտասարդ գվարդիա» ընդհատակյա կազմակերպության անդամներ Գեորգի (Ժորա) Հարությունյանը և Մայա Փեղիվանյանը (Ուկրաինա), Արտյոմ Պետրոսյանը, Հակոբ Իլիկյանը, Արթուր Բաբայանը (Չեխոսլովակիա), Հենրիկ Թումանյանը, Սերգեյ Կուսիկյանը, Արարատ Նավոյանը (Լեհաստան), Գևորգ Քոլոզյանը, Մկրտիչ Դաշտոյանը, Սերջիո Դավթյանը, Մխիթար Գրիգորյանը (Իտալիա), Բարթոլ Պետրոսյանը, Լևոն Տիտանյանը, Ստեփան Յաղջյանը (Ֆրանսիա) և շատ ուրիշներ¹⁵:

Հայրենական մեծ պատերազմում և ընդհանրապես Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակում իրենց ծանրակշիռ ավանդը ներդրեցին նաև սփյուռքահայերը: Պատերազմի տարիներին նրանց ճնշող մեծամասնությունը կողմնորոշվեց դեպի մայր հայրենիք, համախմբվեց ազգային ճակատի կազմակերպությունների մեջ և ստեղծեց մի շարք առաջադեմ կազմակերպություններ ու ընկերություններ. օրինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Հայկական առաջադիմական լիգա, Ամերիկահայերի ազգային խորհուրդ, Ֆրանսիայում՝ ֆրանսահայերի ազգային ճակատ, Սիրիայում, Լիբանանում, Իրանում, Եգիպտոսում, Եթովպիայում՝ Խորհրդային Միության բարեկամների ընկերություններ, Բուլղարիայում՝ Հայրենական ճակատ, Հունաստանում՝ Ժողովրդաազատագրա-

¹⁵ Հայ պարտիզանների մասին ավելի մանրամասն տե՛ս Խալեյան 1975, 79-225: Ղրիմի և Հյուսիսային Կովկասի պարտիզանական շարժման պատմությունից 1981: Թշնամու թիկունքում 1990: Ղազախեցյան 2004 և ուրիշներ:

կան ճակատ, հակաֆաշիստական, առաջադիմական կազմակերպություններ, որոնք պատերազմի ընթացքում հետևողականորեն բարեկամական քաղաքականություն էին վարում հոգուտ հորհրդային Միության: Սփյուռքահայերը ոչ միայն բարոյապես պաշտպանեցին մայր հայրենիքը, այլև նյութական օժանդակություն ցույց տվեցին Կարմիր բանակին: Սփյուռքահայերի հանգանակության շնորհիվ, որը կազմակերպել էր Հայ Առաքելական եկեղեցին, Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքյանի նախաձեռնությամբ (1945 թ. հունիսի 16-22-ին Հայ եկեղեցու ընդհանուր ժողովը միաձայն Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրեց Գևորգ 6-րդ Չորեքյանին) պատերազմի տարիներին կառուցվեցին «Սատունցի Դավիթ»՝ երկու, իսկ Իրանի և Եթովպիայի հայերի հավաքած դրամական միջոցներով՝ «Գեներալ Բաղդամյան» տանկային շարասյունները:

Հազարավոր սփյուռքահայեր ֆաշիզմի դեմ պայքարել են զենքը ձեռքներին՝ հակաֆաշիստական խմբավորման ԽՍՀՄ դաշնակից երկրների բանակների շարքերում: Միայն ԱՄՆ-ի զինված ուժերում մարտնչել է շուրջ 20 000 հայորդի: Նրանցից լեյտենանտ Երվանդ Դերվիշյանն արժանացավ Ամերիկայի հերոսի՝ «Կոնգրեսի ոսկե մեդալ» շքանշանի, որով պատերազմի տարիներին ԱՄՆ-ի բանակում պարգևատրվել է ընդամենը 87 մարդ: Ամերիկյան բանակի գեներալներ դարձան Ջորջ Մարտիկյանը և Հայկ Շեքերջյանը, սիրիական բանակում՝ գեներալ-լեյտենանտ Արամ Կարամանուկյանը, Բուլղարիայում՝ Գաբրիել Գաբրիելյանը: Շուրջ 30 000 հայեր էին մարտնչում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բանակներում, որոնց զգալի մասը զորակոչվել է Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից և այլ երկրներից:

Հազարավոր սփյուռքահայեր ընդգրկված էին ֆաշիստական Գերմանիայի զավթած երկրների դիմադրական պարտիզանական շարժման շարքերում: Իր անմահ սխրանքով հռչակվեց Միսաք Մանուշյանը, որը հետմահու արժանացավ Ֆրանսիայի դիմադրական շարժման հերոսի կոչման: Մանուշյանի խմբին մեծ օգնություն ցուցաբերեցին աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրի (2018 թ. Հայաստանի Հանրապետության ազգային հերոս) ծնողները՝ Մամիկոն և Քնար Ազնավուրյանները, քույրը՝ Աիդան, և անձամբ 20-ամյա Շառլ Ազնավուրը: Հանուն Ֆրանսիայի ազատագրության իրենց կյանքը զոհեցին հայ ժողովրդի անվեհեր զավակներ Լուիզա (Լաս) և Արփիար Ասլանյանները, Արբեն Դավթյանը և ուրիշները: Մանուշյանի խմբի խիզախ մարտիկներից էր Հովհաննես Ասրյանը, որը Փարիզի Էյֆելյան աշտարակից ցած նետեց ֆաշիստական դրոշը և պար-

զեց ֆրանսիականը: Հերոսը ծնվել է Արցախի Վանք գյուղում և սերում էր Գանձասարի վանքը կառուցած Հասան Զալալ-Դոլու տոհմից¹⁶:

Ավելի քան 300 հայորդիներ ընկան Հունաստանի հակաֆաշիստական դիմադրական շարժման և պարտիզանական պայքարի շարքերում: Նրանց թվում էին Անդրանիկ և Երվանդ Ղուկասյանները, Վահան Սաքալանը, Սիլվեստրո Ղալեյանը և շատ ուրիշներ:

Ամբողջ Բուլղարիայով մեկ թնդաց հերոսուհի պարտիզան Սաշկայի (Հերմինե Ռազգրադյանի) անունը, որին ֆաշիստները բռնեցին մատնությամբ և տանջամահ արեցին դաժան խոշտանգումներից հետո: Ֆաշիստները Վառնայում գնդակահարեցին և ծովը նետեցին Բուլղարիայի Հայրենական ճակատի ակտիվիստներ Կարապետ Խաչատրյանին, Հարություն Պողոսյանին, Հակոբ Պարոնյանին և այլոց:

Հարավսլավիայում պարտիզանական շարժման հռչակված հերոսներից էր Վարդուշ Սուքիասյանը (Սուքիասիչ):

Սփյուռքահայության միայն չնչին մասը՝ Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցության ղեկավարներից ոմանք, չմիացավ ազգային ճակատի առաջադիմական ուժերին: Նրանք փոխադրվեցին Բեռլին և այնտեղ ստեղծեցին «Հայ ազգային խորհուրդ»՝ Արտաշես Աբեղյանի նախագահությամբ: Խորհրդի անդամներից էին նաև Գարեգին Նժդեհը և Դրաստամատ Կանայանը՝ Դրոն: Չնայած խորհուրդը գործում էր ֆաշիստական Գերմանիայի զավթած՝ ԽՍՀՄ արևելյան շրջանների նախարարության ներքո, որի հիմնական նպատակը Կովկասում գերմանական գերիշխանության հաստատումն էր և այն իրականացնելու համար գերմանական բանակի կազմում հայկական, վրացական, ադրբեջանական և այլ ազգական լեգեոնների ստեղծումը, Նժդեհն ու Դրոն այդ գործին լծվեցին՝ ելնելով սովյ ճիրաններից ու անխուսափելի մահից հայ ռազմագերիներին համակենտրոնացման ճամբարներից փրկելու զուտ հայրենասիրական նկատառումներից: Նրանք շրջում էին ռազմագերիների ճամբարներով և հավաքագրում հայ զինվորներին ու սպաներին, նույնիսկ կոմունիստներին: Ընդհանուր առմամբ, հաջողվեց հավաքագրել 8-9 հազար մարդ և ստեղծել Հայկական լեգեոնի 10 գումարտակ: Նույնքան գումարտակ ստեղծվեց ադրբեջանցի ռազմագերիներից: Վրացիներից կազմավորվեց 11, իսկ Կովկասի լեռնականներից՝ 5 նման գումարտակ, յուրաքանչյուրում՝ շուրջ 800-ական մարդ: Միջին Ասիայի հանրապետությունների ներկայացուցիչներից ստեղծվեց Թուրքմենստանյան լեգեոնը՝ բաղկացած 20 հետևակային, 8 սակրային, 2 վարժական և 2 ոստիկանական գումարտակներից: Գերմանական բանակի ռազմագերիներից ստեղծվեց նաև գեներալ Վա-

¹⁶ Տե՛ս Մենուա ամսագիր 2014, N 5:

սովի Ռուսական ազատագրական բանակը, որն իր շարքերում ուներ ավելի քան 300 000 ռուս զինվոր ու սպա: Ստեփան Բանդերայի գլխավորած Ուկրաինական ազատագրական բանակը իր շարքերում ուներ ավելի քան 50 000 իռադի:

Հատկանշական է, որ ռայխսկանցիներ Հերման Գյորինգը իր այսպես կոչված «Կանաչ թղթապանակում» ֆաշիստական զորապետերին հրահանգել էր. «Կովկասում բնիկների (վրացիների, հայերի, թաթարների¹⁷ և այլն) և ռուսների միջև եղած հակասությունները պետք է օգտագործել հօգուտ մեր շահերի՝ հաշվի առնելով հայերի անբարյացակամությունը մեր նկատմամբ¹⁸:

Գերմանացիների նկատմամբ հայերի անբարյացակամության մասին նշել է նաև Ադոլֆ Հիտլերը: 1942 թ. դեկտեմբերին, անդրադառնալով ազգային լեգեոնների կազմավորման հարցին, նա հայտարարել է. «Չգիտեմ, թե ինչպես իրենց կպահեն վրացիները: Նրանք թուրքական ժողովուրդների թվին չեն պատկանում: Ես միայն մուսուլմաններին եմ վստահելի համարում: Այդ զուտ կովկասյան գումարտակների կազմակերպումը համարում եմ չափազանց վտանգավոր գործ, բայց մուսուլմանական զորամասեր ստեղծելու մեջ ոչ մի վտանգ չեմ տեսնում... Չնայած Ռոզենբերգի և զինվորականների հավաստիացումներին՝ հայերին նույնպես չեմ հավատում»¹⁹: Հիտլերի այս մտավախությունն անհիմն չէր: Նա լավ էր հասկանում, որ հայ ժողովրդի գիտակցության մեջ դեռ թարմ էին 1915 թ. ողբերգական իրադարձությունները, երբ թուրքական կառավարությունը, կայզերական Գերմանիայի անմիջական հովանավորությամբ, ծրագրավորված իրագործեց ծանրագույն հանցագործություն՝ ցեղասպանություն հայերի նկատմամբ: Չնայած Հիտլերի մտավախությանը, այնուամենայնիվ, գերմանական բանակի կազմում խորհրդային ռազմագերիներից ստեղծվեցին ազգային լեգեոններ: Անմիջապես նշենք, որ հայ լեգեոնականների բացարձակ մեծամասնությունը թշնամաբար էր տրամադրված ֆաշիստների նկատմամբ և մտադիր չէր կռվել նրանց համար: Հայ լեգեոնականների մեծ մասը գերմանական զինվորի համազգեստ էր հագել՝ շատ թե քիչ մեղմելու ռազմագերու թշվառ վիճակը, իսկ հարկ եղած պահին անցնելու ռազմաճակատի գիծը, միանալու Կարմիր բանակին կամ պարտիզաններին: Ինչպես վկայում են փաստերը, ռազմաճակատ փոխադրված լեգեոնական գումարտակների անձնակազմերի մեծամասնությունը կա՛մ միացավ պարտիզաններին (այսպես կազմակերպվեց Ուկրաինայում Անաստաս Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը), կա՛մ էլ անցավ

¹⁷ Թաթարներ էին անվանում ադրբեջանցիներին:

¹⁸ Լենտոն 1944, 17: Документы обвиняют 1945, вып. 1, 22.

¹⁹ Վերտ 1969, 536:

նազնաճակատի գիծը և շարունակեց մարտնչել Կարմիր բանակի շարքերում: Իսկ լեգեոնականների այն գումարտակները, որոնք տեղափոխվեցին Ֆրանսիա, հիմք դարձան խորհրդային պարտիզանական 1-ին գնդի համար: Այսպիսին էր նաև Հունաստան, Հոլանդիա, Իտալիա տեղափոխված հայկական մյուս գումարտակների ճակատագիրը: Այսպիսով, հիտլերականների ստեղծած Հայկական լեգեոնի ստորաբաժանումները ոչ միայն չձառայեցին ֆաշիստական վերմախտին, այլև վերածվեցին խորհրդային պարտիզանների, ֆրանսիական, հոլանդական, հունական դիմադրական շարժումների համալրման աղբյուրների: Ուկրաինայի և Բելոռուսիայի պարտիզանական երկրամասերի ազատագրումից հետո հարյուրավոր նախկին լեգեոնականներ, որոնք համալրել էին ժողովրդական վրիժառուների շարքերը, կրկին մտան Կարմիր բանակի շարքերը, մարտնչեցին գերմանաֆաշիստական զավթիչների դեմ և իրենց արժանի ավանդը ներդրեցին ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում²⁰:

Այստեղ հարկ ենք համարում հիշատակել մի փաստի մասին, որ ի հայտ եկավ 2019 թ. աշնանը ԱՊՀ երկրների ղեկավարների՝ Բիշքեկում տեղի ունեցած համաժողովի ժամանակ: Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը, խեղաթյուրելով պատմական փաստերը, հայերին մեղադրեց Գ. Նժդեհի արձանը Երևանում կանգնեցնելու համար, նշելով, որ նա ծառայել է ֆաշիստական բանակում: Ալիևը մոռացել է, որ գերմանական բանակի ադրբեջանական լեգեոնի կազմակերպիչ Ռասուլզադեի արձանը վաղուց կանգնեցվել է Գյանջայում:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում ծանրակշիռ ավանդ ունեցան նաև անտեսանելի ճակատի անլեգալ հետախույզները՝ գեներալ-լեյտենանտ Հայկ Հովակիմյանը, գեներալ-մայորներ Իվան Աղայանցը, Միքայել Ալավերդյովը, Վյաչեսլավ Կևորկովը, գնդապետներ Աշոտ Հակոբյանը, Գերասիմ Բալասանովը, Վյաչեսլավ Գուրգենովը, Խորհրդային Միության հերոս, գնդապետ Գևորգ Վարդանյանը, նրա կինն ու գործընկերուհին՝ Գոհար Փահլևանյան-Վարդանյանը և շատ ուրիշներ, որոնց սխրանքները հայտնի պատճառներով դեռևս լիովին չեն գաղտնագրվել և չեն լուսաբանվել հայ պատմագրության մեջ: Հանրությանը հայտնի է միայն 1943 թ. նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 1-ը Թեհրանում տեղի ունեցած դաշնակից 3 տերությունների՝ Ի.Վ. Ստալինի (ԽՍՀՄ), Ֆ.Դ. Ռուզվելտի (ԱՄՆ) և Ու. Չերչիլի (Մեծ Բրիտանիա) կոնֆերանսի նախօրյակին գեներալ-մայոր Իվան Աղայանցի գլխավորությամբ գերմանական հետախույզության չարամիտ պլանի վիժեցման գործողությունը: Թշնամու գործակիցները ցանկանում էին սպանել 3 տերությունների

²⁰ Ավելի մանրամասն տե՛ս Հարությունյան, Գարուն 1994, N 7, 68-70:

ղեկավարներին: Սակայն շնորհիվ Իվան Աղայանցի հետախույզների անվեհեր գործողության՝ տապալվեց թշնամու մտադրությունը: Այդ գործողության անմիջական ղեկավարը Գևորգ Վարդանյանն էր. խմբի անդամներից էին Օնիկ Փահլևանյանը, նրա քույրը՝ Գոհարը, և ուրիշներ:

Թիկունք

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում իր արժանի ավանդը ներդրեց նաև Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորությունը: Չնայած պատերազմական տարիների ծանր պայմաններին ու զրկանքներին, ռազմաճակատից անընդհատ ստացվող «սև թղթերին»՝ աշխատավորության հերոսական ջանքերի շնորհիվ պատերազմի տարիներին հանրապետությունում շահագործման հանձնվեց 30 նոր արդյունաբերական ձեռնարկություն, այդ թվում՝ ավիացիոն, կոմպրեսորների ժամացույցի, շարժիչավերանորոգման, ավտոդողերի և այլն: Արդյունաբերությունը յուրացրեց 300 նոր արտադրատեսակների արտադրություն, ներառյալ՝ 10 տեսակի զինամթերքի, ականանետների, ականների, ինքնաթիռների, ռետինատեխնիկական իրերի, կաուստիկ սոդայի, ծծմբական թթվի, հեղուկ քլորի, քրոմի անհիդրիդի, քրոմֆորմի արտադրությունը և այլն:

1942 թ. հոկտեմբերից Երևանի Խ. 447 գործարանը (հետագայում՝ Հայէլեկտրամեքենաշինական) սկսեց վերանորոգել վնասված ինքնաթիռներ: Այնուհետև գործարանում արտադրվեցին «Յակ-3» կործանիչ ինքնաթիռի թևեր ու շասսի, որոնք ուղարկվում էին Թբիլիսիի ինքնաթիռաշինական գործարան, որտեղ և հավաքվում էր վերջնական արտադրանքը: Պատերազմի վերջին տարում նույն գործարանը սկսեց «ՈւՏ-2Ս» ինքնաթիռի սերիական արտադրությունը, որոնք գործարանում փորձարկվելուց հետո ուղարկվում էին ռազմաճակատ:

Գյուղատնտեսության աշխատավորների հերոսական ջանքերով Հայրենական մեծ պատերազմի տարիներին ոչ միայն չկրճատվեցին գյուղատնտեսական մթերք արտադրությունն ու ցանքատարածությունների մակերեսը, այլև զգալի չափով ավելացան դրանք: Դեռ ավելին, գյուղատնտեսական ավանդական մշակաբույսերի հետ սկսեցին արտադրել մեծ քանակի նոր տեխնիկական մշակաբույսեր՝ ծխախոտ, ճակնդեղ, բամբակ, ինչպես նաև երկրորդ հացը՝ կարտոֆիլ: Մեծ չափով ավելացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները՝ հնարավորություն ընձեռելով հանրապետությունը ապահովելու սեփական հացով և, դրանից բացի, ներմուծումը հասցնելու նվազագույնի: Զգալի հաջողության հասան անասնապահները, որոնցից շատերն արժանացան կառավարական պարգևների: Գյուղատնտեսության աշխատողների խնայողությունների հաշվին կառուցվեցին «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյունը, «Սովետա-

կան Հայաստան» գրահագնացքը: Ընդհանրապես, պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի թիկունքն աշխատավորների խնայողությունների հաշվին, բացի վերոհիշյալից, կառուցվեցին «Ձանգեզուրի լեռնագործ», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», «Հայաստանի կոմերիտական», «Հայաստանի պիոներիայ», «Սովետական Հայաստան» տանկային շարասյունները, «Սովետական Հայաստան», «Հաղթանակ», «Գեներալ Բաղդամյան», «Երիտասարդ գվարդիա», «Սովետական արտիստ» ավիաէսկադրիլիոնները և այլն:

Հաղթանակի գործում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև գիտության, կրթության, արվեստի, գրականության առողջապահության բնագավառի աշխատողները: Չնայած դժվար իրավիճակին՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայաստանի մասնաճյուղի՝ «Արմֆանի» հիման վրա 1943 թ. նոյեմբերի 29-ին բացվեց Հայկական ԽՍՀ գիտնականների ակադեմիան, որի առաջին պրեզիդենտ ընտրվեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, փոխպրեզիդենտներ ընտրվեցին Վիկտոր Համբարձումյանն ու Վարդան Գուլբանյանը: Ակադեմիայի հիմնադրումը պատմական խոշոր երևույթ էր հայ իրականության մեջ: Հայ մտավորականությունն իր կարողություններն ամբողջովին նվիրեց հաղթանակի գործին:

Այսպիսով՝ Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրվանից մինչև նրա հաղթական ավարտը, Խորհրդային Հայաստանի աշխատավորների հերոսական աշխատանքի շնորհիվ, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում կանայք, տարեցներն ու դպրոցականները, պատերազմի հաշմանդամները, հանրապետությունը վերածվեց իսկական ռազմական ճամբարի, Կարմիր բանակի մարտական զինանոցի.«Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով անընդմեջ տասնյակ շարժակազմերով ռազմաճակատ էին ուղարկվում մարդկային համալրումներ, զենք, զինամթերք, սնունդ, հանդերձանք և այլն: Ռազմաճակատում մարտնչող հայ ռազմիկները մարտերի ամենաճանր պահերին և ամենուրեք մշտապես զգում էին թիկունքի աշխատավորների աջակցությունն ու հոգատարությունը, ստանում ինչպես նյութական, այնպես էլ բարոյական օգնություն: Նրանց բարոյական ոգու բարձրացման վրա հատկապես մեծ ազդեցություն ունեցավ «Հայ ժողովրդի նամակ-կոչը», որը 1943 թ. փետրվարին տարածվեց բոլոր ռազմաճակատներում, տպագրվեց «Правда» և «Известия» թերթերում:

Այդ հաղթանակում մեծ ավանդ ներդրեցին նաև ԽՍՀՄ պետական բարձրագույն մարմիններում, ռազմական արդյունաբերության և տնտեսական տարբեր բնագավառներում աշխատող հայ պետական գործիչները, գիտնականները, կոնստրուկտորները և այլք: Այսպես, Անաստաս Միկոյան՝ 1941 թ. հունիսի 30-ից մինչև 1945 թ. սեպտեմբերի 4-ը եղել է Պաշտ-

պանության պետական կոմիտեի անդամ. արտակարգ լիազորություններով օժտված այս պետական մարմնի ձեռքում էր կենտրոնացված ԽՍՀՄ ողջ իշխանությունը. Իվան Թևոսյան՝ 1940-1948 թթ. եղել է Սև մետալուրգիայի ժողկոմ, ապա նախարար. Արտեմ Միկոյան՝ 1940-1978 թթ. եղել է «Միզ» կործանիչ ինքնաթիռների ստեղծման կոնստրուկտորական բյուրոյի գլխավոր կոնստրուկտոր. Համո Յոլյան՝ 1940-1954 թթ. եղել է թիվ 92 հրետանային գործարանի տնօրեն: Ստեփան Ակոպով՝ 1941-1946 թթ. եղել է ԽՍՀՄ Միջին մեքենաշինության արդյունաբերության ժողկոմ. Սուրեն Աղաջանով՝ 1941-1945 թթ. եղել է թիվ 21 ավիագործարանի տնօրեն. Հարություն Տեր-Մարգարյան՝ 1941-1945 թթ. եղել է Նովոսիբիրսկի ավիացիոն գործարանի գլխավոր ինժեներ. Պարույր Մաթևոսյան՝ 1941-1971 թթ. եղել է Ստալինգրադի (այժմ՝ Վոլգոգրադ) «Կրասնի օկտյաբր» մետաղագործական գործարանի գլխավոր տնօրեն. Բագրատ Հարությունով՝ 1939-1946 թթ. եղել է ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների ժողկոմի առաջին տեղակալ. Անդրանիկ Իոսիֆյան՝ 1941-1945 թթ. եղել է Մոսկվայի թիվ 627 (էլեկտրամեխանիկական) գործարանի տնօրեն. Լևոն Օրբելի՝ բժշկական ծառայության գեներալ-գնդապետ, ակադեմիկոս, 1942-1946 թթ. եղել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի փոխարեզիդենտ, 1925-1950 թթ.՝ Լենինգրադի Ս.Ս. Կիրովի անվան ռազմաբժշկական ակադեմիայի ֆիզիոլոգիայի ամբիոնի պետ, 1943-1950 թթ.՝ նույն ակադեմիայի պետ. նրա եղբայրը՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին՝ 1934-1951 թթ. եղել է Լենինգրադի պետական էրմիտաժի տնօրեն, 1943-1947 թթ. Խորհրդային Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին արեզիդենտ, 1946 թ. մասնակցել է Նյուրնբերգի դատավարությանը՝ որպես մեղադրող կողմի վկա՝ մերկացնելով ֆաշիստ բարբարոսների հանցագործությունները պաշարված Լենինգրադի նկատմամբ, ինչպես նաև այլք:

Եզրակացություններ

Հայրենական մեծ պատերազմում պատմական հաղթանակ տարած իրենց պապերի, հայրերի և հարազատների մարտական հերոսական ավանդույթները սրբությամբ են պահպանում այսօր Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի անձնակազմերը: Արցախյան ազատագրական պատերազմում և առօրյա ռազմական ուսուցման ժամանակ աչքի ընկած զինվորներն ու սպաները պարգևատրվում են «Մարշալ Բաղրամյան», «Ծովակալ Իսակով», «Նելսոն Ստեփանյան» մեդալներով:

Հայաստանի Հանրապետության և Արցախի բոլոր քաղաքներում և գյուղերում կանգնեցված են Հայրենական մեծ պատերազմում զոհված հայորդիներին նվիրված հուշարձաններ, Խորհրդային Միության հերոսների

կիսանդրիներ են տեղադրված նրանց ծննդավայրերում: Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի, ծովակալ Հովհաննես Իսակովի և զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի մոնումենտալ արձաններն են զարդարում Երևանը: Արցախում Համազասպ Բաբաջանյանի անվան տանկային զորամասի տարածքում տեղադրված է տանկիստ զորավարի կիսանդրին: Արմավիրի ռազմական վարժարանը կոչվում է մարշալ Բաղրամյանի անունով: Արցախի Հաղորթի շրջանի Մեծ Թաղեր գյուղում, որն ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցի ծննդավայրն է, գործում է անվանի զորավարի տուն-թանգարանը, որի բակում կանգնեցված է նրա կիսանդրին: Երևանի ռազմաօդային համալսարանը կոչվում է Արմենակ Խանփերյանցի անունով: Ծովակալ Իսակովի անվան դպրոցին կից գործում է նաև հարուստ թանգարան:

Գրականություն

- Թշնամու թիկունքում 1990, Երևան, Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատ., 271 էջ:
- Լեոնտև Ա. 1944, Գյուրինգի «Կանաչ թղթապանակ», Երևան, «Հայպետհրատ», 64 էջ:
- Խալեյան Ե.Մ. 1975, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 334 էջ:
- Մենուա 2014, N 5:
- Հարությունյան Կ.Ա. 1994, «Գերմանական բանակի Հայկական լեգեոնը», Գարուն, N 7, էջ 68-70:
- Հարությունյան Կ.Ա. 2002, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Երևան, «Ձանգակ-97», 272 էջ:
- Հայոց պատմություն 2010, հ. 4-րդ, գիրք 1-ին, Երևան, «Ձանգակ», 800 էջ:
- Շտեմենկո Ս.Մ. 1970, Գլխավոր շտաբը պատերազմի տարիներին, գիրք 1-ին, Երևան, «Հայաստան», 544 էջ:
- Ղրիմի և Հյուսիսային Կովկասի պարտիզանական շարժման պատմությունից 1981, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 192 էջ:
- Ղազախեցյան Վ.Ն. 2004 Հայ պարտիզանները 1941-1945 թթ., Երևան, «Ձանգակ-97», 160 էջ:
- Վերտ Ա. 1969, Ռուսաստանը 1941-1945 թվականների պատերազմում, Երևան, «Հայաստան», 980 էջ:
- Арутюнян К.А. 2018, Армянский народ в Великой Отечественной войне 1941-1945 гг., Ереван, «Зангак», 768 с.
- Арутюнян К.А. 2019, Воины-армяне в боях за Белоруссию в Великой Отечественной войне, Ереван, «Зангак», 256 с.

- Документы обвиняют 1945, вып. 1, Москва, «Госполитздат», 440 с.
 Великая победа над фашизмом 2014, № 2, Москва, изд. «Московская типография», 598 с.
 Великая Отечественная без грифа секретности. Книга потерь 2009, Москва, изд. «Вече», 384 с.
 Правда, 25 августа 1941.
 Красная Звезда, 20 декабря 1943.
 Герои Социалистического труда 2001, Москва, «Профиздат», 626 с.
 Народный подвиг в битве за Кавказ 1981, Москва, «Наука», 408 с.
 Кавалеры ордена Славы трех степеней 2000, Москва, «Воениздат», 703 с.
 Ордена и медали СССР 1974, Москва, «Воениздат», 269 с.

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՎԱՆԴ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ

Կլիմենտ Հարությունյան

Հայ ժողովուրդը իր արժանի ավանդն է ունեցել Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում: Ընդհանուր առմամբ, պատերազմին մասնակցել է շուրջ 600.000 հայ, որից 300.000-ը՝ Խորհրդային Հայաստանից, 200.000-ը՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններից, 100.000-ը՝ Սփյուռքից: Հայերից 106 հոգի արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման (4-ը՝ Խորհրդա-ֆիննական պատերազմում (1939-1940), 99-ը՝ Հայրենական մեծ պատերազմում, 3-ը՝ հետպատերազմյան խաղաղ տարիներին): Հովհաննես Բաղրամյանը և Նելսոն Ստեփանյանն այդ բարձր կոչմանը կրկնակի են արժանացել: Բացի այդ, հայաստանցի 10 այլազգի արժանացել է հերոսի կոչման: 26 հայ զինվոր, պարգևատրվելով Փառքի շքանշանի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճաններով, դարձել է այդ շքանշանի լրիվ ասպետ: Հովհաննես Բաղրամյանը արժանացել է Խորհրդային Միության մարշալի, Հովհաննես Իսակովը՝ Խորհրդային Միության նավատորմի ծովակալի, Համազասպ Բաբաջանյանը՝ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի, Արմենակ Խանփերյանցը (Սերգեյ Խուդյակով)՝ ավիացիայի մարշալի, Սերգեյ Ազանովը՝ ինժեներական զորքերի մարշալի, 149-ը՝ գեներալի, 9-ը՝ ծովակալի կոչման: Պատերազմի տարիներին 8 հայորդու շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Կարմիր բանակի կազմում գործել է հայկական 6 ազգային դիվիզիա: Պատերազմում տարած հաղթանակում իրենց կարևոր դերն են կատարել թիկունքի աշխատավորները, սփյուռքահայերը, պարտիզանական և դիմադրական շարժման հայ մասնակիցները, Հայ Առաքելական եկեղեցին,

ԽՍՀՄ հայ պետական ականավոր գործիչներ, գիտնականներ, մտավորականներ:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակը հայ ժողովրդի համար ունեցավ պատմական նշանակություն: Հայտնի է, որ պատերազմի սկզբին ֆաշիստական Գերմանիայի փաստական դաշնակից Թուրքիան Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ էր կուտակել 26 սպառազեն դիվիզիա և հարմար պահի էր սպասում ներխուժելու և իրագործելու հայերի մի նոր ցեղասպանություն, որ 1915 թ. իրականացրել էր սուլթանական Թուրքիան Արևմտյան Հայաստանում: Սակայն գերմանաֆաշիստական զորքերի խոշոր պարտությունը Ստալինգրադյան ճակատամարտում ստիպեց Թուրքիային հետ քաշել սահմանից դիվիզիաները և հրաժարվել ստոր պլանից:

Բանալի բաներ՝ պատերազմ, հաղթանակ, բանակ, ժողովուրդ, դիվիզիա, ավանդ, հերոս:

ИСТОРИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ПОБЕДЫ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ И ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ

Климент Арутюнян

Армянский народ, вместе с другими народами СССР, принял самое активное участие в разгроме немецко-фашистских захватчиков и внес достойную лепту в историческую победу. В целом в войне участвовало около 600 000 армян: из них – 300 000 из Советской Армении и более 200 000 из других республик Советского Союза, около 100 000 – из зарубежных стран. Свыше 200 000 армян погибло на фронтах Великой Отечественной. Звание Героя Советского Союза присвоено 106 воинам, из них – 4 – в Советско-финской войне (1939-1940), 99 – в Великой Отечественной войне (1941-1945), 3 – за подвиги, совершенные в послевоенные мирные годы. Помимо этого звания Героя Советского Союза были удостоены 10 представителей других национальностей, лица, родившиеся в Армении либо до войны жившие на ее территории. Маршал Советского Союза И.Х. Баграмян и летчик Н.Г. Степанян стали дважды героями. В годы войны в составе Красной Армии действовали 6 армянских национальных дивизий: 89, 390, 408, 409, 261, 51-я гвардейская (бывшая 76-я армянская горнострелковая). Кроме перечисленных в Армении формировались или комплектовались 31, 61, 136 (15 гвардейская), 138 (70 гвардейская), 151, 236, 320 и 406 стрелковые дивизии.

В победу над фашизмом свой вклад внесли также труженики тыла. За время войны были сданы в эксплуатацию 30 новых промышленных пред-

приятый, в том числе авиационный, компрессорный, шинный и др. заводы. В годы войны было освоено производство около 300 видов новых изделий, в их числе 10 видов боеприпасов. Посильную помощь в разгроме фашизма оказали армянская диаспора, Армянская Апостольская церковь.

Победа над фашистской Германией в Великой Отечественной войне имела историческое значение также для армянского народа. Известно, что в начале войны фактический союзник Германии Турция сконцентрировала на границе с Советской Арменией 26 вооруженных дивизий, ожидая удобного момента для вторжения на ее территорию и организации нового Геноцида армян, подобно геноциду 1915 года, осуществленному в Западной Армении султанской Турцией. Однако крупное поражение немецко-фашистских войск в Сталинградской битве заставило Турцию отказаться от своих гнусных планов.

Ключевые слова – война, победа, армия, народ, дивизия, вклад, герой.

THE HISTORICAL SIGNIFICANCE OF THE VICTORY IN THE GREAT PATRIOTIC WAR AND THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THAT VICTORY

Kliment Harutyunyan

The Armenian people has had its worthy contribution to the victory of the Great Patriotic War. The total number of the Armenians who participated in the Great Patriotic War was 600.000; half of them were from Soviet Armenia, the others from different Soviet republics and 100.000 – from the Diaspora. More than 200.000 of them were killed in the battlefields. The Hero of the Soviet Union title was awarded to 106 Armenians; 4 of them were awarded in 1939-1940 during the Soviet-Finnish war, 99 – during the Great Patriotic War and 3 in post-war peace time. Hovhannes Baghramyan and Nelson Stepanyan have been awarded that high title twice. Ten representatives of other nationalities who were born or had worked in Armenia were awarded the title of the Hero of the Soviet Union. 26 Armenians were awarded the Orders of Glory of the 1st, 2nd and 3rd Class for their heroism in the Great Patriotic War and became the Complete Holders of the Order. Hovhannes Baghramyan was awarded the title of the Admiral of the Fleet of the USSR. Hamazasp Babajanyan was awarded the title of the Chief Marshal of Armoured Forces and Sergey Aganov was awarded the title of the Marshal of Engineering Corps and Armenak Khanperiyants (Sergey Khudyakov) – Marshal of Air Forces. During the years of the war 8 Armenians were awarded the title of the He-

ro of Socialist Labour. The Armenian Diaspora and the Armenian Apostolic Church were another contributors to the victory against the fascism.

The victory in the Great Patriotic War rescued the Armenian people from a new genocide. During the first years of the war, Turkey's actual ally Germany had accumulated 26 armed divisions near the borders of Soviet Armenia and was waiting for the convenient moment to cross the border and exterminate the Armenians. However, the victory of the Red Army in the Battle of Stalingrad forced the Turks to withdraw their troops.

Key words – war, victory, army, people, division, contribution, hero.



Ներսիս Սոտկանյան



Հովհաննես Իսակյով



Սերգեյ Ազանով



Հովհաննես Բաղդադյան



Հանազասպ Բաբաջանյան



Սերգեյ Իսոտյակով (Արմենակ Խանվերյանց)

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПОДГОТОВИТЕЛЬНЫХ ЭТАПОВ ОСУЩЕСТВЛЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И РУАНДИЙСКОГО ГЕНОЦИДА

Армен Марукян

Доктор исторических наук
Институт истории НАН РА
Армения, Ереван, Баграмяна 24/4
эл. почта: mararmts@yahoo.com

Статья представлена 03.04.2020, рецензирована 10.04.2020, принята к публикации
30.04.2020

Вступление

Преступные режимы, пытающиеся «решать» национальные и демографические проблемы проведением политики геноцида, особое внимание уделяют подготовительному этапу данной преступной политики. Прекрасно понимая, что без должной подготовки политика геноцида может провалиться и не привести к ожидаемым результатам, помимо идеологического и психологического обоснования своих будущих преступных действий, на подготовительном этапе преступные режимы занимаются созданием особых структур, иррегулярных военизированных формирований, на которые возлагается функция координации осуществления массовых погромов и этнических чисток в отношении будущей группы жертвы. В этом плане в подготовительных этапах Геноцида армян и Руандийского геноцида наблюдается много общего.

Создание иррегулярных военизированных формирований

Сторонником «окончательного решения» вопроса социальной группы *тутси* в Руанде выступала партия «Коалиция в защиту республики» (далее – КЗР), активно сотрудничавшая с правящей партией Национальное республиканское движение за демократию и развитие (далее – НРДДР). Характерно, что члены правящей партии также критиковали главу государства за излишне «мягкое» отношение к отрядам

РПФ. За «окончательное решение» вопроса тутси выступали также тайные общества «Аказу»¹ и «Амасасу»², члены которых, обеспокоенные возможным включением тутси в состав правительства, даже вступили в заговор против президента, который пытался сместить высокопоставленных радикалов в армейских рядах. Несмотря на превентивные действия президента Хабьяриманы, некоторые из деятелей тайных обществ продолжали оставаться на высоких государственных должностях, что позволило «Аказу» сохранить рычаги власти. На протяжении 1992 г. сторонники «окончательного решения» организовали серию убийств тутси в целях роста поддержки экстремистов со стороны группы хуту.

Следует констатировать, что ответственная за организацию Геноцида армян партия младотурок «Иттихад ве Тераки» («Единение и прогресс») изначально также представляла собой нелегальное тайное общество, структура которого была идентична структуре масонских лож*. Именно эта структура позволила младотуркам внедриться в госу-

¹ «Аказу» представлял собой группу радикально настроенных военных и политических деятелей из ближайшего круга президента, в том числе его ближайших родственников. Центральной ее фигурой была супруга президента – Агата. «Аказу» контролировала не только армию, правящую партию и административный аппарат, но и имела сильные позиции как в банковской сфере, так и в частных и государственных предприятиях, занимающихся экспортно-импортными операциями, производством и продажей кофе. Этими предприятиями финансировалась деятельность наиболее влиятельных СМИ Руанды. См. Кривушин 2012, 88-90.

² В начале 1992 г. в руандийской армии офицерами-экстремистами, выступающими за непримиримую борьбу против РПФ, было создано общество «Амасасу». Одним из влиятельных членов общества был полковник Т. Богосора, имевший тесные связи с окружением президента. Целью «Амасасу» была эффективная борьба против Арушских соглашений. Члены общества считали президента Хабьяриману предателем за то, что он подписал это соглашение, обвиняли в том, что он продал страну РПФ. Члены общества проводили последовательную пропаганду, настраивая военных против президента, и даже организовали покушение на премьер-министра, который ими также обвинялся в поддержке РПФ. Для устранения политических оппонентов «Амасасу» создало специальные «эскадроны смерти», деятельность которых координировалась со стороны Богосоры: Кривушин 2012, 90-92.

* На начальном этапе в структуру тайной организации (партии) «Иттихад ве Тераки» («Единение и прогресс») входили отделения, распределенные в разных частях империи, каждое из этих отделений состояло из 150 человек. Эти отделения подразделялись на 30 ячеек, в каждой из которых было по 5 человек, причем они знали только друг друга, не имея представления о других ячейках и их членах, и уж вовсе не знали о том, кто входит в состав ЦК партии. Все это делалось в целях конспирации, чтобы в случае

дарственные институты, в первую очередь, в османскую армию, а также проводить активную подпольную деятельность в различных областях империи, что привело к военному перевороту 1908 г.

В январе 1993 г. убийства тутси в Руанде достигли кульминации – тогда радикалами и местными жителями было уничтожено около 300 человек. Массовые убийства РПФ использовал как предлог для возобновления боевых действий в феврале этого же года³. На протяжении 1993 г. экстремисты импортировали мачете в гораздо большем количестве, чем было нужно сельскому хозяйству, и другие инструменты, которые могли использоваться в качестве оружия – бритвенные лезвия, пилы, ножницы, раздававшиеся, якобы, в целях гражданской обороны. Тот факт, что эти структуры в основном имели традиционные виды оружия – мачете, указывает не столько на нехватку огнестрельного оружия, сколько на то, что главной их мишенью считались гражданские противники внутри страны, а не боевые подразделения РПФ⁴.

Следует отметить, что отряды «гамидие» во время погромов армян 1894-1896 гг., а также подразделения «Особой организации» в процессе Геноцида армян также главным образом использовали не огнестрельное оружие, чем подтверждается, что эти насильственные меры были направлены не против вооруженных сил противника, а против мирного, безоружного населения⁵. Исходя из этого, вполне уверенно можно утверждать, что любые доводы относительно военной необходимости этих действий против мирного населения не выдерживают критики.

За один год резко возросла численность местных «сил самообороны» экстремистских групп хуту – от 10 000 почти до 30 000 бойцов⁶. Точно так же накануне Первой мировой войны с целью координации процесса насильственной депортации и истребления армянского населения империи младотурки создали «Особую организацию»

раскрытия или поимки какого-либо члена организации последний мог выдать только своих товарищей по ячейке. Каждый член партии был зашифрован под конкретным кодом, состоящим из трех цифр, в котором 1-ая цифра означала номер отделения, 2-ая – номер ячейки и 3-ья – порядковый номер члена в ячейке: Авакян 1999, 9.

³ Prunier 1999, 181-182.

⁴ Кривушин 2012, 96-97.

⁵ См. Тунян 1998, 96-97, 115-121.

⁶ Melvern 2004, 20.

(«Тешкилят-и Махсусе»)*, которая вскоре пополнилась за счет освобожденных из тюрем преступников и курдов, достигнув 30 000 человек⁷. Очевидно, что с помощью подобных формирований преступные власти стремились создать видимость своей непричастности к совершению массовых убийств представителей неугодных групп и снять ответственность с геноцидального государства.

До этого контролируемые властями военизированные формирования были созданы еще при режиме Абдул Гамида II. Под командованием курдских лидеров султан в 1891 г. сформировал иррегулярные подразделения «гамидие», которые под руководством турецких офицеров прошли соответствующую военную подготовку, а затем были использованы для осуществления массовых погромов армян в 1894–1896 гг. в Западной Армении⁸.

Аналогичные процессы имели место в Руанде в середине 1993 г., когда в правящей партии НРДДР сторонники идеологии «власти хуту» стали формировать радикальные боевые группы «интерахамве»**, а

* Тешкилят-и Махсусе («Особая организация») была создана на основе «Организации фидаинов», которая в структуре партии «Единение и прогресс» была своеобразной службой внутренней безопасности, отвечающей за дисциплину и нерушимость рядов партии. В «Организацию фидаинов» мог войти любой турок, проповедующий идеи туранизма, однако выйти из организации было практически невозможно. Поскольку ЦК партии «Единение и прогресс» ставил перед собой новые, более грандиозные и масштабные задачи – ликвидацию целого народа, было принято решение на основе «Организации фидаинов» начать процесс формирования более мощной структуры «Тешкилят-и-Махсусе» («Особой организации»), которая уже должна была финансироваться непосредственно из государственной казны. «Особая организация» подразделялась на два крыла: военное и гражданское. Военное крыло отвечало за реализацию подрывной, диверсионной деятельности на Кавказе, подстрекало тюркоязычные народы к восстанию против Российской империи. Это крыло руководило военным министерством во главе с Энвер пашой. На гражданское же крыло организации была возложена функция организации депортации и истребления армянского населения Османской империи. Гражданское крыло, в свою очередь, подразделялось на 4 отделения. Восточное отделение, которое возглавлял член ЦК партии «Единение и прогресс» Бехаэддин Шакир, должно было непосредственно заниматься уничтожением армян в шести губерниях Западной Армении. Общую координацию деятельности «Особой организации» осуществлял министр внутренних дел Талаат паша. См. Тунян 2002, 35–40:

⁷ Авакян 1999, 28.

⁸ Ущһրուղ 1997, 38–41:

** Интерахамве – вооружённое 30-тысячное ополчение хуту, печально прославившееся в качестве группы активистов геноцида в Руанде. После прихода к власти РПФ отряды «интерахамве» отступили на территорию Заира (Демократическая Республика Кон-

при партии КЗР были созданы отряды «импузамугамби»*. После прохождения военной подготовки эти вооруженные формирования рассматривались как вспомогательная сила руандийской армии⁹, которая впоследствии принимала активное участие в расправах над тутси¹⁰.

Влияние событий в Бурунди на предгеноцидную ситуацию в Руанде

Внутриполитические процессы соседней Бурунди сказались также на положении в Руанде, еще больше накалив обстановку и став катализатором предгеноцидной ситуации в этой стране. В июне 1993 г. в Бурунди на свободных многопартийных выборах впервые в истории страны президентом был избран умеренный политик хуту, который в октябре был убит группой офицеров тутси¹¹. Это привело к нападениям местных хуту на тутси, ответным репрессиям бурундийской армии в отношении хуту, вследствие чего было убито 150-200 тыс. человек, а 400 тыс. хуту бежали в Руанду¹².

Сторонники идеологии «власти хуту», выступавшие за «окончательное решение» вопроса тутси в Руанде, стали использовать события в Бурунди в качестве аргумента для обоснования невозможности достижения согласия между хуту и тутси. Радикальные силы подчеркивали, что доверять тутси нельзя, и все хуту, оставив в стороне межпар-

го), где сформировали повстанческие группировки. 18 декабря 2008 г. Международный трибунал по Руанде приговорил бывшего полковника руандийской армии Т. Багосору к пожизненному заключению, в том числе за организацию ополчения «интерахамве».

* «Импузамугамби» – одно из ополчений народности хуту во время геноцида 1994 г. в Руанде. Основано в 1992 г. как молодёжное крыло при партии КЗР, поддерживающей режим президента Хабьяриманы. Наряду с ополчением «интерахамве» отряды «импузамугамби» были ответственны за многочисленные преступления против человечности, совершённые в 1994 г. в Руанде. Обучались Президентской гвардией Ж. Хабьяриманы и военнослужащими вооруженных сил Руанды. После начала геноцида «интерахамве» и «импузамугамби» организационно слились и тесно сотрудничали в совершении вооруженных нападений на мирное население тутси, сохраняя различие лишь в форме одежды. После победы РПФ в июле 1994 г. группы «импузамугамби» вместе с ополчением «интерахамве» перебрались в Заир. Лидеры «импузамугамби» Международным трибуналом по Руанде в 2003 г. были осуждены за организацию и подстрекательство к геноциду и преступления против человечности.

⁹ ICTR/Bagosora 2008, 110.

¹⁰ Melvern 2004, 25.

¹¹ Prunier 1999, 199.

¹² Кривушин 2015, 23.

тийные разногласия, должны объединиться и действовать, пока не поздно¹³. Лидеры движения «власти хуту» начали вооружать отряды «интерахамве» огнестрельным оружием, в то время как ранее они имели лишь мачете и традиционное оружие¹⁴. 11 января 1994 г. командующий миротворческим контингентом ООН в Руанде генерал Р. Даллер отправил в штаб-квартиру ООН факс, в котором сообщал о полученной от высокопоставленного чиновника в правительстве Руанды информации о том, что ему поручено зарегистрировать всех тутси в Кигали, а также о планах раздачи оружия группировкам хуту с целью убийства бельгийцев в составе миротворческих сил¹⁵.

Политическая элита тутси своими действиями в соседней Бурунди фактически ускорила процесс консолидации политических сил хуту и приближение предгеноцидной ситуации для населения тутси в Руанде. Произошедшее с тутси в Руанде в некотором смысле было ответом хуту на то, что в отношении хуту пару месяцев назад совершили тутси в Бурунди. Конечно, этим никак не оправдывается или смягчается ответственность организаторов геноцида тутси – руандийского политического руководства хуту, но осуждение Руандийского геноцида не должно быть избирательным или односторонним, а должно повлечь за собой осуждение также Бурундийского геноцида в отношении хуту, который привел к ответному геноциду тутси.

Заключение

Обобщая, можно констатировать, что подготовительный этап Геноцида армян и Руандийского геноцида характеризовался созданием особых структур, иррегулярных военизированных формирований, на которые была возможно функция координации осуществления массовых погромов и этнических чисток в отношении будущей группы жертв. Но помимо общих черт, естественно, имеются и различия, свя-

¹³ Prunier 1999, 200.

¹⁴ Dallaire 2005, 143.

¹⁵ Генералу Даллеру было отказано в ходатайстве взять информатора и его семью под охрану, а после начала геноцида Генеральный секретарь ООН Кофи Аннан, уполномоченный отдать соответствующий приказ, ссылаясь на пункт 4 статьи 2 устава ООН, призывающий воздержаться от силового вмешательства в дела государств, запретил командующему миссией и членам миротворческой миссии действовать прежде, чем будут получены подробные инструкции сверху (Dallaire 2005, 143).

занные с особенностями политической системы и политической культуры двух преступных государств – Османской империи и Руанды, которые оставили свой отпечаток на подготовительных этапах геноцидов, совершенных в отношении армян и группы тутси.

Среди существенных различий подготовительных этапов двух геноцидов можно выделить то, что в отличие от Руандийского геноцида, в Османской империи или в какой-либо другой стране Геноциду армян не предшествовал процесс массового истребления турок будущей жертвой данного преступления – армянами. Можно предположить, что при наличии таких обстоятельств турецкая государственная пропаганда, которая на протяжении десятилетий создала концепцию отрицания и фальсификации Геноцида армян, непременно использовала бы этот факт в качестве аргумента в обосновании и оправдании осуществленного Геноцида армян.

Литература

- Սափրով Դ.Ա. 1997, Հայերի սարսափելի կոտորածները (1894–1896 թթ.), Երևան, ՀՀ ԳԱՀ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., 118 էջ:
- Авагян А. 1999, Геноцид 1915 г.: механизмы принятия и исполнения решений, Ереван, «Гитутюн», 199 с.
- Кривушин И.В. 2012, Подготовка Руандийского геноцида 1994 года: организационные центры и инструменты, «Исторический журнал: научные исследования», Москва, N 4, (10), с. 88-98.
- Кривушин И.В. 2015, Сто дней во власти безумия. Руандийский геноцид 1994 г., Москва, изд. «Высшая школа экономики», 530 с.
- Тунян В.Г. 2015, «Особая организация» и Геноцид армян 1915 г., «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», Երևան, 2002, N 6, с. 35-48.
- Тунян В. 1998, Россия и Армянский вопрос, Ереван, изд-во Музея-института Геноцида армян НАН РА, 240 с.
- Dallaire R. 2005, Shake Hands with the Devil: The Failure of Humanity in Rwanda, London: Arrow Books, 592 p.

ICTR/Bagosora – The prosecutor v. Theoneste Bagosora, Gratién Kabiligi, Aloys Ntabakuze, Anatole Nsengiyumva. Case No. ICTR-98-41-T. Judgement and sentence. 18 December 2008.

Melvern L. 2004, Conspiracy to Murder: The Rwandan Genocide, Verso, Revised edition, 396 p.

Prunier G. 1999, The Rwanda Crisis: History of a Genocide, 2nd, Kampala: Fountain Publishers Limited, 389 p.

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒԱՆՂԱՅՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արմեն Մարուքյան

Հայոց ցեղասպանության և Ռուանդայում կատարված թուփսիների ցեղասպանության նախապատրաստական փուլերում նկատվում են ընդհանրություններ, որոնք պայմանավորված էին հանցավոր իշխանությունների կողմից հատուկ կառույցների, ռազմականացված ոչ կանոնավոր կազմավորումների ստեղծմով, որոնց վրա դրված էր զոհ-խմբերի զանգվածային ջարդերը և էթնիկ զտումները համակարգելու գործառույթը: Այս ընդհանրություններից բացի, բնական է, որ երկու ցեղասպանությունների նախապատրաստական փուլերում առկա են նաև տարբերություններ, որոնք բխում են այդ հանցավոր պետությունների՝ Օսմանյան կայսրության և Ռուանդայի քաղաքական համակարգերի և քաղաքական մշակույթների առանձնահատկություններից:

Ի տարբերություն Ռուանդայի, Հայոց ցեղասպանությունից առաջ ո՛չ Օսմանյան կայսրությունում և ո՛չ էլ մեկ այլ երկրում հանցագործության զոհերի՝ հայերի կողմից ոճրագործ խմբին՝ թուրքերին ոչնչացնելու գործընթաց տեղի չի ունեցել: Անկասկած, նման հանգամանքների առկայության դեպքում թուրքական պետական քարոզչությունը, որը տասնամյակներ շարունակ զբաղված է Հայոց ցեղասպանությունը կեղծելով ու ժխտելով՝ այդ փաստարկն անպայման կոգտագործեր հայերի ցեղասպանության իրագործումը հիմնավորելու և արդարացնելու համար:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, «Թեշքիլաթ-ը Մահուսե» (Հատուկ կազմակերպություն), Ռուանդայի ցեղասպանություն, թուփսի, «Ակազու» և «Ամասասու» գաղտնի կազմակերպություններ, «ինտերահամվե» և «հմպուզամուզամբի» ռազմականացված կառույցներ:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПОДГОТОВИТЕЛЬНЫХ ЭТАПОВ ОСУЩЕСТВЛЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И РУАНДИЙСКОГО ГЕНОЦИДА

Армен Марукян

Преступные режимы младотурок в Османской империи и власти хуту в Руанде тщательно готовились к запланированным ими геноцидам, поэтому в центре их внимания был именно подготовительный этап этих преступлений, которым была обусловлена эффективность осуществления данных преступных действий. Исходя из этого, данными режимами на подготовительном этапе были созданы особые структуры – иррегулярные военизированные формирования, которым предстояло координировать процесс массовых погромов и этнических чисток в отношении будущих жертв. В этом отношении в подготовительных этапах Геноцида армян и Руандийского геноцида наблюдается очень много общего.

Однако в отличие от Руандийского геноцида, которому предшествовал процесс массового истребления представителей группы хуту со стороны тутси в соседней Бурунди, до Геноцида армян ни в Османской империи, ни в какой-либо другой стране турки армянами не истреблялись. В противном случае при наличии таких фактов турецкая государственная пропаганда непременно использовала бы этот аргумент для обоснования и оправдания Геноцида армян.

Ключевые слова – Геноцид армян, Османская империя, «Тешкилят и махсусе» (Особая организация), Руандийский геноцид, тутси, тайные общества «Аказу» и «Амасасу», военизированные структуры «интерахамве» и «импузамугамби».

COMPARATIVE ANALYSIS OF PREPARATORY STAGES OF THE IMPLEMENTATION OF THE ARMENIAN GENOCIDE AND RWANDAN GENOCIDE

Armen Marukyan

In the preparatory stages of the Armenian Genocide and the Tutsi Genocide committed in Rwanda, there are similarities. They are conditioned by the creation of special structures, irregularly militarized formations by the criminal authorities,

which were tasked with coordinating the process of massacres and ethnic cleansing of the victim-groups. In addition to the generalities, it is natural that in the preparatory stages of the two genocides there are also differences related to the peculiarities of the two criminal states, the Ottoman Empire, the political system of Rwanda, and the political culture.

One of the significant differences in the preparatory stages of the two genocides is that unlike the Rwandan Genocide, in the Ottoman Empire or in any other country, the Armenian Genocide was not preceded by the mass extermination of the Turks by the future victim of the crime, the Armenians. It is possible to assume that in the presence of such circumstances the Turkish state propaganda which for decades created the concept of denial of falsification of the Armenian Genocide by all means would use this argument for justification of the Armenian Genocide.

Key words – Armenian Genocide, Ottoman Empire Teskilat-i Mahsusa (“Special organization”), the Rwandan Genocide, Tutsi, secret organizations "Akazu" and "Amasasu", militarized structures "Interhamve" and "Impuzamugamby".

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԹՈՒՄՈՒՄ 1918 Թ. ՀՈՒԼԻՍԻՆ

Համո Սուքիասյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4

Էլ. հասցե՝ hamosukiasyan@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 30.01.2020, գրախոսվել է 30.01.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

1918 թ. մայիսին Հայաստանի անկախության վերականգնման և պետականության ամրապնդման գործընթացի առանցքային խնդիրներն ուսումնասիրելիս հնարավոր չէ շրջանցել հայ-թուրքական հարաբերությունների հարցը: Այդ պատճառով էլ Հայաստանի Հանրապետության առաջին շրջանի (1918 թ. մայիս-հոկտեմբեր) վերաբերյալ ուսումնասիրություններ կատարած պատմաբաններն այս կամ այն չափով անդրադարձել են Օսմանյան կայսրության հետ ՀՀ հարաբերություններին, հայկական տարածքների նկատմամբ թուրքերի զավթողական քաղաքականությանը:

Եթե 1918 թ. մայիս-հունիսին Բաթումում և հունիս-հոկտեմբերին Կ. Պոլսում Օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության միջև անցկացված բանակցություններին առնչվող հարցերը քննության է առել պատմաբանների մի քանի սերունդ, ապա նույն 1918 թ. հուլիսի սկզբին Բաթումում տեղի ունեցած հայ-թուրքական բանակցությունները պատմաբանները համապատասխան ուշադրության և գիտական ուսումնասիրության չեն արժանացրել: Բաթումի հայ-թուրքական երկրորդ բանակցությունների վերաբերյալ եղած աղքատագիտական նյութը սակավ է, որն էականորեն դժվարացնում է այս խնդրի մանրամասն ուսումնասիրությունը:

Բաթումի հայ-թուրքական պայմանագիրը փոփոխելու փորձերը

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Հայաստանի Հանրապետության հետ կնքված «հաշտության և բարեկամության» պայմանագրի և դրան կից լրացուցիչ արձանագրությունների համաձայն՝ Օսմանյան կայսրությունը ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Թուրքերը բռնազավթեցին հայության կենսական տարածքների մեծ մասը. փաստացի ՀՀ-ին էր մնում Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառը և տարածքներ Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Երևանի և Շարուր-Ղարալագյազի

գավառներից¹: Նույն օրը Օսմանյան կայսրությունը հաշտության պայմանագրեր ստորագրեց նաև նորանկախ Վրաստանի և Ադրբեջանի հետ: ՀՀ պատվիրակության՝ Բաթումից Թիֆլիս վերադառնալուց հետո Հայոց ազգային խորհուրդը ձեռնամուխ եղավ հանրապետության խորհրդարանի և կառավարության ձևավորմանը:

Բաթումում Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հետ Օսմանյան կայսրության կնքած պայմանագրերը քննարկվում էին Բեռլինում և Վիեննայում: Թուրքերի դաշնակիցներ Գերմանական և Ավստրո-Հունգարական կայսրությունների համար անընդունելի էր, որ նշյալ ակտերը կատարվել էին առանց իրենց մասնակցության: Ուստի որոշվեց հունիսի 25-ին Կոստանդնուպոլսում Քառյակ դաշինքի երկրների (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա և Օսմանյան կայսրություն) և Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Լեռնականների պետության մասնակցությամբ նոր խորհրդաժողով գումարել, որտեղ վերաքննվելու էին Բաթումում ստորագրված պայմանագրերը: Ըստ այդմ՝ հայերը հույս ունեին, որ թուրքերն ստիպված էին լինելու կատարել խորհրդային Ռուսաստանի և Քառյակ դաշինքի երկրների միջև 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում ստորագրված պայմանագրի դրույթները (այն առավել բարենպաստ էր, քան Բաթումի պայմանագիրը)²:

1918 թ. հունիսի 9-ին Հայոց ազգային խորհուրդը Խալիլ փաշայից հրավեր է ստանում մասնակցելու Կ. Պոլսի կոնֆերանսին: Խորհրդի՝ հունիսի 12-ի նիստում որոշվեց Ավետիս Ահարոնյանի նախագահությամբ (անդամներ՝ Ալեքսանդր Խատիսյան, Միքայել Պապաջանյան) պատվիրակություն ուղարկել օսմանյան մայրաքաղաք³: Հունիսի 13-ին հայկական պատվիրակության հիմնական կազմը մեկնում է Թիֆլիսից և հունիսի 19-ին հասնում Կ. Պոլիս, իսկ մյուս մասն այստեղ է ժամանում հունիսի 24-ին: Պատվիրակության անդամները հույս ունեին կոնֆերանսի ընթացքում հասնել հայության օրհասական դրության բարելավմանը և հանրապետության սահմանների ընդարձակմանը⁴: Կ. Պոլսում մնալով մինչև նոյեմբերի 1-ը՝ հայկական պատվիրակությունը բազմաթիվ հանդիպումներ է ունենում թուրք բարձրաստիճան պաշտոնյաների, օտարերկրյա դիվանագետների հետ, սակայն այդպես էլ որոշակի արդյունքի չի հասնում, իսկ կոնֆերանսը ձգձգվելուց հետո այդպես էլ չի գումարվում թուրք-գերմանական հակա-

¹ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 36-40:

² Ավետիսյան 1997, 258:

³ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 253-254:

⁴ Խատիսեան 1968, 99:

սությունների և ռազմաճակատներում Քառյակ դաշինքի երկրների բանակների պարտության պատճառով⁵:

Հայ բնակչության դրությունը

Բուն Անդրկովկասում թուրքերն ամենատարբեր պատրվակներով խախտում էին Բաթումի՝ իրենց կողմից պարտադրված պայմանագրի դրույթները: Ճանապարհների փակ, անապահով լինելը, փոստի և հեռագրի բացակայությունը, երկաթուղային կապի խափանումը դժվարացնում էին հայ ղեկավար գործիչների՝ Թիֆլիսից Երևան տեղափոխվելու հնարավորությունը: Բացի այդ, թուրքական ռազմակալման ներքո գտնվող տարածքներում հայ բնակչությունը պարբերաբար բռնությունների, թալանի, ջարդերի էր ենթարկվում⁶:

Առանձնապես վատթար դրության մեջ էին Ախալքալաքի գավառի հայ գաղթականները, որոնց հիմնական մասն ապաստանել էր Բակուրիանիում: Հայոց ազգային խորհուրդն առաջնային խնդիր էր համարում Ախալքալաքի գաղթականներին սեփական բնակավայրեր վերադարձնելը՝ նրանց ֆիզիկական գոյությունն ապահովելու նպատակով: Հունիսի երկրորդ կեսին այդ նպատակով Ազգային խորհրդի և ախալքալաքի գաղթականների ներկայացուցիչների կողմից մի շարք դիմումներ էին ուղղվել Բաթումում ու Ախալքալաքում գտնվող թուրք զորահրամանատարներին, սակայն դրական պատասխան չէր ստացվել: Հետևաբար հայ գործիչների շրջանում համոզմունք էր ձևավորվել, որ թուրքական հրամանատարությունը փաստացի դեմ է գաղթականների վերադարձին⁷:

Բաթում մեկնող պատվիրակության կազմակերպումը, նրանց պարտականությունների սահմանումը

Հայաստանի Հանրապետության իշխանությունների համար առաջնային խնդիր էր թուրքական կողմի իրական մտադրություններին տեղյակ լինելը, մանավանդ որ Կ. Պոլսի խորհրդաժողովի բացումը ձգձգվում էր: Պոլսի հայկական պատվիրակության անդամ Միքայել Պապաջանյանը (վերջինս ուշացումով միացավ գործընկերներին) օսմանյան մայրաքաղաք ուղևորվելու ճանապարհին կարճ զրոյց է ունենում Կովկասյան ճակատի օսմանյան բանակների հրամանատար Վեհիբ Մեհմեդ փաշայի հետ: Հանդիպման մանրամասների վերաբերյալ Մ. Պապաջանյանը նամակով տեղեկացնում է Հայոց ազգային խորհրդին. նամակն ընթերցվում է խորհրդի հունիսի 29-ի նիստում: Համոզմունք հայտնելով, որ ժամանակի ընթաց-

⁵ Սուփասյան 2015, 193-195:

⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 49:

⁷ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 269 շրջ., Մելքոնյան 2003, 289-292:

քում կողմերի միջև բարիդրացիական հարաբերություններ կստեղծվեն՝ թուրք զորահրամանատարը տեղեկացրել էր, որ թուրքական զորքերին կարգադրել է կարգ ու կանոն պահպանել, իսկ կատարված անօրինակա- նությունները քննվում են: Ըստ նրա՝ սահմանների խնդիրը վերջնական լուծում է ստանալու Կ. Պոլսում, իրենց զորամասերը հայ-վրացական սահ- մանագծում պահում են վրաց-գերմանական զորամասերի առաջխաղա- ցումը բացատելու նպատակով: Նա խոստացել էր երեք ավտոմոբիլ հաս- կացնել Հայոց ազգային խորհրդի անդամներին Ալեքսանդրապոլով Երևան մեկնելու համար, իսկ ռազմական համագործակցության դեպքում՝ նաև դրամական աջակցություն տրամադրել ՀՀ-ին: Գաղթականների խնդրի վերաբերյալ էլ հայտարարել էր, որ կողմնակից է սեփական բնա- կավայրերը նրանց վերադառնալուն: Ըստ այդմ էլ՝ Մ. Պապաջանյանը Հայոց ազգային խորհրդին առաջարկում էր ներկայացուցիչներ ուղարկել Բաթում՝ այդ հարցով բանակցություններ վարելու նպատակով⁸: Այս առա- ջարկն առիթ էր, որ Հայոց ազգային խորհուրդը պատվիրակություն կազ- մակերպի՝ գաղթականության հարցը և հայ-թուրքական հարաբերություն- ներում առկա մյուս խնդիրները քննարկելու նպատակով:

ՀՀ պատվիրակության ղեկավար է նշանակվում Հայոց ազգային խորհրդի անդամ, Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Սամսոն Հարությունյանը, անդամներ՝ բանաստեղծ Հովհաննես Թուման- յանը և գեներալ Իվան Բաղդամյանը, քարտուղար-թարգմանիչ՝ Երվանդ Միրզոյանցը: Այս ընթացքում Կովկասյան ճակատի օսմանյան բանակների հրամանատարի պաշտոնում Վեհիբ փաշային փոխարինում է ավագ եղ- բայրը՝ Էսսադ փաշան: Վերջինի նշանակումը Հայոց ազգային խորհրդի անդամների մեջ թույլ հույս է առաջացնում, թե հնարավոր կլինի թուրքե- րին համոզել՝ գոնե հետևելու հայության համար չարաբաստիկ դրույթներ պարունակող Բաթումի պայմանագրի կետերին, վերջ տալու չափ ու սահ- ման չունեցող անօրինություններին:

Կարծում ենք, պատվիրակության կազմում Հովհ. Թումանյանին ընդ- գրկելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ վերջինս մի քանի օր առաջ (հունիսի 23-ին) էր վերադարձել Դսեղից, քաջաճանոթ էր Լոռիում և շրջակայքում թուրքերի բարբարոսություններին ու նաև, իբրև ականատես, կարող էր ներկայացնել իրական դրությունը: Չմոռանանք, որ Հայոց ազ- գային խորհրդի՝ հունիսի 24-ի նիստում Թումանյանն ընդարձակ զեկուցում էր ներկայացրել Լոռիում տիրող իրավիճակի մասին⁹: Բացի այդ, բանաս- տեղծը հայտնի էր իր խաղաղասիրական քայլերով, տարածաշրջանի ժո- ղովուրդների խաղաղ համակեցության վերաբերյալ իր երկարամյա քա-

⁸ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 273 շրջ.:

⁹ Սուքիասյան 2009, 143-146:

րոզներով: Բնականաբար, այս փաստի մասին պետք է հայտնի լիներ նաև թուրքական հրամանատարությանը: Դրանով պայմանավորված՝ Թումանյանի խոսքերը ոչ միայն միակողմանի չէին թվա, այլև համոզիչ կարող էին լինել թուրք զորահրամանատարի համար:

Հայոց ազգային խորհուրդը պատվիրակության առջև խնդիր էր դրել էսսադ փաշայի հետ քննարկել Բաթումի պայմանագրով որոշված՝ ՀՀ սահմաններից (մասնավորապես Հարավային Լոռուց) օսմանյան զորքերի դուրսբերման (հետևաբար՝ հանրապետության փաստացի սահմանների ընդարձակման), երկաթուղագիծը ՀՀ-ին փոխանցելու, հայ գաղթականների՝ սեփական բնակավայրեր վերադառնալու անվտանգության երաշխիքներ տալու, հայ բնակչության նկատմամբ թուրքական զորամասերի կատարած բարբարոսությունների, նաև երկկողմ առևտրական հարաբերություններ սկսելու հարցերը¹⁰:

Ժամանակակիցներից Աստվածատուր Խաչատրյանը գրում է, որ Ս. Հարությունյանի ղեկավարած պատվիրակությունը Թիֆլիսից Բաթում է մեկնել 1918 թ. հունիսի 29-ին, իսկ հուլիսի 2-ին հուշագիրն է ներկայացրել էսսադ փաշային¹¹: Թիֆլիս վերադառնալուց հետո՝ հուլիսի 6-ին, Ազգային խորհրդի նիստում ներկայացրած հաշվետու զեկույցում Ս. Հարությունյանը հայտնում է, որ Բաթում հասնելու հաջորդ օրը հանդիպել են էսսադ փաշային¹²: Ստացվում է, որ հայկական պատվիրակությունը Բաթում է հասել հուլիսի 1-ին: Այս ամսաթիվն է նշում նաև թումանյանագետ Լուսիկ Կարապետյանը: Հիմնվելով «Кавказское слово» թերթի վրա՝ վերջինս գրում է, որ բանաստեղծը «հուլիսի 1-ին մեկնում է Բաթում՝ Ազգային խորհրդի հունիսի 29-ի որոշմամբ»¹³:

Պատվիրակության ճանապարհորդությունը ոյուրին չի եղել, քանի որ նախօրոք թուրքական հրամանատարությանը տեղյակ չէր պահվել ՀՀ պատվիրակության ժամանման օրվա մասին: Ս. Հարությունյանի խոսքերով՝ պատվիրակությունը Բաթում է հասել «մեծ դժվարություններով»¹⁴: էսսադ փաշան հայ պատվիրակներին չափազանց ջերմ, շողոքորթ ընդունելության է արժանացրել, համակրանքով է արտահայտվել հայ ժողովրդի մասին՝ առաջին հայացքից զարմանք պատճառելով նրանց:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 49, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289, Հորիզոն, Թիֆլիս, 9 յուլիսի 1918, N 133, Кавказское слово, Тифлис, 2 июля 1918, N 134.

¹¹ Խաչատրյան 2010, 105:

¹² ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289:

¹³ Կարապետյան 1992, 216: Հեղինակը սխալմամբ պատվիրակության քարտուղարի անունը «Է. Միրզոյան» է գրում:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289:

Բանակցությունները Բաթումում

Հայաստանի ազգային արխիվում չհաջողվեց հայտնաբերել հայկական պատվիրակության՝ Էսսադ փաշային հանձնած երկու հուշագրերը: Ա. Խաչատրյանի վկայությամբ՝ Բաթումի պայմանագիրը վկայակոչելով, առաջին հուշագրում պահանջ էր դրվում թուրքական զորքերից դատարկել Փամբակը, Ալեքսանդրապոլի գավառից ՀՀ-ին մնացած մասը, Լոռու հարավային մասը, Քոլագիրան կայարանը և տարածքներ Երևանի գավառից, վերականգնել երկաթուղային հաղորդակցությունը, գաղթական հայ բնակչությանը (հատկապես Ախալքալաքի հայությանը) թույլատրել վերադառնալ հայրենի բնակավայրեր: Երկրորդ հուշագրում, ի հավելումն այս հարցերի, խոսվում էր Ղարաքիլիսայում թուրքերի կատարած ջարդերի, թալանի, բռնությունների մասին¹⁵:

Ձերմ ընդունելությանը հակառակ՝ Էսսադն ամեն կերպ խուսափում է լուծում տալ հայ պատվիրակների առաջ քաշած հարցերին: Նրա հիմնական փաստարկն այն էր, որ բոլոր խնդիրները վերջնական լուծում կստանան Պոլսի խորհրդաժողովում: Էսսադը կեղծավորաբար հայտարարում է, թե իրենք կողմնակից են ՀՀ տարածքի ընդարձակմանը, և «եթե այժմ մեր զորքերը գրաւել են որոշ տեղեր, այդ եղել է ձեր օգտին, որովհետև գերմանո-վրացական զորքերը ուզում են գրաւել»¹⁶: Նա պատրաստակամություն է հայտնում Բաթումի պայմանագրով ՀՀ-ին պատկանող տարածքներից օսմանյան զորքերը հեռացնել Հայաստանի և Վրաստանի միջև միջպետական սահմանագծի հստակեցումից հետո¹⁷: Իսկ Ս. Հարությունյանի առաջարկին՝ «աւելի լաւ է դուք ձեր զորքերը յետ քաշէք, մենք մեր զորքերով կպահենք մեր սահմանները, եթէ չկարողանանք, կդիմենք ձեր օգնութեան՝ իբրև բարեկամ պետութեան», հայտարարում է, թե չի հավատում, թե հայերին դա կհաջողվի¹⁸: Փաստորեն, հայկական տարածքներից օսմանյան զորքերի դուրսբերման հարցի հետ առկախ էր մնում նաև երկաթուղին հայկական կողմին փոխանցելու խնդիրը:

Առավել մանրամասն քննարկվել է հայ գաղթականների՝ սեփական բնակավայրեր վերադարձի հարցը: Մասնավորապես անմխիթար էր Ախալքալաքի գավառի գաղթականների դրությունը: Այս հարցի առնչությամբ Էսսադը կարծիք է հայտնում, թե տեղահանված հայերը կարող են վերադառնալ միայն այն շրջաններ, որտեղ նրանց ու մուսուլմանների միջև բախումներ չեն եղել: Գաղթականների վերադարձն այն տարածքներ, որտեղ ազգամիջյան հարաբերությունները դեռևս լարված են, նա աննպա-

¹⁵ Խաչատրյան 2010, 104-105:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289 և շրջ.:

¹⁷ Кавказское слово, 7 июля 1918, N 139, Մշակ, Թիֆլիս, 9 յուլիսի 1918, N 131:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289 շրջ.:

տակահարմար է համարել՝ հայտարարելով, որ դա կարող է տեղի ունենալ միայն ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների վերականգնումից հետո¹⁹: Եվ որ ամենագարմանալին է, ազգամիջյան հակասությունների համար թուրք փաշան մեղադրել է հայկական կողմին՝ շեշտելով, թե այդ պայմաններում «առայժմ չի երաշխաւորում ապահովութիւն տեղական մահմեդականների վրէժխնդրութիւնից, ուստի պէտք է առժամանակ սպասել»²⁰: Նա պատրաստակամութիւն է հայտնել միայն Ալեքսանդրապոլի և Կարսի գաղթականներին անհատապէս թույլատրել անձնական գործերով հայրենի բնակավայրեր այցելել²¹:

Այս ամենից հետո սպասելի է, որ Էսսադը պետք է կտրականապէս ժխտեր հայ բնակչության նկատմամբ թուրքական զորամասերի կատարած ջարդերի ու թալանի ակնհայտ փաստերը: Եվ սա այն դեպքում, երբ այդ մասին արտահայտվում էր Լոռու շրջանում թուրքական ոճրագործություններին քաջատեղյակ, այդ օրերին տարածաշրջանում եղած Հովհ. Թումանյանը: Բանաստեղծը սեփական աչքերով էր տեսել հայ գաղթականների անմխիթար դրությունը, թուրքերի իրականացրած համատարած կոտորածն ու թալանը²²: Ավելին, թուրք փաշան ոչ միայն իրականությանը չհամապատասխանող է հայտարարել Ղարաքիլիսայում թուրքերի կատարած եռօրյա ջարդերի մասին հայկական պատվիրակության հուշագիրն ու պատվիրակների հայտարարությունները, այլև, ոչ ավել և ոչ պակաս, առաջարկել է, որ հայկական կողմը, եթե ցանկանում է, կարող է անարգել մարդիկ ուղարկել ոչ միայն Ղարաքիլիսայում, այլև մյուս վայրերում քննություն կատարելու համար՝ փորձելով արտաքուստ տպավորություն ստեղծել, թե կա՛մ թուրքական զազանությունների մասին տեղեկությունները հեռու են իրականությունից, կա՛մ էլ ինքն այդ ամենից անտեղյակ է:

Փոխարենը Էսսադը վկայակոչել է Ղամարլուի շրջանում թուրքական զորամասերի և տեղի հայ բնակչության բախման մասին՝ փորձելով պայմանագրային պարտավորություններին չհետևելու համար ամեն կերպ մեղադրել հայերին²³: Ասվածի համատեքստում կարելի է դիտարկել նաև նրա՝ Բաթումի պայմանագրով Բաքվի առնչությամբ ՀՀ-ի ստանձնած պարտավորության մասին հիշեցումը²⁴: Չիրաժարվելով Բաքվից հայկական զինուժը հեռացնելու պարտավորության կատարումից՝ հայ պատվիրակները միաժամանակ փաստարկված ընդգծել են, որ հայկական զորա-

¹⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 49:

²⁰ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289 շրջ.:

²¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 50, Հորիզոն, 9 յուլիսի 1918, N 133:

²² Հայաստանի անկախության հռչակումը 2009, 91:

²³ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289 շրջ., 290:

²⁴ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289 շրջ.:

մասերի՝ բուլշևիկներին հարելու հարցում մեղքի մեծ բաժին ունեն ադրբեջանցիները. նրանց կողմից ճանապարհները փակելու պատճառով հայ զինվորները զրկվել են հայրենիք վերադառնալու հնարավորությունից, որը բուլշևիկներին հնարավորություն է տվել վարձատրության դիմաց նրանց իրենց ազդեցության տակ առնելու²⁵: Բնականաբար, այստեղ հայ գործիչները խուսափում էին բարձրաձայնել Բաքվի տասնյակհազարավոր հայերի անվտանգության ապահովման նպատակով Հ.Յ. Դաշնակցության և բուլշևիկների միջև գոյություն ունեցող համագործակցության մասին²⁶: Բացառված չէ, որ, հաղորդակցության ուղիների անմխիթար դրությամբ պայմանավորված, այդ համագործակցությանն առնչվող մանրամասներին Թիֆլիսի գործիչները տեղյակ չլինեին:

Իբրև բարի կամքի դրսևորում՝ Էսադ փաշան պատրաստակամություն է հայտնում շրջաբերական ուղղել թուրքական զորամասերին ու բնակչությանը՝ հորդորելով հայերի հետ բարեկամական հարաբերություններ պահպանել²⁷: Նա և իր շտաբի պետ Օմար-Լյուֆթի բեյը հայկական պատվիրակության անդամների վրա կրթված ու բարեհաճ անձանց տպավորություն էին թողել:

Հայկական պատվիրակության բարձրացրած հարցադրումների վերաբերյալ իր դիրքորոշման մասին Էսադ փաշան հեռագիր է ուղարկում նաև Թիֆլիս, որն ընթերցվում է Հայոց ազգային խորհրդի՝ հուլիսի 4-ի նիստում: Հայ գործիչների համար մասնավորապես անսպասելի էր Ախալքալաքի գաղթականների վերադարձի անհնարինության մասին թուրք զորահրամանատարի պնդումը: Ուստի նիստի ընթացքում մանրամասն քննարկվում է հայ գաղթականության օրհասական դրության և օգնության հարցը: Նպատակահարմար է համարվում գաղթականների մի մասին տեղավորել Վրաստանի հայկական գյուղերում, բոլոր հնարավոր միջոցները գործադրել նրանց՝ հայրենի բնակավայրերը վերադարձնելու համար, այս առումով նոր հրահանգներ տալ Կ. Պոլսի հայկական պատվիրակությանը²⁸:

«Հ պատվիրակությունը հուլիսի 4-ին Բաթումից հեռագիր է ուղարկում Կ. Պոլսում գտնվող ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին: Առաջարկվում էր, հաշվի առնելով հանրապետության սահմաններից օսմանյան զորքերի դուրսբերման և երկաթուղագիծը հայկական կողմին վերադարձնելու հրատապությունը, հարցին շուտափոյոթ լուծում տալ օսմանյան մայրաքաղաքում²⁹: Հաջորդ օրը՝ հուլիսի 5-ի երեկոյան, ՀՀ պատ-

²⁵ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 290:

²⁶ Հայոց պատմություն 2010, 165-166:

²⁷ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289 շրջ., ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 50:

²⁸ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 281 շրջ.-285:

²⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 50:

վիրակությունը վերադառնում է Թիֆլիս, որտեղ և ծանոթանում է Ահարոնյանի պատասխան հեռագրի բովանդակությանը (հեռագիրն օսմանյան բանակների հրամանատարությունը Բաթումից ուղարկել էր Թիֆլիս)³⁰:

Եզրակացություններ

Սամսոն Հարությունյանից, Իվան Բաղրամյանից և Հովհաննես Թումանյանից կազմված պատվիրակության՝ Բաթում առաքելությունը սպասված արդյունքը չունեցավ: Այդուհանդերձ, այն կարևոր էր թուրքական մոտեցումներին, փաստարկներին ու հիմնավորումներին ծանոթանալու տեսակետից: Պատահական չէ, որ Հայոց ազգային խորհրդի նիստում ներկայացրած հաշվետու զեկուցման մեջ Ս. Հարությունյանն ընդգծում է, որ պատվիրակությանը հաջողվել է վերջնականապես ճշտել հայ գաղթականների խնդրի վերաբերյալ օսմանյան հրամանատարության դիրքորոշումը, ինչպես նաև թուրքական վայրագությունների վերաբերյալ քննություն կատարելու արտոնություն է ստացել³¹: Իր հարցազրույցներից մեկում Հ. Թումանյանը հավելում է այն, որ Էսսադ փաշան պատրաստակամություն է հայտնել հայկական կողմի հետ վերսկսել առևտրական հարաբերությունները³²: Հետագա շաբաթները ցույց տվեցին, որ նույնիսկ վերջին երկու խոստումներն իրականություն չդարձան:

Ներկայացվածն առաջին դեպքն էր, երբ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը հանդես էր գալիս ոչ թե իր կամ հայկական (թեկուզ մեծ և հեղինակավոր) որևէ կազմակերպության, այլ անկախ հայկական պետության անունից: Նա փորձել է ամեն գնով պաշտպանել թուրքական ռազմակալության տակ գտնվող շրջանների հայ բնակչության անվտանգությունը: Կարող ենք արձանագրել, որ Հովհ. Թումանյանը փաստացի հանդիսացել է նորանկախ Հայաստանի Հանրապետության անդրանիկ դիվանագետներից մեկը՝ իր մյուս բախտակիցների նման այդ բնագավառում համապատասխան կրթություն և գործունեության փորձ չունենալով:

Գրականություն

Ավետիսյան Հ.Ա. 1997, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, «Բարձրագույն դպրոց», 436 էջ:

Խաչատրյան Ա. 2010, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, Հայաստանի ազգային արխիվի հրատ., 287 էջ:

³⁰ Մշակ, 9 յուլիսի 1918, N 131, Հայաստանի անկախության հռչակումը 2009, 110-111:

³¹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 290:

³² Հորիզոն, 9 յուլիսի 1918, N 133:

- Խատիսեան Ա. 1968, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, «Համազգային», 488 էջ:
- Կարապետյան Լ.Մ. 1992, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 256 էջ:
- Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս), փաստաթղթերի և նյութերի ժողովածու 2009, կազմող՝ Հ.Կ. Սուքիասյան, Երկրորդ հրատ., Հայաստանի ազգային արխիվի հրատ., Երևան, 251 էջ:
- Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու 2000, խմբագրությամբ՝ Գ.Ա. Գալոյանի և Վ.Ն. Ղազախեցյանի, Երևան, «Գիտություն», 455 էջ:
- Հայոց պատմություն, հ. IV, գիրք I 2010, Երևան, «Զանգակ 97», 800 էջ:
- Մելքոնյան Ա.Ա. 2003, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, «Զանգակ 97», 543 էջ:
- Սուքիասյան Հ. 2009, Երկու դրվագ Հովհաննես Թումանյանի հասարակական-քաղաքական գործունեությունից, «Ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր)», պրակ Թ, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 142-148:
- Սուքիասյան Հ. 2015, Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետության պատվիրակության գործունեության լուսաբանումը պատվիրակների օրագրություններում (1918 թ. հունիս-նոյեմբեր), «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ)» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ. հրատ., էջ 193-205:

ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԹՈՒՄՈՒՄ 1918 Թ. ՀՈՒԼԻՍԻՆ

Համո Սուքիասյան

1918 թ. հուլիսի սկզբին Բաթումում տեղի ունեցած հայ-թուրքական բանակցությունները պատմաբանների կողմից գիտական ուսումնասիրության չի արժանացել՝ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության և Օսմանյան կայսրության հարաբերություններին առնչվող այլ առանցքային խնդիրների:

Հայոց ազգային խորհուրդը հուլիսի 1-ին Սամսոն Հարությունյանի ղեկավարությամբ (անդամներ՝ Հովհաննես Թումանյան, Իվան Բաղրամյան, քարտուղար՝ Երվանդ Միրզոյանց) պատվիրակություն է ուղարկում Բաթում՝ Կովկասյան ռազմաճակատի օսմանյան բանակների հրամանատար Էսսադ փաշայի հետ քննարկելու հայ-թուրքական հարաբերություններում առկա խնդիրները: Դրանք էին՝ Բաթումի հունիսի 4-ի պայմանագրով որոշված ՀՀ սահմաններից թուրքական զորքերի դուրսբերմանը, երկաթուղագիծը ՀՀ-ին

փոխանցելուն, հայ գաղթականներին սեփական բնակավայրերը վերադարձնելուն, գրավված հայկական բնակավայրերում թուրքերի կատարած թալանին ու ջարդերին առնչվող հարցերը: Բանակցությունների ընթացքում Էսսադ փաշան տարբեր պատրվակներով խուսափում է լուծում տալ հայկական կողմի առաջ քաշած հարցերին: Հուլիսի 5-ին հայ պատվիրակները ձեռնունայն վերադառնում են Թիֆլիս: Պատվիրակության առաքելության միակ արդյունքը հայությանը հուզող խնդիրների առթիվ թուրքական կողմի դիրքորոշումներին ծանոթանալն էր: Սա նաև միակ դեպքն էր, երբ բանաստեղծ Հ. Թումանյանը հանդես էր գալիս հայկական անկախ պետության անունից՝ փաստացի հանդիսանալով նրա առաջին դիվանագետներից մեկը:

Բանալի բաներ՝ հայ-թուրքական բանակցություններ, Բաթումի պայմանագիր, Էսսադ փաշա, Հովհաննես Թումանյան, Հայոց ազգային խորհրդի պատվիրակություն, հունիսի 4-ի հայ-թուրքական պայմանագիր, հայ գաղթականներ:

АРМЯНО-ТУРЕЦКИЕ ПЕРЕГОВОРЫ В БАТУМЕ В ИЮЛЕ 1918 Г.

Амо Сукиасян

Состоявшиеся в начале июля 1918 г. в Батуме армяно-турецкие переговоры не стали предметом научного исследования, в отличие от других ключевых проблем, касающихся отношений Республики Армения и Османской империи.

1-ого июля Армянский национальный совет направил делегацию во главе с Самсоном Арутуняном (члены – Ованес Туманян, Иван Баграмян, секретарь – Ерванд Мирзоянц) в Батум для обсуждения с командующим османскими дивизиями на Кавказском фронте Эссад пашой нерешенных вопросов в армяно-турецких отношениях, в числе которых были вопросы о выводе османских дивизий с территории РА, что было указано в батумском армяно-турецком договоре от 4-го июня о передаче железной дороги РА, возвращении армянских беженцев в свои дома, об организованных турками грабежах и резне в оккупированных армянских поселениях. В ходе переговоров Эссад паша всячески уклонялся от ответа на выдвинутые армянской стороной вопросы. 5-го июля армянские делегаты вернулись в Тифлис, не добившись каких-либо существенных результатов. Армянская делегация всего лишь ознакомилась с позицией турецкой стороны по вопросам армян.

Ключевые слова – армяно-турецкие переговоры, Батумский договор, Эссад паша, Ованес Туманян, делегация Армянского национального совета, армяно-турецкий договор от 4-го июня, армянские беженцы.

ARMENIAN-TURKISH NEGOTIATIONS IN BATUM IN JULY 1918

Hamo Sukiasyan

The Armenian-Turkish negotiations held in Batum in early July haven't been studied by the historians, in contrast to other core issues regarding relations between the Republic of Armenia and the Ottoman Empire. On the 1st of July, the Armenian National Council sent a delegation led by Samson Harutyunyan (members: Hovhannes Tumanyan, Ivan Baghramyan, secretary Yervand Mirzoyants) to Batum to discuss unresolved issues in the Armenian-Turkish relations with the commander of the Ottoman divisions on the Caucasian front, Essad Pasha. Namely, questions about the withdrawal of Ottoman divisions from the territory of the Republic of Armenia, defined by the Armenian-Turkish agreement of Batum on June 4, the transfer of the railway to the Republic of Armenia, the return of Armenian refugees to their homes, the robberies and massacres organized by Turks in the occupied Armenian settlements. During the negotiations, Essad Pasha with different pretexts avoided solving the questions put forward by the Armenian side. On the 5th of July, the Armenian delegates returned empty-handed to Tbilissi. The only result of the mission of the Armenian delegation was to get acquainted with the position of the Turkish side regarding issues of concern to the Armenians. This was also the only case that Hovhannes Tumanyan spoke on behalf of independent Armenian state, in fact becoming one of the first diplomats.

Key words – Armenian-Turkish negotiations, agreement of Batum, Essad Pasha, Hovhannes Tumanyan, delegation of the Armenian National Council, the Armenian-Turkish agreement of June 4, Armenian refugees.

**ՇՈՒՇԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱԴԵՍ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ
ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
(XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ)**

Վահրամ Բալայան

Պատմական գիտությունների դոկտոր
Արցախի պետական համալսարան, պատմության և քաղաքագիտության ամբիոն
Արցախի Հանրապետություն, Ստեփանակերտ, Մ. Գոշի 5
Էլ. հասցե՝ rector@asu.am, vahrambalayan@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 15.11.2017, գրախոսվել է 17.02.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

XIX դ. սկսած՝ Շուշիում տնտեսական և մշակութային կյանքի վերելքի շնորհիվ աշխուժանում են նաև հասարակական-քաղաքական գործընթացները: Այսրկովկասում Թիֆլիսից հետո Շուշին երկրորդ քաղաքն էր, որտեղ եվրոպական առաջադեմ գաղափարները ոչ միայն ընկալվում, այլ նաև կենսակերպ էին դառնում: Շուշին առևտրական բազմաթիվ թելերով կապված էր եվրոպական և ռուսական խոշոր կենտրոնների հետ, ուստի այդ գաղափարների թափանցումը բերդաքաղաք ավելի դյուրին ու սահուն էր կատարվում: Սովորելով եվրոպական ու ռուսական նշանավոր համալսարաններում, շփվելով տեղի մտավորականության, հեղափոխական, հասարակական, քաղաքական գործիչների հետ՝ շուշեցի երիտասարդները ոչ միայն վարակվում էին առաջադեմ գաղափարներով, այլև հարազատ ծնընդավայրում փորձում էին նոր մոտեցումներով նպաստել հայրենիքի զարգացմանը: Շուշիում նոր գաղափարների նկատմամբ առավել շատ ընկալունակ էին պատանիներն ու մտավորականները: Այդ ամենի համար բարենպաստ միջավայր էր ստեղծվել հատկապես քաղաքի թեմական դպրոցում, որը դարձել էր Արցախի ու հարակից հայկական գավառների աչքաբաց և ուսումնատենչ երիտասարդության կենտրոն: 1840-ական թթ. հայության պահանջով թեմական դպրոցների հոգաբարձուների խորհուրդները սկսեցին ձևավորվել ժողովրդի ընտրությամբ: Դա էլ նպաստում էր, որ թեմականի տեսչի պաշտոնում հայտնվեին տվյալ ժամանակաշրջանի լուսավոր դեմքերը: 1863 թ. Շուշիի թեմական դպրոցի տեսուչ է դառնում Պետրոս Շանշյանը, որը բարձրագույն կրթություն էր ստացել Մոսկվայի, Պետերբուրգի և Սորբոնի համալսարաններում:

1849-1857 թթ. նա աշխատել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում՝ որպես տեսուչ: Այդ ժամանակաշրջանը պատմության մեջ մտավ «Շան-

շյանի դար»¹ անունով: Մանկավարժական նոր մտքի ներկայացուցիչ լինելով՝ Պ. Շանշյանը վերացրեց աշակերտների նկատմամբ ծեծն ու բռնարարքները, մտցրեց ուսումնական նոր ծրագրեր, բարձր աստիճանի հասցրեց բնագիտական առարկաների դասավանդման գործը: Մայրենի լեզվին դպրոցում պատշաճ տեղ հատկացվեց:

Լեոն իրավացիորեն նկատել է, որ «Շանշեանի դարը միաժամանակ և այն շրջանն է, երբ մեր դաստիարակութեան, մեր գրականութեան մէջ կրօնական տարրը սկսում է պակասել, և հետզհետէ զարգանում ու մեծանում է հայրենասիրական կամ, ավելի ճիշտ, ազգասիրական տարրը: ...Շանշեանի ժամանակի Ներսիսեան դպրոցը այն քուրան էր, ուր արծարծուեց այդ բացը՝ ռուսահայերի մէջ տարածուելու համար: ...Ազգային ուժեղ ինքնագործունեութիւն եւրոպական լուսաւորութեան առաջնորդութեամբ – ահա Շանշեանի կառավարած դպրոցի նշանաբանը»²: Շանշյանի գործունեությունը չսահմանափակվեց դպրոցով: Նա անզիջում պայքար սկսեց նաև հասարակական առաջադիմությունն արգելակող ճորտատիրության դեմ:

Պ. Շանշյանը, լինելով մեծահարուստ, 1851 թ. իրեն հպատակ գյուղացիներին ազատեց ճորտությունից: Նա աղքատ գյուղացիներից հարկեր ու տուրքեր չէր ստանում, ավելին՝ վճարում էր վերջիններիս հարկերը: Պ. Շանշյանն իր միջոցները ծախսում էր՝ հոգալու հասարակ ժողովրդի կարիքները: Ընդհանուր օգտագործման համար նա կառուցել էր հացահատիկի պահեստ, խոտանոց և հարդանոց³:

Նախքան Պ. Շանշյանի՝ Շուշի գալը արցախյան միջավայրում նրա գաղափարների արմատավորման համար պարարտ հող էր նախապատրաստվել: 1858 թ. Շուշեցի մի խումբ երիտասարդներ ստեղծում են «ընթերցասիրաց ընկերությունը, որը շուտով դառնում է սահմանադրական և ազգային հարցերի քննարկման կենտրոն: Ընկերության հիմնադիրներից մեկը՝ Ավետիս Բահաթրյանը, գրել է. «Էստեղ կըգտնի ամեն մէկը իրան փխրժակին յարմար գրուածքներ, կը կարդացուի հրապարակական ճառեր, հետաքրքրական հատուածներ, էստեղ ընկեր ընկերի հետ կը խօսակցեն, կը լսեն, կը դատեն... կարծիքները կը շփուին իրար... Էստեղ նախ մեր ժողովրդի տարանջատ անհատներն իրար հետ, և ապա կարգերը կարգերի հետ կը ծանօթանան, կը մերձենան, հաղոդակցութիւնը կը հեշտանայ, ընկերական կապերը կամրապնդին, նոր բաները սրընթաց փոթորիկի նման շուտով կը սփռուին, ազգային լուրերը վսեմ կերպարանք կստանան, և էն ժամանակ մեր մեծի ու փոքրի սրտերի մէջ ձգուած կլի-

¹ Լէօ 1914, 283:

² Լէօ 1914, 284:

³ Եղիշէ արք. Գեղամեան 1917, N 1, 41-66:

նի մի էլեքտրական թել, այնպես, որ եթէ մեզանից որ մէկին դիպչելու լինիս, արձագանքը կկրկնուի ամենիս սրտերի մէջ»⁴:

«Ընթերցասիրաց ընկերության» ազդեցության տակ շուտով՝ 1860-ական թվականների սկզբին Շուշիում բացվեցին «Դպրոցատեր հայուհյաց ընկերությունը», 1865 թ.՝ «Ազգանվեր հայուհյաց ընկերությունը», 1868 թ.՝ «Շուշիի կուլտուրական միությունը», 1890-ական թվականներին՝ «Մարդասիրական», «Դպրոցասիրաց», «Թատերական», «Հայուհյաց բարեգործական» ընկերությունները⁵, որոնց գործունեության հիմքում դրված էին համամարդկային ու ազգային արժեքները: 1859 թ. Շուշիի առաջադեմ հասարակության մի շարք ներկայացուցիչներ կաթողիկոսից պահանջում են թեմականի հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկել նաև Համբարձում աղա Հախումյանին, որը սահմանադրական շարժման կողմնակից էր և բավական ջանադիր էր ազգային հարցերում: 1860 թ. հունվարի 24-ին Համբարձում աղա Հախումյանը հոգաբարձուների խորհրդի անդամ ընտրվելուց հետո դառնում է Պ. Շանշյանի համախոհներից մեկը:

Նմանօրինակ աշխույժ հասարակական կյանքով էր ապրում Շուշին, երբ 1863 թ. սեպտեմբերի 13-ին կաթողիկոսի թիվ 452 կոնդակով Պ. Շանշյանը նշանակվում է թեմականի տեսուչ: Շանշյանի հետ միասին Թիֆլիսից Շուշի են ժամանում նրա համախոհ մի քանի ուսուցիչներ: Ի դեպ, Մաթևոս կաթողիկոսի որոշումը պատահական չէր, որովհետև, ինչպես Լեոն է գրել. «...Շուշու հասարակութան առաջադեմ մասը միտք յղացաւ նոյն այդ Շանշեանի ձեռքը յանձնել Ղարաբաղի թեմական դպրոցը: Այս մտքի գլխատուր պաշտպանը Համբարձում-աղա Հախումեանն էր»⁶: Վերջինս լավ հարաբերություններ ուներ վեհափառի հետ:

Պետրոս Շանշյանը Շուշիում իր գործունեության առաջին իսկ օրերից դարձավ բերդաքաղաքի հայության սիրելի գործիչներից մեկը: Եղիշե արքեպիսկոպոս Գեղամյանը գրել է. «Նա ժողովրդի կողմից այնքան շատ է ընդունվում, որ նրա միասին ասում էին՝ «Այդ մարդը միս ու ոսկոր չունի, այլ հոգի է»: ...Շանշեանը ոչ միայն ուսուցչական մարմնի հոգի էր, այլև շուշեցիների ամենից սիրելի անձնաւորութիւնը իր ներշնչած պատկառանքով, իր առաքինի կեանքով, իր եկեղեցասիրութեամբ: Ժողովուրդը զարմանալով զարմանում էր նրա վերայ և գովելուց չէր կշտանում, տեսնելով, որ Շանշեանը, չնայած իր ազնուական կոչման, իր ստացած բարձրագույն ուսման, փափկակեաց չէ, անձնասեր չէ, իրանցից անելի քաջասիրտ է»⁷:

⁴ Կոունկ Հայոց աշխարհին 1860, N 2:

⁵ Բալայան 2012, 51–52:

⁶ Լէօ 1914, 286:

⁷ Եղիշէ արք. Գեղամեան 1917, N 1, 41-66:

Պետրոս Շանշյանը, նրա տեղակալ Պերճ Պոռոշյանը, թեմականի ուսուցիչներ Ղազարոս Աղայանը, Սեդրակ Մանդինյանը, իրենց շուրջը համախմբելով շուշեցի պայծառամիտ մտավորականությանն ու ազգային առաջադիմական ուժերին, մի աննահանջ պայքար սկսեցին կղերականության ու պահպանողական ուժերի դեմ: «Դժուար թէ Շուշին երբևիցէ տեսած լինի այնպիսի փայլուն գաղափարական շրջան, գրել է,– «Բագուի ձայն» թերթը,– որպիսին հանդիսանում է Շանշեանի, Պոռոշեանի ապա և Սեդրակ Մանդինեանի ու Ղազարոս Աղայեանի էպոխան: Այդ մարդիկ էին, որ թարմ հոսանք մտցրին Շուշյայ լճացած կեանքի մէջ և պայքարելով տիրացուների, կոնսիստորիայի և թեմական իշխանութեան դէմ՝ իրագործեցին երիտասարդութեան իղձերն ու տենչերը»⁸:

Շանշյանի տեսչության շրջանում Շուշիի թեմականում ազգային դաստիարակության հարցն այնքան բարձր աստիճանի էր դրված, որ նույնիսկ այդ տարիներին ժողովուրդը թեմականին անվանում էր «Եղիշեան դպրոց»:

Այդ տարիներին Շուշիում ազատամիտ գաղափարներով տոգորված երիտասարդությունն առաջ էր քաշել հետևյալ պահանջները՝ 1. Վանքապատկան բոլոր կալվածքներից ստացված եկամուտների նպատակաուղղումը դպրոցների պահպանմանը, 2. դպրոցներում հայ հասարակության բոլոր խավերի երեխաների պարտադիր ընդունում, 3. սեմինարիաների շրջանավարտներին չստիպել անպայման դառնալ քահանա, 4. սեմինարիաները դարձնել գիմնազիաներ, որպեսզի շրջանավարտները կարողանան ուսումը շարունակել ռուսական համալսարաններում⁹: Հետամնաց հոգևորականությունը Գևորգ քահանա Արամյանցի գլխավորությամբ պայքար է սկսում Պ. Շանշյանի, Գարեգին Մուրադյանի (ապագայում՝ հայտնի եպիսկոպոս, կաթողիկոսի թեկնածու – Վ.Բ.) և նրանց համախոհների դեմ՝ վերջիններիս մեղադրելով լյութերականութեան մեջ: Նույնիսկ Գարեգին Մուրադյանին ոստիկանության միջոցով վտարում են Շուշիից: Պ. Շանշյանի նկատմամբ վերջնականապես հաշվեհարդար տեսնելու համար կղերականներին հաջողվեց 1864 թ. հուլիսին Շուշիից հեռացնել առաջադիմական ուժերին սատարող Արցախի թեմի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսին:

Թեմականի հոգաբարձուների խորհրդի անդամները և շուշեցիները մի քանի անգամ համախոսական նամակներով դիմում են կաթողիկոսին՝ վեհափառին հորդորելով Պ. Շանշյանին չհեռացնել դպրոցի տեսչի պաշտոնից:

⁸ Բագուի ձայն 1913, օգոստոսի 24, N 119:

⁹ Բագուի ձայն 1913, օգոստոսի 24, N 119:

Հարցը վերջնականապես լուծելու նպատակով 1864 թ. դեկտեմբերին Պետրոս Շանշյանը, արքեպիսկոպոս Մուրադյանը, թեմականի հոգաբարձուներ Համբարձում Հախումյանը, Եսայի Դոլուխանյանը, Համբարձում Խաչատրյանը, Մեսրոպ Թառումյանը, Բաբաջան Ավան-Յուզբաշյանը մեկնում են Էջմիածին: Սակայն կաթողիկոսը Պ. Շանշյանին ազատում է թեմականի տեսչի պարտականություններից: «Երբ հասանք Աղստևի (Աղստաֆա) կայարանը, – պատմում է պատվիրակության անդամ Մուրադյանը, – Պ. Շանշեանց և Հախումեանց բաժանուցան դէպի Թիֆլիս, իսկ մենք միւս պատգամաւորներով և աշակերտներով՝ ի Ղարաբաղ: Աննկարագրելի կերպիւ սրտաշարժ էր մեր մուտն ի Շուշի: Կանխաւ լուր հասած էր քաղաքն, աշակերտք խումբ-խումբ շարուած էին ճանապարհի երկու կողմն: Իրենց սուր-սուր աչքերով Շանշեանցին էին որոնում կառքերու վերայ: Հարցումներ էին անում և պատասխան էին ընդունում պատգամաւորներէն՝ թէ պիտի գայ: Ես լուռ էի և հագի զսպում էի արտասուքներս»¹⁰:

Ինչպես Լեոն է գրել՝ «Մատթէոս կաթողիկոսը չբաւականացաւ Շանշեանին հեռացնելով, այլ և ամեն միջոց ձեռք առաւ, որ արմատահան լինեն նրա ցանած սերմերը, և նրա յիշատակն անգամ ջնջուած լինի»¹¹: Բայց Պ. Շանշեանի և նրա համախոհների ցանած հունդերը այնքան խորն էին, իսկ Շուշիի հայությունն էլ՝ այնչափ կարոտ նոր առաջադեմ գաղափարների և քաղաքացիական հասարակության վայել կենսակերպի, որ պահպանողականների ջանքերն ապարդյուն անցան: Պ. Շանշյանի գործը շարունակեցին Սեդրակ Մանդինյանը, Ղազարոս Աղայանը, Սիմոն Հախումյանը, բժիշկ Առուստամյանը: Թեմականում նրանք տպագրեցին «Գործ» ամսագիրը, որտեղ արծարծվում էին ազատասիրական գաղափարներ:

Թեմականը քահանաներ պատրաստող հաստատությունից տարեցտարի վերածվում էր ազգային, գաղափարական գործիչների դարբնոցի: Շրջանավարտներից ամեն մեկը մի լուսավոր ճրագ էր դառնում խավար իրականության մութ անկյուններում:

1880-ական թվականներին Շուշիում հետադիմական և առաջադիմական ուժերի միջև պայքարն ավելի էր սաստկանում: Հետադիմական ուժերի պարագլուխ Կարապետ եպիսկոպոս Այվազյանին հաջողվում է Մակար կաթողիկոսի միջոցով առաջադեմ գործիչներ Ստեփան Բեկ Յուզբաշյանին, Նիկոլայ Աթաբեկյանին զրկել թեմականի հոգաբարձուների խորհրդում ընտրվելու իրավունքից: Թեմականի վիճակը ծանրանում է:

¹⁰ Լէօ 1914, 331–332:

¹¹ Լէօ 1914, 332:

XIX դ. 90-ական թվականների սկզբներին առաջադեմ ուժերի ճնշման տակ թեմական դպրոցի տեսուչ է նշանակվում եվրոպական բարձրագույն կրթությամբ, շուշեցի մի լուսավոր անհատ, Արցախում դաշնակցության հիմնադիրներից մեկը՝ Լևոն Սարգսյանը, որը դպրոցում նոր աստիճանի հասցրեց ազգային դաստիարակության դրվածքը: Նրա նկատմամբ նույնպես հալածանքներ են սկսվում: 1894 թ. Շուշիի հասարակությունը բաժանվել էր երկու մասի: Մեծամասնությունը պաշտպանում էր Լևոն Սարգսյանին, իսկ մյուս մասը՝ փորձում տապալել նրան: Վերջիններս «Նոր Դար» թերթի միջոցով մի արշավ սկսեցին շանջանական գաղափարները ոչնչացնելու ուղղությամբ: Նորդարականներն ինտրիգների միջոցով Լևոն Սարգսյանին հեռացրեցին աշխատանքից՝ նրան մեղադրելով անաստվածության մեջ: Նման մեղադրանքներ ներկայացրին նաև Դեմուրյանին: Լևոն Սարգսյանի հետ միասին դպրոցից հեռացավ նաև ուսուցչական ողջ կազմը: Ազգային-հեղափոխական գործունեության համար դպրոցից հեռացրին մի խումբ աշակերտների՝ Սուրեն Մալխասյանին, Բ. Տոշյանին, Գրիգոր Գորգյանին, Դավիթ Տեր-Մկրտչյանին, Գևորգ Առստամյանին:

Թեմական դպրոց խցկված եպիսկոպոս Գառնակերյանը պահպանողական ուժերի անունից 1900 թ. նոյեմբերի 23-ին դիմում է գավառապետին՝ վերոհիշյալ աշակերտներին՝ որպես խռովարարների, աքսորել Շուշիից: Նրանց ոստիկանների ուղեկցությամբ դուրս են տանում քաղաքից: «Նրանց ընկեր աշակերտները թողին դասերը և գնացին տեսնելու աքսորուողներին: Տեսարանը յուզիչ էր, – պատմում է ականատեսը, – աքսորուողները յանձնարարում էին ընկեր աշակերտներին վրեժխնդիր լինել»¹²:

Պայքարը երկու կողմերի միջև օրեցօր ավելի էր թեժանում: Վերոհիշյալ միջադեպից մեկ տարի չանցած՝ 1901 թ. հունիսի 10-ին, Բենիկ վարդապետը նոր գրություն է հղում Շուշիի գավառապետին: Ներկայացրած փաստաթղթում նա Շուշիում սկսված աշակերտական ցույցերի կազմակերպման մեջ մեղադրում է թեմականի շրջանավարտ Եգոր Առստամյանին (Մենակ), որն իր տանն աշակերտական խմբակ էր ստեղծել և զբաղվում էր քաղաքական գործունեությամբ: Այդ ամենի մեջ Բենիկ վարդապետը մեղադրում է նաև Դավիթ Տեր-Մկրտչյանին, Գրիգոր Տեր-Ստեփանյանին, Նիկողայոս Պողոսյանին, Ղուկաս Վարդապետյանին, Ալեքսանդր Ծատուրյանին (Ռուբենի): Նա գավառապետին առաջարկում է համապատասխան միջոցներ ձեռնարկել, իսկ Եգոր Առստամյանին՝ արտաքսել քաղաքից¹³: Վերջինս չի ընկճվում դրանից: Ավելին՝ նրա, Թուման Թումյանի (Թորգոմ) և Ալեքսանդր Ծատուրյանի նախաձեռնությամբ

¹² Լէօ 1914, 566:

¹³ Լէօ 1914, 568–569:

Շուշիում սկսեց գործել «Կոկոն» խմբակը, որի կազմում էին թեմականի և ռեալական ուսումնարանի աշակերտներ ու շրջանավարտներ¹⁴:

Շուշիի հայության պայքարը կրթական հաստատությունները փակելուն ուղղված՝ ցարական իշխանության ձեռնարկած քայլերի դեմ (1890-ական-1905 թթ.)

Հայկական դպրոցները դարձան ազգային-ազատագրական գաղափարների տարածման կենտրոններ: Նման պայմաններում ցարական իշխանությունները անհանդուրժողական կեցվածք որդեգրեցին հայկական դպրոցների նկատմամբ: 1890-ական թթ. նրանք սկսեցին փակել հայկական դպրոցները: Բռնագրավվում էին դպրոցական շենքերը, գույքը, դպրոցների համար եկամտի աղբյուր դարձած հողակտորները, կրպակները, անգամ բանկերում սառեցվում էին մասնավոր կտակները, արժեթղթերը:

1899 թ. օգոստոսին Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Տիրայր վարդապետը էջմիածնի Սինոդին ներկայացրած զեկուցագրում նշում է, որ Արցախի թեմում փակել են հայկական դպրոցների մեծ մասը (25-ից ավելի), տեղական իշխանությունները բռնագրավել են դպրոցական գույքը, փակել հայկական դպրոցներ¹⁵:

1897 թ., երբ Գ. Գոլիցինը դարձավ Կովկասի կառավարչապետ, հակակառավարական կառույցներ հայտարարվեցին հայ կրթական, բարեգործական, հասարակական կազմակերպություններն ու քաղաքական կուսակցությունները: Գ. Գոլիցինը գտնում էր, որ «Հայոց բարեգործական ընկերություններն ավելի շատ զբաղված են քաղաքականությամբ, քան բարեգործությամբ: Փաստերը ցույց են տալիս, որ անջատական շարժման շատ կուսակիցներ այդ ընկերությունների անդամ են»¹⁶: Սկսեցին զանգվածաբար փակել հասարակական, բարեգործական կազմակերպությունները: Չնայած դրան՝ գյուղերում և հատկապես Շուշիում այդ կազմակերպությունները շարունակում էին գործել անլեզալ պայմաններում: Գոլիցինի հակահայ գործունեության թիրախում հայտնվեցին հայ մտավորականները, պետական ծառայողները, պաշտոնյաները:

1877 թ.՝ Մեծ իշխան Միխայիլ Նիկոլանիչի փոխարքայության ժամանակ Այսրկովկասի քաղաքացիական հիմնարկություններում աշխատում էին 2365 պաշտոնյաներ, որոնցից 523-ը (22,1%) հայեր էին: 1886 թ.՝ Դոն-դուկով-Կորսակովի փոխարքայության ժամանակ, 3217-ից 661-ը (20,5%) հայեր էին, իսկ 1897 թ.՝ Գոլիցինի կառավարման տարիներին, 4065-ից

¹⁴ Հովհաննիսյան 1969, 25: Հովհաննիսյան 1927, 20-22:

¹⁵ Գրիգորյան, Հարությունյան 2001, 34:

¹⁶ Ակնունի 1903, 80-81:

արդեն 719-ն էին հայեր (17,6%): Նրա օրոք՝ 1901 թ., այդ թիվը 4917-ից հասավ 617-ի (12,5%)¹⁷:

1897 թ. Գանձակի նահանգի գավառապետների և նրանց օգնականների (տեղակալներ) կազմում 7-ը ռուս էին, 5-ը՝ թուրք, 5-ը՝ վրացի: Հայեր չկային: Նահանգապետի ատյանում 6-ը՝ ռուս էին և 4-ը՝ թուրք: Պրիստավների և նրանց օգնականների մեջ 13 հոգին ռուս էին, 18-ը՝ թուրք, 4-ը՝ վրացի և 4-ը՝ հայ: Հաշտարար միջնորդների պարտականությունները կատարում էին 14 ռուս, 3 վրացի, 3 թուրք: Հայեր չկային: Հաշտարար դատավորների, նրանց օգնականների և քննիչների պատկերը հետևյալն էր՝ 28 ռուս, 11 վրացի, 6 թուրք և 1 հայ: Այդ էլ այն դեպքում, երբ նահանգի ազգաբնակչության շուրջ 35%-ը հայեր էին¹⁸: Ազգային գաղափարների ջատագով, հասարակական, քաղաքական կյանքում սկզբունքայնություն, համառություն և հետևողականություն ցուցաբերած շուշեցի հայերին Գոլիցինը պատերազմ էր հայտարարել:

1901 թ. Կովկասի կառավարչապետը ռազմական նախարար Ա. Կուրոպատկինին հաղորդել է, որ Շուշիում գործում է շուրջ 100 հեղափոխական, որոնց Սիբիր արքայազնը պարագայում վերջ կդրվի հայկական «անջատողականությանը»¹⁹: Հարցին արմատական լուծում տալու համար նա նույնիսկ առաջարկում էր ավելի ծայրահեղ քայլերի դիմել՝ Շուշիի հայությանն արտաքսել Սիբիր²⁰: Միայն գեներալ Կուրոպատկինի սթափ մոտեցման շնորհիվ ձախողվեց Գոլիցինի խելահեղ ծրագիրը:

Իշխող վարչակարգը XX դ. սկզբներին նոր ծանր հարված հասցրեց Շուշիի կրթական, լուսավորական հաստատություններին, երիտասարդության ազգային դաստիարակության հարցերին: Դա հիմնականում կապված էր Նիկոլայ Երկրորդի՝ 1903 թ. հունիսի 12-ի տխրահռչակ հրամանագրի հետ, որով բռնագրավվեցին հայ լուսավորչական եկեղեցու կալվածքներն ու գույքը: Հայ պատմագրության մեջ տիրում է այն կարծիքը, որ ցարական արքունիքն այդ օրենքով փորձում էր փակել հայկական դպրոցները, մշակութային հաստատությունները և սահմանափակել եկեղեցու ինքնուրույնությունը²¹:

Մինչդեռ իրականում այն հեռագնա նպատակներ ուներ: Ցարական իշխանությունները լավ էին հասկանում, որ դարերի ընթացքում պետականությունից զրկված հայության համար եկեղեցին ազգային ինքնության և ինքնուրույնության ջատագովն ու կազմակերպիչն էր: Մյուս

¹⁷ Գործ 1917, N 2, 14:

¹⁸ Նուրբ որբերին 1915, դեկտեմբերի 9:

¹⁹ Լազյան 1991, 95–96:

²⁰ Լէօ 1914, 579:

²¹ Հայ ժողովրդի պատմություն 1981, 353: Պարսամյան, Հարությունյան 1979, 305:

կողմից էլ կրթական հաստատություններում երիտասարդների և ուսուցիչների մեջ էին խմորվում ազատագրական գաղափարները, որոնք ժամանակի հոլովույթում կդառնային հայոց պետականության վերակերտման հիմնաքարեր: Այս հարցում չի կարելի թերագնահատել դարասկզբին Արևմտյան Հայաստանում ծայր առած հակասուլթանական նոր շարժման դերը: Ցարական կառավարությունը մտահոգվում էր, որ պայքարի ալիքը կտարածվի նաև Արևելյան Հայաստանում: Մանավանդ տարածաշրջանում, մեծ տերությունների ակտիվացման պայմաններում, կարող էին Ռուսաստանի համար հետևանքներն անկանխատեսելի դառնալ: Հնարավոր զարգացումները կանխելու նպատակով ցարական արքունիքը վաղօրոք փորձում էր ոչնչացնել իր համար վտանգավոր թիրախները:

Մինչև վերոհիշյալ օրենքի ընդունումը Գ. Գոլիցինը Նիկոլայ Երկրորդին հավաստիացնում էր, որ «մեծ և միացյալ Հայաստանի» ստեղծման գործի գլուխ կանգնած է լուսավորչական եկեղեցին, որը տարեկան հարյուրհազարավոր ռուբլիներ է ծախսում զենք ու զինամթերք ձեռք բերելու համար²²:

Գ. Գոլիցինի այս հիմնավորումներին գումարվեց Նիկոլայ Երկրորդի հակահայ տրամադրվածությունը: Նա մի առիթով ասել է. «Իմ անձնական և վաղեմի կարծիքով, հայերի հանդեպ ոչ մի վստահություն տածել չի կարելի: Անշուշտ, նրանք են գլխավորում խռովության ամբողջ դավադրությունը Կովկասում»²³:

Եվ այսպես, վերոնշյալ օրենքը գործի դրվեց: Բռնազավթվեց եկեղեցուն պատկանող՝ 1 775 905 ռուբլու արժողության ունեցվածքը²⁴: Հայ ժողովուրդն ապրում էր տագնապալի ու խռովահույզ ժամանակներ: Այսրկովկասի հայաշատ վայրերում ապստամբական տրամադրություն էր տիրում: Հակակառավարական պայքարի մեջ ներառվեց նաև արցախահայությունը:

1903 թ. օգոստոսի 29-ին Գանձակում մի քանի հազար մարդ հավաքվեց առաջնորդարանի մոտ և ներկայացրեց իր բողոքը: Փոխնահանգապետ Անդրեևի հրամանով զինվորները սկսեցին կրակել ցուցարարների վրա: Զոհվեց 10 մարդ, իսկ 70-ից ավելին վիրավորվեցին: Քաղաքում ռազմական դրություն մտցվեց²⁵: Համաժողովրդական շարժմանը միացան նաև Շուշիի հայերը: 1903 թ. սեպտեմբերի 8-ին նահանգապետ Լուցաուն 500 կազակների ուղեկցությամբ Գանձակից հասավ Շուշի և փորձեց ի կատար ածել կառավարության որոշումը: Ժողովրդի դի-

²² Ակնունի 1904, 20-24:

²³ Հերոսական պայքարի վավերագրեր 1984, 333:

²⁴ Тунян 1992, 45. 10.

²⁵ Ակնունի 1904, 218-221: Հայ ժողովրդի պատմություն 1981, 355:

մադրությանը կազակները պատասխանեցին կրակոցներով: Ընդհարումների ժամանակ երկու կողմից կային սպանվածներ ու վիրավորներ: Չինված դիմակայությունը շարունակվեց մի քանի օր: Ձերբակալվեց ավելի քան 120 մարդ, որոնց թվում էին քաղաքագույնը, Մկրտիչ Խանդամիրյանը, 7 աշակերտ՝ ռեալականից, 30-ը՝ թեմականից: Քաղաքում ռազմական դրություն հայտարարվեց: Երեկոյան ժամը 6-ից հետո փողոց դուրս եկածներին ձերբակալում էին: Փակվեցին խանութները: Չէին գործում քաղաքային ինքնավարության մարմիններն ու դատարանը: Բոլոր որոշումները միանձնյա կայացնում էր նահանգապետը: «Կօզակների ոհմակները վխտում են քաղաքի իրաքանչիւր անկիւնում, – պատմում է ականատեսը, – և օր ու գիշեր զանազան վայրենութիւններով կարծես ուզում են իրենց բարբարոս նախահայրերին գերազանցել»²⁶:

Նահանգապետ Լուցաուն փորձում է հայերին գրգռել թուրքերի դեմ: Նրա կարգադրությամբ թուրքերին զենք է բաժանվում: Շուշիում հավաքված թուրքերին դիմելով՝ ակնարկում է՝ «Լսել եմ, որ դուք զինուել էք և պատրաստուել էք մեզ պաշտպանելու ու հայերին կոտորելու»: Դրան թուրքերը պատասխանում են. «Մենք ոչինչ չենք պատրաստում հայերի դեմ, նրանք մեր լաւ դրացիներն են»²⁷:

Ցույցեր և ընդհարումներ են տեղի ունենում նաև Արցախի այլ բնակավայրերում: ՀՅԴ «Ապառաժ» կառույցը որոշեց վրեժխնդիր լինել արյունալի ընդհարումների կազմակերպիչներից: Ահաբեկեցին Գանձակի փոխնահանգապետ Անդրեւէկին, Շուշիում սպանվեցին ոստիկանապետ Սախարովը, գավառապետ Շումակովիչը, գավառապետի օգնական Ֆեոդորովը, հարկային տեսուչ Շչերբակովը, ժանդարմ Պողձիվալովը, գաղտնի ոստիկան Խասիկը, գանձարանի պաշտոնյաներ Բադիկը և Կոպրունովը²⁸:

Ցարական արքունիքի շատ թե քիչ սթափ մտածող գործիչները չափազանց ուշացած հասկացան, որ իշխանությունների սխալ հաշվարկների և բիրտ ուժի քաղաքականության հետևանքով վտանգի տակ դրվեց կայսրության հարավում իրենց ամենահուսալի դաշնակից ժողովրդի՝ հայության հետ հետագա համագործակցության հնարավորությունը: Այդ կապակցությամբ Կովկասի փոխարքա Վորոնցով–Դաշկովը խոստովանել է «Կայսրութեան սահմաններում այդ հարցը մենք ստեղծեցինք, որովհետև անզգոյշ վարուեցինք հայերի կրօնական և ազգային հայացակէտների հետ: Կովկասի հայութեան մէջ անջատական ոչ մի ձգտում գոյություն չունի: Ռուսահայերի մէջ ազգային շարժման բռնկումը և իշխանութեան դէմ ուղղուած տէրորիստական գործողութիւնները առաջ եկան այն

²⁶ Դրօշակ 1903, N 9, 129-152: Ակնունի 1904, 235-241, Величко 1990, 71-72.

²⁷ Դրօշակ 1903, N 8, 113-128:

²⁸ Հայ ժողովրդի պատմություն 1981, 356:

պատճառով, որ հայոց եկեղեցական կալուածները խլուեցին ու դրուեցին պետական կառավարութեան տակ»²⁹: Հաշվի առնելով այդ հանգամանքները՝ ցարական կառավարութունը 1905 թ. օգոստոսի 1-ին չեղյալ համարեց 1903 թ. հունիսի 12-ի օրենքը:

Ազգային-ազատագրական գաղափարների արծարծումը Շուշիում գործող հեղափոխական խմբակներում, կրթամշակութային հաստատություններում և կուսակցական կազմակերպություններում

Չնայած այդ ամենին՝ Շուշիում ազգային, սահմանադրական, հեղափոխական խմորումները ավելի էին խորանում:

Աշոտ Հովհաննիսյանը՝ որպես դեպքերի մասնակից ու ականատես, նշել է, որ Շուշիի հեղափոխականների շարքերում հատկապես աչքի էին ընկնում Մենակը, Իսաջանը, Թորգոմը, Իշխանը, Արամը, Կոստյան, Շիրինյանը, Արաբին, Լետան, Սնարյանը, Ծատուրը³⁰: Շուշիի այդ երիտասարդներն էլ դարձան հայոց երկիրը թուրքական և ցարական բռնակալական վարչակարգերից ազատագրելու և ազգային պետականությունը վերակերտելու գաղափարներ կրողները:

1906–1907 թթ. տեղի ունեցան Շուշիի մետաքսագործական, կաշեգործական ֆաբրիկաների, տպարանի, կոշկակարների, դարբինների, հացթուխների, դերձակների համքարությունների բանվորների ցույցեր: Առավել ակտիվ էր գործում թեմականի և ռեալականի աշակերտների կողմից կազմակերպած «Աշակերտական միությունը», որը 1905–1907 թթ. գլխավորեց քաղաքի սովորող ցուցարարների պայքարը:

Թեմական դպրոցը նորից հայտնվում է ազգային, առաջադիմական գաղափարների քարոզման կիզակետում: 1907 թ. թեմականի տեսուչ Արշակ Չիլինգարյանը կազմակերպեց ուսուցիչներից կազմված մի գաղտնի խմբակ, որի անդամներն էին Ս. Բաղդասարյանը, Հ. Մելիք-Հովսեփյանը, Ռ. Քաջբերունին, Ա. Հայրապետյանը, Մ. Հարությունյանը, Հ. Մելիք-Հայկազյանը, Ե. Սարգսյանը, Մ. Առստամյանը և Բ. Թորոսյանը: Շուտով խմբակը բացահայտվեց ոստիկանական մարմինների կողմից, և Ա. Չիլինգարյանն ու երկու ուսուցիչներ երեք տարով բանտարկվեցին ու աքսորվեցին Ռուսաստան:

Բանտարկյալներին ազատելու համար թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսի խնդրագրերը Գանձակի նահանգապետն ու փոխարքան մերժեցին³¹: «Ամէն օր խմբերով մարդիկ բանտերն էին նետվում,– պատմում է ականատեսը,– որոնք աչքի էին ընկել անցած շրջանում որպես ղեկա-

²⁹ Բագուի ձայն 1913, օգոստոսի 28, N 120:

³⁰ Հովհաննիսյան 1969, 68–69:

³¹ Լէօ 1914, 607–608:

վարներ կամ կոպոլ ուժեր: ...Շուշվա հայկական քաղաքամասում իր դաժանությամբ հայտնի էր ոստիկանապետ (պրիստավ) Կասամանժև-կին, որից խորշում էին բոլորը: Բավական էր, որ նա 2 կամ 3 հոգու փողոցում միատեղ կանգնած զրուցելիս տեսներ, իսկույն կծերբակալեր»³²:

1906-1907 թթ. Շուշիում գործում էին 10-12-հոգանոց «Կայծակ», «Որոտ», «Դրոշակ» անվանումներով դպրոցական գաղտնի խմբեր, որոնց հետ քաղաքական աշխատանքներ էին տանում կուսակցությունների, մտավորականների ներկայացուցիչները: 1913 թ. կազմակերպվեցին «Միություն», «Միրաժ» աշակերտական միությունները:

1906 թ. մարտի 19-ին Քրիստափոր Միքայելյանի մահվան տարելիցի կապակցությամբ Ղազանչեցոց եկեղեցում կազմակերպվեց հոգեհանգիստ: Նույն օրը Քրիստափոր Միքայելյանի, Ստեփանյանի և Մարգար Ժամհարյանի հիշատակին կայացավ գրական, երաժշտական երեկույթ³³:

Շուշեցի մտավորականները՝ ուսուցիչներ, դասախոսներ, ամեն կերպ ձգտում էին մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործը պատշաճ աստիճանի վրա դնել:

XIX դ. սկզբներից մինչև 1920 թ. Շուշիի հայկական դպրոցներում ամեն տարի նշում էին ազգային տոները, մանավանդ «Վարդանանց տոնը»: Տոնակատարություններին մասնակցում էր նաև քաղաքի չափահաս բնակչությունը: Այդ օրերին նույնիսկ փակվում էին խանութներն ու արհեստանոցները³⁴: Հայոց գրերի գյուտին և տպագրությանը նվիրված միջոցառումները Շուշիում վերածվում էին համաքաղաքային տոնախմբության:

1890 թ. թեմական դպրոցում, Ղևոնդ Ալիշանի 50-ամյակի կապակցությամբ, ուսուցիչները միջոցառում են կազմակերպում: «Նահապետին՝ Արցախու Շուշու թեմական հոգևոր դպրանոցի ուսուցիչներից, 1890 թի» մակագրությամբ որպես նվեր ուսուցիչները մի ոսկյա գրիչ են ուղարկում³⁵:

Շուշեցի ուսուցիչների հայրենանվեր գործունեության մասին վկայում են նաև ազգային գործիչները: 1881 թ. արքունական գանձարանի հաշվապահ, շուշեցի Պետրոս Տեր-Հովակիմյան-Մամիկոնյանցը, որ Զաքաթալայից եկել էր հայրենի քաղաք, պատմում է. «...վազեցի դէպի տեղական հայոց երկսեռ ուսումնարանները: Այն ժամանակակից մանկավարժական կարգ ու կանոնը, որ շնորհի մեծապատիւ Սեդրակ Մանդինեանի մտցված է երկսեռ դպրոցների մէջ, համոզեցին ինձ, որ այստեղ այժմ արդիւնաւոր գործ է կատարվում:

³² Կիսիբեկյան 2011, 150:

³³ Արշալոյս 1906 մարտի 24, N 64:

³⁴ Մեղու Հայաստանի 1881, մարտի 22, N 46: Փայլակ 1917, փետրվարի 12, N 10:

³⁵ Նոր դար 1890, N 60:

Բոլոր ուսուցիչները, բայց նամանաանդ պպ. Աղայեանցը, Յովհաննիսեանցը, Իշխանեանը, Ջաւադ-բէկը, Գիւզադեանը, Խոջամիրեանը և այլք ...մի բանական մեքենայի առողջ անդամները, որոնք ամենատեսակ յարգանքի և ուշադրութեան արժանի են թէ իրենց անխոնջ գործունեութեամբ և թէ նամանավանդ նրանով, որ սնուած են զուտ հայկական ոգով»³⁶: Թեմականի շրջանավարտ Ա. Կիսիբեկյանը գրում է. «Վերհիշում եմ մեկիկ-մեկիկ, մեկը մյուսից հոյակապ, մեկը մյուսից պայծառ իմ սքանչելի ու պատկառելի դաստիարակներին՝ Գաբրիել (վարժապետ) Ղուկիքոխյան, Թեոդորոս Տեր-Հովհաննիսյան, Արշակ Չիլինգարյան, Արսեն Տերտերյան, Արշակ Մեհրաբյան, Ստեփան Դեմուրյան, Ռուբեն Քաջբերունի, Սեթ Հարությունյան, Ավետիք Տեր-Պողոսյան, Արշակ Տոնոյան, Սպիրիդոն Մելիքյան, Նիկոլ Աղբալյան, Գրիգոր Տեր-Պողոսյան, Հայրապետ Մուսայեյան, վեհանձնագույն Իսահակ Տեր-Ղազարյան («Պեսիմիստ»), Նիկ. Յարամիշյան և շատ ու շատ ուրիշներ, որոնք մեզ ուսուցանել են և մեր արյան մեջ մտցրել՝ սիրել հայրենիքը, սիրել մայրենի գիրն ու գրականությունը և սրբությամբ պաշտպանել հայ պանծալի ժողովրդի դարավոր, առաջադեմ ու թանկարժեք կուլտուրան...»³⁷:

Հայ մտավորականների ջանքերին հակառակ՝ ցարական իշխանություններն ամեն կերպ Շուշիի դպրոցներում խոչընդոտում էին հայոց լեզվի և պատմության դասավանդումը: 1887 թ. մինչև 1906 թ. ռեալական դպրոցում արգելվեց այս առարկաների ուսուցումը: Շուշիի հանրությունը երկարատև պայքար սկսեց իշխանությունների դեմ՝ պահանջելով շաբաթական մի քանի ժամ պետական դպրոցներում թույլ տալ դասավանդելու հայոց լեզու և պատմություն:

Հեղափոխական խմորումները Շուշիում կասեցնելու նպատակով 1906 թ. իշխանությունների կողմից վերանայվեց նախկին որոշումը, և պետական դպրոցներում սկսվեց հայոց լեզվի ու հայոց պատմության դասավանդումը: Անգամ Շուշիի քաղաքային ուպրավան դիմել է թեմականի տնօրինությանը՝ քաղաքի պետական դպրոցներում հայոց լեզվի դասավանդման համար մշակել համապատասխան ծրագիր³⁸: Շուշեցի մտավորականները հաճախակի դիմում էին այն ընտանիքներին, որոնք իրենց երեխաներին ռուսական կրթություն էին տալիս, հորդորում առաջնորդվել հայեցի դաստիարակության սկզբունքներով: Այդ ամենն իր ար-

³⁶ Մեղու Հայաստանի 1881, մարտի 14, N 39:

³⁷ Կիսիբեկյան 2011, 37: Այս ուսուցիչներից շատերը ժամանակի ընթացքում դարձել են հայ գրականության, գրականագիտության, երաժշտական արվեստի մեծ երախտավորներ, հասարակական, պետական գործիչներ, որոնք ուրույն հետագիծ են թողել հայոց պատմության մեջ:

³⁸ Փայլակ 1917, հունիսի 18, N 38:

ձագանքներն է գտել Շուշիում հրատարակվող թերթերում: Այսպես, «Ղարաբաղ» լրագիրը, անդրադառնալով այդ հարցին, գրել է. «Օտար երուպացին է հետաքրքրում մեր անցյալով. մեր ազգով, մեր լեզուով, մեր պատմութեամբ ու գրականութեամբ, իսկ մենք ոչ միայն անտարբեր ենք դէպի մեր ազգն ու հայրենիքը, մեր պատմութիւնն ու գրականութիւնը, այլ և անխղճօրէն հալածում ենք մեր ընտանիքներից մայրենի քաղցր լեզուն ու խօսքը. մենք մեր իսկ սեպհական ձեռքերով մեր զաւակներին օտարամոլութեան թոյն ենք խմեցնում...»:

...Ո՞ր օրւանից սկսած պիտի ուխտենք հայ մեծացնել մեր զաւակներին, հայի շունչ ու հոգի դնել նրանց կրծքի մէջ: Ի՞նչպէս պիտի ազատվի պատմութեան դատաստանից այն հայը, որ զաւակներ ունի և հայերէն չի սովորեցնում, այն հայը, որ փառաւոր անցեալ ունի և սրբութեամբ չի պահպանում այն ու անհաւատարիմ է նրան...:

Հայ ժողովուրդ, այսօր, երբ քո գլխի վերևում երկինքն է ամպամած ու չորս բոլորդ խաւարով պատած, երբ ազգը որպէս փոքրիկ նաւակ ահեղ փոթորկի և կեանքի անհատակ ծովի գոռ ալիքներին է մատնւած, աւելի քան երբէք պիտի միմեանցից հեռացող ճիւղերի պէս ծառի արմատին միանաս, մեր սիրելի Ղարաբաղը զարդարող սարերի պէս, ուր էլ որ լինիս, անդրդուելի մնաս, և սէրն ու միութիւնն ընտրելով՝ քեզ ղեկաւար կանչէս սիրոյ, լուսոյ և միութեան ամենամեծ Աստծուն...»³⁹:

Եզրակացություններ

XIX դ. սկզբներից ի վեր Շուշիում տնտեսական և մշակութային կյանքի վերելքը հնարավորություն ընձեռեց հասարակական-քաղաքական գործընթացների աշխուժացման համար: Քանի որ Շուշին առևտրական բազմաթիվ թելերով կապված էր եվրոպական և ռուսական խոշոր կենտրոնների հետ, ուստի եվրոպական առաջադեմ գաղափարները թափանցում էին բերդաքաղաք և այնտեղ կենսակերպ դառնում:

Շուշիի կրթական հաստատություններում՝ թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում, ձևավորվեցին ազգային գաղափարները: Այդ հաստատությունների ուսուցիչները և սաները՝ Պետրոս Շանշյան, Սեդրակ Մանդինյան, Ղազարոս Աղայան, Ալեքսանդր Ծատուրյան (Ռուբենի), Նիկոլ Դուման և ուրիշներ ցարական բռնատիրության դեմ պայքարի և Արևմտյան Հայաստանի ազատագրության ջատագովներ ու կազմակերպիչներ էին:

Այդ գաղափարների ձևավորման ու տարածման գործում մեծ դեր ունեցան աշակերտական միությունները, հասարակական, քաղաքական

³⁹ Ղարաբաղ 1911, նոյեմբերի 24, N 3:

կազմակերպությունները, կուսակցությունները: Ինչպես ազգային-ազատագրական, այնպես էլ հայոց պետականության վերականգնման գաղափարներով տոգորված սերունդը դարձավ 1917-1920 թթ. արցախահայ պետականության և Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադիրը:

Գրականություն

Ակնունի Է. 1904, Դեպի կռիվ, Ժընե, ՀՅԴ հրատ., 275 էջ:

Ակնունի Է. 1903, Կովկասեան վերքեր, հ. I, Ժընե, ՀՅԴ հրատ., 368 էջ:

Բալայան Վ. 2012, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, «Սոնա», 416 էջ:

Գրիգորյան Հ., Հարությունյան Գ. 2001, Շուշիի ռեալականը, Երևան, «Ամարաս», 208 էջ:

Լազյան Գ. 1991, Հայաստանը եւ հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, «Արմէն», 440 էջ:

Լէօ 1914, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, «Հրատ. Թեմական դպրոցի հոգաբարձության», 696 էջ:

Կիսիբեկյան Ա. 2011, Հուշեր, հ. 1, Երևան, «Առասպել», 519 էջ:

Կիսիբեկյան Ա. 2011, Հուշեր, հ. 2, Երևան, «Առասպել», 606 էջ:

Հայ ժողովրդի պատմություն, 1981, հ. VI, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1050 էջ:

Հերոսական պայքարի վավերագրեր, 1984, կազմող՝ Հ. Մելիքյան, Երևան, «Հայաստան», 423 էջ:

Հովհաննիսյան Ա. 1927, Երկու բնութագիր, Երևան, «Պետհրատ», 27 էջ:

Հովհաննիսյան Ա. 1969, Հուշեր և բնութագրումներ, Երևան, «Հայաստան», 129 էջ:

Պարսամյան Վ., Հարությունյան Շ. 1979, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, «Լույս», 752 էջ:

Արցախեցի 1881, Շուշի, Մեղու Հայաստանի, Թիֆլիս, մարտի 22, N 46:

Գաառններում 1903, Դրօշակ, Ժնե, սեպտեմբեր, N 8, էջ 113-128:

Եղիշէ արք. Գեղամեան 1917, Պետրոս Շանշեան, Գործ, Բագու, հունվար, N 1, էջ 41-66:

Ե. ք. Գեղամեան 1917, Պետրոս Շանշեան, Գործ, Բագու, փետրվար, N 2, էջ 1-43:

Հայկական ցոյցերը Կովկասում, 1903, Դրօշակ, Ժնե, նոյեմբեր, N 9, էջ 129-152:

Արշալոյս 1906, Թիֆլիս, մարտի 24, N 64:

Բագուի ձայն 1913, Բագու, օգոստոսի 24, N 119:

Բագուի ձայն 1913, Բագու, օգոստոսի 28, N 120:

Գործ 1917, Բաքու, փետրվար, N 2:

Կռունկ Հայոց աշխարհին 1860, Թիֆլիս, N 2:

Ղարաբաղ 1911, Շուշի, նոյեմբերի 24, N 3:

Մեղու Հայաստանի 1881, Թիֆլիս, մարտի 14, N 39:

Նոր դար 1890, Թիֆլիս, N 60:

Նուէր որբերին 1915, Բաքու, դեկտեմբերի 9:

Փայլակ 1917, Շուշի, փետրվարի 12, N 10:

Փայլակ 1917, Շուշի, հունիսի 18, N 38:

Величко В. 1990, Кавказ. Русское дело и междуплеменные вопросы, Баку, «Элм», 224 с.

Тунян В. 1992, Противостояние, «Эпоха», N 45.

ՇՈՒՇԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱԴԵՄ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ)

Վահրամ Բալայան

XIX դ. սկզբներից Շուշիում տնտեսական և մշակութային կյանքի վերելքը պարարտ հող է նախապատրաստում հասարակական-քաղաքական գործընթացների աշխուժացման համար: Այսրկովկասում Թիֆլիսից հետո Շուշին երկրորդ քաղաքն էր, որտեղ եվրոպական առաջադեմ գաղափարները ոչ միայն ընկալվում, այլ նաև կենսակերպ էին դառնում: Շուշիի կրթական հաստատությունները, մասնավորապես թեմական դպրոցը և ռեալական ուսումնարանը դարձան ազգային գաղափարների ձևավորման և տարածման կենտրոններ: Այդ հաստատությունների ուսուցիչները և սաները՝ Պետրոս Շանշյան, Սեդրակ Մանդինյան, Ղազարոս Աղայան, Լևոն Սարգսյան, Արամ Մանուկյան, Եգոր Առուստամյան (Մենակ), Թուման Թումյան (Թորգոմ), Ալեքսանդր Ծատուրյան (Ռուբենի), Նիկոլ Դուման և ուրիշներ, դարձան ցարական բռնատիրության դեմ պայքարի ու Արևմտյան Հայաստանի ազատագրության ջատագովներ և կազմակերպիչներ: Այդ գաղափարների ձևավորման և տարածման գործում խիստ կարևոր էր աշակերտական միությունների, հասարակական, քաղաքական կազմակերպությունների, կուսակցությունների դերը: Ազգային-ազատագրական և հայոց պետականության գաղափարներով տոգորված անձինք էլ դարձան 1917-1920 թթ. արցախահայ պետականության և Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադիրները:

Բանալի բառեր՝ Շուշի, հասարակական-քաղաքական, ազգային-ազատագրական, պետականություն, թեմական դպրոց, ռեալական ուսումնարան, Հայաստան:

**ШУШИ–ЦЕНТР ФОРМИРОВАНИЯ И РАСПРОСТРАНЕНИЯ
ПЕРЕДОВЫХ НАЦИОНАЛЬНЫХ ИДЕЙ
(вторая половина XIX – начало XX в.)**

Ваграм Балаян

После Тифлиса Шуши был вторым городом в Закавказье, где европейские передовые идеи претворялись в жизнь. Учебные заведения Шуши, в частности епархиальная школа и реальное училище, стали центрами формирования и распространения национальных идей. Преподавательский состав и учащиеся этих заведений (Петрос Шаншян, Седрак Мандинян, Газарос Агаян, Левон Саркисян, Арам Манукян, Егор Арустамян (Менак), Туман Тумян (Торгом), Александр Цатурян (Рубени), Никол Думан и другие стали организаторами борьбы против царской тирании и апологетами освобождения Западной Армении от турецкого ига. В деле формирования и распространения передовых идей важную роль сыграли школьные союзы, общественные, политические организации и партии. Воодушевленное идеей национально-освободительной борьбы и восстановления армянской государственности поколение шушинцев 1917-1920 гг. стало основателем арцахской армянской государственности и Первой республики Армении.

Ключевые слова – Шуши, общественно-политические организации, национально-освободительная борьба, государственность, епархиальная школа, реальное училище, Армения.

**SHUSHI AS THE CENTER OF SHAPING AND SPREADING NATIONAL
ADVANCED IDEAS
(The 2nd Half of the 19th Century - the Beginning of the 20th Century)**

Vahram Balayan

Since the beginnings of the 19th century the upsurge of economic and cultural life of Shushi animated the social-political activities. After Tbilisi Shushi was the second city in Transcaucasia where the European leading ideas were perceived and became lifestyle. As Shushi was connected with the commerce links to European and Russian great centers, the penetration of new leading ideas into the fortress was making much more easily and fluently. The educational establishments of Shushi, especially the Diocesan school and the Real College became centers of shaping and spreading national ideas. The teachers

and pupils of these establishments Petros Shanshyan, Sedrak Mandinyan, Ghazaros Aghayan, Levon Sargsyan, Aram Manukyan, Yegor Arustamyan (Menak), Tuman Tumyan (Torgom), Aleksandr Tsaturyan (Ruben), Nikol Duman and others became the organizers and apologists of struggle for Western Armenia and against tsarist dictatorship. The pupils unions, social, political organizations played an important role in shaping and spreading these ideas. Day by day the Armenian statehood restoration idea was carried out in Shushi. The generation imbued with these ideas became the founder of Artsakh statehood and Armenian first Republic in 1917-1920.

Key words – Shushi, social-political organizations, national-liberation struggle diocesan school, parties, statehood, a real college, Armenia.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ ՀԱՄԱՑԱՆՅԻ ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

ՄԻԵՐ ՀՈՎԻԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու
Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ
ՀՀ, Երևան, Աբովյանի 52
Էլ. հասցե՝ mher.hovhannisyan@ysu.am
Հոդվածը ներկայացվել է 22.07.2019, գրախոսվել է 02.05.2020, ընդունվել է
տպագրության

Ներածություն

Հայոց նորօրյա պետականության հիմնադրման պահից ի վեր որպես կարևոր մարտահրավեր շարունակում է մնալ Ադրբեջանի կողմից վարվող ապատեղեկատվական քարոզչությունը: Դրա մեջ ուրույն տեղ է զբաղեցնում պատմագիտական բովանդակությամբ ապատեղեկատվությունը: Ռեալի դաշտում պարտություն կրած հակառակորդը զարգացնում է խորհրդային ժառանգությունից իրեն բաժին հասած «Բունիաթվյան դպրոց»-ի¹ կեղծիքների հարուստ փորձը: Հայ-ադրբեջանական հարաբերությունների ներկա փուլում այդ դաշտի խնդիրները առավել արդիական են, քանի որ նման ապատեղեկատվության մի մեծ հորձանուտ ուղղվել է դեպի ամենահաս համացանցը: Մի հարթակ, որից օգտվողների թիվը 03.03.2020 թ. դրությամբ կազմում էր 4,574,150,134 մարդ²: Այսպիսի լսարանի առկայությունը բավական է հասկանալու, թե այսօր ինչքան կարևոր է համացանցում հակամարտության վերաբերյալ մեր դիրքորոշումը պատմագիտության ապացուցելիության տեսանկյունից պատշաճ ներկայացնելը: Նման դիրքորոշման ռազմավարություն մշակելու համար, կարծում ենք, առաջնային է հակադիր կողմի համացանցային քարոզչության դաշտում իրականացվելիք քաղաքականության բազմակողմանի քննությունը: Այս առումով խիստ էական է ադրբեջանական կողմի խնդրո առարկայի՝ հա-

¹ Չիա Բունիաթովի կողմից հիմք դրված պատմագիտական կեղծարարությունների առաջին օրինակ կարելի է դիտարկել Ադրբեջանի «միջնադարյան պատմության» անդրադարձող ուսումնասիրությունը՝ Буниятов 1965.

² Internet Usage Statistics. The Internet Big Picture. World Internet Users and 2020 Population Stats (03.03.2020).

մացանցում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին վերաբերող³ պատմագիտական հարցերի ներկայացվածության արդի վիճակի գնահատումը:

Նմանօրինակ հակամարտությունների քարոզչության բուրգի հիմքում ընկած է պատմագիտական ապացուցելիության հարցը: Այսօր, համացանցի կիրառականության վերոհիշյալ պայմաններում, այն առավել, քան կարևոր է: Հիմնախնդրի շուրջ յուրաքանչյուր լրատվություն, պետական մակարդակով արված հայտարարություն, հայտնվելով համացանցում, գտնվում է անընդհատ թարմացման փուլում. ի հայտ են գալիս նորերը՝ տեղեկատվական դաշտին հետևող օգտատերերին շեղելով նախորդներից: Պատմագիտական ապացուցելիություն ապահովող գիտաճանաչողական տեղեկատվության տեսակն է մնում հարատև, քանի որ, ի տարբերություն նախորդների, այն հերքելը, ինչպես և ստեղծելը, համեմատաբար երկար ժամանակ և միջոցներ է պահանջում: Նման հարատևությունը հավաստող գլխավոր փաստարկը համացանցի որոնողական համակարգերում Արցախի վերաբերյալ փնտրտուքների ժամանակ ստացված արդյունքների առաջին հորիզոնականներում հայտնված գիտաճանաչողական բնույթի տեղեկատվություն պարունակող կայքերն են, որոնց վերաբերյալ դիտարկումներին կծանոթանանք հաջորդիվ:

Հակահայ պատմագիտական քարոզչության թեման Ադրբեջանի իշխանությունների քննարկման տիրույթում

2000-ականներից այսրկովկասյան տարածաշրջանում (առավել քան 90-ականների երկրորդ կեսից հետո) համացանցի ներգրավումը ավելի մեծ քայլերով սկսեց ընթանալ⁴: Այս հանգամանքը դրական ներգործություն ունեցավ նաև քարոզչության հարթակները ավանդականից դեպի համացանց կենտրոնացնելու ուղղությամբ: Հայ-ադրբեջանական հակամարտության գործող կողմերի մոտ համացանցային դաշտի հանդեպ հետաքրքրությունը հետզհետե ավելացավ: Պատճառը առավել մեծ լսարանին կարճ ժամանակում անհրաժեշտ տեղեկատվություն հասցնելու հնարավորությունն էր:

Առհասարակ, պատմագիտական ապացուցելիություն ապահովող գիտաճանաչողական տեղեկատվության համակարգումները պետական կառույցների կողմից, ի տարբերություն Հայաստանի և Արցախի Հանրապետությունների, Ադրբեջանում համեմատաբար վաղ սկսեցին իրականացնել: 1999 թ. Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը, ելույթ ունենալով Նախիջևանի հինքնավար Հանրապետության 75-ամյա հորեյլանը համա-

³ «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր» եզրույթի համար հիմք ենք ընդունել ՀՀ ԱԳՆ պաշտոնական ձևակերպումը (12.02.2019):

⁴ World Development Indicators: Armenia, Azerbaijan, Georgia (12.02.2019).

կարգող պետական հանձնաժողովի նիստում, սասց. «Եվ այստեղ մեր գիտնականները նշեցին, որ շատ հայ գիտնականներ, իսկ հիմա ոչ միայն գիտնականներ, այլ նաև հասարակ մարդիկ, քաղաքական գործիչներ փորձում են ապացուցել, որ ադրբեջանական տարածքների մեծ մասը, իբրև թե, պատկանել է Հայաստանին: Այս տեսակետից ելնելով՝ նրանք, սկսած 1988 թվականից, կտրուկ հարց բարձրացրին այն մասին, որ Լեռնային Ղարաբաղը հայկական հող է... Մենք պետք է տանք նրանց արժանի պատասխան, ապացուցենք ամբողջ աշխարհին, որ այդ հավակնությունները անհիմն են, հորինված: Իսկ դրա համար պետք է ստեղծվեն հիմնավորված փաստաթղթեր, հիմնարար գիտական, հանրաճանաչ ուսումնասիրություններ: ...Եվ հետագայում պետք է ստեղծել այնպիսի ուսումնասիրություններ, որ դրանք անընդհատ հետևողական կերպով ապացուցեն, որ Ադրբեջանին են պատկանում այն տարածքները, որտեղ գտնվում է ներկայիս Հայաստանը: Մենք պետք է դա անենք: Մենք պետք է ապագա սերունդների համար բացենք ճանապարհը»⁵: Ադրբեջանի նախագահը դեռ մեկ տարի առաջ էր իր այս կոչերը ամրագրել օրինակով. 1998 թ. մարտի 26-ի՝ Հ. Ալիևի հատուկ հրամանագրով մարտի 31-ը հայտարարվեց «ադրբեջանցիների ցեղասպանության օր»⁶: Խոսքը 1918 թ. Բաքվի բոլշևիկների և մուսավաթականների միջև քաղաքական պայքարի սրման հետևանքով մենատիրության համար ծավալված կարճաժամկետ մարտերի մասին է: Ալիև ավագը փորձում էր այդ բախումները ադրբեջանցիների ցեղասպանություն որակել⁷: Նույն քաղաքականության շարունակողը դարձավ Ադրբեջանի ներկայիս նախագահ Իլհամ Ալիևը՝ մի տարբերությամբ, որ նա հարևան պետության ղեկավարներից առաջինը պաշտոնապես հայտարարեց համացանցում պատմագիտական ակտիվ քարոզչություն տանելու կարևորության մասին: 2005 թ. Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի 60-ամյակին նվիրված հանդիսավոր արարողության ժամանակ Ի. Ալիևը, հոր պես կարևորելով Հայաստանի կողմից Ադրբեջանի պատմությունը, իբրև թե, կեղծելու դեմ ադրբեջանական հումանիտար մտքի ակտիվ պայքարը, հավելեց. «Տեղեկատվական-հաղոր-

⁵ Вступительное слово и заключительная речь Президента Азербайджанской Республики Гейдара Алиева на заседании государственной комиссии по 75-летию юбилею Нахчыванской Автономной Республики - 9 февраля 1999 года (14.02.2019):

⁶ Государственные праздники и памятные даты Азербайджанской Республики (15.02.2019):

⁷ Բաքվում 1918 թ. մարտին տեղ գտած իրադարձությունների վերաբերյալ հայկական կողմի ուսումնասիրություններից (Ստեփանյան 2011, Օգաննիսյան 2014, 274-277, Մելիքյան 2018) զատ, առկա են նաև օտար ակադեմիկոսների հուշագրություններ (Ranald MacDonell 1938; Байков 1923), որոնք խնդրի բազմակողմանի դիտարկումների շնորհիվ անհիմն են դարձնում ադրբեջանական կողմի մեղադրանքները:

դակցական տեխնոլոգիաների օգնությամբ ներկայումս մենք կարող ենք տեղ հասցնել մեր մտքերը, մեր իրողությունները ցանկացած լսարանի: Անհրաժեշտ է ավելի ակտիվ ձևով այդ աշխատանքը տանել համացանցում: ...Մեզ անհրաժեշտ է համատեղ իրականացնել այդ աշխատանքը: Ես չեմ ասում, որ մենք, մեր հարևանների պես, պետք է գեղծենք պատմությունը: Ոչ, մեզ պարզապես անհրաժեշտ է ճշմարտությունը, հեռավոր և մոտ պատմության իրողությունները աշխարհին հասցնել: ...Այդ նպատակով կստեղծվեն բոլոր անհրաժեշտ պայմանները, կհատկացվեն հավելյալ միջոցներ: Մեզ անհրաժեշտ է այդ աշխատանքը ծրագրային ձևաչափով իրականացնել»⁸: 2011 թ. Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովում նա արդեն ավելի «մասնագիտական դիտարկումներ» կատարեց. ավանդական դարձած՝ Լեռնային Ղարաբաղը «օկուպացված» է, Լեռնային Ղարաբաղը «պատմականորեն ադրբեջանական հող է» հայտարարություններից բացի, «պարզվում է», որ 1918 թ. Վ. Լենինի ղեկավարած Խորհրդային Ռուսաստանի կառավարության կողմից Կովկասի գործերով արտակարգ կոմիսար⁹ նշանակված Ստեփան Շահումյանը ավագակային խմբի ղեկավար էր: Այս դիտարկումներին ավելացան նոր հորդորներ. «Գիտական հետազոտությունները և գիտական աշխատությունները, գրքերը շատ կարևոր են: Ես շատ ուրախ եմ, որ աշխատանքը այդ ուղղությամբ է ընթանում: Մենք պետք է ավելի շատ ամրացնենք, արդիականացնենք մեր աշխատանքը այդ ոլորտում: Այդ հարցերին պետք է ակտիվորեն միանան ոչ միայն մեր գիտնականները, այլ նաև, կարծում եմ, հանրությունը՝ համացանցի միջոցով: ...Կարծում եմ, որ այդ հարցին (պատմագիտական քարոզչության – Մ.Լ.) անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել: Մենք պետք է մեր քարոզչության մեջ և իբրև գործոն լայնորեն օգտագործենք հարցի գիտական կողմը»¹⁰: Իլիամ Ալիևը հետագայում ևս հանդես է եկել նմանօրինակ ելույթներով: Համացանցում հակահայ քարոզչության հարցում Ադրբեջանի պետական կառույցների համակարգմամբ հանդես գալու վերջին հիմնավոր դրսևորումներից է Ադրբեջանի Հանրապետության տրանսպորտի, կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարության պաշտոնական կայքում «Ադրբեջանի Հանրապետությունում 2014-2020 թթ. տեղեկատվական հանրության զարգացման ազգային ռազմավարություն» վերնագրով հրապարակված փաստաթուղթը. 3.1.6. կետում նշվում է՝ «տեղեկատվական հանրության պայ-

⁸ Речь Президента Азербайджана Ильхама Алиева на торжественном собрании, посвященном 60-летию Национальной Академии наук (15.02.2019).

⁹ Протоколы заседаний Совета Народных Комиссаров РСФСР 2006, 117.

¹⁰ Президент Ильхам Алиев: Необходимо разработать дополнительные механизмы для привлечения азербайджанской молодежи в науку (15.02.2019).

մաններում ժողովրդի պատմական, գրական, մշակութային ժառանգության պահպանում և լայն քարոզչություն», իսկ 15.3. կետում արդեն ամրագրվում է՝ «Ազգային ռազմավարության իրականացման ընթացքում ապահովվում է պետական մարմինների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հանրության ինստիտուտների միջև սերտ համագործակցություն և համակարգված գործունեություն, տեղեկատվական հանրության գաղափարների լայն տարածման համար իրականացվում է ակտիվ քարոզչություն»¹¹:

Համակարգում և մեթոդաբանություն

2006 թ. մինչև այսօր մենք պարբերաբար իրականացրել ենք համացանցային թեմատիկ մշտադիտարկումներ, որոնց շնորհիվ վեր են հանվել պատմագիտական ապատեղեկատվություն պարունակող ավելի քան վաթսուն ադրբեջանական կայք և բլոգ, որոնցից ներկայումս քառասունութեղ է գործում¹²: Հասանելիության իմաստով, այդ գործընթացը կարելի է բաժանել երկու փուլի: Առաջին փուլում՝ 2006-2015 թթ., վերոհիշյալ կայքերը հասանելի են եղել ՀՀ համացանցային տիրույթի օգտատերերի համար, իսկ երկրորդում՝ 2015-2019 թթ., վերոհիշյալ ցանկից պետական պատկանելության ու որոշ գիտաճանաչողական կայքեր անտրամաբանորեն անհասանելի դարձան մեզ համար: Ինչու՞ անտրամաբանորեն. քանի որ դրանց դիտարկումները այսօր էլ հնարավոր է իրականացնել շրջանցիկ կայքերի միջոցով: Ուստի, հայ հետազոտողների մուտքը նմանօրինակ կայքեր «արգելափակելու» ադրբեջանական կողմի փորձերը մասնագիտական տեսակետից անիմաստ էին:

Վերոհիշյալ կայքերը համակարգված դիտարկելու համար, փորձենք դրանք ստորաբաժանել ըստ պատկանելության տարրի: Այդ կերպ կարելի է արձանագրել երկու հիմնական խմբեր: Առաջինը իշխանության տարբեր մարմինները ներկայացնող կամ դրանց հովանու ներքո գործող, պատմագիտական ապատեղեկատվություն պարունակող հիմնական նյութերի կրիչ հանդիսացող կայքերի խումբն է, որը պայմանականորեն բնորոշենք «առաջնային» խումբ եզրույթով: Երկրորդը «առաջնային» խմբի ուղղակի ազդեցության տակ գտնվող, առանձին դեպքերում նույնիսկ ուղղորդվող,

¹¹ Национальная стратегия по развитию информационного общества в Азербайджанской Республике на 2014-2020 годы. Утверждено Распоряжением Президента Азербайджанской Республики от 2 апреля 2014 года (16.02.2019).

¹² Հիշյալ կայքերի համացանցային որոնման հարթակներում ցանցային վարկանիշի բարձրացման նպատակով նոր մեջբերումների առիթ չտալու, ինչպես նաև մասնագիտական այլ հարցերի պատճառով, նշված ամբողջական ցանկը չենք հրապարակում: Հոդվածում անդրադառնում ենք դրանցից առավել կարևորներին:

վերջինիս ապատեղեկատվությունը վերատարածող, ինչպես նաև «սեփական» պատմագիտական ապատեղեկատվությունը ներկայացնող կայքերի խումբն է, որն էլ պայմանականորեն բնորոշենք «երկրորդական» խումբ եզրույթով:

«Առաջնային» խմբի՝ պետական-կառավարչական հաստատությունների, պետական կարգավիճակ ունեցող գիտակրթական, գրադարանային կառույցների կայքերը հիմնականում աշխատում են մեկ ընդհանուր փոխկապակցված շրջայի շրջանակում: Դա կարելի է տեսնել առանձին ներկայացվող հարցերի կրկնվող բովանդակության օրինակով: Այս խմբում յուրօրինակ տեղ է զբաղեցնում Հայաստանի համացանցային տիրույթում անհասանելի՝ Ադրբեջանի նախագահի աշխատակազմին կից՝ «Նախագահական գրադարան» կայքը¹³: Միայն այս կայքի օրինակը բավարար է հասկանալու հակահայ գիտաճանաչողական ապատեղեկատվություն պարունակող հրատարակությունների պատրաստման հարցում պաշտոնական Բաքվի ներգրավվածության բարձր աստիճանը: Ավելին, նման հրատարակությունների բովանդակային ուղղվածությունն ու թիրախավորված թեմատիկ խնդիրները ևս իրենց արտացոլումն են գտել կայքին կից ենթադոմեյնային¹⁴, ինչպես նաև առանձին թեմատիկ կայքերում¹⁵: Հիմնականում հրատարակված մենագրությունների, կոլեկտիվ ուսումնասիրությունների, փաստաթղթերի ժողովածուների հիմքի վրա փորձ է կատարվում քննության նյութ դարձնել, այսպես կոչված, հայկական կողմի իրականացրած «մշակութային վանդալիզմի», «ահաբեկչության», «ցեղասպանության», մի կողմից էլ՝ տարածաշրջանում Ադրբեջանի պետականության շարունակական պատմություն ունենալու «փաստը արձանագրող» դրույթները: Դրանք ոչ միայն շրջանառվում են «առաջնային» խմբի ադրբեջանական կայքերում, այլ նաև տեղ են գտել «երկրորդական» խմբում: Այստեղ կարելի է առանձնացնել «Կեղծարարությունների կործանողները» համացանցային նախագիծը¹⁶: Վերջինիս հեղինակը, թեև ներկայանում է որպես պետական պաշտոնյա, անհատական հետազոտության անվան տակ հայելային մեթոդով վերոհիշյալ դրույթներին հակադիր հայկական շատ աղբյուրներ, պատմական տարբեր իրողություններ փորձում է ներկայացնել իբրև պատմական կեղծիքներ:

¹³ Президентская Библиотека (16.02.2019).

¹⁴ Агрессия. Баку 1990. 20 Января (16.02.2019); Трагедия XX века - Ходжалинский геноцид (16.02.2019); Армянские преступления: Геноцид. Депортация. Террор (16.02.2019); Азербайджанская Демократическая Республика (16.02.2019).

¹⁵ Армянский вандализм: Азербайджанские памятники, находящиеся в плену (16.02.2019); Город Иреван (16.02.2019).

¹⁶ Разрушители фальсификаций (16.02.2019).

Առհասարակ, վերոհիշյալ երկու խմբի համացանցային քարոզչության հիմնական մեթոդաբանությունը կարելի է ներկայացնել հետևյալ օրինակներով.

ա. համատեքստից դուրս բերված փաստարկների դիտարկում,
բ. տարածաշրջանային ոչ ադրբեջանցի ժողովուրդների պատմության և մշակույթի առանձին տարրերի յուրացում,

գ. հայկական կողմի առաջ քաշած պատմական մի շարք մոտեցումների՝ «ցեղասպանություն», «մասնատված հայրենիք», «մշակութային եղեռն», «խաղաղ բնակչության բռնազաղթ» և այլնի կրկնօրինակում,

դ. ադրբեջանական կողմին անուղղակի հակադրվող հայկական պատմական առանձին՝ «Հայ ժողովրդի ծագումնաբանություն», «Հայ ազատագրական շարժումը Արևմտյան Հայաստանում», «Հայոց ցեղասպանություն», «Հայ սփյուռք» հարցերի հանդեպ «նախահարձակ» հետազոտությունների ներկայացում:

Հիշյալ մեթոդաբանությունը գուցե առաջին հայացքից Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի պատմագիտական հարցերի դիտարկումներից մասամբ դուրս է թվում, սակայն դրանցում հիմնախնդրի հետ կապ հաստատելու ուղենշային հստակ մոտեցում կա: Այս թվացյալ ակտիվությունը, պաշտոնական Բաքվի հակահայ համացանցային գիտաճանաչողական քարոզչությունը զարգացնելուն ուղղված հայտարարությունները գալիս են բացատրելու հակահայ գիտաճանաչողական ապատեղեկատվություն պարունակող կայքերի՝ վերջին տասնամյակում ավելանալու միտումները, սակայն համացանցի դեպքում նման աճը միշտ չէ, որ կարող է փաստել արդյունավետ քարոզչության մասին:

Մշտադիտարկումներ և կիրառելիության արդյունավետության գործակիցը

Ադրբեջանական կողմի համացանցում ներկայացվող նյութերի կիրառելիության արդյունավետության գործակիցները պարզելու համար անդրադառնանք մեր իրականացրած բազմակողմանի մշտադիտարկման արդյունքներին: Մշտադիտարկումները սկսենք համացանցի առավել հայտնի «Գուգլի»¹⁷ և «Յանդեքսի» որոնողական համակարգերում, ինչպես նաև դիտարկենք «Google Trends-ի» և «Yandex wordstat-ի» վիճակագրա-

¹⁷ 2017 թ. Գուգլը որոնման համակարգում փոփոխել է կանոնները, որոնց համաձայն, անկախ նրանից, թե «Գուգլի» որ աշխարհագրական դոմեյնով կփնտրես (.am, .az և այլն), արդյունքները ստացվում են ըստ փնտրողի իրական տեղակայման գրանցված աշխարհագրական դոմեյնի, որը շրջանցել կարելի է միայն փնտրողի կողմից որոշ կարգավորումներ կատարելուց հետո, հմնտ. Making search results more local and relevant (01.03.2019).

կան տվյալները: Առավել իրական տվյալներ ստանալու համար իրականացրել ենք ոչ թե հասցեական, այլ՝ ընդհանրական մշտադիտարկում, որի ընթացքում օգտատերը փնտրում է ոչ թե նախապես իրեն հայտնի կայքի անվանումը կամ նյութի վերնագիրը, այլ՝ հետաքրքրող խնդրի ընդհանրական անվանումը կամ դրա հետ կապ ունեցող այլ բանալի բառեր: Հաշվի առնելով սույն ուսումնասիրության ծավալային սահմանափակումները՝ ընդհանուր մշտադիտարկման համար ընտրել ենք առավել տարածված միայն մեկ բանալի բառ՝ «Ղարաբաղ» տեղանունը: Այն փնտրել ենք խնդրո առարկայի համար համացանցի ադրբեջանական տիրույթում առավել կիրառվող երկու օտար լեզուների՝ անգլերեն «Karabakh» և ռուսերեն «Карабах» տարբերակներով: Դրանք համապատասխանաբար փնտրել ենք «google.com»-ում¹⁸ (մշտադիտարկման տեղակայման հասցե՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ) և «yandex.ru»-ում¹⁹ (մշտադիտարկման տեղակայման հասցե՝ Ռուսաստանի Դաշնություն): Մեր դիտարկումները իրականացրել ենք որոնման համակարգերի առաջին էջերում հայտնված հղումների հիման վրա: Ըստ էության, այս մշտադիտարկումը փորձ է նաև որոշակի պատկերացում կազմելու երկու գերտերությունների՝ ԱՄՆ-ի և ՌԴ-ի օգտատերերի՝ խնդրո առարկայի վերաբերյալ ցուցաբերած հետաքրքրությունների մասին: Անշուշտ, այդ պատկերացումը ամբողջական չի կարող լինել, եթե, իհարկե, որևէ կերպ կարելի է խոսել այս մասով չափելի պատկերացման մասին, սակայն այն մեզ կարող է տալ անհրաժեշտ տեղեկություններ իրատեսական դիտարկումներ կատարելու համար:

«Գուգլի» որոնողական համակարգի առաջին էջից «Ղարաբաղ» բառը երկու լեզուներով փնտրելու ժամանակ ստացանք յոթ կայքերի հղումներ: Արդյունքներից առաջին հինգը Վիքի համակարգի (wikipedia.org, wikitravel.org, wikivoyage.org) են պատկանում, դրանցից առաջին երեքը Վիքիպեդիայում՝ «Ղարաբաղ» («Karabakh»)²⁰, «Լեռնային Ղարաբաղի հակամարտություն» («Nagorno-Karabakh conflict»)²¹, «Արցախի Հանրապետություն» («Republic of Artsakh»)²² վերնագրերով տեղ գտած հոդվածներն են: Անշուշտ, Վիքիպեդիայում յուրաքանչյուր գրանցված օգտատիրոջ՝ խմբագրելու հնարավորության օրինակները այս երեք հոդվածներում ակնառու են: Եվ ընդհանուր պատմական տվյալների կողքին մերթընդմերթ տեսնում ենք դեպի ադրբեջանամետ կայքեր տանող հղումներ, կողմերի դիրքորոշումները «հավասարակշռող» որոշ դիտարկումներ: Այնուամեն-

¹⁸ Գուգլի ԱՄՆ դոմեյն տիրույթի արդյունքներ (01.03.2019):

¹⁹ Յանդեքսի ռուսալեզու տիրույթի արդյունքներ (01.03.2019):

²⁰ Karabakh (01.03.2019).

²¹ Nagorno-Karabakh conflict. From Wikipedia (01.03.2019).

²² Republic of Artsakh. From Wikipedia (01.03.2019).

նայնիվ, այս հոդվածները իրենց ամբողջությամբ չեն հակադրվում Հայկական կողմի դիրքորոշմանը: Ավելին, դրանց շարքերում մենք չենք տեսնում «Karabakh» բանալի բառով Ադրբեջանի համացանցային տիրույթում դիտարկվող հոդված: Դրա փոխարեն առկա է «Republic of Artsakh» վերնագրով հոդվածը, որն ամբողջությամբ ներկայացնում է Արցախի Հանրապետության հանրագիտարանային տվյալներն ու Լեռնային Ղարաբաղի հակամարտության համառոտ պատմությունը: Վիքիի շարքից հաջորդ երկու կայքերը զբոսաշրջության հարթակներ են: Այստեղ Արցախի Հանրապետությունում հանգստանալ ցանկացող օտարերկրացին կստանա հիմնական տեղեկություններ, որոնք չեն հակադրվում Հայկական կողմի պաշտոնական դիրքորոշմանը: Առանձին տվյալների դեպքում է միայն նկատելի դառնում ընդհանուր օգտագործման համար հասանելի համացանցային աղբյուրներում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի՝ դեռևս չլուծված հարցերից մեկը: Տեղորոշման մասով առաջին նյութում՝ «Լեռնային Ղարաբաղ»-ում («Nagorno-Karabakh»)՝²³, Ադրբեջանի կազմում Արցախի Հանրապետությունը ներկայացնելու հարցը լուծված չէ: Աշխարհագրական տեղորոշման անվանացանկում «Կովկասի մաս կազմող Ադրբեջանի կազմում» է ներկայացվում Լեռնային Ղարաբաղը: Նույն պատկերը տեսնում ենք նյութում ներկայացված քարտեզում, որը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) սահմաններն է ներառում: Այս հարցը լուծված է մյուս՝ «Լեռնային Ղարաբաղ (Արցախ)» («Nagorno-Karabakh (Artsakh)»)՝²⁴ նյութում: Մշտադիտարկման շնորհիվ ի հայտ եկած վերջին երկու կայքերը վերաբերում են «Freedom House»²⁵ և «Conciliation Resources»²⁶ միջազգային կառույցներին: Առաջինի դեպքում տեսնում ենք կառույցի ազատության և ժողովրդավարության ցուցիչների հիման վրա Արցախի Հանրապետության վերջին տարիների ներքին քաղաքական զարգացումների շուրջ իրականացված վերլուծական համառոտ հոդված: Ներկայացված վիճարկելի գնահատականներից քննարկվող թեմայի համատեքստում տեղավորվում է «D₃.» կետը: Հարցին, թե Արցախում գոյություն ունե՞ն ընդհանուր քաղաքական գաղափարախոսական ազդեցությունից անկախ ակադեմիական և կրթական համակարգեր՝ կառույցի ներկայացրած հոդվածում նշվում է. «Դպրոցներն ու համալսարանները գտնվում են քաղաքական ազդեցության և ճնշման ներքո, որպեսզի խուսափեն զգայուն թեմաների վերաբերյալ տարածայն տեսակետներից, հատկապես տարածքային անվտանգության և կարգավիճակի հետ կապված հարցերում, դասավանդողները

²³ Nagorno-Karabakh (01.03.2019).

²⁴ Nagorno-Karabakh (Artsakh) (01.03.2019).

²⁵ Freedom House, Nagorno-Karabakh (01.03.2019).

²⁶ Conciliation Resources, History: Nagorny Karabakh conflict 01.03.2019).

զբաղված են այդպիսի հարցերի մասով ինքնագրաքննությամբ»: Ակնհայտ է, որ ակնարկը առավելապես վերաբերում է ազգային պատմության՝ Հայոց պատմության դասավանդման և հետազոտական հարցերին: Այստեղ արդեն նկատվում է Արևմտյան արժեհամակարգի ազդեցությունը, որում ազգային արժեքների առաջնահերթությունը իր տեղը զիջում է բազմամշակութայնությանը: Երկրորդ նյութում համառոտ ներկայացված է հիմնախնդրի պատմությունը՝ զերծ մնալով միակողմանի գնահատականներից: Այստեղ, այնուամենայնիվ, տեղ է գտել, այսպես կոչված, ադրբեջանական յոթ բռնազավթված շրջանների դրույթը, ինչպես նաև հիմնախնդրի կողմերի՝ իբրև հավասար չափով տուժածների ներկայացնելու մոտեցումը:

«Գուգլի» մյուս հարթակում՝ «Google Trends»-ում, կրկին փնտրելով «Karabakh» բանալի բառը, նախորդ որոնման արդյունքները առանձին ցուցանիշներով լրացնող պատկեր ենք ստանում²⁷: Հարթակի շնորհիվ պատկերացում ենք կազմում այն մասին, որ 2004 թ. առ այսօր «Գուգլի» որոնման հարթակի ԱՄՆ-ի աշխարհագրական դոմեյնից կատարված «Karabakh» բանալի բառով հարցման ժամանակ՝

ա. 100-բալանոց գնահատման սանդղակում առավելագույնս ակտիվ որոնման ժամանակահատվածը 2005 թ. ապրիլին արձանագրված ամենաբարձր 26 բալից հետո բացարձակ աճի է հասել 2016 թ. ապրիլին՝ կազմելով 100 բալ:

բ. 100-բալանոց գնահատման սանդղակում առավելագույն ակտիվությամբ որոնող՝ ԱՄՆ-ի երկրամասերից առաջին երկու տեղը զբաղեցրել են Կոլումբիայի շրջանը՝ 100 բալ, Կալիֆոռնիայի նահանգը՝ 58 բալ, որոնցից հետո եղած երկրամասերի ցուցանիշներն ու զբաղեցրած տեղերը պարբերաբար փոփոխվում են:

գ. Հիշյալ բանալի բառին զուգահեռ ԱՄՆ-ի օգտատերերի կողմից առավել փնտրվող հինգ բառերն ու արտահայտությունները հաջորդաբար եղել են՝ «Armenia», «Armenia Karabakh», «Karabakh News», «Karabakh War», «Nagorno Karabakh War»:

Դիտարկելով վերոհիշյալ երեք կետերի տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ ԱՄՆ-ի օգտատերերը առավել զգայուն են եղել 2016 թ. ապրիլյան քառօրյալի շրջանում, աշխարհագրորեն առավել հետաքրքրվող երկրամասեր են եղել ԱՄՆ-ի կառավարչական կենտրոն համարվող Կոլումբիայի շրջանն ու ամենահայաշատ նահանգ Կալիֆոռնիան: Զուգահեռաբար փնտրված բառերն ու արտահայտությունները վկայում են, որ ԱՄՆ-ի օգտատերերին հետաքրքրել են Հայաստանի Հանրապետության մասին տեղեկություններն ու Հայաստան-Արցախ կապը, փորձել են տեղեկանալ

²⁷ Google Trends, Karabakh (01.03.2019).

ընթացիկ նորություններից, հիմնախնդրի փոխարեն գերիշխել են պատե-
րազմի ընկալման ներքո որոնվող տեղեկությունները:

Ընդհանուր առմամբ, պետք է արձանագրել, որ «Գուգլի» վերոհիշյալ մշտադիտարկումը ի ցույց չբերեց ադրբեջանական պատմագիտական բովանդակությամբ ապատեղեկատվություն պարունակող կայքեր: Սակայն փաստը, որ ստացված արդյունքների ճնշող մեծամասնությունը գիտաճանաչողական բնույթի է, խոսում է ԱՄՆ-ի անգլալեզու օգտատերերի հիմնախնդրի պատմությանը ծանոթանալու առաջնահերթության մասին:

Եթե «Յանդեքսի» որոնման համակարգում ի հայտ եկած տասնչորս կայքերից մի կողմ դնենք ընդհանրական արդյունքներ բերող *քարտեզներ*, *տեսանյութեր*, *լուսանկարներ*, *նորություններ* բաժինները, ապա մնացյալ արդյունքներից կունենանք վեց գիտաճանաչողական բնույթի կայքեր: Առաջին երկուսը Վիքիպեդիայի ռուսալեզու տարբերակում ներկայացված հոդվածներն են՝ «Ղարաբաղ» («Карабах»)²⁸, «Լեռնային Ղարաբաղ» («Нагорный Карабах»)²⁹: Հաջորդ՝ երրորդ³⁰ ու չորրորդ³¹ արդյունքները վերջիններիս արտատպված տարբերակներն են, որոնք ներկայացված են «Վիքի 2» հարթակի շրջանակում: Բովանդակային մասով Վիքիպեդիայի վերոհիշյալ հոդվածները նման են մեր կողմից արդեն հիշատակված անգլերեն նույնատիպ հոդվածներին: Հինգերորդը բառարանների, հանրագիտարանների, գրախանութների և ֆիլմերի պաշարներում որոնում կատարող ռուսական հայտնի «Ակադեմիկ» («Академик») համացանցային համակարգում տեղ գտած «Լեռնային Ղարաբաղ» («Нагорный Карабах») հոդվածն է: Այն ևս գրեթե չի տարբերվում Վիքիպեդիայի ռուսերեն համանուն հոդվածից: Ինչպես և «Գուգլի» արդյունքներում, այստեղ ևս հանդիպում ենք զբոսաշրջության հարթակներ: Առաջինը ամերիկյան հանրահայտ «TripAdvisor» զբոսաշրջային հարթակն է³², որում պարզապես ներկայացված է Արցախի տեսարժան վայրերի ցանկը: Ի տարբերություն «TripAdvisor»-ի՝ մյուս կայքում «Լեռնային Ղարաբաղ» (Արցախ) («Нагорный Карабах (Арцах)») վերնագրով գիտաճանաչողական բնույթի հոդվածի ենք հանդիպում³³: Խմբագիրը ներկայացնում է Արցախ կատարած իր ճանապարհորդությունը՝ անդրադառնալով ոչ միայն զբոսաշրջիկին հետաքրքրող կազմակերպական հարցերի, այլ նաև փորձում է օգտատերերին ներկայացնել որոշ պատմական տվյալներ՝ ամեն կերպ պահպանելով հավասարակշիռ մոտեցում:

²⁸ Карабах. Материал из Википедии (01.03.2019).

²⁹ Нагорный Карабах. Материал из Википедии (01.03.2019).

³⁰ Карабах. Из Википедии (01.03.2019).

³¹ Нагорный Карабах. Из Википедии (01.03.2019).

³² Достопримечательности в Нагорном Карабахе (01.03.2019).

³³ Нагорный Карабах (Арцах) (01.03.2019).

Ի տարբերություն «Գուգլի»՝ «Յանդեքսում» հանդիպում ենք դեպի սոցիալական ցանց տանող արդյունքի: Ռուսալեզու համացանցային տիրույթում մեծ համբավ ունեցող «В Контакте» սոցիալական ցանցի «Լեռնային Ղարաբաղ» («Нагорный Карабах») ադրբեջանական պատկանելության մասին³⁴ դիտարկման պահին արդեն ուներ 16688 հետևող: Այն ավելի շատ լրատվական ուղղվածության է:

«Yandex wordstat»-ում ևս վիճակագրական հետաքրքիր տվյալներ ենք ստանում: «Ղարաբաղ» («Карабах») բառը և այն արտահայտություններում փնտրելու՝ մարտ ամսի դրությամբ վիճակագրական տվյալներում արձանագրված մեծաքանակ անվանացանկի առաջին հինգ տեղի պատկերը հետևյալն է. «Ղարաբաղ» («Карабах»)՝ 81802, «Լեռնային Ղարաբաղ» («Нагорный Карабах»)՝ 25419, «Ղարաբաղի նորություններ» («Новости Карабаха»)՝ 7588, «Ադրբեջան Ղարաբաղ» («Азербайджан Карабах»)՝ 5142, «Ղարաբաղն այսօր» («Карабах Сегодня»)՝ 4102 անգամ³⁵: Ըստ Եվրասիական տարածաշրջանի (այդ թվում՝ ԱՊՀ և Ռուսաստանի Դաշնության), հիշյալ բանալի բառը մարտ ամսում փնտրված երկրամասերում³⁶ առաջին տեղը զբաղեցնում է Եվրասիան՝ 81598 անգամ: Դրանից 72215 անգամը բաժին է հասնում Ռուսաստանի Դաշնությանը, որից 27376-ը՝ Կենտրոնական Դաշնային շրջանին, 10093-ը՝ Հարավային Դաշնային շրջանին, 9850-ը՝ Մերձվոլգյան Դաշնային շրջանին: 2017 թ. մարտ ամսվա 104191 անգամ փնտրված արդյունքի համեմատությամբ 2018 թ. մարտ ամսին 71933 անգամ է «Ղարաբաղ» («Карабах») բառը փնտրվել, իսկ 2017 թ. առավելագույն արդյունքը արձանագրվել է սեպտեմբերին՝ 199100 անգամ, 2018 թ. օգոստոսին՝ 155251 անգամ³⁷: «Yandex wordstat»-ում ստացված ցուցանիշներն, իրենց հերթին, բավական խոսուն են: «Google Trends»-ի պես, այստեղ «Արցախ» տեղանունը բացակայում է, իսկ տեղանվան «Ղարաբաղ» տարբերակը կրկին փնտրում են նորություններ բառի հետ: Երկու հարթակների արդյունքների միջև հիմնական տարբերությունը կարելի է տեսնել տեղանվան «Ղարաբաղ» տարբերակի մասնակցությամբ փնտրվող արտահայտություններում. անզվերենի դեպքում օգտատերերը փորձում են կապ գտնել Ղարաբաղի և Հայաստանի միջև, ծանոթանալ Ղարաբաղի շուրջ ծավալված պատերազմական գործողությունների հարցերին, իսկ ռուսերենի դեպքում Ղարաբաղի հետ կապը փորձում են գտնել Ադրբեջանի հետ, ծանոթանալ ավելի շատ ներկա վիճակին:

³⁴ Нагорный Карабах (01.03.2019).

³⁵ Что искали со словом «Карабах». Yandex wordstat (02.04.2019).

³⁶ Всего показов по фразе «Карабах». Yandex wordstat (02.04.2019).

³⁷ История показов по фразе «Карабах». Yandex wordstat (02.04.2019).

Այս անգամ ևս արձանագրենք, որ «Յանդեքսի» վերոհիշյալ մշտադիտարկումը, ինչպես «Գուգլի» դեպքում, ի ցույց չբերեց ադրբեջանական պատմագիտական բովանդակությամբ ապատեղեկատվություն պարունակող կայքեր: Առկա պատմագիտական բովանդակությամբ տեղեկատվություն պարունակող կայքերն էլ, որոնք «Յանդեքսում» արձանագրված ընդհանուր արդյունքի ավելի քան 40 տոկոսն են կազմում, հանրագիտարանային բնույթի գիտաճանաչողական աղբյուրներ են:

Եզրակացություններ

Մեր ուսումնասիրության շնորհիվ վեր հանված ադրբեջանական առկա բավական մեծ ծավալի պատմագիտական ապատեղեկատվության օրինակներին զուգահեռ՝ երկու որոնման համակարգերում իրականացված մշտադիտարկումները գալիս են հաստատելու, որ ոչ պատմագիտական շրջանակների համար Ադրբեջանի կողմից պետական բարձր հովանավորությամբ իրականացվող քարոզչությունը՝ ի դեմս պատմագիտական բովանդակությամբ ապատեղեկատվություն պարունակող կայքերի, իրականում, լայն իմաստով, հասանելի չէ նշված շրջանակներին: Ավելին, եթե հաշվի առնենք այդ շրջանակները ներկայացնող օգտատերերի՝ հակամարտող կողմերից ոչ մեկին չպատկանելու հանգամանքը, իհարկե, երկու բացառությամբ՝ հայկական և ադրբեջանական սփյուռքների, դժվար չէ եզրակացնել, որ նրանք Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առանձին հարցերի շուրջ հիմնականում չեն իրականացնում խորքային որոնումներ: Հակառակ դեպքում դա կհանգեցներ այդ կայքերի՝ համացանցի որոնման հարթակների վարկանշային ավելի բարձր տողերում հայտնվելուն, որը և չարձանագրվեց մեր մշտադիտարկումների ընթացքում: Ուստի, համացանցում ադրբեջանական պատմագիտական ապատեղեկատվությունը չունի բավարար չափով անզլախոս և ռուսախոս հետևողներ ու տարածելիության մասով անարդյունավետ է: Հետևաբար, մեր գլխավոր աշխատանքը այս ուղղությամբ պետք է լինի առկա պատմագիտական ապատեղեկատվությունը ոչ թե ուղղակի ձևով հերքելը, այլ նույն շրջանակներին հասու լեզուներով, բովանդակային ընկալելի ձևաչափով, համացանցի առավելագույն տարածելիություն ապահովող գործիքակազմի կիրառմամբ, այլընտրանքային պատմագիտական տեղեկատվություն տրամադրելը:

Գրականություն

Գուգլի ԱՄՆ դոմեյն տիրույթի արդյունքներ, <https://clck.ru/FHPAv> (01.03.2019):
Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, <https://bit.ly/2XgzVjT> (12.02.2019):

- Մելիքյան Վ. 2018, Պայքար Բաքվի համար (1917 թ.- 1918 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ հրատ., 224 էջ:
- Յանդեքսի ուսալեզու տիրույթի արդյունքներ, <https://clck.ru/FUG5V> (01.03. 2019):
- Ստեփանյան Գ. 2011, Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմափոփոխական ուսումնասիրություն), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 650 էջ:
- Агрессия. Баку 1990, 20 Января, <https://bit.ly/2TqrNfr> (16.02.2019).
- Азербайджанская Демократическая Республика, <https://bit.ly/3bSpw3h> (16.02. 2019).
- Армянские преступления: Геноцид. Депортация. Террор, <https://bit.ly/3d3vYpD> (16.02.2019).
- Армянский вандализм: Азербайджанские памятники, находящиеся в плену, <https://bit.ly/2W008HE> (16.02.2019).
- Байков Б. 1923, Воспоминания о революции в Закавказье, «Архив русской революции», изданный И. Гессеном, т. 9, Берлин, «Слово», 307 с.
- Бунятов З. 1965, Азербайджан в VII-IX веках, Баку, изд. АН Азерб. ССР, 383 с.
- Всего показов по фразе «Карабах». Yandex wordstat, <https://clck.ru/FUKwY> (02.04.2019).
- Вступительное слово и заключительная речь Президента Азербайджанской Республики Гейдара Алиева на заседании государственной комиссии по 75-летию юбилею Нахчыванской Автономной Республики - 9 февраля 1999 года, <https://lib.aliyev-heritage.org/ru/5091911.html> (14.02.2019).
- Город Иреван, <https://bit.ly/3bM61ZX> (16.02.2019).
- Государственные праздники и памятные даты Азербайджанской Республики, <https://lib.aliyev-heritage.org/ru/85549954.html> (15.02.2019):
- Достопримечательности в Нагорном Карабахе, <https://clck.ru/FUJgf> (01.03.2019).
- История показов по фразе «Карабах». Yandex wordstat, <https://clck.ru/FULQT> (02.04.2019).
- Карабах. Из Википедии, <https://clck.ru/FQUeD> (01.03.2019).
- Карабах. Материал из Википедии, <https://clck.ru/FQUb9> (01.03.2019).
- Нагорный Карабах (Арцах), http://takliono.ru/karabah_artsakh/ (01.03.2019).
- Нагорный Карабах, https://vk.com/karabakh_azerbaycan (01.03.2019).
- Нагорный Карабах. Из Википедии, <https://clck.ru/FUJ2M> (01.03.2019).
- Нагорный Карабах. Материал из Википедии, <https://clck.ru/FUHgT> (01.03.2019).
- Национальная стратегия по развитию информационного общества в Азербайджанской Республике на 2014-2020 годы. Утверждено Распоряжением Президента Азербайджанской Республики от 2 апреля 2014 года, <https://bit.ly/2APUQmn> (16.02.2019).
- Оганнисян М. 2014, Закавказье в годы Первой мировой войны глазами русского очевидца, «Казачи и горцы в годы Первой мировой войны: материалы Всероссийской научной конференции с международным участием», Ростов н/Д: изд-во ЮНЦ РАН, с. 274-277.

- Президент Ильхам Алиев: Необходимо разработать дополнительные механизмы для привлечения азербайджанской молодежи в науку, Агентство международной информации Trend, 27 апреля 2011, <https://clck.ru/FHLLo> (15.02.2019).
- Президентская Библиотека, <https://bit.ly/2LNzx77> (16.02.2019).
- Протоколы заседаний Совета Народных Комиссаров РСФСР. Ноябрь 1917-март 1918 гг. 2006, Москва, РОССПЭН, 520 с.
- Разрушители фальсификаций, <https://nofalsify.com> (16.02.2019).
- Речь Президента Азербайджана Ильхама Алиева на торжественном собрании, посвященном 60-летию Национальной Академии Наук (14-12-2005 14:15), Официальный сайт Президента Азербайджана, <https://bit.ly/2Tp26vQ> (15.02.2019).
- Трагедия XX века - Ходжалинский геноцид, <https://bit.ly/36h4yda> (16.02.2019).
- Что искали со словом «Карабах». Yandex wordstat, <https://clck.ru/FUKaM>, (02.04.2019):
- Conciliation Resources, History: Nagorny Karabakh conflict, <https://bit.ly/3bNBCL3> (01.03.2019).
- Freedom House, Nagorno-Karabakh, <https://bit.ly/3bRLKT5> (01.03.2019).
- Google Trends, Karabakh, <https://clck.ru/FQ5hR> (01.03.2019).
- Internet Usage Statistics. The Internet Big Picture. World Internet Users and 2020 Population Stats, <https://www.internetworldstats.com/stats.htm> (03.03.2020).
- Karabakh, <https://en.wikipedia.org/wiki/Karabakh> (01.03.2019).
- Making search results more local and relevant, <https://bit.ly/2z8Mt52> (01.03.2019).
- Nagorno-Karabakh (Artsakh), <https://bit.ly/2LZELwV> (01.03.2019):
- Nagorno-Karabakh conflict. From Wikipedia, <https://clck.ru/FUHW3> (01.03.2019).
- Nagorno-Karabakh, <https://wikitravel.org/en/Nagorno-Karabakh> (01.03.2019):
- Ranald MacDonell 1938, ...And Nothing Long, London, Constable and Company Ltd., 328 p.
- Republic of Artsakh. From Wikipedia, <https://clck.ru/FUHYF> (01.03.2019):
- World Development Indicators: Armenia, Azerbaijan, Georgia, <https://clck.ru/FFm5Y> (12.02.2019).

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ՀԱՄԱՅԱՆՑԻ ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

Մեր Հովհաննիսյան

Հայոց երկու պետությունների նորոքյա մարտահրավերներից մեկը շարունակում է մնալ Ադրբեջանի կողմից վարվող ապատեղեկատվական քարոզչությունը, որում իր ուրույն տեղն է զբաղեցնում համացանցում տարածվող ապամազիտական բովանդակությամբ ապատեղեկատվությունը: Վերջինիս

արդյունավետության գործակիցը պարզելու համար իրականացվել է համացանցում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի պատմագիտական հարցերի ներկայացվածության արդի վիճակի գնահատումը: Առհասարակ, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի պատմագիտական հարցերն ընդգրկող մասնագիտական գրականությունը համացանցում շարունակ որոնողական համակարգերի առաջին հորիզոնականներում է հայտնվում, երբ Արցախի վերաբերյալ թեմատիկ որոնում է իրականացվում: Դիտարկումները ցույց են տալիս, որ ադրբեջանական կողմը համացանցում արտաքին աշխարհի համար Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի թեմայով նմանօրինակ քարոզչությունը առավել հաճախ իրականացնում է անգլերեն և ռուսերեն լեզուներով: Այդ քարոզչությունն առաջ տանող կայքերը կարելի է բաժանել առաջնային և երկրորդական խմբերի: Դրանցում առկա գրականությունը հիմնականում շատ ընդհանուր մեթոդաբանություն ունի և հաճախ է հանդիպում երկու խմբերում: Ադրբեջանի իշխանական կառույցները ակտիվորեն ուղղորդում են առաջնային խմբի կայքերին: Սակայն, իրականացված թեմատիկ մշտադիտարկումները ցույց են տալիս, որ հակառակ ադրբեջանական կողմից տարվող ծավալուն աշխատանքների՝ նման կայքերի՝ ապատեղեկատվություն պարունակող գրականությունը թիրախային լսարանի համար համացանցում հասանելիության շատ ցածր ցուցանիշներ ունի:

Բանալի բառեր՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, համացանց, պատմագիտություն, ապատեղեկատվություն, քարոզչություն, վիճակագրություն, հասանելիության գործակից:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРЕЗЕНТАЦИИ НАГОРНО-КАРАБАХСКОЙ ПРОБЛЕМЫ В АЗЕРБАЙДЖАНСКОМ ИНТЕРНЕТ-ПРОСТРАНСТВЕ

Мгер Оганнисян

По сей день одной из злободневных проблем остается проводимая Азербайджаном дезинформационная пропаганда, важное место в которой занимает распространяемая в сети историографическая дезинформация. С целью определения коэффициента ее эффективности была проведена оценка современного состояния презентации в сети историографических вопросов, касающихся Нагорно-Карабахской проблемы. В целом специальная литература, освещающая историографические вопросы Нагорно-Карабахской проблемы, выносятся на первые позиции поисковых систем при тематическом запросе по Арцаху. Азербайджанская сторона в большинстве случаев проводит подобную пропаганду для внешнего мира на английском и русском языках. Литература, размещенная на подобных сайтах, как правило, имеет общую методологию и ее

можно найти как на сайтах первостепенной значимости, так и второстепенной. Правительственные структуры Азербайджана активно курируют сайты первостепенной значимости. Однако тематический мониторинг явствует о том, что, несмотря на масштабную работу, проводимую азербайджанской стороной, показатели доступности материалов, содержащих дезинформацию, для целевой аудитории в интернете очень низкие.

Ключевые слова – Нагорно-Карабахская проблема, интернет, историография, дезинформация, пропаганда, статистика, коэффициент доступности.

ON SOME ISSUES OF PRESENTATION OF THE NAGORNO-KARABAKH PROBLEM IN AZERBAIJANI INTERNET SPACE

Mher Hovhannisyan

One of the contemporary challenges of the two Armenian states to this day remains the misinformation propaganda carried out by Azerbaijan, in which the historiographic misinformation disseminated in the network occupies an important place. In order to determine its efficiency ratio, an assessment was made of the current state of the presentation of historiographic issues related to the topic of the Nagorno-Karabakh problem in the network. In general, the specialized literature covering the historiographic issues of the Nagorno-Karabakh problem is displayed in the first positions of the search engines with a thematic query regarding Artsakh. Observations showed that the Azerbaijani side in most cases conducts similar propaganda for the outside world in English and Russian. Sites actively conducting this propaganda can be divided into primary and secondary groups. The literature posted on them, as a rule, has a common methodology and can be found on the websites of both groups. The governmental structures of Azerbaijan are actively directing the websites of the primary group. However, the conducted thematic monitoring showed that, despite the large-scale work carried out by the Azerbaijani side, the availability indicators of materials containing misinformation for the target audience on the Internet are very low.

Key words – Nagorno-Karabakh problem, Internet, historiography, misinformation, propaganda, statistics, availability ratio.

Խ. ԼԱՉԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1826-1828 ԹԹ. ՈՒՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Հայկազ Հովհաննիսյան

Պատմական գիտությունների դոկտոր
Երևանի պետական համալսարան
ՀՀ, Երևան, Ալ. Մանուկյան 1
Էլ. հասցե՝ haykazh@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 20.10.2019, գրախոսվել է 25.04.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

Հայ պատմագիտությունը բազմիցս անդրադարձել է Խաչատուր Լազարյանի գործունեությանը¹: Ավելին, գրեթե բոլոր հրապարակումներում ընդգծվել է նրա հայրենանվեր գործունեությունը 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ: Սակայն հրապարակումներից և ոչ մեկում չեն մանրամասնվել այդ մասնակցության դրվագները, պատասխան չի տրվել այն հարցին, թե, ի վերջո, ինչու՞մ է այդ հայրենանվեր գործունեությունը: Ներկա հրապարակումը նպատակ ունի լրացնելու այդ բացը. Մատենադարանի Լազարյանների արխիվում պահպանված վավերագրերը մեզ այդ հնարավորությունը լիովին ընձեռում են:

Խ. Լազարյանի նամակները Ներսես Աշտարակեցուն

Առաջին տպավորությունը, որ ստանում է հետազոտողը, թերթելով Լազարյանների արխիվի վավերագրերը, այն է, որ Լազարյանները զգալի կարևորություն են տվել այս պատերազմին. համեմատության համար նշենք, որ այդպիսի բազմաքանակ վավերագրեր, որ կան այս պատերազմի մասին, չկան, ասենք, 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի վերաբերյալ: Ուստի վավերագրերի այս բազմաքանակությունը մեզ թույլ է տալիս պնդել, որ ռուս-պարսկական 1826-1828 թթ. պատերազմի հետ Լազարյանները մեծ հույսեր են կապել, և դա հասկանալի էր. դրված էր պարսկական լծից Արևելյան Հայաստանի ազատագրության հարցը: Այդ է պատճառը, որ Խաչ. Լազարյանի նամակները հաջորդում են մեկը մյուսին, ուղղված են հայաստանյան հոգևոր և աշխարհիկ գործիչներին, բոլոր նրանց, որոնցից կարելի էր ամենափոքր տեղեկությունն ստանալ պատերազմական անցքերի ու իրավիճակի մասին:

¹ Հոդվածը տպագրվում է ԿԳՄՍ գիտության կոմիտեի 18Տ-6F098 դրամաշնորհի շրջանակներում:

Իսաչ. Լազարյանի արխիվում առաջին հերթին աչքի են զարնում տեղեկատվություն ստանալու նպատակով նամակները. խնդրել է տեղեկություններ հաղորդել պատերազմական անցքերից, պարսկական զորքերի տեղաշարժից, նրանց ռազմական պաշարներից, ռուսական բանակի հանդեպ հայերի ունեցած վերաբերմունքից և այլն:

Առաջին գործը, որ ձեռնարկել է Իսաչ. Լազարյանն այս պատերազմում, իրեն հավաստի տեղեկություններ հաղորդողների շրջանակի հստակեցումն է եղել: Եվ ինչպես ցույց են տալիս պահպանված նամակները, Լազարյանի տեղեկատվության գլխավոր աղբյուրը եղել է Ներսես արքեպիսկոպոսը. նրան է վստահել բոլոր տեսակի հանձնարարականները, նույնիսկ եթե դրանք Լազարյանին էին ներկայացվում գաղտնի նշումով: Լազարյանների արխիվում պահպանված նամակները ասվածի աներկբա ապացույցն են:

Նամակներից առաջինը թվագրված է 1826 թ. հոկտեմբերի 18 և ուղղված է Ներսես արքեպիսկոպոսին՝ այսինքն՝ Արցախի համար հայտնի ճակատամարտերից (Ելիզավետոպոլ, Շամխոր) մեկ ամիս անց: Գրում է, որ ստացված նամակը և ուղարկված նյութերը գոհացրել են թագավորին, որը կարգադրել է նամակագրին շնորհակալություն հայտնել: Խնդրում է այսուհետև ևս շարունակել կարևոր տեղեկություններ հաղորդել իրեն՝ «տեղի և պարսկաց ու տաճկական սահմանների գավառներում տեղի ունեցած անցքերի մասին»²: Իսաչ. Լազարյանը միաժամանակ Ներսեսից խնդրում է նամակները հստակ շարադրել, որ թարգմանության ժամանակ դժվարություններ չառաջանան: Ուշագրավ են նամակի հետևյալ տողերը, որտեղ Իսաչ. Լազարյանը Ներսեսից խնդրում է լուրերն արագ ուղարկել՝ մինչև թագավորական սուրհանդակի կողմից դրանք արքունիք հասցնելը. «զառաքեալ նամակ բարձու սրբազանութեանդ ընկալաք յորմէ ծանուցեալ զցանկալի վասն մեր առողջութենէ հայրութեանդ գոհ եմք սամանակալ տեանե... զասացեալ բան ձեր յորդորական. Ի հայոց բառբառ առ հայ բնակիչս քաղաքիդ յունել զդեմ խառնագնաց արձակմանն պարսից ի սահմանս տերութեանս, յայտ լիցի, զի թարգմանեալ մեր աստ ի լեզու ռուսաց ընդ որ և զյայտարարութիւնն տուեալն ի գեներալ Երմոլովէ վրաց և հայոց լեզուան բոլոր բնակչաց տեղվոյդ»³: Հասկանալի է, որ Իսաչ. Լազարյանը ջանում էր արդարացնել այն վստահությունը, որ տաճում էր իր հանդեպ Նիկոլայ Առաջին թագավորը, ուստի նամակում մանրամասն խոսում է իր նոր պաշտոնի ու պարտականությունների, կապերի ու հեռանկարների մասին. «նորին կայսերական մեծութիւնն կարգեաց յառանձին պաշտօնի, որոյ գլխաւոր անդամ ըստ հրամանի կայսերն է յիշեալ քաջաճանօթ մեզ

² Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գործ. 14, վավ. 120, թ. 1:

³ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գործ. 14, վավ. 120, թ. 1:

աստիճանաւորն պաշտօնս այս է այժմ և առ յապայն իսկ տեղեկանալ ի սրբազան հորէդ ի ծածուկ զորանալ լոյ քաղաքիդ մերձակայ գավառաց և կողմանցն տաճկաց զօրս և հաղորդել ամենախորհաբար միջնորթեամբ յիշեալ աստիճանավորին իւրում կայսերական մեծութիւն մի ըստ միօջէ ի գիտութիւն»⁴:

Նամակում ուշագրավ էին նաև այն տողերը, որտեղ Խաչ. Լազարյանը հաղորդում է, որ շուտով գեներալ Ի. Պասկևիչը պետք է ուղարկվի Կովկաս, ուստի խորհուրդ է տալիս Ներսեսին բարեկամական կապեր հաստատել վերջինիս հետ, քանի որ գործող գլխավոր հրամանատար Ա. Երմոլովը կորցրել է իր վստահությունը թագավորի մոտ, և շուտով նրան կփոխարինի գեներալ Ի. Պասկևիչը. «Աստի առաքեցաւ առ ձեզ յայդվայր՝ ի կայսերէն լինել ձեր պրն Երմոլովին և իբրու թե փոխանորդ նորին, բայց խորհրդաբար յայտնեմք սրբազնութեան հորդ զի... վասնզի կայսերն և անգոհունակութիւն զԵրմոլովեն ուստի և դուք զերկոսեան սոսա զԵրմոլովն և զՊասկևիչ հետևեսջիք յարգանօք և սիրով ձգել առ ձեզ երկոցունց ևս զբարեկամութիւն և զհավասար պատիւ ցուցանելով...»⁵: Փաստորեն, Լազարյանին արդեն հայտնի է եղել Ա. Երմոլովի փոխարինման լուրը, ուստի շտապել է այդ մասին տեղեկացնել արքեպիսկոպոսին, թեպետ, պետք է նկատել, որ Ներսեսն այդպես էլ ականջալուր չէղաւ հայազգի արքունի խորհրդականի «հորդորին» և դժկամությամբ համակերպվեց այդ մտքին: Եվ այդուհանդերձ, դատելով Ներսեսին ուղղված նամակներից, Խաչ. Լազարյանը մշտապես շնորհապարտ է եղել արքեպիսկոպոսին և իր գոհունակությունն է հայտնել լուրերի համար: Ավելին, նշելով այդ մասին, հավաստիացրել է արքեպիսկոպոսին, որ նրա ջանադիր գործունեությունն արժանացել է ռուսաց թագավորի ու կառավարության ուշադրությանը: Ուշագրավ է նաև նամակում Խաչ. Լազարյանի ընդգծած այն միտքը, որ այդ գործունեությունը «կնպաստի նաև հայերի դրության բարելավմանը»⁶:

Ներկայացվող հաջորդ նամակը ևս ուղղված է արք. Ներսեսին: Լազարյանի խնդրանքը կրկին նույնն է. պարբերաբար տեղեկություններ հաղորդել ընթացող պատերազմի քաղաքական և ռազմական դեպքերի մասին. «յաճախակի հասուցանելոյ առ իս, ու և իցեք ըստ անսուտ խոստմանց ձերոց զհավաստի զնորագոյն լուրս կողմանցդ ի տեղեկուտիւն մեր զորպիսիս ընկալեալ ի ձենջ մարթացայց ի ժամանակի առաջի առնել բացարձակապէս նորին գերազանցութիւն գեն. Բենկեդորֆի որպեսզի և նա մա-

⁴ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գործ. 14, վավ. 120, թ. 1:

⁵ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գործ. 14, վավ. 120, թ. 1-2:

⁶ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 103, գ. 5, վավ. 247, թ. 1:

տուացե կայսերն ի գիտութիւն նորին մեծութեան բոլոր անցից կողմնացդ...»⁷:

Ընդամին, միայն Ներսեսի հաղորդած տեղեկություններով չի բավարարվել Խաչ. Լազարյանը. արխիվում պահպանվում են նաև նույն պահանջով Հովհաննես արքեպիսկոպոսին ուղղված նամակները. «Ճանուցանել ըզ զանազանութիւն որպիսութեանց և զնորանոր լրոց քաղաքական մանավանդ ի մասին պատերազմի պարսից ընդ աստուաշազօր տերութեան ռուսաց...»⁸: Մեր կարծիքով, լինելով փորձառու գործիչ, Լազարյանը ցանկացել է երկու տարբեր ճամբարի բարձրաստիճան հոգևորականներից տեղեկանալ կատարվող դեպքերի և իրադարձությունների մասին (Հովհաննես արքեպիսկոպոսը հետագայում ընտրվեց հայոց 130-րդ կաթողիկոս՝ Հովհաննես Ը Կարբեցի անվամբ և մեղմ ասած՝ տանելի հարաբերություններ չունեւր Ներսեսի հետ՝ Հ.Հ.): Մյուս կողմից, նամակներում Լազարյանը չի թաքցրել իր խնդրանքի բուն նպատակը. ստացված տեղեկությունները գեներալ Բենկենդորֆի միջոցով փոխանցվում էր թագավորին: Ավելին, դիմելով երկու ազդեցիկ արքեպիսկոպոսներին, Խաչ. Լազարյանը նրանց ոգևորելու և հուսադրելու նպատակով նամակում կրկին ընդգծում է, որ հաղորդվող տեղեկություններն իրեն հարկավոր են հայ ժողովրդին վերաբերող հարցերը ռուսական արքունիքում բարձրացնելու համար. «մտադիր եմ եթե տէր յաջողեսցէ կրկին հանդերձ հընտանեղքս դիմել անդ յավարտ հասուցանելոյ զգործս բոլոր հայոց հասարակութեանց օգտավետ վախճանաւ ի դրութիւն համազգեսցս որպեսզի թեթեւացեալ մարդասցին վայելել զառաջին իվրեանց անդօրութեանց վիճակ որում ևեթ իբրու սրտի հարազատ հոր հայերնյաց ցանկացող եմ»⁹:

Թե որքան մանրամասն էին Լազարյանին հասցվում անհրաժեշտ լուրերը, ապացույցն այս վավերագիրն է, որոնք, ինչպես արդեն նշեցինք, կարճ ժամանակ անց Խաչ. Լազարյանի կազմած զեկուցագրի տեսքով հաղորդվում էր ռուսաց թագավորին. «Թիֆլիսից ապրիլի 9-ին հաղորդում են, որ գեներալ Երմոլովը պատրաստվում է մեկնել Պետերբուրգ: Նախկինում արդեն հաղորդել էինք, որ գեն. Բենկենդորֆը մարտի 29-ին ռուսական բանակի ավանգարդի հետ մոտեցել է սահմանին, նրա հետ է նաև Պասկևիչի հրամանով այստեղ ժամանած արքեպիսկոպոս Ներսեսը, որպեսզի գտնվի զորքերի հետ: Գեն. Դիբիչը ապրիլի 6-ին վերադարձել է Թիֆլիս: Կարծում են, որ գեն-համհարզ Բենկենդորֆը ապրիլի 10-ին կլինի Էջմիածնում: Երմոլովի կողմից Ղարաբաղ ուղարկված գեն. Մադաթովի ճակատագիրը գեն. Պասկևիչի կողմից պաշտոնը ստանձնելուց հետո հայտնի չէ այն

⁷ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 14, վավ. 135, թ. 1:

⁸ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 14, վավ. 126, թ. 1:

⁹ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 14, վավ. 135, թ. 2:

պատճառով, որ նա հրամանի համաձայն պետք է վերադառնա Թիֆլիս: Ըստ տարածված լուրերի, մեր գլխավոր կայանը պետք է գտնվի Էջմիածնում, իսկ գեն. Դիրիջինը՝ հին Նախիջևանում: Երևանի պաշարման մասին պարսիկները չեն մտահոգվում, սակայն նրանից 100 վերստ հեռավորության վրա, Սարդարապատ գյուղում ամրություններ են կառուցում, այստեղ Երևանի սարդարի տունն է և ընտանիքը: Պարսիկների ճակատամարտի և զորքերի պատրաստության և զորքերի միավորման մասին լուրեր չկան»¹⁰, - նշվում էր Խաչ. Լազարյանի զեկուցագրում: Եվ ընդհանրապես, Լազարյանների յուրաքանչյուր զեկուցագրում հաղորդվում էին տեղեկություններ, որոնք խիստ կարևոր էին ռուսական արքունիքի համար. ասենք թեկուզ նույն զեկուցագրի հետևյալ հատվածը. «Ռուսական բանակի շարժմանը զուգընթաց, գեն. Երմոլովի հրամանով Շաքիում կանխվել է տեղի ոչ մեծ դժգոհությունը: Գեն. Պասկևիչը, լսելով այդ, այնտեղ է ուղարկել մի ջուկատ, որի ժամանումով իրավիճակը հանդարտվել է: Երևանի բնակիչներն իրենց փրկության համար անցել են Արաքսից այն կողմ: Հույս ունեն, որ ռուսական զորքերը շուտով կգրավեն Երևանը»¹¹: Եվ զեկուցագրի վերջին նշումը. «Այս լուրերով գրությունը ապրիլի 22-ին ուղարկվել է Խաչ. Լազարևին և այնուհետև հասցվել է իշխան Դ.Վ. Գոլիցինին և Հ. Լազարևի միջոցով ամսի 23-ին գեներալ Բենկենդորֆին»¹²:

Խաչ. Լազարյան – գեներալ Ա. Երմոլով

Ներկա հրապարակման մեր հաջորդ խորհրդածությունը վերաբերում է գեն. Ա. Երմոլովի հետ Խաչ. Լազարյանի ունեցած հարաբերությունների հարցին: Այսպես, գլխավոր հրամանատար գեն. Ա. Երմոլովի մասին կարծիքները բավական հակասական են. պարզվում է, նրա մասին Լազարյանների արտահայտած կարծիքները իր օգտին չեն: Այն, որ Կովկասում ռուսական բանակի գլխավոր հրամանատար գեներալ Ա. Երմոլովն առանձնապես չի փայլել հայամետ դիրքորոշումներով, իրական ճշմարտություն է, թեպետ պատմագիտական մեր ուսումնասիրություններում հակառակն է ներկայացված: Համենայն դեպս, նամակը, որից պատրաստվում ենք մեջբերում անել, դա է փաստում. Ներսեսին ուղղված նամակում Լազարյանը տեղեկացնում է, որ կառավարչապետ Ա. Երմոլովը մի գրությամբ պահանջել է թագավորից վերադարձնել հայերին տրված արտոնությունները. «Մեք աստ ի ձեռն սրբազան հարց մատուցաք յոտս կայսեր զգանազան խնդիրս ի պէտս ազգիս հայոց զոր ընկալեալ կայսեր բարեհաճութեամբ արկեալ կօմիտետն մինիստրաց ի քննութիւն այնոցիկ չորս և մի-

¹⁰ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 9, թ. 1-2:

¹¹ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 2:

¹² Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 2:

նիստրաց վճռեալ ըստ արժանւոյն և միանգամայն կամեցեալ իմանալ զառաջարկութիւնս երկուց կուսակալաց այնց տեղեաց ուր բնակին հայք...»¹³: Հավելենք, որ պատերազմի սկզբում Խաչ. Լազարյանի մերձավոր օգնական Ներսես արքեպիսկոպոսն առանձնակի հիացմունքով է խոսում գեն. Երմոլովի և նրա մերձավոր զինակից, հայազգի գեն. Մադաթովի մասին և անգամ իր տարակուսանքն էր հայտնել Ա. Երմոլովին Ի. Պասկևիչով փոխարինելու՝ կայսր տիրակալի ընդունած որոշման կապակցությամբ: Այդուհանդերձ, նամակում Լազարյանը հայտնում է, որ գեներալի չար դիտավորությունները կանխելու նպատակով ինքը շտապում է մեկնել Պետերբուրգ: Ուշագրավ է նաև, որ նամակում Ներսեսից կրկին խնդրում է բարեկամություն հաստատել կառավարչապետի մոտ ծառայության անցած գեներալ-ադյուտանտ Ի. Պասկևիչի հետ՝ «որպէս ծանուցեալ եմք ի վաղուց, նմանապէս Երկրողեմք յայսմ նամակիս ևս, զի ամենայն հնարիվք կապեցիք ընդ նորոգ եկեալ այդր գեներալ ադյուտանտի կայսեր սիրով մտերիմ բարեկամութեան, թերևս նպաստամատոյց լինելոյ նմա սակս ի բարօրութիւն կենաց և վիճակի ազգիս սիրեցեալ...»¹⁴:

Գրեթէ նույն բովանդակությամբ մի նամակ էլ Խաչ. Լազարյանը գրում է Հովհաննես արքեպիսկոպոսին: Ուղարկելով մինիստրների կոմիտեին ուղղված Ա. Երմոլովի զեկուցագրի պատճենը՝ հայերի արտոնությունները վերացնելու մասին, նա հաստատում է, որ Երմոլովի և Ֆինանսների նախարար Կանկրինի դիտավորությունները կանխելու նպատակով ինքը պատրաստվում է հանդիպել ռուսական կառավարության անդամների հետ. «որպէս յայտնի էր սրբազան հօրդ, զի գործք հայոց բարօք ընթանալին ի կոմիտետն մինիստրաց, սակայն կամեցեալ մինիստրաց իմանալ զառաջարկութիւնս երկուց կուսակալաց այնց կողմանց ուր բնակին հայք գտեալ են ի միջի զանազան յայտարարական թղթոց զերկու առաջադրութիւնս վասն ազգին հայոց բնակելոց ի Ռուսաստան, յորոց զմին առաջարկեալ գրավ Վորոնցովն, որ վկայելով զբարի կողմանց հայոց խնդրէ հաստատել զնախկին պրիվիլեկն նոցա...»¹⁵: Ինչպես նախորդ, այնպես էլ Հովհաննես արքեպիսկոպոսին ուղղված այս նամակը հանգեցնում է այն համոզման, որ Լազարյանի և կառավարչապետ Ա. Երմոլովի հարաբերություններում սառնությունը, անշուշտ, առկա է. «թեպետև մտադիր էաք զնալոյ փութոյ Ս. Պ. որպէս այս պաշտոնատարութիւն նույն և վասն հայոց հասարակութեանց գործոց ...գործքն հասարակութեանց մերոց որպէս արդեն գիտէք գտանին ի բարձր խորհրդարանի տեարց մինիստրաց ի քննութիւն ըստ կայսերական հրամանի տացէ տէր բարօք ի կատար հասանել

¹³ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 14, վավ. 121, թ. 1:

¹⁴ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 3:

¹⁵ Մատենադարան, Լազարյանների արխիվ, վավ. 122, թ. 1:

որպես կամինքս զի և մէր քրտնավաստակ աշխատանք մի ի դերևս ելցեն... քանզի կուսակալ Երմոլովն ի վրով գաղտնի այլևայլ առաջարկութեամբ խորհրդարանին մինիստրաց ոչ դադարի վնաս հասուցանել յընդհանուր տարաբախտութիւն նոցին, զոր մե նորին բարձու սրբազանութիւն գանգատէ մեզ և անբավական է յոյժ¹⁶»: Ենթադրում ենք նաև, որ, տեղեկացված լինելով Ներսեսի և Ա. Երմոլովի բարեկամական հարաբերությունների մասին, Լազարյանը չի ցանկացել խաթարել այդ հարաբերությունները, թեպետ Հովհաննես արքեպիսկոպոսին գրած նամակում այդ մասին հաղորդում է ակնհայտ վրդովմունքով. «Երմոլովն որ ըստ չարասրտութեան իրում պահանջէ, զի պրիվիլեյն հայոց խափանեացի և ընդունայն եղիցի, զայս Երմոլովի առաջարկութիւնը օրինակեալ ոմն ի բարեկամաց մերոց երևելի իշխանաց հասոյց մեզ ի գիտութիւն և մեք անդէն ընս օրինակեալ զնույն հանդերձ թարգմանութեամբ առաքեմք առ ձերդ հայրութիւն, զի դուք ևս գիտասցիք, բայց ասեմք ի ծածուկ պահեսցիք և ոչ ումեք յայտնեսցիք, զի և առ մեզ իսկ գաղտնի ելեալ ժամանեաց, այլ եթե դիպեսցի մարթ է ցուցանիլ մերձավորաց և հավատարմաց ձերոց միանգամայն պատուիրելով զիրատարակել, սակայն այսու ի հուսահատի լերուք...»¹⁷:

Խաչ. Լազարյանի նամակագրությունը Մելիքսեթբեկ Ղամազյանի և Հովհաննես արքեպիսկոպոսի հետ

Խաչ. Լազարյանին ընթացող պատերազմի մասին տեղեկություններ հաղորդողներից մեկն էլ Մելիքսեթբեկ քահանա Ղամազյանն էր. նրա նամակները ևս հաճախ կարելի է հանդիպել Լազարյանների արխիվում: Օրինակ, նամակներից մեկում (թվագրված է 23 ապրիլի 1827 թ.՝ Հ.Հ.) քահանա Ղամազյանը տեղեկություններ է հաղորդում գեն. Բենկենդորֆի գլխավորությամբ ռուսական զորքերի առաջխաղացման, Էջմիածինը գրավելու, Մայր աթոռի միաբանների ցույց տված օգնության, պարսից զորքի հետ բախումների, Իսմայիլ խանի գերեվարման, Սարդարապատի վրա հարձակման նախապատրաստության և, վերջապես, Երևանի շրջակայքի հայ բնակչությանը բերդում փակելու մասին. «նորոգ լուր այսէն, զորս ծանուցանեմ ձերին վեհանձնութեանն ի 13 ներկայ ամսոյս զորքն ռուսաց մտեալ են ի Սբ աթոռն Էջմիածին և գտեալ են անդ վարդապետս 21 և եպիսկոպոսունս 2: Ոմն Դանիէլ վարդապետ որ սրբոյ աթոռոյ ամբարդարն է, նա ծածուկ ի միաբանից և պարսից բավական այլուր և ցորեան ի մի ծածուկ տեղ պահպանեալ ունելով, երբ սրբազան առաջնորդն մեր ընդ զորաց ժամանեալ է Էջմիածին, յայն նոյն Դանիէլ վարդապետն բացեալ է

¹⁶ Մատենադարան, Լազարյանների արխիվ, վավ. 126, թ. 2:

¹⁷ Մատենադարան, Լազարյանների արխիվ, վավ. 122, թ. 1:

զայն ամբարն և տուեալն զօրացն ռուսաց թե այլիւր, թե ցորեան մինչև 1806 փութ և գինի եղեալ է անդ պահպանեալ... Ոմանք յայժմ ի մէջ Երևանայ բերդումն են, ոմանք յԱզուրի, ոմանք ի Կուխս և ոմանք ի սբ. Էջմիածին: Յամսոյս 15 ի զօրաց ռուսաց 300 սալդաթ, երկու թոփօվ գնացեալ են Ներքին Ակլանլու անուանեալ գետոն վերա չայթուկ բերելոյ հասեալ է անդ Հասան խանը... 500 ձիաօրոք պատերազմեալ է ընդ երեք հարիւր սալդաթաց ոչինչ չէ կարողացեալ շինել... երեք մարդ ի նոցանէ սպանեալ են մերոց զօրք... Իմայել խանն վիրավորեցեալ բերյալ են ի սբ. Էջմիածին, այժմ շրջապատն Սարդարապատու պատեալ ունեն զօրքն ռուսաց...»¹⁸: Ուշագրավ է, որ նամակի հեղինակը մյուսների նման ևս տեղեկություններ է հաղորդում Մադաթովին պաշտոնից գրկելու մասին, նշանակում է, որ Խաչ. Լազարյանը, իրոք, հետաքրքրված է եղել վերջինիս հետ կապված հարցերով. «Գեներալ Մադաթովին ետս կացուցին և բերեալ եղև աստ: Այժմ ի քաղաքիս է (Թիֆլիսում՝ Հ.Հ.) է: Այսքան նոր համբաւ, զօրս գրեալ է ի Էջմիածնայ և յայսն հետէ ևս, որ ինչ լուր լինիցի գրելոց են»¹⁹: Չանցած մեկ շաբաթ՝ ապրիլի 30-ին, Ղամազյանը Խաչ. Լազարյանին ուղարկում է հերթական նամակը. հաղորդում է, որ, Էջմիածնից ստացված լուրերի համաձայն, գեն. Բենկենդորֆն այժմ շրջապատել է Երևանի բերդը և սպասում է փոխարքայի և մեծ թնդանոթների գալստյանը, ընդգծում է պարսից զորքի թույլ լինելը և այլն. «Յանցեալ փօստին գրեալ են ըզ հարկավորն այժմ ևս զայս ունի ծանուցանէ: Գրէն ի սբ. Էջմիածնայ զնորոգ անցս թէ ամսոյս 24 գեներալն ամենայն զօրօգ գնաց Երևան պատել զ բերթս և սպասել գալստեան կուսակալի մինչև կուսակալը ազդ չգայ Երևանու բերթի վերայ կոնի չի լինի... այնպէս են կարգադրեալ ինքեանք, վասն որոյ և մեք հազար սալդաթով և երկու թօփօվ մնացինք ազդ մինչև եկեսցէ կուսակալը և մեծ թօփերն: Կուսակալը ահա պատրաստի է յետ քանի ավուրց զօրօք չուէլ աստի, սպասել մեծ թօփերուն, այսօր կամ ի վաղին մտանելոց է ի քաղաքս, այլևս գրէն թե ամենևին զօրութիւն պարսից ոչ գոյ այլ գտանին տկար մինչև յոյր և հազիվ, ուրեմն ի յոյժ բացակա տեղեաց կարողանա հայել դէպք նոցի...»²⁰:

Մեխքսերթեկ քահանա Ղամազյանի 1827 թ. հունիսի 8-ի նամակը ևս գետնողված է Լազարյան արխիվում. հաղորդում է, որ ռուսական բանակի հրամանատար Ի. Պասկևիչը հունիսի 1-ին դուրս է եկել Լոռուց և ճանապարհվել դեպի Երևան: Այնտեղ ուշագրավ հաղորդում կա հայկական կամավորական ջոկատի մասին. «Չօրք հայոց օր ավուր յավելանան մինչև ցարդ երկու գունդ հետևաք գնացեալ են Երևան, ունելով զնշան դրօշակաց

¹⁸ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 5, թ. 1:

¹⁹ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 2:

²⁰ Մատենադարան, Լազարյանների արխիվ, վավ. 11, թ. 1:

արքայիցն հայոց; Այժմ ժողովեալ լինին ձիաւոր զօրք և վասն սոցին ևս պատրաստել զայ դրօշակ...»²¹:

Ակնհայտ է, թե՛ Ներսես և Հովհաննես արքեպիսկոպոսների և թե՛ Մելիքսեթբեկ քահանա Ղամազյանի՝ Խաչ. Լազարյանին ուղարկված նամակներում գրեթե միևնույն՝ ռազմական իրավիճակը բնութագրող տեղեկություններ են. զորքերի տեղաշարժ, հայերի օգնություն, պարսից զորքերի վիճակ և այլն: Այս ամենը մեզ համոզում է, որ խնդիրը կարծես թե նրանում չէր, թե ով ավելի լավ կնկարագրեր իրավիճակը, այլ որքանով էին այդ տեղեկությունները հավաստի. ամենայն հավանականությամբ, միմյանցից անկախ ուղարկված այս զեկույցները Լազարյանը համադրել է՝ նպատակ ունենալով կրկին ճշգրտել տեղեկությունների հավաստիությունը ռուսական արքունիք ներկայացնելուց առաջ:

Թե ինչպես էր վերլուծում հաղորդած տեղեկությունները Խաչ. Լազարյանը, վկայում են նրա կազմած և ռուսական արքունիք ներկայացված հաղորդագրություն-զեկուցագրերը. ներկայացվող զեկուցագիրը, օրինակ, կազմված է Էջմիածնից, Թիֆլիսից, Թավրիզից և Երևանից հաղորդած ռազմական լուրերի հիման վրա: Դրանում մանրամասն նկարագրված է ռուսական զորքերի առաջխաղացումը դեպի Էջմիածին՝ գեն. Բենկենդորֆի գլխավորությամբ, ինչպես նաև շեշտվում է Էջմիածնի միաբան Դանիել արքեպիսկոպոսի՝ ռուսական բանակին ցույց տված նյութական օգնությունը. «Ինչպես վանքը, այնպես էլ նրա շրջակայքը գրավված է ռուսների կողմից, պարսիկները նահանջել են: Վանքում գտնվում են 20 արքեպիսկոպոսներ: Նրանցից Դանիել արքեպիսկոպոսը պարսիկներից կարողացել է թաքցնել բավարար քանակով հաց... 200 պարկ այլուր ցորեն, ինչպես նաև 600 դույլ գինի»²²:

Ի դեպ, մեզ հաջողվեց գտնել այս տեղեկության աղբյուրը. պարզվում է՝ այդ մասին Լազարյանին հաղորդել էր Մելիքսեթբեկ քահանա Ղամազյանը 1827 թ. ապրիլի 23-ին ուղարկած նամակում. «նորոգ լուրերն այս են. զորս ծանուցանեմ ձերին վեհազնութեանս, որ ի 13 ներկայ ամսոյս զօրքն ռուսաց մտեաին ի սբ. Աթոռն Էջմիածին և գտեաին անդ վարդապետս 21 և եպիսկոպոսանս 2, ոմն Դանիել վարդապետ, որ Սրբոյ Աթոռոյն ամբարատարն էր. նա ծածուկ ի միաբանից և պարսից, բավական այլուր և ցորեան, ի մի ծածուկ տեղ պահպանեալ... նույն Դանիել վարդապետը բացեալ է զայն ամբարը և տուեալին զօրացն ռուսաց թե այլուր և թե ցորեան 1206 փութ և գինի եղեալն է անդ պահպանեալ իբրև 30 ...կարաս ի նույն գինեոց տուեալեն 600 դույլ...»²³:

²¹ Մատենադարան, Լազարյանների արխիվ, վավ. 47, թ. 1:

²² Մատենադարան, Լազարյանների արխիվ, վավ. 1, թ. 1:

²³ Մատենադարան, Լազարյանների արխիվ, վավ. 5, թ. 1:

Խաչ. Լազարյանի զեկուցագրերը ռուսական կառավարությանը

Խաչ. Լազարյանի զեկուցագրերը, որոնցում ամփոփվում էին 1827 թ. գարնան ընթացքում Թիֆլիսից և Էջմիածնից ստացված լուրերը, հաստատում են գեներալ Բենկենդորֆի՝ Էջմիածնի և Սարդարապատի մատուցներում պարսկական հեծելազորի հանդեպ տարած հաղթանակները. «Ռուսների ժամանումից երկու օր առաջ, - շարունակվում է այնուհետև Խաչ. Լազարյանի զեկուցագրում,- պարսիկները այստեղ ապրող հայերին, մեծ թվով եղջերավոր անասունների և ձիերի հետ տեղափոխել են Արաքս գետից այն կողմ և ուղարկել Բայազետ, Խոյ և Մակուի գավառ: Մեծ թվով հոգևորականների ևս բռնությամբ տարել են Երևանի բերդը: Ապրիլի 15-ին 300 հոգուց բաղկացած ռուսական ջոկատը երկու հրանոթով ուղարկվել է Ալլանլու կոչվող գյուղը»²⁴: Հաղորդագրությունում խոսվում է նաև ապրիլի 16-ին Սարդարապատի մոտակայքում ռուսական զորքերի և պարսկական ջոկատի բախման մասին. «Ապրիլի 16-ին գեներալ Բենկենդորֆը շարժվեց դեպի Սարդարապատ, որպեսզի հասնի նահանջող պարսիկներին: Ճանապարհին հանդիպելով թշնամու հեծելազորին, որը գլխավորում էր Հասան խանը, Երևանի սարդարի եղբայրը իր հեծելազորով, որոնք միասին կազմում էին 500 մարդ... ռուսական ջոկատը ջախջախեց նրանց, որոնց մեջ կային մեծ թվով քրդեր և արախցիներ, որոնց թվում և Իսմայիլ խանը: Ինքը՝ Հասան խանը, թողնելով սպանվածներին, փախավ Սարդարապատ»²⁵: Հաղորդագրության մեջ հայտնվում է նաև, որ Երևանի շրջակայքի Նորքի և Քանաքեռի հայ բնակիչներին պարսիկները փակել են Երևանի բերդում. «Երևանի սարդարը պատրաստվում է դիմադրության և ունի բավականին դաժան մտադրություններ՝ լեռնական ժողովուրդներին ոտքի հանել և դրդել հուզումների, սակայն դա քիչ հավանական է...»²⁶, իսկ Պարսկաստանի հայերի նկատմամբ արտակարգ թշնամական վերաբերմունք է ստեղծվել՝ կապված Ներսեսի գործունեության հետ, «որն ինքն անձամբ և նամակների միջոցով, կամ Վեհափառ հայրապետի շնորհագրերով ոգևորել է Երևանի և Նախիջևանի խանությունների ժողովրդին՝ որպեսզի նրանք աջակցեն ռուսներին՝ իր հայրենակիցների և Հայաստանի բարօրության համար...»²⁷:

Զեկուցագրում ուշագրավ մեկ այլ տեղեկություն ևս կա. «Պարսկաստանում լուրեր են պտտվում, թե իբր Երևանի սարդարը հայերին սիրաշահելու նպատակով մղում է քաղաքական խաբեության, թե իբր վրաց արքայորդի Ալեքսանդրը, որն ամուսնացած է հայ իշխանադստեր հետ, պատ-

²⁴ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 1-2:

²⁵ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 2:

²⁶ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 3:

²⁷ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 4:

րաստ է հոչակվելու որպես հայոց թագավոր՝ պայմանով, որ հայերը պաշտպանեն պարսիկներին ռուսներից և որպես պարզև վերականգնել նրանց թագավորությունը: Թեպետ այս լուրերը գոյություն ունեն, սակայն բնակիչները դրան չեն հավատում և պարսիկներին համարում են իրենց թշնամի»²⁸:

Այդ զեկուցագիրը, որը, անշուշտ, օրեր անց պետք է դրվեր ռուսաց թագավորի առջև, կարծում ենք, հայանպաստ մեկ շեշտադրում ևս ուներ. չմոռանանք, որ ռուս-պարսկական պատերազմի ավարտին հենց Խաչ. Լազարյանի նախաձեռնությամբ հրապարակ նետվեց հայոց թագավորության վերականգնման գաղափարը, ուստի, կարծում ենք, որ այս ընդգծումով հայազգի հայրենասերը նպատակ ուներ ռուսաց թագավորին «գլխի գցել», որ եթե պարսիկները խոստանում են հայերին վերականգնել իրենց թագավորությունը, ապա հայ ժողովուրդը պետք է արժանանա ռուսաց թագավորի ողորմածությանը՝ նկատի ունեալով այդ պատերազմում հայ ժողովրդի անմնացորդ նվիրվածությունը ռուսական գահին: Ավաղ, այդ նկատառումներն ու ակնկալիքներն այդպես էլ մնացին սոսկ ցանկություն:

Խաչ. Լազարյանի հաջորդ հաղորդագրությունը գրեթե նույն բովանդակությունն ուներ. նկարագրվում են ընթացող պատերազմի ռազմական գործողությունները, թեպետ պետք է նկատենք, որ նախորդի համեմատությամբ զեկուցագիրն արդեն սևագիր վիճակում չէր և բավական վայելչագրված շարադրանքի տեսք ուներ: Եվ այն, որ զեկուցագրում բացակայում էր Պարսկաստանում տարածված լուրերի մասին հատվածը, և ավելի սեղմ էին ներկայացված ռազմական գործողությունները, հաստատում է մեր այն նկատառումը, որ ռուսական արքունիքում, այդուհանդերձ, հաղորդագրություն - զեկուցագրերը ռուսական գրագիրները նախապես համառոտագրել և վերաձևակերպել են: Այդուհանդերձ, զեկուցագիրը հաստատում է, որ Հասան խանը փորձում է ոտքի հանել Կովկասի լեռնականներին: Հաղորդվում է նաև, որ գեն. Բենկենդորֆի հետ է նաև Ներսեսը, որը Երևանի և Նախիջևանի խանությունների հայերին ուղղված իր նամակներով ու կաթողիկոսական կոնդակներով կոչ է անում օգնել ռուսներին պարենամթերքով և նրանց հետաքրքրող անհրաժեշտ տեղեկություններով²⁹:

Խաչ. Լազարյանի՝ ռուսական արքունիք ուղարկած հերթական զեկուցագիրը կազմվել էր 1827 թ. մայիսին՝ Թավրիզից և Պարսկաստանի այլ քաղաքներից ստացված տեղեկությունների հիման վրա: Այնտեղ խոսվում է Պարսկաստանում տիրող տրամադրությունների, ծագած հուզումների, ինչպես և այն մասին, որ ժողովուրդը հաշտություն է ցանկանում: Նշվում է նաև, որ սարդարը ձգտում է ռուսական հրամանատարության ու-

²⁸ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 5:

²⁹ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 1-3:

շաղրությունը շեղել էրևանի բերդի գրավման մտքից և հասնել հաղթության, հակառակ դեպքում՝ պաշարման գործը ձգձգել մինչև ամռան շոգերը: Ուստի այդ զեկուցագրերում Լազարյանը շարունակ շեշտել է պարսկական զորքերի ծանր վիճակը, նրանց ձեռնարկելիք առաջիկա քայլերը, հաղորդել է Երևանի սարդարի և Հասան խանի խորամանկ մտադրությունների մասին: Դրան հակառակ՝ Լազարյանը հատուկ ընդգծել է հայոց կաթողիկոսի և Ներսես արքեպիսկոպոսի՝ հայերին ուղղված կոչը և հայության ցուցաբերած անձնազոհության փաստերը³⁰:

Ռուս-պարսկական պատերազմում Խաչ Լազարյանի ծավալուն գործունեության կարևոր արդյունքներից մեկն էլ Ներսես արքեպիսկոպոսի հանդեպ հոգաձության և հովանավորության դրսևորումն էր: Հայտնի է, որ ռուս-պարսկական պատերազմի ընթացքում ծագեց և այնուհետև մեծ թափ ստացավ Ներսես արքեպիսկոպոսի և Կովկասում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Ի. Պասկևիչի միջև ծագած հակամարտությունը: Մենք, իհարկե, տարբեր առումներով անդրադարձել ենք այդ հարցին³¹, սակայն հարկ չի եղել մանրամասնել խնդրի հանգուցալուծման գործում Լազարյանի ունեցած դերը: Լազարյանների արխիվը այդ հնարավորությունը ևս ընձեռում է. պահպանված նամակները թույլ են տալիս ընդգծել այդ «աջակցության» կարևոր դրվագները. ներկայացվող նամակը գրվել է 1829 թ. դեկտեմբերին, այսինքն՝ այն ժամանակ, երբ թեպետ պատերազմն արդեն ավարտվել էր, սակայն հարցը բավական ընդգրկուն քննարկման առարկա էր դարձել թե՛ Կովկասում և թե՛ ռուսական արքունիքում: Խաչ Լազարյանը Ներսեսին գրում է, որ իր նամակը ստացել է, ինչպես նաև Մ. Վորոնցովին և Թիֆլիսի նահանգապետ Սիայագինին ուղղված նամակների պատճենները: Նամակում Լազարյանը Ներսեսին հուսադրող լուրեր է հաղորդում. գեներալ Կ. Բենկենդորֆը հայտարարել է, թե պատերազմի ավարտից հետո Ներսես արքեպիսկոպոսն առանց հատուկ թույլտվության, ազատորեն կարող է վերադառնալ Կովկաս և Ս. Էջմիածին, և որ կրոնի գործերով պատասխանատու Դ. Բլուդովի վկայությամբ՝ թագավորը չի հավատում Ներսեսի վերաբերյալ տարածված բանասարկություններին և գրպարտություններին. «ողորմած կայսրն չէ հավատացեալ գրպարտութեանց ի վերա ձեր բարդելոց ևս և պատասխանի գրութեանն օգոստափառ կայսերն առ խնդիրս սրբազնասուրբ կաթողիկոսին յուսադրէ զվերադառնալն ձեր ի սուրբ աթոռն ապա ուրեմն չիք ինչ պատճառ կամ արդելանք մնալոյ ձեզ այլևս այդր ըստ մերս այժմէեան վռադատութեան կարող եք և պարտիք առանց հարցանելոյ ու մեք ելանել

³⁰ Մատենադարան, Լազարյանների արխիվ, վավ. 14, թ. 1:

³¹ Հովհաննիսյան 2000, 112-121:

այտի և դիմել ուղիղ ի Ս.Պ.»³²: Ավելին, Լազարյանը հորդորում է Ներսեսին՝ անհապաղ մեկնել Պետերբուրգ՝ իր հանդեպ ավելորդ կասկածամտությունը փարատելու համար: Սակայն մինչև մեկնելը Խաչ. Լազարյանը խորհուրդ է տալիս նրան կաթողիկոսից երկու կոնդակ խնդրել՝ ուղղված իրեն և թագավորին, այն մասին, որ Ներսեսը Ռուսաստանում նշանակվում է կաթողիկոսի լիակատար փոխանորդ և երեցփոխան. ուշագրավ մի հորդոր, որի քաղաքական դրդապատճառները պիտի հաստատվեին հետագայում՝ դա Ներսեսի դիրքի և դերի մեծացումն էր ապագայի կտրվածքով. «...փութով գրեսցիք առ սրբազնասուրբ կաթողիկոսն որպես զինչս եղեսցէ առ ձեզ զերկուս զորավոր կոնդակ ըզ մի առ ձեզ յուրում ցուսցե թե նա կարգե զձեզ լիակարող փոխանորդ և երեսփոխան իւր յամենայն գործառնութիւնս վերաբերյալս առ հոգևորական կառավուրեթին հայոց»³³: Ընդ որում, Լազարյանը, որպես հնուտ դիվանագետ, նամակում մի շարք պատճառներ է բերում, հիմնավորելով Պետերբուրգ մեկնելու անհրաժեշտությունը: Միաժամանակ հաղորդում է, որ ինքը տեղյակ է Ներսեսի մասին շրջանավոր թղթերի բովանդակությանը, որոնք հաղորդել են թագավորին³⁴:

Ուստի այն, որ Ներսես արքեպիսկոպոսի և Կոմս Երևանսկու միջև հակամարտությունն այդպիսի հաջող ավարտ ունեցավ հայազգի հոգևորականի համար, անշուշտ, մեծ էր Խաչ. Լազարյանի ներդրումը: Քիչ է ասել, թե ում հետ գործ ուներ էջմիածնական հոգևորականը՝ թեկուզ արքեպիսկոպոսի կարգավիճակով. ֆելդմարշալ Ի. Պասկևիչը Նիկոլայ Առաջինի դասընկերն էր և ամենասիրված ու ընդունելի գեներալը, որին վստահում էր անսահման և անվերապահորեն: Եվ հասնել նրան, որ թագավորն ընկրկի իր սիրեցյալ գեներալի հարցում, այն ժամանակվա համար չսված իրողություն էր: Խաչ. Լազարյանը գործել է իրեն հասանելի բոլոր ընդունված ու չընդունված միջոցներով, գործին խառնել է թագավորի մոտ նույնքան վստահություն վայելող բարձրաստիճան պաշտոնյաների և առաջինների թվում՝ ռուսական արքունիքում մեծ կշիռ ունեցող Բենկենդորֆ եղբայրներին: Ուստի Ներսեսի հարցում սպասվող արդյունքը պատահական չպետք է համարել. նույն խնդրով Ներսեսին ուղղված հերթական նամակում Խաչ. Լազարյանը հաղորդում է, որ իր **ուղարկած նամակները Բենկենդորֆի միջոցով ծանուցվել են թագավորին** (ընդգծումը մերն է՝ Հ.Հ.): Հետևաբար թագավորը Ի. Պասկևիչին ուղղված հատուկ նամակում արգելել էր խառնվել հայոց հոգևոր գործերին և այդ կապակցությամբ նույնիսկ հայտնել իր դժգոհությունը, նույն կերպ՝ նաև տարածված բանասարկությունների համար. «Կայսրն անբավական է յոյժ յայտպիսի անհաճոյ տարածայ-

³² Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. թ. 1:

³³ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 2:

³⁴ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 2:

նույնացնել և անկազույցանց երկաքանչիւր կողմանց որպէս ի Գրաֆին, նույնպէս և ի հոգևոր կառավորութենէն հայոց, քանզի յայսպիսի անբարեկարգութիւն և ռիսակալութիւն ոչինչ օգուտ բերել տերութեանն բաց ի վնասուց»³⁵: Եվ այդուհանդերձ, Խաչ. Լազարյանը նամակում գրում է, որ Պասկևիչը դեռևս բարձր անուն ունի թագավորական արքունիքում, ուստի հորդորում է Ներսեսին՝ առաջիկայում զգույշ գործել և ճկունություն հանդես բերել. «Այսպիսի ծանր պատճառանք դժուարացուցանեն զկատարումն արդար խնդրանաց մերոյ և աղիթ տան մեզ մեծաւ աջալըջութեամբ և խոհականութեամբ ընթանալ յամենայն քայլս...»³⁶:

Նամակում ուշագրավ ևս մեկ տեղեկատվություն կա. Ներսեսին ուսաց թագավորի հետ հաստատված վատահելի հարաբերությունների հարցում հանդարտեցնելու համար Խաչ. Լազարյանը հաղորդում է, որ իրենք (նկատի ունի նաև եղբորը՝ Հովհաննեսին-Հ.Հ.) հատուկ ընդունելության են արժանացել թագավորի կողմից և խոսել են ճեմարանի հետագա անելիքներից: Թագավորը խոստացել է այցելել ճեմարան, սակայն ժամանակ չունենալու պատճառով չի կարողացել կատարել իր խոստումը: Դրա փոխարեն, ինչպէս հաղորդում է Խաչ. Լազարյանը, ճեմարան է այցելել թագուհու եղբայրը՝ Պրուսիայի արքայորդի Ալբերտը³⁷:

Ինչպէս ժամանակի հայ շատ այլ գործիչներ, Խաչատուր Լազարյանը ևս գտնում էր, որ Երևանի բերդի գրավումով դրվում է Հայաստանի ազատագրության սկիզբը. ասվածի վկայությունն է 1827 թ. հոկտեմբերի 24-ին Եփրեմ կաթողիկոսին ուղղված այս նամակը, որտեղ նա շնորհավորում է պարսից բռնակալությունից Հայաստանի ազատագրման առթիվ. «Վերջապէս՝ գթացեալ ամենակալ տերն յանտերունջ սրտիս՝ Հայաստանի՝ ողորմեցաւ նոցա ըստ մեծի ողորմութեան ի յուրում և բարեհաճեցաւ ազատել զնոսա ի ձեռաց անդինաց, որոց եղջուր ամբարտանառություն յերկիր կործանեցաւ և ի միտ առնել ինքեանք զսքանչելիս, զորս գործեաց տէր ի սիրոյ առ յերկիր յուր բռնութիւն տեղի ետ ազատութեան որ պարզ և է ի յերկնից մարդկան ազգի»³⁸: Մի փոքր առաջ ընկնելով, նկատենք, որ հետագայում արդեն լիովին սպասելի էր, որ Արևելյան Հայաստանի ազատագրության կապակցությամբ Եփրեմ կաթողիկոսը առանձին կոնդակով շնորհավորական ուղերձ հղեր Խաչատուր Լազարյանին: Կոնդակը գրված է 1828 թ. մարտի 2-ին, որը նշանակում է, որ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին արդեն փաստագրված իրողություն էր և ամրագրված էր Թուրքմենչայի 1828 թ. փետրվարի 10-ի հաշտության պայմանագրում: Նշենք

³⁵ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 14, վավ. 145, թ. 1:

³⁶ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 2:

³⁷ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 2:

³⁸ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 103, գործ 9, վավ. 270, թ. 1:

նաև, որ այն առանձնանում է սովորական նամակներից և ակնհայտ հանդիսավոր տեսք ունի (օգտագործված են գունային գեղեցիկ երանգներ՝ Հ.Հ.)։ «Յորմե մատուցի Քրիստոսաձիր ողջոյն և աստուածային օրհնութիւն ամենահարազատ զավակի բազմերախտ հօր մերոյ սրբոյ լուսավորչի վեհագնեայ ազգասէր իշխանի աղայ Իսաչատրոյ Յովակիմյանի խնդալ ի տէր յարագուարճ բերկրանօք և արգասալիր ճոխութեամբ. Ամէն»³⁹։

Բնականաբար, Իսաչ. Լազարյանը նույն բովանդակությամբ 1827 թ. նոյեմբերի 8-ին նամակ է ուղարկում Ներսես արքեպիսկոպոսին, որն այդքան աջակցել էր իրեն ընթացող պատերազմում. «Հուսկ ուրեմն եհաս ժամանակ, յորում բարձրելոյն գթացեալ Յորդիս Հայաստանի յիշեաց զնոսա ծագեաց լոյս մեծ ընդ յերկիր մեր հայրենի յորմէ և թշնամին հասարակաց լի ավուրքք անօէնութեան Պարտեալ գտաւ...»⁴⁰։ Նա շտապում է նաև Ներսեսին հաղորդել, որ նրա մատուցած ծառայությունները հայտնի են կայսերը և իշխաններին, ուստի հույս է հայտնում, որ դեռ պատիվ կունենա շնորհավորելու արքեպիսկոպոսին՝ բարձրագույն պարգևի կապակցությամբ⁴¹։ Ինչպես հայտնի կդառնա հետագայում, Ներսես արքեպիսկոպոսը (անշուշտ, Իսաչ. Լազարյանի անմիջական մասնակցությամբ՝ Հ.Հ.) ռուսաց թագավոր Նիկոլայ Առաջինի 1828 թ. հունվարի 25-ի հրամանով պարգևատրվում է «Ալեքսանդր Նևսկի» պատվաբեր շքանշանով։

Եզրակացություններ

Մատենադարանի Լազարյանների արխիվում պահպանված նամակներն ու հաղորդագրությունները լիովին բնութագրում են ռուս-պարսկական 1826-1828 թթ. պատերազմի տարիներին Իսաչ. Լազարյանի ծավալած արդյունավետ գործունեությունը, որի գլխավոր նպատակը սեփական հայրենիքի մի մասը օտարի լծից ազատագրումն էր։ Ակներև է նաև, որ Լազարյանների արխիվից ներկայացված վավերագրերը բացահայտում են այդ պատերազմի կարևոր շատ մանրամասներ և նոր լույս են սփռում հիմնահարցի ուսումնասիրության մեջ։

Գրականություն

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ուսումնասիրման ինստիտուտ-Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթապանակ 106, գործ 14, վավերագիր 120, թ. 1:
Թղթ. 103, գ. 5, վավ. 247, թ. 1:
Թղթ. 106, գ. 14, վավ. 135, թ. 1:

³⁹ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 14, վավ. 120, թ.:

⁴⁰ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ, 103, գործ 9, վավ. 286, թ. 1:

⁴¹ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ, 103, գործ 9, վավ. 286, թ. 1:

Նույն տեղում, վավ. 126, թ. 1, 2:

Նույն տեղում, վավ. 135, թ. 2:

Նույն տեղում, թղթ. 106, գ. 51, վավ 9, թ. 1-2:

Նույն տեղում, թղթ. 106, գ. 14, վավ. 121, թ. 1, 3:

Նույն տեղում, վավ. 122, թ. 1:

Նույն տեղում, թղթ. 106, գ. 51, վավ. 5, թ. 1, 2:

Նույն տեղում, վավ. 11, թ. 1:

Նույն տեղում, վավ. 47, թ. 1:

Նույն տեղում, վավ. 1, թ. 1:

Նույն տեղում, վավ 5, թ. 1, 2, 3, 45:

Նույն տեղում, վավ. 14, թ. 1:

Հ. Հովհաննիսյան 2000, Ներսես Աշտարակեցի, Պաշտպան հայրենյաց, «Էջմիածի»-ն ամսագիր, հ. Ե, էջ 112-121:

Նույն տեղում, թղթ. 106, գ. 51, վավ. թ. 1, 2:

Նույն տեղում, թղթ. 106, գ. 14, վավ. 145, թ. 1, 2:

Նույն տեղում, թղթ. 103, գործ 9, վավ. 270, թ. 1:

Նույն տեղում, թղթ. 106, գ. 14, վավ. 120, թ. 1:

Նույն տեղում, 103, գործ 9, վավ. 286, թ. 1:

Խ. ԼԱԶԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1826-1828 ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Հայկազ Հովհաննիսյան

Հայ պատմագիտությունը բազմիցս անդրադարձել է Խաչ. Լազարյանի գործունեությանը, ընդգծվել է նրա ակտիվ մասնակցությունը 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում: Սակայն հրապարակումներից և ոչ մեկում չի ուսումնասիրվել այդ տարիներին նրա ծավալած գործունեության կարևոր դրվագները:

Մատենադարանի Լազարյանների արխիվում պահպանվող վավերագրերի հիման վրա ակնհայտ են ռուս-պարսկական 1826-1828 թթ. պատերազմում Խաչ. Լազարյանի ծավալած գործունեության հիմնական ոլորտները: Հատկանշական է այդ գործունեության կարևորությունը ոչ միայն ռուսական բանակների հաղթանակների ապահովման տեսանկյունից, այլև պարսկական դարավոր տիրապետությունից ազատագրված հայ ժողովրդի շահերի տեսանկյունից:

Քանալի բառեր՝ Մատենադարան, Լազարյանների արխիվ, ռուս-պարսկական պատերազմ, նամակներ, զեկուցագրեր, հայ ժողովուրդ, ռուսական կառավարություն:

ДЕЯТЕЛЬНОСТЬ Х. ЛАЗАРЕВА В ПЕРИОД РУССКО-ПЕРСИДСКОЙ ВОЙНЫ 1826-1828 ГГ.

Айказ Оганесян

Армянская историография неоднократно обращалась к деятельности Х. Лазарева, который принимал активное участие в русско-персидской войне 1826-1828 гг. Однако ни в одном из исследований детально не представлены ключевые эпизоды его деятельности в годы войны.

Документы, хранящиеся в Институте древних рукописей – Матенадаране, в архиве Лазаревых, проливают свет на разностороннюю деятельность Х. Лазарева во благо армянского народа и обеспечение победы русских войск.

Ключевые слова – Матенадаран, архив Лазаревых, русско-персидская война, письма, рапорты, армянский народ, русское правительство.

ACTIVITY OF KH. LAZAREV DURING THE RUSSIAN-PERSIAN WAR OF 1826-1828

Haykaz Hovhannisyan

Armenian historiography has repeatedly turned to the activities of Kh. Lazarev, emphasized his active participation during the Russian-Persian war of 1826-1828. However these publications never studied in detail the important traits of this activity.

The document-based article kept in the Lazarev archive of the Institute of Ancient Manuscripts-Matenadaran deals with the main areas of activity of Kh. Lazarev during the Russian-Persian war, emphasizes the importance of the work done not only in terms of ensuring the victories of the Russian troops, but also for the good of the Armenian people, freed from the centuries-old Persian yoke.

Key words – Matenadaran, Lazarev archive, Russian-Persian war, letters, reports, Armenian people, Russian government.

АЗЕРБАЙДЖАНСКОЕ ЛОББИ ИЗРАИЛЯ: ГЕНЕЗИС, РЕСУРСЫ И ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ

Владимир Ружанский

Российско-армянский университет, кафедра Всемирной истории и
зарубежного регионоведения

Армения, Ереван, ул. О. Эмина 123

эл. адрес: ruzhanskij65@mail.ru

Статья представлена 23.01.2020, рецензирована 30.04.2020, принята к публикации
30.04.2020

Вступление

Тема этнических лобби в Израиле и, в частности, азербайджанского, до настоящего времени не стала предметом специального исследования.

Между тем без фундаментального исследования вопросов, связанных с местом и влиянием этнических лобби на социум и политическую систему Израиля, невозможно составить целостное представление об этой стране.

Настоящая статья призвана в какой-то мере восполнить этот пробел.

В соответствии с поставленной целью данная работа направлена на решение следующих задач:

1. выявление основных факторов в формировании азербайджанского лобби Израиля;
2. рассмотрение структуры и принципов деятельности азербайджанского лобби Израиля;
3. определение целей и степени влияния азербайджанского лобби Израиля.

В качестве методологической базы для написания данной статьи использованы методы мир-системного анализа, в частности, для исследования взаимоотношений центра и периферии, когда центром являются политические элиты, а периферией – этническое лобби. На основе мир-системного анализа рассматриваются и отношения между репатриантами и израильскими элитами – в соответствии с триадой: дивергенты, конвергенты и инсургенты.

Особое внимание уделено, во-первых, феномену выделения горских евреев в первые два десятилетия двадцать первого века в могу-

ществленную финансовую элиту современной России и, во-вторых, месту и влиянию этой общины как в еврейских диаспорах, так и в азербайджанско-израильских отношениях.

Генезис этнических лобби в Израиле

Организационно этническое лобби в форме репатриантских партий строилось на основе неправительственных общественных организаций, прежде всего – многочисленных землячеств, например, выходцев с Украины или объединения бухарских и горских евреев.

Главное предназначение подобных объединений заключается в обеспечении постоянной связи этнополитического лобби с электоратом в период между выборами и его мобилизация непосредственно уже в ходе выборов. В качестве инструмента политики такие объединения очень удобны и эффективны для руководства этнического лобби по целому ряду причин.

Во-первых, данная форма организации позволяет этническому лобби в форме репатриантской партии не только постоянно поддерживать связь с потенциальным электоратом в период между выборами, но также контролировать и влиять на репатриантскую массу путем оказания определенной поддержки в бытовых и в административных вопросах, например, раздачей недорогих подарков к праздникам и организацией бесплатных мероприятий типа концертов и встреч с известными политиками.

Во-вторых, подобные объединения позволяют руководству лобби без особых усилий создать у членов репатриантских организаций ощущение сопричастности к общественным и политическим процессам в стране, уверенность в поддержке землячества, а также ощущение собственной значимости за счет общения с политической элитой в лице партийных функционеров в центре и на местах.

В-третьих, землячества не требовали и не требуют серьезного финансирования, их руководство довольствуется в основном подарками к праздникам, а рядовые участники довольствуются бесплатными мероприятиями в рамках общинной жизни.

Безусловно, нельзя рассматривать вышеупомянутые репатриантские объединения как безликую массу: эти организации и ассоциации отличаются друг от друга по многим параметрам, прежде всего масштабностью, степенью влияния и статусом в репатриантской среде.

Однако из всех репатриантских объединений, пожалуй, только одно можно вполне определенно назвать кланом внутриэтнического лобби и это – «АзИз» (Ассоциация Израиль – Азербайджан).

Среди многочисленных общинных и этнических организаций Израиля АзИз занимает особое место как по ресурсам и возможностям, так и в соответствии со своим влиянием на местную политику.

Факторы формирования азербайджанского лобби в Израиле

Международная ассоциация Израиль – Азербайджан: «АзИз», была создана довольно поздно, если сравнивать её с другими репатриантскими объединениями – лишь в 2007 году или спустя восемнадцать лет после начала «Большой Алии»¹. Тому есть ряд причин.

Во-первых, представители азербайджанской диаспоры нуждались в защите своих интересов меньше, чем репатрианты из других частей бывшего СССР, поскольку весьма успешно адаптировались в Израиле к новым условиям жизни. Это выразилось, прежде всего, в быстрой или даже стремительной интеграции азербайджанских евреев на местном рынке труда в качестве квалифицированной рабочей силы.

Выходцы из Азербайджана заявили о себе прежде всего в местных русскоязычных СМИ.

Например, уроженцы Баку доминировали на русскоязычном канале израильского радио «Кол Исраэль» – «РЭКА» и позднее на телеканале «Израиль плюс» для новых репатриантов из СССР – СНГ.

Наиболее известные представители азербайджанских евреев – Йосеф Шагал и Давид Кон, о которых речь пойдёт ниже, помимо работы на телевидении в начале девяностых годов прошлого века редактировали в Израиле целый ряд русскоязычных газет. Успех и влияние выходцев из Азербайджана в русскоязычных СМИ Израиля обеспечил этой группе репатриантов заметное место и влияние в репатриантской среде в целом.

Во-вторых, степень взаимоподдержки как среди ашкеназов, так и среди горских евреев, выходцев из Азербайджана, всегда была достаточно высокой.

Горские евреи, уроженцы Азербайджана, всегда были одной из самых сплочённых еврейских общин на территории советского и пост-

¹ Имеется в виду массовая репатриация советских евреев в Израиль в период с 1989 по 1991 годы.

советского пространства. Интересно в этом отношении высказывание на сайте горских евреев «Горские точка ру»:

«Кто они – горские евреи – мощная финансово-экономическая и политическая группировка? Жители Кавказа считают их евреями, евреи относят их скорее к кавказцам, но в среде тех и других они стали мощной группировкой как на Кавказе, Ближнем Востоке, так и во многих уголках мира: экономическая власть (ряд представителей общины входит в 100 ведущих миллиардеров «Форбс»), политическое влияние, жёсткая корпоративность и поддержка друг друга – неперенные атрибуты современного клана, почитающего, с одной стороны Тору, с другой – считающего Кавказ своей Родиной, – это симбиоз народности, называющей себя жугъури, что означает «горский еврей»².

Роль горских евреев в формировании азербайджанского лобби Израиля будет рассмотрена ниже.

А здесь следует отметить следующее: азербайджанская община Израиля являет собою пример весьма успешной адаптации репатриантов к новым реалиям, а ресурсы азербайджанских евреев уже изначально позволяли им создать нечто гораздо большее, нежели просто землячество.

Однако для создания лобби нужны были два других не менее важных фактора: политический и финансовый.

Оба этих фактора окончательно сформировались во второй половине 2000-х годов.

Политический фактор

Говоря о политическом факторе в формировании азербайджанского лобби, отметим прежде всего его главные составляющие.

Во-первых, это стратегия Израиля по созданию периферийных альянсов с неарабскими мусульманскими государствами, которые не граничат непосредственно с Израилем, но при этом имеют общую границу с его потенциальными противниками.

² Кто они горские евреи - мощная финансово-экономическая группировка? <https://gorskie.ru/juhuro/community/item/4082-kto-oni-gorskie-evrei-moshchnaya-finansovo-ekonomicheskaya-gruppirovka> Орфография и стилистика оригинала сохранены. 12.02.2014 (верифицировано 21.01.2020).

Данная концепция начала реализовываться сразу же после провозглашения независимости государства Израиль³.

Первоначально стратегическим союзником Израиля в рамках концепции периферийного альянса были Иран и Турция.

Однако Исламская Революция в Иране в 1979 году и резкое ухудшение отношений с Турецкой республикой в начале девяностых годов прошлого века вынудили Израиль искать замену прежним стратегическим союзникам.

С другой стороны, распад СССР открыл перед Израилем новые перспективы в формировании периферийных альянсов.

Наиболее успешным для Израиля направлением в этом стало строительство стратегического партнерства с Азербайджаном.

Как раз в середине двухтысячных годов Азербайджан смог полностью оправиться от последствий войны в Арцахе и резко усилил свои финансовые и политические возможности за счёт высоких в то время цен на нефть. Усилившийся Азербайджан заинтересовал Израиль, прежде всего, как крупный покупатель израильского вооружения и экспортер нефти. В свою очередь для Азербайджана Израиль является не только поставщиком вооружения и покупателем азербайджанской нефти, но и мостом в налаживании благоприятных отношений с США. Однако серьёзным препятствием для установления официальных дипломатических каналов между двумя странами являлось нежелание Азербайджана портить отношения со своими соседями: Ираном и Турцией. Руководство Азербайджана решило эту проблему за счёт специально созданной в Израиле структуры: Азербайджанского конгресса – по аналогии с Всероссийским азербайджанским конгрессом. Эта неправительственная организация была создана двадцать седьмого августа 2007 года⁴.

Здесь следует отметить, что идея использовать азербайджанскую диаспору в качестве инструмента влияния была популярна среди руководства Азербайджана ещё в начале девяностых годов прошлого века, то есть сразу же после обретения Азербайджаном независимости. Од-

³ Подробнее о периферийной стратегии Израиля см., например, статью Костенко 2017, N 1(52), 101-118.

⁴ Abilov Shamkhal 2009, 138-156.

нако реализовываться эта идея начала лишь в начале 2000-х годов с созданием в 2001 году Координационного совета азербайджанцев мира под председательством Гейдара Алиева, президента Азербайджана в те годы. Целью этой организации является объединение, контроль и использование азербайджанской диаспоры в интересах Азербайджана.

Всеми вопросами, связанными с азербайджанской диаспорой, занимается специально созданный для этого государственный комитет. Решение о создании государственного комитета было принято на первом съезде Азербайджанского конгресса. И хотя Азербайджанский конгресс официально является общественной организацией, его деятельностью руководит президент страны, возглавляющий Координационный совет азербайджанцев мира. В основе деятельности этой структуры положен принцип «азербайджанизма», о котором речь пойдёт ниже.

Первым председателем Координационного совета азербайджанцев мира был бывший президент Азербайджана Гейдар Алиев. В настоящее время обязанности председателя исполняет нынешний президент Азербайджана – Ильхам Алиев. Азербайджанский конгресс в Израиле является филиалом Конгресса азербайджанцев мира.

При Азербайджанском конгрессе был открыт азербайджанский культурный центр. Вышеописанные азербайджанские организации далеко не единственные из действующих в Израиле.

Для эффективной деятельности всем этим организациям нужен был официальный статус и общая платформа для продвижения азербайджано-израильского стратегического партнерства. Такой платформой для азербайджанских структур в Израиле стала Ассоциация Израиль – Азербайджан, «АзИз». Таков был политический фактор создания «АзИз».

Экономический фактор создания азербайджанского лобби

В качестве экономической причины для создания азербайджанского лобби в Израиле следует считать стремительное усиление в это же время, то есть, в первое десятилетие XXI века, кланов горских евреев в Москве.

Это прежде всего кланы Я.М. Якубова (Яков Мелик-Садыкович Якубов, он же Якум Мелик Садых-оглы Якубов и он же Якуб Мелин

Сарль-оглы Якубов), Зараха Илиева, Геннадия-Романа Манаширова, Года Нисанова и Германа Захарьяева.

Участие в деятельности «АзИз» позволяет вышеупомянутым миллиардерам из числа горских евреев, уроженцев Азербайджана, расширить как свои финансовые возможности, так и повысить свой социальный статус сразу в трёх странах: в России, в Израиле и в Азербайджане.

С другой стороны, именно эта группа наиболее богатых горских евреев способствует укреплению стратегического союза не только между Азербайджаном и Израилем, но также и Азербайджаном и Россией, с одной стороны, и Россией и Израилем – с другой.

Отметим, однако, что социальный статус и финансовое могущество глав вышеперечисленных кланов целиком зависят от политических изменений в Москве. Эта ситуация обусловлена прежде всего тем, что именно в Москве находятся основные владения и источники дохода глав вышеупомянутых кланов. Поэтому усиление или, наоборот, ослабление позиций лидеров горских евреев в Москве всегда связано со сменой руководства в высших эшелонах власти российской столицы.

Так, пик могущества Тельмана Исмаилова и Романа Манаширова из бакинского клана горских евреев приходится на годы правления в Москве Юрия Лужкова. И наоборот, крах вышеупомянутых персон и возвышение горских евреев из клана Красной Слободы – Якова Якубова, Года Нисанова, Германа Захарьяева и Зараха Илиева – приходится на годы правления Сергея Собянина, с которым у Нисанова и Захарьяева есть общий бизнес.

Роль горских евреев отнюдь не ограничивается одним только экономическим аспектом в формировании и укреплении израильско-азербайджанского альянса. Не менее значимая роль принадлежит горским евреям также в идеологическом и пропагандистском аспекте израильско-азербайджанского стратегического сотрудничества, поскольку идеологическим фундаментом для действующих в Израиле азербайджанских объединений является «азербайджанизм» – калька с турецкой идеологии пантуркизма, приспособленная под азербайджанские интересы и реалии.

Суть этой концепции заключается в том, что под азербайджанской диаспорой подразумеваются не только этнические азербайджан-

цы, но и представители других национальностей и конфессий кроме армян.

Что касается «азербайджанизма» в отношении евреев, то здесь основной акцент делается как раз на историю еврейской общины в Азербайджане, которая, в соответствии с официальной азербайджанской трактовкой, не была омрачена враждой, а наоборот, характеризовалась дружественными отношениями между двумя народами.

Так, например, посёлок Красная Слобода в Кубинском районе Азербайджана представлен в азербайджанском агитпропе как единственное на всём постсоветском пространстве и даже во всей Европе место, где всегда жили и продолжают компактно проживать евреи (Еврейское население Красной Слободы составляет сегодня, по разным оценкам, от трёх до пяти тысяч человек).

Данный факт позволяет азербайджанскому агитпропу позиционировать Азербайджан как страну мультикультурную и толерантную к другим религиям и этносам, где мирно, без противостояния на национальной или конфессиональной почве сосуществовали и сосуществуют разные по религии и происхождению народы.

Что касается конкретно евреев, то азербайджанский агитпроп в этом направлении строит свою деятельность на двух главных тезисах: в Азербайджане всегда дружественно относились к евреям и в республике никогда не было антисемитизма⁵.

Не менее важным фактором горские евреи Азербайджана стали и в израильской пропаганде.

«...в Израиле, где всё ещё идёт непримиримое противостояние еврейской и палестинской общин, которое иногда истолковывается как религиозная нетерпимость, большинству стали несколько непривычны сведения о нормальном совместном проживании мусульман и евреев в Азербайджане. Это, во-первых, послужило основанием того, что израильский конфликт стали всё более истолковывать не как религиозный, а как межэтнический»⁶.

В связи с вышесказанным следует отметить важный факт: не только азербайджанский агитпроп, но и Академия наук Азербайджана

⁵ Аветисян, 211. https://web.archive.org/web/20090617162113/http://www.unn.ru/rus/fmo/Archive/ngmi/ngmi_2.pdf (верифицировано 22.01.2020).

⁶ Агапунов, <https://gorskie.ru/juhuro/history/item/43979-po-sledam-monografii-istoriya-i-kultura-gorskikh-evre-ev> (верифицировано 22.01.2020).

всерьёз занимается темой горских евреев непосредственно с момента установления дипломатических отношений между Израилем и Азербайджаном.

Так, уже в феврале 1992 года Академией наук Азербайджана совместно с Международной Ассоциацией иудаики и еврейской культуры был организован Международный коллоквиум на тему «Горские евреи: история и современность».

С этого времени такого рода научные мероприятия в Баку проводились регулярно.

Так, например, с 24 по 26 апреля 2001 года под эгидой Азербайджанской Академии наук в Баку прошёл международный научный симпозиум «Горские евреи Кавказа», в котором помимо азербайджанских историков приняли участие исследователи России, Израиля и США.

С этого времени научные мероприятия по теме горских евреев проводятся уже не только в Баку, но и в Израиле.

Так, в январе 2004 года Российским Фондом сохранения и развития еврейской культуры совместно с Всемирным Конгрессом горских евреев была организована международная конференция под названием «Современные проблемы самоидентификации и сохранения традиций горских евреев» (Тель-Авив, Университет им. М. Бар-Илана, 22 января 2004 г.), которая завершилась частичным изданием её трудов.

Интерес к горским евреям со стороны как Израиля, так и Азербайджана определяется, в первую очередь, головокружительным финансовым успехом и влиянием, которых добились представители этой общины в первые два десятилетия двадцать первого века.

Этот феномен и его влияние как на внутреннюю политику России, Израиля и Азербайджана, так и на взаимоотношения этих стран становятся предметом исследования со стороны научных кругов только в последние годы уходящего десятилетия.

Однако в данной статье рассматривается только участие горских евреев в деятельности азербайджанского лобби Израиля.

Главным ресурсом, как финансовым, так и политическим, для современной элиты горских евреев была и остаётся Российская Федерация со штаб-квартирой в Москве, где находится львиная доля принадлежащих горским евреям компаний и фондов.

Возвышение горских евреев началось в последние годы советской эпохи и было связано прежде всего с уроженцем Баку Тельманом

Исмаиловым, Черкизовский рынок которого стал стартовой площадкой для других кланов общины: братьев Манашировых, Акифа Гилалова, сегодняшних королей российской недвижимости Года Нисанова, Зараха Илиева и Германа Захарьяева.

Финансовое могущество вышеперечисленных семейных кланов сделало находившуюся на задворках диаспоры общину горских евреев привилегированной группой мирового еврейства.

Представители диаспоры горских евреев тесно связаны между собой не только происхождением и азербайджанскими корнями, но и общим бизнесом.

Так, например, братья Манашировы долгое время имели общий бизнес с Акифом Гилаловым, партнерами в бизнесе являются также Год Нисанов и Зарах Илиев.

The country's military forces, the army, was led by a sparapet, who was subordinate to the marzpan¹⁴. The military forces of Marzpanian Armenia did not consist of 30 thousand, as N. Adotz thought¹⁵, it was more than that. Thus, the military forces under the command of the marzpan, which was called perhaps the marzpanakan gund, was equal to the mardpetakan gund, that is, it consisted of 15 thousand soldiers¹⁶. This army was supposed to be located in Vostan Hayoc or Ayraratian district¹⁷. The Vostanik gund was also to enter in it¹⁸. Along with the mardpetakan gund, there was a makhazakan gund of bodyguards with 10 thousand soldiers¹⁹. Thus, the combined marzpanakan, mardpetakan and makhazakan gunds had 40,000 soldiers, to which, if we add the Naxararian troops, the armenian cavalry sent to the royal court, the permanent troops stationed in the fortresses, we will get the considerable strength. Another thing is that during the uprisings the Sasanians withdrew from the general army the marzpanakan and makhazakan gunds, depriving the rebels of military support.

The post of hazarapetutyun ruled by the hazarapet (in the first meaning he was the head of thousand soldiers). He supervised the tax collecting and the state built works. Now the taxes were handed to the marzpan. The post of makhazutyun ruled by the makhaz, whose function was to ensure the security of the marzpan.

In the marzpanian period, the role of the Church increased in the person of the Catholicos. The Church began to acquire state legal powers, because the position of the "Great Judge" gave the Catholicos the right to appoint and execute the punishments²⁰. The ashkharazhoghovs (the world assembly) of the Arshakuni period was gradually replaced by the church assembly, in which not only the clergy but also the Naxarars participated. Decisions made by the congregations were binding on both the spiritual and secular authorities. The Sasanian kings, considering with the influential position of the Catholicos in the country, sought to keep him under the control and limit his authority, opposing him the co-ruler. On this occasion Movses Khorenatsi reports: «Վասն որոյ հաւանեալ Վոսմայ՝ զերկաքանչիւրոցն կատարեաց զխնդիրս, տուեալ յա-

¹⁴ Хуршудян 2003, 100.

¹⁵ Адонц 1908, 287-288.

¹⁶ Հարությունյան 2016, 89, Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության բանակն ըստ «Զորանամակի» 2012, 28:

¹⁷ Հարությունյան 1996, 54-56, Հայ ժողովրդի պատմություն 1984, հ. II, 166:

¹⁸ Периханян 1956, 57-58.

¹⁹ Հարությունյան 2012, 29:

²⁰ Վարդանյան 2005, 185:

թոռ եպիսկոպոսապետութեանն զայլ ոմն ասորի, Շամուէլ անուն, զի լիցի ընդդիմաբառ մեծին Սահակայ և հակառակաթոռ. և գործ նմա զատուցանէ զընկերել մարզպանին, կալ ի վերայ բաշխից հարկաց խնդրեցելոց և դատաստանաց և այլ աշխարհական կարգաց»²¹.

After the death of Sahak Partev (388–439), the hereditary procedure for the post of the Catholicos is canceled. From now on, the Armenian Catholicos was elected by the spiritual and secular authorities, taking into account his personal merits, and not of honorable origin. These basics were introduced during the Catholicos Hovsep Hoghotsmetsi (439–452)²². The Catholicos period of the Melite (452–456) and Movses (456–461) from the Agbianos dynasty was the last attempt to preserve the principle of inheritance, but the choice of the Gyt Arahezatsi (461–478) put an end to this. He was elected by spiritual and secular authorities without the knowledge of the Persian king²³. This should have been not only exclude the appointment of strangers and powerless persons to the position of the Armenian Catholicos, but also prevent the Sasanian king from interfering in the election of the Catholicos. Evidence of this is the response of the Gyt Arahezatsi to the threat of the king Peroz (459–484) to oust him from the post of Catholicos: «յաղագս եպիսկոպոսական ձեռնադրութեանս որ ասես, թէ ի բաց առնում ի քէն՝ զայս երկնատր ձեռնադրութեան պատիւ առնուլ յինէն ոչ թագաւորք եւ ոչ յիշխանաց ոք, այլ մահ, ոչ իշխէ, քանզի եւ կարէ իսկ ոչ»²⁴. This proves on the one hand the inviolability of the Catholicos authority, and on the other hand, the influence of the Persian king on this power, which, of course, had no canonical basis and was nothing more than a manifestation of the will of the ruler.

Having deprived Gyt Arahezatsi of the opportunity to head the Armenian Church, king Peroz tells him: «կա'ց ուր եւ կամիս, բայց ի գործոյ կաթողիկոսութեանդ հեռի ես, եւ չէ քո»²⁵. If the Persian king did not have such jurisdiction, it would be pointless for the Gyt to accept this fact and remain in the Persian court of his own free will. Nevertheless, the approve of the patriarch by the king Peroz as a Catholicos was somewhat formal and should be only considered as a means of influence on the Armenian Church, and thus the Catholicos showed the legitimacy of his authority. The same policies were

²¹ Մովսէս Խորենացի 1991, 350:

²² Մելիքյան 2016, 53

²³ Օրմանեան 2001, column 481:

²⁴ Ղազար Փարպեցի 2003, 2310:

²⁵ Ղազար Փարպեցի 2003, 2310:

using with the Armenian Naxarars who received and were deprived of their tanuterakan (naxarakan) rights from the Persian king.

Administrative and legal status

In the legal status of the Marzpanian Armenia, the Sasanians made changes on the eve of the battle of Avarayr, when the posts of "Hazarapet" and the "Great Judge" were transferred to the Persians, and the Armenian Church, which was previously privileged, now had to pay. After the 482-484s uprising, the rights of the Armenian Naxarars and the Armenian Church were restored by the new Persian king Vagharsh (484-488). In the legal aspect, this meant that the Naxararian and the Church rights in the Armenia would continue to function as regulators of the social, political and church-religious relations²⁶. Thus, Marzpanian Armenia retained its internal independence.

After 428 Armenia was the aggregation of the Naxararian possessions. Sasanians farsightedly did not made administrative changes to avoid discontents, because the territories under the control of the Naxarars were their hereditary domains. In the early marzpanate period Armenia included the **Tayk**, **Ayrarat**, **Syunik**, **Artsakh** (to 451), **Vaspurakan**, **Mokk**, **Turuberan** provinces completely, and from province of **Gugark** the districts Kangark, Dzhavaxk inner, Tashirs sephakanutyun, from province of **Utik** the district of Gardman, from province of **Parskahayk** the districts Zarevand, Her, Zarehavan, Arna, Tamber, Ayli, all the provinces of **Korchayk** except Korduk and from **Agdznik** the district of Sasun. These domains were under the authority of Naxarars, high-ranking clerics, and the Persian king.

Some historians consider that Marzpanian Armenia in the V century also consisted of three main administrative units 1. country of the Tanutirakan gund 2. country of the Sefhakan/Vaspurakan gund 3. Syunik²⁷. However, in our opinion, in the V century Armenian marzpanate was not administratively divided into the three above-mentioned regions. Firstly because of the missing of clear information in the sources. In the case of Syunik, if everything is clear, reservations should be made regarding the Tanutirakan and Vaspurakan Gunds. The formation of the Vaspurakan gund was based on the territory of Mardpetakan, which was controlled by the Mardpets. As a result of the new political conditions, the governing of Mardpetakan and the Mardpetakan Gund by the Persian court was handed over to Naxarars of the

²⁶ Ղազիհյան, Վաղարշյան 2014, 63:

²⁷ Հարությունյան 2001, 391: R. Harutyunyan notes to the existence of another administrative unit "Ayrarat" (Հարությունյան 2006, 81-86):

Artsruni. Mardpetakan at the ends of the V century acquires the status of an independent administrative unit as Mardpetakan Gund²⁸, which had its bishop²⁹.

N. Adonts considers that the sepuhakan right has developed in the VI century³⁰. Probably under the influence of the reforms carried out by the emperor Justinian I (527-565), Khosrov I Anushirvan (531-579) in the second half of the VI century to the sepuhs from the royal family of Arshakuni, which owned the lands of Hashtean, Arberani and half of Aliovit³¹, to attract them to their side and contrasting them against the Naxararian forces, they were given lands in the Mardpetakan and adjacent places³². Having turned into the small landowners, the sepuhs were obliged to implement military service to the Persian king. From them was created a military regiment, “gund”, as a result of which the administrative unit was called Sephakan gund³³, although the form of Mardpetakan was also used. The Sephakan gund probably included all the provinces of the Vaspurakan, with the exception of the possessions of Artsruni, Amatuni, Andzevatsik, Rshtuni, Paluni and, possibly, also Mehnuni Naxarars. It should be mentioned that the Sephakan is the Armenian form, while the Vaspurakan is the Middle Persian form of the name of the administrative unit.

Middle Persian seal belonging to the commander of the Armenian Tanutirakan gund³⁴, is dated to the VI century during the administrative and military changes of the king Khosrov³⁵. During this period, the Tanutirakan gund was to be formed, and the Sephakan gund expanding their possessions. In addition, the name “gund” of the units Tanutirakan and Vaspurakan shows their administrative-military character. Such units could be created, as mentioned in the second half of the VI century, during or after the administrative-military reforms of the king Khosrov Anushirvan. In the “Ashkharhatsoys” Armenia-Armenia is already represented in the Northern qustak as one adminis-

²⁸ In 484 Vahan Mamikonyan, after presenting the conditions of a reconciliation, sends his followers to the general Nikhor, there was also the Pachok from the Mardpetakan gund (Ղազար Փարպեցի 2003, 2355).

²⁹ Գիրք Թղթոց 1994, 148:

³⁰ Адонц 1908, 472-476.

³¹ Մոսկու Խորենացի 1991, 137, 191, 193, 282-283:

³² Հարությունյան 2001, 399: This is evidenced by the fact that before that, the bishop of the Mardpetakan in the second church meeting of the Dvin was called the bishop of the Sephakan gund (see Գիրք Թղթոց 1994, 196, 201, 293, 298).

³³ Հարությունյան 2001, 399:

³⁴ Gyselen 2007, 44, Хуршудян 2003, 237:

³⁵ Хуршудян 2003, 226.

trative unit, with the exception of Sisakan-Syunik³⁶, which was related to the Vahan Syuni, who in 571 cut off Syunik from the Armenian marzpanate. Consequently, these military-administrative units were created between the forming of qustaks and 591 years.

For the Marzpanian Armenia, the administrative changes of the Persian court were very negative, which influenced his status and military power. In the middle of the VI century, the Persian king Khosrov I Anushirvan made military and administrative changes in the Sasanian empire³⁷. Subsequently, it was divided into the four large military administrative units - qustaks, whose military power was carried out by the spahbed, and the civil power by the padgospan³⁸.

Atrpatakan (Atropatena), Armenia, Kartli (Iberia), proper Albania, Balasakan, Syunik and some other areas were introduced into the Northern or Kapkoh qustak³⁹, wich capital was the city Gandzak Shahastan of the Atrpatakan⁴⁰.

The mention that in the Northern qustak Syunik is separately from the Armenia, shows it as an independent unit. The Syrian source of the VI century also mentions Syunik separately from Armenia, which was equivalent to the Kartli and the proper Albania as an administrative unit⁴¹. Because Syunik was a separate administrative unit, can be explained why in 571 Vahan Syuni with the permission of the Persian king Khosrov Anushirvan separated Syunik from the Armenian marzpanate and included it in Atrpatakan⁴². However, the data of the “Ashkharhatsoyts” and the syrian historian Zakaria Mytilenatsi suggesting that Syunik was formed as an independent entity until 571. Syunik was reunited with the Armenia only during the reign of the Armenian Prince Hamazasp Mamikonyan (655-661)⁴³.

Qustaks administratively were divided into the marzpanates and the shahrs (province), which were divided into the smaller units (nahang, rustag,

³⁶ Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելլաածովք նախնեաց 2003, 2157:

³⁷ Колесников 1970, 93.

³⁸ Дмитриев 2013, 23-24, Ghodrat-Dizaji 2010, 76.

³⁹ Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելլաածովք նախնեաց 2003, 2157:

⁴⁰ Сукиасян 1963, 302.

⁴¹ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 8, 1976, 313-314:

⁴² Պատմութիւն Սեբէոսի 1979, 67-68. The region (province) of Artsakh (Tsavdek, the Little Syunik, the second Syuni) was not brought into the branch of the Syuni dynasty in the 571, it happened after the 60s of the IV century. As B. Harutyunyan showed, the Little Syunik was not the Sisakan-i-Kotak, it was the Artsakh (Հարությունյան 1976, 83, also see his Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի 2007, 35).

⁴³ Սեբէոս 1979, 175.

tasug), wich were ruled by the marzpanans and shahrdars or the satrapes⁴⁴. This violated one of the most important points of the Nvarsak treaty, according to which the Sasanian king should have been the suzerain of the Armenian nobility. Accordingly, the marzpan was already obey to the spahbed and padgospan and through them to the Persian king⁴⁵.

With the partition of the Armenia in 591, the territory of the marzpanate was significantly reduced, because the king Khosrov II (590-628) Parvez ceded to the emperor Maurice (582-602) most of the Armenian territories: «գերկիրն Հայոց. որ ընդ իրով իշխանութեամբն էր, գտունն Տանուտերական մինչև ցգետն Հուրազդան»⁴⁶, which included the Ayrarat region with the Tashirs sepuhakanutyun, the Tayk and Turuberan regions, and the district of Sasun/Sanasunk. Following the example of Justinian I, emperor Maurice held administrative and military events in the Armenian territories that were passed to the Byzantine empire, with the aim of demilitarizing them and abolishing the Naxarar order there. The territories under the rule of the Sasanians, the historian Sebeos calls the "Part of the Vaspurakan gund"⁴⁷. The Armenian marzpanate already included **Mokk**, **Vaspurakan**, all the districts of the **Korchayk** except of Korduk, from the **Parskahayk** (Persarmenia)- Zarevand, Her, Zarehavan, Arna, Tamber, Ayli, some eastern areas of the **Ayrarat**-Masiacotn, Aradz, Urtsadzor, Vostan Dvna and Mazaz with the center in Dvin⁴⁸.

After the partition of Armenian marzpanate in 591, its kept the internal independence. Evidence of this is the accounts of the historians Ukhtanes and Asoghik, that Smbat Bagratuni (Khosrov Shum) was appointed as an Armenian marzpan (591/593–600/601)⁴⁹.

In 628, after the signing of a peace treaty between Iran and Byzantium, the borders that existed in 591 were resumed. As a result, two parts of Armenia became autonomous. Varaztirots Bagratuni became a marzpan (628-632) in the eastern part of the country, in the western part (the Ayrarat region with the Tashirs sepuhakanutyun, the Tayk and Turuberan regions, and the district of Sasun) as a ruler, Armenian prince was appointed Mzhezh Gnuni (628-

⁴⁴ The Cambridge history of Iran, vol. 3 (2), edited by Ehsan Yarshater, Hagop Kevorkian 1983, 696, 700-701. See also Ghodrat-Dizaji 2010, 76, Хуршудян 2015, 192-193, Сукиасян 1963, 301-302.

⁴⁵ Сукиасян 1963, 305.

⁴⁶ Մերքու 1979, 84:

⁴⁷ See *ibid.* Vaspurakan is the Persian form of the Sepuhakan, in one case is given the Persian version of the gund, in the other -the Armenian.

⁴⁸ Հայաստանի ազգային ատլաս 2008, 35:

⁴⁹ Իսկանյան 1991, 394, Տեր-Ղևոնդյան 1996, 15, Վարդանյան 2014, 12:

635), then David Saharuni (635-638/39)⁵⁰. At that time, Theodoros Rshtuni was the sparapet of the Armenian marzpanate, who was the ruler or the marzpan after the leaving of Varaztiroc Bagratuni to the Taron and then to the Constantinople (in 633)⁵¹. Taking advantage of the created political situation, Theodoros Rshtuni in about 639 took under his authority the Armenian lands that were passed to Byzantium, after which Armenia in fact was united⁵².

Thus, the Naxararian system in the Marzpanian Armenia (V-VII centuries) was preserved, due to which it had internal autonomy.

Bibliography

- Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելածովք նախնեաց 2003, «Մատենազոյրք Հայոց», հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, «Armenian Catholicosate of Cilicia», էջ 2123-2192:
- Գիրք Թղթոց 1994, երկրորդ հրատարակութիւն, Երուսաղէմ, «Տպարան սրբոց Յակոբեանց», 711 էջ:
- Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց՝ աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեանի, Երեւան, «ՀՍՍՌ ԳԱ հրատ.», 1957, 224 էջ:
- Իսկանյան Վ. 1991, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Երևան, «Գիտելիք» հրատ., 639 էջ:
- Կրկյաշարյան Ս. 1978, Նախարարներն ու նախարարությունները հին Հայաստանում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 11, էջ 60-75:
- Հայ ժողովրդի պատմություն 1984, հ. II, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ հրատ.», 691 էջ:
- Հայաստանի ազգային ատլաս 2008, հ. Բ, Երևան, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն», 264 էջ:
- Հարությունյան Բ. 1976, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թթ., Բանբեր Երևանի համալսարանի, N 2, էջ 77-95:

⁵⁰ Տեր-Ղևոնդյան 1996, 16-19: A. Shahinyan is of the opinion that Mezhezh Gnuni ruled in 630-637, and David Saharuni in 637-641 (Шагинян 2011, 206, 211). But the researching of the sources excludes such datings.

⁵¹ Իսկանյան 1991, 471:

⁵² Տեր-Ղևոնդյան 1996, 19-20, see also Большаков 2002, 80-81. A. Shaginyan believes that in 631, when the title “Prince of Armenia” was created, the process of the restoration of a statehood was began, which was lost in 428 (Շահինեան 2013, N 33, 176). We do not agree with this point of view, because in 428 the royal power fell down, and not the statehood. One of the forms of a statehood was the Naxararian system, which was essentially ruling of the country's internal affairs. It was on the basis of the Naxararian system that the principality of Theodoros Rshtuni was born, and then the kingdom of the Bagratuni.

- Հարությունյան Բ. 2001, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 404 էջ:
- Հարությունյան Բ. 2007, Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան», Երևան, «Գիտություն», էջ 20-43:
- Հարությունյան Բ. 2012, Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության բանակն ըստ «Ջորանամակի», ՎԷՄ, N 1, էջ 23-43:
- Հարությունյան Բ. 2016, Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, «Մեկնարկ», 304 էջ:
- Հարությունյան Ռ., Հարությունյան Ռ. 1996, «Այրարատեան գաւառ» հասկացությունը եւ նրա տարածական ընդգրկումը, «Իրան նամէ», N 4-5, էջ 54-57:
- Հարությունյան Ռ. 2006, Մարզպանական Հայաստանի վարչական կառուցվածքի հարցի շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի, N 2, էջ 81-86:
- Ղազար Փարպեցի 2003, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, «Armenian Catholicosate of Cilicia», էջ 2201-2395:
- Ղազինյան Գ., Վաղարշյան Ա. 2014, Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը. Հին շրջանից մինչև մեր օրերը, Երևան, ԵՊՀ հրատ., 416 էջ:
- Մելիքյան Կ. 2016, Հայոց եկեղեցու դիրքն ընդհանրական քրիստոնեական եկեղեցու համակարգում IV-VI դարի I կեսին, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 263 էջ:
- Մովսէս Խորենացի 1991, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութինեանի, լրացումները Ա.Բ. Սարգսեանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 486 էջ:
- Շահինեան Ա. 2013, Է. դարի Հայոց իշխանութեան ինքնիշխանացումը, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրուս, N 33, էջ 165-180:
- Պատմութիւն Սեբէոսի 1979, աշխատասիրությամբ Գ.Վ. Աբգարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 446 էջ:
- Վարդանյան Վ. 2005, Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, «Մայր աթոռ Սբ. Էջմիածին», 398 էջ:
- Վարդանյան Վ. 2014, Հայոց պետականությունը Արշակունյաց թագավորության անկումից հետո (V դ. կես-630-ական թվականներ), Պատմաբանասիրական հանդես, N 2, էջ 3-18:
- Տեր-Ղևոնդյան Ա. 1996, Հայաստանը VI-VIII դարերում (արաբական նվաճումներին նախորդող և տիրապետության հաստատման առաջին շրջանում), Երևան, «Գիտություն», 192 էջ:
- Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 8, 1976, Ասորական աղբյուրներ Ա, թարգմանություն բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մելքոնյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 479 էջ:

- Օրմանեան Մ. 2001, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմութիւն, հ. Ա, Էջմիածին, «Մայր տաճար Ար. Էջմիածին», 1870 սյունակ:
- Адонц Н. 1908, Армения в эпоху Юстиниана, политическое состояние на основе нахарарского строя, СПб., «типogr. Императорской Академии наук», 526 с.
- Большаков О. 2002, История Халифата, т. II (Эпоха великих завоеваний 633-656), Москва, «Восточная литература», 294 с.
- Дмитриев В. 2008, Всадники в сверкающей броне, Военное дело Сасанидского Ирана и история римско-персидских войн, СПб., «Петербургское востоковедение», 368 с.
- Дмитриев В. 2013, Военно-административные реформы в поздней Римской империи, Сасанидском Иране и современной России: к вопросу об универсальных закономерностях военной истории, Вестник Псковского государственного университета, Псков, № 3, с. 20-29.
- Еремян С. 1941, Сюния и оборона сасанидами кавказских проходов, «Известия» АрмФилиал, № 7, с. 33-40.
- Колесников А. 1970, Иран в начале VII века (источники, внутренняя и внешняя политика, вопросы административного деления), «Палестинский сборник», № 22 (85), Ленинград, 144 с.
- Колесников А. 1981, О термине «Марзбан» в Сасанидском Иране, «Палестинский сборник», № 27 (90), Ленинград, с. 49-56.
- Манасерян Р. 2019, Гунны в отношениях с Ближним Востоком и Римским западом, СПб., «Алетейя», 118 с.
- Периханян А. 1956, Древнеармянские востаники, Вестник древней истории, № 2, с. 44-58.
- Сукиасян А. 1963, Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма (III-IX вв.), Ереван, «изд. Ереванского гос. универ.», 523 с.
- Хуршудян Э. 2003, Армения и сасанидский Иран (Историко-культурологическое исследование), Алматы, «Print-S», 474 с.
- Хуршудян Э. 2015, Государственные институты парфянского и сасанидского Ирана (III в. до н.э.-VII в. н.э.), Алматы, «Институт азиатских исследований», 400 с.
- Шагинян А. 2011, Армения и страны Южного Кавказа в условиях византийско-иранской и арабской власти, СПб., «Алетейя», 512 с.
- Ghodrat-Dizaji M. 2010, Ādurbādagān during the late Sasanian period: A study in administrative geography, Journal of the British institute of Persian studies, vol. XLVIII (48), Iran, p. 69-80.
- Gyselen R. 2007, Sasanian seals and sealings in the A. Saeedi collection, Acta Iranica 44, Leuven, "Peeters", 407 p.

The Cambridge history of Iran 1983, vol. 3 (2), edited by Ehsan Yarshater, Hagop Kevorkian, Cambridge, "Cambridge University Press", p. 627-1488.

ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 428-630-ԱԿԱՆ ԹԹ.

Հենրիկ Խաչատրյան

Արշակունյաց թագավորության անկումից հետո (428 թ.) թեև Հայաստանը անկախ չէր, սակայն նախարարական համակարգը պահպանած լինելու շնորհիվ ինքնավար պետություն էր: Նախկինի պես նախարարության գլուխ կանգնած էր նախարարը, որի իշխանությունը ժառանգական էր: Արշակունյաց շրջանի կառավարման համակարգը, որոշ փոփոխություններով հանդերձ, պահպանվել էր. այն կառավարում էին հայ նախարարները: Մարզպանական Հայաստանի կարգավիճակի մեջ էական փոփոխություն մտցրեց Սասանյան Խոսրով I Անուշիրվան արքան, որը VI դ. կեսերին ամբողջ Իրանում իրականացրեց ռազմավարչական փոփոխություններ: VI դ. երկրորդ կեսին Մարզպանական Հայաստանը կազմված էր երեք վարչական միավորներից. 1. Տանուտիրական գնդի երկիր, 2. Վասպուրական գնդի երկիր, 3. Սյունիք: 628 թ. կնքված պարսկա-բյուզանդական պայմանագրով Հայաստանում սկսվում է ինքնավարության նոր փուլ:

Բանալի բառեր՝ Արշակունիներ, Մարզպանական Հայաստան, Հայոց եկեղեցի, Սյունիք, Խոսրով I Անուշիրվան, նախարարական համակարգ, Սասանյաններ:

АДМИНИСТРАТИВНО-ПРАВОВОЙ СТАТУС МАРЗПАНСКОЙ АРМЕНИИ В 428-630 ГГ.

Генрик Хачатрян

После падения царства армянских Аршакуни (428 г.) Армения, несмотря на отсутствие суверенности, сохранила внутреннее самоуправление на основе нахарарского строя. Местные князья-нахарары продолжали оставаться наследственными владетелями своих территорий. Сохранилась форма правления царского периода, и ключевые должности занимали армянские нахарары. Статус Марзпанской Армении претерпел значительные изменения при Сасанидском царе Хосрове I Ануширване, который в середине VI века предпринял проведение военно-административных реформ

по всему Ирану. Со второй половины VI века Марзпанская Армения состояла из трех административных единиц: 1. страна Танутерского гунда, 2. страна Васпураканского гунда, 3. Сюник. С 628 г. начинается новый этап автономизации Армении.

Ключевые слова – Аршакуни, Марзпанская Армения, Армянская церковь, Сюник, Хосров I Ануширван, нахарарская система, Сасаниды.

ADMINISTRATIVE AND LEGAL STATUS OF ARMENIAN MARZPANATE IN 428-630S

Henrik Khachatryan

After the fall of the Armenian kingdom of Arshakuni (428), although Armenia was not a sovereign country, it retained internal self-government in the basis of the Naxararian social structure. The local Naxarars (princes) continued to remain hereditary rulers of their territories. The form of government of the Arshakuni period was preserved, and important posts remained to the Armenian Naxarars. In the middle of the 6th century Sassanid king Khosrow I Anush-irvan undertook military-administrative reforms throughout Iran, which influenced to the status of Armenian marzpanate. From the second half of the VI century the Armenian marzpanate consisted of three administrative units 1. country of the Tanuterakan gund, 2. country of the Vaspurakan gund, 3. Syunik. Since 628 was began a new stage of autonomy of the Armenia.

Key words – Arshakunis, Armenian marzpanate (Marzpanian Armenia), Armenian Church, Syunik, Khosrov I Anushirvan, Naxararian (princely) system, Sasanians.

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒՄԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

Յարութիւն Գէորգ Սելիմեան (Սուրիա, Հալէպ)

ԵՊՀ Աստուածաբանութեան ֆակուլտետի հայցորդ

ՀՀ, Երեւան, 0025, Ալեք Մանուկեան 1

Ենամակ՝ hselimian@gmail.com

Յօդուածը ներկայացուած է 20.12.2019, գրախօսուած է 09.02.2018, տպագրութեան
ընդունուած է 30.04.2019

Ներածութիւն

XIX դարու փիլիսոփայական երկերու մէջ գերիշխող կարծիք էր, թէ արդիւնաբերական աճին զուգընթաց կրօնին դերը պիտի նուազի (Քառյ Մարքս, Զիգմունտ Ֆրոյտ, Մաքս Վեպեր, Էմիլ Տիւրկհայմ): Կրօնի դերի տկարացումին գլխաւոր գործիքը աշխարհականացումն է: Բայց՝ «տարբեր կրօնական ուղղութիւնների ներկայացուցիչներ, կրօնական համոզմունքների թուլացմանը զուգահեռ, սկսում են առաւել հանդուրժողաբար վերաբերուել այլ կրօնական ուղղութիւնների ներկայացուցիչներին՝ հիմնուելով կասկածամիտ մօտեցումների վրայ»¹:

Եթէ նոյնիսկ եկեղեցականներ այդպէս չէին խորհիր, այնուամենայնիւ, հարկադրուած էին հաւատացեալ հոգիներու հետ հաղորդակցուելու նոր ուղիներ ու եղանակներ փնտռել: Միա կողմէն՝ ընկերային յարաբերութիւններու մէջ կրօնի կազմակերպիչ գործառոյթի տկարացումին զուգընթաց՝ համարժէք իշխանութիւն ունենալու պահանջքը եւրոպացի մտածողները կը յանգեցնէ այն մտքին, թէ հարկաւոր է յոյսը դնել մարդկային բանականութեան առասպելաբանական զօրութեան վրայ: Այս աւելի հրատապ դարձուց գիտութեան զարգացումին պահանջքը, մանաւանդ որ այլ ընտրանքները սահմանափակ էին: Սկսեալ XVII-XVII դարերէն, եւրոպական հումանիտար ու գիտական միտքը կրթութիւնը այլ կերպ չէր պատկերացներ, քան մարդու բազմակողմանի զարգացումը, «ազատ արուեստներու» եւ դասական լեզուներու իմացութիւնը՝ ենթադրելով, որ «բառերը շատ աւելի վաղ կ'իրացուին, քան գաղափարները»²:

¹ Berger 1967, 152.

² Моль 1973, 37.

Ոմանք կը կարծէին, թէ հասարակական կեանքի վերածնունդը հարկաւոր է կապել արուեստի ու մշակոյթի հետ: Այդպիսի մտածողներէն էր Ֆ. Շիլլերը, որ կը կարծէր, թէ արուեստը կրնայ փոխարինել ճգնաժամ ապրող կրօնին ու գործել որպէս ընկերութիւնը համախմբող ուժ, եթէ այն ընկալով որպէս «հաղորդակցումի ձեւ» ու եռանդուն դեր ստանձնէ մարդոց միջանձնային յարաբերութիւններու մէջ, որով կը մասնակցի մարդկային ստեղծագործութեան մեծագոյն արժէքի՝ «ճշմարիտ քաղաքական ազատութեան» արարումին³:

Հակառակ պարագային, ինչպէս կը կարծէ Հեգելը, կրօնական գիտակցութեան ճգնաժամի խորացումը կրնար յանգեցնել անոր, որ՝ «Եթէ աղքատներուն այլեւս Աւետարան չեն քարոզեր, եթէ աղը կորսնցուցեր է համը, լռութեամբ կ'ոչնչացուին բոլոր պատուարները, ապա ժողովուրդը, որու անճկուն բանականութիւնը ի զօրու է ճշմարտութիւնն ընկալել որպէս միայն պատկերացում, այլեւս անկարող կ'ըլլայ գոհացնել իր ներաշխարհին ձգտումները»⁴:

Նոյն գաղափարները կը նշեն հայ աւետարանականները⁵: «Նոր գաղափարներու ծնած յեղաշրջութիւնը յաճախ այնպէս կը ցնցէ ընկերային կեանքը, որ ճակատագրօրէն փոփոխութիւն մը երեւան կուգայ մարդոց ըմբռնումներուն եւ տեսակետներուն մէջ... Անոնք որ կառչած կը մնան իրենց ընտելացած սկզբունքներուն, չեն կրնար տեսնել ճշմարտութիւնը, վասն զի չեն ուզեր, ու այսպէս կ'ենթարկուին կորուստեան մը, որ կամաւոր ըլլալուն պատճառաւ կը կորսնցնէ չքմեղանքի ամէն իրաւունք: Մեծագոյն յեղաշրջութիւնը, որ երբեք տեղի ունեցած ըլլայ մարդկային ընկերութեան ծոցին մէջ, է այն՝ զոր ծնած է քրիստոնէական գաղափարը: Մտածումի եւ կեանքի ամենէն լուրջ ու փրկարար փոփոխութիւնները անոր արդիւնքն են: Բարոյականի եւ գիտութեան, խորհուրդի եւ մտածումի մարզերուն վրայ կատարուած բոլոր ազնիւ եւ մարդօգուտ յառաջդիմութիւնները՝ ամենքն ալ ներշնչուած են Աւետարանի ոգիէն»⁶:

Ապտով Մէճիտ Ա-ի (1839-1861) 1839 թ. նոյեմբերի 3-ի հրովարտակը կը նկատուի շրջադարձային ժամանակ⁷: Ըստ հրովարտակի, խտրականու-

³ Schiller 2009, 88.

⁴ Hegel 1979, 81-113.

⁵ Հմմտ. Հայաստանեայց աւետարանական եկեղեցին 1986, 23-24:

⁶ Վեր. Կ.Պ. Ատանայեան 1952, 4:

⁷ Օսմանեան իշխանութիւնների կողմից բողոքականութեան տարածմանը նպաստելու տրամաբանութեան մէջ է տեղաւորում նաեւ այն, որ Կ. Պոլսում հայ աւետարանական առաջին համայնքի փաստացի ձեւաորումից (1846 թ.) չորս տարի անց՝ 1850 թ., սուլթան Աբտուլ Մեջիտ I-ի հրամանով այն ստացաւ պաշտօնական պետական ճանաչում՝ կոչուելով Բողոքական ազգ (Պրոտեստանտ միլլեթ/ Հայ կաթողիկէ եւ աւետարանական համայնքները Թուրքիայում 2012, 82:

թեան ենթարկուած ոչ մուսուլմանները ճանչցուելու էին իրաւահաւասար օսմանեան քաղաքացիներ. «Ֆրանսիական յեղափոխութեան նուաճումները (մարդու իրաւունքներ, դաւանանքի ազատութիւն եւ այլն) անհետեւանք չէին անցնում Օսմանեան կայսրութեան կողքով,- կը գրէ Վ. Բաումը, - եւ քրիստոնեաների համար աստիճանաբար ազատագրուելու հնարաւորութիւններ էին ստեղծում»⁸:

Հայ ազգային Վերածնունդի տարիներ

1840-1860-ական թուականները հայ ազգային ոգիին վերածնութեան տարիներ էին: Արեւմտահայ մշակութային կեդրոններու մէջ մտաւորականութիւնը փորձած է ժամանակի նոր գաղափարներով ուղղութիւն տալ ազգի հոգեւոր զարգացումին: Արեւմտահայ շրջանակներու մէջ հայկական կեանքի ազատականացումի միտումներ ստեղծուած են:

«Բողոքականութիւնը ծնած է երկու մեծ շարժառիթներէ, - կը գրեն հայ աւետարականները. 1. փափաքը ետ երթալու Նոր Կտակարանի, այն է նախնական Քրիստոնեայ Եկեղեցւոյ պարզ հաւատքին ու ապրումին կանոնը, 2. առօրեայ գործերու մէջ բերել բարոյական ու հոգեւոր բարեփոխութիւն, Յիսուս Քրիստոսի վարդապետութեան հետեւելով»⁹:

Աշխարհայեացքի ու հասարակական մտքի կազմաւորումին նպաստած է մամուլը¹⁰: Արեւմտահայ մամուլը աննախադէպ զարգացում արձանագրեց 1840-ական թուականներուն: «Որչափ դժուարին էր ի սկզբանէ բողոքականութեան մուտքն, նոյնչափ կը ճգնէին Ամերիկեան Միսիոնարքիւրենց սովորական կերպովը հարթել դժուարութիւնները՝ ծածկելով ամենայն ինչ գիտութեան՝ արտաքնայարդար անկեղծութեան եւ ծառայամտութեան քողին ներքեւ: Ի՞նչ աւելի կրնար իրենց սկզբունքները մուծանել տակաին քնացող ազգի մը մէջ, եթէ ոչ յանկուցիչ՝ միանգամայն դիրագին լրագիր մը»¹¹, - կը նկատէ հայ լրագրութեան պատմաբանը:

«Նոր բովանդակութիւն է ստանում ազգային շարժումը, հայ աշխարհայեացքը դասականութիւնից անցում է կատարում ազգային ռոմանտիզմին, - կ'ընդգծէ գրականութեան պատմաբանը: - Եւ, ի տարբերութիւն երոպական ռոմանտիզմի, որ ծնունդ առաւ որպէս հակազդեցութիւն 18-րդ դարու լուսաւորական ռացիոնալիզմի, հայկական ռոմանտիզմը ամբողջապէս ստղծուում է լուսաւորական փիլիսոփայութեամբ՝ ձեւ տալով մի ուրոյն լու-

⁸ Բաում 2010, 43:

⁹ Վեր. Կ.Պ. Ատանալեան, 61:

¹⁰ Վեր. Կ.Պ. Ատանալեան, 33:

¹¹ Գր. Վ. Գալեմբեան 1893, 39:

սաւորական ռոմանտիզմի... Կենսական անհրաժեշտութիւն էր ազգապահպանութեան մէկ այլ սուբստանցի՝ եկեղեցու աշխարհականացումը»¹²:

Այդ տարիներուն կը զուգադիպի հայ աւետարանականներու գործունէութեան շրջադարձային պահը, երբ «միսիոներական տան» մէջ¹³ կը սկսին պաշտօնապէս կիրակնօրեայ ժողովներ կազմակերպել: «Ծրագիրը աւելի ոյժ տուած էր գիտութեան եւ լեզուաց, թէպէտ լաւ բաժին մըն ալ սահմանուած էր կրօնական ուսմանց: ...Նոյն 1839 տարւոյ սկիզբը 50-ի հասած էր ճեմարանի աշակերտներուն թիւը. եւ միջոց մը գործերը բաւական կանոնաւոր քալեցին իբրեւ առաջին եռանդ, եւ Աղաւնի յորդորականներու ներքեւ, սակայն համառօտ եղաւ այդ միջոցը: Այդ տարիներու մէջ նոր հոսանք եւ նոր շարժում սկսած էր Հայոց մէջ, որոնք ինչպէս յայտնի է միշտ միտեալ գտնուած են նորութիւններէ հրապուրելու: Հիւսիսային Ամերիկա Միացեալ Պետութեանց /Etats-Unis/ կամ ինչպէս սովորութիւն եղած է գործածել, Միացեալ Նահանգաց բնակչութիւնը, որուն տիրող կրօնքը՝ բողոքականութեան Աւետարանական կոչուած յարանուանութիւնն է, կրօնական թէ քաղաքական դիտումներէ մղուած, որոշեց արտաքին ազդեցութիւն մշակել, ուսում տարածելը իբր միջոց եւ դաւանութիւն տարածելը իբր նպատակ գործածելով: ...Առաջին քայլերը քաջակերական եղան, եւ 1829-ին Ամերիկայի քարոզչական խումբը որոշեց Թուրքիոյ Հայոց մէջ բողոքականութիւնը քարոզել կանոնաւոր կերպով»¹⁴, - կը գրէ Կ. Պոլսոյ հայոց պատրիարք, աստուածաբան, հայագէտ, Մաղաքիա արք. Օրմանեան:

¹² Հայոց գրականութեան պատմութիւն 2015, հ. 3, 106-107:

¹³ «Միսիոներական գործունէութեան խրախուսումը եւ կաթողիկէ ու աւետարանական համայնքների ձեւաւորումը լայն դուռ բացեցին կայսրութեան ներքին գործերին արտաքին միջամտութեան եւ այդ միջամտութեան օրինականացման համար», - կը նշեն աւետարանները» (տե՛ս Ղանալանեան 2010, 39):

¹⁴ Մաղաքիա արք. Օրմանեան 1961, հ. Գ, 2435: Ի դէպ, «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»-ի խմբագրութիւնը «Մասիսն ու Ամերիկայի միսիօնարները» յօդուածով կը պատասխանէ, թէ՛ Մասիս լրագիրին խմբագրիչը տակաւին ջանք կ'ընէ շաբթէ շաբաթ իր ընթերցողները լուսաւորել Անգղիայի, Ամերիկայի և Գերմանիայի մէջ թէ հինուց ու թէ հիմակուան եղած կրօնական բազմաթիւ աղանդներուն վրայ: Աս բանը կրնայ հետաքրքրական ու շահաւոր ըլլալ իբրև կրօնական պատմութեան առարկայ մը, բայց նորէն կ'ուզենք ըսել իրեն որ ամենաթեթիւ կապակցութիւն մը անգամ չունի մեր իրեն առաջարկած ու իրեն ալ պատասխանել խոստացած խնդիրին: Տաճկաստանի մէջ Պապական Հայ Եկեղեցի եւ Բրօթէրսանդ Հայ Եկեղեցի ըլլալուն նկատմամբ Մասիսին խմբագրիչին ունեցած պատասխանատուութենէն աւելի ամերիկացի միսիօնարները պատասխանատուութիւն չունին ան աղանդներուն նկատմամբ: Կրօնական բաժանումները չէ թէ Բրօթէրսանդութեան կամ Հռոմէականութեան կամ Հայկականութեան պտուղներն էին՝ այլ կրօնական ազատութեան: Անգամ մը որ կրօնական ազատութիւն ըլլայ, բուն մարդկային բնութենէն է որ բաժանումներ կը գոյանայ (1857, N 74):

Եւ իրօք, 19-րդ դարու 20-30-ական թթ. հասարակական կեանքում գործուն մասնակցութիւն կ'ունենան հայ բողոքականները¹⁵. անոնք կը գործեն Շուշի, Կ. Պոլիս, Ջմիռնիա, Կալկաթա: «Իրենց գործունէութեամբ ...նրանք, սակայն, մեր այսօրուայ աշխարհաբարի տարածման սկզբնաւորման հարցում որոշ դեր են խաղացել: Յայտնի է, որ այն ժամանակ, երբ աշխարհաբարը պաշտօնապէս չէր ճանաչուած իբրեւ հայ ժողովրդի գրաւոր լեզու, նրանք իրենց կրօնական դասանանքը՝ *աւետարանական կամ բողոքական*, ժողովրդի մէջ դիւրութեամբ տարածելու նպատակով հրատարակեցին բաւականաչափ աշխարհաբար գրքեր»¹⁶, -կը գրէ քննադատը:

«Գրական զարթօնք էր ապրում Ջմիռնիան: Սկսած 1838 թուականից, կրօնական բովանդակութեամբ բաւականին շատ արձակ ու չափածոյ պատմութիւններ են տպագրում Ջմիռնիայի բողոքականները՝ նախատեսուած գլխաւորապէս մանուկների համար. «Զբօսարան մանկանց հոգեւոր տաղերու եւ խրատների», «Իսաշնարածին աղջկան՝ Եղիսաբեթին երջանիկ մահը», «Երկու գառնուկներուն պատմութիւնը», «Յովսէփին պատմութիւնը տղայոց եւ պատանիներուն համար շինուած», «Քրիստիանոսին ու Քրիստինէին ճամբորդութիւնը աս աշխարհէն հանդերձեալ աշխարհը երագի ձեւով», «Հոգեւոր երգեր» եւ այլն: Այս իբր թէ գեղարուեստական գրուածքները ըստ էութեան բողոքական կրօնաւորների կողմից գրուած կամ թարգմանուած քարոզներ էին, որոնց նպատակն էր Քրիստոսի ուսմունքի տարածումն իրենց՝ բողոքականների ձեւով»¹⁷:

XIX դարու 30-40-ական թուականներու ընթացքին Օսմանեան կայսրութեան նկատմամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքականութիւնը եւ ամերիկեան միսիոնարական կազմակերպութիւններու գործունէութիւնը որոշակի դերակատարութիւն ունեցած են արեւմտահայութեան ճա-

¹⁵ «Վասն որոյ Փրօթեսթան նախնական բառին բուն թարգմանութիւնը չէ՛ գործածուած մեր «Բողոքական» բառին յորջորջումը, -կը նշէ «Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցւոյ»-ին հեղինակը: -Այս պատճառաւ մենք պիտի գործածենք հոս ճիշտ բառը, փոխանակ «Բողոքական» -ի, ինչ որ թուրքերէնի մէջ պահուած է եւ այդ անունով *ֆերմաններ* տրուած են: Երոպական ծանօթ ձեւը մեր բնական նոր շարժումին իսկական նշանակութիւնը եւ հաստատումն է մեր Բողոքականութեան բուն նպատակին, իմաստին եւ ոգիին: Վերոգրեալ երկու սկզբունքներ-propositions-կը յայտնեն «բացորոշութեան» գաղափարը-idea of openness, կամ վկայուած բանին հրատարակումը. Publicity of that of witness, կամ հռչակումը-declaration, որուն մէջ բացասական իմաստ մը չկայ, այսինքն բանի մը դէմ բողոքել: Վասն որոյ - «Փրօթեսթանթ», protestation բառին արմատէն կուգայ, ինչպէս վերը բացատրեցինք-*բացէն վկայել, խոստովանիլ, հռչակել, հանդիսատրապէս յայտարարել, հաւաստել, լրջօրէն պաշտպանել, երդնուլ, ուխտել Աստուծոյ առաջեւ*: Ըլլալ զուտ Աւետարանական եւ Աւետարանիչներ»:

¹⁶ Դարթեան 1967, VIII:

¹⁷ Դարթեան 1967, XLVIII:

կատագրի մէջ: «Արեւմտեան Հայաստանում ամերիկեան միսիոներների գործունէութեան վերաբերեալ հայ հասարակական միտքը հիմնականում առաջ է քաշում երկու իրարամերժ տեսակէտ, - կը նշէ պատմաբանը: -Առաջին տեսակէտի համաձայն, որը հիմնականում արծարծուել է ժամանակի նշանաւոր թերթերում՝ «Մշակ», «Հովիտ», «Ժամանակ», «Արեւելք», «Արարատ» եւ այլն, միսիոներներն Օսմանեան կայսրութիւն էին գործուղուել ԱՄՆ-ի քաղաքական շահերն իրականացնելու համար: Հետեաբար ցանկացած մարդասիրական քայլ, որ արուում էր նրանց կողմից, համարուում էր շահադիտական ձեռնարկում: Միւս տեսակէտն, ընդհակառակը, փորձում է բացառել միսիոներական գործունէութեան շահադիտական կողմը՝ նրանց ներկայացնելով որպէս բարերարներ: Այդ տեսակէտը հիմնականում առաջ է քաշում սփիւռքահայ պատմաբանների աշխատութիւններում»¹⁸:

ԱՄՆ-ի «մշակութային իմպերիալիզմի» տեսութեան իրականացումի մէջ մեծ դերակատարութիւն ունեցան ոչ պետական դերակատարները՝ միսիոնարները. «ԱՄՆ-ը պահանջում էր, որ իր ազդեցութեան ներքոյ գտնուող երկրները ձեւափոխեն իրենց հասարակութիւններն ամերիկեան արժէքների հիմքի վրայ: Այդ «բարեփոխումները» նպատակաուղղուած էին տնտեսութիւնների կայունացմանը, ազնիւ, գործունեայ եւ ներկայացուցչական կառավարութիւններ պատրաստելուն, առողջապահութեան եւ բժշկութեան նոր մեթոդներ կիրառելուն, հետապնդում էին համապատասխան մշակութային փոփոխութիւններ հասարակութիւններում»¹⁹, - կը գրէ Ա. Կիրակոսեանը:

Քարոզչական շրջադարձութիւն

Միսիոնարներու յայտնութիւնը նոր «հարթութիւն» ստեղծեց Օսմանեան կայսրութեան մէջ: Մէկ կողմէն, միսիոնարները արտաքին աշխարհին տեղեկատուութիւն կը տրամադրէին քրիստոնեաներու վիճակի մասին, միւս կողմէն, անոնք մշտապէս պահանջներ կը դնէին կայսրութեան պետական մարմիններուն՝ քրիստոնեաներուն լայն ազատութիւններ տրամադրելու մասին: Անոնց գործունէութիւնը կ'առաջացնէր արեւելեան եկեղեցիներու առաջնորդներու, մահմետականներու, օսմանեան կառավարութեան եւ նոյնիսկ դիւանագիտական ներկայացուցիչներու դժգոհութիւնը²⁰:

«Թէեւ միսիոներութեան նպատակն ի սկզբանէ եղել է քրիստոնէութեան տարածումն այլակրօնների շրջանում, սակայն գալով Օսմանեան Կայսրութիւն՝ քարոզիչներն իրենց գործունէութիւնը տարածում են նաեւ կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդների վրայ՝ նպատակ ունենալով

¹⁸ Գէորգեան 2015:

¹⁹ Կիրակոսեան 2014, 54-55:

²⁰ Salt 1993, 30.

նրանց դաւանափոխել բողոքականութեան: Պատճառը գլխաւորապէս մուսուլմանների եւ հրեաների անընկալունակութիւնն էր աւետարանական քարոզչութեան նկատմամբ, եւ նրանք Օսմանեան կայսրութիւնում բախուեցին վերջիններիս բացասական վերաբերմունքին»²¹, - կը նշեն հայ բողոքականները: «Անյաջողութեան մատնուելով այլակրօններին քրիստոնէացնելու մէջ՝ միսիոներները իրենց գործունէութեան թիրախ են դարձնում Օսմանեան կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդներին: Միսիոներ Փ. Ֆիսկը հիմնաւորում է իրենց գործունէութեան վերանայումը. Օսմանեան կայսրութիւնում առկայ քրիստոնեաների տարբեր խմբերի շրջանում ինչ-որ բան կարելի է անել»²²:

Եզրակացութիւններ

Օսմանեան կայսրութիւն ժամանած առաջին միսիոներները տպաւորուած էին այն փաստով, որ կայսրութեան բոլոր ժողովուրդներից *հայերն ամէնից բացն էին բողոքական միսիոներներու գործունէութեան հանդէպ*: Միսիոներները քննադատող գրախօսական յօդուածի մէջ Միք. Նալպանտեան կը նշէ. «Մենք յոյս ունենք, որ մեր համազգի հռովմէական կամ բողոքական եղբայրքը չգայթակղին մեր խօսքերից: Մենք ոչ ոքի ներքին կրօնը կամ խիղճը դատելու, չասենք յանդգնութիւնը, այլ գէթ աշխարհաբար խօսելով, յիմարութիւնը վիզ առնող չենք. եւ մեր պատերազմը այս կամ այն հաւատալիքի ընդդէմ չէ, այլ բռնութեան ընդդէմ, որ մենք տեսնում ենք այն եկեղեցիներում, որք կամենում են մեզ ազատութիւն պարգեւել: Ո՛հ, մի ազատութիւն, որ բնաւ տարբերութիւն չունի բռնութիւնից: Ինչ վերաբերում է բուն ներքին կրօնին, թո՛ղ իւրաքանչիւր մարդ իւր խղճմտանքից հարցանէ եւ պատասխան տայ Աստծոյ: Մենք ո՛չ ինկվիզիտոր ենք, ո՛չ միսիոնար»²³:

Համոզուելով, որ մահմետականները եւ հրեաները աւետարանական դարձնել անկարելի է, 1831 թ. «Ամերիկեան խորհուրդը» որոշում կայացուց իր ամբողջ գործունէութիւնը ուղղել Արեւելքի եկեղեցիներու վրայ: Կոստանդնուպոլսի կայանը նպատակ ունէր կրօնափոխութեան աշխատանք տանիլ հայերու, Չմիւռնիոյ եւ Աթէնքի կայանները՝ յոյներու, Պէյրութի կայանը՝ արաբ քրիստոնեաներու մէջ: Առաջին տարիներու ընթացքին միսիոնարները կը ծանրանային յատկապէս լեզու սորվեցնելու, Աստուածաշունչ թարգմանելու, կրօնական գրականութիւն տպագրելու վրայ: Հիմնական յաջողութիւն արձանագրուեցաւ հայերու հետ: Միսիոնարներու թարգմանչական, հրատարակչական եւ «աւետարանականացման» գործունէութեանն աւելցաւ նաեւ ընդհանուր կրթութեան ասպարէզը: Միսիոնարական դպրոց-

²¹ Միմաւորեան 2012, 77-78:

²² Kutvirt 1972, 44.

²³ Նալպանդեան 1979, հ. 4, 137:

ները կ'ընդգրկէին ամէն տեսակ կրթական հաստատութիւններ՝ մանկապարտէզէն մինչեւ աստուածաբանական ճեմարան: Ամերիկեան միսիոնարները հիմնեցին նաեւ բժշկական հաստատութիւններ՝ հիւանդանոցներ ու որբանոցներ:

Գրականութիւն

- Ատանայեան Կ.Պ. Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցւոյ, էջ 61:
- Գրիգորիս վ. Գալէմքեան 1893, Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը, Վիեննա, Մխիթարեան տպարան, էջ 39:
- Գէորգեան Ս.Բ. 2015, Ամերիկեան միսիոններն զործունէութիւնն Արեւմտեան Հայաստանում 1895-1914 թուականներին, Երևան /Սեղմագիր/: Դաւթեան Հ. 1967, Հայ գիրքը 1801-1851 թուականներին, Երևան, էջ VIII:
- Նալբանդեան Մ. Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, էջ 137:
- Հայաստանեայց աւետարանական եկեղեցին 1986, հատորը կազմեց ու խմբագրեց Երուանդ Հ. Քասունի, Պէյրութ, էջ 23-24:
- Հայ կաթողիկէ եւ աւետարանական համայնքները Թուրքիայում 2012, «Նորավանք» ԳԿՀ, 160 էջ:
- Հայոց գրականութեան պատմութիւն 2015, հ. 3, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն», էջ 106-107:
- Վիլիելմ Բաում 2010, Թուրքիան եւ նրա քրիստոնեայ փոքրամասնութիւնները (Գերմաներէնէ թարգմանեցին Դորա Սաքայեան եւ Էվելինա Մակարեան), Երևան, «ԵՊՀ հրատ.», էջ 43:
- Վեր. Կ.Պ. Ատանայեան 1952, Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցւոյ, Ֆրեզնօ, 527 էջ:
- Ղանալանեան Տ. 2010, Հայ բողոքականներ, 21-րդ դար, N 4, էջ 39:
- Մաղաքիա արք. Օրմանեան 1961, Ազգապատում, հ. Գ, Սեան տպարան, Պէյրութ, էջ 2435:
- Կիրակոսեան Ա. 2014, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականութիւնը եւ արեւմտահայութիւնը (19-րդ դար-1914 թ.), Երևան, ԵՊՀ հրատ., էջ 54-55: Fry, Joseph A., Y.i. E., p. 63-64:
- Սիմաւորեան Ա. Հովեան 2012, Հայ կաթողիկէ եւ Աւետարանական համայնքները Թուրքիայում. Ժամանակակից միտումներ, Երևան, էջ 77-78:
- Salt J. 1993, Imperialism, Evangelism and the Ottoman Armenians, 1878-1896, Portland, Oregon: Frank Cass, 30 p.
- Kutvirt Th. 1972, "The Establishment of an American Protestant Mission to the Armenians (1810-1830)", The Armenian Review, Boston, Vol. 25, No 3 (99), p. 40-45.
- Berger P. 1967, The Social Reality of Religion, London, Faber, 152 p.
- Моль А. 1973, Социодинамика культуры, Москва, «Прогресс», 408 с.

Schiller von J. Ch. Fr. 2009, Über die ästhetische Erziehung des Menschen. Suhrkamp Verlag Frankfurt am Main, 88 S.

Hegel G.W.F. 1979, Vorlesungen über die Philosophie der Religion, Werke in zwanzig Bänden. Band 18, Frankfurt am Main, S. 81-113.

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՐՃՄԱՆ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՆԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

Յարութին Գէորգ Սեյիմեան (Սուրիա, Հալէպ)

Հայ աւետարանական շարժումի տարածման արդիւնքով կը ձեւաւորուին Հայ Աւետարանական Եկեղեցւոյ դաւանական նոր հիմքերը:

Օսմանեան Թուրքիա ժամանած առաջին միսիոներները տպաւորուած էին այն փաստով, որ կայսրութեան բոլոր ժողովուրդներէն հայերը ամէնէն բացն էին բողոքական միսիոներներու գործունէութեան հանդէպ:

Գլխաւոր նպատակը պէտք է դառնար աշխարհի բարոյական վերակառուցումը, դպրոցի եւ եկեղեցւոյ հիմնադրումը, իւրաքանչիւր ընտանիքի համար Աստուածաշունչ կարդալու եւ աղօթելու հնարաւորութեան ստեղծումը, նոր աշխարհի բողոքականութեան արտահանումն ու տարածումը:

Բանալի բառեր՝ հաւատք, խիղճ, միսիոներութիւն, դաւանափոխել, քրիստոնեայ ժողովուրդներ, հայ աւետարանականներ, բողոքականութիւն:

ЗАРОЖДЕНИЕ АРМЯНСКОГО ЕВАНГЕЛИСТСКОГО ДВИЖЕНИЯ В ОСМАНСКОЙ ТУРЦИИ

Арутюн Геворг Селимян (Сирия, Алеппо)

Армянское евангелистское движение способствовало формированию новых основ вероучения армянской евангелистской церкви.

Первые миссионеры, оказавшиеся на территории османской Турции, акцентировали тот факт, что из всех народов, населявших империю, армяне были наиболее толерантны в отношении протестантских миссионеров. Главной целью их деятельности были нравственная реконструкция мира, основание школ и церквей, изучение Библии, распространение протестантизма.

Ключевые слова – вера, совесть, миссионерство, обращение в иную веру, христианские народы, армянские евангелисты, протестантство.

**FORMATION OF THE ARMENIAN EVANGELIST MOVEMENT IN OTTOMAN
TURKEY**

Harutyun Gevorg Selimyan (Syria, Aleppo)

The new foundations of the Armenian Evangelical Church are being formed as a result of the spread of the Armenian Evangelical Movement.

The first missionaries who arrived in the Ottoman Empire were impressed by the fact that among the peoples of the Empire, Armenians were the most open nation to the activity of the Protestant missionaries.

The general idea was that the overarching goal should be the moral rebuilding of the world, the founding of the school and the church, the creation of the opportunity for each family to read the Bible and pray, and spreading Protestantism to the New World.

Key words – Faith, conscience, spiritual rebirth, diversity, priesthood mission, power of baptism, sin, grace.

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Նարեկ Գրիգորյան

ՀՀՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի
ավագ գիտնական-վերլուծաբան
ՀՀ, Երևան, Կարապետ Ուլենցի 56/6
Էլ. հասցե՝ nkgriqoryan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 03.09.2019, գրախոսվել է 20.09.2019, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

Կառավարման համակարգի և վարչակարգի ընտրությունը պայմանավորված է քաղաքական մշակույթի մի շարք առանձնահատկություններով և պետական շահերով: Առհասարակ քաղաքական գործընթացների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խորհրդարանական կառավարման համակարգում (parliamentarism) կոնսոցիատիվ (համասոցիալական) ժողովրդավարության մոդելի կիրառությունը էապես նպաստում է լավ կառավարմանը: Այլ բան է, որ տարբեր պետությունների էթնիկական, քաղաքական, մշակութային և այլ հարցերից ելնելով՝ կոնսոցիատիվ մոդելի կիրառությունը կարող է տարբեր արդյունքներ բերել: Այստեղ հատկապես կարևորվում են կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի (ԿԺՄ) տեղայնացման գործընթացը և դրանից բխող խնդիրները: Հենց այստեղ է, որ առաջանում են պետական ինստիտուտների ժողովրդավարացման և արդյունավետության խնդիրները¹: Ժողովրդավարության մյուս մոդելների նմանությամբ՝ կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելում կարևորվում է խորհրդարանի դերը: Մեր խնդիրը խորհրդարանական կառավարման համակարգը ԿԺՄ-ի հետ զուգակցելն ու այն ներկայիս (ՀՀ խորհրդարանական) կառավարման օրինակով ներկայացնելն է: Ընդհանրապես խորհրդարանական կառավարման համակարգը պետության ժողովրդավարական վարչակարգի դրսևորման հիմնական ձևն է, երբ գործադիր մարմինը օրենսդիր մարմնի վստահությամբ ստանձնում է պետության ղեկավարումը²: Այլ կերպ ասած՝ խորհրդարանականությունը, ժողովրդավարական կառավարման համակարգ է, որտեղ ժողովրդավար և լեգիտիմ գործադիր իշխանությունը իր գործունեությունը ստանձնում է խորհրդա-

¹ Diamond, Linz 1996, 20-37.

² Matthew 2002, <http://users.erols.com/mwhite28/20c-govt.htm>.

րանի վստահությամբ և հաշվետու է խորհրդարանի առջև: Ռուս իրավագետ Օլեգ Միրոնովը խորհրդարանականությունը մեկնաբանում է իբրև սոցիալական արժեքների բարդ և բազմակողմանի սանդղակ: Ըստ ռուս քաղաքագետ Իվան Ռիբկինի՝ դա «քաղաքական համակարգ է, որտեղ ժողովրդի ինքնիշխան կամքն իր մարմնավորումն է գտնում ընդհանուր և գաղտնի քվեարկության հիման վրա ընտրվող բարձրագույն ներկայացուցչական մարմնի մեջ»³: Այն հակադրվում է նախագահական և կիսանախագահական կառավարման համակարգին, որտեղ պետության ղեկավարը համարվում է նախագահը, որն ընտրվում է քաղաքացիների ձայների քվեարկությամբ: Այլ են պայմանները խորհրդարանական կառավարման համակարգում, որտեղ պետության գործադիր իշխանության ղեկավարը ոչ թե նախագահն է, այլ՝ վարչապետը⁴: Անշուշտ, այս դեպքում պետությունը կարող է ունենալ նաև նախագահ, սակայն նրա գործառույթները զուտ ներկայացուցչական և ձևական բնույթ են կրում, բացառությամբ այն խորհրդարանական հանրապետությունների, որոնք ունեն գործադիր նախագահ⁵: Խորհրդարանականության վերաբերյալ մասնագիտական հետազոտական մոտեցումներում հատկապես արժարժվում են դրա տեսության և կիրառականության հարցերը: Այս առումով, չնայած որոշ հեղինակներ նշում են, որ կառավարման այս համակարգը ունի նաև տեսական նշանակություն, սակայն, ընդհանրացնելով բոլոր մոտեցումները, կարելի է եզրահանգել, որ վերջինս ավելի շատ կիրառական գործունեության ոլորտ է, քան տեսական մոտեցումների ամբողջություն:

Խորհրդարանականության իրավագիտական և քաղաքագիտական ընկալումները

Խորհրդարանականություն հասկացության վերաբերյալ քննարկումներում մյուս կարևոր հարցադրումներից մեկը դրա քաղաքագիտական և իրավագիտական հատկանիշներին անդրադառնալն է: Եվ եթե իրավագիտական համատեքստում այն հստակ չափումներ ունի, և ամեն տառը կամ բառը կարևորվում է իրավական նորմերի տեսանկյունից, ապա քաղաքագիտական առումով արժևորվում են դրա գործնական կիրառման և բովանդակային ընկալման քաղաքական առանձնահատկությունները: Միաժամանակ, խորհրդարանականության թե՛ իրավագիտական, թե՛ քաղաքագիտական ընկալումները բուն գործընթացների մեջ չեն կարող իրարից բացարձակ անջատ դրսևորվել: Սրա վառ օրինակն է այն, որ խորհրդարանը, լինելով օրենսդիր իշխանության և նորմաստեղծ գործառնություններ

³ Рыбкин 1995.

⁴ Jean 1992, 162-172.

⁵ Arend 2012, 187-203.

իրականացնող մարմին, միաժամանակ, նաև քաղաքական ուժերի գործունեության և շահերի դրսևորման հարթակ է: Ուստի պատահական չէ, որ հաճախ խորհրդարանականության իրավագիտական բովանդակությունը քաղաքական գործընթացներում դառնում է անկենսունակ, և դրանց տրամաբանությամբ պայմանավորված՝ նկատելի են դառնում խորհրդարանականության քաղաքագիտական, բովանդակային դրսևորումները: Հաշվի առնելով խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող երկրների գործնական փորձը և զարգացման միտումները՝ կարող ենք նշել, որ «խորհրդարանականություն» հասկացության իրավագիտական և քաղաքագիտական բովանդակային տեսանկյունները փոխլրացում են միմյանց:

«Խորհրդարանականության իրավագիտական հասկացությունը վերաբերում է դրա իրավական ձևակերպումներին, օրենսդրական գործառույթներին, իրավական ընկալումներին և առհասարակ մշակույթին»⁶: Խորհրդարանականության իրավագիտական հասկացության հիմնական մոտեցումները հատկապես ձևակերպված են մի իրավական ճյուղի համատեքստում, որը առավել հայտնի է «խորհրդարանական իրավունք» (parliamentary law) անվանմամբ: Առհասարակ գրեթե բոլոր պետություններում էլ խորհրդարանի և համապատասխան խորհրդարանական կառավարման համակարգի գործառույթները կարգավորվում են տվյալ պետության սահմանադրության առանձին գլուխներով և նորմերով: Խոսելով խորհրդարանական իրավունքի մասին՝ հարկ է նշել, որ այն իրավական նորմերի և սկզբունքների յուրահատուկ համակարգ է, որը կարգավորում է խորհրդարանի՝ որպես օրենսդիր մարմնի, ներքին և կազմակերպական հարցերը, ինչպես նաև ընտրազանգվածների փոխհարաբերությունները: Հետաքրքրական են սահմանադրական և խորհրդարանական իրավունքի բովանդակային տարբերությունները. եթե սահմանադրականի դեպքում գործ ունենք հոչակագրային ինստիտուցիոնալ նորմատիվային խմբերի և սկզբունքների հետ, ապա խորհրդարանականի պարագայում՝ դատավարական և կազմակերպչական տեխնիկական նորմատիվային խմբերի հետ: «Իրավունքի համակարգում գոյություն ունեն խորհրդարանական իրավունքի դերի հետ կապված մի քանի մոտեցումներ: Առաջինի համաձայն, խորհրդարանական իրավունքը սահմանադրական իրավունքի անբաժանելի մասն է, այսինքն՝ նրա սահմանադրական-դատավարական կողմը»⁷: Ըստ երկրորդ մոտեցման, խորհրդարանական իրավունքը իրավունքի առանձին ճյուղ է, որը համահունչ է սահմանադրական իրավունքին: Կառուցվածքային առումով, խորհրդարանի իրավունքը բավական բարդ համալիր է, որը ներառում է սահմանադրական իրավունքի հիմնարար և այլ հարակից նորմերը: Այլ

⁶ Минюк 2007, 94-100.

⁷ Мальцан 2005, 43-45.

իրավունքի ճյուղերից հիմնական տարբերությունն այն է, որ խորհրդարանական իրավունքը երկշերտ է: Նրա հիմնական արմատները գտնվում են սահմանադրության մեջ: Միաժամանակ, խորհրդարանական իրավունքը ներառում է մատերիական և ընթացակարգային նորմեր, որոնք էականորեն գերակշռում են այստեղ: «Խորհրդարանական իրավունքն ունի առարկայի և մեթոդի որոշման հստակ իրավական կարգավորումներ և առանձնահատկություններ: Այս առումով, խորհրդարանական իրավունքի առարկայի հիմնական առանձնահատկություններն են՝ 1. Խորհրդարանը՝ որպես օրենսդիր մարմնի և իրավապահ մարմինների և ժողովրդի միջև ինստիտուցիոնալ հարաբերությունների դրսևորում, 2. Ընթացակարգային և կազմակերպական հարաբերությունները (խորհրդարանական գործունեության ընթացակարգ), ներառում են նաև օրենսդրական ակտերի հետ կապված բնականոն հարաբերությունները»⁸: Հատկանշական է նաև խորհրդարանական իրավունքի աղբյուրների հարցը, և այս տեսանկյունից հիմնական աղբյուրներ են համարվում՝ սահմանադրությունը, գործադիր մարմնի որոշումները և հրամանագրերը, խորհրդարանի կողմից ընդունված օրենքները, կանոնակարգերը, միջազգային իրավական նորմերը, պայմանագրերը և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ գրեթե բոլոր երկրներում (անկախ կառավարման համակարգից) առկա է խորհրդարանը՝ որպես օրենսդիր մարմին: Սակայն սա դեռևս չի նշանակում, որ գործ ունենք խորհրդարանականության, այն է՝ քաղաքական կառավարման համակարգի հետ: Խորհրդարանականության քաղաքագիտական բովանդակության մեջ կարող ենք առանձնացնել մի շարք քաղաքագիտական հայեցակետեր, որոնց մենք առնչվում ենք: Նախ՝ խորհրդարանականության պայմաններում էական են միջկուսակցական հարաբերությունները և դրանց որակը: Ինչ խոսք, խորհրդարանի՝ որպես բարձրագույն օրենսդիր մարմնի իշխանությունը ձևավորվում է իրավական ընտրություններով և իրավական այլ ընթացակարգերով, սակայն հարցն այլ է, երբ խորհրդարանը դիտարկում ենք քաղաքական գործընթացների տիրույթում: Հենց այստեղ էլ առաջանում են գործունեության հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք ունեն զուտ քաղաքական կարգավորումներ, և դժվար է միայն իրավական ճանապարհով կարգավորել այնպիսի հարցեր, որոնք առնչվում են նեղ կուսակցական և պետական շահերի վերաբերյալ կուսակցական մոտեցումներին: Խորհրդարանականության մյուս առանձնահատկությունը ներկայացուցչական մարմին լինելն է: Սա, մի կարևոր հանգամանք է, քանի որ համապատասխանում է ժողովրդավարության ներկայացուցչական ձևին, և պատահական չէ, որ շատ քաղաքագետներ նշում են, թե խորհրդարանակա-

⁸ Seidle, Campbell 2003, 5-9.

նությունը, որպես քաղաքական կառավարման համակարգ, հիմնականում գոյություն ունի ժողովրդավարական զարգացած երկրներում: Խորհրդարանն այն տեղն է, որտեղ իրականացվում է ժողովրդավարության տեսության և ժողովրդավարական փորձի միաձուլումը: Եվ, վերջապես, խորհրդարանականության մշակույթը, քաղաքական մշակույթի բաղկացուցիչ մաս է: Առհասարակ քաղաքական, տվյալ դեպքում՝ խորհրդարանականության մշակույթը պայմանավորում է կառավարման համակարգի արդյունավետ և լիարժեք գործունեությունը: Անդրադառնալով վեստմինստերյան կամ բրիտանական մոդելին՝ հարկ է նշել, որ այստեղ առկա են խորհրդարանական կառավարման համակարգին կից խորհրդարանականության մշակութային ավանդույթներ, որոնք ոչ միայն օժանդակում են կառավարման համակարգի իրականացմանը, այլև նոր երանգ են հաղորդում խորհրդարանում քաղաքական գործընթացների իրականացմանը: Ուստի պատահական չէ, որ շատ երկրներում, որտեղ առկա է խորհրդարանական կառավարման մոդելը, բայց համապատասխան մշակույթ չկա, ուրվագծվում են մի շարք բարդություններ, որոնց լուծման ճանապարհը հետևողական քայլերով խորհրդարանական մշակույթի ձևավորումն է: Օրինակ՝ հայտնի վեստմինստերյան խորհրդարանականությունը (խորհրդարանական կամ սահմանադրական միապետություն) հարում է վեստմինստերյան ժողովրդավարության քաղաքական վարչակարգին⁹:

Խորհրդարանական հանրապետություններում (Գերմանիա, Հնդկաստան, Հայաստան և այլն), կառավարության ղեկավարը նաև պետության փաստացի ղեկավարն է, որն ընտրվում է խորհրդարանում ներկայացված կուսակցությունների քվեարկությամբ: «Այստեղ խորհրդարանի բովանդակային դերը հենց դրանով էլ պայմանավորված է. այն կարող է անվստահություն հայտնել կառավարությանը՝ կասկածի տակ դնելով նրա՝ գործունեության արդյունավետությունը»¹⁰: Քաղաքագետ Արենդ Լեյվիհարթը, անդրադառնալով խորհրդարանական ժողովրդավարություններին՝ առանձնացնում է երկու հիմնական մոդելներ՝ վեստմինստերյան և կոնսոցիատիվ (համահասարակական): Խորհրդարանականը հանրապետության ձև է (Հայաստան, Ավստրիա, Բուլղարիա, Չեխիա, Գերմանիա, Հունաստան, Իտալիա, Իսրայել, Մալթա, Լեհաստան և այլն), որտեղ կառավարման համակարգում կառավարությունը (գործադիր մարմինը) պատասխանատու է խորհրդարանի (օրենսդիր մարմնի) առջև¹¹: Խորհրդարանական կառավարման համակարգում բազմաթիվ տատանումներ կան, որոնք վերաբերում են իշխանության տարանջատման սկզբունքին, գործադիր մարմնի

⁹ Lijphart 2004, 66-71.

¹⁰ Kopstein, Jeffrey 2014, 37-9.

¹¹ Seidle 2003, 5-9.

ղեկավարին, պետության նախագահին և պաշտոնատար այլ անձանց առնչվող հարցերին¹²: Խորհրդարանական հանրապետություններին համախմբում են նախագահի և կառավարության ղեկավարի դերային գործառույթները, և, այս առումով, նրանք շատ նման են կիսանախագահական կառավարման մոդելին, սակայն, էական կախվածություն ունեն օրենսդիր մարմնից: Ի տարբերություն նախագահական և կիսանախագահական կառավարման համակարգերի՝ խորհրդարանական հանրապետություններում գործող նախագահը իրական գործադիր իշխանություն չունի, քանի որ այն սահմանադրությամբ տրված է վարչապետին: Ավելին՝ խորհրդարաններում կարող է չլինել պետության նախագահ և լինել միայն վարչապետ (օրինակ՝ Հայաստանի Առաջին հանրապետությունը 1918-1920 թթ.): Վարչապետի պաշտոնավարման ժամկետները կախված են խորհրդարանից և սահմանված են սահմանադրության համապատասխան գլխով, իսկ կառավարության ղեկավարը սովորաբար ընտրվում է խորհրդարանում ներկայացված խոշոր կուսակցությունների ներկայացուցիչներից: Խորհրդարանականության պայմաններում որոշ հետազոտողներ նախագահներին տրվող լայն լիազորությունների վերաբերյալ նշում են, որ այն ի վերջո կարող է հանգեցնել նախագահից օրենսդիր մարմնի կախվածությանը, երբ տվյալ կառավարման համակարգը ավելի շատ կդիտվի որպես կիսանախագահական¹³: «Ներկայիս խորհրդարանական հանրապետությունները նախկինում հիմնականում եղել են սահմանադրական միապետություններ»¹⁴: Միաժամանակ, խորհրդարանական հանրապետությունները համատեղ որոշումների կայացման տեսանկյունից տարբերվում են նախագահական կամ կիսանախագահական համակարգերով պետություններից: Եթե դրանցում որոշումների կայացման գործընթացում բավական մեծ է նախագահի անձի գործոնը, ապա խորհրդարանական հանրապետությունների դեպքում գործ ունենք լայնածավալ դերաբաշխվածության և ինստիտուցիոնալացման հետ: Բացի այդ, խորհրդարանական հանրապետություններում բավականաչափ նվազ են դիսկային գործոնները ճգնաժամերի պարագայում՝ զսպելով օրենսդիր և գործադիր մարմինների միջև դիմակայությունների առաջացման հնարավորությունները: Ավելին՝ խորհրդարանական հանրապետություններում սովորաբար որոշումների կայացման գործընթացում ներգրավված են հասարակության բոլոր հատվածները, և որոշումների կայացման գործընթացում շահերի հստակեցումը և հնարավոր բախումները կանխարգելվում են, ինչը, իհարկե, կոնսոցիատիվիզմի հիմնային սկզբունքներից և մոտեցումներից

¹² Arend 1992, 66-71.

¹³ Elgie 2004, 314-330.

¹⁴ Gerring 2004, 295-330.

է: Խորհրդարանական հանրապետություններում կարևորվում են խորհրդարանի արձակման՝ կառավարության լիազորությունները: Ուստի, կառավարությունը կարող է երկու անգամ խորհրդարանին անվստահություն հայտնելուց հետո դիմել նախագահին՝ ցրելու խորհրդարանը: Վարչապետը պատասխանատվություն է կրում ոչ թե նախագահի, այլ խորհրդարանի առջև, և նախագահի պաշտոնը, ինչպես սահմանադրական միապետինը, ունի զուտ արարողակարգային բնույթ: Խորհրդարանական հանրապետություններում կառավարություն ձևավորելու, նախագահ ընտրելու իրավունքը պատկանում է բարձրագույն օրենսդիր մարմնին (խորհրդարանին), իսկ խորհրդարանը ձևավորվում է ազատ, արդար և թափանցիկ համապետական ընտրությունների միջոցով: Գործադիր մարմինը և վարչապետը հաստատվում են նախագահի վավերացումից հետո¹⁵: Միաժամանակ՝ նախագահը նույնպես կարող է սահմանադրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում քաղաքական նշանակումներ անել, որոնք զուտ ներկայացուցչական են և պետական կառավարման հիմնական ոլորտներին կամ հարցերին չեն վերաբերում:

Եզրակացություններ

Այսպիսով, խորհրդարանականության արդյունավետությունը, դրսևորվում է հատկապես պետական կառավարման ոլորտում իշխանության բաշխման (power sharing) սկզբունքը կիրառելով, երբ վարչապետը չի կարող կենսական շահերին վերաբերող հարցերում միանձնյա որոշումներ կայացնել և անհապաղ գործել, քանի որ առկա է օրենսդիր մարմնի կողմից վերահսկողություն, և նա հաշվետու է խորհրդարանի առջև¹⁶: Ինչպես նշում են գիտնականներ Խ. Լինցը, Ռ. Դալը և այլք, խորհրդարանականության մոդելը քաղաքական գործընթացներում քիչ հավանական է, որ տապալվի, և անցում լինի ավտորիտարիզմի, քանի որ այն իր էությամբ ժողովրդավարական սկզբունքների համալիր է¹⁷:

Մեր առաջարկություններն են՝

- Խորհրդարանական կառավարման համակարգի ընտրությունը պետք է հենվի խորհրդարանականության մշակույթի և կայացած կուսակցական համակարգի վրա:

- Նպաստել խորհրդարան-հասարակություն կապերի խորացմանը որպես իշխանության լեգիտիմության ապահովման գրավական:

- Հստակեցնել խորհրդարանական և կառավարման այլ համակարգերում խորհրդարանական դիվանագիտության առանձնահատկությունը:

¹⁵ Kiss 1996, 73-77.

¹⁶ Arend 2012, 174-186.

¹⁷ Levitsky 2002, 51-63.

• Խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետության և համապատասխան մշակույթի ձևավորման նպատակով հաճախակի կազմակերպել և անցկացնել խորհրդարանի մոդել-խաղերը:

Գրականություն

- Мальцан А. 2005, Современный парламентаризм: кризис или обновление идеи? Конституционное и муниципальное право, № 9, с. 43-45.
- Минюк Н. 2007, Законотворчество как форма выражения правовой политики, Государство и право, № 6, с. 96-102.
- Рыбкин И. 1995, Становление и развитие парламентаризма в России: автореф. докт. дис., Москва, 50 с.
- Lijphart A. 2012, Patterns of Democracy: Government Forms and Performance in Thirty-Six Countries (Second Edition), Yale University Press, pp. 187-203.
- Diamond L. 1996, Is the Third Wave Over? Journal of Democracy 7 (3), pp. 20-37.
- Elgie R. 2004, Semi-Presidentialism: Concepts, Consequences and Contesting Explanations, Political Studies Review, Vol. 2, issue: 3, pp. 314-330.
- Gerring J., Thacker S. 2004, Political Institutions and Corruption: The Role of Unitarism and Parliamentarism, vol. 34, issue: 2, pp. 295-330.
- Lijphart A. 2004, Parliamentary Versus Presidential Government, Oxford University Press, pp. 66-71.
- Kiss E. 1996, Do parties Distort Democracy?, East European Constitutional Review, 5 (1), pp. 73-77.
- Kopstein J., Lichbach M. 2005, Comparative Politics: Interests, Identities, and Institutions in a Changing Global Order, Cambridge University Press, pp. 37-39.
- Levitsky S., Lucian W. 2002, The Rise of Competitive Authoritarianism: Elections Without Democracy, Journal of Democracy, 13 (2), pp. 51-63.
- Matthew W., Types of the Governments, <http://users.erols.com/mwhite28/20c-govt.htm> (06.04.2018).
- Seidle F., Docherty D. 2003, Reforming Parliamentary Democracy, McGill-Queen's Press, pp. 5-9.

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Նարեկ Գրիգորյան

Պետական կառավարման համակարգի և քաղաքական ռեժիմի ընտրության հարցերը գրեթե միշտ եղել են պետությունների ուշադրության կենտրոնում: Խորհրդարանական կառավարման համակարգում (խորհրդարանականություն) հստակ տարանջատվում են օրենսդիր և գործադիր մարմինների գործառնությունները, որտեղ խորհրդարանն ունի քաղաքական և գաղափարական զգալի դեր: Խորհրդարանականությունն ընդլայնվում և զարգանում է միայն խորհրդարանի հստակ գործունեության շնորհիվ: Ժողովրդավարության պայմաններում իշխանությունները գործում են իրենց լիազորությունների տիրույթում երկրում առկա համաչափ, սահմանադրական հավասարակշռության և հակակշիռների մեխանիզմների հիման վրա: Գոյություն ունեն խորհրդարանականության իրավագիտական և քաղաքագիտական ընկալումներ, որոնք յուրովի են մեկնաբանում տվյալ հասկացության տարբեր կողմերը: Արդի քաղաքական գործընթացները ցույց են տալիս, որ խորհրդարանականությունը կարող է լինել խորհրդարանական հանրապետությունների և խորհրդարանական միապետությունների տեսքով:

Խորհրդարանականության կայացման և դրա արդյունավետության խնդիրները բազմաթիվ են, որոնցից հատկապես կարևորվում են խորհրդարանականության քաղաքական մշակույթի առկայությունը և կայացած կուսակցական համակարգի ճիշտ գործառնումը:

Բանալի բառեր՝ Խորհրդարանականություն, օրենսդիր մարմին, գործադիր մարմին, դատական մարմին, սահմանադրական միապետություն, խորհրդարանական հանրապետություն, վեստմինստերյան խորհրդարանականություն:

ТЕОРЕТИКО-ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ СИСТЕМЫ ПАРЛАМЕНТСКОГО ПРАВЛЕНИЯ

Нарек Григорян

Вопросы выбора системы государственного управления и политического режима почти всегда были в центре внимания государств. Функции законодательных и исполнительных органов в системе парламентского правления (парламентаризма), где парламент играет значительную политическую и идеологическую роль, четко разграничены. Парламентаризм рас-

ширятся и развивается только в результате четкого функционирования парламента: власти действуют в рамках своих полномочий на основе пропорционального, конституционного равновесия и механизмов противовеса. Существуют правовые и политические представления о парламентаризме, которые по-разному интерпретируют различные аспекты концепции. Текущие политические процессы показывают, что парламентаризм может быть в форме парламентских республик и парламентских монархий.

Существует много проблем, связанных с установлением и эффективностью парламентаризма, из которых наиболее важными являются наличие политической культуры парламентаризма и надлежащее функционирование устоявшейся партийной системы.

Ключевые слова – парламентаризм, законодательный орган, исполнительный орган, судебный орган, конституционная монархия, парламентская республика, вестминстерский парламентаризм.

THEORETICAL AND PRACTICAL ISSUES OF PARLIAMENTARY SYSTEM OF GOVERNANCE

Narek Grigoryan

The issues related to the choice of the public administration system and the political regimes have almost always been in the center of States attention. The functions of the legislative and executive bodies in the parliamentary governance system (parliamentarism) are clearly separated, where the parliament has a significant political and ideological role.

Parliamentarism is escalated and developed only as a result of the clear functioning of the Parliament, when the authorities act in a democratic manner, within the framework of their powers in the country, on the basis of proportional, constitutional balancing and counterweighing mechanisms. There are juridical and political perceptions of Parliamentary System that distinctively interpret the various aspects of the concept. Current political processes show that parliamentarism can be in the form of parliamentary republics and parliamentary monarchies.

There are many issues concerning the establishment of parliamentarism and the effectiveness of the latter, of which the most important are the existence of the political culture of parliamentarism and the proper functioning of the established party system.

Key words – parliamentarism, legislative body, executive body, judicial, constitutional monarchy, parliamentary republic, Westminster parliamentarism.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Վարդանուշ Պողոսյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ սահմանադրական դատարանի գլխավոր մասնագետ
ՀՀ, Երևան, Բաղրամյան 10
Էլ. հասցե՝ vardhipogosyan@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 16.11.2018, գրախոսվել է 05.12.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

Ժամանակակից Հայաստանը, ինչպես երբեք, այնպիսի բարդ և բազմաբնույթ սահմանադրական ինստիտուտի իրավական հետազոտության կարիք ունի, ինչպիսին մարդու տեղեկատվության իրավունքի սահմանափակումն է: Անհրաժեշտություն է առաջացել հետազոտել այս իրավունքի՝ ժողովրդավարական պետությանը հարիր թույլատրելի, օրինական և հիմնավորված սահմանափակումները, ինչպես նաև կանխորոշել և վեր հանել անօրինական սահմանափակման հատկանիշները, քանի որ զարգացող, հատկապես հետխորհրդային պետություններում լայն տարածում են ստացել տեղեկատվության ազատության իրավունքի ոտնահարումները, նվազել է մարդկանց վստահությունը դատական համակարգի նկատմամբ: Առաջնային խնդիրներից է պետական իշխանության մարմինների կողմից մարդու խոսքի, կարծիքի ազատ արտահայտման, մամուլի ազատության և այլն իրավունքների ապահովման և սահմանափակման իրավական կարգավորման արդյունավետ հայեցակարգի մշակումը: Այդ առումով օբյեկտիվ անհրաժեշտություն է մարդու այդ իրավունքների սահմանափակման թույլատրելիության սահմանադրական չափորոշիչների հստակեցման հարցը: Հնարավոր է նաև ուսումնասիրել իրավակիրառ պրակտիկան և վեր հանել մարդկանց տեղեկատվության իրավունքի սահմանափակմանն առնչվող հիմնախնդիրները: Օրենքով սահմանված սահմանափակումները անհրաժեշտություն են, այլապես տեղեկատվության ազատության իրավունքը կարող է ներխուժել մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության ոլորտ: Հատկապես վերջին տարիներին խոսքի ազատության և մարդու շատ իրավունքների ազատության մրցակցության դեպքում «հաղթում» է խոսքի ազատության իրավունքը:

Տեղեկատվական իրավունքի և անձնական անձեռնմխելիության բախումը

Իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ սահմանափակման իրականացման կարգը գործնականում շատ դեպքերում ուղղակի կախված է հենց իրավակիրառողից: Վերջիններիս կամայականության դրսևորման հնարավորությունն էլ հանգեցնում է մարդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների ոտնահարման: Դա է պատճառը, որ ցանկացած ժամանակակից հասարակության զարգացումն առաջ է բերում Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների նոր սահմանափակումներ կամ արդեն իսկ գոյություն ունեցող սահմանափակումների շրջանակի ընդլայնում:

Անդրադառնալով տեղեկատվության իրավունքի սահմանափակման խնդրին՝ պետք է նշել, որ Վ.Ն. Լոպատինը որպես տեղեկատվության իրավունքի սահմանափակման նպատակ առանձնացնում է սահմանադրական կարգի պաշտպանությունը, այլ անձանց առողջության, բարոյականության և օրինական իրավունքների և շահերի պաշտպանությունը, պետական անվտանգության ապահովումը, անկարգությունների կանխարգելման և հանցավորության դեմ պայքարի նպատակով հասարակական խաղաղության ապահովումը՝ գաղտնի տեղեկատվության տարածման կանխման և արդարադատության անկողմնակալության և հեղինակության ապահովման նպատակով¹:

Միջազգային իրավական ակտերի համաձայն՝ մարդու իրավունքների իրականացումը չպետք է սահմանափակվի, այլ, ընդհակառակը, պետությունները պետք է ապահովեն մարդու իրավունքների իրականացումը: Սակայն երբ մարդու իրավունքների սահմանափակումը դառնում է անհրաժեշտություն, այդ դեպքում նույն իրավական ակտերը սահմանում են իրավունքների սահմանափակման հիմքերը, հստակ սահմանները և միջազգային համաձայնագրերով պաշտպանված իրավունքների սահմանափակման նպատակները: Մի կողմից՝ սա թույլ է տալիս պետությանը սահմանափակում իրականացնել միջազգային իրավական ակտերի հիման վրա, մյուս կողմից պաշտպանում է պետությունների՝ մարդկանց իրավունքների կամայական սահմանափակումները:

Պայմանավորվող պետությունները պարտավոր են հարգել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) երաշխավորված իրավունքներն ու

¹ Лопатин 2005, 47; Лопатин 2001, 432.

ազատությունները, իսկ Եվրոպական դատարանի վճիռներն օգնում են հստակեցնելու և ճշգրտելու այդ իրավունքների ու ազատությունների ծավալը²:

Ինչպես նշեցինք, տեղեկատվության ազատության իրավունքը սահմանվում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով՝ ներառելով ոչ միայն կոնկրետ թեմայի շուրջ արտահայտվելու իրավունքը, այլև տեղեկատվություն ստանալու, կարծիքներ ունենալու իրավունքը: Սրա հիման վրա կարելի է ենթադրել, որ հասարակությունը պետք է թույլատրի տեղեկությունների ազատ հոսք լրատվամիջոցներով, ներառյալ՝ մամուլով, հեռուստատեսությամբ, ռադիոյով, գրքերով, լրագրերով և այլն: Կոնվենցիայի 10-րդ հոդվածի վերաբերյալ շատ վաղ շրջանի վճիռներով ՄԻԵԴ-ը մշտապես ընդգծել է ազատորեն արտահայտվելու իրավունքի կարևորությունը ժողովրդավար հասարակությունում: Մասնավորապես, ՄԻԵԴ-ն իրավական դիրքորոշում արտահայտեց, որ արտահայտվելու ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակարգի անկյունաքարերից մեկն է, դրա առաջընթացի և յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական նախապայման³:

Ազատորեն արտահայտվելու իրավունքը խիստ կարևոր է քաղաքական գործընթացի համար, իսկ հանրությանը մտահոգող բոլոր հարցերի շուրջ բանավիճելու ազատությունը հանրային կյանքի բոլոր մակարդակներում պատասխանատվության ապահովման կարևոր նախապայման է⁴:

Մամուլը կարևոր դեր ունի կարծիքների հոսքի առնչությամբ, հատկապես քաղաքական դաշտում՝ հաշվի առնելով լրատվամիջոցների կարևորությունը տեղեկություններ, գաղափարներ և կարծիքներ հայտնելու գործում: ՄԻԵԴ-ն առանձնապես ընդգծում է իր դերը, հատկապես քաղաքական և հանրությանը մտահոգող հարցերի առնչությամբ, նա անդրադառնում է թե՛ փաստերի, թե՛ կարծիքների: ՄԻԵԴ-ը նշել է, որ լրատվամիջոցները պարտավորություններ ունեն տեղեկությունների հոսքի առնչությամբ, և նշել է, որ դա մամուլի խնդիրն է:

Բացի այդ, ՄԻԵԴ-ը նշել է, որ մամուլը կարևոր դեր է խաղում որպես «հանրային հսկիչ»⁵, և համապատասխանաբար ՄԻԵԴ-ն ավելի բարձր պաշտպանություն է նախատեսում մամուլի, քան ազատորեն արտահայտվելու իրավունքից օգտվող այլ սուբյեկտների համար: Նա նաև նշեց, որ, հաշվի առնելով մամուլի դերի կարևորությունը, միջամտությունը մամուլի

² Մարքսն ընդդեմ Բելգիայի, դատարանի վճիռը հիմնականում պարունակում է իրավական դիրքորոշումներ և պետության հայեցողությանն է թողնում միջոցի ընտրությունը, որը կիրառելի է ազգային-իրավական համակարգում՝ ի կատարումն 53-րդ հոդվածից բխող պարտավորությունների:

³ Հենդիսայրն ընդդեմ Միացյալ Թագավորության, պարբ. 48:

⁴ Բոումանն ընդդեմ Միացյալ Թագավորության, պարբ. 42:

⁵ Բայթորդն ընդդեմ Գերմանիայի:

ազատության իրականացմանը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 10-րդ հոդվածին, բացառությամբ, երբ այն արդարացված է հանրության շահի գերակայության պահանջով⁶: Մամուլի ազատությունը հանրության համար լավագույն միջոցներից է՝ բացահայտելու և կարծիք կազմելու քաղաքական առաջնորդների գաղափարների և մոտեցումների վերաբերյալ⁷:

Առանց կարծիք ունենալու և հայտնելու ազատության, առանց իրազեկված լինելու՝ հանրությունն անկարող է մասնակցել ժողովրդավարական գործընթացներին, դիմել պետական մարմինների և պետական մարմինների որոշումների վրա լծակ ունենալ: «Քաղաքական խոսքը» խոսքի ազատության կարևոր նախապայմանն է, թեև, ինչպես արդեն նշվեց, սա պաշտպանվող խոսքի միակ տեսակը չէ: Իհարկե, այն մեծ պաշտպանություն է ստանում, քանզի ՄԻԵԴ-ը թույլ է տալիս, որ մամուլը և հեռարձակող լրատվամիջոցները բավական լայն շրջանակից քննադատեն թե՛ քաղաքականությունը, թե՛ քաղաքական գործիչներին⁸:

Անդրադառնալով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասին՝ ՄԻԵԴ-ը փորձել է սահմանել, թե ինչ է ազատորեն արտահայտվելը որոշակի պաշտպանության շրջանակներում: Դատարանը շատ վճիռներ ունի, որոնք վերաբերում են այն դեպքերին, երբ արտահայտվելու իրավունքի՝ պետական մարմինների կողմից միջամտություն իրավաչափ է համարվում: Այս իրավունքը սահմանափակման ենթակա իրավունք է, քանի որ այն երբեմն վնաս է հասցնում անձի՝ օրենքով պաշտպանվող շահերին: Այն հարցը, թե կարելի է ժամանակի որոշակի պահի դրությամբ սահմանափակել արտահայտվելու որոշ ձևեր, ենթակա է քննության Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի շրջանակներում: Ինչպես և Կոնվենցիայով նախատեսված բոլոր սահմանափակումների դեպքում, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասին պետք է նեղ մեկնաբանություն տալ, որպեսզի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքներն ավելի լայն պաշտպանության ենթարկվեն:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման առկայությունը որոշելիս ՄԻԵԴ-ը մի շարք հարցեր է բարձրացնում որոշակի հերթականությամբ: Նա պարզում է, թե արդյոք տեղի ունեցել է միջամտություն պետական մարմնի կողմից. եթե միջամտություն տեղի չի ունեցել, ապա չի կարող խոսք լինել 10-րդ հոդվածի խախտման մասին, իսկ եթե տեղի է ունեցել, ապա դատարանը պարզում է, թե արդյոք միջամտությունը օրենքով նախատեսված է, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա նոր ՄԻԵԴ-ը հայտարարում է իրավունքի խախտման փաստի մասին: Եթե միջամտությունը նախատեսված է եղել օրենքով, ապա դատարանը պարզում է, թե այն հետապնդում է

⁶ Ֆրետոզ Ռուարն ընդդեմ Ֆրանսիայի:

⁷ Լինգենսն ընդդեմ Ավստրիայի, պարբ. 42:

⁸ Լինգենսն ընդդեմ Ավստրիայի, պարբ. 42:

արդյոք իրավաչափ նպատակ: Եթե հետապնդել է իրավաչափ նպատակ, ՄԻԵԴ-ը պարզում է, թե արդյոք միջամտությունը անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակարգում: Եթե ոչ, ապա ՄԻԵԴ-ն արձանագրում է, որ տեղի է ունեցել իրավունքի խախտում:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ արտահայտվելու ազատությունը կարող է որոշ հանգամանքների առկայության պայմաններում ենթարկվել ձևական պայմանների՝ սահմանափակումների: Իրավախախտումը առկա լինելու համար դիմողը պետք է ապացուցի, որ միջամտության սկզբնաղբյուրը պետությունն է, կամ միջամտությունը կատարվել է պետական մարմինը: ՄԻԵԴ-ը տարբերում է մամուլի իրավունքի միջամտության երկու տեսակ՝ միջամտություն, այսինքն՝ գրաքննություն նախքան հրապարակումը, կամ նախնական արգելում և հրապարակումից կամ հեռարձակելուց հետո կիրառված միջամտություն: Նախնական արգելումը ՄԻԵԴ-ը համարում է ազատորեն արտահայտվելու իրավունքի շատ լուրջ միջամտություն: Նախնական արգելքը ներառում է հրապարակումը կանխող օրդերները⁹, շուտով հրապարակվելիք նյութի կամ ֆիլմի առգրավումը¹⁰ և ֆիլմերի դասակարգումը: Այն դեպքում, երբ անձանց չի արգելվում տեղեկություններ կամ կարծիքներ հրապարակել, և հրապարակելուց հետո նրանք պատժվում են, ՄԻԵԴ-ն արձանագրում է մարդու ազատ արտահայտվելու իրավունքին միջամտություն: Հրապարակումից կամ հեռարձակումից հետո կիրառվող միջամտության տեսակներից կարելի է նշել քրեական պատիժները¹¹, կարգապահական պատիժները¹² և քաղաքացիական վարույթի շրջանակներում կարգավորվող վնասի հատուցումը¹³, հրապարակվող նյութի¹⁴ կամ արվեստի գործերի առգրավումը¹⁵: Կասեցվող պատիժները նույնպես համարվում են միջամտություն ազատ արտահայտվելու իրավունքին:

Ընդհանրապես կարևոր է կարծիքի արտահայտման ազատությունը կամ մամուլի ազատությունը տեսնել կոնկրետ դեպքում առնչվող՝ ընդհանուր օրենքով պաշտպանված բարիքի հետ համեմատության մեջ: Կարծիքի արտահայտման ազատությունը միշտ ստիպված է լինում նահանջել, երբ խախտված է լինում մարդու արժանապատվությունը. Բենետոնի գովազդի հարցի կապակցությամբ ԳԴՀ դաշնային դատարանը և Դաշնային

⁹ Օրգերվերը և Գարդիանն ընդդեմ Միացյալ Թագավորության:

¹⁰ Օտտո-Պրեմինգեր ինստիտուտն ընդդեմ Ավստրիայի:

¹¹ Սեներն ընդդեմ Թուրքիայի:

¹² Կասադո Միլոսյավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության:

¹³ Տոյսոյ Միլոսյավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության:

¹⁴ Վերենգինգ Վիկթոր Բլաֆն ընդդեմ Նիդեռլանդների:

¹⁵ Մյուլերն ընդդեմ Շվեյցարիայի:

սահմանադրական դատարանը այդ հարցում սկզբունքորեն համակարծիք են¹⁶, բայց ոչ այն հարցում, թե որտեղ է սկսվում մարդու արժանապատվության խախտումը: Գերմանիայի դաշնային դատարանը ասում է, որ Բենետոնը գործիք է դարձրել պատկերված անձանց, մինչդեռ Դաշնային սահմանադրական դատարանը հերքում է դա՝ մատնանշելով Բենետոնի լուրջ շարժառիթները, և այդ պատճառով, ի տարբերություն Գերմանիայի դաշնային դատարանի, կարող է կատարել այդ կշռադատումը, որը կրկին ապացուցում է, որ մարդու արժանապատվությունը լավ էլ կարող է ենթակա լինել կշռադատման, մի բան, որը սովորաբար մերժվում է¹⁷:

Քանի որ ազատ արտահայտվելու իրավունքը ներառում է նաև որոշ պարտականություններ, ապա օրենքով սահմանված դեպքում կարելի է կիրառել միջամտություններ: Այսինքն՝ ազատ արտահայտվելու իրավունքից օգտվող բոլոր անձինք ունեն և՛ իրավունքներ, և՛ պարտականություններ: Այստեղ խոսքը իրավաչափ սահմանափակումների մասին է: Իսկ ոչ իրավաչափ սահմանափակումները իրավախախտումներն են:

Կոնվենցիայի՝ «Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում» վերտառությամբ 15-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ պատերազմի կամ այլ արտակարգ դրության ժամանակ, որը սպառնում է ազգի կյանքին, ամեն մի Բարձր պայմանավորվող կողմ կարող է միջոցներ ձեռնարկել սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորություններից շեղվելով միայն այն չափով, որքանով դա պահանջում է դրության լարվածությունը, պայմանով, որ նման միջոցները անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ: Այսինքն՝ Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ պետություն կարող է շեղվել Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորություններից, բայց միայն այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը:

Հետագայում Հունաստանն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (1969) գործով Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը հստակեցրեց, որ «արտակարգ դրություն» եզրույթը նշանակում է հետևյալ պայմանների առկայություն.

1. վտանգը պետք է լինի իրական և անկանխելի,
2. դրա հետևանքները պետք է վտանգավոր լինեն ամբողջ ազգի համար,

¹⁶ ԳԴՀ ՍԴՈ-107, 275:

¹⁷ Սահմանադրական իրավունք՝ Հիմնական օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի հարդրակցության հիմնական իրավունքները, դոկտոր, պրոֆեսոր Քրիստոֆ Դեգեն-հարթ, Լայպցիգի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պետական և վարչական իրավունքի և ՋԼՄ-ների հարաբերությունների կարգավորող իրավունքի պրոֆեսոր, Սաքսոնիայի սահմանադրական դատարանի դատավոր:

3. պետք է վտանգված լինի հասարակության բնականոն կյանքը,

4. ճգնաժամը կամ վտանգը պետք է կրեն բացառիկ բնույթ:

Նույնիսկ այս հոդվածի առկայության պարագայում 2008 թ. ԵՄ մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգը, անդրադառնալով մամուլի ազատության սահմանափակման խնդրին, նշեց. «Ես մտահոգված եմ Հայաստանում մարդու իրավունքների վիճակով և արտակարգ դրության հայտարարման հետևանքներով [...] Հրատապ է վերականգնել այն իրավիճակը, երբ **լրատվամիջոցների**, քաղաքական կուսակցությունների և ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությունը չի խոչընդոտվում»: Նույն խնդրին անդրադարձավ նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի նախագահ Յան Կուբիշն իր հայտարարությամբ, որում հույս է հայտնել, որ արտակարգ դրությունը շուտով կհանվի, ինչպես նաև կչեզոքացվեն բոլոր սահմանափակումներն ու միջոցառումները, որոնք հետևեցին արտակարգ դրության հայտարարմանը: Դրանից հետո Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) զեկուցող Ջոն Պրեսկոտը նշեց. «Ես կոչ եմ անում իշխանություններին հանել արտակարգ իրավիճակի մնացած դրոյթները, մասնավորապես նրանք, որոնք սահմանափակում են **լրատվամիջոցների ազատությունը**»:

Վերոնշյալ անձինք հատկապես լուրջ քննադատության արժանացրին **մամուլի ազատության իրավունքի** սահմանափակումը, որը նրանք անընդունելի համարեցին:

«Ցավալի է, որ 2008 թ. ընթացքում, ինչպես նախորդ տարիներին, արձանագրվել են լրագրողների նկատմամբ բռնության դեպքեր նրանց մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու նպատակով, ինչը սպառնում է Հայաստանում խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքների լիարժեք ապահովմանը: Այս առումով արժե հիշատակել «Չորրորդ իշխանություն» օրաթերթի լրագրող Գոհար Վեգիրյանի նկատմամբ կիրառված բռնությունը << ոստիկանության փոխգնդապետ Արայիկ Պետրոսյանի կողմից, որը հարվածելով վայր է գցել լրագրողին, մեկ ուրիշ ոստիկան էլ արցունքաբեր գազ է փչել նրա աչքերին: Ընդ որում, այս դեպքը նկարահանվել էր, և բոլորս էլ հեռուստատեսությամբ ականատես եղանք դրան: Նման դեպքերը դատապարտելի են ոչ միայն << ոստիկանության աշխատակիցների՝ ոչ իրավաչափ գործողություններ կատարելու տեսակետից, այլև նրանով, որ ինչպես այս, այնպես էլ նման շատ դեպքերում որևէ մեկը պատասխանատվության մինչև օրս չի ենթարկվել»¹⁸:

Իրավական բարեփոխումների շնորհիվ մեր պետությունում ձևավորվել է մարդու իրավունքների և ազատությունների օրենսդրական և դա-

¹⁸ Սահմանադրական իրավունք՝ Հիմնական օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս, 13:

տական պաշտպանության նոր համակարգ: Հաշվի առնելով այդ ոլորտում միջազգային և եվրոպական փորձը՝ ազգային օրենսդրություն ներմուծվեցին մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավունքի նոր հանրաճանաչ նորմեր ու սկզբունքներ, և այդ նորմերը իմպլեմենտացիայի ենթարկվեցին ազգային օրենսդրության մեջ՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները:

Տեղեկատվության իրավունքը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 2015 թ. խմբագրությամբ 51-րդ հոդվածում, որի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:

2. Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով:

Մինչև սահմանադրական փոփոխությունները այս իրավունքը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 2005 թ. խմբագրությամբ 27-րդ հոդվածում, որը արտահայտման ազատության ամրագրման հարցում օգտագործել էր երկու եզրույթ՝ կարծիքն ազատ արտահայտելու իրավունք և խոսքի ազատության իրավունք: Գործող Սահմանադրության **42-րդ՝ «Կարծիքի արտահայտման ազատությունը» վերտառությամբ հոդվածը սահմանում է.**

1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

2. Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի

համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սույն հոդվածը կարծիքն ազատ արտահայտելու եզրույթի բովանդակության մեջ ներառում է իր կարծիքն ազատ արտահայտելու յուրաքանչյուրի իրավունքը, այդ թվում՝ սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Այսինքն՝ տարբերությունը միայն եզրութաբանական է, և իրավունքի բովանդակության ծավալը դրանից չի փոխվել: Միայն ավելի հստակեցվել է: Տեղեկատվության իրավունքին անդրադարձել է ՀՀ սահմանադրական դատարանը իր մի շարք որոշումներով, մասնավորապես որոշումներից մեկով ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. «...Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը»¹⁹:

Սահմանադրության մեջ իրավունքների սահմանափակումը թույլատրվում է միայն այն ժամանակ, երբ այն կամայական չէ, այլ ուղղված է դրանում նշված նպատակներին հասնելուն: Տարբեր հեղինակների ուսումնասիրությունների արդյունքով նշված նպատակներից կարելի է նշել երկուսը՝ այլ անձանց իրավունքների, ազատությունների և շահերի պաշտպանությունը և հանրային շահը: Եվ այս նպատակները կողմնորոշի դեր են կատարում օրենսդրի համար՝ կախված սահմանափակումների գնահատման հետ, քանի որ արդարացնում են եթե ոչ բոլոր, ապա որոշ իրավունքների սահմանափակումները:

Մարդու տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակման խնդիրներին է անդրադարձել ՀՀ սահմանադրական դատարանը:

Անդրադառնալով լրատվամիջոցների հավատարմագրման խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշեց. «...հավատարմագրումը հանդիսանում է միջոցառման բազմակողմանի լուսաբանման միջոց և չպետք է կախված լինի ոչ վերաբերելի հանգամանքներից: Հավատարմագրման հարցերը կարգավորող, թույլատրող բնույթ ունեցող օրենքները պետք է վերանայվեն բազմակարծություն ապահովելու նպատակով» (ԵԱՀԿ,

¹⁹ ՍԴՈ1010, 06.03.2012 թ.:

«Լրատվամիջոցների ազատության հարցերով ներկայացուցչի զեկույց», «Լրագրողների հավատարմագրումը ԵԱՀԿ տարածաշրջանում», «Դիտարկումներ և հանձնարարականներ», 25 հոկտեմբերի 2006 թ.), «...հավատարմագրման համար դիմում ներկայացրած լրատվամիջոցի անձնակազմի թվաքանակի առումով չպետք է լինեն սահմանափակումներ: Լրատվական գործակալությունները պարտավոր չեն սահմանափակել հավատարմագրվող լրագրողների քանակը, թեև ողջամիտ կլինի, եթե միջոցառման կազմակերպիչները սահմանափակեն կոնկրետ միջոցառումը լուսաբանելու համար մեկ լրատվամիջոցի ներկայացուցիչների քանակը, եթե դա անհրաժեշտ է բազմաքանակ լրատվամիջոցների մուտքը ապահովելու համար» (ACE project, The Electoral Knowledge Network, The ACE encyclopaedia: Media and Elections, 2012): Վերոշարադրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը կարևորում է նաև Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի կատարման երաշխավորումը, համաձայն որի՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»²⁰:

Մեկ այլ որոշմամբ²¹ արտահայտեց հետևյալ իրավական դիրքորոշումը. «...Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը»:

Նույնիսկ անդրադառնալով 2014 թ. դեկտեմբերի 10-12-ին և 2015 թ. հունվարի 26-ին անցկացված որակավորման ստուգման քննության բանավոր փուլի յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ ՀՀ արդարադատության խորհրդի անդամների եզրակացությունը և հատուկ կարծիքները, հարցազրույցի փուլի մասնակիցների հարցաշարերը, հոգեբանական թեստերն ու դրանց արդյունքները, հարցազրույցի գնահատականները «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանը տրամադրելու խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանը իր մեկ այլ որոշմամբ²² ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասին, մասնավորապես տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ա-

²⁰ 26 դեկտեմբերի 2017 թվականի, ՍԴՈ-1396:

²¹ 2012 թվականի մարտի 6-ի, ՍԴՈ-1010:

²² 20 հունիսի 2017 թվականի, ՍԴՈ-1374:

զատությունն ամրագրող դրույթին հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասը՝ այն մասով, որով դատավորների թեկնածությունների ցուցակ ընդգրկված հավակնորդների հոգեբանական թեստի արդյունքները, որոնք վերաբերում են նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման որակներին, ենթակա չեն հրապարակման, և այդ ցուցակը Հանրապետության Նախագահի հաստատելուց հետո ենթակա է ոչնչացման:

Եզրակացություններ

Սույն հոդվածում վերլուծության են ենթարկվել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրերի, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի մարդու տեղեկատվության իրավունքի սահմանափակման հարաբերությունները կարգավորող համապատասխան հոդվածները:

Հիշյալ հարցադրումների հետազոտության գիտագործնական արժեքը պայմանավորված է նաև դրանց առնչությամբ ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան իրավագետների՝ դեռևս միասնական դիրքորոշումների բացակայությամբ, որն անխուսափելի բարդություններ է հարուցում ինչպես օրինաստեղծ, այնպես էլ իրավակիրառ ոլորտում:

Հետազոտության նպատակը մարդու տեղեկացված լինելու իրավունքի և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի միջև հավասարակշռությունն ապահովող առավել կատարելագործված և գործուն կառուցակարգի մշակումն է:

Գրականություն

Սահմանադրական իրավունք՝ Հիմնական օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի հաղորդակցության հիմնական իրավունքները, Դոկտոր-պրոֆեսոր Քրիստոֆ Դեգենհարթ, Լայպցիգի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի Պետական և վարչական իրավունքի և ՋԼՄ-ների հարաբերությունների կարգավորող իրավունքի պրոֆեսոր, Սաքսոնիայի սահմանադրական դատարանի դատավոր

Лопатин В.Н. 2005, Защита информации или защита права на информацию? //Информационное право, Москва, с. 47; Право на информацию// Информационное право /Под ред. Б.Н. Топорнина, СПб., 2001, изд. «Юридический центр Пресс», 2001, с. 432.

ՄԻԵԴ վճիռ՝ Մարքսն ընդդեմ Բելգիայի

ՄԻԵԴ վճիռ՝ Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության, պարբ. 48
 ՄԻԵԴ վճիռ՝ Բուումանն ընդդեմ Միացյալ Թագավորության, պարբ. 42
 ՄԻԵԴ վճիռ՝ Բայթորդն ընդդեմ Գերմանիայի
 ՄԻԵԴ վճիռ՝ Ֆրեսոզ Ռուարն ընդդեմ Ֆրանսիայի
 ՄԻԵԴ վճիռ՝ Լինգենսն ընդդեմ Ավստրիայի, պարբ. 42
 ՄԻԵԴ վճիռ՝ Օբգերվերը և Գարդիանն ընդդեմ Միացյալ Թագավորության
 ՄԻԵԴ վճիռ՝ Օստոո-Պրենինգեր ինստիտուտն ընդդեմ Ավստրիայի
 ՄԻԵԴ վճիռ՝ Սեներն ընդդեմ Թուրքիայի
 ՄԻԵԴ վճիռ՝ Կասադո Միլոսյավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության
 ՄԻԵԴ վճիռ՝ Տոյստոյ Միլոսյավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության
 ՄԻԵԴ վճիռ՝ Վերենզինգ Վիկբլադ Բլաֆն ընդդեմ Նիդեռլանդների
 Մյուլերն ընդդեմ Շվեյցարիայի
 ՄԻԵԴ վճիռ՝ ԳԴՀ ՍԴՈ-107, 275
 ՍԴՈ1010, 06.03.2012 թ.
 26 դեկտեմբերի 2017 թվականի, ՍԴՈ-1396
 6 մարտի 2012 թվականի, ՍԴՈ-1010
 20 հունիսի 2017 թվականի, ՍԴՈ-1374:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Վարդանուշ Պողոսյան

Իրավունքի առաջնային խնդիրներից է պետական իշխանության մարմինների կողմից մարդու խոսքի, կարծիքի ազատ արտահայտման, մամուլի ազատության և այլն իրավունքների ապահովման և սահմանափակման իրավական կարգավորման արդյունավետ հայեցակարգի մշակումը: Այդ առումով օբյեկտիվ անհրաժեշտություն է մարդու այդ իրավունքների սահմանափակման թույլատրելիության սահմանադրական չափորոշիչների հստակեցման հարցը: Անհրաժեշտ է նաև ուսումնասիրել իրավակիրառ պրակտիկան և վեր հանել մարդկանց տեղեկատվության իրավունքի սահմանափակմանն առնչվող հիմնախնդիրները: Օրենքով սահմանված սահմանափակումները անհրաժեշտություն են, այլապես տեղեկատվության ազատության իրավունքը կարող է ներխուժել մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության ոլորտ:

Բանալի բառեր՝ տեղեկատվության իրավունք, անձնական անձեռնմխելիության իրավունք, իրավական սահմանափակումներ, ՄԻԵԴ,

իրավական սահմանափակման հիմքեր, ՀՀ սահմանադրական դատարան, հավասարակշռություն:

ГРАНИЦЫ ИНФОРМАЦИОННОГО ПРАВА И ОСНОВАНИЯ ДЛЯ ЕГО ОГРАНИЧЕНИЯ

Вардануш Погосян

Одним из приоритетных вопросов права является разработка эффективной концепции правового регулирования свободы слова, свободы печати и других прав и ограничений со стороны государственных органов. В связи с этим возникает объективная необходимость в уточнении конституционных стандартов допустимости этих ограничений прав человека. В свете сказанного следует изучить юридическую практику и поднять вопросы, связанные с ограничением права людей на информацию. Ограничения, с точки зрения закона, являются необходимостью, в противном случае право на свободу информации может нарушить неприкосновенность частной жизни человека.

Ключевые слова – право на информацию, право на личную неприкосновенность, правовые ограничения, ЕСПЧ, Конституционный Суд РА, основы ограничения права, баланс.

BOUNDARIES OF INFORMATION LAW AND GROUNDS FOR RESTRICTION

Vardanush Poghosyan

One of the priority issues of law is the development of an effective concept of legal regulation of freedom of speech, freedom of the press and other rights and restrictions on the part of state bodies. In this regard, there is an objective need to clarify the constitutional standards of admissibility of these restrictions of human rights. In the above said, one should study legal practice and raise issues related to restricting the right of people to information. Restrictions, from the point of view of the law, are necessary, otherwise the right to freedom of information may violate the inviolability of a person's private life.

Key words – right to information, right to personal inviolability, ECHR, Constitutional Court of the RA, basics of restrictions, balance, legal restrictions.

ՄՏԱՅԻՆ ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՐԴԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Անի Հարությունյան

ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի փիլիսոփայության
պատմության, տեսության ու տրամաբանության ամբիոն, հայցորդ
ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ hharutyunyanani@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 15.10.2019, գրախոսվել է 05.02.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

Մտային պատճառականությունը կամ գիտակցություն-մարմին փոխազդեցության խնդիրը՝ վերլուծական փիլիսոփայության կարևորագույն հիմնահարցերից մեկը, հետազոտությունների կենտրոնում է հայտնվել Նոր Ժամանակում՝ մասնավորապես տեղ գտնելով Ռ. Դեկարտի փիլիսոփայության մեջ: Ի սկզբանե, մտային պատճառականությունը Ռ. Դեկարտը կապում էր այն դրույթի փիլիսոփայական մեկնության հետ, թե ինչպես աննյութական գիտակցությունը (նա երբեմն օգտագործում էր «հոգի» հասկացությունը) կարող է փոխներգործել մարմնի հետ:

Մտային պատճառականության էությունն այն է, թե առհասարակ գիտակցությունն ազդո՞ւմ է ֆիզիկական ծագում ու բնույթ ունեցող գործընթացների, այն է՝ մարդու վարքագծի վրա, եթե այո, ապա ինչպե՞ս: Գիտակցությունը և մտային իրավիճակները կարո՞ղ են լինել վարքագծի կամ ֆիզիկական ծագում ու բնույթ ունեցող գործընթացների պատճառ:

Մտային պատճառականության խնդիրը գրեթե երկուսուկես դար չի եղել փիլիսոփայական հետազոտության առարկա, սակայն XX դ. 50-ական թթ. սկսած՝ այն նոր տեսանկյունից հետաքրքրեց փիլիսոփաներին:

Կենսաբանական նատուրալիզմը՝ որպես խնդրի լուծման առաջին մոդել

Արժանահավատ է սույն թեմայի ուսումնասիրության լուսաբանումը կենսաբանական նատուրալիզմի դիրքերից, որին հարում է Ջոն Սերլը¹: Փիլիսոփայական որևէ հասկացույթի էությունը վեր հանելը ենթադրում է դրա գոյաբանական, իմացաբանական ու պատճառական չափումների վերլուծություն: Գիտակցություն-մարմին փոխազդեցության խնդրի վերաբերյալ Ջ. Սերլի դիրքորոշումը հիմնվում է այն համոզման վրա, որ վերլու-

¹ Серл 2002, 256.

ծական փիլիսոփայության մեջ գիտակցության ուսումնասիրության պարագայում երբևէ չի եղել հստակ տարաբաժանում գոյաբանական («ի՞նչ է սա»), իմացաբանական («որտեղի՞ց մենք գիտենք սրա մասին» ու պատճառական («ի՞նչպե՞ս է այն գործարկում») կատեգորիաների միջև²: Քննադատելով գիտակցության ընկալման մատերիալիստական ըմբռնումը³, մտածողը ներկայացնում է խնդրի պարզաբանման միակ ըստ նրա, ընդունելի լուծումը, այն է՝ կենսաբանական նատուրալիզմը: «Գիտակցություն. հակիրճ ներածություն» աշխատության մեջ մտային պատճառականության այս մոդելը վերլուծելիս Ջ. Սերլը պնդում է, որ բոլոր տեսակի մտային գործընթացների լինելությունը պետք է պայմանավորել ուղեղում ընթացող նյարդաֆիզիոլոգիական գործընթացներով⁴: Վերջիններս համարելով ուղեղի հատկություններ՝ փիլիսոփան արձանագրում է, որ ուղեղում տեղի ունեցող նյարդային գործընթացները պատճառականորեն առաջացնում են գիտակցություն, հետևապես այն գործողությունների հիմքում, որոնք հանգեցնում են վարքագծի դրսևորմանը, օրինակ, որոշումներ ընդունելուն, ծագումնաբանորեն ընկած է նյարդաբանական որևէ պատճառ: Այս ամենով հանդերձ, Ջ. Սերլը չի բացատրում, թե արդյո՞ք սա նշանակում է, որ խոսքն ուղեղում ընթացող ֆիզիկական ու մտային իրավիճակների նույնականացման մասին է: Ջ. Սերլը չի ներկայացնում նաև այն իրողությունը, թե ինչ տեղի կունենա այն դեպքում, եթե մտային իրավիճակները չհամընկնեն ուղեղում ընթացող նյարդաֆիզիոլոգիական գործընթացների հետ: Այսինքն՝ դրանց մի մասը նույնական է ուղեղի որոշ իրավիճակների հետ, իսկ մի մասը՝ ոչ:

Մտային պատճառականության խնդրի՝ Ջ. Սերլի ուրվագծած մոդելը, այդուամենայնիվ, գիտափիլիսոփայական հարթակում համարվում է վիճահարույց: Միտքն այն մասին, որ գիտակցությունը ծագում է ուղեղի կենսաքիմիական հատկությունների շնորհիվ, չնայած իր ամբողջ հմայքին, ապացուցման ենթակա չէ ու, հետևապես, ոչ անտրամաբանական: Այս առնչությամբ, Բ. Կապլանը, մասնավորապես, կարծում է, որ «գիտակցություն» և «ուղեղ» եզրույթները պետք է քննության առնել ու ընկալել մեկը մյուսից անկախ. գիտակցությունը մտային երևույթ է, իսկ ուղեղը՝ ֆիզիկական⁵: Եթե անհնար է գիտակցությունն առանց ուղեղի, սա դեռ չի նշանակում, որ դրանք նույնական են⁶:

² Searle 1991, 45.

³ Searle 1992, 10.

⁴ Searle 2004, 17.

⁵ Caplan 1992.

⁶ Վերլուծական փիլիսոփայության մեջ նույնականության տեսության հիմնադիրն է համարվում Հ. Ֆեյգլին (հմմտ. Feigl 1958, 370-497):

Ի հավելումն, Ջ. Սերլն ընթերցողին չի տալիս մեկ պատասխան այն հարցին, թե ինչ է գիտակցությունը. մի դեպքում պնդում է, որ «գիտակցությունն ուղեղում ընթացող գործընթաց է»⁷, մինչույն ժամանակ շեշտում է նաև, որ «գիտակցությունը դիտարկվող օբյեկտի՝ ուղեղի բաղկացուցիչ կողմերից մեկն է, որը պարունակում է գոյաբանական սուբյեկտիվ փորձ»⁸: Մտային իրավիճակները բնութագրելով որպես ուղեղի հատկություններ՝ փիլիսոփան չի հստակեցրել նաև այն հանգամանքը, թե ինչն են դարձնում «իմ» մտային իրավիճակները հենց «իմը», այսինքն՝ ինչպես դրանք կարող են ընկալվել որպես կոնկրետ սուբյեկտի՝ մարդու այս կամ այն մտային իրավիճակներ: Իրականում հնարավոր չէ նաև ստուգել իր կողմից առաջ քաշված մոդելի գլխավոր դրույթի ճշմարտացիությունն առ այն, որ «մտային ինչ-որ իրավիճակ նույնական է նեյրոնային կոնկրետ գործընթացի հետ»⁹:

«Դժվար գիտակցությունը»՝ որպես խնդրի լուծման երկրորդ մոդել

Չանտեսելով մտային պատճառականության խնդրի այլ մեկնաբանություններ (Դ. Դևիդսոնի անոմալ մոնիզմը¹⁰, Վ. Վասիլևի լոկալ ինտերակցիոնիզմը¹¹), հեղինակը տեղին է համարում թեմայի մտակառուցումը շարունակել նախորդ դարի վերջին ձևավորված հաստատական պանպիխիզմի դիրքերից: Մտային պատճառականության այս մոդելի մտակառուցող Դևիդ Չալմերսը, առաջ քաշելով «դժվար գիտակցության» խնդիրը կամ «ինչու՞ է մարդու ուղեղի գործարկումն ընթանում սուբյեկտիվ փորձի վրա»¹², քննարկումը սկսում է այնպիսի հարցերից, ինչպիսիք են, օրինակ, «ինչու՞ գոյություն ունեն մտային վիճակներ կամ, որ նույնն է, կվալիաներ»¹³, «ինչպե՞ս են զգայությունները ձեռք բերում այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են, գույնն ու համը»¹⁴, նա ներկայացնում է հաստատական պանպիխիզմի գլխավոր դրույթն այն մասին, որ «կան որոշակի ներքին պրոտոֆենոմենալ կամ առաջնային ֆենոմենալ հատկություններ, որոնք պատճառավորում են գիտակցական փորձի կառուցարկումը և պատասխանատու են ֆիզիկական բնույթ ունեցող գործառույթների կատարման

⁷ Searle 2004, 88.

⁸ Searle 2004, 89.

⁹ Васильев 2009, 79.

¹⁰ Davidson 1993, 207-214.

¹¹ Васильев 2014, 240.

¹² Chalmers 1996, 12.

¹³ Առաջին անգամ այս եզրույթն օգտագործել է գիտակցության փիլիսոփայության ամերիկյան ներկայացուցիչ Կ. Լյուիսը 1929 թ. «Գիտակցություն և աշխարհի կարգը» գրքում:

¹⁴ Chalmers 1996, 54.

համար»¹⁵: Ըստ այդմ՝ մտային իրադարձությունների ու ֆիզիկական գործողությունների միջակայքում Դ. Չալմերսը գործարկում է մի ֆենոմեն, որի իմացաբանական բովանդակությունը, ինչպես նշում է փիլիսոփան, «մեզ համար դեռ անհայտ է»¹⁶:

Մեթոդաբանական էպիֆենոմենալիզմը՝ որպես խնդրի լուծման երրորդ մոդել

Քննարկվող խնդրի պարզաբանման տրամաբանությանը հավատարիմ մնալով՝ դրա զարգացման շարունակությունը տեղին է ապահովել մեթոդաբանական էպիֆենոմենալիզմի հիմնադիր կորեացի փիլիսոփա Ջեզվոն Կիմի հայացքների շրջանակում: Նա նույնպես խոսում է կվալիաների կամ մտային/հոգեկան իրավիճակների մասին, սակայն Ջ. Սերլին ու Դ. Չալմերսին հակընդդեմ տեսակետ ունի: Հղում անելով Թ. Հաքսլիի՝ դեռեւս XIX դ. վերջին ի հայտ եկած դիրքորոշմանը¹⁷, թե՛ մտայինը չունի պատճառական հիմք, այն պետք է համարել ընդամենը ոչ նշանակալի «հավելում» ֆիզիկական բնույթ ունեցող գործընթացների համար: Նա արձանագրում է գիտակցություն-մարմին փոխհարաբերության միակողմանի պատճառականությունը՝ մարմինն ազդում է գիտակցության վրա, սակայն վերջինս (այս դեպքում, նույնն է, թե՛ մտային իրավիճակները) որևէ կերպ մարմնի ու մարմնական շարժումների վրա ազդել չի կարող: Ջ. Կիմը, կվալիաները մեկնաբանելով որպես սուբյեկտիվ ապրում, որը բնութագրական է յուրաքանչյուր մարդու, և որի փորձն էլ նա կրում է անհատապես, եզրակացնում է հետևյալը՝ սուբյեկտն առայժմ ունակություն չունի հիմնավորելու կվալիայի պատճառական գոյությունը: «Մեզ համար մինչև հիմա պարզ չէ՝ առհասարակ հնարավոր է պատասխանել այն հարցին, թե ինչպես է առաջանում կվալիան՝ իր քանակական ու որակական բազմազանությամբ»¹⁸: Իսկ քանի դեռ այս հարցը չի ստացել սպառիչ պատասխան, փիլիսոփան եզրակացնում է, որ մտային պատճառականության խնդիրը շարունակելու է մնալ վերլուծական փիլիսոփայության ուշադրության կենտրոնում:

Էլիմինատիվ մատերիալիզմը՝ որպես խնդրի լուծման չորրորդ մոդել

Խնդրի լուսաբանումը, հավանաբար, կարժեքավորվի նաև նյարդափիլիսոփայության ոլորտում մեծ ավանդ ունեցող ամերիկացի փիլիսոփա

¹⁵ Այս մտքի առավել խորը վերլուծությունը կարելի է գտնել Դ. Չալմերսի մեկ այլ հոդվածում (Chalmers 2013, 16):

¹⁶ Chalmers 2010, 23.

¹⁷ Huxley 2012, 199-250.

¹⁸ Kim 2007, 227-242.

Պատրիսիա Չերչլենդի՝ «էլիմինատիվ մատերիալիզմ»¹⁹ հայեցակարգի գլխավոր դրույթների վերլուծության իմաստով: Պ. Չերչլենդը ձեռնարկում է նախորդիվ ներկայացված տեսակետների համադրման յուրահատուկ փորձ՝ հանդես գալով որպես առաջին փիլիսոփան, որը խնդրի քննարկման համար ելնում է նյարդագիտության փիլիսոփայության կամ նյարդափիլիսոփայության կիզակետից²⁰: Ըստ այս տեսության՝ գիտակցության և դրա կողմից կայացվող որոշումների նկատմամբ մեր ավանդական դասական պատկերացումները ճշմարիտ չեն, և մտային իրավիճակների որոշակի տեսակներ, օրինակ, «ցանկանալը», «համոզված լինելը» չունեն նյարդակենսաբանական հիմք, հետևաբար, նախ պետք է հետազոտել այն, թե ինչ է տեղի ունենում մարդու գիտակցության մեջ, երբ նա ֆիզիկական գործընթացներ է իրականացնում նմանատիպ մտային գործընթացների առկայության թվացյալության պարագայում²¹: Իբրև վերջաբան՝ Պ. Չերչլենդը բացառում է որոշում կայացնելու, մարդու ապրումների ու առհասարակ վարքի մետաֆիզիկական հիմնավորումների ու նախադրյալների մասին փիլիսոփայական քննության իրատեսականությունը:

Եզրակացություններ

Այսպիսով, գիտակցություն-մարմին փոխազդեցության մտակառուցման համար քննարկված մոդելներից յուրաքանչյուրը իմացական տեսանկյունից որոշակի բացթողում ունի: Կարծում ենք՝ այս դժվարությունը պայմանավորված է նրանով, որ մինչև այժմ չկա հստակություն այն հարցերում, թե որտե՞ղ է «տեղակայված» գիտակցությունը, ինչի՞ համար է այն պատասխանատու, և արդյո՞ք մտային իրավիճակները անվիճելիորեն բխեցվում են դրանից, թե՞ ոչ, և առհասարակ, ո՞րն է ուղեղի դերը գիտակցություն-մարմին փոխազդեցության տիրույթում:

Գրականություն

Васильев В. 2009, Трудная проблема сознания, Москва, «Прогресс-Традиция», 272 с.

Васильев В. 2014, Сознание и вещи. Очерк феноменалистической онтологии, Москва, «Либроком», 240 с.

Серл Дж. 2002, Открывая сознание заново, Москва, «Идея-Пресс», 256 с.

¹⁹ Lycan, Pappas 1972, 149-159.

²⁰ Churchland 2002, 11.

²¹ Churchland 2013, 54-62.

- Caplan B. 1992, Solving the Mind-Body Problem: Dualism vs. Searle, <http://econfa.culty.gmu.edu/bcaplan/Searle> (17.12.2017).
- Chalmers D. 2013, Panpsychism and Panprotopsychism. The Amherst Lecture in Philosophy, lecture 8, p. 1-35.
- Chalmers D. 1996, The Conscious Mind: In Search of a Fundamental Theory, Oxford, Oxford University Press, 432 p.
- Churchland P. 2002, Brain-wise: studies in neurophilosophy, Cambridge, MA, The MIT Press, 486 p.
- Chalmers D. 2010, The Character of Consciousness (Philosophy of Mind), New York, Oxford University Press, 596 p.
- Churchland, P. 2013, Touching A Nerve: The Self As Brain, New York, W.W. Norton & Company, 304 p.
- Davidson D. 1993, "Thinking Causes", Mental Causation, Heil J., Mele A. (eds.) Oxford, Clarendon Press, p. 207-214.
- Feigl H. 1958, The "Mental" and the "Physical". Concepts, Theories, and the Mind-Body Problem, vol. 2, Feigl H., Scriven M., Grover M. (eds.), Minnesota, University of Minnesota Press, p. 370-497.
- Huxley T. 2012, "On the Hypothesis that Animals Are Automata, and its History", Method and Results, Essays, New York, HardPress Publishing, p. 199-250.
- Kim J. 2007, Causation and mental causation, Contemporary debates in philosophy of mind, McLaughlin. B.P., Cohen J.D. (eds.), Oxford, Wiley-Blackwell, p. 227-242.
- Lycan W.G., Pappas G. 1972, "What is eliminative materialism?" Australasian Journal of Philosophy, vol. 50, N 2, p.149-159.
- Searle J. 1991, Consciousness, Unconsciousness and Intentionality. Philosophical Issues, vol. 1, Atascadero, Ridgeview Publishing Company, p. 45-66.
- Searle J. 1992, The Rediscovery of the Mind, Cambridge, MA, The MIT Press, 320 p.
- Searle J. 2004, Mind, a brief introduction, Oxford, Oxford University Press, 336 p.

ՄՏԱՅԻՆ ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՐԴԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

Անի Հարությունյան

Գիտակցության ու մարմնի պատճառական փոխազդեցության խնդիրը վերլուծական փիլիսոփայության մեջ հանդես է գալիս «մտային պատճառականություն» եզրույթով: Արհեստական բանականության գոյության, դրա հնարավորությունների քննարկման համատեքստում այսօր այս խնդրի լուսաբանումը ձեռք է բերում զգալի կարևորություն:

Այս կապակցությամբ մինչև այժմ մասնագիտական գրականության մեջ քննարկվել են գիտակցություն-մարմին փոխազդեցության պատճառականության չորս հնարավոր տարբերակներ կամ մոդելներ: Դրանցից առաջինը ներկայացնում է գիտակցության, այն է՝ մտքի ազդեցությունը մեր գործողությունների վրա: Հաջորդ մոտեցման մեջ շեշտադրվում է ուսումնասիրվող օբյեկտների պատճառական գոյության երկկողմանիությունը՝ ցույց տալով նախորդ մոտեցման թերությունները: Ի տարբերություն այս երկու մոդելների՝ մեթոդաբանական էպիֆենոմենալիզմում առկա է հարցի ավելի խորքային անդրադարձը: Դրանում առաջ է քաշվել մտային գործընթացի գոյաբանական լինելության՝ իմացաբանական պատճառին առնչվող հանգամանքը:

Նկատենք, որ այս երեք մոդելների շրջանակներում խնդիրը չի ստանում սպառիչ լուծում, քանի որ դրանցից ոչ մեկը հետազոտության մեջ չի ներառել ժամանակակից նյարդափիլիսոփայության նվաճումները: Չորրորդ մոդելը լրացնում է այդ բացը, սակայն կրկին համապարփակ ձևով չի ներկայացնում, թե ինչպես է հիմնավորվում գիտակցության օբյեկտիվությունը:

Բանալի բառեր՝ գիտակցություն, մարմին, կվալիա, պանսփիխիզմ, կենսաբանական նատուրալիզմ, ուղեղ, նյարդափիլիսոփայություն:

ПРОБЛЕМА МЕНТАЛЬНОЙ КАЗУАЛЬНОСТИ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ ПОДХОДОВ

Ани Арутюнян

Проблему причинного взаимодействия сознания и тела в аналитической философии принято называть «ментальной казуальностью». В контексте существования искусственного интеллекта и обсуждения его возможностей освещение данной проблемы сегодня можно считать весьма насущным вопросом.

Относительно разъяснения проблемы причинности взаимодействия сознания и тела в профессиональной литературе существуют четыре возможных варианта или модели. Первый из них относится к влиянию нашего сознания на осуществляемые нами действия. В контексте следующего подхода особенно подчеркивается причинное существование изучаемых объектов, однако при этом предварительно фиксируются недостатки предыдущей модели. В отличие от этих двух, в третьем варианте, а именно в методологическом эпифеноменализме, можно найти более глубокое отражение проблемы. Данная модель освещает вопрос о когнитивной причине онтологического существования психического процесса.

Заметим, что в рамках этих трех моделей проблема не получает своего исчерпывающего решения, поскольку ни одно из исследований не

включало достижений современной нейрофилософии. Четвертая модель, претендовавшая на окончательное обоснование, восполняет этот пробел, но опять же терпит неудачу, поскольку не дает полного ответа и не доказывает объективность сознания.

Ключевые слова – сознание, тело, квалиа, панпсихизм, биологический натурализм, мозг, нейрофилософия.

THE PROBLEM OF MENTAL CAUSATION IN THE CONTEXT OF MODERN APPROACHES

Ani Harutyunyan

The problem of the causal interaction of consciousness and the body in analytical philosophy is commonly called the “mental causality.” In the context of the existence of artificial intelligence and the discussion of its capabilities, coverage of this problem today can be targeted as urgent.

Regarding the explanation of the problem of causality of the interaction of consciousness and the body, the professional literature represents four possible options or models. The first of them relates to the influence of our consciousness on the actions we carry out. In the context of the following approach, the causal existence of the studied objects is especially emphasized, however, preliminary fixing the disadvantages of the previous model. In contrast to the two, in the third version, namely in methodological epiphenomenalism, a deeper reflection of the problem can be found. This model raises the issue of the cognitive cause of the ontological existence of the mental process.

Note that in the framework of these three models, the problem does not receive its comprehensive solution, since none of the studies included the achievements of modern neurophilosophy. The fourth model, purporting the final justification, fills this gap, but again does fail without being able to give a complete answer and without proving the objectivity of consciousness.

Key words – consciousness, body, qualia, panpsychism, biological naturalism, brain, neurophilosophy.

«ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ԿԻՐԱՌՄԱՆ ՉԻՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Լիաննա Անանյան

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, հայցորդ
ՀՀ, Երևան, Արամի 44
Էլ. հասցե՝ ananyan.lianna@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 21.09.2018, գրախոսվել է 10.06.2019, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

Պետությունների ուժերի հավասարակշռության պայմաններում օրե-օր ավելի շատ է կարևորվում «փափուկ ուժ» հասկացությունը: Դրա հետ մեկտեղ աճում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դերն ու նշանակությունը նոր աշխարհակարգում:

Միջազգային հարաբերություններում առկա են տարբեր մեթոդներ և միջոցներ, հատկապես Ջոզեֆ Նայի առաջադրած «փափուկ», «կոշտ» և «խելացի» ուժերի միջև առկա տարբերությունները, որոնք չինական ժամանակակից դիվանագիտության ձևավորման գործում հիմնաքարային են եղել: Գոյություն ունեն դիվանագիտական բազմաթիվ մեթոդներ և գործիքներ, որոնց միջոցով Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը կարողացել է զբաղեցնել իր ուրույն տեղը միջազգային հարաբերությունների «ուժային» համակարգում:

«Ուժը»՝ որպես միջազգային հարաբերությունների հիմնական հասկացություն

«Ուժը» կամ «հզորությունը» միջազգային հարաբերությունների հիմնական հասկացությունն է, սակայն քննարկման առարկա է նաև նույն միջազգային հարաբերությունների շրջանակում: Արևմտյան տեսաբաններն առանձնացնում են «ուժ» հասկացության բնույթի և գնահատման երկու հիմնական ուղղություն՝ 1) «ռեսուրսային-հատկանշական» (հատկանշային), 2) «համատեքստային-հատկանշական» (վարքագծային, հարաբերական)¹:

Ռեսուրսային-հատկանշական մոտեցումը ժամանակագրական առումով առաջինն է: Այն առավել բնութագրական է միջազգային հարաբերությունների տեսաբանների իրատեսական ուղղության համար: Այս ուղղությունը պետության ուժը դիտարկում է որպես հեշտ «չափվող» նյութական գործոնների (բնակչության քանակ, տարածք, բնական ռեսուրսներ, տնտեսական և ռազմական հնարավորություններ) ամբողջություն:

¹ Юдин 2015, 92-105.

Այսպիսի մոտեցում առկա է նաև ուժերի հավասարակշռության տեսության հիմքում. Սա իրատեսների տեսության հիմքն է: Քանի որ ուժը ներկայացվում է «չափվող» ռեսուրսների ամբողջությամբ, ապա պետությունները կարելի է ըստ այդմ դասակարգել: Հետևաբար կարելի է ենթադրել, որ հնարավոր է դասակարգել և առանձնացնել պետությունները այս ռեսուրսների հիման վրա:

Ռեսուրսային-հատկանշական մոտեցման առանձնահատկություններից մեկն այն է, որ յուրաքանչյուր սուբյեկտ ունի ուժ, որը չունի որևէ կապ այլ սուբյեկտի հետ: Պարզապես մի սուբյեկտ ավելի շատ ռեսուրս ունի, իսկ մյուսը՝ բնականաբար ավելի քիչ:

Համատեքստային-հատկանշական մոտեցումն առաջացել է XX դարի երկրորդ կեսին իրատեսական ուղղության դեմ պայքարի ընթացքում: Այս ուղղության հետևորդները նշում են սուբյեկտների ուժերի առկայության անհամատեղելիությունը հստակ ռեսուրսների նկատմամբ՝ դրա մեջ տեսնելով ֆենոմեն, որն առաջանում է կոնկրետ միջազգային հարթակներում սուբյեկտների փոխհարաբերությունների ընթացքում:

Ռեսուրսային-հատկանշական ուղղությունն ուժի գործոնը բացահայտում է ենթատեքստով: Դրա բացահայտումը պահանջում է պատասխաններ հետևյալ հարցերին. ո՞վ է ուժի տիրապետողը, ո՞ւմ նկատմամբ, ե՞րբ, որտե՞ղ, ի՞նչ պայմաններում²: Հետևաբար, առաջնային խնդիրը այս մոտեցման համար մանրամասն և ամբողջական վերլուծությունն է ուժային փոխհարաբերությունների յուրաքանչյուր դեպքում:

Փոխկապակցվածության և փոխազդեցության պայմաններում, համաշխարհային քաղաքականության ասպարեզում, պետությունների ուժերի հավասարակշռության պայմաններում օրեցօր ավելի շատ է կարևորվում «փափուկ ուժ» հասկացությունը: Այս երևույթի ճիշտ օգտագործման դեպքում այն կարող է դառնալ միջազգային հարաբերությունների վրա անսահմանափակ ազդեցության կարևոր մասնիկ:

Գիտության մեջ չկա հստակ մեկնաբանություն, թե ի՞նչ է «փափուկ ուժը» (soft power): Իր մեծագույն ներդրումն այս երևույթի տեսության ձևավորման հարցում ունեցել է ամերիկացի քաղաքագետ-նորազատական Ջոզեֆ Նայ կրտսերը՝ առաջ բերելով «փափուկ ուժ» տերմինը³: Արտաքին քաղաքականության մեջ այս երևույթի առկայությունը չի նվազեցնում մշակույթի գրավչությունը և ապրելակերպի յուրահատկությունը, ընդհանուր գաղափարախոսական սկզբունքների օգտագործումը և ազդեցիկ հանրային դիվանագիտությունը:

² Hay 2014, 4.

³ Nye 2006, 2-3.

Պետության «փափուկ ուժը» որոշվում է երկրի ամբողջական ազգային հզորությամբ, մակրոտարածաշրջանային կամ առավել մեծ մասշտաբների վրա առկա երևույթներին նրա ազդեցության հնարավորությամբ, հասարակության վրա անմիջական ազդեցությամբ: Սակայն անհրաժեշտ է առանձնացնել «փափուկ ուժ» և «միջազգային իմիջ» հասկացությունները: «Փափուկ ուժը» կարող է լինել միջազգային իմիջի ձևավորման գործիք և մասնիկ, իսկ միջազգային իմիջը կարող է գրավչություն առաջացնել այս կամ այն պետության նկատմամբ, և այն ինքնին «փափուկ ուժի» մասնիկ է: Պետության իմիջը ըստ էության ձևավորվում է տարբեր երևույթների հիման վրա, այդ թվում՝ «կոշտ ուժի» հիման վրա՝ տնտեսական և ռազմական առումով:

Ամենակարևոր ներքին գործոններից մեկը մշակութային ներուժն է, արժեհամակարգը, գաղափարախոսական սկզբունքների համոզիչ լինելը, հասարակության համախմբվածությունը: Արտաքին գործոնների թվին են դասվում պետության դերն ու նշանակությունը միջազգային հարաբերությունների համակարգում, աշխարհաքաղաքական նշանակությունը, քաղաքակրթական պատկանելությունը, քաղաքական և տնտեսական զարգացման մոդելը, միգրացիոն քաղաքականությունը, տեղեկատվական աղբյուրները և հեռահաղորդակցման միջոցները: Ամեն դեպքում հիմնական հարցերից մեկը հենց համաշխարհային քաղաքականության մեջ «փափուկ ուժի» ազդեցիկ լինելն է: Ի տարբերություն ռազմական ուժի կամ տնտեսական գործիքների՝ սրա գործողությունները ցանկալի արդյունքի հասնելու համար առավել երկարատև կարող են լինել, քանի որ անուղղակի գործողությունների համակցություն է ենթադրում՝ ստեղծելով միջավայր այս կամ այն քաղաքականության իրագործման համար: Արևմուտքում ընդունված է ասել, որ ուժի կիրառման այս տեսակը քիչ կիրառելի է⁴: Ստեղծված միջազգային հարաբերությունների համակարգում ամենահզոր համակարգային ուժն ունեն համաշխարհային ուժային կենտրոնները՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Եվրոպական միությունը և Չինաստանը: ԱՄՆ-ն և Չինաստանը համաշխարհային քաղաքակրթության առաջատարներն են՝ արևմտյանը և կոնֆուցիականը:

Մասնավորապես, Ջոզեֆ Նայը պնդում է, որ միջազգային հարաբերությունների փոփոխվող բնույթն ինքնին ստիպում է իշխանություններին վերահաստատել ոչ նյութական միջոցների օգտագործումը, ինչպիսիք են մշակույթը, գաղափարախոսությունը և հասարակությունները: Սոցիալական մոբիլիզացման աճի հետևանքով տեխնոլոգիաները, կրթությունը և տնտեսական աճի գործոնները դարձել են ավելի կարևոր, քան

⁴ Харитонова 2015, 50.

աշխարհագրությունը, բնակչությունը և ռեսուրսները: Իսկ Դ.Ա. Բոլդուինը պնդում էր, որ ռազմական ուժի կարևորությունը նախկինում չափազանցված է եղել, իշխանության ոչ ռազմական ուժի կիրառման դերը՝ թերագնահատված⁵:

2004 թվականին Ջ. Նայն առաջարկեց ամբողջական և մանրամասն վերլուծություն «փափուկ ուժի» վերաբերյալ իր մենագրության մեջ՝ «Փափուկ ուժ. ինչպես հասնել հաջողության համաշխարհային քաղաքականության մեջ» («Soft Power: The Means to Success in World Politics»): Նա իշխանությունը բաժանում է երկու ձևի՝ կոշտ և փափուկ: Կոշտ և փափուկ ուժը կարելի է համարել իշխանության երկու մաքուր (զտված) ձևեր: Կոշտ կամ հրամայական ուժը իշխանության հնագույն ձևն է՝ կապված անարխիստական միջազգային համակարգի գաղափարի հետ, որտեղ երկրները չեն ճանաչում որևէ գերագույն իշխանություն՝ կենտրոնանալով իշխանության ուժի կիրառման քաղաքականության վրա:

Կոշտ ուժը սահմանվում է որպես իր նպատակներին հասնելու հնարավորություն՝ հարկադրական գործողություններով կամ սպառնալիքներով: Իսկ փափուկ ուժը հիմնվում է ուրիշների նախասիրությունների ձևավորման ունակության վրա՝ առանց ուժի կիրառման, հարկադրանքի կամ բռնության, այսինքն՝ ոչ նյութական միջոցներով, ինչպիսիք են գրավչությունը, մշակույթը, քաղաքական արժեքները, հաստատությունները և քաղաքականությունը, որոնք համարվում են օրինակելի իշխանություն: Լեգիտիմությունը փափուկ իշխանության համար կենտրոնական դեր է ստանձնում: Կոշտ ուժի ռեսուրսները ուղղակի են և պարզ: Պատմականորեն կոշտ ուժը նկարագրվել է այնպիսի չափանիշներով, ինչպիսիք են բնակչության քանակը, տարածքը, աշխարհագրությունը, բնական ռեսուրսները, տնտեսական հզորությունը, ռազմական ուժը և սոցիալական կայունությունը⁶: Ի հակադրություն՝ փափուկ ուժի ռեսուրսներն ավելի բարդ են, բարդ է նաև դրա դասակարգումը: Վարքագծային առումով փափուկ ուժը գրավիչ ուժն է:

Եթե «կոշտ ուժը» ենթադրում է տարբեր հարկադիր գործիքների օգտագործում, ինչպես օրինակ, տնտեսական պատժամիջոցներ, կաշառակերություն, ռազմական գործողությունների սպառնալիք, ապա «փափուկ ուժը» հիմնված է հետևյալ երեք հիմնական տարրերի վրա.

1) մշակույթ, որը կարող է հետաքրքրություն առաջացնել զանգվածային լսարանի մեջ.

2) գրավիչ քաղաքական արժեքներ (ներքաղաքական).

⁵ Baldwin 2012, 4-5.

⁶ Nye and Armitage 2007, 6.

3) օրինակելի արտաքին քաղաքականություն (այս պետության գործողությունները պետք է բարոյական հեղինակություն ունենան այլ պետությունների շրջանում)⁷:

Միջազգային հարաբերությունների արդի իրականությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է կոշտ և փափուկ ուժը դիտարկել միասին, այլ ոչ թե մաս-մաս:

Իրականում ռեալպոլիտիկի և լիբերալիզմի միջև դասական տարբերությունը դառնում է անլուրջ. կոշտ ուժը և փափուկ ուժը հաճախ փոխազդում և ամրացնում են միմյանց⁸: Երկուսն էլ, ի վերջո, կապված են, քանի որ դրանք երկուսն էլ ներկայացնում են ցանկալի նպատակին հասնելու ունակությունը՝ ազդելով ուրիշների վարքագծի վրա, և հետևաբար, անխուսափելիորեն փոխկապակցված են: Փափուկ և կոշտ ուժը ճիշտ համատեղելու շնորհիվ ստեղծվում է ուժի (իշխանության) երրորդ տեսակը՝ խելացի ուժը (smart power):

Այլ կերպ ասած՝ խելացի ուժը դերակատարի՝ տվյալ դեպքում պետության կարողությունն է՝ կոշտ ուժի և փափուկ ուժի տարրերը միավորել այնպես, որ դերակատարի նպատակներն արդյունավետ զարգանան և կատարվեն⁹: Միայն փափուկ ուժը չի կարող բավարար լինել, սակայն նրա ռազմավարական նշանակությունը, ի համեմատ կոշտ ուժի, կշարունակի աճել¹⁰: Խելացի ուժի կողմնակիցները պետք է հաշվի առնեն կոշտ ուժի առավելությունները, ինչպիսիք են ուժեղ զինվորականները, դաշինքները, գործընկերությունները և «հաստատությունների» ներդրումները: Եթե կոշտ ուժը «մղում է», ապա փափուկ ուժը «քաշում» է, և այս երկուսի համադրությունը հնարավորություն է ընձեռում օրինական ճանապարհով առավելագույն արդյունքներ ստանալու: Որպես մոտեցում՝ այն ավելի շատ է համապատասխանում միջազգային հարաբերությունների ներկա իրադրությանը: Խելացի ուժը կարելի է տարբեր ձևերով վերլուծել, սակայն այն իրականում դիվանագիտական, տնտեսական, ռազմական, քաղաքական, իրավական և մշակութային գործիքների համադրություն է: Եվ Եվրամիությունը կարելի է համարել դրա լավագույն օրինակներից մեկը¹¹:

Օրեցօր մեծանում և կարևորվում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դերն ու նշանակությունը նոր աշխարհակարգում, և դրա հետ մեկտեղ նաև կարևորվում ու բավականաչափ ուսումնասիրությունների առիթ է դառնում մեթոդների այն համակարգը, որով ՉԺՀ-ն ա-

⁷ Nye 1991, 112.

⁸ Nye 1991, 112.

⁹ Wilson 2008, 616.

¹⁰ McClory 2011, 24.

¹¹ Pallaver 2011, 20.

նաջնորդվում է և ապահովում հետաքրքրությունը «չինական» աշխարհի նկատմամբ:

Պետք է նշել, որ անկախ այն հանգամանքից, որ «փափուկ ուժ» երևույթն այնքան էլ նոր չէ, օգտագործվել է դարեր շարունակ և խաղաղ ճանապարհով հարևանների վրա ազդեցություն գործելը բնավ նոր երևույթ չէ. այնուամենայնիվ, ինչպես վերևում արդեն նշվեց, այս գաղափարը հայեցակարգային մեկնաբանում ստացել է Ջոզեֆ Նայի կողմից «Կոչված են առաջնորդելու. Ամերիկյան ուժի փոփոխվող բնույթը» գրքում (1990) («Bound to lead. The changing nature of American Power»):

1990-ական թվականներին Ջ. Նայի առաջին գրքի հրատարակմամբ «փափուկ ուժի» հայեցակարգի բովանդակության վերաբերյալ բանավեճ ծավալվեց, և չինական արտաքին քաղաքականության մեջ «փափուկ ուժի» արդյունավետ ներգրավման տեսական և պրակտիկ ուղիների մշակումներ սկսվեցին: Առաջին բանավեճերից մեկը կապված էր «փափուկ ուժ» տերմինի չինարեն համապատասխան թարգմանության հետ: Մասնավորապես, կան տարբերակներ, ինչպիսիք են՝ ruan shili (软势力), ruan chuanli (软权力) և ruan lilian (软力量): Ամենաբարձր մակարդակով Հու Չինթաոյի ելույթում ՉԿԿ XVII համագումարում օգտագործվել է «ruan shili» տերմինը¹², և այդ ելույթից ի վեր այս տերմինը սկսեց պաշտոնապես օգտագործվել:

Ակնհայտ է, որ Չինաստանում «փափուկ ուժի» ուսումնասիրության նկատմամբ ուշադրությունն անընդմեջ մեծանում է, և այս թեմայով հոդվածների քանակը վերջին տարիներին հարյուրապատկվել է հենց Չինաստանում: Թվում է տարօրինակ, որ չինացի քաղաքագետները և միջազգայնագետները այսչափ կարևորել են մի հայեցակարգ, որն ի սկզբանե մշակվել էր ԱՄՆ քաղաքական ուղենիշը նկարագրելու համար:

Վերլուծելով Չինաստանի ներկա պահվածքը՝ Վ.Ա. Կորսունն այսպես է նկարագրում նման աշխարհակարգի վերադարձը. «Համաշխարհային քաղաքականության ասպարեզ ոչ թե պատմության ամենահզոր խաղացողն է դուրս գալիս, այլ սա Չինաստանի վերադարձն է «պատմության թագավորություն»՝ իր ավանդական բարդույթներով և «չինական աշխարհակարգի» համակարգով»¹³:

Մեկ այլ պատճառ նույնպես, որ Ջ. Նայի հայեցակարգը գրավեց չինացի հետազոտողներին. համահունչությունը կոնֆուցիականության հիմնական պնդումներին, ըստ որի՝ իդեալական ղեկավարը պետք է հիմնվի ոչ թե ֆիզիկական ուժի, այլ բարոյականության վրա: «Մենդիուս» (մ.թ.ա.

¹² <http://russian.people.com.cn/31521/6290221.html>.

¹³ <http://magazines.russ.ru/vestnik/2006/17/kit6.html>.

IV-III դարեր) տրակտատում «ճշմարիտ տիրակալը» (վանը) դեմ է «հեգեմոնին» (բային): Եթե վանը վերահսկում է լավ իշխանությունը (դենը) և մարդկությանը (ժենին), ապա բանը (ba) օգտագործում է ուժը և անտեսում մարդկությանը¹⁴: Չինական ավանդական արտաքին քաղաքականության հայեցակարգը նաև բխում է այն փաստից, որ «բարբարոսների» հետ փոխգործակցության ժամանակ հիմնական շեշտը դրվում է «կայսրության լավ (ողորմած) ազդեցության վրա և միայն բացառիկ դեպքերում՝ ուժի կիրառման վրա»: Բացի չինական ավանդական արտաքին քաղաքականությանն ու բարոյական արժեքներին համահունչ լինելուց՝ «փափուկ ուժ» հասկացությունը Չինաստանում լայն տարածում է ստացել, և կատարվել է առաջատար չինացի քաղաքագետների և պատմաբանների ուսումնասիրությունների արդյունքների վերլուծություն՝ վերլուծելով հզոր կայսրությունների և գերտերությունների փլուզման պատճառները: Այսպիսով, ՉժՇ սոցիալական գիտությունների ակադեմիայի հետազոտողը Շեն Ցզիժուն պնդում է, որ սառը պատերազմում ԽՍՀՄ-ի պարտության կարևորագույն պատճառը բնավ Միացյալ Նահանգների համեմատ իշխանության ուժի պակասը չէր¹⁵: Մէն Խուէնխէն վստահ է, որ անցյալի հզորագույն ուժերի ամրապնդումը, ինչպես, օրինակ Հոնմեական կայսրությունը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան հիմնված էին ոչ միայն զինված ուժերի վրա, այլև արժեքների գրավչության, մշակութային հարստության, նորարարության և նմանատիպ այլ գործոնների վրա¹⁶:

Չինական արտաքին քաղաքականության տեսության մեջ և պրակտիկայում «փափուկ ուժ» հասկացության նկատմամբ առայժմ կա երկու մոտեցում: Չինացի հայտնի հետազոտողների շրջանում առավել շատ տարածում է գտել «մշակութային» ուղղությունը՝ ձևավորված դեռևս 1990 թվականին: Այս տեսության հիմքում «փափուկ ուժի» հիմնական գործիքը մշակույթն է: Հետևորդները կարծում են, որ աշխարհընկալման վերաբերյալ «չինական» արժեքները կարող են այլընտրանք հանդիսանալ արևմտյան աշխարհընկալման կողքին: Բայց կա նաև երկրորդ ուղղությունը՝ «քաղաքական»: Այս ուղղության ներկայացուցիչները չեն ընդունում մշակութային քաղաքականության առաջնահերթությունը, քանի որ համարում են, որ իրական հաջողության հասնելու համար անհրաժեշտ է բոլոր տարրերի միաժամանակյա օգտագործումը, որը կենսական անհրաժեշտություն է, քանի որ բոլոր տարրերի միջև կա փոխկապվածություն: Այս կերպ ասած՝ միայն չինական մշակույթի նկատմամբ հարգանքն ու հետաքրքրությունը չեն կարող ապահովել հետաքրքրությունը

¹⁴ Титаренко 2006-2009, 365.

¹⁵ <https://www.rsis.edu.sg/rsis-publication/idss/165-wp165-soft-power-in-chinese>.

¹⁶ Men Honghua 2007.

համաշխարհային թատերաբեմում չինական քաղաքականության, սոցիալական կառուցվածքի և ՉԺՀ-ի արտաքին ու ներքին գործողությունների նկատմամբ:

Շանհայի միջազգային հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Յանգ Յզեմյանը փոփոխվող միջազգային համակարգում Չինաստանի դերը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Այժմ Չինաստանի համար ամենակարևոր հարցն այն է, թե ինչպես պետք է ձևավորվի «չինական յուրահատկությամբ արժեքների համակարգ»՝ ներդնել դա համաշխարհային համակարգի մեջ և չինական օրինակը դարձնել գրավիչ զարգացող երկրների համար»¹⁷:

Չինական «փափուկ ուժի» ևս մի առանձնահատկություն. անհրաժեշտ է նշել՝ «փափուկ ուժի» կիրառությունն օգտագործվում է և՛ արտաքին հարթակում՝ երկրի իմիջը ձևավորելու համար, և՛ երկրի ներսում:

Ուսումնասիրելով «փափուկ ուժի» հայեցակարգը և դրա դերը Չինաստանի արտաքին քաղաքականության մեջ՝ ՉԺՀ-ի կողմից «փափուկ ուժ» ստեղծելու համար օգտագործվող արտաքին քաղաքական գործիքները մեծ հետաքրքրություն են ներկայացնում հետազոտողների համար: Հետազոտողները նշում են «բնական» և «արհեստական» գործիքները: Առաջին դեպքում պետությունն «ինքնաշխատ կերպով» բարելավում է իր բնութագիրը համաշխարհային ասպարեզում՝ տնտեսության հաջողությունների, մշակույթի, գիտության, երկրի ներսում և համաշխարհային ասպարեզում արվող քաղաքականության օրինականությամբ: Մյուս դեպքում ենթադրվում է «իրականացնել տեղեկատվության, գովազդի և քարոզչության տարբեր միջոցների կիրառում, որոնք ուղղված են պետության միջազգային վարկանշի բարելավմանը: Այս ուղղությամբ նպատակայնորեն ձևավորվում է «փափուկ ուժի» կերպարը և ներառում է երեք հիմնական ուղղություններ՝ հանրային դիվանագիտություն, պետական դիվանագիտություն (ավանդական դիվանագիտություն), օտարերկրյա պետությունների զարգացման և մարդասիրական օգնության տրամադրման ծրագրեր»¹⁸:

Ներկայումս ՉԺՀ-ի «հանրային դիվանագիտությունը» հետապնդում է հետևյալ նպատակները (gōng gòng jiāo tōng 公共 交通).

1. Երկրի կերպարի ձևավորումը, որը ձգտում է ստեղծել ներդաշնակ հասարակություն, և որի ջանքերն ուղղված են, առաջին հերթին, քաղաքացիների կյանքի բարելավմանը, այլ ոչ թե արտաքին ընդլայնմանը: Նույնիսկ Դեն Սյաոպինն է ժամանակին օգտագործել «Հնագույն

¹⁷ Yang Jiemian 2008, 46.

¹⁸ Радиков, Лексютина 2012, 19-26.

Չինաստանի» արդիականացման հիմք հանդիսացող Xiaokang 小康 (փոքր բարգավաճում) հայեցակարգը:

2. Ստեղծել կայուն և հուսալի գործընկերոջ պատկեր, որի հետ համագործակցությունը կնպաստի փոխադարձ բարգավաճմանը: Մասնավորապես, խաղաղության հայեցակարգը (hépingjǔéqǐ 和平崛起) սպարեզում հայտնվեց Արևմուտքում ձևավորված «չինական սպառնալիքի» հետ միաժամանակ: Այս գաղափարի շրջանակներում շեշտը դրվեց այն փաստի վրա, որ Չինաստանը մտադիր չէ ագրեսիվ գործողություններ կատարել, այլ համագործակցության և փոխըմբռնման հիման վրա բարեկամական հարաբերությունների հաստատման նպատակ է հետապնդում: Չինաստանն ակտիվորեն մասնակցում է համաշխարհային բազմաթիվ խնդիրների քննարկմանն ու լուծմանը՝ շրջակա միջավայրի խնդիրներ, հիվանդությունների կանխարգելում և աղքատության դեմ պայքար:

3. Չինաստանի մշակույթի ներկայացումը որպես եզակի, հինավուրց, որը կարող է աշխարհը լրացնել: Այս առումով քաղաքականության հիմնական ուղղությունն այն է, որ միայն Չինաստանի մասին կարծրատիպերից զտված տեղեկատվության տարածման միջոցով կարելի է հասկանալի և հասանելի լինել այլ երկրների համար:

4. Ինչպես վերևում նշվեց, ՉԺՀ-ի հանրային դիվանագիտության կարևոր ոլորտը ներքին լսարանին ուղղված միջոցառումների անցկացումն է: Այսպիսով, Չինաստանի բնակչության շրջանում իր երկրի նկատմամբ հպարտության վերականգնումը նույնպես այդ քաղաքականության կարևոր մասնիկներից մեկն է:

Այս նպատակների իրականացման համար ՉԺՀ-ի ղեկավարությունն օգտագործում է հանրային դիվանագիտության մի շարք գործիքներ՝ լրատվամիջոցներ, համացանցային ռեսուրսներ, հանրային-միջազգային մշակութային միջոցառումներ և բավական հաջողված ծրագիր՝ «Կոնֆուցիուսի ինստիտուտ»: Այս կազմակերպության առաքելությունն է «նպաստել բարեկամական կապերի հաստատմանը այլ երկրների ներկայացուցիչների հետ իրենց իսկ երկրում, խորացնել չինական մշակույթի և լեզվի նկատմամբ հետաքրքրությունը նրանց մեջ, ովքեր ուսումնասիրում են չինարեն»: Միայն 2011 թ. դեկտեմբերի դրությամբ աշխարհում ավելի քան 800 Կոնֆուցիուսի ինստիտուտ կար 82 երկրներում և տարածաշրջաններում: 2017 թվականին երկրների քանակը հասել էր 142-ի, իսկ աշակերտներինը՝ 7 մլն-ի (միայն ԱՄՆ-ում հաշվվում է 110 ԿԻ): Արդեն 2020-ին ծրագրվում է այս թիվը հասցնել 1000-ի: Հաստատությունը կարևորում է նաև Չինաստանի և չինացիների մասին դրական ու լավ վերաբերմունքի ձևավորմանը նպաստելը: 2010 թվականին աշխարհի ավելի քան 260 000 ուսանողներ 194 երկրներից եկան Չինաստանում սովորելու հա-

մար, 2014-ին՝ 377 000, 2015-ին՝ 443 000, իսկ արդեն 2017-ին ուսանողների թիվն անցնում է 489.200-ից: Կրթություն ստանալու համար Չինաստան ամենաշատ ուսանողները ներկայացնում են ուսման որակով աշխարհի լավագույն երկրներից հինգը՝ Հարավային Կորեան, ԱՄՆ-ն, Ճապոնիան, Թայլանդը և Ռուսաստանը, մեծ մասամբ ուսանողները գնում են չինարեն սովորելու և հետագայում Չինաստանում աշխատելու¹⁹:

Նպատակ ունենալով նպաստել Չինաստանի համաաշխարհային ուժի և ազդեցության ավելի մանրակրկիտ գնահատմանը՝ Չինաստանի բարձրագույն կրթության քաղաքականությունը այժմ դիտարկվում է որպես կենտրոնական, գլոբալ համատեքստում և միջազգային «մտավոր-ուժային» հարաբերություններում:

Չինական հանրային դիվանագիտության կարևոր ոլորտներից է չինական ՁԼՄ-ների տարածումն աշխարհի տարբեր լեզուներով: Չինաստանի Կոմկուսի (ՉԿԿ) ազդեցությունը լրատվամիջոցների և այլ «փափուկ ուժային» գործիքների կիրառումը, որոնք ներառում են քարոզչության և գրաքննության տարբեր ձևեր, նպատակակետում ունեն երկու լարան՝ արտասահմանյան չինական և ոչ չինական օտարերկրացիներ, հետապնդում են երեք հիմնական նպատակ՝ նպաստել Չինաստանի մասին դրական տեսակետի ձևավորմանը և ապահովել բարենպաստ պայմանների հեռանկարը ՉԿԿ-ի գործունեության համար, խրախուսել Չինաստանում օտարերկրյա ներդրումները և արտասահմանում չինական ներդրումների բաց լինելը, խիստ զսպել, ճնշում գործադրել հետաքննությունների և քաղաքական մեկնաբանությունների վրա, որոնք Չինաստանի կառավարությունը բացասական լույսի ներքո են ներկայացնում:

ՁԼՄ-ների ոլորտում կատարվածի արդյունքն ակնհայտ է դառնում միայն փաստից, որ «Չինաստանի գործոնը» (“China Factor”) ներկա է աշխարհի տարբեր կետերում: Ավելի որոշակի՝ ՉԿԿ-ն գերակայություն հաստատելու գործում մեծապես հաջողություններ է գրանցել այն լրատվամիջոցների նկատմամբ, որոնք Չինաստանից դուրս են, բայց հաղորդումները տարածում են չինարեն: Այնուամենայնիվ, Պեկինի ազդեցության հստակ սահմաններ կան: Լրատվամիջոցների ամբողջ աշխարհը ամեն օր հրապարակում է նորություններ, որոնք ՉԿԿ-ն ցանկանում է թաքցել: Այս ամենը հաշվի առնելով՝ դեռ կան շատ բաց թիրախային տարածքներ, որոնց համար պետք է մշակվի մեխանիզմ «չինական տեղեկատվություն» մատուցելու հարցում: Այնուամենայնիվ, ՉԿԿ-ի փափուկ ուժի մարտավարության անցյալ, ներկա և ապագա ազդեցությունը չպետք է թերա-

¹⁹ http://www.chinadaily.com.cn/opinion/201710/24/content_33637493.html.

գնահատել՝ լինի դա մամուլի ազատության, տնտեսության կամ ազգային անվտանգության տեսանկյունից:

Ինչ վերաբերում է լրատվամիջոցներին, ապա այս պահին ակտիվորեն գործում է Չինաստանի միջազգային ռադիոն, Xinhua News Agency-ն աշխատում է մի քանի լեզուներով, իր վարկանիշով CNN-ի, BBC-ի և Euronews-ի շարքին է դասվում նաև Չինաստանի պետական հեռուստատեսությունը (CCTV): Բացի դրանից, ամեն տարի լրատվության և տեղեկատվության ոլորտի ավելի ու ավելի շատ մասնագետներ են ժամանում Չինաստան: Ավելի շատ են լինում լրատվական կոնֆերանսներ Պեկինում կամ Շանհայում՝ որպես համաշխարհային մեգապոլիսների փայլուն օրինակներ: Պետությունն իր հերթին զգալի մեծ գումարներ է հատկացնում տեղեկատվական ոլորտի զարգացման համար, քանի որ հենց այս ոլորտն է մեծ դեր խաղում հանրային դիվանագիտության իրականացման գործում: Ինչպես նաև միջազգային համաժողովների, կոնֆերանսների, գիտաժողովների, հանդիպումների, սեմինարների և այլ նմանատիպ հանդիպումների անցկացումը նպաստում է Չինաստանի արտաքին և ներքին հեղինակության աճին:

Բացի չինական մշակույթի տարածման և Չինաստանի մասին կարծրատիպերի վերացման աշխատանքներից, Չինաստանի կառավարությունը խոշոր միջոցներ է ներդնում աշխարհի բոլոր տարածաշրջանների զարգացման գործում: Սա ներառում է թե՛ զարգացող երկրների մասնագետների վերապատրաստում, ուսանողներին տրվող դրամաշնորհներ, թե՛ կամավորների ներգրավում և այլն: Բնական աղետների դեպքում տրվող օգնության ծավալները զգալիորեն աճել են: Այսպիսով, ՉԺՀ-ն ստեղծում է համաշխարհային հանրության պատասխանատու անդամի (ուժի) լավագույն կերպարներից մեկը, հստակ պատկերացնելով, որ հանրային դիվանագիտությունը, ի տարբերություն պրոպագանդայի (քարոզչության), պետք է օժանդակություն ստանա իրական գործողություններից՝ հաստատելով համաշխարհային համակարգում արժանի տեղ զբաղեցնելու երկրի պահանջների լեգիտիմությունը:

Ինչպես բազմաթիվ եզրույթների ընկալման դեպքում, այնպես էլ հանրային դիվանագիտության ընկալման հարցում բավական մեծ տարբերություն կա չինական և արևմտյան դիրքորոշումներում: Արևմտյան ընկալմամբ՝ հանրային դիվանագիտությունը պետությունների գիտակցված գործունեությունն է՝ ուղղված այլ երկրների ժողովուրդներին, ուստի հանրային դիվանագիտության մեջ ներգրավված հաստատությունները (տվյալ դեպքում խոսքը ԿԻ-ի մասին է) պետք է լինեն պետական համակարգի մասնիկ կամ ենթարկվեն պետությանը՝ ներառելով նաև հասարակական բազմաթիվ ու բազմաբնույթ կազմակերպություններ, քանի

որ արևմտյան ուղղության հետևորդները համոզված են, որ ոչ պետական դերակատարներն այն կազմակերպություններն են, որոնք կախված չեն որևէ պետությունից և գործում են իրենց իսկ անունից և ներկայացնում են սեփական շահերը, իսկ չինական ընկալմամբ հասարակական կազմակերպությունները չեն հանդիսանում լիովին ոչ պետական: Հասարակական կազմակերպությունները Չինաստանում գոյություն ունեն և զգալի ազդեցություն ունեն պետական քաղաքականության ձևավորման վրա, բայց միևնույն ժամանակ դրանք անուղղակիորեն վերահսկվում են պետության կողմից: Այսպիսով, կազմակերպությունների մեծ մասը լիովին ինքնուրույն է և պետության դերը սահմանափակում է միայն առավել լուրջ, կենսական որոշումների կայացմանը հավանություն տալով կամ չտալով:

Արևմտյան մասնագետները այս կազմակերպությունների գործունեությունը դասում են հանրային դիվանագիտության շարքին, իսկ չինացի մասնագետները դրանք համարում են ժողովրդական դիվանագիտության մասնիկ (ժողովրդական դիվանագիտության շարքին են դասվում նաև միջմշակութային կապերն առանձին թատրոնների, համույթների միջև, ցուցադրությունների կազմակերպումը ոչ պետական հովանավորչությամբ և այլն):

Կարևոր է նաև, որ չինացի հետազոտողները և ղեկավարները գիտակցեն, որ արտաքին քաղաքականության այս գործիքների հաջող օգտագործման համար անհրաժեշտ է մշակել այն մոդելը, որը հաշվի կառնի երկրի առանձնահատկությունները: Եվ շնորհիվ այն հանգամանքի, որ «փափուկ ուժ» հասկացությունը շատ առումներով մոտ է Չինաստանի արտաքին քաղաքականության ավանդական մոտեցմանը, արտաքին քաղաքականության նպատակներին հասնելու համար կարող է դառնալ արժեքավոր ռեսուրս: Հանրային դիվանագիտությունը, որպես «փափուկ ուժ» կառուցելու հիմնական գործիք, ներդաշնակորեն համապատասխանում է Չինաստանի ներկա արտաքին քաղաքականության կառուցվածքին: Դիվանագիտության ավանդական մեթոդների և ՉԺՀ-ի ժողովրդական դիվանագիտության հետ այն կարող է դառնալ երկրի արտաքին քաղաքականության իրականացման արդյունավետ գործիք: Այս բոլոր դրական կողմերը հաշվի առնելով՝ այնուամենայնիվ, պետք է նշել, որ կան բարդություններ, որոնց հաղթահարման դեպքում միայն ՉԺՀ-ն «փափուկ ուժի» ոլորտում կկարողանա ամբողջ հզորությամբ ներկայանալ և կանգնել ամենահզոր գերտերությունների կողքին համահավասարի կարգավիճակով: Այդ բարդությունների թվին կարելի է դասել՝

- անգլալեզու ՋԼՄ-ների անհամեմատ լայն տարածումն աշխարհում,

• ՉԺՀ կառավարման մոդելի «փակ» լինելը համաշխարհային հասարակության համար,

• ՉԺՀ-ի խնդիրներն այլազգիների առավել մեծ հոսքերի մշտական բնակության համար (բնապահպանական խնդիրներից մինչև չինաստանյան միջավայրի համար նախատեսված հաղորդակցային այլազանությունները) և այլն:

Եզրակացություններ

Այսպիսով, Չինաստանը պետք է շարունակի այն մեծ աշխատանքի իրականացումը, որով մշակվում է ռազմավարություն, որն իր հերթին հաշվի է առնում հնարավոր և առաջնային լուծում պահանջող թերությունները և հնարավորություն տալիս հասնելու արտաքին քաղաքական առաջնային նպատակներից մեկին՝ Չինաստանի՝ համաշխարհային հանրության պատասխանատու անդամի կերպարի ստեղծմանը, որպես հարուստ մշակույթով վստահելի գործընկեր, որը կարող է կարևոր ներդրում ունենալ ներդաշնակ աշխարհի ձևավորման գործում:

Չինաստանը շարունակում է «փափուկ ուժի» մեթոդի կիրառումն ու զարգացումը՝ նպատակ հետապնդելով վերադարձնել ի սկզբանե «Միջին Թագավորությանը» պատկանող մեծագույն հոշակն ու «հզոր ուժի» վերստին ձեռքբերումը և, իհարկե, Չինաստանի ու չինացիների վստահությունը վայելելը, կառավարման ձևով իր «եղբոր»՝ ԽՍՀՄ-ի (որը հույսը դրել էր միայն «կոշտ ուժի» վրա) սխալները թույլ չտալով:

Գրականություն

- Духовная культура Китая 2006, энциклопедия: в 5 т., т. 1, Философия/ред. М.Л. Титаренко и др., Москва, изд. «Восточная литература» РАН, 490 с.
- Доклад Ху Цзиньтао на XVII Съезде КПК [Электронный ресурс] URL:<http://russian.people.com.cn/31521/6290221.html> (25.01.2012).
- Круглый стол «Китайский фактор» (участники Мясников В.С., Бажанов Е.П., Галенович Ю.М. и др.) [Электронный ресурс]. URL:<http://magazines.russ.ru/vestnik/2006/17/kit6.html> (25.01.2012).
- Най Дж. 2014, Будущее власти, Москва, изд. «АСТ», 448 с.
- Харитоновна Е.М. 2015, Эффективность «мягкой силы»: проблема оценки, Мировая экономика и международные отношения, N 6, с. 45-50.

- Радиков И., Лексютина Я. 2012, «Мягкая сила» как современный атрибут великой державы. *Мировая экономика и международные отношения*, № 2, с. 19-26.
- Юдин Н.В. 2015, Современное прочтение феномена мягкой силы, *Международные процессы*, т. 13, N 2, с. 92-105.
- Baldwin D.A. 2012, Power and International Relations, in *Handbook of International Relations* [pdf], p. 4-5, 26-44.
- China Daily “Rise in number of foreign students reflects country's bright prospects”(Updated:2017-10-24) [Electronic resource]. URL:http://www.chinadaily.com.cn/opinion/201710/24/content_33637493.html. (25.01.2012).
- Nye J.S. Jr. and Armitage, R.L. 2007, CSIS Commission on Smart Power. A smarter, more secure America Center for Strategic and International Studies, Washington, p. 5-7.
- Nye. J. 2006, *Soft Power and European-American Affairs/ Hard Power, Soft Power and The Future of Transatlantic Relations*. Ed. By Th. L. Ilgen. Abingdon, Oxon, p. 183-187.
- Nye Joseph S. Jr. 1991, *Bound to Lead: The Changing Nature of American Power*, New York, p. 25-49.
- Li Mingjiang 2008, *Soft power in Chinese discourse: popularity and prospect* S. Rajaratnam school of international studies. Singapore, [Electronic resource]. <https://www.rsis.edu.sg/rsis-publication/idss/165-wp165-softpower-in-chinese> (25.01.2012).
- Men Honghua 2007, *Zhongguo ruan shili pinggu baogao//Guoji guancha*, N 2-3, p. 275.
- McClory J. 2011, *The New Persuaders II. A 2011 Global Ranking of Soft Power*. Institute for Government, p. 5-25.
- Pallaver M. 2011, *Power and its Forms: Hard, Soft, Smart*. MPhil, London School of Economics, p. 9-24.
- Wilson, E.J. 2008, *Hard Power, Soft Power, Smart Power*. *The ANNALS of the American Academy of Political and Social Science*, p. 110-125.
- Yang Jiemian 2008, *Gaige kaifang 30 nian Zhongguo waijiaode chengjiu// Guoji wenti yanjiu* 13 november, Beijing, p. 42-52.

«ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ԿԻՐԱՈՄԱՆ ՉԻՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Լիաննա Անանյան

Պետությունների ուժերի հավասարակշռության պայմաններում օրեցօր ավելի շատ է կարևորվում «փափուկ ուժ» հասկացությունը: Դրա հետ

մեկտեղ աճում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դերն ու նշանակությունը նոր աշխարհակարգում:

Միջազգային հարաբերություններում առկա են տարբեր մեթոդներ և միջոցներ, հատկապես Ջոզեֆ Նայի առաջադրած «փափուկ», «կոշտ» և «խելացի» ուժերի միջև առկա տարբերությունները, որոնք չինական ժամանակակից դիվանագիտության ձևավորման գործում հիմնաքարային են եղել: Գոյություն ունեն դիվանագիտական բազմաթիվ մեթոդներ և գործիքներ, որոնց միջոցով Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը կարողացել է զբաղեցնել իր ուրույն տեղը միջազգային հարաբերությունների «ուժային» համակարգում: Ամենահետաքրքիր հարցը այնուամենայնիվ մնում է այն, թե ինչո՞ւ և ինչպե՞ս է Չինաստանը դարձել «փափուկ ուժի» խորհրդանիշ. չինական տեսաբանների/քաղաքական գործիչների և օտարազգի տեսաբանների/քաղաքական գործիչների տարբեր տեսակետները՝ չինական հատկանիշներով «փափուկ ուժի» օգտագործման հարցի վերաբերյալ, տարաբնույթ և երբեմն իրար հակասող թեզեր են առաջ քաշում:

Անկախ Չինաստանի «ազգային դիվանագիտության» հաղթանական թռիչքից և չինական դիվանագիտության ներկայիս հստակ նպատակներից, դեռևս գոյություն ունեն խնդիրներ, որոնք պահանջում են հրատապ լուծումներ:

Բանալի բառեր՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, միջազգային հարաբերություններ, հանրային դիվանագիտություն, արտաքին քաղաքականություն, երկրի կերպար, փափուկ ուժ, կոշտ ուժ:

КИТАЙСКАЯ ПРАКТИКА ИСПОЛЬЗОВАНИЯ «МЯГКОЙ СИЛЫ»

Лианна Ананян

Понятие «мягкой силы» становится все более важным в сфере мировой политики и в балансе сил государств. Роль и значение Китайской Народной Республики в новом мировом порядке растет день ото дня. Вместе с тем возрастает значение системы методов, используемых Китаем для того, чтобы вызвать интерес к «китайскому» миру. Существует множество дипломатических методов и инструментов, с помощью которых Китайская Народная Республика смогла занять свое уникальное место в «силовой» системе международных отношений. Однако остается открытым вопрос, почему и как Китай стал символом «мягкой силы». В этой связи китайские и иностранные теоретики/политики выдвигают различные и порой противоречивые тезисы.

Независимо от триумфального взлета китайской «национальной дипломатии» и нынешних четких целей китайской дипломатии, все еще существуют проблемы, требующие безотлагательных решений.

Ключевые слова – Китайская Народная Республика, международные отношения, публичная дипломатия, внешняя политика, образ страны, дипломатия, мягкая сила, жесткая сила.

CHINESE PRACTICE OF USING “SOFT POWER”

Lianna Ananyan

The notion of "soft power" is becoming increasingly important in the context of interdependence and interaction, in the sphere of world politics, in the balance of power of states. The role and importance of the People's Republic of China in the new world order is growing day by day, and with it the importance of the system of methods used by China to direct and arouse interest in the "Chinese" world is also emphasized. There are various methods and means in international relations, especially the distinction between "soft", "hard" and "smart" powers put forward by Joseph Nye, who played a key role in the formation of modern Chinese diplomacy. There are many methods and tools with which the People's Republic of China has been able to take its unique place in the world in a mosaic of "power" system of international relations. However, the biggest and the most interesting question still remains, why and how China has become the symbol of the "soft power". Various theories, sometimes contradictory theses about the use of "soft power" in the Chinese characteristics are put forward by Chinese theorists (politicians and foreign theorists) politicians of different countries. Regardless of triumphant escape the Chinese "national diplomacy" and present clear goals of China's diplomacy, there are still problems that need urgent and immediate solutions.

Key words – People's Republic of China, international relations, public diplomacy, foreign policy, image of country, soft power, hard power.

**ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ**

Միհրան Գալստյան

Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ akoong@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 17.02.2020, գրախոսվել է 17.01.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

Արդի շրջանում Հայաստանից տեղի ունեցող ակտիվ միգրացիոն գործընթացներն իրենց ազդեցությունն են թողնում ընտանիքի կառուցվածքի և ներընտանեկան հարաբերությունների վրա: Հայաստանից տարեկան 60 հազար մարդ¹ աշխատանքի նպատակով մեկնում է արտերկիր, իսկ ընտանիքը մնում է տեղում, որի հետևանքով հանրապետությունում լայն տարածում է ստացել «հեռավորության վրա ձևավորված» ընտանեկան հարաբերությունների մոդելը: Աշխատանքային միգրացիայի պատճառով ընտանիքների երկատու մասնաբաժինը է բերում մի շարք լուրջ հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրությունն ունի կարևոր գործնական նշանակություն: Մասնավորապես, անհրաժեշտ է պարզել, թե աշխատանքային միգրանտների շրջանում ինչ առանձնահատկություններ ունեն ընտանիքի ձևավորման կենսափուլերը, և դրանք ինչ ազդեցություն են թողնում ընտանիքի կայունության վրա: Այդ խնդրի բացահայտման նպատակով որպես հետազոտության օբյեկտ ընտրվել և համեմատվել են միգրանտ ունեցող և միգրանտ չունեցող ընտանիքները, որոնց շրջանում իրականացվել են էթնոսոցիոլոգիական հարցումներ²: Հետազոտության արդյունքների պարզաբանման համար մեթոդաբանական հիմք են ընդունվել կառուցվածքա-

¹ Միգրացիան և զարգացումը. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրության 2009, 2, http://employment.am/up/attach/attach_arm10.pdf (03.11.2017):

² Էթնոսոցիոլոգիական հարցումներն իրականացվել են է 2016-2017 թթ. Երևան քաղաքում և Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Արմավիրի, Արագածոտնի մարզերի վեց քաղաքային և քսան գյուղական բնակավայրերի 384 ընտանիքներում: Վերջին հինգ տարվա կտրվածքով (2013-2017 թթ.) այդ ընտանիքներից 126-ն (32.8%) ունեին աշխատանքային միգրանտներ: Այդ ընտանիքների 69,8%-ից արտագնա աշխատանքի էր մեկնել մեկ, 25.4%-ից՝ երկու, 4 %-ից՝ երեք, իսկ 0.8%-ից՝ չորս միգրանտ:

յին-գործառնական և կոնֆլիկտայնության տեսությունները, որոնք անդրադարձել են ընտանիքի գործառույթներում տեղ գտած փոփոխություններին, նրա անդամներից յուրաքանչյուրի ձեռք բերած նյութական միջոցներին և, դրանցով պայմանավորված, իշխանության ծավալների բաշխման, հետաքրքրությունների, շահերի բախումներին³:

Ընտանիքի ձևավորման առանձնահատկությունները աշխատանքային միգրանտների շրջանում

Ընտանիքն ունի իր ձևավորման կենսափուլերը, որը ներառում է նրա առաջացումից մինչև գոյության դադարեցում տևող սոցիալական և ազգագրական վիճակների հաջորդականությունը՝ ամուսնությունը, երեխայի կամ երեխաների ծնունդը, ամուսնալուծությունը կամ ամուսնության դադարեցումը: Իր գոյության ընթացքում յուրաքանչյուր ընտանիք անցնում է կենսական մի քանի որակական փուլ, որ անվանում են կենսական շրջափուլի աստիճաններ կամ ընտանիքի պատմություն⁴: Զարգացման կենսափուլերի վերաբերյալ գոյություն ունեն տարբեր դասակարգումներ, որտեղ հաշվի են առնվում ներընտանեկան հարաբերությունների ամբողջությունը և գործառնության տարբեր փուլերում դրա նշանակությունը⁵.

1. սիրահետություն կամ մինչամուսնական շրջան,
2. ամուսնություն,
3. երեխաների ծնունդ,
4. ամուսնության հասունության փուլ,
5. երեխաների հեռացում ծնողներից,
6. թռչակի տարիք և ծերություն:

Էթնոսոցիոլոգիական հարցումներից պարզվում է, որ վերը նշված կենսական փուլերից յուրաքանչյուրն իր տևողությամբ, բովանդակությամբ և հագեցվածությամբ տարբերվում է աշխատանքային միգրանտ ունեցող և չունեցող ընտանիքներում: Այդ առումով անդրադառնանք չամուսնացած աշխատանքային միգրանտների մինչամուսնական վարքագծին՝ ամուսնանալուն և ընտանիք կազմելուն նախորդող փուլին, որը զույգերի փոխադարձ «հետազոտման» երկարատև գործընթաց է: Սովորաբար այդ փուլն ուղեկցվում է հարսնացուի ընտրությամբ, զույգերի ծանոթությամբ, հանդիպումներով, փոխադարձ սիրահետումներով, խնամախոսությամբ և նշանադրությամբ: Մինչամուսնական փուլի կտրուկ նվազեցումը կամ անհարկի ուշացումը հետագայում ներառում է կայուն ընտանիք ձևավորելու ռիսկեր: Հետազոտության արդյունքներով որոշ աշխատանքային

³ Гурко 2016, 81-92.

⁴ Կրավչենկո 2004, 239-240:

⁵ Андреева 2004, 244.

միգրանտների շրջանում այդ փուլը տևում է շատ ավելի կարճ, քան տեղում մնացած երիտասարդների դեպքում:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների խորացմանը զուգահեռ՝ աշխատանքի միջազգային միգրացիայի կարգավորման համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը դառնում է առավել հրատապ: Ակնհայտ է, որ ինտեգրացիոն միավորումներում միգրացիոն քաղաքականության մշակումն ու բարեփոխումները, ինչպես նաև այդ համակարգի զարգացմանն ուղղված գործընթացները զուգակցվում են անդամ երկրների միգրացիայի ոլորտում գործող օրենսդրությունների համապատասխան փոփոխությունների իրականացմամբ՝ դրանք ներդաշնակեցնելով վերպետական կարգավորումների հետ: Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ պետությունների կողմից աշխատուժի միգրացիայի ոլորտում իրականացվող ազգային կարգավորման գործընթացների արդյունավետությունը գնահատելու համար կարևորվում է ԵԱՏՄ երկրներում երրորդ երկրներից օտարերկրյա աշխատողների ներգրավման, նրանց հետ աշխատանքային հարաբերությունների կարգավորման և ներքին աշխատաշուկաների առանձնահատկությունների համեմատական վերլուծությունը: Երրորդ երկրներից միգրացիոն հոսքերի կարգավորման տեսանկյունից առաջնային նշանակություն ունի նաև աշխատանքային միգրացիայի ոլորտում այդ երկրների նկատմամբ միասնական իմիգրացիոն քաղաքականության իրականացման անհրաժեշտության հիմնավորումը:

**Իմիգրացիոն քաղաքականության առանձնահատկությունները
ԵԱՏՄ անդամ երկրներում**

Հայաստանում օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք ունեն այնպիսի աշխատանքային իրավունակություն,

ինչպիսին Հայաստանի քաղաքացիները¹: Օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանում աշխատանքային գործունեություն իրականացնելու պայմաններն ամրագրված են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով: Այն սահմանում է դրույթներ օտարերկրացիների աշխատանքային գործունեության առանձնահատկությունների, աշխատանքի թույլտվություն ստանալու կարգի, անօրինական միգրացիայի դեմ պայքարի, աշխատանքի թույլտվությունը կանոնակարգող նորմերի իրականացման նկատմամբ պետական հսկողության և վերահսկողության վերաբերյալ: Դրանցից կարևորվում են հետևյալները.

- օտարերկրացին իրավունք ունի Հայաստանում իրականացնելու աշխատանքային գործունեություն՝ լիազորված մարմնի կողմից օտարերկրացի աշխատողի համար գործատուին տրամադրված աշխատանքի թույլտվության հիման վրա.

- օտարերկրացիների հետ կնքվում են աշխատանքային պայմանագրեր (ծառայությունների մատուցման պայմանագրեր)՝ աշխատանքի թույլտվության վավերականության ժամկետով.

- օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հիմնադիրները, տնօրենները կամ լիազորված ներկայացուցիչները, ինչպես նաև ՀՀ կառավարության սահմանած՝ առանձին մասնագիտություններով բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետները, Հայաստանի ուսումնական հաստատություններում դասախոսություններ կարդալու նպատակով իրավիրված օտարերկրյա ուսումնական հաստատությունների դասախոսները Հայաստանում կարող են աշխատել առանց աշխատանքի թույլտվության²:

Չնայած դեռևս 2006 թ. ընդունված «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով օտարերկրացիների կողմից աշխատանքային գործունեություն ծավալելու համար աշխատանքի թույլտվություն ունենալու նկատմամբ սահմանված պահանջի առկայության՝ այն, ըստ էության, չի կիրառվել համապատասխան ենթաօրենսդրական ակտերի բացակայության պատճառով: Եվ միայն ՀՀ կառավարության 12.05.2016 թ. որոշմամբ սահմանվել է օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու կարգը, որի գործողության ժամկետը, սակայն, տևել է բավական կարճ, քանի որ ՀՀ կառավարության՝ 11.08.2016 թ. և 21.12.2017 թ. որոշումներով աշխատաշուկայի օբյեկտիվ իրավիճակից բխող՝ օտարերկրացիների աշխատանքի թույլտվության համակարգի լիարժեք և արդյունավետ գործարկման համար անհրաժեշտ իրավական հիմքերի ամբողջական ապահովման նպատակով կասեցվել է

¹ ՀՀ աշխատանքային օրենսգիրք (հոդվ. 15, 1-ին կետ):

² «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք (հոդվ. 22, 23, 24 և 27):

նշված կարգի հետագա գործողությունը և սահմանվել, որ օտարերկրացիները մինչև 01.01.2019 թ. Հայաստանում կարող են աշխատել առանց աշխատանքի թույլտվության³:

Բելառուսում աշխատանքային գործունեության իրականացումը, համաձայն «Արտաքին աշխատանքային միգրացիայի մասին» օրենքի⁴, աշխատանքային իմիգրանտների կողմից թույլատրվում է, եթե թափուր աշխատատեղերի զբաղվածությունը չի կարող ապահովվել Բելառուսի քաղաքացիների և Բելառուսում մշտական բնակության իրավունք ունեցող օտարերկրացիների կողմից: Այդ երկրում տասից ավելի օտարերկրացիների աշխատանքի օգտագործման համար գործատուն պարտավոր է ստանալ օտարերկրյա աշխատուժի ներգրավման թույլտվություն: Առանց գործատուի կողմից հատուկ թույլտվության ստացման և աշխատանքային պայմանագրի կնքման՝ աշխատանքային իմիգրանտը չի կարող իրականացնել աշխատանքային գործունեություն: Աշխատանքի թույլտվություն չի պահանջվում միայն այն օտարերկրացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելիս, որոնք բարձր որակավորում ունեցող աշխատողներ կամ ղեկավարներ են այնպիսի առևտրային կազմակերպություններում, որոնց ստեղծման գործում ունեն մասնակցություն (գույքի սեփականատեր, հիմնադիր, մասնակից):

Օտարերկրյա աշխատուժի ներգրավման թույլտվության գործողության ժամկետը կարող է երկարաձգվել ընդամենը մեկ անգամ՝ գործատուի կողմից ներկայացվող հայտարարության հիման վրա: Վերջինիս գործողության ժամկետի ավարտից հետո գործատուն կրկին իրավունք ունի դիմելու համապատասխան մարմիններ՝ աշխատուժի ներգրավման նոր թույլտվություն ստանալու նպատակով: Օտարերկրյա աշխատողի և գործատուի միջև կնքվող աշխատանքային պայմանագրի ժամկետը չի կարող գերազանցել հատուկ թույլտվության գործողության ժամկետը:

Ղազախստանում աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով ժամանող իմիգրանտները բաժանվում են 4 խմբի⁵.

1. *օտարերկրյա աշխատանքային իմիգրանտներ*, որոնց երկիր մուտքի թույլտվությունը տրամադրվում է աշխատանքային պայմանագրի գոր-

³ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թ. մայիսի 12-ի N 493-Ն և N 486-Ն որոշումների գործողությունը կասեցնելու մասին» ՀՀ կառավարության 11.08.2016 թ. N 827-Ն որոշում, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թ. օգոստոսի 11-ի N 827-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 21.12.2017 թ. N 1682-Ն որոշում:

⁴ Բելառուսի Հանրապետության «Արտաքին աշխատանքային միգրացիայի մասին» օրենք (գլուխ 4):

⁵ Ղազախստանի Հանրապետության «Բնակչության միգրացիայի մասին» օրենք (գլուխ 6):

ծողության ժամկետով: Գործատուի կողմից օտարերկրյա աշխատուժի ներգրավումն իրականացվում է թույլտվության հիման վրա՝ Ղազախստանի կառավարության հաստատած քվոտաների շրջանակներում: Այսպես, 2018 թ. աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով Ղազախստանի տարածք աշխատուժի ներգրավման քվոտան կազմում է աշխատուժի ընդհանուր քանակի 0.46%-ը, որի 47.1%-ը բաժին է ընկնում շինարարության ոլորտին (0.2167%)⁶, իսկ 2019 թ. համար այն նախատեսված է 0.54%-ի չափով, որի զգալի մասը՝ 39.7%-ը, կրկին բաժին է ընկնում շինարարության ոլորտին (0.2142%)⁷:

2. *բիզնես իմիգրանտներ*, որոնք ժամանում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով առանց համապատասխան թույլտվության⁸:

3. *սեզոնային օտարերկրյա աշխատանքային իմիգրանտներ*, որոնց ներգրավում է գործատուն սեզոնային այնպիսի աշխատանքներ կատարելու նպատակով, որոնք կլիմայական և այլ բնական պայմանների պատճառով իրականացվում են որոշակի ժամանակահատվածում, սակայն ոչ ավելի, քան մեկ տարվա ընթացքում:

4. *տնային աշխատանքային իմիգրանտներ*, որոնք աշխատանքներ են կատարում (ծառայություններ են մատուցում) տնային տնտեսություններում ֆիզիկական անձ հանդիսացող գործատուների մոտ՝ աշխատանքային իմիգրանտին տրվող թույլտվության հիման վրա: Ի դեպ, գործատուներին թույլատրվում է միաժամանակ կնքել աշխատանքային պայմանագրեր առավելագույնը հինգ տնային աշխատանքային իմիգրանտի հետ:

Ղրղրգստանում աշխատանքային միգրացիայի կարգավորման ժամանակ առաջնային նշանակություն է տրվում աշխատանքի ներքին շուկայի պաշտպանությանը: Ելնելով պետական հետաքրքրություններից և ներքին աշխատաշուկայի վիճակից՝ երկրի կառավարությունը տարեկան կտրվածքով մինչև յուրաքանչյուր տարվա սկիզբը չորս ամիս առաջ սահ-

⁶ Постановление Правительства Республики Казахстан «Об установлении квоты на привлечение иностранной рабочей силы для осуществления трудовой деятельности на территории Республики Казахстан на 2018 год» от 23 декабря 2017 года № 865.

⁷ Проект постановления Правительства Республики Казахстан «Об установлении квоты на привлечение иностранной рабочей силы для осуществления трудовой деятельности на территории Республики Казахстан на 2019 год».

⁸ Постановление Правительства Республики Казахстан «Правила установления квоты на привлечение иностранной рабочей силы в Республику Казахстан и ее распределения между регионами Республики Казахстан, определение лиц, для осуществления трудовой деятельности которых не требуются разрешения местных исполнительных органов на привлечение иностранной рабочей силы, и признании утратившими силу некоторых решений Правительства Республики Казахстан» от 15 декабря 2016 года № 802.

մանում է քվոտաներ աշխատանքային միգրացիայի համար⁹: Այսպես, 2018 թ. համար աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով Ղրղըզստան ժամանող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց առավելագույն թվաքանակը սահմանող աշխատանքային միգրացիայի քվոտան կազմում է 16,490, որից արդյունաբերության, տրանսպորտի, հեռահաղորդակցության և շինարարության ոլորտների մասնաբաժինն է 45.7%, առևտրի, ծառայությունների, հանրային սննդի և այլ տնտեսական գործունեության ոլորտներինը՝ 21.0%, էներգետիկայի, երկրաբանահետազոտական, լեռնահանքային արդյունաբերության ոլորտներինը՝ 19.5%, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և արվեստի ոլորտներինը՝ 10.6%, գյուղատնտեսության և անտառային տնտեսության, վերամշակող արդյունաբերության ոլորտներինը՝ 2.8%, վարկավորման, բանկային և ապահովագրական ոլորտներինը՝ 0.4%¹⁰:

Համաձայն Ղրղըզական Հանրապետության «Արտաքին աշխատանքային միգրացիայի մասին» օրենքի¹¹ Ղրղըզստանում օտարերկրյա քաղաքացիները կարող են աշխատանքային գործունեություն իրականացնել հետևյալ պայմաններով.

- *բարձր որակավորում ունեցող օտարերկրյա մասնագետները* աշխատանքի թույլտվություն են ստանում աշխատանքային միգրացիայի քվոտայի շրջանակներից դուրս մինչև երեք տարի ժամկետով՝ գործատուի դիմումի հիման վրա.

- *օտարերկրյա մասնագետները* աշխատանքի թույլտվություն են ստանում աշխատանքային միգրացիայի քվոտայի շրջանակներում մինչև մեկ տարի ժամկետով՝ գործատուի դիմումի հիման վրա: Նրանց քանակը մեկ տնտեսավարող սուբյեկտի մոտ չպետք է գերազանցի աշխատողների ընդհանուր քանակի 20 տոկոսը: Սահմանված սահմանաչափից ավելի օտարերկրյա աշխատողների ներգրավման համար գործատուն վճարում է սուգանքներ.

- *օտարերկրյա անհատ ձեռնարկատերերը*, սեփական դիմումի համաձայն, աշխատանքի թույլտվություն են ստանում աշխատանքային միգ-

⁹ Ղրղըզական Հանրապետության «Արտաքին միգրացիայի մասին» օրենք (գլուխ 2):

¹⁰ Постановление Правительства Кыргызской Республики от 25 декабря 2013 года N 704 «Об определении квоты на трудовую миграцию, устанавливающую предельную численность иностранных граждан и лиц без гражданства, прибывающих в Кыргызскую Республику в целях осуществления трудовой деятельности, по отраслям экономики и регионам Кыргызской Республики на 2018 год».

¹¹ Ղրղըզական Հանրապետության «Արտաքին աշխատանքային միգրացիայի մասին» օրենք:

րացիայի քվոտայի շրջանակներում մինչև մեկ տարի ժամկետով՝ Ղրղըզստանի հարկային ծառայության մարմնի արտոնագրի հիման վրա:

Ռուսաստանում ևս օտարերկրյա աշխատուժի ներգրավման համար գործատուն և աշխատանքների (ծառայությունների) պատվիրատուն պարտավոր է ստանալ օտարերկրյա աշխատողի ներգրավման և օգտագործման թույլտվություն, իսկ օտարերկրյա քաղաքացին, իր հերթին, Ռուսաստանում աշխատանքային գործունեության իրականացման համար պարտավոր է ձեռք բերել աշխատանքի թույլտվություն կամ արտոնագիր: Աշխատանքային իմիգրանտն իրավունք ունի աշխատելու միայն աշխատանքի թույլտվության և արտոնագրի մեջ նշված տարածաշրջանի սահմաններում և մասնագիտությամբ (աշխատանքային գործունեության տեսակով)՝ գործատուի կամ աշխատանքների (ծառայությունների) պատվիրատուի հետ կնքելով աշխատանքային կամ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) քաղաքացիաիրավական պայմանագիր:

Ռուսաստանում տնտեսավարող սուբյեկտների կողմից տնտեսության տարբեր ճյուղերում օտարերկրյա աշխատանքային միգրանտների ներգրավման թույլատրելի սահմանաչափերը սահմանվում են օտարերկրյա աշխատողների ներգրավման քվոտաների հիման վրա, որոնք, սակայն, չեն տարածվում բարձր որակավորում ունեցող մասնագետների և նրանց ընտանիքի անդամների վրա: Այսպես, Ռուսաստանում 2018 թ. համար օտարերկրյա աշխատողների ներգրավման քվոտան կազմում է 178,454 մարդ, որի հիմնական մասը՝ 32.3%-ը (57,718), բաժին է ընկնում լեռնային, հանքարդյունաբերության, շինարարական-մոնտաժային և վերանորոգման-շինարարական աշխատանքներում զբաղվածներին: 2017 թ. այդ քվոտան կազմել է 177,043 մարդ¹², իսկ 2019 թ. համար նախատեսված է սահմանել 144,583 մարդ¹³, որը 2018 թ. քվոտայից պակաս է 18.9%-ով:

Երրորդ երկրների նկատմամբ միասնական միգրացիոն քաղաքականության կիրառման հնարավորությունները

ԵԱՏՄ անդամ երկրներում միգրացիոն քաղաքականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԵԱՏՄ անդամ բոլոր երկրների աշխատանքային միգրացիայի և այդ երկրների քաղաքացիների՝ ԵԱՏՄ տարածքում աշխատանքային գործունեության ոլորտներում գործող ազգային

¹² Постановление Правительства РФ от 6 декабря 2017 г. № 1479 «Об определении потребности в привлечении иностранных работников, прибывающих в Российскую Федерацию на основании визы, в том числе по приоритетным профессионально-квалификационным группам, и утверждении квот на 2018 год».

¹³ Правительство РФ установило квоты на временное проживание для иностранцев, <https://regnum.ru/news/polit/2521456.html> (18.01.2019):

օրենսդրությունները ամբողջությամբ համապատասխանեցված են «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի դրույթներին և նորմերին¹⁴: Այնուամենայնիվ, ներկայումս ԵԱՏՄ-ում աշխատանքային միգրացիայի կարգավորման շրջանակներում բացակայում է երրորդ երկրներից աշխատանքային իմիգրանտների ներգրավման միասնական մեխանիզմների կիրառումը, որը օտարերկրյա քաղաքացիների համար ստեղծում է խմբավորման անդամ երկրներում աշխատելու՝ երբեմն միմյանցից խիստ տարբերվող հնարավորություններ՝ անբարենպաստ պայմաններ ստեղծելով ԵԱՏՄ տարածքում երրորդ երկրներից ժամանող աշխատանքային իմիգրացիայի անհամաչափ բաշխվածության էլ ավելի խորացման համար: Այս առումով, ԵԱՏՄ անդամ երկրների աշխատանքի ներքին շուկաների հավասարակշռման նպատակով խիստ կարևորվում է երրորդ երկրներից աշխատանքային միգրանտների ներգրավմանն առնչվող օրենսդրության ներդաշնակեցումը, որը մեծ խթան կարող է դառնալ ԵԱՏՄ աշխատանքի միասնական շուկայի գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման համար:

Մինչ օրս երրորդ երկրների աշխատուժի նկատմամբ միասնական քաղաքականության վերաբերյալ դրույթներ սահմանվել են միայն անօրինական աշխատանքային միգրացիայի հակազդեցության ոլորտում համագործակցության մասով՝ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների՝ Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի կողմից 19.11.2010 թ. ընդունված և 02.01.2015 թ.-ից ուժի մեջ մտած՝ «Երրորդ պետություններից անօրինական աշխատանքային միգրացիայի հակազդեցության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի¹⁵ շրջանակներում: Սակայն այդ համաձայնագիրը չի մատնանշում այն հիմնական կարգավորումները, որոնք անհրաժեշտ են անօրինական աշխատանքային միգրացիայի դեմ պայքարն առավել արդյունավետ և համակարգված իրականացնելու համար: Համաձայնագրով նախատեսված չեն նաև այդ գործընթացի իրականացումն ապահովող պետական մարմիններն ու վերջիններիս գործառույթները: Հետևաբար, այդ կարգավորումները պետք է սահմանվեն ԵԱՏՄ երկրների կողմից երրորդ երկրների նկատմամբ աշխատանքային միգրացիայի քաղաքականության շրջանակներում՝ ելնելով վերջինիս նպատակներից ու խնդիրներից:

¹⁴ Трудовая миграция и социальное обеспечение трудящихся в Евразийском экономическом союзе 2017, 22, 25, 31, 34, 37.

¹⁵ Соглашение о сотрудничестве по противодействию нелегальной трудовой миграции из третьих государств, <http://www.eurasiancommission.org/ru/act/finpol/migration/tm/Pages/sogl2.aspx> (18.01.2019).

Եզրակացություններ

Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացները չեն ենթադրում երրորդ երկրների նկատմամբ աշխատանքային իմիգրացիայի միասնական քաղաքականության պարտադիր կիրառում, այնուամենայնիվ, կարծում ենք, որ ԵԱՏՄ-ում այդ քաղաքականության մշակումն ու իրականացումը, որն առավելապես բխում է միության աշխատանքի ընդհանուր շուկայի համաչափ զարգացման հրատապությունից, պայմանավորված է՝

- երրորդ երկրներից անօրինական աշխատանքային միգրացիայի դեմ պայքարի համընդհանուր մեխանիզմների, ինչպես նաև երրորդ երկրներից ժամանած անօրինական միգրանտների՝ հայրենիք վերադարձի գործընթացի կազմակերպման միասնական կանոնների ներդրման անհրաժեշտությամբ.

- աշխատանքային ազգային շուկաների համընդհանուր պաշտպանությամբ և անդամ երկրներում սոցիալական լարվածության կանխարգելմամբ՝ կապված երրորդ երկրներից ցածրորակ և էժան աշխատուժի ներգրավման հետևանքով ԵԱՏՄ-ում աշխատանքի վարձատրության մակարդակի կրճատման հետ, որն էլ, իր հերթին, կարող է հանգեցնել բնակչության կենսամակարդակի նվազմանը.

- երրորդ երկրներից բարձր որակավորում ունեցող աշխատուժի ներգրավման միասնական ստանդարտների սահմանման անհրաժեշտությամբ, որը կնպաստի ԵԱՏՄ անդամ երկրների աշխատանքային շուկաների որակական զարգացման հավասար պայմանների ապահովմանը՝ խթանելով ազգային տնտեսությունների միջազգային մրցունակության մակարդակի բարձրացմանը.

- ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներում երրորդ երկրներից ներգրավված աշխատանքային միգրանտներին տրամադրվող սոցիալական երաշխիքների և դրանց ապահովման գործընթացների համահարթեցմամբ, որը կարող է նվազեցնել ԵԱՏՄ անդամ երկրների միգրացիոն գրավչության մակարդակների միջև առկա տարբերությունները՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով խմբավորման շրջանակներում աշխատուժի ընդհանուր շուկայի համաչափ զարգացմանը:

Գրականություն

Բելառուսի Հանրապետության «Արտաքին աշխատանքային միգրացիայի մասին» օրենք (գլուխ 4):

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թ. մայիսի 12-ի N 493-Ն և N 486-Ն որոշումների գործողությունը կասեցնելու մասին» ՀՀ կառավարության 11.08.2016 թ. N 827-Ն որոշում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թ. օգոստոսի 11-ի N 827-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 21.12.2017 թ. N 1682-Ն որոշում:

ՀՀ աշխատանքային օրենսգիրք (հոդված 15, 1-ին կետ):

Ղազախստանի Հանրապետության «Բնակչության միգրացիայի մասին» օրենք (գլուխ 6):

Ղրղըզական Հանրապետության «Արտաքին միգրացիայի մասին» օրենք (գլուխ 2):

Ղրղըզական Հանրապետության «Արտաքին աշխատանքային միգրացիայի մասին» օրենք:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք (հոդվ. 22, 23, 24 և 27):

Постановление Правительства Кыргызской Республики от 25 декабря 2013 года N 704 «Об определении квоты на трудовую миграцию, устанавливающую предельную численность иностранных граждан и лиц без гражданства, прибывающих в Кыргызскую Республику в целях осуществления трудовой деятельности, по отраслям экономики и регионам Кыргызской Республики на 2018 год».

Постановление Правительства Республики Казахстан «Об установлении квоты на привлечение иностранной рабочей силы для осуществления трудовой деятельности на территории Республики Казахстан на 2018 год» от 23 декабря 2017 года № 865.

Постановление Правительства Республики Казахстан «Правила установления квоты на привлечение иностранной рабочей силы в Республику Казахстан и ее распределение между регионами Республики Казахстан, определение лиц, для осуществления трудовой деятельности которых не требуется разрешения местных исполнительных органов на привлечение иностранной рабочей силы, и признание утратившими силу некоторых решений Правительства Республики Казахстан» от 15 декабря 2016 года № 802.

Постановление Правительства РФ от 6 декабря 2017 г. № 1479 «Об определении потребности в привлечении иностранных работников, прибывающих в Российскую Федерацию на основании визы, в том числе по приоритетным профессионально-квалификационным группам, и утверждении квот на 2018 год».

Проект постановления Правительства Республики Казахстан «Об установлении квоты на привлечение иностранной рабочей силы для осуществления трудовой деятельности на территории Республики Казахстан на 2019 год».

Трудовая миграция и социальное обеспечение трудящихся в Евразийском экономическом союзе 2016, Евразийская экономическая комиссия, сс. 22, 25, 31, 34, 37.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՄԻԳՐԱՅԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Միսակ Ավագյան

Միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման արդի առանձնահատկություններից է աշխատուժի միջազգային միգրացիայի ծավալների ընդլայնումը, որն առավելապես պայմանավորված է գլոբալացման և տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների խորացմամբ և աշխարհի երկրների միջև տնտեսական զարգացման տեմպերի անհամաչափ աճով: Քանի որ վերջին ժամանակաշրջանում աստիճանաբար ավելի են աճում հատկապես ինտեգրացիոն խմբավորումների շրջանակներում աշխատուժի միգրացիոն հոսքերը, ուստի գնալով է՛լ ավելի է մեծանում աշխատանքային միգրացիայի ոլորտում ինչպես այդ խմբավորումների կողմից վերազգային, այնպես էլ խմբավորման անդամ երկրների կողմից ազգային կարգավորման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը:

Բանալի բառեր՝ աշխատանքային միգրացիա, օրենսդրության ներդաշնակեցում, անօրինական միգրացիա, աշխատանքի թույլտվություն, բարձր որակավորում ունեցող աշխատող, իմիգրանտ, աշխատանքի շուկա:

ПРОЦЕССЫ УРЕГУЛИРОВАНИЯ ТРУДОВОЙ ИММИГРАЦИИ В СТРАНАХ-ЧЛЕНАХ ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА

Мисак Авагян

Одной из особенностей развития международных экономических отношений является расширение объемов международной трудовой миграции, что в значительной степени обусловлено углублением процессов глобализации и региональной экономической интеграции, а также непропорциональным ростом темпов экономического развития между странами мира. Поскольку в последнее время постепенное увеличение потоков миграции рабочей силы особенно заметно в рамках интеграционных групп, все более возрастает необходимость совершенствования как наднациональных механизмов регулирования в области трудовой миграции этими группировками, так и национальных механизмов странами-членами группировки.

Ключевые слова – трудовая миграция, гармонизация законодательства, незаконная миграция, разрешение на работу, высококвалифицированный рабочий, иммигрант, рынок труда.

**PROCESSES OF SETTLEMENT OF LABOR IMMIGRATION IN
MEMBERS COUNTRIES OF THE EURASIAN ECONOMIC UNION**

Misak Avagyan

The expansion of the international labor migration's volume is one of the features of the international economic relations development, which is largely due to the deepening processes of globalization and regional economic integration, as well as a disproportionate economic growth among the countries of the world. Since in recent times labor migration flows, especially within integration groups, have gradually increased, there is an increasing need to improve both supranational regulatory mechanisms in the field of labor migration by these groupings and national mechanisms by member countries of the group.

Key words – labor migration, harmonization of legislation, illegal migration, work permit, highly skilled worker, immigrant, labor market.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ՝ ՈՐՊԵՍ ԳԻՏԵԼԻՔԱՇԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՆ

Հայկազ Շահնազարյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտ
ՀՀ, Երևան, Նալբանդյան 128
Էլ. հասցե՝ shhaykaz@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 16.04.2019, գրախոսվել է 15.04.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

Ներկայումս զարգացած և զարգացող երկրների տնտեսությունները հասել են զարգացման մի նոր մակարդակի, որտեղ կապիտալին բնորոշ բոլոր տեսակների մեջ իր ուրույն և, թերևս, ամենակարևոր տեղն է զբաղեցնում մարդկային կապիտալը: Այն ունի որոշիչ դեր ինչպես երկրների մեջ մրցակցային առավելությունների ձեռքբերման, այնպես էլ տնտեսական աճի, որակական չափանիշների ապահովման գործընթացում: Այդ պատճառով էլ ժամանակակից պետությունների տնտեսության զարգացման արդյունավետությունը էապես պայմանավորված է մարդկային կապիտալի զարգացման մակարդակով, որը ոչ միայն ժամանակակից հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր շարժիչ ուժն է, այլև նոր տնտեսության կառուցման հիմքը:

«Մարդկային կապիտալ» եզրույթի ծագումնաբանությունը և էությունը

«Մարդկային կապիտալ» եզրույթը գիտական շրջանակներում սկսել է լայնորեն կիրառվել 1950-ական թթ. վերջերին, երբ լույս տեսավ Յ. Մինսերի «Ներդրումները մարդկային կապիտալում և անձնական եկամուտների բաշխումը»¹ հոդվածը (1958 թ.), թեև այդ խնդրին, դեռևս 1776 թ. իր աշխատության մեջ անդրադարձել էր Ադամ Սմիթը: Կապիտալի չորրորդ բնորոշման մեջ նա նշում էր, որ տաղանդների ձևավորման գործում նրանց կրթությունը, ուսումը կամ վերապատրաստումը պահանջում են մեծ գումարներ, և այդ գումարները պետք է դիտարկել որպես անհատի կապիտալ: Այդ տաղանդները կազմակերպության, ինչպես նաև հասարակության ներուժի մասն են կազմում²: 1961 թ. «մարդկային կապիտալ» եզրույթը գիտական շրջանակներում սկսեց լայնորեն օգտագործել Թեոդոր Շուլցը, որը Արթուր Լյուիսի հետ համատեղ, մարդկային կապիտալի բնագավա-

¹ Jacob Mincer 1958.

² Goldin, Hauptert 2014, 3:

ռում կատարած հետազոտությունների համար 1979 թ. արժանացավ Նոբելյան մրցանակի: Ուսումնասիրելով ԱՄՆ-ի տնտեսության զարգացման ընթացքը, նրանք հանգեցին այն եզրակացության, որ ամերիկյան տնտեսությանն ավելի մեծ եկամուտ է ապահովում ոչ թե նյութական, այլ մարդկային կապիտալը:

Թեև Թ. Շուլցը առաջինն էր, որ կատարել էր խորքային հետազոտություններ մարդկային կապիտալի բնագավառում, այնուամենայնիվ, մարդկային կապիտալի տեսության հիմնադիր է համարվում Գարի Բեկերը: Թ. Շուլցը իր աշխատություններում շեշտը հիմնականում դրել էր ուսումնասիրությունների վրա և ոչ թե փորձել մեկնաբանել ու բնորոշել այդ եզրույթը: Գ. Բեկերը զարգացրեց Թ. Շուլցի գաղափարները և բնորոշեց *մարդկային կապիտալ եզրույթը*: Այսպես, «Տեսական և փորձարարական վերլուծություններ կրթության հատուկ շեշտադրմամբ» աշխատությունում (1964 թ.) Գ. Բեկերը նշում է, որ «մարդկանց մեծամասնության համար «կապիտալ» բառը նույնացվում է բանկային հաշիվների, կազմակերպությունների բաժնետոմսերի, հոսքային գծերի... հետ, որոնք կապիտալի տարատեսակ են այն իմաստով, որ ակտիվներ են, որոնց միջոցով եկամուտ կամ այլ օգտակար արդյունքներ են ստացվում: Սակայն ուսուցումը դպրոցում, վերապատրաստման ծրագրերը, առողջապահությանն ուղղված ծախսերը, ինչպես նաև դասախոսությունները վեհ արժեքների մասին նույնպես հանդիսանում են կապիտալ և կոչվում են «մարդկային կապիտալ», քանի որ մարդիկ չեն կարող առանձնանալ իրենց գիտելիքներից, կարողություններից, հմտություններից կամ այլ արժեքներից այն կերպ, ինչպես կարող են ձեռքազատվել ֆինանսական և ֆիզիկական ակտիվներից»³:

Օքսֆորդի բառարանում մարդկային կապիտալը բնորոշվում է որպես անձի կամ մարդկանց խմբի գիտելիք, փորձ և հմտություններ, որոնք արժեք են համարվում կազմակերպության կամ պետության համար և կարող են օգտագործվել⁴: Այս ամենին, կարծում ենք, կարելի է ավելացնել մարդու ստեղծագործական միտքը, սոցիալական և անհատական հատկանիշները, որոնք ներառում են տնտեսական արժեք ստանալու համար աշխատանք կատարելու ունակությունը:

Մարդկային կապիտալում կատարվող ներդրումները, կրթության համատեքստում

Մարդկային կապիտալի տեսության շրջանակում առանձնահատուկ կարևորություն ունեն դրանում կատարվող ներդրումների և դրանց արդյունավետության հիմնախնդիրները: Գ. Բեկերն իր աշխատությունում

³ <http://www.econlib.org/library/Enc/HumanCapital.html> (18.03.2019):

⁴ <https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/human-capital> (20.03.2019):

հանգել է այն եզրակացության, որ ռացիոնալ անհատները ներդրումներ կկատարեն մասնագիտական կրթության մեջ, եթե ակնկալեն, որ ապագա եկամուտները կգերազանցեն որակավորում կամ հմտություններ ձեռք բերելուն ուղղված ծախսերը: Որպես հիմնավորում՝ Գ. Բեկերը նշում է ԱՄՆ-ում իրականացված ուսումնասիրությունները՝ ուղղված բուհերի և ավագ դպրոցների շրջանավարտների աշխատավարձերի հարաբերակցության բացահայտմանը: Ըստ այդմ՝ ավագ դպրոցների և բուհական կրթությունը էապես մեծացնում է անձի եկամուտները, նույնիսկ կրթությանը հատկացված ուղղակի և անուղղակի ծախսերը զետեղելուց հետո: Բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ գրեթե միշտ վաստակում են միջինից բավական բարձր գումարներ: Այսպես, մինչև 1960-ական թթ. բուհերի շրջանավարտները վաստակում էին 45%-ով ավելի շատ, քան ավագ դպրոցների շրջանավարտները: 1960-ական թթ. այս տարբերությունը հասավ 60%-ի: Հատկանշական է, որ 1970-ական թթ. այս ցուցանիշը իջավ՝ հասնելով 50%-ի շեմին, որը պայմանավորված էր 1975-1976 թթ. տնտեսական ճգնաժամով: Մարդկային կապիտալում տարված ներդրումների հետ վերադարձի կտրուկ անկումը «մարդկային կապիտալ» հայեցակարգին բավական վատ վարկանիշ և հեղինակություն հաղորդեց⁵: Սակայն 1980-ական թթ. բուհական կրթության շնորհիվ ստացվող եկամտաբերությունը էականորեն աճեց՝ հասնելով նախորդ 50 տարվա ընթացքում ամենաբարձր մակարդակին: Համաձայն տնտեսագետներ Քևին Մ. Մրֆիի և Ֆ. Վելչի հաշվարկների, բուհական կրթության շնորհիվ աշխատանքից ստացված հավելյաճը այդ ժամանակահատվածում կազմել է 65%: Կտրուկ աճ էր նկատվում նաև ավագ դպրոցների շրջանավարտների եկամուտներում՝ համեմատած այդպիսի կրթություն չունեցող անհատների եկամուտների հետ⁶: Այս ժամանակներում լույս տեսան մի շարք գիտական աշխատություններ, որոնց հեղինակները փորձում էին ներկայացնել կրթության ներդրումը հարստության ձևավորման գործընթացում: Անհրաժեշտ է առանձնացնել Պ. Նելսոնի, Է. Ֆելպսի, Խ. Ուզավայի և այլոց աշխատությունները, որտեղ առաջարկվում էր տնտեսական աճի ցուցանիշում մարդկային կապիտալի ներդրման, գնահատման և չափման գործիքակազմ:

Ներկայումս զարգացած պետությունները անցում են կատարում զարգացման արդյունաբերական մակարդակից, որտեղ ՀՆԱ-ի գերակշիռ մասը բաժին է ընկնում արդյունաբերությանը, դեպի հետարդյունաբերական մակարդակ, որում սոցիալ-տնտեսական աճը մեծ մասամբ կախված է տեղեկատվական տեխնոլոգիաների, գիտական հետազոտություն-

⁵ <http://www.econlib.org/library/Enc/HumanCapital.html> (18.03.2019):

⁶ <http://www.econlib.org/library/Enc/HumanCapital.html> (18.03.2019):


ների, առողջապահության և կրթության զարգացման մակարդակից: Այս առումով մարդկային կապիտալում կատարվող ներդրումները, այլ տեսակի ներդրումների հետ համեմատած, կարելի է համարել ամենաարդյունավետը, քանի որ մարդկային կապիտալում կատարվող ներդրումները չեն կարող համարվել անվերադարձ կորուստներ: Նույնիսկ պետական մակարդակով կատարվող ծախսերը հանգեցնում են ոչ միայն բնակչության կյանքի որակի բարձրացմանը, այլ նաև պետության սոցիալ-տնտեսական զարգացմանը, իսկ մարդկային կապիտալին ուղղվող ծախսերի կրճատումը՝ երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշների անկմանը: Այն առավել ակնառու դարձավ ԳՏԱ-ի զարգացման աննախադեպ տեմպերի պայմաններում, երբ ի հայտ եկան մեծ քանակությամբ նոր ոլորտներ, որտեղ մշակված նորագույն տեխնոլոգիաները ներթափանցեցին կյանքի բոլոր բնագավառներ և հատկապես աշխատանքային այնպիսի միջավայրեր, որոնց զարգացումը ուղղակիորեն կախված է աշխատանքային գործունեության որակից: Վերլուծելով մարդկային կապիտալին առնչվող ոլորտների զարգացման միտումները, որոնց շարքում առաջնային են կրթությունը և առողջապահությունը, պետք է նշել, որ մինչև XX դ. կեսերը դրանք ինքնուրույն էին զարգանում և օգտագործում ավանդական տեխնոլոգիաներն ու գործունեության դասական մոդելները: Այս ոլորտներում նոր տեխնոլոգիաների ի հայտ գալը հանգեցրեց դրանց աննախադեպ տեմպերով զարգացմանը և փոխկապակցված համալիրի ձևավորմանը՝ միտված աշխատանքի արտադրողականության և մարդկային կապիտալի որակի բարձրացմանը: Այդ համալիրը ստացավ «գիտելիքահենք տնտեսություն» անվանումը: Այսինքն, գիտությունը դարձավ ապրանքի որակի, նորարարության, աշխատանքի արտադրողականության բարձրացման հիմքը: Այս առումով հատկանշական է, որ գիտելիքահենք տնտեսությունը հիմնված է մարդկային կապիտալի վրա, որի որակից է կախված երկրի զարգացման մակարդակը: Զարգացած երկրներում գիտելիքահենք տնտեսության զարգացումը դարձել է սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական գերակայությունը, ուստի խոշոր ներդրումներ են կատարվում մարդկային կապիտալում, մասնավորապես, կրթության ոլորտում: Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կատարած հետազոտության՝ «Կրթությունը մի հայացքից 2018 թ.» 2015 թ. մեկ սովորողին կրթելու համար ամենամեծ գումարները ծախսվել են Լյուքսեմբուրգում, ԱՄՆ-ում, Նորվեգիայում և Ավստրիայում (գծ. 1):

ՏՀԶԿ անդամ երկրները 2015 թ. կրթական հաստատությունների վրա (տարրականից մինչև բարձրագույն մակարդակներ) միջինը ծախսել են իրենց ՀՆԱ-ի 5%-ը, ընդ որում, տարրական և միջնակարգ մակարդակներում ավելի շատ՝ 3.5%, քան բարձրագույն մակարդակում՝ 1.5% (գծ. 2):

Սակայն այստեղ վճռական դեր են խաղում ֆինանսավորման մասնավոր աղբյուրները, որոնք ծածկում են ծախսերի շուրջ 25%-ը, այսինքն՝ ՀՆԱ-ի 0.4%-ը:


Գծանկար 1

Ջարգացած երկրներում մեկ սովորողի կրթելուն ուղղվող տարեկան ծախսերը տարրական, միջնակարգ և բուհական հաստատություններում, 2015 թ. (ԱՄՆ դոլար)⁷



Գծանկար 2

Կրթական հաստատություններին ուղղվող ծախսեր/ՀՆԱ ծավալը՝ ՏՀՀԿ անդամ երկրներում, 2015 թ. (%)⁸



⁷ Գծանկարը կառուցել ենք https://www.oecd-ilibrary.org/education/data/education-at-a-glance/educational-finance-datasets_c4e1b551-en?parent=http%3A%2F%2Finstance.meta-store.ingenta.com%2Fcontent%2Fcollection%2Fedu-data-en հիման վրա (28.03.2019):


⁸ OECD 2018, 258:

Հատկանշական է, որ ՏՀԶԿ անդամ երկրների կրթական հաստատություններում մեկ սովորողին ուղղվող ընդհանուր ծախսերը, տարրականից մինչև բարձրագույն մակարդակ, կազմում են մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի 26%-ը⁹:

2015 թ. ՏՀԶԿ անդամ երկրներում տարրականից մինչև բարձրագույն մակարդակ մեկ երիտասարդ կրթելու համար միջինը ծախսվել է 10,500 ԱՄՆ դոլար, մասնավորապես, 8,600՝ տարրական, 10,000 ԱՄՆ դոլար՝ միջնակարգ և 15,700՝ բուհական մակարդակներում: Այս առումով ամենաշատը ծախսվել է Լյուքսեմբուրգում՝ 22,000 ԱՄՆ դոլար (գծ. 3):

Գծանկար 3

ՏՀԶԿ երկրներում մեկ սովորողին կրթելուն ուղղվող տարեկան ծախսերի միջինացված ցուցանիշը, 2015 թ. (ԱՄՆ դոլար)¹⁰



Ոչ բուհական (տարրական և միջնակարգ) մակարդակում ծախսերի 94%-ը ուղղվում է հիմնական կրթական ծառայություններին (ուսուցման ծախսեր), իսկ մնացած 6%-ը՝ լրացուցիչ ծառայություններին (ուսանողների բարեկեցություն): Միննույն ժամանակ, բուհական մակարդակում ծախսերի 68%-ը բաժին է ընկնում հիմնական կրթական ծառայություններին, 2%-ը՝ լրացուցիչ ծառայություններին, իսկ 30%-ը՝ հետազոտություններին և զարգացմանը: Հետազոտություններին ուղղվող գումարների այսքան մեծ ծավալը պայմանավորված է նրանով, որ կրթությունն ինքնանպատակ չէ: Դրա գլխավոր նպատակը՝ գիտության բնագավառում նոր մոտեցումների բացահայտումը և նորարարության զարգացումն է: Ներկայումս դժվար է

⁹ OECD 2018, 250:

¹⁰ OECD 2018, 246:

պատկերացնել մարդկային կապիտալում կատարվող ներդրումներ, որոնք չեն պարունակում նորարարական տարրեր և, այս տեսանկյունից այն երկրները, որտեղ մարդկային կապիտալը առավել լավ է զարգացած, համարված են նորարարական և նոր տեխնոլոգիաներով: Այսպիսով, մարդկային կապիտալը ուղղակիորեն կապված է նորարարության հետ, իսկ նորարարության հիմքը որակյալ կրթությունն է:

ՀՀ-ում մարդկային կապիտալում կատարվող ներդրումների վերլուծությունը

Այժմ դիտարկենք ՀՀ-ում կրթությանն ուղղվող ծախսերը: Պետական բյուջեից կրթությանն ուղղվող ֆինանսավորումը վերջին 20 տարվա ընթացքում աճել է ավելի քան 6 անգամ: Ընդ որում, ցուցանիշի առավելագույն աճ է արձանագրվել մինչևճգնաժամային ժամանակահատվածում, որին հաջորդող մի քանի տարիներին կրթության բյուջետային ֆինանսավորման բացարձակ ցուցանիշը տատանվել էր 100 մլրդ. դրամի շրջակայքում և միայն 2015 թ. հետո գերազանցեց 120 մլրդ. դրամի շեմը: Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում կրթության մասնաբաժնի առավելագույն մակարդակն արձանագրվել է 2006-2007 թթ.՝ 14.3%, որից հետո ցուցանիշը, տարեցտարի անշեղորեն նվազելով, ի վերջո հանգրվանեց 8-9% տիրույթում: Նշված ցուցանիշը ևս այս միջակայքում է՝ 8.7%:

Գծանկար 4

ՀՀ-ում կրթության բյուջետային ֆինանսավորումը, 1998-2018 թթ.¹¹




Կրթության բյուջետային ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ վերջին տարիներին նվազման ընդգծված միտում է ցուցաբե-

¹¹<http://www.osf.am/wp-content/uploads/2018/03/Education-interim-report-for-post-ing-2.pdf> (04.04.2019):

րում: Վերջին 20 տարվա ընթացքում միայն 2009 թվականին է ցուցանիչը գերազանցել 3%-ի շեմը, որից հետո անշեղորեն նվազելով, տատանվել է 2.4%-ի շրջակայքում (գծ. 5):

Գծանկար 5


Կրթության բյուջետային ֆինանսավորում/ՀՆԱ, %¹²



ՀՀ բյուջեի կրթական ծախսերի կառուցվածքում գերակշռում են միջ-նակարգ ընդհանուր կրթությանն ուղղվող ծախսերը: 2018 թ. բյուջեով այս բաղադրիչի համար ուղղվել է կրթության բյուջետային հասկացումների 42.1%-ը, ընդ որում, այս ցուցանիշի մասով 2008 թ. համեմատ էական փոփոխություն չի արձանագրվել (գծ. 6):

Գծանկար 6

Պետական բյուջեի կրթական ծախսերի կառուցվածքը¹³




¹²<http://www.osf.am/wp-content/uploads/2018/03/Education-interim-report-for-posting-2.pdf> (04.04.2019):

¹³ Գծանկարը կառուցել ենք <http://www.osf.am/wp-content/uploads/2018/03/Education-interim-report-for-posting-2.pdf> -ի հիման վրա (04.04.2019):

« հանրակրթական դպրոցի մեկ սովորողի համար ծախսվող տարեկան գումարի չափը 2010-2018 թթ. ընթացքում նշանակալիորեն փոխվել է միայն 2012-2014թթ.՝ 106,000 դրամից հասնելով 121,000 դրամի, և ներկայում այն կազմում է 124,000 դրամ (գծ. 7):

Գծանկար 7


« հանրակրթական դպրոցի մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը, հազ. դրամ¹⁴



Այսպիսով, Հայաստանում կրթության ուղղվող ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը, առնվազն երկու անգամ քիչ է, քան ՏՀՀԿ երկրներում: Իսկ ինչպես է այն անդրադառնում աշխատաշուկայի վրա (գծ. 8):

Գծանկար 8

Պաշտոնապես գրանցված գործազուրկները՝ ըստ կրթության, 2018 թ. հունիս¹⁵



¹⁴ <http://www.osf.am/wp-content/uploads/2018/03/Education-interim-report-for-posting-2.pdf> (04.04.2019):

¹⁵ Գծանկարը կառուցել ենք « Վիճակագրական կոմիտեի՝ 2018 թ. (էջ 88) տվյալների հիման վրա:

Ելնելով գծանկար 8-ում բերված տվյալներից՝ ՀՀ-ում գրանցված գործազուրկների միայն 13%-ն ունի բարձրագույն կրթություն: Այսինքն՝ Հայաստանում առկա է բարձրագույն կրթության հասանելիության խնդիրը:

Եզրակացություններ

ՀՀ-ում մարդկային կապիտալը կրթության տեսանկյունից ճիշտ չի օգտագործվում. հիմնական պատճառը սակավ ներդրումներն են այս ոլորտում: Անհրաժեշտ է այս ոլորտում ներդրումների ծավալն ավելացնել՝ հասցնելով առնվազն ՀՆԱ-ի նկատմամբ ՏՀԶԿ անդամ երկրների միջին ցուցանիշին՝ 5%-ին: Այն հիմք կդառնա ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության ձևավորման համար:

Գրականություն

- ՀՀ վիճակագրական կոմիտե, 2018 թ., «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-հունիսին», Երևան, 282 էջ:
- C. Goldin, Hupert M. 2014, “Human Capital”, USA, Department of Economics Harvard University and National Bureau of Economic Research, 40 p.
- Mincer J. 1958, Investment in Human Capital and Personal Income Distribution, USA, Journal of Political Economy Vol. 66, No. 4, p. 281-302.
- OECD 2018, “Education at a Glance 2018: OECD Indicators”, Paris, OECD Publishing, 459 p.
- <http://www.econlib.org/library/Enc/HumanCapital.html> (18.03.2019).
- <http://www.osf.am/wp-content/uploads/2018/03/Education-interim-report-for-posting-2.pdf> (04.04.2019).
- https://www.oecd-ilibrary.org/education/data/education-at-a-glance/educational-finance-datasets_c4e1b551-en?parent=http%3A%2F%2Finstance.metastore.ingenta.com%2Fcontent%2Fcollection%2Fedu-data-en (28.03.2019).
- <https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/human-capital> (20.03.2019).

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ՝ ՈՐՊԵՍ ԳԻՏԵԼԻՔԱԿԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՆ

Հայկազ Շահնազարյան

Մարդկային կապիտալը՝ կրթության, գիտելիքների, տաղանդի, ունակությունների, փորձի, ինտելեկտի, հմտությունների, վերապատրաստումների, արժեքների և դատողությունների համախումբն է, որոնցով օժտված են հա-

սարակության անդամները՝ անհատապես կամ խմբով: Այն մարդկանց կարողությունն է և պետության մեծագույն հարստությունը, որը կարող է ուղղվել անհատի, ազգային և պետական նպատակների իրականացմանը, պետության զարգացմանը և բարեկեցության բարձրացմանը: Մարդկային կապիտալի ձևավորումը և զարգացումը պայմանավորող ամենակարևոր գործոններից է կրթությունը, որում կատարվող ներդրումների ծավալից էլ կախված է մարդկային կապիտալի որակը, որի հիման վրա էլ ձևավորվում է գիտելիքահենք տնտեսությունը:

Բանալի բառեր՝ մարդկային կապիտալ, մարդկային կապիտալի էություն, մարդկային կապիտալի զարգացում, ներդրումներ, կրթություն, գիտելիքահենք տնտեսություն, տնտեսական զարգացում:

ЧЕЛОВЕЧЕСКИЙ КАПИТАЛ КАК КЛЮЧЕВОЙ ФАКТОР ФОРМИРОВАНИЯ ЭКОНОМИКИ, БАЗИРУЮЩЕЙСЯ НА ЗНАНИЯХ

Айказ Шахназарян

Человеческий капитал представляет собой совокупность черт – знаний, талантов, навыков, способностей, опыта, интеллекта и т.д., которыми обладают члены общества индивидуально и коллективно. Человеческий капитал может быть направлен на реализацию индивидуальных, национальных и государственных целей, развитие и процветание государства. Одним из важнейших факторов, определяющих формирование и развитие человеческого капитала, является образование, в котором качество человеческого капитала зависит от объема вложенных инвестиций, на основе которых формируется экономика, базирующаяся на знаниях.

Ключевые слова – человеческий капитал, сущность человеческого капитала, развитие человеческого капитала, инвестиции, образование, экономика, основанная на знаниях, экономическое развитие.

HUMAN CAPITAL AS A KEY FACTOR IN THE FORMATION OF A KNOWLEDGE-BASED ECONOMY

Haykaz Shahnazaryan

Human capital is a collection of traits – knowledge, talents, skills, abilities, experience, intelligence, training, judgment, and wisdom possessed by members of society individually or collectively. It is the ability of people and the greatest wealth

of the state that can be directed to the realization of the individual, national and state goals, the state's development and prosperity. One of the most important factors determining the formation and development of human capital is education, in which the quality of human capital depends on the volume of investments made, on the basis of which the knowledge-based economy is formed.

Key words – human capital, human capital essence, human capital development, investment, education, knowledge economy, economic development.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐԸ ԻՐ ՎԵՐՋԻՆ ՄԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կարինե Առաքելյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող
ՀՀ, Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15
Էլ. հասցե՝ karine.arakelyan.2016@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 01.05.2018, գրախոսվել է 29.10.2018, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

Վլադիմիր Բարխուդարյանի անունը քաջ հայտնի ու սիրելի է գիտական հանրությանը: Անվանի պատմաբանը հեղինակ է բազմաթիվ մենագրությունների, գիտական հոդվածների, միջազգային գիտաժողովներում ընթերցված զեկուցումների: Գիտական գործունեությունը նա միշտ զուգակցել է գիտակազմակերպչական և մանկավարժական աշխատանքի հետ: Երկար տարիներ դասավանդել է ԵՊՀ-ում՝ որպես հայ ժողովրդի պատմության ամբիոնի պրոֆեսոր: Հեղինակ է մի շարք դասագրքերի, ուսումնասօժանդակ ձեռնարկների: Եղել է ՀԳԱ ակադեմիկոս-քարտուղար, փոխնախագահ, ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ինչպես նաև Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ: Արժանացել է տարբեր պարգևների, մեդալների, շքանշանների:

Բանասիրական պրպտումները «Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմություն X-XIV դդ.» աշխատության մեջ

«Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմության X-XIV դդ.» գիրքը եղավ Վ. Բարխուդարյանի վերջին մենագրությունը: Չնայած պատկառելի տարիքին, այդ գրքի վրա պատմաբանը աշխատում էր երիտասարդական ավյունով ու ջանասիրությամբ: Այն լույս տեսավ 2016 թվականին և նվիրված է նշված դարաշրջանի հայ մշակույթի պատմությանը, որը պատմական այս փուլում հասել էր զարգացման բարձրագույն աստիճանի: Պատմաբանի մոտեցմամբ դիտարկվում է տնտեսական-քաղաքական կյանքը, ցույց է տրվում կրթության, գիտության, բանասիրության, բնական գիտությունների, արվեստի տարբեր ճյուղերի՝ երաժշտույթ-

յան կերպարվեստի, ճարտարապետության, կիրառական արվեստի և այլն, զարգացման ընթացքը և փոխկապակցվածությունը և հանգում ուշագրավ եզրակացությունների:

Այստեղ հատկապես ուզում ենք անդրադառնալ գրքի բանասիրական ժառանգությանը նվիրված հատվածին, որը լավագույնս է արտահայտում դարաշրջանի ոգին, ժամանակի հայ մարդու աշխարհայացքը, նրան հուզող խնդիրները, գալիքի նրա տեսլականը: Երկրի հոգևոր, քաղաքական ու տնտեսական իրավիճակը նպաստավոր հիմք էր ստեղծում արվեստի և գրականության զարգացման համար: Բնավ պատահական չէ, որ հենց այս ժամանակաշրջանում է ամբողջացել հայ ժողովրդի հերոսական էպոսը՝ «Սասնա ծռերը», իսկ Նարեկա վանքի հռչակավոր վանականը երկնել իր անկրկնելի Մատյանը:

Բարխուդարյանն առանձին ենթագլուխներ է նվիրել այս գլուխգործոցներին՝ մեկ անգամ ևս փաստելով դրանց անսահման կարևորությունը մեր ազգային կյանքում:

Հայ ժողովրդական դյուցազնավեպի ակունքները հասնում են մինչև Քրիստոսից առաջ VIII դար: Այս մասին է վկայում Աստվածաշունչը Եսայի մարգարեի գրքում. «Եւ դարձաւ անդրէն՝ գնաց Սենեքերիմ արքայն Ասորեստանեայց, և բնակեաց ի Նինուէ: Եւ մինչդեռ երկիր պագանէր ի տան իւրում Նասրաքայ կոոց իւրոոց, Ադրամելէք եւ Սարասար որդիք նոր սպանին գնա սրով, եւ ինքեանք գնային փախստական ի Հայս»¹:

Էպոսը վերջնական ձևավորման է հասել զարգացած միջնադարում՝ IX դարում, երբ հայ ժողովուրդը հերոսական պայքար էր մղում արաբ զավթիչների դեմ: Սակայն, ինչպես նշում է հեղինակը, այն ներառել է անցյալը «սկսած Հայկի և Բելի պայքարից, այսինքն՝ հայ ժողովրդի առաջացման, բռնակալ իշխանությունների դեմ պայքարի ժամանակաշրջանից... Հայկական էպոսը հայ ժողովրդի ամբողջ պատմական խտացումն է հնագույն ժամանակաշրջանից սկսած մինչև զարգացած միջնադարը ներառյալ»²: Ինչպես նաև «Հայկական էպոսը հայ ժողովրդի դարավոր ազատագրական պայքարի գեղարվեստական ընդհանրացումն է: Այնքան, որքան այդ պայքարը եղել է շարունակական, հայկական պատմավեպն էլ մշտապես նորացվել, համալրվել է և մնացել թարմ ու կենդանի» (37):

Քաջատեղյակ լինելով հայկական էպոսի և էպոսագիտության մասին հայ և օտարալեզու գրականությանը, ինչպես նաև այլ ժողովուրդների ասքերին՝ Բարխուդարյանն անում է ուշագրավ համեմատություններ ու եզրակացություններ: Նախ, որ բոլոր ծանոթ էպոսներն առաջացել են «հասուն

¹ Աստուածաշունչ մատեն 1997, 744:

² Բարխուդարյան 2016, 26-27: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ:

ավատատիրության նույն դարաշրջանում. ֆիննական «Կալեվալա», ղրղզական «Մանաս» էպոսները ձևավորվել են IX-X դարերում, «Երգ Ռոլանդի մասին» ֆրանսիականը՝ X-XII դդ., իսպանական «Երգ իմ Սիդի մասին» և ռուսական «Ասք Իգորի գնդի մասին»՝ XII դարում, իսկ գերմանական Նիբելունգների երգը՝ XIII դարի սկզբին և այլն» (25): Ունենալով բազմաթիվ ընդհանրություններ՝ բոլորն էլ ավարտվում են արդարության, բարության հաղթանակով: Սակայն կան նաև ակնառու տարբերություններ, որոնք չեն վրիպել հեղինակի աչքից: Առաջինը՝ մեր դյուցազնավեպում չափազանց բարձր է գնահատվում արդար, ստեղծագործ աշխատանքը՝ որպես կյանքի շարունակականության միակ ընդունելի միջոց և աղբյուր: Չափազանց բարձր են գնահատվում ժամանակի ընթացքում ձևավորված ազգային ավանդույթների ամուր պահպանումը և ապագա սերունդներին փոխանցումը: «Սասունցի Դավիթ» էպոսի հերոսները թշնամու դեմ մենակ են կռվում, իսկ այլ էպոսների հերոսները՝ զորքով:

Մեր էպոսում տեղ չունի դավաճանությունը, կա անսահման հարգանք կնոջ նկատմամբ: Մեր էպոսի հերոսները դուրս են եկել ժողովրդի ծոցից, միշտ եղել ժողովրդի կողքին, նրա մի մասնիկը: Ժողովրդականության մի կարևոր հատկանիշ էլ համարվել է էպոսի լեզուն: Եթե մյուս ժողովուրդների ասքերը հիմնականում պատմական որևէ իրադարձության արտացոլումն են, ապա ինչպես նշում է Վ. Բարխուդարյանը. «Պատմության հոլովույթում օտարերկրյա հզոր ուժերը հաճախ ավերել են երկիրը, ոչնչացրել պատմական հուշարձանները, հոգևոր և աշխարհիկ շինությունները, բայց չեն կարողացել ընկճել հայ ժողովրդի ազատության ձգտող կենդանի ոգին: Սա է «Սասունցի Դավիթ» էպոսի հիմնական գաղափարը, նրա էությունը» (38):

Զարգացած միջնադարում հայ ժողովրդի մյուս մեծագույն ձեռքբերումը Սուրբ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունն է, որին ևս բավական հանգամանալից անդրադարձել է հեղինակը: Ժամանակի ընձեռած հնարավորություններից զատ՝ Բարխուդարյանն ուշադրություն է հրավիրում այն միջավայրի վրա, որտեղ ծնվել և հասակ է առել մեծ բանաստեղծը՝ Նարեկացու ընտանիքի վրա, որի բոլոր անդամներն անմնացորդ նվիրված էին մայր եկեղեցու և հայրենիքի պայծառացման սրբազան առաքելությանը: Դրան մեծ չափով նպաստում էին Նարեկավանքը (կառուցված 930-ական թթ.) և այնտեղ գործող դպրոցը: Այն ուներ գրադարան-մատենադարան և հարմարավետ պայմաններ ստեղծագործական կյանքի համար: Հեղինակն անդրադառնում է Նարեկյան դպրոցի երեք նշանավոր ներկայացուցիչների՝ Խոսրով Անձևացու, Անանիա և Գրիգոր Նարեկացիների գրական ժառանգությանը:

Գրիգոր Նարեկացու հայրը՝ Խոսրով Անձևացին, եղել է ժամանակի եկեղեցական խոշորագույն գործիչներից մեկը, թողել է գրական հարուստ ժառանգություն, հատկապես հայտնի է նրա «Մեկնութիւն ժամանակագրութեան» երկը, որտեղ հեղինակը փորձում է բացատրել, ժողովրդին մատչելի դարձնել արարողությունների, աղոթքների, սաղմոսների ներքին իմաստը: Անձևացին չափազանց նախանձախնդիր էր հոգևոր ավանդույթների պահպանման հարցում և խիստ ցավոտ էր արձագանքում հասարակությունից, նաև եկեղեցուց ներթափանցած տարբեր ախտերի՝ անտարբերությանը, տգիտությանը, գեղձարարությանը, անիրավություններին, կաշառակերությանը և այլնին՝ հորդորելով սթափության: Հրաշյա Թամրազյանը նկատում էր, որ «նա փորձում է վերականգնել հայ եկեղեցու խաթարված կարգերն ու ավանդույթը և դեմ է օտարասիրության և օտարադավանության ամեն դրսևորման: Այս առումով ընդգծում է մի չափազանց կարևոր միտք՝ հայոց եկեղեցու, կրոնի և հավատքի պահպանության հիմքերը հայոց լեզուն և գիրն են, հայ քրիստոնյա գոյություն չունի իր լեզվի և գրի սահմանից անդին»³:

Ինչպես նշում էր ինքը՝ Խոսրով Անձևացին. «Զի հաւ, որ յերուսաղեմէ ելանէ՝ մոլորական շրջի եւ քար, որ ի կարգէն ոստնու՝ յայլում վայրի գտեղի ոչ առնու: Այնպիսի պարտ է իմանալ, որք սակս մարմնոյ հեշտութեան ի փոխումն յօժարին, թէ ի մէնջ հեռանան՝ եւ ընդ այլ քրիստոնեայս ոչ դասին, զի Աստուած պահանջէ ի մարդոյ զհաւատ, զոր յաւազանէն էառ, թէպէտ մի՛ Քրիստոս, մի՛ Տէր և մի՛ մկրտութիւն, այլ ըստ սահմանի լեզուին եւ գրոյն զպահպանութիւն կարգին պահանջէ»⁴:

Նարեկյան դպրոցի երկրորդ ականավոր ներկայացուցիչը Անանիա Նարեկացին է: Նա հեղինակ է բազմաթիվ խրատական աշխատությունների, որոնք լայն տարածում էին ստացել: Այստեղ առատ նյութ կա վանական կենցաղավարության, բարոյագիտական միաստիկայի և այլ հարցերի մասին, իսկ հիմնականը մարդու ինքնամաքման, փրկության խնդիրն է: Ա. Նարեկացին քաղկեդոնական ուսմունքի դեմ մաքառող նշանավոր տեսաբաններից է և այդ առնչությամբ է գրել իր «Հաւատարմատն» երկը: Հայտնի է նաև նրա «Հակաճառութիւն ընդդէմ թոնդրակեցոց» աշխատությունը, որը ևս գիտական լայն համարում ուներ:

Նարեկյան դպրոցի երրորդ և ամենանշանավոր ներկայացուցիչը Սուրբ Գրիգոր Նարեկացին է: «Հոգեմտավոր սնունդ ստանալով Նարեկյան դպրոցի պարարտ միջավայրում, Գրիգոր Նարեկացին հուժկու թռիչքով հետևում թողեց այդ դպրոցը և ստեղծեց դարակազմիկ արժեքներ: Նրանից

³ Թամրազյան 1999, 22:

⁴ Խոսրով Անձևացի 1840, 43:

մեզ են հասել գանձեր, տաղեր, մեկնություններ, ներբողներ և «Մատյան ողբերգության» ստեղծագործությունը» (43):

Նարեկացու դեպքում ևս Բարխուդարյանը քաջածանոթ է ոչ միայն նրա ստեղծագործությանը, այլև նրան նվիրված գիտական բազմաթիվ աշխատությունների: Տեղի սղության պատճառով Նարեկացու գրական ժառանգությունը նա ներկայացնում է թեև համեմատաբար սեղմ, բայց համակողմանի: Նարեկացու՝ հայ քնարերգությանը նոր շունչ հաղորդած տաղերին հեղինակն անդրադառնում է նաև երաժշտության բաժնում՝ նշելով. «Երաժշտության բնագավառում X-XI դարերում կատարվող խոշոր տեղաշարժերը կապվում են Գրիգոր Նարեկացու անվան հետ: Այս շրջանում վերելք ապրող տաղերի արվեստը խթանում էր երգարվեստի մյուս ճյուղերի՝ շարականների վերստեղծմանը: Գր. Նարեկացին մեծ է նաև երաժշտության մեջ, նա այս բնագավառում ևս նվիրական անուններից է: Պատահական չէ, որ «Մատյան ողբերգության» մի շարք հատվածներ անցել են Մաշտոցների ժամերգության ու պատարագի արարողության մեջ՝ որպես աղոթքներ կամ մաղթանքներ: Աշխատության առանձին հատվածներ երգվել են» (151-152):

Նարեկացու անկապտելի փառքը իր «Մատյան ողբերգության» պոեմն է կամ Աղոթամատյանը, որի գերագույն նպատակը մարդկային հոգու փրկությունն է: Աղոթքով, ապաշխարությամբ, մեղքերից մաքրվելով մարդն ի զորու է հասնելու կատարելության և ծուլվելու Աստծո հետ: Այս ճանապարհը, սակայն, շատ է դժվարին, բայց ոչ անհնարին, համաձայն Քրիստոսի խոսքի, թե «Արդ եղերուք դուք կատարեալք, որպես եւ Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»⁵:

Կատարելության հասնելու ճանապարհն ընթանում է բազմաթիվ խոչ ու խութերով, որոնց հաղթահարման համար Նարեկացու քնարական հերոսը դիմում է ինքնախարազանման, Տիրամոր, հրեշտակների և սրբերի բարեխոսությանը և, իհարկե, Աստծո անսահման ողորմածությանն ու գթությանը: «Բանաստեղծն իր տաղանդի ուժով ընկալում է բոլոր քրիստոնյաների ցավերն ու երազանքները: Նա իր անձնականի միջոցով ի հայտ է բերում օրինաչափություններ, արտահայտում համամարդկային երևույթներ... «Մատյանը» հավերժական արժեք ունեցող գործ է՝ գրված բոլոր քրիստոնյաների, գալիք սերունդների, համայն մարդկության համար» (49): Այս ամենով հանդերձ՝ «նա այնքան առատորեն է օգտագործում ժողովրդական բանահյուսությունը, որ պոեմը լիովին դառնում է ազգային» (47):

Բարխուդարյանը հիշում է նաև բազմաթիվ գիտնականների, որոնք իրենց աշխատություններում անդրադարձել են կամ աշխատություններ են

⁵ Աստուածաշունչ մատենան, Նոր Կտակարան 1997, 5:

նվիրել Նարեկացու ստեղծագործությանը. Հրանտ Թամրազյան, Հրաչյա Թամրազյան, Պողոս Խաչատրյան, Մկրտիչ Մկրյան, Արշակ Չոպանյան, Մարտիրոս Սարյան, Ժենյա Քալանթարյան, Հովհաննես Թումանյան, Ս. Ավերինցև, Վ. Ռոգով, Միխայիլ Դուդին, Լև Օզերով, Ժան Պիեռ Մահե և այլն: Ի մասնավորի՝ նա նշում է մի ուշագրավ փաստ, այն, որ օտարազգի հետազոտողների տեսակետները լիովին համահունչ են հայ մասնագետների տեսակետներին:

Սուրբ Գրիգոր Նարեկացու ազդեցությունը հայ քնարերգության և գրականության վրա առհասարակ եղել է վիթխարի, ինչպես իր ժամանակին՝ միջնադարում, այնպես էլ հետագա դարերում՝ մինչև նոր ու նորագույն շրջան: Սակայն, ինչպես նշում էր անվանի գրականագետ Պողոս Խաչատրյանը, «Գրիգոր Նարեկացու գնահատումը, նրա ստեղծագործության առաջին իսկական արժեքավորումը կատարվեց Մեծ Հայքից դուրս, Կիլիկյան Հայաստանում, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի և Ներսես Լամբրոնացու միջավայրում, 12-րդ դարում և հետագայում: Առաջին երկուսը՝ Շնորհալին և Գրիգոր Տղան, նկատելիորեն կրում են Նարեկացու գրական ազդեցությունը, իսկ Լամբրոնացին, բացի այդ, բանաստեղծի հետ առնչվում է նաև նրանով, որ իր Պատարագի մեկնության մեջ քննության առարկա է դարձել «Ողբերգության մատյանի» ԼԳ գլխի երեք հատված»⁶:

Իսկ Հրաչյա Թամրազյանը գրում էր. «Նարեկյան դպրոցի ստեղծած միստիկ բարոյագիտության և հոգևոր կենցաղավարության ներքին կանոնները և սկզբունքները նրա նշանավոր գործիչների միջոցով տարածվում էին ժամանակի վանական միջավայրում և բավական կենսունակ էին նաև հետագա դարերում... Նրանք մուտք են գործում նաև Կիլիկիայի վանական միջավայր՝ տալով նաև իրենց տեսաբաններին, որոնցից նշանավորներն էին Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան և Ներսես Լամբրոնացին»⁷:

Ներսես Լամբրոնացին աշակերտել է Ներսես Շնորհալուն և Գրիգոր Տղային: Գրել է բանաստեղծություններ, արձակ, մեկնություններ, կատարել թարգմանություններ, զբաղվել մանկավարժությամբ: Նա գրել է «Գովեստ ներբողականը»՝ նվիրված Շնորհալու կյանքին ու գործունեությանը, որտեղ հատկապես հանգամանորեն անդրադարձել է «Ողբ Եդեսիոյ» պոեմին:

Գրիգոր Տղան եղել է օժտված հասարակական գործիչ, բանասեր, տարաբնույթ տաղերի հեղինակ: Նրա ստեղծագործություններն աչքի են ընկել խոհափիլիսոփայական ուղղվածությամբ:

Ինչպես նշում է հեղինակը, «Ներսես Շնորհալու (1100-1173) վրա Գրիգոր Նարեկացու ազդեցությունը որոշակի է: Նա ձգտել է պահպանել Նարեկացուց սկիզբ առած, նրանից եկող բանաստեղծության հիմնական

⁶ Խաչատրյան 1996, 160:

⁷ Թամրազյան 2007, 65:

հատկանիշները: Սակայն նա ոչ միայն յուրացրել է Նարեկացու ավանդները, այլև մշակել ու հարստացրել: Նրանց ընդհանրության հիմքում ընկած է համանման աշխարհընկալումը: Բանաստեղծությունը, ըստ նրանց, այնպիսի ստեղծագործություն է, որով մարդը հարաբերվում է Աստծո հետ... Նա բազմաժանր ստեղծագործող էր, բացի կոթողային «Յիսուս Որդի» և «Ողբ Եղեսիոյ» աշխատություններից, գրեց բազում շարականներ, տաղեր, գանձեր, երգեր: Նրա ժողովրդական բառ ու բանով գրված հարյուրավոր հանելուկներն արտացոլում էին առօրյա կյանքի երևույթները... Դժվար է պատկերացում կազմել մեր հոգևոր երգերի կարևոր մի բնագավառի՝ շարականների մասին՝ առանց Շնորհալու ստեղծագործություններին անդրադառնալու: Շարականների նյութը նա վերցրել է ոչ միայն Կտակարաններից, այլև հայ իրականությունից, իրական կյանքից... Նա հայրենասիրական մեծ պաթոսով ու ջերմ զգացումով երգեր է ձոնել Գրիգոր Լուսավորչի ու Սահակ Պարթևի, Տրդատ թագավորի, Վարդանանց ու Ղևոնդյանց հիշատակներին» (55-56):

Բարխուդարյանն անդրադառնում է նաև միջնադարում լայն տարածում ստացած գրական ժանրերին՝ հայրեններին, կաֆաներին, գուսանական երգերին, զրույցներին, առակներին և այլն: Առակագրության ասպարեզում մասնավորապես մեծ է Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու ավանդը, որոնք չափազանց կարևոր էին համարում պայքարը խարդախությունների, շահամոլության, ամեն տեսակ անարդարությունների դեմ, անխնա խարազանում էին ընչաքաղցությունը, ուժ գործադրելը, կաշառակերությունը, բարոյական անկումը՝ գովերգելով ազնիվ ու ստեղծագործ աշխատանքը, արդարությունը:

Փոփոխությունների էր ենթարկվում նաև հայոց լեզուն: «X դարից սկսած ծնունդ է առնում միջին հայերենը: Կիլիկիայում պետական լեզու դարձած միջին հայերենը գրաբարից լրիվ չէր առանձնացել, սակայն ավելի մատչելի էր ու համապատասխանում էր ժամանակի պահանջներին: Միջնադարի գործիչները ձգտում էին գրել ժողովրդական լեզվով, որ հասկանալի լինի բոլորին» (60):

Այս հեղինակը խոսում է միջնադարի հայ տաղերգուների մասին՝ Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների, Հովհաննես Թլկուրանցու, Ֆրիկի և այլոց: «Հ. Երզնկացին, բազմաբնույթ ու ծանրակշիռ գիտելիքների տեր լինելով հանդերձ, անվանի ու մեծ է որպես բանաստեղծ՝ տաղերի, շարականների, ողբերի, մեղեդիների հեղինակ: Նրա ստեղծագործությունների մեջ գերակշռում են խոհախրատական բանաստեղծությունները... Հ. Երզնկացին նաև նշանավոր մանկավարժ էր: Երեխայի դաստիարակությունը ճիշտ կազմակերպելու համար մշակել էր հատուկ մեթոդներ, որոն-

ցում նկատի էր առել մանուկ հասակի հետ կապված հոգեբանական առանձնահատկությունները» (62):

Երզնկացին ունի քերականության մասին նշանակալի մեկնություններ: Այդ մասին է գրում ակադեմիկոս Գևորգ Զահուկյանը. «Երզնկացին ի մի է հավաքել և ճարտար կերպով ամբողջացրել քերականների նախորդ սերունդների կատարած աշխատանքը՝ փոխարինելով դպրոցական գործում մինչև այդ լայն հեղինակություն վայելող Մագիստրոսի կոմպիլյացիան մի նոր աշխատությամբ, որը դրվեց հետագա ուսուցման հիմքում: Այս աշխատության մասսայականության մասին են վկայում մեզ հասած բազմաթիվ ձեռագրերը»⁸:

Հովհաննես Պլուզից հետո Բարխուդարյանն անդրադառնում է նրան հաջորդող հայրենակցի՝ Կոստանդին Երզնկացու ստեղծագործությանը: Վերջինի քնարերգության մեջ տիրապետող էին մարդն ու բնությունը իրենց ողջ գեղեցկությամբ: Բավական է հիշել Վալերի Բոյուսովի արտահայտած կարծիքը գարնան զարթոնքին նվիրված տաղի վերաբերյալ. «По стилю по энергии стиха и языка поэма сделала бы честь любой литературе Западной Европы того века, и Европе даже нечего было ей противопоставить»⁹:

Այնուհետև հեղինակը խոսում է մեկ այլ անվանի բանաստեղծի՝ Ֆրիկի ստեղծագործության մասին: Հիշատակում է նաև հասուն միջնադարի գրական կյանքի այլ հայտնի գործիչների՝ Մխիթար Այրիվանեցի, Խաչատուր Կեչառեցի, Առաքել Բաղիշեցի և ուրիշներ, որոնք իրենց նպաստն են բերել հայ գրականության զարգացման գործում:

Եզրակացություններ

Վլադիմիր Բարխուդարյանն իր երկրային կյանքի մայրամուտին ընթերցողի սեղանին է դրել անչափ կարևոր մի մենագրություն, որում լավագույնս է ներկայացրել զարգացած միջնադարի շրջանը, նրա ոգին և այդ ոգու ամենավառ արտահայտիչը՝ մշակույթը, որպես ժողովրդի հոգեմտավոր կարողությունների դրսևորման լավագույն ձև: Գրքի կարևորությունն ընդգծվում է նաև նրանով, որ այն ընդգրկում է քննության առնված նյութի շատ լայն շրջանակ և կարող է օգտակար լինել ոչ միայն պատմաբանների, այլև բանասերների, մանկավարժների, տնտեսագետների, բնագետների, արվեստաբանների և այլ մասնագիտությունների տեր մարդկանց համար՝ հիմք դառնալով նոր ուսումնասիրությունների ու հետազոտությունների: Գիրքը, որը հեղինակն իրեն հատուկ համեստությամբ անվանել է «Ուրվագիծ...»:

⁸ Զահուկյան 1958, 260:

⁹ Брюсов 1916, 50.

Գրականություն

- Աստուածաշունչ մատենան 1997, Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, տպ. Մեծ Բրիտանիայում, 1450 էջ:
- Բարխուդարյան Վ. 2016, Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմության X-XIV դդ., Երևան, «Գիտություն», 232 էջ:
- Թամրազյան Հ. 2007, Գրիգոր Նարեկացին և Կիլիկիայի բանաստեղծական արվեստի դպրոց, Երևան, «Նաիրի», 202 էջ:
- Թամրազյան Հ. 1999, Նարեկյան դպրոցը, Երևան, «Հայաստան», 233 էջ:
- Խաչատրյան Պ. 1996, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 396 էջ:
- Խոսրով Անձեազի 1840, Մեկնություն ժամանակագրության, Օրթագիտ, Կ. Պոլիս, տպ. «Երից որդոց Պողոսի Արապեան Ապուչեխեցոյ», 259 էջ:
- Ջահուկյան Գ. 1954, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, ԵՊՀ հրատ., 396 էջ:
- Брюсов В. 1916, Поэзия Армении, Москва, изд. «Моск. Арм. Ком.», 528 с.

ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐԸ ԻՐ ՎԵՐՋԻՆ ՄԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կարինե Առաքելյան

2016 թվականին ականավոր պատմաբան, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը ընթերցողի սեղանին դրեց իր վերջին մենագրությունը՝ «Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմության X-XIV դդ.»՝ նվիրված նշված դարաշրջանի հայ մշակույթի պատմությանը, որը զարգացած միջնադարի շրջանում բուռն վերելք էր ապրում՝ հասնելով զարգացման բարձրագույն աստիճանի: Հատկապես գրքի բանասիրական ժառանգությանը նվիրված հատվածը լավագույնս է արտահայտում դարաշրջանի ոգին, երբ գրական ստեղծագործությունների հիմնական թեմաները դարձան սերը, գեղեցկությունը, հայ ժողովրդի հոգևոր կյանքը, ազատությունը, արդարությունը, արժանապատվությունը, աշխատանքի գովերգումը, մարդասիրությունը և այլն:

Բանալի բառեր՝ Աստվածաշունչ մատյան, Նարեկ, ժողովրդական էպոս, կրթություն, գիտություն, արվեստ, բանասիրություն:

ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИЗЫСКАНИЯ ИЗВЕСТНОГО ИСТОРИКА В ЕГО ПОСЛЕДНЕЙ МОНОГРАФИИ

Карине Аракелян

В 2016 году известный историк, академик Владимир Бархударян издал свою последнюю монографию «Очерк истории средневековой ар-

мянской культуры X-XIV вв.», посвященную истории армянской культуры периода развитого средневековья. Особый интерес представляет раздел монографии, рассматривающий филологическое наследие этого исторического отрезка, наилучшим образом олицетворяющее образ эпохи и постулирующее гуманистические идеалы – духовность, свободу, справедливость, человеколюбие и т.д.

Ключевые слова – Библия, Нарекаци, народный эпос, образование, наука, искусство, филология.

THE PHILOLOGICAL SEARCHES OF A WELL-KNOWN HISTORIAN IN THE FRAMES OF HIS LAST MONOGRAP

Karine Arakelyan

In the evening of his earthly life, in 2016 the well-known historian Academician Vladimir Barkhodashyan put on the readers' table his last study: "The Essay of the Armenian Cultural History of Middle Ages in X-XIV centuries", which is devoted to the history of Armenian culture in the above-mentioned period experiencing rapid flourishing in all its spheres and having achieved the highest level of its development. The article particularly analyses the part of the book, which is devoted to the philological legacy, which embodies the best spirit of the age, when themes of love, beauty, spiritual life of the Armenian people, freedom, justice, dignity, labour praising, humaneness, etc. underlay the literary works.

Key words – Bible, Narek, national epic, education, science, art, philology.

ՀԵՔԻԱԹԻ ԺԱՆՐԱԿԱԶՄԻՉ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձարուի Ազիզբեկյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
Երևանի պետական համալսարան, Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1, 0025
Էլ. հասցե՝ zaruhiazizbekyan@ysu.am
Հոդվածը ներկայացվել է 30.01.2020, գրախոսվել է 11.02.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենատարածված և ամենահարուստ ժանրերից է: Որպես բանահյուսության կարևոր ժանր՝ հեքիաթն առաջին հերթին ընկալվում է որպես տեքստ՝ կայուն կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկություններով, ուրույն պատկերային համակարգով: Որպես մարդու հոգևոր գործունեության ու աշխարհընկալման առանձնահատուկ ձև՝ այն կապված է ծեսերի, կրոնական պատկերացումների և մտածողության արքետիպերի հետ, որն էլ ավելի է ընդլայնում հեքիաթի ընկալման ու մեկնաբանման սահմանները: Հեքիաթներն արտահայտում են ժողովրդի աշխարհայացքը, իդեալներն ու գաղափարները, լավագույն ձգտումները: Հեքիաթը, որն օժտված է ճկուն թեմատիկ ընդհանրությամբ՝ պայմանավորված տարբեր ժողովուրդների կյանքի պատմամշակութային պայմաններով, ոչ միայն մի ազգի, այլև ողջ մարդկության սեփականությունն է: Տարբեր ժողովուրդների հեքիաթները զարմացնում են բովանդակության և լեզվի յուրահատկությամբ, միաժամանակ՝ ապշեցուցիչ նմանությամբ: Յուրաքանչյուր ժողովրդի բանահյուսության մեջ կարելի է գտնել ինչպես ընդհանուր, այնպես էլ միմիայն իրեն բնորոշ գծեր: Այդ առումով՝ հեքիաթը ուսումնասիրողների համար հարուստ և բազմազան նյութ է, որը ցույց է տալիս տարբեր ժողովուրդների բանահյուսությունների զարմանալի նմանությունները և նույնիսկ համընկնումները: Այս կամ այն համընդհանուր սյուժեն կամ կերպարը հավասարապես պատկանում է տարբեր ժողովուրդների, որոնց բանահյուսության մեջ այն ձեռք է բերել ազգային յուրահատուկ գծեր: Հեքիաթների միջոցով արտահայտվում են սոցիալական, բարոյախոսական բազմաթիվ կարևոր գաղափարներ ու մտքեր, որոնք հասարակական-ճանաչողական ու դաստիարակչական արժեք ունեն ոչ միայն մանուկների, այլև տարբեր հասակի ու խավի մարդկանց համար: Հ. Թումանյանի հանճարեղ խոսքով ասած. «Հեքիաթի մասին ոչ միայն մեր «երջանիկ» աշխարհում, այլ ավելի լավ

երկրներում դեռ պարզ հասկացողություն չունեն: Կարծում են դա հեշտ ու հանաք բան է: Դա գրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են»¹:

Սույն հոդվածում փորձ է արվում վեր հանել հեքիաթի լեզվի և ոճի ժանրակազմիչ առանձնահատկությունները՝ առավելապես հիմնվելով իսպանական ժողովրդական հեքիաթների փաստական նյութի վրա:

Հեքիաթի ժանրակազմիչ որոշ առանձնահատկություններ

Հեքիաթի նկատմամբ հետաքրքրությունը սկիզբ է առել դեռևս ռոմանտիզմի շրջանում, երբ առասպելներն սկսեցին ընկալվել իրենց խորհրդանշական իմաստներով: Մինչ այդ ժողովրդական հնագույն ստեղծագործությունները մեկնաբանվում էին որպես այլաբանական պատմություններ: Առասպելաբանական պատկերները ռոմանտիկներին ու սիմվոլիստներին օգնում են ստեղծել հրաշալիի, խորհրդավորի մթնոլորտ, որն էլ հակադրվում է գորշ իրականությանը:

Ինչպես հայտնի է, ժողովրդական բանահյուսության նյութերը մշակելու և ըստ արժանվույն ուսումնասիրելու հարցով առաջին անգամ լրջորեն զբաղվել են Գրիմ եղբայրները՝ հատկապես ականավոր գիտնական Յակոբ Գրիմը, XIX դարի սկզբներին: Նրանք, լինելով առասպելաբանական դպրոցի ներկայացուցիչներ, գտնում էին, որ հեքիաթը սկիզբ է առել առասպելից, և այն, ինչ այսօր կոչվում է հեքիաթ, հնագույն ժամանակներում եղել է առասպել: Գրիմ եղբայրները հավաքում և հետազոտում են ժողովրդի բանահյուսական գանձերը՝ մասնավորապես հեքիաթներն ու ավանդությունները, և, մշակելով դրանք, լույս են ընծայում «Մանկական ընտանեկան հեքիաթներ» և «Գերմանական ավանդություններ» ժողովածուները: Այս գրքերը լայն արձագանք են ստանում և մեծ հետաքրքրություն առաջացնում ժողովրդական բանարվեստի նկատմամբ: Եվրոպական առաջավոր երկրների բանագիտական մտքի ազդեցությամբ XIX դարի կեսերին հայ մտավորականությունը ևս կարևորեց մեր ժողովրդի բանավոր ավանդության տարբեր ժանրերի գրառման, հրատարակման և ուսումնասիրման պատմամշակութաբանական անհրաժեշտությունը: Ուստի, պատահական չէր, որ XIX դարի 90-ական թվականներին հայագիտության մեջ սկսեց գործածվել «ժողովրդական բանահյուսություն» տերմինը, և ի հայտ եկան բանահավաքներ:

Ըստ իսպանացի նշանավոր բանագետ Ա. Էսպինոսայի՝ երեք կարևոր խնդիր է առաջադրվում ժողովրդական հեքիաթների ուսումնասիրություններում՝ 1. ծագումը՝ կազմավորման պատմությունն ու զարգացու-

¹ Թումանյան 1945, 472:

մը, 2. առաջացման պատճառը, որը կարող է բացատրել, թե որտեղից է ծնունդ առել յուրաքանչյուր հեքիաթ, 3. ժողովրդից ժողովուրդ հեքիաթների փոխանցման ուսումնասիրությունը²:

Ժողովրդական բանահյուսության մեջ առանձնացվում է հեքիաթի երեք հիմնական տեսակ՝ կենդանական, հրաշապատում և իրապատում: Կենդանական հեքիաթներին բնորոշ է առարկայականի և բնության երևույթների ու կենդանիների անձնավորումը: Հրաշապատում հեքիաթներն իրականությունն արտացոլում են երևակայական, հնարովի աշխարհների ու հարաբերությունների միջոցով: Տվյալ հեքիաթները «բնակեցված» են գերբնական կերպարներով, որոնց հետ ազատորեն հարաբերվում են հերոսները: Իսկ իրապատում հեքիաթներում հասարակական կյանքը, մարդկային փոխհարաբերություններն արտահայտվում են առավել իրական երանգներով:

Ժողովրդական հեքիաթներում դասական են համարվում հրաշապատում հեքիաթները: Վերջիններիս հիմնական սյուժեների մեջ ցայտուն արտացոլված են դրանց ժանրային առանձնահատկությունները, բովանդակային մոտիվները, գեղարվեստական հատկանիշները և հասարակական-գաղափարական միտվածությունը: Հրաշապատում հեքիաթներում պատկերվում է բարի ուժերը մարմնավորող հերոսների պայքարը չար ուժերի՝ դևերի, կախարդների, վիուկների, վիշապների դեմ: Դեպքերը տեղի են ունենում ստորերկրյա թագավորությունում, երևակայական աշխարհներում, որտեղ անհավատալի դառնում է իրական: Հեքիաթներում չարի և բարու պայքարը մեծ մասամբ ավարտվում է բարու հաղթանակով:

Հրաշապատում հեքիաթի ուսումնասիրությանը նվիրված են բազմաթիվ գիտական աշխատություններ, սակայն հեքիաթագիտության մեջ մինչ այժմ գոյություն չունի հեքիաթի՝ բոլորի կողմից ընդունված սահմանում: Յուրաքանչյուր սահմանում առանձնացնում կամ կարևորում է տվյալ ժանրին բնորոշ մի շարք գծեր, քանի որ ամեն մի հետազոտող հեքիաթի մեջ որպես առաջնային ընդգծում է այն հատկանիշները, որոնք համապատասխանում են հեքիաթի իր ընկալմանը: Այս առումով ուշագրավ է իսպանացի հեքիաթագետ Տ. Սապատա Ռուիսի հետևյալ բնորոշումը. «Հեքիաթը մասնավորապես կախարդական աշխարհից վերցված բանաստեղծական երևակայության պատում է, մի հրաշապատում պատմություն, որը կապված չէ իրական կյանքի պայմաններին: Այն թե՛ մեծերը և թե՛ փոքրերը լսում են հաճույքով, երբ դրան նույնիսկ չեն հավատում»³: Հենց տվյալ բնորոշման շրջանակում էլ հեղինակն իր «Հրաշապատում հեքիաթը» գրքում անդրադառնում է հրաշապատում հեքիաթի ժանրային առանձնահատ-

² Espinosa 2009, 51.

³ Ruiz 2007, 22.

կություններին: Սակայն, ընդհանուր առմամբ, տեսական գրականության մեջ հեքիաթը սահմանվում է որպես բանավոր ստեղծագործության ժանր, որի մեջ մարդիկ կամ դեպքերը պատկերվում են չափազանցված կամ այլաբանորեն, հաճախ էլ՝ հրաշապատում գծերով⁴:

Հրաշապատում հեքիաթի ուսումնասիրության ոլորտում կարևոր նշանակություն ունի Վ. Պրոպի «Հեքիաթի մորֆոլոգիան» աշխատությունը, որը համարվում է բանագիտության մեջ կատարված ամենաարժեքավոր տեսական ներդրումներից: Այդ աշխատության առանցքային խնդիրներից է հեքիաթի կառուցվածքային ուսումնասիրությունը, որը ելնում է հեքիաթում գործող կերպարների իրականացրած գործառույթներից: Ըստ հեղինակի՝ հրաշապատում հեքիաթի գործառույթները թվով սահմանափակ են, և նրանց հաջորդականությունը միշտ նույն բնույթի է⁵: Պրոպն առավել կարևորում է հեքիաթի կայուն և անփոփոխ կառուցվածքային տարրերը՝ հիմնվելով պատումային կայուն բաղադրիչների վրա: Ըստ նրա՝ հրաշապատում բոլոր հեքիաթները կառուցվածքային տեսակետից նույնական են, քանի որ բոլորն էլ հարմարեցված են միևնույն ձևաբանական կաղապարին: Հարկ է հիշատակել նաև Ե. Մելետինսկու «Հրաշապատում հեքիաթի հերոսը» աշխատությունը, որտեղ նա վերլուծում է հրաշապատում հեքիաթի սոցիալական արմատները, որոնց հիմքի վրա ձևավորվել է հրաշապատում հեքիաթը՝ որպես ժանր⁶:

Նշենք, որ հրաշապատում հեքիաթների բազմաթիվ ժանրային հատկանիշներ սկիզբ են առնում դեռևս նախնադարից, որոնց հիմքում հիմնականում ընկած են եղել հնագույն ծեսերն ու ավանդույթները, որոնք, սակայն, աստիճանաբար մոռացության են մատնվել, և հեքիաթային տարրերը համալրվել են այլ բովանդակությամբ: Տվյալ համատեքստում հարկ է հիշատակել Վ. Պրոպի «Հրաշապատում հեքիաթի պատմական արմատները» աշխատությունը, որտեղ նա գրում է. «Հեքիաթները պահպանել են շատ ծեսերի և ավանդույթների հետքեր: Հեքիաթների առանձին մոտիվներ իրենց ծագումնաբանական բացատրությունը կարող են ստանալ միայն ծեսերի հետ համեմատության միջոցով»⁷: Իր հերթին Ջ. Ջինը, «Հեքիաթների ուժը» աշխատության մեջ անդրադառնալով հեքիաթային ծեսերին, մասնավորապես նշում է, որ հեքիաթը պատմելու հատուկ ծիսակատարություններ գոյություն ունեն, որոնց կարևոր բաղադրիչներից են կյան-

⁴ Վարդանյան 2015, 94:

⁵ Пропп 1969, 29-60.

⁶ Мелетинский 2005.

⁷ Пропп 2005, 10.

քի իմաստությամբ օժտված հեքիաթասացը, հեքիաթը պատմելու համար նախատեսված հատուկ ժամը և հատուկ արարողությունը⁸:

Ժողովրդական հեքիաթների կախարդական աշխարհը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով, որոնցից հատկապես կարևորվում է հեքիաթի տեքստի բանավոր և անանուն պատում լինելը, որն էլ պայմանավորված է ժանրի ժամանակագրությամբ և ծագումով: Այն դիտվում է որպես կոլեկտիվ շարադրանք, փոխանցվում է բերանացի և վստահված է հեքիաթասացի հիշողությանը: Ժողովուրդը ոչ միայն բանահյուսական ստեղծագործությունների հեղինակ է, այլև հասցեատեր: Այսպիսով՝ բանահյուսական տեքստն ունի երկակի կապ ժողովրդի հետ՝ արտացոլելով ոչ միայն նրա ստեղծագործական էությունը, այլև սպասումները: Ինչպես նշում է բանագետ Թ. Հայրապետյանը, հեքիաթը՝ մշտապես հաստատագրված բնագիր չունեցող, տարբեր փոփոխակներով ավանդված մի բարդ ու առեղծվածային բանահյուսական վաղնջատեքստ (արքիտեքստ) է, որի բառալեզվային շերտերում թաքնված են ենթագիտակցության նախնական պատկերացումները, պատմաշրջանների աշխարհըմբռնման ու կենսահայեցողության հետքերը, խորհրդանշային ցուցիչներն ու նախակերպարները (արքետիպեր)⁹:

Հեքիաթի տեքստը բնութագրվում է հակիրճությամբ, որը հնարավորություն է ընձեռում այն շատ արագ ընկալելու և մտապահելու: Այստեղ հաճախ են հանդիպում նաև մտացածին անվանումներ: Այս առումով իսպանական հրաշապատում հեքիաթներին բնորոշ է “Castillo de Irás y no Volverás” («Ամրոց, որ կգնաս, բայց չես վերադառնա») տարբերակը, որը գանազան փորձություններով լի կախարդական և խորհրդավոր ամրոց է:

Կարևորագույն տարբերակիչ հատկանիշներից է նաև հեքիաթի տարածաժամանակային պատկերավորությունը: Հեքիաթային այլաշխարհքում տարածությունն ու ժամանակն ընկալվում են իրականությունից կտրված, անսովոր կապերով ու հարաբերություններով¹⁰: Տարածական ու ժամանակային անորոշությունը, որը բնորոշ չէ իրականությանը, հեքիաթի ժանրակազմիչ գլխավոր հատկանիշներից է: Հեքիաթագետ Վ. Պիսանտին, անդրադառնալով հեքիաթի նշյալ առանձնահատկությանը, ընդգծում է, որ տարածության մեջ գործող կերպարների տեղաշարժերի ժամանակ հեքիաթասացը կանգ է առնում միայն սյուժետային կարևորություն ունեցող դրվագների վրա: Ըստ նրա՝ հեքիաթներում հանդիպող “camina, camina...”, “en un país muy, muy lejano...” («քայլում է, քայլում», «շատ հեռավոր մի երկրում») ավանդական կայուն բանաձևերը մատնանշում են միայն տե-

⁸ Jean 1988, 224.

⁹ Հայրապետյան 2016, 9:

¹⁰ Հայրապետյան 2016, 14:

ղաշարժերի առկայություն և բնավ չեն կողմնորոշում տարածությունների մեջ: Պիսանտին հավելում է նաև, որ ժամանակը նույնպես չի հստակեցվում՝ որպես օրինակ նշելով “una vez, hace mucho tiempo...” («մի անգամ, վաղուց») արտահայտությունը: Ժամանակի մեջ կարող են տեղի ունենալ միանգամայն աներևակայելի թռիչքներ, օրինակ՝ «հարյուրամյա քուն» և այլն, որը վկայում է, որ հեքիաթի աշխարհն ապրում է այլ օրենքներով¹¹: Ըստ ակադեմիկոս Դ. Լիխաչևի՝ հեքիաթի տարածական բնույթն արտատվոր է, անսահման, անվերջ, որը կապ չունի իրական տարածության հետ¹²: Անդրադառնալով հեքիաթի ժամանակին՝ նա կարծում է, որ հեքիաթի ժամանակը չի համընկնում իրական ժամանակի հետ, քանի որ հայտնի չէ, թե երբ են տեղի ունեցել հեքիաթի իրադարձությունները: Ըստ Լիխաչևի՝ հեքիաթի ժամանակն առանձնահատուկ է՝ արագընթաց: Հերոսները չեն տխրում, չեն ծերանում, չեն հիվանդանում, իրական ժամանակը նրանց չի իշխում, իշխում է միայն իրադարձային ժամանակը: Կա միայն իրադարձությունների հաջորդականություն, և հենց այդ իրադարձությունների ժամանակն էլ հեքիաթի գեղարվեստական ժամանակն է¹³:

Ինչպես տեսնում ենք, հեքիաթի առանձնահատուկ տարածաժամանակային համակարգը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ այստեղ գործ ունենք մտացածին, երևակայական յուրահատուկ աշխարհի հետ, մի աշխարհ, որն ապրում է իրեն հատուկ օրենքներով: Շվեյցարացի ականավոր հեքիաթագետ Մ. Լյուֆին, անդրադառնալով հեքիաթի երևակայական աշխարհին, նկատում է, որ տվյալ դեպքում գերբնական իրադարձություններն ավելի քիչ բացատրություն են պահանջում, քան առօրյա անցուդարձը¹⁴: Իր հերթին, ավստրիացի հոգեբան Բ. Բեթելիեյմը, խոսելով նույն աշխարհի մասին, նշում է, որ հրաշապատում հեքիաթի կարևոր հատկանիշներից մեկն այնպիսի գաղափարների ներշնչումն է, որոնք հանգեցնում են հեքիաթասացի և ունկնդրի երևակայության լիակատար ազատությանը¹⁵: Միաժամանակ, ըստ հեքիաթագետ Ա. Զիվանյանի, այլ աշխարհների ստեղծումը նշանակում է փախուստ իրական աշխարհից, որը մանկականության դրսևորման հիմնական գծերից է. «Հավանաբար իրականությունից խույս տալու ձգտումն է, որ հեքիաթն այդքան մոտեցնում է մանկանոցի տարածքին, թեև ի սկզբանե ժողովրդական հեքիաթն ամենևին էլ նախատեսված չի եղել մանուկ ունկնդրի կամ ընթերցողի համար»¹⁶:

¹¹ Pisanty 1995, 8.

¹² Лихачев 1979, 338.

¹³ Лихачев 1979, 338.

¹⁴ Lüthi 1986, 8.

¹⁵ Bettelheim 1980, 23.

¹⁶ Զիվանյան 2008, 35:

Հեքիաթի առանձնահատկություններից է նաև հեքիաթասացի կողմից այն երրորդ դեմքով ներկայացնելը՝ մտերմություն ստեղծելով հեքիաթասացի և ընթերցողի միջև: Այս առումով հատկապես ուշագրավ է Տ. Սապատա Ռուփսի այն դիտարկումը, որ «հեքիաթասացը, հեքիաթը ներկայացնելով երրորդ դեմքով, քաջատեղյակ է կերպարներից. գիտի, թե ինչ են մտածում, զգում, սիրում և անում: Լինելով ամենազետ՝ նա իր լիակատար հեղինակությունն է հաստատում ընթերցողի վրա, որն էլ հանգեցնում է վերջինիս կողմից առանց երկմտանքի հեքիաթի գերբնական բովանդակության ընդունմանը: Այսինքն՝ հեքիաթասացը հանդես է գալիս որպես աստվածային մի էակ, ամենազետ, որն իշխում է հեքիաթին: Նա գիտի այն, ինչ տեղի է ունենում առանց ժամանակի և տարածության սահմանափակման և այդպիսով ընթերցողին էլ տեղափոխում է այդ հնարանքի աշխարհ»¹⁷:

Հեքիաթի մեկ այլ կարևոր առանձնահատկությունը նրա ընդհանրությունն է տրանսի հետ, որն արդեն բանագիտության մեջ հաստատված երևույթ է: Այդ երևույթի լուսաբանմանը անդրադարձել է Ա. Զիվանյանը՝ նկատելով, որ դա առավել հստակ դրսևորվում է հեքիաթի պոետիկայի մակարդակում՝ հատկապես բացող և փակող բանաձևերում¹⁸: Հրաշապատում հեքիաթներին բնորոշ են բացող՝ ունկնդրին այլ հեքիաթային աշխարհներ առաջնորդող բանաձևեր, ինչպիսիք են՝ հայերենում «լինում է, չի լինում»-ը, «ժուկով ժամանակով»-ը, իսպաներենում՝ “*érase una vez*”, “*había una vez*” “*este era*”, “*estos eran*” և այլն: Նման բանաձևերի նպատակն է ընթերցողին տեղափոխել հեքիաթայլման տրանսի մեջ, որոնց միջոցով հեքիաթը մեզ տեղափոխում է մի անորոշ անցյալ, իրական աշխարհից տարբերվող մի տարածություն, որը դուրս է ժամանակի զգացողությունից, և որում առօրյա կյանքի օրենքներն արդեն չեն գործում¹⁹: Իսկ փակող բանաձևերն օգնում են ընթերցողին հեքիաթային կախարդական աշխարհից հետ քերել իրական աշխարհ:

Հեքիաթների առանձնահատկություններից խոսելիս հարկ է անդրադառնալ նաև հեքիաթի ուրույն լեզվին, որին բնորոշ են ավանդական լեզվական բանաձևեր, ոճական հնարներ, հատուկ բառապաշար և մի շարք այլ հատկանիշներ: Հրաշապատում հեքիաթներն աչքի են ընկնում իրենց գրավիչ ոճով, չափազանցական պատկերներով, յուրահատուկ մակդիրներով, համեմատություններով, կրկնություններով, գունեղ անձնավորումներով, խորհրդանշական կերպարներով, հետաքրքրաշարժ ինտրիգներով, դինամիկ զարգացող հարուստ սյուժեներով: Հարուստ և բազմազան բա-

¹⁷ Ruiz 2007, 155.

¹⁸ Զիվանյան 2008, 44:

¹⁹ Ruiz 2007, 22.

ապաշարի միջոցով հեքիաթները հաղորդում են տեղական կոլորիտի յուրահատկությունները՝ արտացոլելով ժողովուրդների սովորույթները, հավատալիքները, պատմությունը, դարավոր իմաստությունը: Այս առումով ուշագրավ է Տ. Սապատա Ռուիսի այն դիտարկումը, ըստ որի հեքիաթներում գործածվող լեզվի միջոցով մտքերն արտահայտվում են առանձնահատուկ ձևով և սերմանում ընթերցողի մեջ առանձնահատուկ արձագանք: Հեքիաթում մտքերի արտահայտման ձևը ստիպում է, որ ընթերցողը կարողանա զգալ և ներգրավվել կերպարների ինքնության, պատմության սյուժեի մեջ²⁰: Հրաշապատում հեքիաթներն օժտված են գրական լեզվին հատուկ հատկանիշներից մեկով՝ բազմիմաստությամբ²¹, որը, ըստ գրականագետ Ֆ. Ռեդոնդոյի, ենթադրում է այնքան իմաստների ընկալում, որքան մեկնաբանություններ կարող են արվել տվյալ տեքստի շուրջ²²: Այս առումով բազմիմաստությունը հեքիաթի իմաստի տարբեր ընկալումներն են տարբեր մարդկանց կողմից՝ կյանքի ամենատարբեր պահերին²³:

Եզրակացություններ

Այսպիսով՝ մեր նյութի ամփոփ քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հեքիաթի տեքստը բնութագրվում է ժողովրդախոսակցական ոճին բնորոշ մի շարք տարբերակիչ՝ կառուցվածքային, բառաշարահյուսական, իմաստային, գաղափարական-գեղագիտական առանձնահատկություններով, ոճապատկերային ինքնատիպ համակարգով, որոնց շնորհիվ առանձնանում է բանահյուսության այլ ժանրերից: Հեքիաթի գեղարվեստականության անքակտելի մաս հանդիսացող ոճապատկերային համակարգի միջոցով հեքիաթի լեզուն ձեռք է բերում առավել մեծ արտահայտչականություն և արտացոլում տվյալ ժողովրդի պատկերավոր մտածողության առանձնահատկություններն ու աշխարհընկալման ինքնատիպությունը:

Գրականություն

Թումանյան Հ. 1945, Երկերի ժողովածու, հ. V, Նամակներ 1885-1922, Երևան, «Հայպետհրատ», 516 էջ:
 Հայրապետյան Թ. 2016, Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան, «Գիտություն», 461 էջ:

²⁰ Ruiz 2007, 111.

²¹ Ruiz 2007, 126.

²² Redondo 1994, 20.

²³ Bettelheim 1997, 21.

- Ջիվանյան Ա. 2008, «Երկնքից ընկավ երեք խնձոր». հրաշապատում հեքիաթը որպես արքիտեքստ, Երևան, «Զանգակ», 88 էջ:
- Ջիվանյան Ա. 2008, Հրաշապատում հեքիաթի պոետիկան. համեմատությունը հեքիաթի համատեքստում (հայկական հեքիաթի նյութի հիման վրա), ատենախոսություն «Բանահյուսություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման, Երևան, 250 էջ:
- Վարդանյան Ն., Սեմիրջյան-Բեքմեզյան Ա., Վարդանյան Ն. 2015, Հայ ժողովրդական և գրական հեքիաթի արդի հիմնախնդիրները, Երևան, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 288 էջ:
- Лихачев Д.С. 1979, Поэтика древнерусской литературы, Москва, «Наука», 360 с.
- Мелетинский Е. 2005, Герой волшебной сказки, Москва, Санкт-Петербург, «Академия исследований культуры», 237 с.
- Пропп В. 1969, Морфология сказки, Москва, «Наука», 166 с.
- Пропп В. 2005, Исторические корни волшебной сказки, Москва, «Лабиринт», 331 с.
- Bettelheim B. 1980, Presenta. Los cuentos de Perrault, Barcelona, "Crítica", 264 p.
- Espinosa A.M. 2009, Cuentos populares recogidos de la tradición oral de España, Madrid, Editorial: Consejo superior de investigaciones científicas (CSIC), 868 p.
- Jean G. 1988, El poder de los cuentos, Barcelona, "Pirene", 284 p.
- Pisanty V. Como se lee un cuento popular, Barcelona, "Editorial Paidós Ibérica", 216 p.
- Redondo F.G. 1995, El lenguaje literario, Madrid, "Edaf", 1994, 336 p.
- Ruiz Z.T. 2007, El cuento de hadas, el cuento maravilloso o el cuento de encantamiento, Cuenca, "Ediciones de la Universidad de Castilla-La Mancha", 166 p.
- Lüthi M. 1986, The European Folktale: Form and Nature (trans. John D. Niles), Bloomington and Indianapolis, "Indiana University Press", 173 p.

ՀԵՔԻԱԹԻ ԺԱՆՐԱԿԱԶՄԻՉ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զարուհի Ազիզբեկյան

Բանագիտական տարբեր աղբյուրներում հեքիաթի՝ մասնավորապես հրաշապատում հեքիաթի ժանրային առանձնահատկությունները դարձել են տարբեր քննարկումների առարկա, թեև դեռևս չկա միասնական կարծիք հեքիաթի էական տարբերակիչ հատկանիշների վերաբերյալ: Յուրաքանչյուր սահմանում առանձնացնում կամ կարևորում է տվյալ ժանրին բնորոշ մի շարք գծեր, քանի որ ամեն մի հետազոտող հեքիաթի մեջ, որպես առաջնային, ընդգծում է այն հատկանիշները, որոնք համապատասխանում են հեքիաթի իր ընկալմանը:

Սակայն, ընդհանուր առմամբ, հեքիաթի տեքստը բնութագրվում է մի շարք կառուցվածքային, բառաշարահյուսական, իմաստային, գաղափարական-գեղագիտական առանձնահատկություններով, ոճապատկերային ինքնատիպ համակարգով:

Հեքիաթն ինչպես իր բովանդակությամբ, այնպես էլ արտահայտչամիջոցների բազմազանությամբ արտացոլում է ժողովրդի ինքնագիտակցության ակունքները, արժեհամակարգը, աշխարհաճանաչողության առանձնահատկությունները:

Բանալի բառեր` հեքիաթ, հրաշապատում հեքիաթ, հեքիաթասաց, բանահյուսություն, ժողովուրդ, ժանրակազմիչ առանձնահատկություն, ոճական հնար:

ОСОБЕННОСТИ ЖАНРООБРАЗОВАНИЯ СКАЗКИ

Заруи Азизбекян

В источниках по фольклору жанровые особенности сказки, в частности волшебной сказки, являются объектом нескончаемых дискуссий, однако по сей день нет единого мнения в вопросе существенных дифференцированных признаков сказки. Каждое определение выделяет или обозначает ряд характерных для данного жанра черт, ибо каждый исследователь в качестве главных признаков выделяет те, которые соответствуют его восприятию данной сказки.

В целом текст сказки характеризуется некоторыми конструктивными, синтаксическими, смысловыми, идейными, эстетическими особенностями, своеобразной стилистической системой.

Сказки как в содержательном плане, так и с точки зрения использования языковых средств выражения отражают самосознание народа, систему ценностей, особенности его миропознания.

Ключевые слова – сказка, волшебная сказка, сказитель, фольклор, народ, жанрообразующая особенность, стилистический прием.

THE GENRE-GENERATING PECULIARITIES OF THE FAIRY TALE

Zaruhi Azizbekyan

The genre peculiarities of the fairy tale, particularly, the magic tale, have been the subject of various debates in various scholarly sources, although there is still no common opinion on the essential distinguishing features of the fairy tale.

Each definition singles out or highlights, a number of features of the given genre, as each researcher highlights features that are relevant to his or her perception of the fairy tale.

However, in general, the text of the fairy tale is characterized by a number of structural, lexical, semantic, ideological-aesthetic features, a unique stylistic system.

The fairy tale reflects the origins of people's self-consciousness, value system, peculiarities of world view both in its content and in the variety of means of expression.

Key words – fairy tale, magic tale, storyteller, folklore, folk, genre-generating peculiarity, spatial imagery, stylistic device.

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏՆԻ ՈՒ ԱՆՀԱՅՏ ԱԼԵՔՍԵՅ ԵՎ ԱՆԱՍԱՍԻԱ ԴԱՆԴՈՒՐՅԱՆՆԵՐ

Սեդա Խանջյան

ՀԱՊ-ի գրաֆիկայի ենթաբաժնի վարիչ, ավագ գիտաշխատող, ֆոնդապահ
ՀՀ, Երևան, Արամի 1
Էլ հասցե՝ seda.khanjyan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 15.10.2019, գրախոսվել է 05.02.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020



Ալեքսեյ Դանդուրյան



Անաստասիա Դանդուրյան

Ներածություն

Հայաստանի ազգային պատկերասրահի (ՀԱՊ) հայկական գրաֆիկայի ֆոնդերում պահվում են XIX-XXI դարերի 219 հայ հեղինակների մոտ 5000 գրաֆիկական թերթեր: Հավաքածուն ընդգրկում է հաստոցային գրաֆիկայի տարբեր ժանրերի գործեր (թեմատիկ կոմպոզիցիա, դիմանկար, բնանկար, նատյուրմորտ) և տեսակներ՝ գրքի և թատերական ձևավորումներ, պլակատներ, ծաղրանկարներ: Նկարիչների թվում և՛ հայտնի, և՛ ժամանակի ընթացքում մոռացված արվեստագետներ են: Հավաքածուն պարբերաբար համալրվում է ինչպես նոր, այնպես էլ բաժնում ընդգրկված հեղինակների ստեղծագործություններով և նրանց մասին տեղեկություններով:

2017 թ. գարնանը, երբ առաջին անգամ Մոսկվայից Երևան ժամանեց նկարիչ Ալեքսեյ Դանդուրյանի (1903, Թելավի – 1985, Մոսկվա) դուստրը՝ Մարիա Ալեքսեևնան, այցելելով ՀԱՊ՝ թանգարանին նվիրաբերեց հոր գործունեությանն առնչվող արխիվային նյութեր (լուսանկարներ, հողվածներ, ազդագրեր), ինչպես նաև հորաքրոջ՝ վրացահայ գրաֆիկ նկարչուհի Անաստասիա Դանդուրյանի (1899, Թելավի – 1959, Թբիլիսի) 10 գծանկար՝ Հովհաննես Թումանյանի «Գիրքորը» պատմվածքի նկարազարդումները¹:

Ալեքսեյ Դանդուրյան

Երևանում և Ռուսաստանի Դաշնության տարբեր քաղաքներում 1930-1980 թթ. թատրոնի, կինոյի, բալետի, էստրադայի ասպարեզներում ակտիվորեն ստեղծագործած Ալեք² Դանդուրյանը ժամանակին հայտնի և սիրված նկարիչ էր, որի անունը, ցավոք, քչերին է հայտնի մեր օրերում:

Ալեքսեյ Դանդուրյանի հայրը, Ժնևում ստանալով գյուղատնտեսի կրթություն, Թբիլիսիում զբաղվել է գինեգործությամբ: Մայրն աշխատել է գրադարանում:

Արվեստի հանդեպ Ալեքսեյի սերն սկսվել է բալետից, երբ, կիսատ թողնելով ուսումը Թիֆլիսի Վ. Լևանդովսկու գիմնազիայում, նա ընդունվում է տեղի հայտնի Պերինիի բալետի դպրոցը: 1925 թ., հոր մահից հետո, երիտասարդը մեկնում է Լենինգրադ ուսումը շարունակելու: Սակայն շուտով, ինչպես նշվում է հողվածներից մեկում, գերադասում է «ոչ թե պարել, այլ զգեստներ հորինել պարողների համար»³: Օժտված լինելով նկարելու ունակությամբ և գեղեցիկի զգացողությամբ՝ Դանդուրյանը բեմական զգեստների էքսիզների անհատական պատվերներ է ընդունում դերասաններից: Նրա աշխատանքները շատ շուտով գրավում են մասնագետների ուշադրությունը: Անատոլի Լուինաչարսկու աջակցությամբ շնորհալի երիտասարդն արժանանում է թոշակի և Մոսկվայում նկարչություն սովորելու հնարավորություն ստանում: Սակայն, ժամանակ անց, հասկանալով որ գեղանկարչությունն ու գրաֆիկան իր ասպարեզը չեն, Ալեքը կիսատ է թողնում ուսումն ու վերադառնում Լենինգրադ: 1926-1927 թթ. նա զբաղվում է գործվածքի և հախճապակու զարդանկարչությամբ, ծանոթանում գործվածքի գեղարվեստական մշակման գաղտնիքներին և այդ ամենը հետագայում հաջողությամբ կիրառում իր աշխատանքներում:

1932 թ. Լենինգրադի կրկեսի տնօրինությունից նրան առաջարկում են ձևավորել մնջախաղի մի ամբողջ համար, և նա առաջին անգամ հանդես է գալիս նաև որպես բեմանկարիչ: Երիտասարդին գրավում է թա-

¹ Գիրքը լույս է տեսել «Հայպետհրատ»-ում, 1935 թ. (Երևան):

² Դստեր խոսքերով՝ արվեստի աշխարհում նրան անվանում էին նաև *Ալեք*:

³ Лыцкая 1976, 20-21.

տերական տեսարանների և զգեստների ստեղծման ընթացքը, ինչը և խթան է դառնում Դանդուրյանի մասնագիտական կողմնորոշման հարցում: Դրան աջակցում է նաև քույրը՝ Անաստասիան:

Լենինգրադում նա հանդիպում է նկարիչ Մարտիրոս Սարյանին և քանդակագործ Արա Սարգսյանին, որոնք, ըստ երևույթին, արդեն ծանոթ էին շնորհալի երիտասարդի գործերին: Նրանք Ալեքսեյին նկարչի պաշտոն են առաջարկում Երևանի օպերայի և բալետի թատրոնում:

1930-ականները Հայաստանում ազգային մշակույթի զարթոնքի, կայացման շրջանն էր: Բեմանկարչության ասպարեզում աշխատում և իրենց նորամուծություններով էին հանդես գալիս տեղի և հրավիրված նկարիչներ՝ Մարտիրոս Սարյանը, Արա Սարգսյանը, Ստեփան Թարյանը, Գեորգի Յակովլովը, Միքայել Արուստյանը, Ստեփան Ալաջալովը և այլք: Այս միջավայրում երկու տարի աշխատում է նաև երիտասարդ Դանդուրյանը: Նա ձևավորում է Պյոտր Չայկովսկու «Կարապի լիճ» (1933), Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի «Շեհերեզադե» (1933) բալետները, Ջուզեպպե Վերդիի «Տրավիատա» (1934), Ջակոմո Պուչինիի «Բոհեմ» (1935) օպերաները, Ալեքսանդր Բորոդինի «Իշխան Իգոր» (1935) և Շարլ Գունոյի «Ֆաուստ» օպերաներից՝ «Պոլովցյան պար» և «Վալպուրգյան գիշեր» բալետային դրվագները: 1936 թ. Դանդուրյանը Մարտիրոս Սարյանի հետ մասնակցում է Հարո Ստեփանյանի «Քաջ Նազար» կոմիկական օպերայի զգեստների էքզիզների պատրաստման աշխատանքին: Երևանում ձևավորում է նաև երաժշտական-պարային համերգներ, ներկայացումներ Մաքսիմ Գորկու անվան «Բանվորական» և Զաֆար Զաբարլիի անվան ադրբեջանական պետական թատրոններում:

Երաժշտության գիտակ և դասական բալետի հիմունքներին տիրապետող նկարիչը ստեղծում է երաժշտությանը համահունչ բեմի դեկորներ և արտիստի շարժման պլաստիկային հարմար, տպավորիչ զգեստներ՝ հարուստ գունային նրբերանգներով, յուրահատուկ և անկրկնելի հորինվածքով:

1935 թ. արդեն փորձառու և կայացած նկարիչը մեկնում է Մոսկվա, որտեղ անվանի բալետմայստրների հրավերներով ձևավորում է բեմեր և թատերական զգեստներ, աշխատում է հայտնի պարողների, դերասանների և էստրադայի արտիստների, ինչպես, օրինակ, Եկատերինա Գեյցերի, Սուլամիֆ Մեսսերերի և այլոց հետ: Դանդուրյանը շատ սիրված և հարգված էր արտիստների կողմից: Նա այն արվեստագետներից էր, որոնք գերադասում էին անձամբ ճանաչել և շփվել նրանց հետ և ստեղծել ինչպես կոնկրետ կերպարը բնութագրող, այնպես էլ յուրաքանչյուրի անհատականությունն ընդգծող բեմական հագուստ: Ալեքը բազմաթիվ ներկայացումներ է ձևավորում Մոսկվայի երաժշտական կոմեդիայի, «Էրմիտաժ» էստ-

րադային թատրոնների համար, մի քանի թատերաշրջան աշխատում է Կիև, Օրյոլ, Սերպուխով, Պյատիգորսկ քաղաքներում:

Պատերազմի տարիներին Դանդուրյանը համագործակցում է Մոսկվայում «ՏԱՍՍ-ի պատուհանների» հետ և օգնում Առաջին ճակատային թատրոնին, նրան էր վստահված նաև «Մեծ թատրոնի» լուսաքողարկումը:

Երկրորդ անգամ Դանդուրյանը Երևան է գալիս 1946 թ. կնոջ՝ Էսթեր Բաբաջանի հետ և ստանձնում է Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնի նկարչի պաշտոնը: Այդ տարիներին թատրոնի նկարիչներն էին Սերգեյ Արուտչյանը, Կարապետ Մինասյանը, Արմեն Չիլինգարյանը: Դանդուրյանն իրագործում է Կարլ Միլլերի «Խեղճ Իոֆան» (1943), Նիկիտա Բոգոսլովսկու «Տասնմեկ անհայտները» (1945), Աղասի Այվազյանի «Աշուղ Մուրադ» (1945), Թաթևիկ Սարյանի «Գարնանային երգ» (1947), Գուրգեն Գաբրիելյանի և Դանիել Դզնունու «Երջանիկ օր» (1945), Յոհան Շտրաուսի «Գնչուական բարոն» (1948), Վիլիելմ Հաուֆի «Սաիդի արկածները» (1948), և այլ բեմադրությունների ձևավորումներ:

1948 թ. նա անդրադառնում է Աղասի Այվազյանի «Քաջ Նազար» երաժշտական կատակերգությանը: Ինչպես նկարիչն է գրառել ներկայացմանը նվիրված ծրագրում. «Սկսելով գյուղական ռեալ պատկերներից՝ ես աստիճանաբար և աննկատելի ավելացրել եմ հեքիաթայնությունը, գնալով բազմապատկել գույները, տեղ-տեղ հասցնելով հիպերբոլի: Այս հեքիաթը կլասիկ շնորհակալ նյութ է տալիս ստեղծագործողին»⁴: «Առանձնապես Նազարի, սենեկապետի և պալատականների տարազները, իր մասնագիտությամբ միութենական համբավ ունեցող նկարիչ Ալեք Դանդուրյանի շնորհիվ, այնպիսի ֆունկցիա էին ձեռք բերել, որ դեկորների չափազանց պայմանական բնույթը մնում էր աննկատ»⁵:

Հայաստանում Ալեքսեյ Դանդուրյանն առաջին անգամ 1947 թ. ստանում է ֆիլմի զգեստների ձևավորման պատվեր: Նա կինոյի նկարիչներ Յուրի Շվեյցի և Սարգիս Սաֆարյանի հետ մասնակցում է «Երևանի ֆիլմերի ստուդիայում» նկարահանվող Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթի էկրանավորմանը:

Մեզ են հասել 1951 թ. նկարչի կողմից ՀԱՊ-ին նվիրած, նաև հետագայում Արվեստի գործերի վարչության ֆոնդից ստացված տասնչորս զգեստների էսքիզներ «Անահիտ» (նկ. 1) ֆիլմի, ինչպես նաև «Աշուղ Մուրադ» (նկ. 2), «Սաիդի արկածները» և «Գնչուական բարոն» բեմադրությունների համար⁶: Ութ աշխատանք պահվում է Եղիշե Չարենցի անվան գրական-

⁴ ՀԱՊ, Հուշածեղագրային բաժին, ֆ. 6: Պահպանված է բնագիր տեքստը:

⁵ Հայ սովետական թատրոնի պատմություն 1967, 480:

⁶ ՀԱՊ, Հայկական գծանկարի ֆոնդ, N 1840, 1841, 1842, 1843, 1844, 1845, 1927, 1928, 1929, 1930, 2497, 2498, 2499, 2500:

նության և արվեստի թանգարանում (ԳԱԹ): Դրանք ներառում են նկարչի զգեստների էքզիզները՝ «Շեհերեզադե» բալետի և «Պոլովցյան պարը» դրվագի, «Քաջ Նազար» կատակերգության համար, նաև «Աշուղ Մուրադ» օպերետի բեմի երկու ձևավորում⁷:

Թղթի վրա մատիտով ուրվագծված և ջրաներկով, գուաշով, տուշով ու բրոնզով նկարված պատկերներն առանձնանում են իրենց անթերի կատարմամբ: Դրանց բնորոշ է մանրակրկիտ մշակումը, ամենայն մանրամասնությամբ պատկերված են հագուստի յուրաքանչյուր զարդանախշը, ծալքը և զգեստը լրացնող արդուզարդը, վառ գունային անցումները, երևակայական, հնարամիտ տարրերը:

1950 թ. նկարիչն ընդմիջտ վերադառնում է Մոսկվա: Դեռևս 1937-1968 թթ. Ալեքը Մոսկուտրադայի զգեստների գլխավոր ձևավորողն էր: Նրան էին վստահում հրեյանական, տոնական երեկոների, հաշվետու համերգների ձևավորումները: 1942 թ. ի վեր նա Ռուսաստանի նկարիչների միության անդամ էր, ցուցահանդեսների մասնակից:

Ծանոթությունը Մեծ թատրոնի գլխավոր բալետմայստեր Լեոնիդ Լավրովսկու հետ Դանդուրյանին հնարավորություն է տալիս աշխատելու մի նոր ոլորտում: 1962-1968 թթ. նրանք համագործակցում են որպես Մոսկվայի «Բալետ սառույցի վրա» նորաստեղծ անսամբլի գեղարվեստական ղեկավար և նկարիչ: Դանդուրյանն այս անսամբլի համար ստեղծում է զգալի թվով զգեստների էքզիզներ՝ հետաքրքիր նորամուծություններով:

Ակնհայտ է, որ արվեստագետը առանձնակի սեր էր տաժում հենց պարային, բալետային հագուստների նկատմամբ՝ արտաքին գրավչության հետ մեկտեղ կարևորելով հարմարավետությունը: Նա համոզված էր, որ բեմական հագուստի նույնիսկ գործվածքը պետք է տարբերվի առօրեականից: Զգեստի էքզիզները հագուստի վերածելուն օգնում էին նկարչի կողմից շատ սիրված և հարգված դերձակ վարպետները: Ինքն էլ, գիտակի իրավունքով, սիրում էր անձամբ հետևել և մասնակցել աշխատանքին:

Դանդուրյանը գրում է. «(...) Ամենից շատ սիրում եմ աշխատանքային հենց այս պահը, սիրում եմ պատկերացնել, թե ինչպես ամենապայծառ և ճիշտ ձևով կբացահայտվի կատարողի պլաստիկան: Մտովի լսում եմ ապագա համարի երաժշտությունը: Եվ փորձում եմ քանդակել բեմական զգեստը անմիջականորեն հենց կատարող դերասանի վրա, քանզի, իմ կարծիքով, պարի մեջ կարևոր է միաձուլել թատերական կերպարի և հենց պարողի անհատական բնավորությունն ու պլաստիկան (...)»⁸:

Այդ տարիներին Դանդուրյանը շարունակում է համագործակցել «Մոսֆիլմ» և «Լենֆիլմ» ստուդիաների հետ: Նրա հեղինակած զգեստներն

⁷ ԳԱԹ, Կերպարվեստի ֆոնդ, N 443, 444, 3694, 3695, 3696, 3697, 3698:

⁸ Лущкая 1976, 20-21.

էին կրում «Տասներկուերորդ գիշեր» (1955), «Քառասունմեկերորդը» (1956), «Չեկաշ» (1956), «Կառնավալային գիշեր» (1956), «Նավաստին «Կոմետայից» (1958), «Անմահ կայազոր» (1959), «Թագավորներն ու կաղամբը», «Նավաստին և գիսաստղը», «Ինչպես նա խաբեց նրա ամուսնուն» (1956) և շատ այլ հայտնի ֆիլմերի հերոսները: Մխաված չենք լինի, եթե ասենք, որ ժամանակի կնիքը կրող այդ հազուատներից շատերը հերոսների հետ մեկտեղ մնացին ժամանակակիցների հիշողության մեջ:

Չնայած հետզհետե վատացող տեսողությանը՝ Դանդուրյանը մինչև կյանքի վերջին տարիները զբաղվեց իր սիրելի գործով:

Նշենք, որ նոր ձեռք բերված տեղեկությունները և նյութերը հնարավորություն են ընձեռում ավելի ճիշտ և ամբողջական պատկերացում ունենալու տաղանդավոր արվեստագետ Ալեք Դանդուրյանի գործունեության մասին:

Անաստասիա Դանդուրյան

Մեզանում բացահայտում էր նաև մինչ այժմ գրեթե անծանոթ, շնորհալի և յուրօրինակ ոճի տեր, գրաֆիկ նկարչուհի Անաստասիա Դանդուրյանի արվեստը, որի բազմաբնույթ գրաֆիկական էջերը խոր ուսումնասիրության կարիք ունեն: Նա 1922-1930 թթ. ուսանել է Թիֆլիսի գեղարվեստի ակադեմիայում՝ Եվգենի Լանսերեյի և Իոսիֆ Շարլեմանի մոտ: Ապրել և աշխատել է Թբիլիսիում՝ միշտ կապ պահպանելով եղբոր հետ:

Նկարչուհու մատիտանկարներից են «Վ. Չկալովի դիմանկարը» (1941), «Էտյուդ բարդիով» և «Էտյուդ պատշգամբից» (1953), տուշով և ծայրով արված «Մարտ կիրճում» (1944), «Զբոսայգու մի անկյուն» (1947), «Խաղողահավաք» (1949) գործերը: Բացի գրաֆիկական կոմպոզիցիոն աշխատանքներից և դիմանկարներից, նա բազմաթիվ նկարազարդումների հեղինակ է՝ Հովհաննես Թումանյանի «Գիքորը» (նկ. 3) և «Տերն ու ծառան» (1935), Ժան-Բատիստ Մոլիերի «Ծիծաղելի սեթևեթուհիները» (1939), Ապուլեյի «Ամուր և Փսիքե» (1946) (նկ. 4), Անատոլ Ֆրանսի «Թագուհի Պեդրքի խորտկարանը» (1947), Հանս Քրիստիան Անդերսենի «Լուցկիներով աղջիկը», Միխայիլ Լերմոնտովի «Մեր ժամանակի հերոսը»⁹ (1935):

Ուրախալի է, որ պատկերասրահի գրաֆիկայի ֆոնդերը համարվեցին «Գիքորը» պատմվածքի ամենավաղ պատկերազարդումներից մեկով¹⁰: Հավելենք, որ հայազգի նկարիչներից առաջինը՝ Հակոբ Կոջոյանն

⁹ Չարյան 1935, 4:

¹⁰ ՀԱՊ, հայկական գծանկարի ֆոնդ, N 6190, 6191, 6192, 6193, 6194, 6195, 61966, 6197, 6198, 6199:

էր 1923 թ. անդրադարձել «Գիքորին»¹¹, իսկ դրա առաջին ձևավորումը պատկանում է Իոսիֆ Ռոտտերին (1907 թ., Թիֆլիս)¹²:

ՀԱՊ-ի Հուշածեռագրային բաժնում են պահվում նկարչուհու երեք ուշագրավ ստեղծագործություններ՝ Մկրտիչ Զանանի «Շահնամե» պիեսի սև-սպիտակ մի նկարագրողում (1935) և հայկական թեմայով գունավոր մանրանկար¹³, ինչպես նաև նկարիչ Գրիգոր Շարբաբջյանի ֆոնդում՝ ճապոնական թեմայով փոքրածավալ մի գծանկար¹⁴:

Ծանոթությունը նկարչուհու գծային, գրաֆիկական նկարագրողունների թույլ է տալիս զուգահեռներ տանել նույն ժամանակահատվածում գրքարվեստի ասպարեզում ստեղծագործած Հակոբ Կոջոյանի, Միքայել Արուտչյանի գործերի հետ: Անաստասիա Դանդուրյանի նկարագրողունների և գրաֆիկական կոմպոզիցիաների, մյուս աշխատանքների մտածողության մեջ ակնհայտ է ինչպես հայկական մանրանկարչության, այնպես էլ Արևելքի արվեստի ազդեցությունը, նկատվում է նաև նմանությունը Վլադիմիր Ֆավորսկու փայտափորագրական արվեստին՝ ինչպես գծի մշակման առումով, այնպես էլ կոմպոզիցիոն կառուցվածքի դիտանկյունից:

Տեղին է նշել այն հանգամանքը, որ 2019 թ. Հայաստանի նկարիչների միությունում «Կոմիտաս-Թումանյան 150» և Հայաստանի ազգային պատկերասրահում բացված «Արևելքը և հայ արվեստը» (XIII-XX դդ.) մեծածավալ պատկերահանդեսների ցուցադրության մեջ մեզ բախտ վիճակվեց երկար դադարից հետո ներկայացնել քույր և եղբայր Դանդուրյանների մի քանի աշխատանք: Այցելուների, հատկապես արվեստաբանների ակնհայտ հետաքրքրությունը, հիացմունքը և բարձր գնահատականը իրենց սպասեցնել չտվեցին:

Եզրակացություններ

Անաստասիայի և նրա եղբոր աշխատանքների մեծ մասը Ալեքսեյ Դանդուրյանի ընտանիքի սեփականությունն է: Մի շարք գործեր գտնվում են մասնավոր հավաքածուներում:

Հոգվածում առկա նոր տեղեկություններն ամբողջացնում է XX դ. առաջին կեսի հայ բեմանկարչության ակունքներում կանգնած, վաստա-

¹¹ Զարյան 1986, 27-32:

¹² Ղազարյան 1969, 55:

¹³ ՀԱՊ, Հուշածեռագրային բաժին, ֆ. 6, N 18650, 18651:

¹⁴ ՀԱՊ, ֆ. 35, N 3526:

կավոր բեմանկարիչ Ալեքսեյ Դանդուրյանի և նրա քրոջ՝ գրաֆիկ նկարչուհի Անաստասիա Դանդուրյանի ստեղծագործական գործունեությունը:

Այս հրապարակումը նրանց մասին առաջին անդրադարձն է Հայաստանում: Այդպիսով, գիտական շրջանառության մեջ է դրվում հանիրավի մոռացության մատնված արվեստագետների ստեղծագործական բազմաբնույթ ժառանգությունը, որը մեր ժամանակներում վերարժևորելու կարիք ունի:

Անաստասիա և Ալեքսեյ Դանդուրյանների ստեղծագործությունների մեծ մասը Ալեքսեյ Դանդուրյանի ընտանիքի սեփականությունն է: Մի շարք արժեքավոր գործեր պահվում են մասնավոր հավաքածուներում:

Գրականություն

Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ),
Կերպարվեստի ֆոնդ, գույքահամար N 443, 444, 3694, 3695, 3696,
3697, 3698:

Զարյան Ռ. 1935, Մեր ժամանակի հերոսը, Գրական թերթ, N 18, Երևան, էջ 4:

Զարյան Ռ. 1986, Ճշտումներ և լրացումներ («Գիքոր»), ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր
հասարակական գիտությունների, N 8, Երևան, էջ 27-32:

Հայ սովետական թատրոնի պատմություն 1967, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.,
647 էջ:

Հայաստանի ազգային պատկերասրահ (ՀԱՊ), Հայկական գծանկարի ֆոնդ,
N 1840, 1841, 1842, 1843, 1844, 1845, 1927, 1928, 1929, 1930, 2497,
2498, 2499, 2500:

ՀԱՊ, հայկական գծանկարի ֆոնդ, N 6190, 6191, 6192, 6193, 6194, 6195,
61966, 6197, 6198, 6199:

ՀԱՊ, հուշածեռագրային բաժին, ֆ. 6, N 18650, 18651:

ՀԱՊ, հուշածեռագրային բաժին, ֆ. 35, N 35266:

Ղազարյան Մ. 1969, Ներշնչող կերպարներ, Պատմա-բանասիրական հան-
դես, N 3, Երևան, էջ 55:

Луцкая Е. 1976, Мастер костюма, Эстрада и цирк, N 4, Москва, с. 20-21.

ՀԱՅՏՆԻ ՈՒ ԱՆՀԱՅՏ ԱԼԵՔՍԵՅ ԵՎ ԱՆԱՍՏԱՍԻԱ ԴԱՆԴՈՒՐՅԱՆՆԵՐ

Սեդա Խանջյան

Թատերանկարիչ Ալեքսանդր Դանդուրյանի անունը, որն ստեղծագոր-
ծել է 1930-1980-ական թթ. թատրոնի, կինոյի, բալետի, էստրադայի ասպա-
րեզում, մեր օրերում քչերին է հայտնի: Նա աշխատել է որպես բեմանկարիչ և

զգեստների ձևավորող Երևանի, Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի և այլ քաղաքների թատրոններում, «Երևան-ֆիլմ», «Մոսֆիլմ» և «Լենֆիլմ» կինոստուդիաներում, Մոսկվայի «Բալետ սառույցի վրա» անսամբլում: Օժտված լինելով նկարելու ունակությամբ՝ երաժշտության մեջ գիտակ և բալետի դասական հիմունքներին տիրապետող արվեստագետը հաջողության է հասել՝ ստեղծելով արտիստների անհատական և բեմական բնութագիրը ընդգծող, հարմարավետ և տպավորիչ զգեստների էսքիզներ: Նրան միշտ աջակցել է քույրը՝ գրաֆիկ նկարչուհի թիֆլիսաբնակ Անաստասիա Դանդուրյանը: Վերջինս հեղինակ է մի շարք գրաֆիկական կոմպոզիցիոն աշխատանքների, դիմանկարների և մեծ թվով գրքերի նկարազարդումների, որոնցից շատերը հրատարակվել են «Հայպետհրատ»-ում:

Բանալի բաներ – Ալեքսեյ և Անաստասիա Դանդուրյաններ, մոռացված արվեստագետներ, նոր համալրում, բեմանկարիչ, բեմական զգեստի էսքիզ, գրաֆիկ նկարչուհի, նկարազարդում:

ИЗВЕСТНЫЕ И НЕИЗВЕСТНЫЕ АЛЕКСЕЙ И АНАСТАСИЯ ДАНДУРЯНЫ

Седа Ханджян

Имя Александра Дандуряна – художника, работавшего в сфере театра, кино, балета и эстрады с 30-ых по 80-е годы XX в., ныне мало кому известно. Он создавал сценические декорации и эскизы костюмов для спектаклей в разных театрах страны (в Ереване, Москве, Ленинграде, Киеве и др.). Работал художником на студиях «Мосфильм», «Ленфильм», «Ереван-фильм», с московским ансамблем «Балет на льду». Будучи одаренным художником, Дандурян был наделен также неординарным музыкальным даром, тончайшим образом разбирался в классическом балете и классической музыке. И не случайно признание к нему пришло именно в этой области – через мастерски спроектированные сценические костюмы, которые метко характеризовали как образ, так и самого актера. Очень часто подавала идеи художнику, вдохновляла и поддерживала его сестра – художник-график Анастасия Дандурян. Она работала в разных техниках и жанрах, но более всего вкладывала свои силы и умение в книжное оформление и иллюстрации. И несмотря на то, что Анастасия жила в Тбилиси, она никогда не теряла связи с армянской действительностью, армянским искусством. Подтверждением тому являются вышедшие в свет в ее оформлении книги в ереванском государственном издательстве тех лет.

Ключевые слова –Алексей и Анастасия Дандуряны, забытые художники, новые поступления, театральный художник, эскиз сценического костюма, художник-график, иллюстрация.

KNOWN AND UNKNOWN ALEXEY AND ANASTASIA DANDURYANS

Seda Khanjyan

Name of the artist Alexey Danduryan, who worked during 1930-1980s in the spheres of theatre, cinematography, ballet, music-hall art is not very well-known nowadays. He decorated stages and designed costumes for the theatres in Yerevan, Moscow, Kiev, Leningrad and other cities, for “Yerevan film”, “Mosfilm”, “Lenfilm” studios and the Moscow “Ballet on the Ice” company.

Being a gifted painter, and a connoisseur of classical music and ballet he created and designed impressive costumes which came to complete and harmonize the individuality of the artists and their characters on stage. He was always supported by his sister Anastasia Danduryan, a Tbilisi-based graphic artist, who had her own unique style of drawing. Anastasia was the author of a number of graphic compositions, portraits and book illustrations which were published by the State Publishing House of Erevan.


Key words – Alexey and Anastasia Danduryans, forgotten artists, new acquisition, stage designer, stage costume sketch design, graphic painter, illustration.



Նկ. 1. Ալեքսեյ Դանդուրյան. Զգեստի էսքիզներ «Անահիտ» ֆիլմի համար, 1947 թ., թուղթ, գուաշ, տուշ, բրոնզ (ՀԱՊ)



Նկ. 2. Ալեքսեյ Դանդուրյան. Զգեստի էսքիզներ Արտեմի Այվազյանի «Աշուղ Մուրադ» օպերետի համար, 1945 թ., թուղթ, ջրաներկ, գուաշ (ՀԱՊ)



Նկ. 3. Անաստասիա Դանդուրյան. Հ. Թումանյանի «Գիբորը» պատմվածքի նկարազարդումներից, 1935 թ., թուղթ, տուշ (ՀԱՊ)



Նկ. 4. Անաստասիա Դանդուրյան. Լյուցիուս Ապուլեյուս «Ամուր և Փսիքե» նովելի նկարազարդումներից, 1946 թ., թուղթ, տուշ (ընտանիքի սեփականություն)

**«ՆՈՐ ԹԱՆԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀՀ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Դավիթ Պողոսյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի 17
Էլ. հասցե՝ poghosyand@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 27.03.2019, գրախոսվել է 20.02.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

Պատմամշակութային ժառանգությունն այսօր հաճախ է վերածվում այն հենման կետի, որը հավաստի հիմք է շրջակա միջավայրին հարմարվելու և արդի իրողություններին ներդաշնակելու, ստեղծարարական գաղափարները բացահայտելու համար: Ընդ որում, այն դիտարկվում է որպես համընդգրկուն միջավայր, կայուն զարգացման ռեսուրս:

Այդուհանդերձ, պատմամշակութային ժառանգության պահպանման և սերունդներին ավանդելու առաքելությունն իրականացնելիս «թանգարան» սոցիալ-մշակութային իրողության հանդեպ ևս ձևավորվում են փոխակերպման պահանջմունքներ և կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտություն: Խորվաթ թանգարանագետ Կ. Բատինայի կարծիքով՝ արդի թանգարանը վերածվում է սոցիալական վերափոխման մեխանիզմի, որի կարիքն ունի հետարդյունաբերական, սպառողական հասարակությունը՝ ելնելով ինքնության և հավաքական հիշողության պահպանման նկատառումներից¹: Իսկ արդյոք այդ պահանջմունքները մի՞շտ են համընկնում XIX դարում կայացած, «գիտության և արվեստի տաճար» համարվող թանգարանների գործնական ոլորտի կարիքներին: Հավաքածուների միջոցով մշակութային ժառանգության «հատվածային և արհեստական» մոդելավորված թանգարանային տարածքները, որոնք հաճախ շարունակում են ծառայել որոշակի գիտակարգի հետազոտական կարիքներին, կարո՞ղ են վերափոխվել և վերափոխիչ նշանակություն ունենալ շրջակա համայնքի կյանքում:

«Թանգարանային հեղաշրջումներ» խորագրով գիտական հոդվածների ժողովածուի խմբագիրները նախաբանում ընդգծում են, որ թանգարանները մշտապես փոփոխվում են: Հաճախ այդ փոփոխությունները

¹ Batina 2009, 274:

փոքրածավալ են, քան համընդգրկուն, սակայն յուրաքանչյուրը հանգեցնում է հաստատության աստիճանական, նաև հիմնարար վերափոխման²: Արևմտյան հայտնի թանգարանային տեսաբաններից է. Հուպեր Գրինհիլը հակված է թանգարանների զարգացումը դիտարկել Միշել Ֆուկոյի երեք «էպիստեմների» կամ իմացական համակարգերի շրջանակներում, որոնք հեղինակն առաջարկել էր բանտերի, հիվանդանոցների և զորանոցների համար³: Մասնավորապես, թանգարանների վերափոխումները է. Հուպեր-Գրինհիլը դիտարկում է «էպիստեմների» (episteme) կամ «պարադիգմների» (paradigm) բեկումնային փուլերով: Այսպես, «Վերածննդի էպիստեմը» իր հետ բերում է «աշխարհի մոդելը» ներկայացնող հումանիստական հավաքածուները, «Դասականը»՝ ռացիոնալիստական մոտեցմամբ թանգարանային մասնագիտացումները, հավաքածուների դասակարգումը և կարգաբերումը սիստեմատիկ զարգացման «զծային» կամ «կատալոգային» տարբերակներով, «Մոդեռն էպիստեմը», հանձին XIX դ. սկզբին հանրության առջև բացված Լուվրի՝ արդի լուսավորական թանգարանային հարացույցը⁴:

Թանգարանային վերափոխումների հարցում թեև մասնագետները միակարծիք չեն, այնուհանդերձ, գրեթե բոլորը դրանց հետևում տեսնում են հասարակության հատուկ վերաբերմունքի, պահանջմունքների դրսևորումը: Այսօր էլ թանգարանը միանշանակ մեկ կառուցվածքային մեկնաբանություն չունի: Լեյսթերի համալսարանի պրոֆեսոր Ջ. Մերիսթայնը «Ինչ է թանգարանը» խորագրի ներքո առանձնացնում է հաճախ քննարկվող հիմնական կառուցվածքային մեկնաբանությունները. դրանք են՝ «թանգարանը՝ սրբավայր (shrine)», «թանգարանը՝ շուկայի օրենքներով գործող արդյունաբերություն (market-driven industry)», «թանգարանը՝ գաղութացնող տարածք (colonizing space)» և «հետթանգարան (postmuseum)»⁵:

Այս համատեքստում խոսել թանգարանագիտության՝ որպես արդեն ձևավորված, ինքնուրույն գիտակարգի մասին, թերևս տեղին չէ: Այն դեպքում, երբ մի շարք մասնագետներ (Ի. Նեուստուայնի, Վ. Բերնս) ընդհանրապես հերքել են թանգարանագիտությունը՝ որպես ուրույն տեսություն⁶: Խնդիրն այն է, որ տարբեր երկրներում թանգարանների ստեղծման և զարգացման տարբերությունները թանգարանային մշակույթի հանդեպ տարբեր վերաբերմունքի ձևավորման հիմնապատճառներ են, նույնիսկ «թանգարանագիտություն» եզրը, որը շրջանառության մեջ է դրվել դեռևս

² Knell, MacLeod, Watson 2007, XX.

³ Hooper-Greenhill 1992, 12.

⁴ Hooper-Greenhill 1992, 12-18.

⁵ Marstine 2006, 9-21.

⁶ Каулен 2005, 19.

1883 թվականից, երկրից երկիր տարբեր ընկալումներ ունի: Այնուհանդերձ, այսօր հետաքրքրությունն աճում է թանգարանագիտության հանդեպ, թեև այն, որպես գիտություն, գրեթե միշտ հետ է մնում գործնական ոլորտից: Նշված երևույթը պայմանավորված է դեռևս նախորդ դարի երկրորդ կեսին թանգարանների համար *բեկումնային* իրադրությամբ:

Մասնավորապես, ամբողջ աշխարհում 1960-70-ական թթ. ծավալվեց *թանգարանային բումի* կամ *թանգարանային պայթյունի* շրջանը⁷ այցելուների աննախադեպ աճով, թանգարանների քանակի ավելացմամբ, նոր տիպի թանգարանների առաջացմամբ և այլն⁸: Մասնավորապես, հետպատերազմյան շրջանում ծավալված ժողովրդավարական շարժումները, արժեհամակարգերի սրընթաց փոփոխությունը, մշակութային երկխոսությունների ակտիվացումը, հաղորդակցության միջոցների զարգացումը, գլոբալիզացիոն գործընթացների ծավալումն ու կայուն զարգացման գաղափարների տարածումն ու ներդրումը հանգեցրին թանգարանի՝ հասարակական դերի ու նշանակության ակտիվ քննարկման, մղեցին որոնելու նոր տիպի թանգարանային համակարգեր, որոնք առավել արդյունավետությամբ կօգնեն մարդուն իր առօրյա կյանքի ընթացքում: Այդպիսով հասարակությունը նոր *թանգարանային պահանջմունք* առաջադրեց. այն է՝ թանգարանների վերափոխումը՝ որպես ակտիվ զարգացման մեխանիզմի, կամ ինչպես Ս. Ի. Սոտնիկովան է նշում՝ «թանգարանի մեծածավալ սոցիալիզացման ճանապարհների փնտրտուքի»⁹:

Նոր թանգարանագիտությունը՝ որպես թանգարանի վերափոխման հիմք

«Թանգարանագիտությունը գիտություն է, թե՛ պարզապես պրակտիկ թանգարանային գործունեություն» (Museology-science or just practical museum work?) խորագիրը 1980-ական թթ. հայտնվեց ԻԿՕՖՕՄԻ¹⁰ (ԻԿՕՄ-ի Թանգարանագիտության միջազգային խորհուրդ /International Committee for Museology /ICOFOM/) իրատարակած առաջին պարբերական նյութերի վրա¹¹: Այսօր արդեն բազմաթիվ երկրներում խնդիրը հօգուտ գիտության է լուծվում, թեև գրեթե բոլոր մասնագիտական տեղեկատու նյութերում խոս-

⁷ Столяров 2004, 71.

⁸ Մեծ Բրիտանիայում 1971-1987 թթ. հիմնվել է մոտ 800, 1988-1989 թթ. ընթացքում միայն Գերմանիայում՝ 189 նոր թանգարան: Batina 2009, 268.

⁹ Сотникова 2004, 125.

¹⁰ ԻԿՕՄ-ի (Թանգարանների միջազգային խորհրդի-International Council of Museums /ICOM/) միջազգային կոմիտեներից մեկը՝ ստեղծված 1977 թ., Մոսկվայում և Լենինգրադում ընթացող վերջինիս գլխավոր կոնֆերանսի ընթացքում: Ste'u Scheiner 2000, 2.

¹¹ Sofka 1980, 3.

վում է այն մասին, որ թանգարանագիտությունը ձևավորվող գիտություն է¹²: ԻԿՕՖՕՄ-ի պատրաստած «Թանգարանագիտության հիմնարար հասկացությունները» խորագրով աշխատանքում նշվում է, որ 1950 թ. ի վեր լայնորեն կիրառվող «թանգարանագիտություն» եզրն ունի արդի հինգ իմաստ¹³: «Նոր թանգարանագիտությունը» (ֆրանսերեն՝ la nouvelle muséologie, անգլերեն՝ new museology) դրանցից մեկն է, որի ուշադրության առանցքում են դասական, հավաքածուների վրա կենտրոնացած թանգարաններից անցումը նոր տիպի թանգարանների՝ էկոթանգարաններին, համայնքային թանգարաններին և բոլոր նրանց, որոնց միջոցով նպատակ է հետապնդվում ժառանգությունը գործադրել ի նպաստ տեղային զարգացման¹⁴:

Թանգարանագետ-տեսաբանների մեծ մասը երկար ժամանակ փնտրում է բոլոր թանգարանների պահանջմունքները բավարարող գիտական մոտեցումներ, և ԻԿՕՖՕՄ-ի նշված աշխատանքում էլ նույն միտումը կա, սակայն արդյո՞ք դա հնարավոր է թանգարանների դինամիկ զարգացման և վերափոխումների պայմաններում:

Այդպիսով, 1960-ական թթ. սկսած, տարբեր երկրներում թանգարանային առաջադեմ մասնագետները՝ դժգոհ թանգարանների բարեփոխման անհաջող փորձերից, սկսեցին փնտրել թանգարանային գործունեության մեթոդների, բովանդակության և կառուցվածքի հիմնարար վերափոխման ուղիներ: Փնտրտուքի նպատակն էր օգնել թանգարաններին լիարժեք իրացնելու իրենց սոցիալական գործառույթները՝ ոչ թե հաճախումների բարձրացմամբ, այլ մարդկանց առօրյայի վրա որոշակի ազդեցությամբ: Այս գործընթացների շնորհիվ սկսեցին փորձարկվել նոր թանգարանային մոդելներ. նման երեք զուգահեռներ ի հայտ եկան տարբեր երկրներում՝ դրացիական /neighborhood/ թանգարանը՝ ԱՄՆ-ում, ինտեգրվող /integral/ թանգարանը՝ Լատինական Ամերիկայի երկրներում, էկոթանգարանը՝ /ecomuseums/ Ֆրանսիայում, Կանադայում¹⁵: Այս նոր թանգարանների գործունեությունը հիմք էր 1970-80-ական թթ. «նոր թանգարանագիտության» սկզբունքների նախանշման և տարբեր երկրներից մասնագետների համախմբման համար: Հատկապես ցածր կենսամակարդակով բնակավայրերի զարգացումը դարձավ նոր տիպի թանգարանների հիմնական առաքելությունը: Վերոնշյալ թանգարանային փորձնական բոլոր մոդելներն էլ ի սկզբանե իրենց գործունեության կենտրոնը զուտ հավաքածուներից տեղափոխեցին մարդը, նրա առօրյա կյանքի վրա ազդելու, նրան օգնելու

¹² Гуральник 2001, 386. Каулен и др. 2009, 55.

¹³ Desvallées, Mairesse 2010, 54.

¹⁴ Desvallées, Mairesse 2010, 55.

¹⁵ Hauenschild 1998.

խնդիրը: Առաջինը Սմիթսոնյան թանգարանների համակարգում 1967 թ. Վաշինգտոնի սևամորթներով բնակեցված արվարձանում ստեղծված «Անակոստիա» թանգարանն էր՝ որպես տվյալ թաղամասի թանգարան: Այս թանգարանը վերածվեց իր շրջակա համայնքում կրթական մակարդակի բարձրացման, անգրագիտության վերացման, սեփական ապրելակերպի արժևորմանը նպաստող բաց հանրային հարթակի¹⁶:

1972 թ. Սանտյագո դե Չիլիում ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ տեղի ունեցած «Թանգարանի դերն արդի Լատինական Ամերիկայում» խորագրով կլոր սեղանն առաջին քայլերից էր մշակելու նոր թանգարանագիտության հիմքերը: Մասնավորապես, սեմինարի ընթացքում զարգացված «ինտեգրվող թանգարանի» հայեցակարգը ենթադրում էր Լատինական Ամերիկայի գյուղական, քաղաքային միջավայրերում առկա հիմնախնդիրների լուծման գործընթացներին համայնքների ինտեգրումը՝ դրանք հասկանալու և այլընտրանքային լուծումներ առաջադրելու եղանակով¹⁷: 11-օրյա գիտագործնական քննարկումների ընթացքում մշակվեցին և ընդունվեցին բանաձևեր, որոնց համաձայն պետք է լատինաամերիկյան թանգարանը փոխվեր, վերածվեր համայնքներում առկա տարբեր հիմնախնդիրների լուծման ինտեգրացիոն մեխանիզմի: Բանաձևերից մեկում նշվում էր, որ «աշխարհում, մասնավորապես թերզարգացած տարածքներում ընթացող սոցիալ-տնտեսական, մշակութային փոփոխությունները համարվում են թանգարանագիտության հիմնախնդիրները»¹⁸:

Էկոթանգարան

Սակայն միջավայրային թանգարանների առավել հաջողված հայեցակարգը, որը հիմնաքարային դարձավ «նոր թանգարանագիտության» համար, «Էկոթանգարանի» գաղափարն էր, որը մշակվեց ու ներդրվեց Ֆրանսիայում 1960-70-ական թթ.: 1971 թ. Հյուզ դը Վարինի ստեղծած հասկացության տեսական հիմքերը զարգացրեց Ժորժ Անրի Ռիվիեռը՝ իր հայտնի «Էկոթանգարանի հեղափոխիչ սահմանմամբ»: Ըստ այդմ՝ **«Էկոթանգարանը՝ որպես գործիք, մտահղացվում, ձևավորվում և գործում է տեղաբնակների ու պետական կառավարման մարմինների հետ համատեղ: Այն հայելի է, որի մեջ տեղաբնակներն իրենց են տեսնում, բացահայտում իրենց իսկ կերպարը, որն արտահայտվում է սեփական բնակավայրի բացատրության փնտրտուքով՝ անկախ ժամանակից և սերունդների շարունակականությունից: Էկոթանգարանը մարդու և բնության ներդաշնակության արտացոլումն է: Էկոթանգարանն իր ժամանակի արտա-**

¹⁶ Kinard 1985, 157-158.

¹⁷ Basic principals of the integral museum 1973, 198.

¹⁸ Resolutions adopted by the round table of Santiago (Chile) 1973, 198.

հայտնությունն է, քանի որ առաջարկում է պատմության լայն մեկնաբանություն: **Էկոթանգարանը տարածության մեկնաբանություն է**. յուրահատուկ մի տարածության, որտեղ կարելի է հանգրվանել կամ զբոսնել: **Էկոթանգարանը լաբորատորիա է**, քանի որ համագործակցությամբ նպաստում է որոշակի բնակավայրի՝ բնակչության, շրջակա միջավայրի անցյալի ու ներկայի ուսումնասիրմանը և այս ոլորտում մասնագետների պատրաստմանը: **Էկոթանգարանը կոնսերվացիոն կենտրոն է**, քանի որ օգնում է պահպանել և արժևորել տեղի բնական և մշակութային ժառանգությունը: **Էկոթանգարանը դպրոց է**, քանի որ ներգրավում է տեղաբնակներին հետազոտական և պահպանման գործունեության մեջ: Հեղինակը նշում էր, որ «մշակութային բազմազանությունն անսպառ է, ուստի էկոթանգարանները չեն ինքնամփոփվում, այլ ակտիվորեն փոխազդեցության մեջ են շրջակա միջավայրի հետ»¹⁹: Հ. Վարինը դեռ 1976 թ. իր հոդվածներից մեկում նշում է, որ «այս թանգարանային գաղափարի (էկոթանգարանի) հիմքում ընկած են ոչ թե առարկաները, այլ մարդիկ»²⁰: Ի տարբերություն դասական թանգարանային հաստատությունների, որոնց գործունեության հիմքում գիտականորեն համակարգված հավաքածուներն են, հատուկ շենքային, ցուցադրական տարածքները, էկոթանգարանի դեպքում դրանք պարտադիր չէին: Էկոթանգարանի հավաքածուներ կարող են դառնալ նույնիսկ առօրյա իրերը, որոնք կիրառական նշանակություն ունեն, իսկ պահպանման ամբողջ միջավայրը համարվում է թանգարանային տարածք: Ըստ այդմ՝ «նոր թանգարանագիտության» ուսումնասիրման առարկան կախված է որոշակի տարածքի, համայնքի առանձնահատկություններից: Ավելի հակիրճ կարելի է ասել, որ «նոր թանգարանագիտության» ուսումնասիրությունները ծավալվում են ոչ միայն թանգարանային հավաքածուների, այլև բնական և մշակութային ժառանգության հիմքով՝ համայնքի ինքնությունը պահպանելու, զարգացման հեռանկարներ որոնելու խնդրից ելնելով²¹: Էկոթանգարանն իր գործնական արտահայտությունն ստացավ 1960-70-ական թթ. Ֆրանսիայում, *ռեզիոնալ զարգացման* ծրագրերի շրջանակում: Հատկապես ազդեցիկ էր 1974 թ. բացված Լե-Կրեզո շրջանի Մարդու և արդյունաբերության թանգարանը²²: Սույն հայեցակարգը լայն տարածում ստացավ Կանադայում 1980-ական թթ. և եվրոպական երկրներում, վերջին տասնամյակներում լայն կիրառություն ունի նաև արևելաստիական երկրներում: Մասնավորապես, հետաքրքրական է չինական փորձառությունը, որտեղ առաջին էկոթանգա-

¹⁹ Rivière 1985, 182-183.

²⁰ Varine 1976, 127.

²¹ Պողոսյան 2010, 16:

²² Хадсон 2001, 143-146.

րանը հիմնվեց 1995 թ. չինանորվեգական համագործակցության շնորհիվ²³: Տասը տարի անց ստեծվեց արդեն չինական էկոթանգարանների ցանց, որոնց գործունեության հիման վրա 2005 թ. կազմակերպված միջազգային ֆորումի շրջանակներում հրապարակվեցին այն հիմնական սկզբունքները, որոնք հայտնի են «Լիուզիի սկզբունքներ» անվանումով: Այս փաստաթղթում կարևորվում են տեղական բնակչության իրավունքները ժառանգության առնչությամբ, մշակութային ժառանգության գիտելիքների ու ունակությունների զարգացումը, ժառանգության պահպանության գերակայությունը զբոսաշրջության հետ հակադրության դեպքում, երկարաժամկետ պլանավորումը, այցելուների հատուկ վարքը էկոթանգարանի տարածքում ու հարգանքը տեղական յուրօրինակությունների հանդեպ, առկա սոցիալական իրավիճակի և յուրահատուկ մշակույթի հիմնարար նշանակությունը, բարեկեցության մակարդակի բարձրացումը՝ ոչ ի հաշիվ ավանդական արժեքների կորստի: Մասնավորապես, 8-րդ սկզբունքը նախանշում է, որ «չկա էկոթանգարանների Աստվածաշունչ, դրանք տարբեր կլինեն՝ համաձայն մշակութային յուրօրինակությունների և սոցիալական այն իրավիճակի, որի մեջ առկա են»²⁴:

Էկոթանգարանները և նմանատիպ համայնքային թանգարանները կարող են հանդես գալ տարբեր անուններով, նույնիսկ դրանց հստակ սահմանումները չկան: Իտալացի մասնագետներ Մ. Մագին և Վ. Ֆալետին փորձել են որոշակիորեն համակարգել առկա ընդհանրական մոտեցումները, որոնք հաճախ կառուցվում են դասական համարվող թանգարանների հետ դրանց տարբերությունների ընդգծման միջոցով: Այսպես, Հ. Վարինի ձևակերպած *ավանդական և նոր թանգարանների* տարբերություններն են. հավաքածուից անցումը ժառանգությանը, կառույցից՝ տարածությանը, լսարանից՝ բնակչությանը: Պ. Բոյլանն ավելի է ընդլայնում այս տարբերությունների ցանկը՝ ըստ հետևյալ չափանիշների. *ընդգրկումը՝* շենքից տարածության, *մեկնաբանությունը՝* հավաքածուից ամբողջական ժառանգության, *կազմակերպման առավելությունները՝* գիտակարգայինից միջգիտակարգայինի, *հիմնական լսարանը՝* այցելուից համայնքին, *վերահսկողության քաղաքականությունը՝* թանգարանի ղեկավար մարմիններից համայնքային ղեկավար մարմիններին: Պ. Դավիսը տալիս է հետևյալ բնորոշիչները. *թանգարանային փորձքների ընդլայնում, շրջանակված վայր, համագործակցություն, տեղաբնակների ակտիվ ներգրավվածություն, «in situ», ամբողջական և միջգիտակարգային մեկնաբանություն*²⁵ և այլն:

²³ Su 2005, 5-8.

²⁴ Su 2005, 6-7.

²⁵ Maggi, Falletti 2000, 11.

«Նոր թանգարանագիտական» շարժումը

Այդպիսով, 1980-ական թթ. տարաբնույթ թանգարանային հայեցակարգերը ծնունդ տվեցին «նոր թանգարանագիտական շարժման»: Ըստ շարժման ակտիվ մասնակից, հայտնի կանադացի թանգարանագետ Պիեռ Մեյրանդի՝ «նոր թանգարանագիտությունը» պարզապես մշտական նորարարությունների խրախուսման նախաձեռնություն չէր, այլ մոբիլիզացնում էր թանգարանագիտության նպատակների հիմնարար ձևափոխության ջատագովներին և հանդես գալիս ի պաշտպանություն թանգարանագետների մտածողության ու գործելաոճի խորքային փոփոխությունների»²⁶: 1984 թ. Քվեբեկում արդեն կազմակերպվեց առաջին միջազգային աշխատաժողովը, որն ուներ «Էկոթանգարանները և նոր թանգարանագիտությունը» խորագիրը, և որի ընթացքում ձևակերպվեց «նոր թանգարանագիտական շարժման» հռչակագիրը: Քվեբեկյան հռչակագրում հիմնականում հետևյալ խնդիրներն էին դրվում. Սանտյագոյի բանաձևերի հետևողական իրականացումը և թանգարանագիտության վերափոխումը՝ ի նպաստ դրա միջոցով սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման, նոր տիպի թանգարանների՝ էկոթանգարանների, համայնքային թանգարանների համախմբման և կատարելագործման, դրանց փորձառության շարունակման: Հռչակագրում նշվում էր, որ միջազգային թանգարանային հանրությունը հրավիրվում է ճանաչելու այս շարժումը, հաստատելու և ընդունելու բոլոր ակտիվ թանգարանագիտական եղանակները՝ իրենց թանգարանային տիպերով²⁷: Քվեբեկի հռչակագրին նախորդել էր (1984) Օաքսթեփեքի (Մեքսիկա) հռչակագիրը, որով ընդունվել էր «տարածք-ժառանգություն-համայնք» համամիասնությունը, իսկ արդեն Կարակասի հռչակագրում (1992) այն տեսակետն էր պնդվում, որ թանգարանը պետք է սոցիալական կազմակերպչի պարտականություններ կրի՝ արտացոլելով համայնքի հետաքրքրությունները²⁸:

Նոր թանգարանագիտական շարժումը վերաձվեց ավանդական թանգարանային գործի քննադատման և նոր տիպի փորձարարական թանգարանի պաշտպանության միջազգային հարթակի: Այնուհանդերձ, «նոր թանգարանագիտություն» եզրը 1989 թ. Պետեր Վերգոն այլ կերպ մեկնաբանեց: Նա ընդգծում էր, որ «ավանդական թանգարանագիտությունն» առավելապես նվիրված էր իր մեթոդներին, քան նպատակներին ու սոցիալական նշանակությանը և նախկինում հազվադեպ էր դիտարկվել որպես տեսական, հումանիտար գիտակարգ²⁹: Պ. Վերգոյի քննադատական մո-

²⁶ Mayrand 1985, 200.

²⁷ Declaration of Quebec 1985, 201.

²⁸ Giménez-Cassina 2010, 26.

²⁹ Vergo 1989, 3.

տեցումն այսօր լայն տարածում ունի անգլախոս երկրներում: Ուստի մասնագիտական շրջանակներում ընդունված է տարանջատել «լատինական և անգլոսաքսոնական նոր թանգարանագիտություններ», որոնք թեև նույնը չեն, սակայն երկուսն էլ թանգարաններն ակտիվ դեմոկրատացման շրջանին կողմնորոշելու փորձեր են³⁰: Պ. Վերգոյի տեսությունն առավելապես ուղղված է *թանգարանի սոցիալականացմանը* և դրա նոր տեսական հիմքերի մշակմանը, այնինչ ռոմանո-լատինականը տարված է ժառանգության միջոցով տարածքների զարգացման գաղափարով³¹: Եթե առաջին դեպքում թանգարանը հաճախ իր կառուցվածքով նույնն է մնում, ապա մյուս դեպքում վերածվում է նոր թանգարանային մոդելի: Վերջինս, 2007 թ. սկսած, զարգացման նոր ուղիով է ընթանում՝ հաշվի առնելով վերջին տասնամյակում տեղի ունեցող գլոբալ սոցիալական փոփոխությունները: Մասնավորապես, Նոր թանգարանագիտության միջազգային շարժման 2007 թ. Լիսաբոնի 12-րդ աշխատաժողովի ընթացքում վերափոխվելու խնդիր առաջադրվեց՝ հաշվի առնելով հասարակական փոփոխությունները, *կայուն զարգացման* հիմնախնդիրները և թանգարանային համապատասխան փորձառությունը: Էկոթանգարանների գիտակ, Նյուքասլ համալսարանի պրոֆեսոր Պիտեր Դավիսն արդի էկոթանգարանները համարում է «համայնքի ուժերով կազմակերպվող թանգարան կամ ժառանգության նախագիծ (heritage project), որը *կայուն զարգացման* նպատակ է հետապնդում»³²:

«Նոր թանգարանագիտության» արդիականությունը Հայաստանում

Հայ մասնագիտական շրջանակներին թեև «նոր թանգարանագիտության» սկզբունքները անհայտ չէին, այնուհանդերձ, դրանք տարածում չստացան: Հարցը թերևս նրանում էր, որ մեզանում մշակութային ժառանգությունը միայն վերջին տարիներին է սկսվել զբոսաշրջության զարգացման համատեքստում դիտարկվել՝ որպես սոցիալ-տնտեսական զարգացման ռեսուրս³³: Թեև *կայուն զարգացմանն* ուղղված ծրագրերում մշակութային ժառանգությունն այդքան էլ նման գործառույթ չունի: Տարբեր պետական ռազմավարական փաստաթղթերում շեշտադրվում են հատկապես մշակութային կյանքին բնակչության մասնակցության պայմանների, մշակութային արժեքների և ծառայությունների մատչելիության ապահովումը, բնակչության տարբեր շերտերի շրջանում ժառանգության վերաբերյալ իրազեկության բարձրացումը, մշակութային արժեքների ստեղծման գործընթացում հասարակության լայն շերտերի ներգրավվածությունը, մշակու-

³⁰ Assunção dos Santos 2010, 7.

³¹ Heijnen 2010, 14.

³² Davis 2007, 199.

³³ Տե՛ս Հրոսաշրջության զարգացման հայեցակարգ, 2:

թային բրենդի արմատավորումը, մրցունակ և գրավիչ տարածքների ձևավորումը և այլ կարևոր հիմնախնդիրների լուծումը: Այնուհանդերձ, մշակութային ժառանգության հենքի վրա նոր զարգացման մեխանիզմների մշակումը և փորձարկումը շարունակում են դանդաղել: Այս առումով կայուն զարգացման մոտեցումների դրսևորումն առավել ակնհայտ էր արտահայտված «Կիևյան նախաձեռնության տարածաշրջանային մշակութային ժառանգության վերականգնումը պատմական քաղաքներում, պիլոտային երկրորդ ծրագրի» շրջանակներում, որի առաջին փուլն իրականացվեց 2009-2011 թթ.³⁴:

«Նոր թանգարանագիտության» մոտեցումների ներդրման համար հենակետային կարող ենք համարել հատկապես *մշակութային լանդշաֆտ* և *մշակութային տարածք* հասկացությունները: Վերջինները կարող են հիմք դառնալ մշակութային ժառանգության համալիր և միջավայրային պահպանման ավանդական եղանակների վերափոխմանը կամ կատարելագործմանը: Նման համադրման ուղիներից էր նաև 2008 թ. էկոթանգարանների և արգելոց-թանգարանների համադրման շնորհիվ ձևակերպված «համայնքային արգելոց-թանգարանի» հայեցակարգը³⁵: Այն ենթադրում էր ոչ թե պետության կողմից ժառանգության պահպանման և հանրայնացման միջոցառումներ, որքան բնակչության մեջ այն արժևորելու, շրջակա միջավայրի հանդեպ հատուկ վերաբերմունք ձևավորելու, տարածքի ինքնությունն ընդգծելու մեխանիզմ: Սույն մոդելն ընկած էր դեռ 2010 թ. մշակված «Հին Խնձորեսկ» պատմամշակութային արգելոց-թանգարանի հիմնադրման առաջարկ-նախագծի հիմնադրույթներում, առաջարկվել էր նաև Գյումրի քաղաքում առկա հարուստ պատմամշակութային ժառանգության արժևորման ու արդիականացման գործընթացներում ներդնելու նպատակով³⁶:

Եզրակացություններ

Այսպիսով, հսկված ենք նոր թանգարանագիտության դրույթները տեղայնացնելու ՀՀ պատմամշակութային ժառանգության պահպանման և կառավարման մեխանիզմներում: Որպես նախապայման՝ առանձնացնում ենք առկա պատմամշակութային հարուստ ժառանգությունը՝ իր նյութական և ոչ նյութական դրսևորումներով: Ցավոք, պետության ջանքերը բավարար չեն համայնքներում մշակութային կյանքի, զբոսաշրջության զարգացման ուղղությամբ, ինչպես նաև առաջացել է թանգարանացման վերաբերյալ հնացած կարծրատիպերի փոփոխության անհրաժեշտություն:

³⁴ Kyiv Initiative.

³⁵ Պողոսյան 2008, 180-185: Պողոսյան 2010, 19-21:

³⁶ Պողոսյան 2011, 119-121: Պողոսյան 2013, 360-367:

Գրականություն

- Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, էջ 2, 15, ՀՀ էկոնոմիկայի նախարարության ցանցակայք, <http://www.mineconomy.am/uploads/conceptpaper.pdf>:
- Պողոսյան Դ.Ա. 2010, Թանգարանային հաղորդակցության միջավայրի զարգացման հեռանկարը. Համայնքային արգելոց-թանգարան, «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, Երևան, «Ամարաս», էջ 15-21:
- Պողոսյան Դ.Ա. 2008, Թանգարանը մշակութային հաղորդակցության միջավայր, Երևան, հեղինակային հրատ., 216 էջ:
- Պողոսյան Դ.Ա. 2011, Հին Խնձորեսկի թանգարանցման հարցի շուրջ, «Հուշարձան» տարեգիրք, հ. «Է», Երևան, «Հուշարձան», էջ 119-121:
- Պողոսյան Դ.Ա. 2013, «Նոր թանգարանագիտության» մոտեցումները որպես «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի վերագործարկման նախադրյալ, «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Գյումրի, հոկտեմբերի 4-6, էջ 360-367:
- Гуральник Ю.У. 2001, Музееведение, Российская музейная Энциклопедия, Москва, т. 1, Прогресс, «РИПОЛ КЛАССИК», с. 386-387.
- Гнедовский М.Б. 1998, Коммуникационный подход в изучении теории и истории музейного дела. Теория музейной коммуникации как методологическая база развития музейного дела. Музей и коммуникация. Концепция развития Самарского областного историко-краеведческого музея им. П.В. Алабина. Москва-Самара. Веб сайт Лаборатория музейного проектирования, РИК, <http://www.future.museum.ru/lmp/projects/samara/site/concept/2.htm>.
- Каулен Е.М. 2005, Музееведение как научная дисциплина. Основы музееведения, отв. ред. Э.А. Шулеева, Москва, Едиториал УРСС, с. 13-20.
- Каулен М.Е. и др. 2009, Музееведение. Словарь актуальных музейных терминов. Музей, Москва, № 5, с. 47-68.
- Столяров Б.А. 2004, Музейная педагогика. История, теория, практика, Москва, «Высшая школа», 216 с.
- Сотникова С.И. 2004, Музеология, Москва, «Дрофа», 190 с.
- Хадсон К. 2001, Влиятельные музеи. Новосибирск, Сибирский хронограф, 194 с.
- Assunção dos Santos P. 2010, Introduction: To understand New Museology in the 21st Century, Sociomuseology Vol. III. To understand New Museology in the 21st Century, Universidade Lusófona de Humanidades e Tecnologias, № 37, Lisbon, p. 5-11.
- Batina K. 2009, Cultural Studies and its Contribution to Understanding the Phenomena of Rapid Museum Growth, Ethnological Researches, Vol. 1, № 14, Zagreb, p. 267-279.

- Basic Principles of the Integral Museum 1973, Museum. The Role of museums in today's Latin America, Vol XXV, n° 3, UNESCO, Paris, p. 198.
- Davis P. 2007, Ecomuseums and sustainability in Italy, Japan and China. Concept adaptation through implementation, Museum revolutions. How museums change and are changed, ed. by S. J. Knell, S. MacLeod, S. Watson, Taylor & Francis e-Library, Routledge, New York, p. 198-214.
- Declaration of Quebec: Basic principles for a new museology 1985, Museum. Images of the ecomuseum, No 148 (Vol XXXVII, n° 4), UNESCO, Paris, p. 201.
- Desvallées A., Mairesse F. 2010, Museology (Museum Studies), Key Concepts of Museology, ICOM/ICOFOM, Armand Colin, Paris, 84 p.
- Giménez-Cassina E. 2010, Who am I? An identity crisis. Identity in the new museologies and the role of the museum professional, Sociomuseology Vol. III. To understand New Museology in the 21st Century, Universidade Lusófona de Humanidades e Tecnologias, N° 37, Lisbon, p. 25-41.
- Hauenschild A. 1998, Introduction, Claims and Reality of the New Museology: Case studies in Canada, the United States and Mexico. Website of the Smithsonian Center for Education and Museum Studies: https://www.si.edu/object/siris_bib_21.
- Heijnen W. 2010, The new professional: Underdog or Expert? New Museology in the 21th century, Sociomuseology Vol. III. To understand New Museology in the 21st Century, Universidade Lusófona de Humanidades e Tecnologias, N° 37, Lisbon, p. 13-24.
- Hooper-Greenhill E. 1992, Museums and the Shaping of Knowledge. Routledge, London and New York, 244 p.
- Kinard J. R. 1985, The Neighbourhood Museum as a Catalyst for Social Change, Museum. Images of the ecomuseum, No 148 (Vol XXXVII, n° 4), UNESCO, Paris, p. 217-223.
- Kyiv Initiative: Pilot Project on the Rehabilitation of Cultural Heritage in Historic Towns, official web site of Council of Europe, Culture, Heritage and Diversity, http://www.coe.int/t/dg4/cultureheritage/cooperation/Kyiv/urbanrehab_en.asp.
- Knell S. J., MacLeod S., Watson Sh. 2007, Introduction, Museum revolutions. How museums change and are changed, Taylor & Francis e-Library, First published by Routledge, New York, p. XIX-XXVI.
- Maggi M., Falletti V. 2000, Ecomuseums in Europe. What they are and what they can be, Working paper n. 137, Istituto Ricerche Economico-Sociali del Piemonte, Torino, 102 p.
- Marstine J. 2006, Introduction, New Museum Theory and Practice. An Introduction, Edited by J. Marstine. First published 2006 by Blackwell Publishing, Malden, Oxford, p. 9-21.
- Mayrand P. 1985, The New Museology proclaimed, Museum. Images of the ecomuseum, No 148 (Vol XXXVII, n° 4), UNESCO, Paris, p. 200-201.

- Resolutions adopted by the round table of Santiago(Chile) 1973, Museum. The Role of museums in today's Latin America, Vol XXV, n° 3, UNESCO, Paris, p. 198-200.
- Rivière G.H. 1985, The ecomuseum-an evolutive definition, Museum. Images of the ecomuseum, No 148 (Vol XXXVII, n° 4), UNESCO, Paris, p. 182-183.
- Scheiner T. 2000, The Many Faces of ICOFOM, International Committee for Museology, ISS (ICOFOM Study Series), Belgium, Groneningh, p. 2.
- Sofka V. 1980, Editorial: Museology-science or Just Practical Museum Work? MuWoP (Museological Working Papers), ICOM, Stockholm, ICOM International Committee for Museology, N° 1, p. 3.
- Su D. 2006, Chinese ecomuseums: the path of development, Communication and exploration, materials of International Ecomuseum Forum in Guiyang, June 1-6, 2005, Chinese Societe of Museum, Beijing, p. 5-8.
- Varine H. 1976, Le musée moderne: conditions et problèmes d'une rénovation (The modern museum: conditions and problems of renewal), Museum, N° 128 (3), UNESCO, Paris, p. 127-140.
- Vergo P. 1989, Introduction, The New Museology, ed. by Peter Vergo, Reaktion Books Ltd, London, 238 p.

**«ՆՈՐ ԹԱՆԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ
ՈԼՈՐՏՈՒՄ**

Դավիթ Պողոսյան

XX դարի երկրորդ կեսը համայնքների կյանքում թանգարանների դերի ակտիվացման ժամանակահատված էր: Այս հասարակական հիշողության ինստիտուտի հանդեպ նոր հանրային պահանջմունքներին ընդառաջ գնալու ձգտումները մղեցին նոր ուղիների որոնման: Նման իրավիճակում ծնունդ առան նոր տիպի թանգարաններ, որոնք ընդունված էր ընդհանրական անվանել «համայնքային թանգարաններ», որոնց կազմակերպման և գործունեության մեջ համայնքի անդամների ներգրավվածությունը հիմնական նախապայման էր: Նման թանգարանների տարբեր դրսևորումները (էկոթանգարան, դրացիական թանգարան, ինտեգրվող թանգարան և այլն) հիմք դարձան տարբեր միջազգային գիտական հարթակներում խոսելու «նոր թանգարանագիտության» կամ «նոր թանգարանագիտական շարժման» մասին: Վերջինս իր հետազոտական առանցքը հավաքածուներից կամ դասական թանգարանի ինստիտուցիոնալ կառուցվածքից տեղափոխեց այն դինամիկ եղանակների վրա, որոնք օգնում են համայնքներին պահպանել, մեկնաբանել և կառավարել իրենց ժառանգությունը կայուն զարգացման նպատակով:

ՀՀ վերջին տարիների մշակութային և զբոսաշրջային քաղաքականությունը պատմամշակութային ժառանգության պահպանման և օգտագործման առումով խթան է մասնագետների համար արդյունավետ մեխանիզմներ որոնելու, որոնք թույլ կտան ընդառաջ գնալ թանգարանների արդիականացման հանրային նոր պահանջմունքներին:

Բանալի բառեր՝ պատմամշակութային ժառանգություն, թանգարան, թանգարանագիտություն, նոր թանգարանագիտություն, համայնքային թանգարան, էկոթանգարան, ինտեգրվող թանգարան:

АКТУАЛЬНОСТЬ КОНЦЕПТУАЛЬНЫХ ПОЛОЖЕНИЙ «НОВОЙ МУЗЕОЛОГИИ» В МУЗЕЙНОЙ СФЕРЕ РА

Давид Погосян

Вторая половина XX века характеризовалась возрастанием роли музеев в различных процессах социально-экономической, социокультурной жизни общин. Новые социальные требования к этим общественным институтам памяти вызвали необходимость поиска эффективных способов их удовлетворения. В результате возник новый тип музеев, которые называются «музеями общин». Активное вовлечение членов сообщества в организацию и деятельность таких музеев стало необходимым условием. Продуктивная деятельность подобного типа музеев (экомузей, интегральный музей и т.д.) послужила основой для формирования «новой музеологии». Это международное движение изменило вектор своих исследований в направлении от коллекций или институциональной структуры классического музея к разработке динамичных способов, с помощью которых общины сохраняют, интерпретируют и управляют своим наследием для последовательного развития.

Приоритеты последних лет в политике развития культуры и туризма в плане защиты и эффективного использования исторического и культурного наследия в Республике Армения служат для специалистов мотивацией в поиске эффективных механизмов, соответствующих новым общественным требованиям модернизации музеев.

Ключевые слова – историко-культурное наследие, музей, музеология, новая музеология, музей общин, экомузей, интегральный музей.

**THE RELEVANCE OF CONCEPTUAL BASICS OF THE «NEW MUSEOLOGY»
IN THE MUSEUM WORK-FIELD OF ARMENIA**

David Poghosyan

Second half of the 20th century was the time for the growing role of the museums in different processes of social-economical, social-cultural life of the communities. New social requirements to this public institutions forced to find effective ways to respond them. This situation was the reason to give birth to a new kind of museums which are generally called "community museums". The active involvement of the community members into organization and activity of such kind of museums became the essential condition. The community museums transformed into the communication systems operating on the base of "complete bioenvironments". Productive activity of this type of different museum manifestations (ecomuseum, neighborhood museum, integral museum, etc.) made a background for a series of international scientific platforms to speak about emergence of "new museology". This international movement conveyed the center of its investigation from collections or the institutional structure of classical museum to development of dynamic ways in which communities preserve, interpret and manage their heritage for sustainable development.

Recent years superiorities in cultural and tourism development political field in the sense of protection and effective utilization of historical and cultural heritage in the Republic of Armenia motivates the professionals to search for effective mechanisms to meet new public requirements of museums modernization. The approaches of new museology are considered as an effective one and an approximate pattern of such mechanism, mentioned in the present article as the "community museum-reserve" designed in the result of the combination of the principles of ecomuseum and the experience of Armenian cultural museum-reserves.

Key words – Historical-cultural heritage, Museum, Museology, New Museology, Community Museum, Ecomuseum, Integral Museum.

LES PAGES RECEMMENT DECOUVERTES DU MANUSCRIT N 2010.108 DU MUSEE METROPOLITAN DE NEW YORK DANS UNE COLLECTION PRIVEE: IDENTIFICATION DE L'ARTISTE

Emma Chookaszian

Docteur en Histoire Médiévale et en Histoire de l'Art

Université Paul Valéry, Montpellier (France)

e-mail: emmachookaszian@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 15.10.2019, գրախոսվել է 05.02.2020, ընդունվել է տպագրության 30.04.2020

Introduction

Dans la première moitié du XVe siècle, l'art de la miniature arménienne s'est développé de façon inattendue près du lac Van, malgré les chocs géopolitiques et sociaux en Asie mineure. L'inclusion de la petite Asie dans l'empire mongol au début du XIVe siècle a créé de nouvelles opportunités pour le commerce et les routes à l'Est, traversant le territoire du lac de Van.¹ Cependant, les autorités mongoles n'ont pas pu empêcher la montée du pouvoir turkmène brutal. La tribu Akkoyunlu du Turkménistan /“Moutons blancs”/ a assuré une certaine protection aux communautés arméniennes situées à proximité du lac de Van, grâce à quoi la miniature arménienne a non seulement continué de croître, mais est également entrée dans un tournant tout à fait nouveau et remarquable. Les manuscrits de l'école de Khizan étaient l'une des pages les plus uniques de la miniature de Vaspurakan.

Khizan était une petite ville dans le pays de Mokk, pas très loin d'Aghtamar. Mais cette petite ville avait quelques églises dont les noms sont souvent rappelés dans les colophons des manuscrits arméniens puisque leurs moines, leurs scribes et leurs miniaturistes en se succédant commandaient, créaient et illustraient les plus jolis manuscrits fondant les traditions de l'école de miniaturiste de Khizan qui continuent plus de 350 ans².

L'odyssée du manuscrit

Notre étude est consacrée aux deux nouvelles pages passionnantes de l'école de miniature de Khizan qui font maintenant partie de la collection privée du collectionneur français Guillaume Aral³. Les pages représentent

¹ Manadian 1965, 87-202.

² Hovsepyan 1987, 190-208.

³ Catalogue de la Vente, Drouot 2019, lot N 3, 9-11.

l'évangéliste Marc et sa page de titre. **/images 1, 2/** Leur largeur est de 25,5-26 x 18 cm, l'écriture est bolragir (style d'écriture). Les pages sont coupées aux ciseaux sur les deux côtés.⁴ Avec les pages, nous avons reçu une pancarte **/image 3/** par laquelle nous apprenons qu'elles ont été vendues le 29 avril 1977 sur le numéro 893 à la maison de vente aux enchères Boisgirard-Heeckeren à Paris qui est considéré comme l'un des actionnaires de la célèbre maison de vente aux enchères de Drouot. Même les expertes de la maison de vente aux enchères de Drouot ont compris que les pages appartenaient à l'école de miniature de Khizan et remontaient au milieu du XVe siècle.⁵

À première vue, ces miniatures nous ont rappelé le style de Khatchadour de Khizan, l'un des meilleurs maîtres de l'école de miniature de Khizan du XVe siècle⁶. Mais la découverte la plus intéressante était encore à venir. La palette de la miniature, le style et le mode de la représentation du portrait de l'évangéliste nous semblaient très familiers. Après certaines études, nous avons été surpris de constater que les pages appartenaient aux Quatre Evangiles N 2010.108 illustré en 1434/1435, qui était considéré un exemplaire de l'école de miniature de Khizan gardé au Metropolitan Museum of Art de New York⁷. Ce dernier est le seul manuscrit arménien conservé à Metropolitan⁸. Le problème c'est que les Evangélistes Marc et Jean sont absents avec leurs pages de titre dans la liste des miniatures du manuscrit. Etant donné que nos pages étaient cisailées /coupees/, on s'attendait à ce que leur longueur soit courte de quelques centimètres par rapport aux pages du manuscrit de Metropolitan, mais la surface de l'image sur la page correspond pleinement à la surface des miniatures des pages de notre étude.

Il était évident au résultat de la comparaison des portraits et des pages de titre des autres deux Evangélistes Matthieu et Luc **/images 4 ; 5/** conservées dans le manuscrit au musée de Metroplitan que ces dernières ont été créées par les mains du même maître et pour le même manuscrit. Le nom de Khatchadour de Khizan n'est pas mentionné dans le colophon du manuscrit de

⁴ L'ancien propriétaire les a collés au carton et les a placés dans le cadre. Nous avons réussi à isoler les pages de la carte sans les endommager, puis nous avons pris les mesures nécessaires.

⁵ Catalogue de vente, Drouot 1977.

⁶ Ne pas confondre avec le miniaturiste du 16^{ème} siècle Khatchadour de Khizan.

⁷ Lalayan 1915, no. 161; Der – Nersessian, Chester Beatty, 1958. xxxvi, 17, 48, 55, 56, 88; Rhodes, Erroll 1959, no. 1138, 148; Catalogue of Important Oriental Manuscripts and Miniatures, Sotheby's 1977, no. 178, 86-87; Keabian, John, Folter, 1981, no. 33, 71, pl. XXXI; The Metropolitan Museum of Art Bulletin 2010, 17; Leyloyan-Yekmalyan 2014, 91-105.

⁸ Il en manque que quelques pages, mais c'est seul qui a une reliure et un colophon.

Metropolitan cependant Helen Evans l'attribue à lui⁹, plus tard, en commentant ce manuscrit dans l'un de ses articles, Anna Leyloyan-Yekmalyan partage ce point de vue¹⁰.

La première information sur ce manuscrit a été conservée dans le livre sur les colophons des manuscrits arméniens de Vaspurakan, écrit par Yervand Lalayan, alors que le manuscrit se trouvait encore dans l'église du village de Pokan à Julamerik sous le N 161 (8)¹¹. Selon sa description, le manuscrit se trouvait encore en bon état, il avait une reliure en cuir décorée de croix, enveloppé dans des mouchoirs, composé de 348 pages en papier, avec une écriture bolongir de 19 lignes, des 13 miniatures les miniatures du cycle évangélique, de 10 tables de canons, et le plus important pour notre étude- les 4 évangélistes, qui étaient chacun suivi de sa page de titre. Dans le colophon du manuscrit, qui a été conservé jusqu'aujourd'hui, il est dit que le nom de scribe est Margaré, l'endroit de l'illustration est le monastère de Saint-Georges à Mokka, la date c'est 1435. E. Lalayan mentionne le nom de l'évêque Sion comme le commanditaire, qui se retrouve également à plusieurs reprises dans le texte du colophon sous la forme de Sion, mais nous voyons son portrait mis à genoux au-dessous de la scène de Pentecôte près duquel dans l'inscription nous lisons clairement le nom de Siméon «Սիմէոն եպիսկոպոս է, աղաչէ զհոգին սուրբ առաքելովքն, զի տացէ իւրն եւ իւր ննջեցելոցն զարքայութիւն իւր ամէն»: (C'est l'évêque Simeon, (il) supplie l'Esprit Saint avec les apôtres, qu'ils lui accordent à lui et à ses proches de céder, le royaume (des cieux) amen). /image 6/

On peut supposer que le scribe ou le miniaturiste est confus ou bien que les deux formulaires aient été utilisés pour s'adresser à l'évêque.

Avant d'apparaître dans l'église du village de Pokane à Julimerike, le manuscrit a été à l'endroit de sa création en 1435-1731, dans l'église de Saint-Georges à Mokka, ensuite, en 1731, il a été devenu la propriété de Sarkis et Haroutyoun, fils d'un certain Zarif¹², puis à partir du 19^{ème} siècle jusqu'à 1900ans à peu près, il a été la propriété de Madame Charbakyan et de sa famille. Il faut supposer que le manuscrit a été retrouvé dans l'église du village de Pokane à Julamerik de 1900 à 1944 au plus tard, mais il est possible que lors des massacres du génocide, le manuscrit ait déjà été retiré de l'église et transféré dans un endroit sûr. Cependant, jusqu'à 1944, avant de faire la partie de la collec-

⁹ The Metropolitan Museum of Art Bulletin 2010, 17.

¹⁰ Leyloyan-Yekmalyan 2014, 91-105, fig 8.

¹¹ Lalayan 1915, no. 161.

¹² Nous apprenons cela à partir du texte ajouté plus tard aux pages 358a à 359a du manuscrit.

tion de Hakop Kevorkian, les dernières nouvelles sur ce manuscrit sont celles de la « Liste des manuscrits de Vaspourakan » de E. Lalayan en 1915. En 1944, le manuscrit apparaît dans la collection privée du collectionneur new-yorkais Hakop Kevorkian qui, selon Garekin Hovsepian, à part de ce manuscrit avait encore 44 manuscrits arméniens¹³. G. Hovsepian ayant l'occasion d'étudier le manuscrit la même année où H. Kevorkian l'a acquis, il donne une description détaillée de ce manuscrit dans ses articles. Nous apprenons ici que le manuscrit, au moment de son apparition dans la collection de Kevorkian, n'avait que 8 miniatures du cycle évangélique : Nativité du Christ, Présentation de Jésus au Temple, Baptême de Jésus, Noces de Cana, Trahison de Judas et Reniement de Pierre /ensemble/, Pilate se lave les mains et Le grand prêtre déchire ses vêtements /ensemble/, Pentecôte et Ascension, et le portrait d'un seul Évangéliste : Matthieu avec sa page de titre, et le nombre exact de tables de canons n'est pas mentionné. Tandis qu'en 1915, dans la description de E. Lalayan il y avait 13 miniatures du cycle évangélique, 10 tables de canons et tous les 4 Évangélistes avec leurs pages de titres. Il faut supposer que les 5 miniatures du cycle évangélique, les 2 tables de canons¹⁴ et les 3 portraits des Évangélistes avec leurs pages de titre ont été arrachés du manuscrit lors des massacres du génocide, ce qui arrivait souvent au cours de ces années. Aujourd'hui, cependant, le manuscrit conservé au Metropolitan Museum compte 8 tables de canons, 9 miniatures du cycle évangéliste et 2 portraits d'Évangélistes avec leurs pages de titre. Le manuscrit avait cette description encore en 1977 dans le catalogue de vente aux enchères de Sotheby's des manuscrits orientaux appartenant à H. Kevorkian¹⁵, de quoi on devrait supposer que Kevorkian, grand connaisseur d'art et collectionneur, a rencontré, aux cours des années où le manuscrit était chez lui, certaines des miniatures manquantes et les a acquises, à la suite de quoi nous avons la Transfiguration et les miniatures représentant l'Évangéliste Luc et ses pages de titres dans le manuscrit se trouvant au Musée Metropolitan.

En revenant sur les pages faisant partie de la collection de G. Aral, sur l'Évangéliste Marc et sa page de titre, comparons les portraits des deux Évangélistes Matthieu et Luc et leurs pages de titre dans le manuscrit conservé au Musée Metropolitan /images 7 ; 8/.

Nos Évangélistes et ceux du manuscrit de Metropolitan sont représentés sur le fond divisé en segments rectangulaires colorés, où il y a des motifs de

¹³ Hovsepian 1987, 190-208.

¹⁴ Aujourd'hui, le manuscrit de Metropolitan ne compte que 8 tables de canons.

¹⁵ Catalogue of Important Oriental Manuscripts and Miniatures: Sotheby's 1977, no. 178, 86-87.

points et floraux avec jaune et blanc. Devant tous les trois Évangélistes, il y a de petites tables identiques. Tous les trois Évangélistes sont représentés avec des auréoles dorées autour desquelles elles sont décorées avec des points blancs, créant une impression de l'auréole de perles byzantines. Toutes les miniatures ont la même palette : le vert, le rouge, le violet, le bleu et le jaune. Dans le traitement de visages, on voit les longues extrémités de l'oeil et du sourcil continuant parallèlement, ainsi que dans le traitement de la barbe, la longue ligne montant jusqu'au front. Toutes les trois miniatures ont le même cadre colorié au-dessus duquel est représenté trois feuilles trifoliées.

1. Չնայած այն հանգամանքին, որ ուսանողներին արդեն փոխանցվել էր թեմայի վերաբերյալ փաթեթը, սակայն դասի ընթացքում դասախոսը ներկայացրել է թեման՝ իր առանձնահատկություններով՝ այդ կերպ ինքնուրույն աշխատանքն էլ՝ ավելի դյուրին դարձնելով:

2. Առանձնացվել են կարևոր խնդիրները, գործոները և հարցադրումները, որոնք ուսանողներին մտածելու տեղիք են տվել:

3. Քննարկմանը նախապատրաստվելու համար յուրաքանչյուր ուսանողի հանձնարարվել են տվյալ թեմային վերաբերող տարբեր իրավիճակներ, որոնց շրջանակում նրանք էսսեներ են ներկայացրել:

Հաջորդ դասաժամին կազմակերպվել է քննարկումը: Տեղեկացնենք, որ այս փուլում հիմնականում ընտրվել է «կլոր սեղանի» ձևաչափը: Դասախոսը քննարկում վարողն էր, իսկ ուսանողները մեկնաբաններն էին: Այսինքն՝ այս դեպքում կարևոր էր ինչպես ուսանողի, այնպես էլ դասախոսի գործոնը:

Դասախոսը, կազմակերպելով քննարկումը, դրա ընթացքում հանդես է եկել ներածական և եզրափակիչ ելույթներով, ինչպես նաև աջակցել է քննարկմանը, գնահատել ուսանողների ներդրումն իրավիճակի վերլուծությունում: Իսկ յուրաքանչյուր մագիստրանտ ինչպես գրավոր էսսեի, այնպես էլ բանավոր խոսքի միջոցով հայտնել է իր տեսակետը խնդրի վերաբերյալ, խոսել հետագա զարգացումների և լուծման հնարավոր ուղիների մասին: Տեղի է ունեցել իրադարձությունների վերլուծություն-քննարկում, որի ընթացքում կողմերը առաջադրել են հիմնախնդրի լուծման հնարավոր տարբերակներ:

Այլ կերպ ասած՝ դասի ընթացքում դասախոսը, տալով անհրաժեշտ պարզաբանումներ, ուսանողներին օգնել է խորամուխ լինել տվյալ հիմնահարցում՝ վերլուծել ու գնահատել, ինչպես նաև վեր հանել հարցի լուծման լավագույն տարբերակը: Մագիստրանտը իր վերլուծության արդյունքները ներկայացրել է համառոտ էսսեի, անհրաժեշտության դեպքում՝ ներկայացվածություն (презентация) միջոցով:

Էսսեն պարունակում էր տվյալ խնդրի վերաբերյալ հստակ շարադրված վերլուծություն, ինչպես նաև եզրակացություններ՝ դրույթների տեսքով, որոնք ընդհանրացնում էին ուսանողի դիրքորոշումը տվյալ հարցի վերաբերյալ: Նկատենք, որ կախված խնդրի առանձնահատկություններից՝ ներկայացված էսսեները զգալիորեն տարբերվում էին միմյանցից: Հետազոտողը պարտավոր էր, որքան հնարավոր է, գերծ մնալ փաստացի

նյութի շարադրանքից՝ այդ կերպ փորձելով հնարավորինս խուսափել գրագողությունից:

Եզրակացություններ

Ամփոփելով արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ «Case study» և էսսեի մեթոդների կիրառությունը նախ և առաջ պահանջում է օտար լեզվի տիրապետում՝ առաջարկված բազմաբնույթ նյութերին ծանոթանալու համար: Բացի այդ, մասնագիտական առարկաների որոշակի գիտելիքներ, որ ուսանողը կարողանա իրավիճակներ լուծել: Չնայած վերը նշված մեթոդների կիրառման ընթացքում ուսանողների մոտ նկատվող, հատկապես վերլուծության հետ կապված որոշ բարդություններին, այն հնարավորություն է տալիս՝

- իրականացնելու գիտելիքի ստուգում,
- կիրառելու ուսանողների լսարանային աշխատանքի բոլոր ձևերը՝ անհատական, զույգերով, խմբային, ֆրոնտալ (ֆրոնտալը նշանակում է ընդհանրական, սակայն մանկավարժության մեջ ֆրոնտալ եզրույթն է կիրառվում),
- զարգացնելու խոսքային գործունեության բոլոր ձևերը. ընթերցելը (ընդհանուր, մասամբ), խոսելը (մենախոսություն, երկխոսություն), գրելը (էսսե),
- խթանելու միջառարկայական կապերի ընդլայնումը, որը նպաստում է դասավանդվող նյութի խորքային իմացությանը՝ դասը դարձնելով բովանդակալից ու հետաքրքիր,
- խթանելու ուսանողների ակտիվությունը,
- ձևավորելու ուսանողների մեջ անհրաժեշտ ունակություններ ապագա մասնագիտական աշխատանքի համար,
- նպաստելու հանձնարարվող նյութը տիրապետելուն:

Նկատենք, որ եզրափակիչ քննության ընթացքում մագիստրանտները գերազանց տիրապետում էին հանձնարարված նյութին, որը կատարված վերլուծությունների արդյունք էր: Միաժամանակ, արդյունքները վկայում են, որ չնայած պատմության դասավանդման մեջ որքան էլ բարդ է բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառումը, սակայն դա շատ անհրաժեշտ է¹¹:

Այսպիսով՝ «Case study» և էսսեներ գրելու մեթոդներով ուսուցումը մագիստրատուրայում ուսանողների մեջ գործնականում զարգացնում է վերլուծական հմտությունները, ամրակայում նրանց տեսական գիտելիքներն ու համոզմունքները: Այլ կերպ ասած՝ ուսանողները, գործնականում

¹¹Սերոբյան 2015, 99:

կիրառելով իրենց տեսական գիտելիքները, խորացնում են դրանք, ձեռք բերում հմտություններ և կիրառական նոր մոտեցումներ:

Գրականություն

- Պապոյան Հ. 2013, Պատմության դասավանդման մեթոդիկական դպրոցում, Երևան, «Տիր», 304 էջ:
- Սերոբյան Ս. 2015, Բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառման խնդրի շուրջ, Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, ԵՊՀ հրատ., էջ 98-102:
- Ахметшина Т., Корелова С., Фаттахова Л. 2014, Методы эссе и кейсметоды в обучении истории, экономики и географии, Научно-методический электронный журнал концепт, № 17, с. 19-24, <https://interactive-plus.ru/e-articles/collection-20140325/collection-20140325-1897.pdf>. (14.10.2019).
- Грузкова С., Камалеева А. 2013, Кейс-метод: история разработки и использования метода в образовании, Современные исследования социальных проблем (электронный журнал), № 6(26), с. 1-14, <https://cy.berleninka.ru/article/n/keys-metod-istoriya-razrabotki-i-ispolzovaniya-m-etoda-v-obraz-ovanii>.(14.10.2019).
- Долгоруков А. 2002, Case study как способ (стратегия) понимания, Практическое руководство для тьютора системы открытого образования на основе дистанционных технологий, под ред. А.М. Долгорукова, Москва, «Центр интенсивных технологий образования», с. 21-44.
- Инновационный менеджмент социально-педагогического процесса: Учебное пособие 2010, под ред. Н.В. Соловова, О.Ю. Калмыковой, Г.П. Гагаринской, В.П. Гарькина, Самара, «ПИБ», 254 с.
- Emmerson P. 2011, The Whole of Business in One Book: Advanced, Oxford, "McGraw-Hill", 334 p.

«CASE STUDY» ԵՎ ԷՍՍԵԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Քրիստինե Մելքոնյան

«Case study» մեթոդի հիմնական առանձնահատկությունը խնդրահարույց իրավիճակի ստեղծումն է, որը հիմնված է իրական կյանքի գործոններ-

րի և փաստերի վրա: Որպես մեթոդ՝ իրավիճակի վերլուծությունը լայն տարածում է գտել աշխարհում 1970-1980 թթ.: Այն կիրառվել է տնտեսագիտական համալսարաններում՝ ուսանողների մեջ որոշումներ կայացնելու հմտություններ ձևավորելու համար: Դա պայմանավորված էր տնտեսական բարեփոխումներով, քանի որ տվյալ ժամանակահատվածում այդ բարեփոխումներն առաջացրեցին մասնագետների պահանջարկ, որոնք կարող էին գործել անորոշ իրավիճակներում՝ առկա ռիսկի բարձր աստիճանի պայմաններում՝ տիրապետում էին վերլուծական հմտությունների՝ այս կամ այն որոշումը կայացնելու համար: Այս մեթոդի լայն տարածումը կրթության ոլորտում պայմանավորված է այն հանգամանքով, որ «case study»-ն նպատակամիտված է ոչ այնքան հատուկ գիտելիքների կամ հմտությունների ձեռքբերմանը, որքան ուսանողի և դասախոսի մտավոր ու հաղորդակցական ընդհանուր ներուժի զարգացմանը: «Case study»-ն և էսսեն ուսուցման կազմակերպման արդյունավետ միջոցներ են, որոնք կարելի է առանց խոչընդոտների համատեղել դասավանդման այլ մեթոդների հետ:

Բանալի բառեր՝ «case study» մեթոդ, էսսեի մեթոդ, մասնագիտական կրթություն, իրավիճակային դասընթաց, հաղորդակցման նպատակ, որոշակի իրավիճակների տեխնոլոգիա, բազմամշակութային մոտեցում:

ИСПОЛЬЗОВАНИЕ МЕТОДОВ «CASE STUDY» И ЭССЕ В МАГИСТРСКИХ ГРУППАХ ПРИ ИЗУЧЕНИИ ИСТОРИИ

Кристине Мелконян

Отличительной особенностью метода «case study» является создание проблемной ситуации на основе факторов и фактов из реальной жизни. В качестве метода анализ ситуаций получил широкое распространение в мире в 1970-1980 годы. Данный метод стал использоваться при обучении управленцев в основном в экономических вузах с целью формирования у студентов способности принимать решения. Это связано с реформами в экономике, поскольку в тот период её реформирование породило спрос на специалистов, умеющих действовать в неопределенной ситуации, чреватой высокой степенью риска, специалистов, обладающих аналитическими способностями для принятия того или иного решения. Широкое распространение данного метода в образовании связано с тем, что метод «case study» ориентирован не столько на освоение конкретных знаний или навыков, сколько на развитие общего интеллектуального и коммуникативного потенциала обучаемого и обучающего. Методы «case study» и эссе являются

эффективными средствами организации обучения, их можно беспрепятственно сочетать с другими методами обучения.

Ключевые слова – метод «case study», метод эссе, профессиональное образование, ситуационное обучение, коммуникативная цель, кейс-технологии, мультикультурный подход.

APPLICATION OF THE «CASE STUDY» AND ESSAY METHODS IN MASTER GROUPS WHEN LEARNING THE SUBJECT OF HISTORY

Christine Melkonyan

The distinctive feature of the case-study method is to create a problematic situation on the basis of the facts of real life. As a method, analysis of situations it has become widespread in the world in the 1970-1980-s. This method was used at the beginning, when training managers of mainly economic universities tested the students ability to make decisions. It is connected with the changes taking place in the economy, because at that time, it has generated substantial reform demand for specialists who know how to act in situations of uncertainty, high risk specialists who can analyze and make decisions. The wide dissemination of this method in education due to its orientation, so that the case method is focused not so much on the development of specific knowledge or skills, as on the development of the common intellectual and communicative capacity of the trainee and the training. The case-study method and essay method are quite effective in training, they can be connected easily enough with other learning methods.

Key words – case-study method, essay method, professional education, situational training, the aim of communication, case technologies, multicultural approach.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ
(ըստ հարակից տարածքի՝ 2012, 2014 թթ. պեղումների արդյունքների)

Ֆրինա Բարայան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ Երևան, Չարենցի փ. 15
Էլ. հասցե՝ info@iae.am
Հոդվածը ներկայացվել է 19.07.2019, գրախոսվել է 17.10.2019, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

2012 թ. օգոստոսին ՀՀ Արագածոտնի մարզի Օշական գյուղի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու ներսում ձեռնարկվեցին մասնակի վերանորոգման աշխատանքներ: Դրանց ընթացքում Սրբի տապանաքարի արևելյան պատի խորշի մեջ ագուցված խաչքարը տեղաշարժելու ժամանակ պարզվեց, որ վերջինիս հետևի պատը շարված է քարե սալիկներով, որոնցից մեկը տեղաշարժված է: Շինարարներն այն հանել էին՝ նորից տեղում ամրացնելու նպատակով: Սակայն սալաքարի հետևի տարածքը, որը ավագ խորանի հատակն է և զանգակատան հիմքը, լցված էր տուֆ քարերի բեկորներով, բազալտի մեծ կտորներով՝ տեղ-տեղ ծածկված սպիտակ սվաղով: Անհասկանալի պատկերը հստակեցնելու և եկեղեցու վերանորոգումը շարունակելու նպատակով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արագածոտնի թեմի առաջնորդ, գերաշնորհ տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը նպատակահարմար գտավ պեղումներ իրականացնել եկեղեցու զանգակատան հիմքի տարածքում:

Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու տարածքում կատարված հնագիտական աշխատանքների արդյունքները

Մեր կողմից զանգակատան կիսակոր՝ 3,15x2,54 քառ. մ, մակերեսը հետազոտվել է շերտագրական հորիզոններով: Հողի մեջ կարծրացած հողակույտերը տեղափոխվեցին դույլ առ դույլ՝ պարանի միջոցով, երեք բանվորների օգնությամբ: Աշխատանքին մասնակցեց նաև Օշական գյուղի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևոր հովիվ, տեր Վիգեն քահանա Մանուկյանը:

Աղբակույտը հեռացնելիս բացվեց սև տուֆով շարված գետնախարսի մի փոքր հատված: Մկրտիչ եպիսկոպոսի հրավերով Օշական ժամանեցին

վաստակավոր ճարտարապետ Մուրադ Հասրաթյանը, ճարտարապետության թեկնածու Կորյուն Ղաֆադարյանը, նաև ճարտարապետ Գրիգոր Ղաֆադարյանը: Հնագետի և ճարտարապետների կարծիքները միատեղվեցին: Բացվում էին Ս. Մեսրոպ Մաշտոցի՝ «Աստծո փառքի հոյակապ, լայնանիստ և բարձրաբերձ տաճարի որմնախարիսխները, այն Մաշտոցի, որ հայոց գրերը գտավ, ինչպես որ նրա պատմության խոսքերն են ասում, թե նրան տարան ամփոփեցին այն գյուղում, որն անվանվում էր Օշական»¹:

Հնագիտական աշխատանքների ընթացքում ի հայտ եկան 2,3 մ, 2,7 մ, 3,53 մ երկարությամբ և 35-36 սմ լայնքով, 26 սմ բարձրությամբ սև տուֆե շարվածքով տաճարի գետնախարիսխները: Պարզվեց, որ բոլոր աստիճանների հյուսիսային և հարավային կողմերը հիմք են ծառայել զանգակատան հիմնապատերի համար: Ցավոք, հնարավոր չեղավ որմնախարիսխները բացել իրենց նախնական չափերով²:

Զանգակատան հյուսիսային պատը շարված էր 5 շարք տուֆ քարերով, որոնց մեջ առանձնանում էին հին և նոր մշակվածները՝ կապակցված կրաշաղախով: Հարավային պատը չմշակված խոշոր տուֆ քարով էր շարվել: Սվաղով պատված էին շինարարական թափոնը, խոշոր քարերը և եռաստիճանները: Նույն սվաղը 45 սմ հաստությամբ պահպանվել էր զանգակատան հիմքի շարվածքի մեջ: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ զանգակատան հատակը բնական տուֆ է, վրան՝ սվաղի հետքեր: Նույն տարածքում հայտնաբերվել են կավե անոթների մի քանի բեկորներ, կենդանիների ոսկորներ: Զանգաշտարակի ներսում պատի պահպանված հատվածը և գետնախարիսխները պատկանում են V դարին³: Վերջինների առկայությունը հիմք դարձավ պեղումները շարունակելու նաև զանգակատան արտաքին կողմում՝ հյուսիսարևելյան հատվածում, որն իրականացրեցինք 2014 թ. օգոստոսին: Առաջին հերթին անհրաժեշտ եղավ քանդել զանգակատանը դրսի կողմից կից սալահատակի մի հատվածը: Սև տուֆե ամուր շարվածքը հանելուց հետո երևաց մեկ այլ՝ 50x30 սմ չափերով կարմիր տուֆե հատակը:

Պեղումների ընթացքում պարզվեց, որ 1875-1879 թթ. Գևորգ Դ Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից կառուցված թաղածածկ դահլիճատիպ եկեղեցու արևելյան պատը դրվել է Վահան Ամատունու կառուցած եկեղեցու (443 թ.) գետնախարսխի վրա: Հիշենք, որ 1645 թ. Փիլիպոս կաթողիկոսի կառուցած եկեղեցին 1679 թ. երկրաշարժի ժամանակ քանդվել էր:

¹ Դավրիժեցի 1988, 277:

² Պեղումների մասին ճարտարապետական վերլուծությունը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետաշինարարական բաժնի ծրագրի ղեկավար Մերի Դանիելյանի:

³ Բաբայան 2014, 122-127:

Պեղումներով բացված գետնախարսխի վերին աստիճանն արևելյան զանգաշտարակի արտաքին հյուսիսային պատից սկսած՝ ձգվում է դեպի հյուսիս մինչև 7 մ երկարությամբ, անցնում ներկա եկեղեցու արևելյան պատը և ընդհատվում, հավանաբար, քանդվելու հետևանքով⁴: Երկրորդ և երրորդ աստիճանները քանդված էին և ընդհատվում էին զանգաշտարակի արտաքին հյուսիսային պատից սկսած 6,3 մ երկարությունից հետո. շարունակությունը քանդված էր: Ասենք նաև, որ սույն գետնախարսխի սիներին կից բացվել է տոփանված հողե հատակ, որտեղից հայտնաբերվեցին միջնադարյան կավանոթների բեկորներ: Վերջիններս հստակ թվագրվում են XII-XIII դդ. և ավելի ուշ շրջանով: Աստիճանների հարևանությամբ բացվել է կոպտատաշ, խոշոր քարերով շարված ինչ-որ շինության մի հատված, որը թեքվում է շրջագծային պարագծով զանգակատան արևելյան կողմով դեպի արևմուտք: Ա. Բալասանյանի՝ 1946 թ. կատարած չափագրության մեջ գլխավոր հատակագծի վրա ներկա եկեղեցու արևելյան կողմում կա պահպանված կիսաբոլոր հիմնապատ: Այս չափագրության նախարդակի վրա, եկեղեցու հյուսիսային պատին կից, դեպի արևմուտք կա ևս մեկ կիսաբոլորակ, որը ճարտարապետ Մերի Դանիելյանը ևս համարում է խորանի հիմնապատ⁵:

Կիսաբոլորակ շինությունը բավական հետաքրքիր է: Տեղում հայտնաբերված խեցեղեն նյութը (XII-XIII դդ.), գետնախարսխի հարևանությամբ բացված թոնիրը, մոխրի մեջ թաղված միջնադարյան կավե կուռքը⁶, նաև կոպտատաշ քարե շարվածքի մեջ հայտնված սրբատաշ սև քարը վկայում են այն մասին, որ եկեղեցուն կից տարածքը միջնադարում խիտ բնակեցված է եղել: Առաջիկայում պեղումների տարածքն ընդարձակելու և հանգամանորեն ուսումնասիրելու դեպքում թերևս հնարավոր կլինի կիսակոր շինության թվագրության հարցը որոշակի դարձնել:

Հյուսիսարևելյան հատվածում բացված գետնախարսխները ներսից բոլորակ, դրսից բազմանիստ պատի մի հատվածի հետ տեղում ցուցադրված են ապակե ծածկի տակ:

Հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թ. Թորամանյանը, առանց տեսնելու Մաշտոցի տաճարի գետնախարսխները, գրել է. «Օջականի եկեղեցին, Վահան Ամատունի իշխանի ձեռքով կանգնված 440 թվականին՝ Ս. Մեսրոպի գերեզմանին վրա, այսօրվա շենքը գրեթե ամբողջովին, բացի արևելյան կողմի մի մասնավոր մնացորդե, վերաշինել է Գևորգ Դ կաթողիկոսը: Այս եկեղեցին այ, 5-րդ դարու ուրիշ

⁴ Դանիելյան 2016, 56-59:

⁵ Դանիելյան 2016, 7-8:

⁶ Կուռքի մասին՝ Բաբայան 2015, 234-247:



Նկ. 1. Եկեղեցու գանգակատան բացված հիմքը ներսից, առջևում երևում են V դ. եկեղեցու գետնախարիսխների երկու շարք



Նկ. 2. Նույն գետնախարիսխների շարունակությունը՝ բացված արտաքին պատի տակ. հյուսիսային կողմում հայտնաբերված թոնիրն ու նրա միջի կուռքը



Նկ. 3. Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու ներսը. սուրբ խորանից ներքև՝ առջևի պատի մեջտեղում երևում է գերեզմանի խցի արևմտյան լուսամուտը, աջ կողմում՝ հարավային ավանդատան մուտքը դեպի գերեզման



Նկ. 4. Սուրբ խորանի տակ գտնվող՝ դեպի Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզման տանող մուտքը հարավային ավանդատան կողմից: Խորանի տակ գտնվող՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի խցի արևմտյան լուսամուտը⁷

⁷ Էջի նկարները վերցված են համացանցից ShoghakatTVcompany, «Հավատի կյանքը. Օջական» հաղորդաշարից:

եկեղեցիներու նման, ունեցել է արևելյան կողմեն դեպի հյուսիս և հարավ դուրս ցցված թևեր, որոնց հիմերը մինչև այժմ կերևին հողին երեսին: Գևորգ կաթողիկոս ավելորդ համարելով այդ մասերը վերաշինել է, իսպառ քանդել է: Այս տիպի եկեղեցիներ են՝ Տեկոր, Երերույք, Օձուն, Արթիկ»⁸:

Ուրեմն IV-V դդ. քրիստոնեական առաջին եռանավ, բազիլիկ տաճարների շարքում է նաև Օշականի եկեղեցին: Եվ քանի որ վերջինիս տարածքում կատարված պեղումների արդյունքները փոքր են, ուստի եղածի սահմաններում փորձել ենք մեկնաբանել Մեսրոպ Մաշտոցի թաղման և գերեզմանի հետ կապված մանրամասները, որոնք տեղ են գտել հայ մատենագրության մեջ ու գիտական աշխատություններում: Այսպես՝ Մեսրոպ Մաշտոցի աշակերտ Կորյունը նախապես գրում է, որ ականատես է եղել ժամանակի դեպքերին և բոլոր տեղեկությունները քաղել է նշանավոր և գիտակ անձանցից: Այդ առումով եզակի են Մաշտոցի մահվան ու թաղման արարողության հետ կապված մանրամասները, որոնք V դարից ի վեր չնչին բացառություններով կրկնում են պատմիչները և գիտնականները:

«Վարք Մաշտոցի» աղբյուրագիտական նշանակությունը

V դ. պատմիչ Ղազար Փարպեցու հաղորդմամբ՝ Վահան Ամատունին Մաշտոցին տարել է իր գյուղը՝ Օշական. «Եվ յոյժ մեծարանօք զդիր ելանելոյն կազմեալ՝ տոն յիշատակի առնեն ամենափոյթ պատուով ամենայն բազմութիւնք ժողովրդոցն Այրարատոյ»⁹:

Հնարավոր էր արդյոք սքանչելի տաճարը երեք ամսում կառուցել: Այդ հարցին պատասխանել է Հրաչյա Աճառյանը. «Յետ ամսոց երից անցելոցը, անշուշտ, գրչական սխալ է, որ պետք է կարդալ ամաց¹⁰»:

Երբ երախտավոր հոգևորական, մեծ գիտնական Մաղաքիա Օրմանյանը (1887-1889 թթ.) այցելել է Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը, եկեղեցու բեմի ներքևում պահպանված գետնափոր մատուռի կենտրոնում տեսել է Մեսրոպի գերեզմանը¹¹:

Լեոն շատ որոշակի գրում է. «...Մեծ հանդեսով թաղման թափորը Վաղարշապատից բարձրացել է Օշական գյուղը: Երեք տարուց հետո Վահան իշխանը Մաշտոցի գերեզմանի վրա մի գեղեցիկ եկեղեցի է շինել...: Նրա եկեղեցու սեղանի տակ, մութ ու անձուկ ներքնահարկում սպիտակ մարմարյա մի գերեզմանաքար կա, որ նոր ժամանակների գործ է: Այդ էլ անվանվում է Մաշտոցի (Մեսրոպ) գերեզման»¹²:

⁸ Թորամանյան 1942, 243:

⁹ Փարպեցի 1907, 77-78, Թովմա Արծրունի եւ Անանուն 1978, 94-95, Չամչյան 1985, 534:

¹⁰ Աճառյան 1984, 282-289:

¹¹ Օրմանյան 2001, 370-371:

¹² Լեո 1967, 34-35:

Ականավոր հայ պատմաբան, ակադեմիկոս Սուրեն Երեմյանը գրում է. «Մեծ գործչի աճյունը հազարապետ Վահան Ամատունին ամփոփել է իր ուստանում՝ Օջական գյուղում և երեք տարի հետո նրա գերեզմանի վրա կառուցել է գմբեթավոր կլոր հուշարձան եկեղեցի: XIX դ. ավերված տաճար-դամբարանի տեղում կառուցվել է այժմյան բազիլիկ եկեղեցու շենքը, որն իր մեջ է առել նախկին տաճարի շենքը»¹³:

Ճարտարապետ Թ. Թորամանյանը նշում է. «Գևորգ Դ կաթողիկոսը հին հիմքերի վրա վերաշինել է եկեղեցին, պահելով իր տեղում Մեսրոպ Մաշտոցի ստորերկրյա դամբարանը եկեղեցիի տակ»¹⁴:

Մանուկ Աբեղյանը, որը Կորյունի «Վարք Մաշտոցը» թարգմանել է աշխարհաբար, տեղեկացնում է, որ Մաշտոցին թաղել են Օջական գյուղում: Նրա գերեզմանը մինչև այժմ մնում է Օջականի եկեղեցու տակի խորանում և ժողովրդի համար եղել է սրբատեղի՝ «թարգմանչի գերեզման» անունով¹⁵:

Ղևոնդ Ալիշանը Մեսրոպ Մաշտոցի թաղման մանրամասների նկարագրությունը վերցրել է Մովսես Խորենացու «Պատմություն հայոց»-ից¹⁶:

Կորյունի «Վարք Մաշտոցի» մի քանի վերահրատարակություններում տեսնում ենք, որ Մաշտոցին երկու անգամ հողին հանձնելու պատմությունը, բնականաբար, նույնն է՝ տարբեր երանգներով: Սակայն վերը ներկայացված պատմիչներից շատերը, ինչպես և մեծանուն գիտնականները, լինելով «Վարք Մաշտոցի» հմուտ գիտակներ, կարծես խուսափել են Կորյունի՝ միակ հավաստի աղբյուրի՝ մեզ հետաքրքրող հատվածը նույնությամբ կրկնելուց: Մ. Աբեղյանը՝ «Վարք Մաշտոցի» աշխարհաբար թարգմանիչը, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակը, գրում է, որ Կորյունի աշխատությունը ընդհանրապես, մանավանդ վերջին մասում, շատ է աղճատված արտագրողների կողմից: Նաև Կորյունը հորինում է շատ ճոռոմ, ավելորդ զարդերով և կրկնություններով լի շարադրանքով, իր խոսքով ասած՝ «ծաղկեցնում է»¹⁷:

Հ. Մանանդյանը Կորյունի փոքրածավալ աշխատությունը համարում է գրերի գյուտի պատմության գլխավոր աղբյուր: Միննույն ժամանակ, նշում է, որ մի շարք ուսումնասիրողներ այդ հնագույն աղբյուրի մեջ նկատել են թերասություններ, անորոշություններ և անգամ ակնհայտ հակասություններ¹⁸:

¹³ Երեմյան 1984, 169:

¹⁴ Թորամանյան 1942, 41:

¹⁵ Աբեղյան 1962, 295:

¹⁶ Ալիշան 1890, 189:

¹⁷ Կորյուն 1979, 14-15:

¹⁸ Մանանդյան 1962, 32:

Ձեռագրագետ Արտաշես Մարտիրոսյանի կարծիքով, «Վարք Մաշտոցի» համառոտ տարբերակը չունի աղբյուրագիտական նշանակություն¹⁹: Ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը, դրականորեն վերաբերվելով «Վարք Մաշտոցի» մասին զանազան կարծիքներին, սրբագրություններին, մեկնաբանություններին, գտնում է, որ հարյուրամյակների փոթորկուն ճանապարհով մեզ են հասել գրիչների ընդօրինակությամբ ձեռագրեր: Եվ հնագիտության ու ձեռագրագիտության ժամանակակից նվաճումներն ու կուտակած փորձը միայն կարող են նպաստել ավելի ճշգրիտ սրբագրություններ ու մեկնաբանություններ կատարելուն²⁰:

Ասենք, որ Կորյունը, լինելով Մաշտոցի աշակերտը, կարող էր իրեն թույլ տալ զովաբանական և «ծաղկեցրած» նկարագրություններով մեծարել իր ուսուցչին: Դա հստակ երևում է հատկապես Սուրբ Մաշտոցի թաղման ծիսական արարողակարգի նկարագրական մանրամասներում: Այսպես, օրինակ, «Վահանն ու Հմայակը, աշխարհական բազմության հետ, վերցրին նրան վախճանվածի պատրաստությամբ, սաղմոսներով և օրհնությամբ ու հոգևոր ցնծություններով, վառած կանթեղներով ու բորբոքած ջահերով և բուրող խնկերով, և ամբողջ լուսաճաճանչ աշտանակով, և այն լուսավոր առաջախաղաց խաչանշանով, բարձրացան Օշական և այնտեղ մարտիրոսարանի մեջ դրին, օրինավոր հիշատակը կատարեցին, ապա նշանն աներևույթ եղավ, և նրանք ետ դարձան յուրաքանչյուրն իր տեղը:

Իսկ երեք տարի անցնելուց հետո՝ Վահան Ամատունուն հաջողվեց քրիստոսասեր ջանքով սքանչելի տաճար կանգնել տաշած քանդակաքարերով և տաճարի ներսում շինեց Սրբի գերեզմանը: Նա Քրիստոսի կենարար մարմնի և արյան սեղանի համար վայելուչ, գույնզգույն, ոսկով և արծաթով ու թանկագին քարերով պայծառափայլ անոթներ պատրաստեց ի հիշատակ, և մի տեղ հավաքված բոլոր սրբերի հետ Քրիստոսի խաչակրոն վկայի, երանելի Մաշտոցի մարմինը փոխադրեց տաճարի գերեզմանը²¹»:

Այս ամենը այնքան գրավիչ և խորհրդավոր է ներկայացված, որ բազմաթիվ հեղինակներից ոչ մեկը երբեք շրջանառության մեջ չի դրել ակադեմիկոս Ս. Մայխասյանի կողմից բացահայտված ցուլացող լույսի իրողությունը. «...ցուլացող լուսը շատ բնական բացատրությամբ դազաղի վրա դրված արծաթե խաչի արտացոլումն է օդի մեջ խաղաղ եղանակին արեգակի ճառագայթների տակ»²²: Ասենք, որ նշված գիտական բացատրության կողքին Կորյունի ներկայացրած նկարագրությունը, չնայած միստիկ մտածողության արդյունք է, սակայն ավելի շատ է համապատասխանում

¹⁹ Մարտիրոսյան 2002, 510-511:

²⁰ Կորյուն 1994, 150:

²¹ Կորյուն 1979, 51:

²² Խորենացի 1961: Հմմտ. Աճառյան 1984, 292:

Սուրբ Մեսրոպ Մաշտոցին: Մեսրոպ Մաշտոցն իրական և պատմական այն գործիչն էր, որն իր ազգի համար դարձավ յուրօրինակ Սուրբ, իսկ Վահան Ամատունին էլ, մեծ դժվարություններ հաղթահարելով, նրան Օշականում թաղելու պատվին արժանացավ:

Այդ մասին պատմում է Մովսես Խորենացին. «Ինչպես լսեցի բազմաթիվ և արժանահավատ անձերից, խաչի աղոտ ձևով լույս էր շողում այն տան վրա, որտեղ երանելին հոգին ավանդեց. և շուտով չանհետացավ այս շողքը, քչերին տեսանելի չեղավ, այլ ամբողջ բազմությանը, այնպես որ շատ անհավատներ մկրտվեցին: Այս ժամանակ ժողովված բազմության մեջ աղմուկ և շփոթություն ծագեց՝ այն պարկեշտ մարմինը թաղելու (տեղի) պատճառով... Բաժանվել էին երեք խմբի. մի մասն առաջարկում էր տանել Տարոն, իր ծննդավայրը, մյուսները՝ տանել Գողթն, որտեղ առաջին անգամ ուսուցել էր, մի մասն էլ առաջարկում էր թաղել հենց Վաղարշապատ քաղաքում, սրբերի հանգստարանում: Բայց հաղթեց քաջ Վահան Ամատունին, որ ավելի ջերմեռանդ էր հավատով և հզոր էր մարմնապես... Նա մարմինը վերցրեց և արժանավայել հուղարկավորությամբ տարավ իր գյուղը՝ Օշական...»²³: Ինչպես տեսնում ենք, պատմահայրը չի խոսում Մաշտոցին մարտիրոսարանում թաղելու մասին:

Ուրեմն հարց է առաջանում, իսկ ինքը՝ հազարապետը իրեն կարո՞ղ էր թույլ տալ Սրբին թաղելու անանուն մարտիրոսների կողքին²⁴: Իհարկե, ո՛չ, քանի որ գյուղի եզրին գտնվող մեծ և փոքր բլուրների վրա (Դիդի կոնդ և Գյուլլե կոնդ) դեռևս IV-V դդ. պահպանվել էին անտաշ որձաքարերով շինված կիկլոպյան շենքի հետքեր և բարձր պատերի, նաև նախաքրիստոնեական ամրոցի մնացորդներ, ցեղապետական բնակարանների հիմքեր, քարայրներ, գետնափոր խցեր, այլ շինություններ, որոնք ավանդաբար նվիրականացել են, և որտեղ զանազան մասերում կանգնեցվել են խաչքարեր, դամբարաններ²⁵:

Թ. Թորամանյանի այս դիտարկումներն ու կարծիքներն ավելի հստակվեցին, երբ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը պեղումներ իրականացրեց (1970-1980 և 2002 թթ.) Օշական գյուղի այդ նույն տարածքի ուրարտական ամրոցում, հյուսիսային ստորոտի պալատական համալիրներում և շրջակա դամբարանադաշտում: Պեղումների արդյունքներով մեկ անգամ ևս հաստատվեց, որ Ամատունի իշխաններն ապրել են այդ բլուրների վրա, պահպանել են մ.թ.ա. VII դ.

²³ Խորենացի 1961, 350:

²⁴ Մարտիրոսներ ասելով՝ մենք ենթադրում ենք, որ նրանք Սանեսան թագավորի զորքերի դեմ 336 թ. Վահան Ամատունու տարած հաղթանակում զոհված զինվորներն են կամ քրիստոնեության համար նահատակվածները:

²⁵ Թորամանյան 1948, 142-143:

դրյակ-ամրոցի հիմնական հատակագիծը, կատարել են որոշակի փոփոխություններ: Բլրի ամենաբարձր մասում կառուցել են մատուռ (ուրվագծվում են միայն հիմնապատերը): Վերջինս փոքր բեմով ուղղանկյուն սրահ է (7,9x5,35 մ)²⁶: Բլրի հյուսիսային հատվածում Ամատունիները օգտագործել են հատկապես ամրոցի հարավային կողմի ուրարտական սենյակները: Տեղ-տեղ պահպանված շինությունների պատերի հատվածները միջնադարում լրացվել են համեմատաբար փոքր, միանման մշակված տուֆով և պեմզաքարով:

Այսպիսով, կարելի է ասել, որ Ամատունիները կռապաշտական շինությունների տարածքում ապրելով՝ կարողացել են ինչ-որ չափով նվիրականացնել շրջակայքը: Նրանք տեսնում էին Մեսրոպ Մաշտոցի ազգանվեր գործունեությունը. վերջինս Հայաստանի տարբեր վայրերում, հեթանոսական սրբավայրերի տեղում կառուցում էր մատուռ-վկայարաններ քրիստոնեական հավատքի համար նահատակված սրբերի հիշատակին: Դրա փայլուն օրինակը Օջականից ոչ հեռու գտնվող Ուշի գյուղի բարձունքի հարավային ստորոտին գտնվող Սուրբ Սարգիս վանական համալիրն է (V-XIX դ. I քառորդ)՝ կառուցված մ.թ.ա II-I հազարամյակի ամրոց-բնակավայրի տեղում: Մեսրոպ Մաշտոցը այդ տարածքում ամփոփել է քրիստոնեության համար նահատակված և սրբադասված՝ Կապադովկիայի իշխան, հունական գորքերի հրամանատար Սարգիս զորավարի նշխարները²⁷:

Ուրեմն չի բացառվում, որ Վահան Ամատունին, իր ուսուցչի օրինակով, նպատակադրվել է նրան թաղել իր ուսանում: Նա համոզված էր, որ Քասախ գետի ափերին, գյուղի կենտրոնում, բլրի ստորոտում փռված II-I հազարամյակի բնակավայրերի ու դամբարանների տարածքում քրիստոնեական տաճար կառուցելով՝ նպաստ է բերելու Ավետարանի քարոզչական գործին, «սրբագործելու է» անհավատների ողջ միջավայրը²⁸:

Հասկանալի է նաև, որ հազարապետը զինվորականին հատուկ պարաստակամությամբ ընտրել է իր դրյակ-ամրոցի հարևանությամբ մի ծանոթ, խաղաղ և ապահով անկյուն, որտեղ պետք է թաղվեր Սուրբը: Հայ նշանավոր պատմաբան, վիմագիր Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը (1833-1891), որը եղել է Օջականում, բարձրացել է Դիդի կոնդ կամ ինչպես ինքն է ասում՝ Յլու գլուխ բլրակը, գրել է, որ այն Վահանայ դիտանոցն է եղել, որտեղից միշտ դիտել է Էջմիածնի կաթողիկոսներին և մասնակից դարձել նրանց աղոթքներին²⁹: Ընդունելով Մեսրոպ արքեպիսկոպոսի այս

²⁶ Бабаян, Калантарян и др. 2003, 112-121.

²⁷ Բաբայան 2005, 3-47:

²⁸ Ազանթագեղոս 1977, Հեթանոսական մեղանները քանդելու մանրամասները՝ 31-155:

²⁹ ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, Մեսրոպ Սմբատյանցի արխիվ, գ. 167, 1864 թ.: Տե՛ս նաև Ադամյան 2017, 270-277:

յուրօրինակ դիտարկումը՝ մեզ մնում է միայն ավելացնել, որ Ամատունին հենց այդ դիտանոցից էլ հսկել է երանելու կիսագետնափոր գերեզմանը այնքան ժամանակ մինչև վրան կկառուցվեր տաճարը:

Հազարապետի կառուցած՝ քանդակազարդ քարերով «սքանչելի տաճարը» դարերի ընթացքում բազմիցս վերակառուցվել է և կորցրել նախկին հորինվածքը: Միայն հրաշքով է Մաշտոցի գերեզմանը տեղում մնացել անփոփոխ: Ճարտարապետ Մուրադ Հասրաթյանը գրում է. «Գևորգ Դ Կոնստանդնուպոլսեցու՝ հիմնովին վերականգնած (1873-1879 թթ.) եկեղեցու ավագ խորանի տակ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանն է (443թ.): Այն ուղղանկյուն թաղածածկ խուց է: Արևելյանում՝ խորշով, հյուսիսից և հարավից՝ մուտքերով (հյուսիսայինը փակվել է, իսկ հարավայինը բացվել է դեպի ավանդատուն): Եկեղեցու հարավային կողմում Վահան Ամատունու գերեզմանի վրա կանգնեցվել է հուշակոթող»³⁰: Մ. Հասրաթյանը Մաշտոցի դամբարանի ճարտարապետական հորինվածքի զուգահեռը տեսնում է հատկապես միջնադարյան Հայաստանի նշանավոր կրոնական կենտրոն Ամարասի վանքում՝ IV դ. թաղված Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Գրիգորիսի (զոհվել է 338 թ.) դամբարանի մանրամասներում³¹: Նա գրում է. «Ուղղանկյուն թաղածածկ սրահ, արևելքում խորշ, արևմուտքում բացվածք, հյուսիսային և հարավային պատերում սիմետրիկ տեղադրված զույգ մուտքեր: Դամբարանը կիսագետնափոր է, ունի քարե աստիճաններ: 1858 թ. դամբարանի վրա կառուցվել է նոր եկեղեցի շուշեցիների նյութական օժանդակությամբ»³²:

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը նշում է, որ փոքրիկ մատուռի հյուսիսային մասում՝ առաջին լուսամուտին կից շինված է մի գեղեցիկ տապանաքար, որի տակ է ամփոփված Աղվանից Ա կաթողիկոս Գրիգորիսի մարմինը. այն դարձել է գլխավոր ուխտատեղի³³:

Ուրեմն Մաշտոցի կիսագետնափոր դամբարանի արևելյան կողմի խորշը, արևմտյան և հարավային երկու մուտքերի առկայությունը, հյուսիսային պատի լուսամուտին կից տեղադրված սրբի գերեզմանը խոսում են այն մասին, որ մինչև տաճարի կառուցումը այն, Գրիգորիսի գերեզմանի նման, նույնպես եղել է գլխավոր ուխտատեղի: Այսօր Գևորգ Դ կաթողիկո-

³⁰ Հասրաթյան 2002, 1065:

³¹ Ի դեպ, բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում Տիգրանակերտի, Ամարասի և Սուրբ Ստեփանոսի երկհարկ մատուռ-դամբարանի վաղքրիստոնեական կառույցների միակ մուտքի արևելյան տեղադրությունը, որը, ըստ հնագետ Համլետ Պետրոսյանի, հիմք է տալիս դիտարկելու որպես V-VI դդ. տեղի ունեցած կրոնական բարեփոխման ծիսաճարտարապետական դրսևորում (Պետրոսյան 2015, 160-163):

³² Հասրաթյան 1975, 35-52:

³³ Հմմտ. Բարխուդարյանց 1895, 113:

սի և օջականցիների ջանքերով XIX դ. կառուցված տաճարի արևմտյան մուտքով ուխտավորները մտնում են ներս, քայլում դեպի դահլիճի հարավային կողմում պահպանված մուտքը, աստիճաններով իջնում դեպի սրբի գերեզմանը:

Տաճարի և գետնափոր գերեզմանի նիշերի տարբերությունը վկայում է, որ դրանք միաժամանակյա կառույցներ չեն եղել: Հնագիտական տեսանկյունով, տաճարը կառուցվել է արդեն եղած գետնափոր խցի վրա:

Այսպիսով, մենք բացառում ենք Ամատունու կողմից Մաշտոցի մարմինը մի տեղից մյուսը տեղափոխելու վարկածը: Իրականում դա այն է, ինչպես ժամանակին տեսել և նկարագրել է ճարտարապետ Թորոս Թորամանյանը. «Վահան Ամատունին... Ի հարգանս Մեսրոպ Մաշտոցի հիշատակի, որ ստեղծեց հայոց գիրը և համահայաստանյան երախտագիտության արժանացավ, հանգուցելույն մարմինը տարավ յուր սեփական կալված Օջական գյուղը և ամփոփեց մի ստորերկրյա դամբարանի մեջ, վրան մի մեծ եկեղեցի շինելով: Ներկայիս՝ Վահան Ամատունիի շինած եկեղեցին քանդված է, հին հիմքերի վրա վերաշինել է Գևորգ Դ կաթողիկոսը՝ պահելով իր տեղում Մեսրոպ Մաշտոցի ստորերկրյա դամբարանը՝ եկեղեցիի տակ»³⁴:

Ուրեմն ինչպե՞ս պետք է բացատրել Կորյունի կողմից սուրբ թարգմանչի թաղման՝ մեզ համար այդքան անհասկանալի և խճողված պատմությունը: Այդ և այլ հարցերի պատասխանները տեղ են գտել մի շարք հայագետ-արևելագետների, պատմաբանների աշխատություններում: Մեզ իրավունք ենք վերապահում մեջբերելու ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանի հողվածում առկա մի քանի հատվածներ, որոնք համընկնում են մեր հնագիտական հետազոտությունների հետ:

Հեղինակը Կորյունի «Վարք Մաշտոցի» մասին գրում է. «Մեր կարծիքով, դա ուրիշ ոչինչ է, եթե ոչ ներբողյան, որի կետ նպատակն է գովերգել, փառաբանել մեծ Վարդապետին ու նրա անբաղդատելի հոգևոր սխրագործությունը: ...Ներբողյանը Կորյունը ավարտում է խաչանման լուսավոր յառաջխաղաց նշանով՝ ապոթեոզով... իսկապես Կորյունը «ծաղկեցնում է» Մաշտոցի մասին գրելիքը ոչ միայն «քաջահնչյուն բառերով», «ճախարակյալ պարբերություններով» զարդ ու պաճուճանքով, այլ և բանաստեղծական համեմատություններով ու հակադրություններով, պատկերներով ու մակդիրներով, հիպերբոլաներով և մետաֆորաներով (փոխաբերություններով) և այլն»³⁵:

Այդ ամենով հանդերձ՝ վաստակաշատ գիտնականը շեշտում է. «Մեծ է Կորյունի՝ ծավալով փոքր այդ երկասիրության արժեքը: **«Յառաջիմաց»**

³⁴ Թորամանյան 1942, 41:

³⁵ Մելիք-Օհանջանյան 1964, 49-57:

հեղինակը պարզ գիտակցում էր, թե ինչ կարևոր դեր է վերապահված այդ գրքուկին, որը կյանքի էր կոչված «յօրինակ քաջալերիչ՝ հոգևոր ծննդոց իրեանց, և որք նոքօք աշակերտելոց իցեն յազգս ազգաց»³⁶:

Եզրակացություններ

Հնագիտական պեղումների ընթացքում տաճարի գետնախարխիսների տարածքից հատնաբերված վաղ շրջանի (մ.թ.ա. II հազ.-մ.թ.ա. I հազ.) խեցանոթների³⁷ և բրոնզ-երկաթե դարի արտադրահամալիրներից հայտնի վանակատե բեկորները³⁸ հաստատում են, որ Մեսրոպ Մաշտոցը թաղվել է Ամատունուն հայտնի հեթանոսական բնակավայրի տեղում, որի պատճառով էլ սրբագործվել են Օշական գյուղը և շրջակայքը: Հետևաբար, Սուրբ թարգմանիչը քարանձավային խցում թաղվել է առանց մարտիրոսների:

Եղած փաստերը աներկբա հաստատում են, որ դարերի ընթացքում հայ ժողովուրդը մեծ խնամքով ու գուրգուրանքով է պահպանել տաճարի կիսագետնափոր դամբարանը, որը պատկանում է հայ եկեղեցու ամենամեծ սրբերից մեկին՝ միայն Սուրբ Մեսրոպ Մաշտոցին:

Գրականություն

- Աբեղյան Մ. 1962, Մեսրոպ Մաշտոց, հողվածների ժողովածու, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 305 էջ:
- Ագանթագեղոս 1977, Պատմություն Հայոց, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, «Սովետական գրող», 191 էջ:
- Ադամյան Ս. 2017, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի անտիկ ուսումնասիրության մասին, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի XX, էջ 270-277:
- Ալիշան Ղ. 1890, Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ-Ս.Ղազար, 647 էջ:
- Աճառյան Հր. 1984, Հայոց գրերը, Երևան, ԵՊՀ հրատ., 700 էջ:
- Բաբայան Ֆ. 2005, Ուշիի Ս. Սարգիս վանքը, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 55 էջ:
- Բաբայան Ֆ. 2014, Օշական գյուղի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու պեղումների մասին (2012 թ. օգոստոս), «Էջմիածին», թ. Գ, էջ 122-127:
- Բաբայան Ֆ. 2015, Թոնրի պաշտամունքի արձագանքները միջնադարյան Հայաստանում, «Մեծամոր. կեսդարյա պեղումների տարեգրություն» միջազգային գիտաժողով, Երևան, էջ 234-247:
- Բարխուդարյանց Մակար եպիսկոպոս 1895, Արցախ, Բագու, էջ 113:

³⁶ Մելիք-Օհանջանյան 1964, 49-57:

³⁷ Նյութի թվագրությունը՝ հնագետ, պ.գ.դ. Պավել Ավետիսյանի:

³⁸ Նյութը թվագրել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Բորիս Գասպարյանը:

- Դանիելյան Մ. 2016, Իսկ ո՛ր է Վ դարում կառուցված եկեղեցին, Ճարտարապետություն-շինարարություն ամսագիր, Երևան, N 7-8, էջ 56-59:
- Դավրիժեցի Ա. 1988, Պատմություն, Երևան, «Սովետական գրող», 592 էջ:
- Երեմյան Ս. և այլք 1984, Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 691 էջ:
- Թովմա Արծրունի և Անանուն 1978, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, «Սովետական գրող», 406 էջ:
- Թորամանյան Թ. 1942, Հայկական ճարտարապետություն, Նոթեր հայկական ճարտարապետության պատմության, կազմեց Կ. Ղաֆադարյան), հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 404 էջ:
- Թորամանյան Թ. 1948, Հայկական ճարտարապետություն, Նոթեր հայկական ճարտարապետության պատմության, կազմեց Կ. Ղաֆադարյան), հ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 308 էջ:
- Լեո 1967, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, «Հայաստան», 767 էջ:
- Կորյուն 1994, Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխատությամբ ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի, Հայոց մատենագիրներ. մատենաշար, Երևան, «Հայաստան», 176 էջ:
- Կորյուն 1979, Վարք Մաշտոցի, Երևան, «Սովետական գրող», 82 էջ:
- Հասրաթյան Մ. 1975, Ամարասի ճարտարապետական համալիրը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 5, Երևան, էջ 35-52:
- Հասրաթյան Մ. 2002, Օջականի Ա. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցի, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, «Հայկական Հանրագիտարան» հրատ., գիտական խմբագիր՝ Անանիկյան Ն., Երևան, էջ 1065-1067:
- Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց 1907, Թուրթ առ Վահան Մամիկոնեան, «Ղուկասեան մատենաշար», Թիֆլիս, հրատ. չկա, էջ 77-78:
- Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Վարքաբանական ավանդազրույցներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 530 էջ:
- Մանանդյան Հ. 1962, Մեսրոպ Մաշտոցը և Հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար, «Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածու, խմբագիր՝ Աշոտ Հովհաննիսյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 305 էջ:
- Մարտիրոսյան Ա. 2002, Կորյուն, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., գիտական խմբագիր՝ Անանիկյան Ն., 1075 էջ:
- Մելիք-Օհանջանյան Կ. 1964, «Վարք Մաշտոցի» ժանրը և պատմագիտական նշանակությունը, Բանբեր Մատենադարանի, N 7, Երևան, 49-57 էջ:
- Մովսես Խորենացի 1961, Պատմություն Հայոց, Երևան, աշխարհաբար թարգմանությունը ակադեմիկոս Ստեփան Մալխասյանի, ծանոթություններ, թ. 205:
- Չամչյան Մ. 1985, Հայոց պատմություն, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 803 էջ:
- Պետրոսյան Հ. 2015, Արցախի արեւելյան մուտքով վաղքրիստոնեական մատուռ-դամբարանները որպես Վաչագան Բարեպաշտի կրոնական ռե-

Ֆորմի դրսևորում, Հայաստանը և քրիստոնյա Կովկասը, Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Կովկասյան Աղուանքում և Վրաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին, Երևան, 15-16 դեկ., էջ 160-163:

Տիրացյան Գ. 1963, Հացավան ամրոցի 1962 թ. պեղումները, N 12, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, էջ 103-110:

Օրմանյան Մաղաքիա արք. 2001, Ազգապատում, էջմիածին, հ. Ա, էջ 370-371:

Մովսես Խորենացի 1961, Պատմություն Հայոց, Երևան, աշխարհաբար թարգմանությունը ակադեմիկոս Ստեփան Մալխասյանի, ծանոթություններ թ. 205:

Бабаян Ф., Калантарян А., Жамкочян А., Канемян А., Мелконян У., Пилипосян А. 2003, Результаты раскопок 2002 г. в Ошакане, Археология, этнология и фольклористика Кавказа, материалы международной конференции, Ереван, с. 112-121.

ՕՉԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

(ըստ հարակից տարածքի՝ 2012, 2014 թթ. պեղումների արդյունքների)

Ֆրինա Բաբայան

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանի հարակից տարածքում կատարված պեղումների հիման վրա փորձել ենք մեկնաբանել Մաշտոցի թաղման և գերեզմանի հետ կապված փոքր-ինչ անհասկանալի մանրամասները՝ նրան ինչ-որ մարտիրոսարանում թաղելու և այնուհետև տաճարի խորան տեղափոխելու հարցը, որը տեղ է գտել Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքում և այլ աշխատություններում: Ճարտարապետական և հնագիտական ուսումնասիրությունները վկայում են, որ Վահան Ամատունին Սուրբ թարգմանչի դին Վաղարշապատից տեղափոխել է Օշական և ամփոփել ուղղանկյունաձև թաղածածկ խցում, որի վրա հետագայում կառուցել է տաճարը: Տեղում հայտնաբերված՝ վաղ շրջանի (մ.թ.ա. II-I հազ.) նյութերը հաստատում են, որ դամբարանը կառուցվել է հեթանոսական բնակավայրի տեղում, որի պատճառով սրբագործվել են Օշական գյուղը և շրջակայքը: Դամբարանը պատկանում է հայ եկեղեցու ամենամեծ սրբերից մեկին՝ միայն Ս. Մեսրոպ Մաշտոցին:

Բանալի բառեր՝ Օշական, հնագիտական պեղումներ, Ս. Մաշտոցի եկեղեցի, Ս. Մաշտոցի դամբարան, Կորյունի «Վարք Մաշտոցի», Վահան Ամատունի, գետնախարիսխներ:

**ГРОБНИЦА СВ. МЕСРОПА МАШТОЦА В ОШАКАНЕ
(по результатам раскопок смежной территории в 2012, 2014 гг.)**

Фрина Бабаян

Результаты раскопок на участке, примыкающем к гробнице Св. Месропа Маштоца в Ошакане, дают возможность уяснить ряд вопросов, связанных с погребением Св. Месропа Маштоца в некоем мученичьем и последующим перенесением его праха под алтарь храма, о чем имеются упоминания в «Житии Маштоца» Коряна и других авторов. Архитектурные и археологические исследования показывают, что после перенесения останков Маштоца из Вагаршапата в Ошакан они были захоронены Ваганом Аматауни в прямоугольной вольте, над которой впоследствии был возведен храм. Найденные *in situ* материалы раннего периода (II-I тыс. до н.э.) подтверждают, что гробница была построена на месте языческого памятника и принадлежит только Маштоцу, одному из величайших святых Армянской церкви.

Ключевые слова – Ошакан, археологические раскопки, церковь М. Маштоца, усыпальница М. Маштоца, Корян-«Житие Маштоца», Ваган Аматауни, стилобаты.

**THE TOMB OF ST. MESROP MASHTOTS IN OSHAKAN, ACCORDING TO
THE RESULTS OF EXCAVATIONS AT THE ADJACENT AREA
(2012, 2014)**

Frina Babayan

Based on excavations in the area adjoining St. Mesrop Mashtots' tomb in Oshakan we tried to clarify some dark passages in the "Life of Mashtots" by Koryun concerning the burial and tomb of St. Mesrop Mashtots in a martyrrium and his subsequent transfer under the church altar. Architectural and archaeological research showed that Vahan Amatuni transported Holy Translator's body from Vagharshapat to Oshakan and placed it in a rectangular vault above which he later erected a temple. Finds of the II-I Mill. BC unclosed *in situ* confirm that the tomb consecrating the village of Oshakan and its neighborhood was built on a pagan site and belonged only to Mashtots, one of the greatest saints of the Armenian Church.

Key words – Oshakan, archaeological excavations, the church of M. Mashtots, the tomb of M. Mashtots, Koryun "Life of Mashtots", Vahan Amatuni, stylobates.

**ԱԿՆԱՐԿ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ
(ըստ Դվինի և Անիի պեղածո նյութերի)**

Աղավնի Ժամկոչյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ galstyan-1966@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 10.08.2019, գրախոսվել է 25.08.2019, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

Միջնադարյան Հայաստանի աշխարհիկ կառույցների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի փոքր և միջին բնակավայրերի քաղաքայնացման գործընթացին հետևելու և քաղաքաշինության այլազան հիմնախնդիրները պարզաբանելու համար: Անցյալում այդ ուղղությամբ որոշակի աշխատանքներ իրականացվել են¹, սակայն հայ և օտար սկզբնաղբյուրների, մասամբ խաթարված շինությունների և հնագիտական նոր նյութերի համատեքստով թեման կարելի է բացահայտել այլ տեսանկյունով:

Ուսումնասիրության առանցքը միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքներ Դվինի և Անիի պեղումներից հայտնաբերված աշխարհիկ շինությունների ճարտարապետական հարդարանքներն են, որոնց ակադ. Ն. Մառը, Հ. Օրբելին և Կ. Ղաֆադարյանը² հպանցիկ են անդրադարձել՝ ուշադրությունը կենտրոնացնելով այն խնդիրներին, որոնք արմատական կարևորություն ունեն Հայաստանի միջնադարյան պատմության մշուշոտ հարցերը լուսաբանելու հարցում: Ուսումնասիրվող նյութը Դվինից և Անիից հայտնաբերված կաղապարանախշ քիվերից, անկյունազարդերից, եզրազարդերից, լուսացանցերից, ինչպես նաև թրծած աղյուսների ու գիպսերի երկրաչափական զարդերի լուծումներով ձևավորված տերակոտաներից բաղկացած հավաքածու է, որի գործառնությամբ նպատակակետն ուղղված էր հում կամ թրծած աղյուսներով շինությունների կառուցակազմն ամրակայելուն և գեղարվեստական տեսք հաղորդելուն, ուստի քննությունն իրականացնում ենք նյութի կոնստրուկտիվ և դեկորատիվ չափորոշիչների արժևորումով:

¹ Առաքելյան 1958, 1, 194-200, 1964, 2, 7-53, Չարյան 1986, 110-118:

² Март 2011, 50-110; Орбели 1963, 23-98; Ղաֆադարյան 1952, 1, 126-138, 1982, 89-111:

Վաղ միջնադարյան ճարտարապետաշինարարական հարդանքներ (IX-X դդ.)

Վաղագույն գիպսե հարդարանքները Դվինի կաթողիկոսական VII դարի պալատից են, և տեղում դրանց առկայությունը ժամանակավրեպ է, ուստի կա երևույթը անցյալի իրադարձությունների հենքի վրա ներկայացնելու անհրաժեշտություն: 893 թվականի երկրաշարժից հետո կաթողիկոսը ժամանակավորապես հաստատվեց Վաղարշապատում: Նրան մասամբ հետևեցին քաղաքում ապրող քրիստոնյաները, որոնց մասին մինչ այդ, իբրև քաղաքի մեծամասնություն կազմող էթնոս, արաբ մատենագիրներն ունեն խոսում գրառումներ³: Այդ նվազումը հանգեցրեց մուսուլմանական համայնքի զորեղացման, և մզկիթ կառուցելը վերածվեց պարտադրանքի: Պահպանված շենքերից VII դարի կաթողիկոսական պալատը նրանք վերածեցին մզկիթի⁴:

Խնդրին ճշմարիտ լուծում առաջադրելուն նպաստում են պատմական այս տվյալները և հնագիտական պեղումների ծավալուն տեղեկատվությունը: 1938 թ. պեղումների ժամանակ VII դարի պալատի հարավային պատին կից բացվել էր թրծած աղյուսներով շարված, շրջակայքում ցաքուցրիվ թափված գիպսե զարդարուն բեկորներով լի մեկ այլ պատ: Շինության հատակը նույնպես ունեցել է թրծած աղյուսներով համատարած շարվածք: Կաթողիկոսարանը մզկիթի վերափոխելու համար եղել են կառուցելակերպի բծախնդիր մոտեցումներ: Կարո Ղաֆադարյանը թրծած աղյուսե շարվածքով բացված պատի մասին գրել է, որ այն կառուցվել է երկու սյուների խարիսխների շրջապատում խախտված սյուներն ամրացնելու և դահլիճի ծածկը փլուզումից փրկելու համար⁵: Տրամաբանորեն ճիշտ համարելով այս մտածողությունը՝ մեր կարծիքով, կար նաև մեհրաբն այդ մասում կերտելու անհրաժեշտություն, որովհետև մեհրաբի որմնախորշի կառուցածնը պահանջում էր համապատասխան տեղադիրք, իսկ այդ պատի կառուցմամբ խնդիրը լուծվում էր: Մեհրաբն այնտեղ կառուցված լինելը հիմնավորվում է նաև տեղում հայտնաբերված գիպսե հարդատարրերի մնացորդների առկայությամբ: Դրանք մեհրաբի մակերեսը զարդարող գիպսե

³ Իսթահրի 2005, 575, Իբն Հաուկալ 2005, 630:

⁴ Իսթահրին գրել է, քրիստոնյաները նրանում (խոսքը հայերին է վերաբերում, Ա.Ժ.) մեծադիր են, Մայր մզկիթը եկեղեցու կողքին է, 2005, 574, իսկ Իբն Հաուկալը X դ. գրել է՝ այժմ քաղաքի կենտրոնում վերակառուցված է մայր մզկիթը և այն շրջապատված է այլ պարսպով, և նրա շուրջը խրամատ կա: Նրա մզկիթի կենտրոնում կա ջրի աղբյուր: Իսթահրի 2005, 627: Մեկ այլ տեղում գրում է՝ Դվինը շրջապատված է պարսպով: Քրիստոնյաներն այնտեղ բազմամարդ են: Մայր մզկիթը (քրիստոնեական) տաճարի կողքին է, ինչպես Եմեսայի մզկիթը, որը տաճարին կից կպած է, Իբն Հաուկալ 2005, 630:

⁵ Ղաֆադարյան 1952, 1, 120:

հարդարանքներ են, որոնց արվեստագիտական քննությունը համապատասխանում է IX-X դարերի քաղաքաշինության ընդհանուր միջավայրի տարածված զարդաների բովանդակությանն ու ոճին⁶: Գերիշխողը թեփուկավոր, կլոր և փորագիր կետերով հարստացված բեկորներն են, որոնք երբեմն ուղեկցվում են զիգզագներով, բուսազարդերով և երկրաչափական ուղղահայաց շեղանկյունների շարվածքով: Մեհրաբի փորագիր ականթակիր կամարաղեղի հետ դրանք գեղարվեստի նոր հարդատարրեր են, որոնց նախաձևը հայտնի էր անտիկ ժամանակաշրջանում, բայց որոշ փոփոխություններով փոխառնվեցին վաղ միջնադարյան հայկական և սասանյան մշակութային աշխարհում (աղ. 1)⁷:

Ջարգացած միջնադարի ճարտարապետաշինարարական հարդարանքներ (XI-XIII դդ.)

Շտազոտվող հավաքածուի մյուս ծավալուն բաժինը գտնված է Դվինի միջնաբերդի գագաթի տարածքից 1939 թ., 1946-1950 թթ. պեղումների ընթացքում: Կ. Ղաֆադարյանն այնտեղ 30x40-ի վրա 1,5 մ խորությունից 12.000 քառ. մ ուղղանկյուն քառանկյան մակերեսով թրձած աղյուսների ցաքուցրիվ հնագիտական միջավայրում բացված կառույցը, որի պատերը տեղ-տեղ պահպանված էին 0,7-2,5 մ լայնությամբ, անվանել է «պալատ» (այսուհետև այս տերմինով կներկայացնենք շարադրանքը) (աղ. 6, նկ. 2):

Հիմքերում գետաքարի, որձաքարի, տաշված ավազաքարի և տուֆի խառը շարվածքում կիրառվել է շաղախով ամրացնելու տեխնիկան: Դվինի շրջակայքը քարից զերծ լինելու պատճառով 893 թ. երկրաշարժից հետո կենտրոնական թաղամասի քարաշեն կառույցների փլատակների քարերը միշտ էլ միջնաբերդում կրկնակի օգտագործման են ենթարկվել: Կառույցի ներքին հորինվածքի նախնական պատկերը հստակ չէ: Տեսլականը սոսկ ավելի ուշ վերակառուցման գործառույթի հետևանքով իբրև հենք հիմնապատերի գործածության փաստն է արձանագրել: Կամայական, անծրագիր, հնի վրա դրված նոր պատերը, որոնք բջիջների էին վերածել կառույցի սենյակները, փոխված հատակները, հորերի և թոնիրների համար իրականացված խորացումները մեծ կորուստ են պատճառել նախորդ հորինվածքին: Վերջում գոյացել է անորոշ հատակաձևով զարգացած միջնա-

⁶ Ахпаров, Ремпель 1971, 106-117.

⁷ Չենք խորանում զարդաների արվեստաբանական վերլուծությունների մեջ, սակայն որ ազդեցության և փոխազդեցության մթնոլորտում դրանք փոխանցվում էին մշակութային կոթողների մանրամասներում, փաստ է: Տվյալ պարագայում միայն այս մեհրաբի կամարաղեղի և շեղանկյունների ուղղահայաց շարվածքով գոտիների փոխանցումներին իրատես ենք Ախթամարի Ս. Իսաչ եկեղեցու քանդակներում: Տե՛ս Օրճե-լի 1968, 1, табл. VI, X, XI:

դարում կառուցված մի համալիր, որից տուժել էր նախկինում կանխամտածված հատակագծով մշակված ծավալուն վերոհիշյալ հիմնավոր կառույցը, որ հարավային ծայրամասում ունեցել է աստիճաններով նկուղային հարկաբաժին, 20x20 չափերով աղյուներից բաղկացած հատակաշար և պատուհանի գիպսե լուսացանցեր (աղ. 2, նկ. 1, 2, 3):

«Պալատի» կառուցման ժամանակի և բնակեցվածության տևողականության խնդիրը բացահայտման կարոտ է:⁸ Դիմենք պատմական անցյալին: Իբն Հաուկայն այդ մասին գրել է, որ Դվինում X դարում կար ոստիկանի ապարանք՝ օրինակ, Պարտավի ոստիկանական ապարանքը Աղվանքում կամ էլ Արդեբիլինը՝ Ատրպատականում⁹: Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով՝ այդ ապարանքը գտնվել է Դվինի միջնաբերդում: Այն հիշատակվել է ոչ թե որպես անցյալի մի հուշարձան, այլ որպես գործող կենտրոն, որտեղ մինչև IX դարի վերջը ոստիկան էր նստում¹⁰: Եթե ասվածը հիմք ընդունենք իբրև ճշմարտություն, ապա քաղաքաշինական ուրույն հորինվածքով «պալատին» խոսքը չի կարող վերաբերել, որովհետև շինարվեստի մանրամասներում կան որոշ հակասություններ, օրինակ՝ շինության հիմքերի համար օգտագործված մշակված քարերի գործառույթը, որ կարող էր իրագործվել 893 թ. երկրաշարժից հետո՝ Կենտրոնական թաղամասից բերված քարերի հաշվին: Ավելացնենք, որ տեղում գիպսե հարդարանքների և տերակոտաների ուսումնասիրությունը վավերացնում է դրանց՝ XI դարին բնորոշ մշակութային արժեքների պատկանելության իրողությունը:

IX դ. վերջին և X դ. Սաջյան, Սալարյան էմիրների և հայ Բագրատունիների միջև Դվինի համար մղվող պայքարի ընթացքում հաշտության պահերից մեկի մասին պատմիչը գրում է. «Ռոճիկս պատրաստեալ նմա թագաւորին Սմբատայ սուղ ինչ պակաս քան զամ մի»¹¹: Տողերի մեկնաբանությունն այն է, որ Սմբատ Բագրատունին երաշխավորել է քաղաքը վերականգնելուն օգնություն տրամադրել: Ցավոք, վերակառուցված կամ նորոգված շինությունների մասին աղբյուրներում և հնագիտական կառույցներում փաստագրումները բացակայում են:

Համոզիչ է «պալատը» քուրդ Շեդդադյան Աբու Ասվարի կողմից XI դ. առաջին քառորդում կառուցված լինելու իրողությունը, որի հիմնավորումների իմաստային շերտերը պատմաքաղաքական, առևտրատնտեսական և ճարտարապետաշինարարական բնույթի են:

⁸ Ղաֆադարյան 1952, 1, 48-76:

⁹ Ibn Haugal II Viae et regna, auctore Ibn Haugal, Lugduni Bat, 1873, 342 (Աղբյուրը վերցրած է Ա. Տեր-Ղևոնդյանի «Արաբական ամիրությունները Բագրատունյաց Հայաստանում» գրքից 1965, 73:

¹⁰ Տեր-Ղևոնդյան 1965, 73:

¹¹ Յովհաննու կաթողիկոսի (Դրասխանակերտցույ) 1912, 235:

ա) IX դարի II կեսին՝ արաբական խալիֆայության քայքայումից հետո, ամիրայությունների ձևավորման գործընթացի հետևանքով նրա տիրապետության տակ եղած երկրների քաղաքական քարտեզը զգալիորեն փոխվեց: Մինչ այդ Դվինում Սաջյանների, Սալարյանների, Բագրատունիների և առաջին Շեդդադյանների պայքարին ուղեկցում էին դելմիկների ռազմարշավները, որի հետևանքով քաղաքը վերածվել էր քաոսի: Իսաղաղության պահերից մեկի ժամանակ՝ 1022 թվականին, Շեդդադյան III սերնդի ներկայացուցիչ Աբուլ Ասվարի հայտնությունը Դվինում, որ 28 տարի կառավարեց քաղաքն ու շրջակայքը, տարածագոտին վերածեց առաջատար ամիրայություններից մեկի, որի հետ հաշվի էին նստում մյուս ամիրայությունները, Բագրատունիներն ու Բյուզանդիան: Աղբյուրագիտական ուղղակի տվյալները և Ա. Տեր-Ղևոնդյանի ուսումնասիրությունները հիմնավորել են նրա քաղաքական դիմագիծը՝ տալով նաև դիպուկ գնահատական¹²: Գերխնդիրը նրա տնտեսական ու շինարարական գործունեության ոլորտի բացահայտումն է, որն առ այսօր իրականացված չէ: Այդ բացը մասամբ լրացնում է Դվինի հնագիտական պեղումների առարկայական տեսլականը:

բ) Աբուլ-Ասվարը հայտնի էր ոչ միայն իբրև հմուտ ղեկավար, զորավար ու դիվանագետ, այլև առևտրատնտեսական, ճարտարապետաշինարարական գործի մեծ գիտակ ու կազմակերպիչ, մշակութային արժեքների լավագույն գնահատող ու արժևորող: Նրա շինարարական գործունեության ոլորտներից էր պարսպաշինությունը, որի նպատակը Սաջյանների, Սալարյանների և Դելմիկների ավերածությունները վերացնելն ու հետագա արհավիրքներից խուսափելն էր: 2006-2013 թթ. միջնաբերդի «Հարավային բուրգ» տեղամասում մեր իրականացրած պեղումների ժամանակ պարսպի պեղված հասվածում արձանագրվեցին XI դարում իրականացված բազմաշերտ վերանորոգումների հետքերը (աղ. 6, նկ. 1)¹³: Շինարարական այդ գործունեության վերջնարդյունքը նպաստեց բյուզանդական ռազմարշավներին դիմակայելուն՝ ապահովելով քաղաքի բնակչության անվտանգությունը: Կարելի է պարզված համարել քաղաքաշինական մեկ այլ ոլորտի՝ բնակարանաշինության դրական տեղաշարժերը, նյութերը քաղելով Կ. Ղաֆադարյանի Դվինի Ստորին Բերդում իրականացրած պեղումների արդյունքներից (աղ. 6, նկ. 3)¹⁴:

գ) Աբուլ-Ասվարի իշխանության տարիներին տնտեսական քաղաքականության ճիշտ կազմակերպմամբ քաղաքը բարգավաճեց՝ դասվելով տարածաշրջանի վաճառաչի կենտրոնների շարքին: Միայն բարձրորակ խեցեղենի արտադրության վիճակագրությունը վավերացնում է դրա բազ-

¹² Minorsky 1953, 6, Տեր-Ղևոնդյան 2003, 70-85:

¹³ Ժամկոչյան 2016, 2 (11), 178-179, Ժամկոչյան և ուրիշներ 2015, Ժ, 10-13:

¹⁴ Ղաֆադարյան 1982, 2, 102-106:

մաթիվ տեսակների արտադրությունը՝ նախանշելով տեղական մենաշնորհային պիտակավորման իրողությունը: Իսկ դրանց բարձրորակ ու շքեղ ներմուծած տեսականիների քննությունն¹⁵ ընդգծում է տարածաշրջանի այլ երկրների հետ քաղաքի ունեցած առևտրամշակութային կապերի իսկությունը: Արծաթի ճգնաժամի հետևանքով մասամբ անգործության էր մատնված Դվինի դրամահատության գործը¹⁶: Իհարկե, թեթև քաշով արծաթե դրամներ հատելու գործառույթը կար, բայց դրանք հազիվ դիմանային բյուզանդական ոսկեդրամների շուկայական մրցակցությանը: Ի դեպ, «պալատի» տարածքից գտնվել են Ռոմանոս IV կայսեր որդիների (1067-1070)¹⁷ ոսկեդրամները, իսկ 1979 թվականին Դվինի տարածքի սահմաններում ընդգրկված Նորաշեն գյուղում հայտնաբերված 3539 ոսկե դրամներից բաղկացած զանձը կրում է Կոստանտին 7-ի (1025-1028) անվան հիշատակագրությունը: Նյութի մասին առանց ուսումնասիրության Հայաստանի պետական բանկը հրատարակել է «Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը» գրքում, Երևան, 2018, էջ 92-93:

դ) Դվինի XI դարի քաղաքային շինությունների ճարտարապետաշինարարական դիմագիծը հնարավորին չափ ավարտուն պատկերացնելու համար «պալատի» շրջակայքից հայտնաբերված հարդարանքների քննությունը բավարար չէ: XI դարում քաղաքաշինական մտքի միջազգայնացման կարգում տիրող էին քաղաքաշինական կառուցաձևերի համագործակցության գործառույթները, որ բացառում էր տարածական մեկուսացումն ու կղզիացումը: XI դարում արդեն կայացած ամիրությունների շինարարական գործելակերպում դրական տեղաշարժերի ձեռքբերումներն իրականացվում էին ճանապարհային քաղաքականության լայնահուն հնարավորություններով, ազդեցության և փոխազդեցության հարաբերությունների շնորհիվ: Այս ամենով հանդերձ՝ կառույցների տիպականացումը չի կարելի համարել կույր ընդօրինակության արդյունք, որովհետև հատակաձևերում տեղադիրքի կլիմայական գոտու, տեսադաշտի և այլ հանգամանքների բերումով կային նկատելի տարբերություններ՝ չհաշված յուրաքանչյուր երկրում կառուցապատման, տեղայնացման անհատական լուծումները: Եթե Կենտրոնական Ասիայում ու Պարսկաստանում կառուցապատումներն իրականացվել են հարթ տարածքում քառակուսի հատակաձևով՝ կենտրոնում բակի շուրջը իրարահաջորդ սենյակների դասավորությամբ, ապա Դվինում ուղղանկյուն հատակագծով «պալատի» կառուցումը բացատրվում է տեղադիրքի, երկրակազմության կառուցվածքի և վայելուչ տեսադաշտի կողմերն ապահովելու հանգամանքներով: Համե-

¹⁵ Ժամկոյան 1981, 83-146:

¹⁶ Մուշեղյան 1983, 215:

¹⁷ Ղաֆադարյան 1952, 1, 73:

մատական զուգահեռների համար մենք առաջնորդվել ենք քաղաքակրթական աշխարհին անխաթար, նախնական կառուցվածքի ոճով պահպանված հուշարձանների¹⁸ տեղեկատվությամբ: Ըստ այդմ՝ կառույցների սենյակները 1 մ բարձրությամբ զբաղեցրել է ոճավորված բուսազարդերի ու երկրաչափական մոտիվների համաչափ ու կանոնիկ պատկերային (գերիխ) բովանդակությամբ խճապատկերը՝ շարունակությունը կազմող սվաղի մակերեսին որմնանկարային սյուժեների (աղ. 5, նկ. 3 ա, բ, գ, դ, ե) պատկերագրությամբ: Դվինում, կարմիր ու կապույտ ներկերի հետքերով որմնանկարային բեկորներից բացի, գտնվել է նաև սև, վարդագույն երանգներով գունազարդված ամբողջական մի թռչունի որմնանկար (աղ. 5, նկ. 1): Սենյակի պատերի վերնամասն ավարտվել է ծաղկազարդ կամ արձանագիր քիվաշարքով: Գիպսե հարդարանքների տարաբնույթ պատկերագրությամբ կառույցը շքեղացնելու ընկալումը X-XI դդ. ծնունդ է սովել որմնադիր ճարտարապետների, գեղարվեստական ձևավորումների գիտակարվեստագետ շինարարների մի ամբողջ սերնդի, որ ծրագրեր մշակեց ու ստեղծագործական որոնումներով գտավ ժամանակի շնչով ամփոփված, տիրող ճաշակին ու ոճին հարիր լուծումներ: Մի քանի խոսք շինարարական արվեստի այդ բնագավառի տեխնոլոգիական կողմի մասին: Ինչպես ճարտարապետության, այնպես էլ շինարարական ոլորտում պատկերաձևի համաչափությունը պահպանելու համար պահանջվում էին երկրաչափական ու կիրառական մաթեմատիկայի գիտելիքների իմացություն և գեղարվեստական ոճի ընկալման համապատասխան երևակայական ճաշակի կարողություն: Որմնադիր շինարարը, տիրապետելով այս ամենին, ճարտարապետի նախագծած ծրագիրն ու հաշվարկն իրականացրել է պատի ազատ տարածության վրա մոդուլային միավորների ճշգրիտ դասավորությամբ: Յավոք, Դվինում չափազանց մեծ ավերածությունների հետևանքով գեղարվեստական ձևավորումով ամբողջական գեթ մեկ պատն անգամ պահպանված չէր: Ուստի մեր տրամադրության տակ եղած բեկորների վերականգնումները ներկայացնում ենք միայն Կենտրոնական Ասիայի XI դարի անխաթար պահպանված հուշարձանների զուգահեռներ համեմատականով¹⁹:

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքներից հայտնաբերված գիպսե հարդարանքները տիպաբանությամբ ստորաբաժանվում են ա) երկրաչափական, բ) բուսական, գ) էպիգրաֆիկ, դ) կենդանական խմբաքանակների:

ա) Այս խմբի մեջ ամփոփված գիպսե հարդարանքները միագիծ դասավորությամբ բազմանկյունների ու եռանկյունների խաչաձևումով վե-

¹⁸ Лунина 1980, 59-83.

¹⁹ Лунина 1980, նկ. 3, 4, 6, 7:

ցանկյուն աստղերի տեսքով զարդագոտիներ են (աղ. 4, նկ. 6, աղ. 3, նկ. 4): Երբեմն հորիզոնական դիրքով շարված քառակուսիները հատվում են ուղղահայաց գծերով ու գնդիկներով և շղթա կազմած ծածկում են քիվի ողջ մակերեսը (աղ. 4, նկ. 2): Մեկ այլ տարբերակ էր ռիթմիկ հաջորդականությամբ իրար մեջ հազած շրջաններից կազմված միապաղաղ գոտին (աղ. 4, նկ. 3): Երկաստիճան չկրկնվող մոտիվ է պարանազարդ հյուսածո կրկնակի ժապավենագոտի ներկայացնող զարդաշարը (աղ. 4, նկ. 5): Քիվերից մեկի վրա ոճավորված ծաղկեշղթան լուծված է կանոնիկ ներդաշնակության յուրահատուկ ոճով (աղ. 4, նկ. 7): Իսկ բեկբեկյալ գծերի երկրաչափական անկանոն լուծումներով գիպսե հարդարանքները որակ չեն կազմում, և բացառված չէ դրանց արտադրական խոտան լինելու հանգամանքը (աղ. 2, նկ. 8):

բ) Բուսական մոտիվներով հարդարված բեկորները ուռուցիկ մակերեսով, հորիզոնական շարք կազմող ութթերթանի վարդյակների տեսքով են և հաճախ պատած են կոբալտի կապույտ ներկով (աղ. 3, նկ. 10): Առանձին քառակուսու մեջ եզրերին օղակներով զարդարուն վարդյակները պատերի խճանկարում բաժանարարի դեր են կատարել (աղ. 3, նկ. 16): Բուսական ոճավորված միջավայրում թռչունների, մարդկային և խառնածին էակների զուգորդումով հարստացված պատկերադրվագները խոյակների և անկյունազարդերի կոնստրուկտիվ համակարգային գործառույթում էական տեղ են զբաղեցրել (աղ. 3, նկ. 11, 12, 13, 14, 15, 17):

գ) Էպիգրաֆիկ հարդարանքները արաբատառ հիշատակագրությամբ քիվեր են, որոնք հարդարել են շինությունների ներքին մուտքերի ճակատը: Չափազանց հատվածաբար հայտնաբերված լինելու պատճառով վերծանությունների իմաստային գործոնը խաթարված է: Աշոտ Մանուչարյանին հաջողվել է միայն ընթերցել՝ 1) Հոգնածություն կամ թուլություն [զգացիր Ա.Մ.] հագեցրու ծարավդ, 2) Չամբյուղ այն բանի համար (աղ. 3, նկ. 5, 6, 7, 8, 9)²⁰:

դ) Կենդանավազքի տեսարանով տարողունակ բովանդակությամբ հարդարված գիպսե բեկորների զգալի մասը հայտնաբերվել են Ստորին Բերդի տարածքում պեղված տներից մեկի թրծած աղյուսաշար խորշի շրջակայքից (աղ. 4, նկ. 4), որ ճարտարապետ Լ. Սադոյանը վերականգնել է խորշի մուտքի պատկերատախտակի տեսքով (աղ. 5, նկ. 2): Թեման հայկական արվեստին խորթ չէ, բայց միջնադարյան դրոշմազարդ կարասների վրա պատկերված կենդանավազքի սյուժեի հետ չունի ընդհանրական կապ, ուստի դա համարվում է գեղարվեստական մեկ այլ դպրոցի յուրահատուկ ոճ: Եթե դառնանք մուսուլմանական արվեստի ակունքնե-

²⁰ Շնորհակալություն ենք հայտնում վիմագրագետ Ա. Մանուչարյանին բեկորների պահպանված հատվածների հնարավոր ընթերցանության համար:

րին, ապա կար մարդկային և կենդանական պատկերներով կիրառական արվեստի արժեքներն այդ սյուժեի կիրառությունն արգելակող կանոն: Պիտի մտածել, որ գոյություն ունեն հաս Ղուրանի այդ սկզբունքը մերժող հոսանք, որ ներկայացնում էր նման դրվագաշարեր, այլապես ոչ միայն այս, այլև խեցեգործական և մետաղամշակության բնագավառներում այդ սյուժեների դրսևորումները անհամատեղելի են: Մանրամասներում չենք խորանում, որովհետև այն մեր նպատակից դուրս առանձին ուսումնասիրության խնդիր է:

Տակավին X դարի վերջերին Կենտրոնական Ասիայի շինարվեստում կառույցների կոնստրուկտիվ և գեղարվեստական կողմն ապահովելու համար կառուցածների նոր որակներ մշակվեցին, էությունը որոնց աղյուսների և գիպսի համադրությամբ խճանկարային նոր տախտակադրվագներ ստեղծելն էր: XI դարում տարածաշրջանի բոլոր երկրներում խճապատկերային այս նոր ձեռքբերումները դարձան շինությանը հարազատ ոճ, իհարկե, պահպանելով տեղայնացման բնորոշ հատկանիշներ: Դվինում քարհանքներից զուրկ լինելու և կլիմայական տաք գոտում գտնվելու հանգամանքը շինության արտաքին դիմագիծը զարդարելու համար այս կառուցելակարգն ունեցավ կիրառական լայն դաշտ՝ դառնալով սյուների, կամարաղեղների և խորշերի կոնստրուկցիաների անհրաժեշտ բաղադրիչը (աղ. 3, նկ. 1, 2, 3): Սյուներից մեկը կերտված է գիպսի մեջ շեղանկյան կտրվածքով թրծած աղյուսները ամրացնելու եղանակով (աղ. 2, նկ. 11): Ավելի պարզունակ ձևավորում ունի ուղղահայաց և հորիզոնական շարքերով իրարահաջորդ գոտիներից բաղկացած սյունը, որ գտնվել է «պալատի» հատվածներից մեկում (աղ. 2, նկ. 15): Սյուներից մեկի զիգագ կազմած թրծած աղյուսների արանքները զբաղեցնում են գիպսի ոճավորված մանր ժապավեններ (աղ. 2, նկ. 6, 14): Ուղղահայաց դասավորությամբ որոշ պատկերատախտակներ կազմված են թրծած աղյուսներով բազմանկյունների և աստղաձև զարդերով հյուսածո զարդերից, որոնց արանքները լցված են գիպսի անփոյթ գծազարդերով (աղ. 2, նկ. 4, 5, 7, 10, 12, 13): Դիտողական տեսանկյունով տպավորիչ է սվաղի վրա անկանոն դասավորությամբ և տեխնիկապես բավական պարզունակ մշակումով հարդարված տերակոտաները (աղ. 2, նկ. 9): Սրանք ինչ-որ շինությունների պատերի արտաքին մասերն են, որ պահպանվել են այդ չափերով: 1948 թվականին պեղումների ժամանակ «պալատի» նկուղային հարկաբաժնից գտնվել է քարե հիմքերի վրա հում աղյուսներից շարված պատի վերնամասը կազմող թրծած աղյուսներով շարված կամարաղեղը (աղ. 4, նկ. 1):

Անցնենք Անիի պեղումների ժամանակ հայտնաբերված գիպսե հարդարանքների քննությանը: Քարաշեն մայրաքաղաքում նման գեղարվեստական ձևավորումների ընդունումը թվում է անտրամաբանական: Սա-

կայն Բագրատունիների բազիլիկ դահլիճի նկուղային հարկաբաժնում հայտնաբերված այդ գյուտերը արժանացել են հակասական մեկնաբանությունների: Քաղաքի ճարտարապետությանը քաջատեղյակ Թ. Թորամանյանը այդ մասին գրում է. «Ինչպես բեկորները ցույց տվին այս սրահին ամբողջ առաստաղ ծածկված է գաջե ձուլված գեղեցիկ զարդաքանդակներով, որոնց ոճը Բագրատունյաց շրջանին բոլորովին անձանոթ Ջաքարյան շրջանին արվեստագիտությանը հատուկ էր: Հինգ ամ լայնությամբ զարդաքանդակ ժապավեններ կիլումվեն արաբական ճաշակին զանազան ձևերով, որոնց հյուսվածքի մեջ գոյացած բազմանկյունի կամ աստղաձև դատարկությունների մեջ դիզված էին վերին աստիճանի նուրբ ու բնական գծերով բարձրաքանդակ կենդանիներ և թռչուններ»²¹: Փաստորեն նա դրանք թվագրում է XII-XIII դդ., որին հետևում է Ն. Տոկարսկին²²: Նույնի մասին Հ. Օրբելին ունի հետևյալ գրառումը. «Այս դահլիճը աչքի էր ընկնում իր շքեղությամբ: Այստեղ կային գիպսից ձուլված վարդյակներ, որմնանկարներ և փորագրված փայտի ոսկեգօծ մնացորդներ»²³, ավելացնելով նաև, որ հատուկ ընդունելությունների և հանդիսավոր արարողությունների նպատակով պալատի հյուսիսարևելյան թևում Բագրատունիների ժամանակ կառուցված մեծ դահլիճը վերակառուցվել էր ինչ-որ բնակելի անորոշ մի շինության, որտեղ նեղ ու անճաշակ սենյակները խորթ էին հայկական ճարտարապետության սկզբունքներին²⁴: Վաստակաշատ հայագետը կոնկրետ ժամանակագրական հիշատակություն չի մատնանշում, իսկ արևելագիտության լայն ճանապարհ անցած ակադեմիկոս Մառը զգուշավոր է և երևոյթին արձագանքել է հետևյալ կերպ. «Հյուսիսարևմտյան դահլիճում գտնված գիպսերը (որոնք կենդանավազքի, բուսական զարդանախշերի և լուսացանցերի տեսքով են եղել՝ Ա.Ժ) ավելի ուշ տիրակալների ներդրումը պիտի համարել, որ դուրս մղեցին վաղ հարդարանքերը»²⁵: Վերոհիշյալ եզրահանգումներին առաջարկում ենք մեր վարկածը, որ սա ևս Շեդդադյան ժամանակների շինարարական ժառանգության մնացորդներն են, որովհետև 1072 թվականին քաղաքը Աբուլ Ասվարի սերունդների ձեռքին էր:

Եզրակացություններ

Այսպիսով, Դվինի և Անիի ճարտարապետաշինարարական բեկորների հետազոտությամբ կարելի է եզրակացնել, որ շինարվեստի այդ տե-

²¹ Թորամանյան 1942, 2, 376:

²² Токарский 1962, 186.

²³ Орбели 1963, 112.

²⁴ Орбели 1963, 112.

²⁵ Март 2011, 70.

սակները՝ գիպսե հարդարանքները և տերակոտաները, քաղաքային մշակույթի վկայագրեր էին, որ ամիրությունների կայացման ժամանակաշրջանում՝ X և XI դարերում, ունեցել են տարածման լայն շրջանակ: Դվինում հայտնաբերված ծավալուն հավաքածուի որակական ու զարդարվեստի քննության ատաղձով նյութը ժամանակագրական երկու փուլերի է բաժանվում՝ X և XI դարեր, իսկ Անիում հայտնաբերվածները՝ XI դար:

Քարաշեն Անիում տերակոտաներ չեն հայտնաբերվել, իսկ Դվինում քարի սղության պատճառով քաղաքային շինություններում դրանք ունեցել են կոնստրուկտիվ նշանակություն: Պարսկաստանի և Կենտրոնական Ասիայի հուշարձանների հետ հայկական մայրաքաղաքների բնակարանաշինության կառուցելակերպում գեղարվեստական տեսք հաղորդելու համար նախատեսված էական այդ բաղադրիչների զարդաձևերի՝ աշխարհում նկատելի ընդհանրությամբ հանդերձ, լրացվում էին հայկական մշակույթի ակունքներից բխող զարդամոտիվներով: Ավելի ուշ «սեջուկյան արվեստ» տերմինի կիրառումը, երբ նոր դրսևորումներով ծաղկում ապրեց դեկորատիվ ու կիրառական այդ արվեստը, առիթ է տվել միջազգայնացնելու սեջուկների դերն այդ գործում: Իրականում դա նրանց տիրապետության տակ ապրած ժողովուրդների խառնածին մշակույթ էր: Այդ կարգի մտածողներին ակադեմիկոս Օրբելին պատասխանել է իմաստուն ու տրամաբանական այն շեշտադրումով, որ այդ մշակույթի ձևավորման ընթացքին մասնակցել են բոլոր ժողովուրդները, այդ թվում՝ հայերը՝ իրենց ավանդական ներուժի մեծ դերակատարությամբ²⁶:

Գրականություն

- Առաքելյան Բ. 1958, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. 1, Երևան, ԳԱ հրատ., 376 էջ:
- Առաքելյան Բ. 1964, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. 2, Երևան, ԳԱ հրատ., 321 էջ:
- Արաբական աղբյուրներ 2005, հ. Գ, Արաբական մատենագիրներ Թ-Ժ դարեր, Ներածությունը և բնագրից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, «ԵՊՀ հրատ.», 703 էջ:
- Զարյան Ա. 1986, Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Երևան, ԳԱ հրատ., 232 էջ:
- Թորամանյան Թ. 1942, Նյութեր հայ ճարտարապետության, հ. 2, Երևան, «Արմֆան», 307 էջ:
- Ժամկոչյան Ա. 1981, Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX-XIV դդ., «Հայաստանի հնագիտական հուշարձաններ», 10 պրակ, III, Երևան, ԳԱ հրատ., էջ 83-146:

²⁶ Орбели, 1963, 367.

- Ժամկոչյան Ա. և ուրիշներ 2015, Դվին քաղաքատեղին (2009, 2011-2012 թթ. պեղումների արդյունքները), աղ. II (Բ), «Հուշարձան» տարեգիրք, Երևան, «Հուշարձան», Ժ, էջ 10-13:
- Ժամկոչյան Ա., 2016, Դվինի միջնաբերդի Հարավային տեղամասի պեղումների պատմությունից, ՀՀ Գիտությունների ակադեմիա, «Բանբեր հայագիտության», Երևան, N 2 (11), էջ 175-191:
- Ղաֆադարյան Կ. 1952, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, ԳԱ հրատ., էջ 300:
- Ղաֆադարյան Կ. 1982, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 2, Երևան, ԳԱ հրատ., էջ 162:
- Մուշեղյան Խ. 1983, Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V, մ.թ. XIV, Երևան, ԳԱ հրատ., 234 էջ:
- Յովհաննու կաթողիկոսի (Դրասխանակերտցույ) 1912, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, հրատ. նշված չէ, էջ 235:
- Տեր-Ղևոնդյան Ա. 1965, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, ԳԱ հրատ., 311 էջ:
- Տեր-Ղևոնդյան Ա. 2003, Մունաջջիմ-Բաջիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շեղդադյանների մասին, «Հողվածների ժողովածու», Երևան, ԵՊՀ հրատ., 697 էջ:
- Лунина С. 1980, Изучение жилых домов Мерва X - начало XIII века, Труды ЮТакэ, т. XVII, Ашхабад, изд. «Блым», с. 59-85.
- Март Н. 2011, Ани-книжная история города и раскопки на месте городища, Ереван, «Гитутюн», 133 с., 276 табл.
- Орбели И. 1963, Каталог Анийского музея древности. Избр. труды, Ереван, «изд. АН Арм.ССР», 683 с.
- Орбели И. 1963, Краткий путеводитель по городищу Ани. Избр. труды, Ереван, «изд. АН Арм.ССР», 683 с.
- Орбели И. 1968, Памятники армянского зодчества на острове Ахтамар. Избр. труды, т. I, Москва, «Наука», 586 с., табл. VI, X, XI.
- Токарский Н. 1961, Архитектура Армении IV-XIV вв., Ереван, «Армгосиздат», 387 с.
- Minorsky V. 1953, Studies in Caucasian history, London, Cambridge, Oriental series, 6.

**ԱԿՆԱՐԿ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ
(ըստ Դվինի և Անիի պեղածո նյութերի)**

Աղավնի Ժամկոչյան

Հայաստանի միջնադարյան կառույցների ճարտարապետական հարարանքը քաղաքաշինության զարգացման մակարդակի ցուցիչն է: Դվինի և

Անիի ճարտարապետական շինությունները հիմնականում զարդարված են գիպսե քանդականախշերով և տերակոտաներով: Դվինի կենտրոնական թաղամասում առանձնանում է կաթողիկոսական ապարանքը՝ թվագրված է X դարով: Միջնաբերդից հայտնաբերվել են պալատական կառույցի բեկորներ, որոնք աչքի են ընկնում գիպսե հարդարանքներով:

Դվինի և Անիի ճարտարապետական կառույցների բեկորների հետազոտությունը ցույց է տալիս, որ գիպսե հարդարանքները և տերակոտաները քաղաքային մշակույթի վկայագրերն էին, որ ամիրայությունների կայացման ժամանակաշրջանում՝ X-XI դդ., ունեցել են տարածման լայն շրջանակ: Դվինը և Անին Մերձավոր Արևելքի երկրներից մեկուսացված չէին, կայուն տեղ ունեին առևտրաարհեստավորական կյանքում, իսկ հայերը այլ ժողովուրդների հետ մասնակից էին քաղաքային մշակույթի ձևավորման գործընթացներին:

Բանալի բառեր՝ Դվին, Անի, Աբուլ Ասվար, հարդարանք, տերակոտա, կոնստրուկցիա, մշակույթ:

ОЧЕРК ОБ АРХИТЕКТУРНО-СТРОИТЕЛЬНОМ УБРАНСТВЕ СООРУЖЕНИЙ СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ (по материалам раскопок Двина, Ани)

Агавни Жамкочян

Архитектурное убранство средневековых сооружений Армении является показателем уровня развития градостроительства. Архитектурные сооружения Двина и Ани в основном декорированы резным штукатуром и терракотой.

В центральном квартале Двина этими материалами отделана резиденция католикоса, датируемая X веком. На вершине цитадели были обнаружены обломки дворца, декорированного резным штукатуром. Резной штукатуром фигурирует и в убранстве дворца Баградитов в Ани, датируемого XI веком. Обе армянские столицы – Двин и Ани не были изолированы от стран Ближнего Востока и имели стабильные позиции в сфере развития торговли и ремесел, следовательно, в контексте понятия «сельджукское искусство» армяне, вместе с другими народами, внесли свою лепту в формирование данной культуры.

Ключевые слова – Двин, Ани, Абул Асвар, убранство, терракота, конструкция, культура.


**OVERVIEW OF ARCHITECTURAL AND CONSTRUCTIONAL
DECORATIONS OF MEDIEVAL ARMENIA (ACCORDING TO THE
EXCAVATED MATERIALS OF DVIN AND ANI)**

Aghavni Zhamkochyan


The architectural decorations discovered in the medieval capitals of Armenia-Dvin and Ani have been of great importance for the investigation of the urban development of the cities. The collection consists of stuccoes and terracottas. The stuccoes founded in the surroundings of the Catholicose's Palace dates back to the tenth century. The building was changed to a mosque in the tenth century. A large building was discovered at the top of the Citadel. The place was full of stuccoes dating back to the eleventh century A.D. Stuccoes of the same type have been discovered at the Bakradit's palace that dates back again to the eleventh century.

All these decorations refer to the building activities of the Shedadins who ruled Dvin and Ani over a period of the eleventh century.


Key words – Dvin, Ani, Abyl Asvar, decorations, terracota, construction, culture, stuccoes, frescoes.




Աղյուսակ 1




Աղյուսակ 2




Աղյուսակ 3




Աղյուսակ 4




Աղյուսակ 5



1



2



3

Աղյուսակ 6

ԱՇԽԱՐՀՐԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

Կարեն Բայրամյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀ, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2
Էլ. հասցե՝ bayramyan_karen@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 07.09.2019, գրախոսվել է 07.09.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

Հայաստանի հնագիտության և հայագիտական մտքի զարգացման ասպարեզում հետազոտական անխոնջ աշխատանքի և թողած գիտական հարուստ ժառանգության շնորհիվ երևելի մասնագետների շարքում ուրույն տեղ է զբաղեցնում հնագետ, վիմագրագետ պրոֆեսոր Աշխարհբեկ Քալանթարը: Ա. Քալանթարը ծնվել է 1884 թ. փետրվարի 11-ին Լոռու գավառի Արդվի գյուղում: 1905 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ապա 1907 թ.՝ Թիֆլիսի գիմնազիան: Նույն թվականին ընդունվել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի պատմալեզվաբանական բաժինը, որն էլ 1911 թ. ավարտել է գերազանցությամբ: Սանկտ Պետերբուրգում աշակերտել է վաստակաշատ հայագետ Նիկողայոս Մառին և ուսումնառության տարիներին ներգրավվել է Անիում պեղումներ կատարող արշավախմբի կազմում: 1912-1913 թթ. Կայսերական ակադեմիայի կողմից գործուղվել է Իմիրզեկ (Վանստան), ապա՝ Սուրմայուի և Լոռու գավառներ:

1912 թ. Ա. Քալանթարն ընտրվել է Սանկտ Պետերբուրգի հնագիտական ինստիտուտի իսկական անդամ, իսկ 1914 թվականին՝ Կայսերական հնագիտական ընկերության անդամ: Կայսերական ակադեմիայի որոշմամբ նշանակվել է Սանկտ Պետերբուրգի ասիական թանգարանի գիտնական թանգարանապահ: Նույն թվականին էլ Ն. Մառի առաջարկով ղեկավարել է Անիի պեղումների XIII արշավախումբը, Ա. Քալանթարը 1919-1932 թթ. Հուշարձանների պահպանության կոմիտեում պաշտոնավարելով որպես գիտնական քարտուղար՝ գաղափարակից գործընկերների հետ ստեղծեց նվիրյալների այն կոհորտան, որն իր անգնահատելի ավանդը ներդրեց պատմամշակութային հուշարձանների պահպանության գործում: 1938 թ. մարտի 19-ին հանիրավի ձերբակալվելով Երևանի համալսարանի մի շարք դասախոսների հետ՝ դատապարտվում է մահապատժի, որը փոխարինվում է ութ տարվա ազատազրկումով: Գիտնականի մահվան ստույգ վայրը և ժամանակը առ այսօր հայտնի չեն. ենթադրվում է, որ նա

վախճանվել է Ռուսաստանի Չեյնաբինսկ քաղաքի մոտակայքում 1942 թ.: ԽՍՀՄ Գերագույն դատարանը 1955 թ. ապրիլի 2-ի որոշումով հետմահու արդարացնում է պրոֆ. Ա. Քալանթարին, որի կարիքը նա երբևէ չի ունեցել¹:

Ն. Մառի և Ա. Քալանթարի գիտական համագործակցությունը վերածվել էր մեծ բարեկամության: Ա. Քալանթարը մինչև իր կյանքի վերջը մեծ հարգանք էր տածում Ն. Մառի նկատմամբ: Այդ մասին են վկայում Ա. Քալանթարի բազում նամակները, որտեղ նա մշտապես իր երախտագիտությունն է հայտնել սիրելի ուուուցչին: Դրանք ոչ միայն բնորոշում են փոխադարձ հարգանքի վրա խարսխված երկու անվանի գիտնականների մարդկային փոխհարաբերությունները, այլ նաև գիտական առումով հիշարժան տեղեկություններ են հաղորդում XX դ. առաջին կեսին նրանց կողմից հուշարձանների բացահայտման, ուսումնասիրության և պահպանության նվիրական գործի մասին: Այդ նամակներից կարելի է հստակ պատկերացում կազմել Հայաստանի տարածքում հնությունների և հուշարձանների պահպանության աշխատանքների կազմակերպման մասին:

Ն. Մառին հասցեագրված առաջին նամակները

Ն. Մառին հասցեագրված² Աշխարհբեկ Քալանթարի նամակների հիմնական մասը վերաբերում է 1910-1915 թթ.: Այդ տարիները նշանավորվել են որպես Անիում և Արևմտյան Հայաստանում կազմակերպված պեղումների ընթացքում գիտական նոր բացահայտումների բեղմնավոր շրջան: Այդ մասին են վկայում Սանկտ Պետերբուրգի արխիվում պահվող նրա մեծաքանակ նամակները, որոնք պահվում են «Մառի աշխատասենյակ» անունը կրող թղթապանակում:

Ն. Մառին ուղղված առաջին նամակում (6.VIII.1910) հայազգի գիտնականը գոհունակությամբ հայտնում է, որ ինքը տպավորված է իր ուուուցչի նամակից, որտեղ հայտնվում էր Անիում կատարված հնագիտական պեղումների, այնտեղ թանգարան հիմնելու մասին. «Այդ ամենն ինձ բավականին հետաքրքրում է, և ես խորապես ցավում եմ, որ ինձ, որ երեք անգամ բախտ է վիճակվել լինել Անիում, վերջին 2-3 տարում չի հաջողվում այցելել այնտեղ և տեսնել պեղումներից հետո վերածնված Անին», - գրում է Քալանթարը²:

Ապա շարունակում է. «Ձեզ հայտնի է, որ «Մշակում» ես մի քանի հողվածներ գրեցի ինստիտուտի վերաբերյալ... Այստեղ իմ ծանոթների շրջանում ինստիտուտի հիմնադրման ծրագրին լիովին համակրանքով են վերաբերվում, բայց ինչ հնարավոր է ներկա ժամանակում իրականացնել ռեալ կենսագործման իմաստով, ցավում եմ՝ չեմ կարող ասել: Ամառը և

¹ Քալանթար 2007, 23:

² СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 28.

ներկա հանգամանքները դեռևս չեն նպաստում դրական ուղիների նշմարմանը»³: Չնայած ստեղծված իրավիճակին՝ Քալանթարը շտապում է տեղեկացնել Մառին, որ էջմիածնում արդեն հնագիտական թանգարան հիմնելու միտք է հասունացել. «Դուք, հավանաբար, ուշադրություն դարձրեցիք այն հանգամանքին, որ էջմիածնում հնագիտական թանգարան հիմնադրելու հարց է բարձրացել: Հարցուփորձերից պարզեցի, որ էջմիածնում ցանկանում են թանգարան ունենալ Արաքսի ավազանի և Ելիզավետպոլի նահանգի հնագիտական առարկաների համար՝ Անիին հնարավորություն ընձեռելով սպասարկելու Շորեգյալի (Շիրակավան – Կ.Բ.) շրջանը, և ընդհանրապես Կարսի մարզն ու Ալեքսանդրապոլի գավառը: ...Մանրամասնորեն կհայտնեմ անձնական հանդիպման ժամանակ», - գրում է նա⁴:

Քյոնիգսբերգի համալսարանում ուսումնառության ժամանակ Ն. Մառին գրված նամակում Ա. Քալանթարը նախ նրան շնորհավորում է պեղումների հաջող արդյունքների համար և իր տպավորությունները հայտնում եվրոպական համալսարանի դասընթացների վերաբերյալ. «Առայժմ չեմ կարող գոհ լինել իմ արդյունքներից, սակայն կարելի է ասել, որ այս կարճ ժամանակի համար ինչ-որ բան արդեն արված է»⁵: Քալանթարը գրում է. «...տարբեր դասընթացներին մասնակցության և գիտական ղեկավարի համար վարձատրության թանկարժեքության պատճառով ստիպված մենակ եմ պարապում՝ առանց որևէ ղեկավարի ...այդուհանդերձ, արտասահմանյան այս այցելությունից անչափ գոհ եմ և միայն երազել կարող եմ այս դասընթացների կրկնության համար, քանի որ համարձակ և նախաձեռնող եվրոպացիներից շատ բան կարելի է սովորել...»⁶: Քալանթարը հայտնում էր նաև, որ դասընթացների ավարտից հետո ինքը մտադիր է անմիջապես այցելել Անի և ոչ միայնակ. իր հետ Անիում լինելու ցանկություն է հայտնել Քյոնիգսբերգում ռուսական փոխհյուպատոս Ջինովիյ Պոլյանսկին, որի մասին, ի դեպ, Քալանթարը բավական դրական է արտահայտվում. «Իմ այստեղ գտնվելու առաջին իսկ օրից ես արժանացել և արժանանում եմ մեր հյուպատոսի հատուկ ուշադրությանը, որի մոտ (հյուպատոսությունում) առաջին անգամ եղա միանգամայն պատահաբար (հարկավոր էր տեղեկանք վերցնել ...որը ոստիկանությունը պահանջում էր ժամանող ռուսներից): Ի զարմանս և հուրախություն ինձ, պարոն հյուպատոս Ջինովիյ Միխայիլովիչ Պոլյանսկին, նայելով իմ վկայականը (պետական քննության հանձնաժողովի) և տեսնելով Վալենտին Ալեքսենիչի ստո-

³ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 28 об.

⁴ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 29.

⁵ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 1.

⁶ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 1 об.

րագրությունը (Վալենտին Ալեքսեևիչ ժուկովսկի, արևելագետ-իրանագետ, Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր, Պետերբուրգի ԳԱ թղթակից-անդամ- Կ.Բ.), ուրախացավ և սկսեց ինձ անվանել կոլեգա և սիրալիր էր իմ հանդեպ: Պարզվում է՝ նա մեր ֆակուլտետի նախկին սանն է...»⁷:

Իր ծավալած գործունեության շնորհիվ Աշխարհբեկ Քալանթարին շուտով աշխատանքի են հրավիրում Ռուսաստանի Կայսերական ակադեմիայի գիտական գրադարանում, սակայն դրա համար հարկավոր էր որևէ նշանավոր գիտնականի երաշխավորություն: Ուստի 1911 թ. սեպտեմբերի 20-ին Թիֆլիսից Մառին գրած նամակում Քալանթարը խնդրում է իրեն երաշխավորել գրադարանի արևելագետի հաստիքի համար: Ինչպես այս նամակից է պարզ դառնում, Քալանթարը Թիֆլիսում ստիպված է եղել ժամանակին որոշ տեղեկություններ հավաքել պարապմունքների մասին, որոնք իրեն նյութական աջակցություն կարող էին բերել. «որպեսզի Ձեզ ավելորդ հոգս չպատճառեմ...», - գրում է Քալանթարը Մառին: - ...Այժմ ինձ Պետերբուրգից գրում են (ին քեռին՝ իշխան Կ.Մ. Արղուֆինսկի-Դուգոուկովը, Վարշավայի շրջանի նախկին հյուպատոսը), - «Մոտ ժամանակում սպասվում է Գիտությունների ակադեմիայի գրադարանի նոր հաստիք (արխիվային) ...Ակադեմիան այժմ կարող է Ձեզ ընդունել գրադարանի կազմում և մի քանի ամսից նշանակել գրադարանավարի օգնական: Ինձ ասացին, - շարունակում է Արղուֆինսկին, - որ եթե պրոֆեսոր Մառը խնդրի կամ երաշխավորի Ձեզ համար՝ ապա Դուք այդ տեղը կստանաք: Հաղորդելով այդ մասին, համարձակվում եմ Ձեզ անհանգստացնել խնդրանքով՝ երաշխավորել ինձ այդ տեղի համար...»⁸:

Նամակում Քալանթարը տեղեկացնում է նաև, որ հասցրել է մի քանի օրով լինել Լոռիում և գոհ է տեղի հնությունների մասին իր հավաքած նյութերից, «ինչի մասին կհաղորդեմ Ձեզ մոտ ժամանելուն պես»⁹:

Իհարկե, Ն. Մառը մեծ հաճույքով երաշխավորեց իր նախկին սանին այդ պաշտոնի համար: Անշուշտ, մեծանուն գիտնականի երաշխավորությունն իր դերը խաղաց այդ պարագայում, սակայն, միաժամանակ, ակնհայտ էր և այն, որ Ա. Քալանթարի գիտական համբավը գնալով լայն տարածում էր գտնում: Կարծում ենք՝ Կայսերական ակադեմիայի Ասիական թանգարանի պատմաբանասիրական բաժնի 1914 թ. դեկտեմբերի 3-ի նիստի արձանագրությունը ասվածի հաստատումն է: «Ինձ վստահված թանգարանի համար գտնում եմ միանգամայն օգտակար, որ նրա գիտական անձնակազմում ընդգրկվի նաև հայ-վրացական բանասիրության մասնագետ. քանի որ այդպիսի նյութերը առատ ներկայացված են մեր

⁷ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 2, л. 2 об.

⁸ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, 3 об.

⁹ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 4.

հավաքածուներում, ուստի ես հրավիրել եմ այդ բաժինը վարելու համար ընդունել Աշխարհ-Բեկ Անդրեյի Լորիս-Քալանթարին, որն ավարտել է տեղի համալսարանի (Պետերբուրգի համալսարան-Կ.Բ.) արևելագիտության ֆակուլտետը, և պատիվ ունենմ Բաժանմունքին խնդրելու՝ չմերժել նրա առաջադրումը Ասիական թանգարանի գերհաստիքային կրտսեր գիտնական թանգարանապահի (արխիվային փաստաթղթում՝ сверхштатного младшего ученого хранителя Азиатского музея) պաշտոնում ընտրվելու համար: Ընտրություններն անցկացվել են դեկտեմբերի 3-ին կայացած նիստում և Ա.Ա. Լորիս-Քալանթարը ընտրվել է միաձայն: Քարտուղար՝ ակադեմիկոս Մ. Դյական», -ասվում էր թանգարանի պատմաբանասիրական բաժնի քաղվածքում¹⁰:

Ա. Քալանթարի նամակները արշավախմբային գործունեության արդյունքների մասին

Ինչպես արդեն նշեցինք, Ա. Քալանթարը Իմիրզեկ (Վանստան) հնագիտական վայրի պեղումների կազմակերպիչներից մեկն էր: Մառին հասցեագրված նամակների մի մասն էլ այս մասին է. օրինակ, այս նամակը, որը թվագրված է 1912 թ. օգոստոսի 19-ով (ի դեպ, գրվել է Անիից Երևան տանող ճանապարհին, Սուրմալուի հայկական Գյուլուջա գյուղում իջևանելիս): Քալանթարը հաղորդում է Իմիրզեկում հնագիտական աշխատանքների ավարտի մասին. «հնարավորության սահմաններում մեզ հաջողվեց իրականացնել նախանշված ողջ ծրագիրը»¹¹:

Ա. Քալանթարն այնուհետև մանրամասն նկարագրում է այնտեղ կատարված աշխատանքների բնույթը, ինչը մեկ անգամ ևս վկայում է թե ինչպիսի բարեխղճությամբ ու պատասխանատվությամբ է նա վերաբերվել իրեն հանձնարարված գործին. «Մաքրված է ողջ եկեղեցու շրջակայքը, եկեղեցու շուրջը մաքրելու ընթացքում հայտնաբերվեցին հարդանոցներ և փարախ, իսկ որոշ արտաքին պատեր հարմարեցված են եկեղեցու պարսպապատնեշին стр. 7 օժ: Հավաքվել և եկեղեցու ներսում պահ են տրվել այն բոլոր քարերը, որոնք հնարավոր եղավ տեղաշարժել մեր համեստ ուժերով: Հաջողվեց հայտնաբերել մինչև 60 արձանագրություն՝ մեծ մասամբ՝ բեկորներ... Հուրախություն մեզ, հաջողվեց գտնել միմյանցից հեռու երկու քարակտորներ, որոնք միացնելով՝ կարդացինք հետևյալը՝ *ի ժամանակի աթապակ Իվանեի, կառուցող Դավիթ Առաջնորդ Արարարյան նահանկի*, մյուսներում կարդացինք հայտնի մարդկանց անուններ... Կատարվել են բավական թվով լուսանկարներ, սակայն շատ են ցավում, որ չհասցրեցի դրանք համարակալել... Գտածոները ուղարկել ենք Անի: Ի-

¹⁰ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 351, л. 1.

¹¹ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 7.

միրզեյի հնությունների պահպանությունը հանձնարարել եմ երեք մարդու՝ Ալի Կուլիբեկ Սուլթանովին, մոլլային և գեղջավագի օգնականին, որոնք պահպանությանը ձեռնամուխ եղան մեծագույն պատրաստակամությամբ և աննկարագրելի հպարտությամբ: Հաղորդում եմ նաև Անիի իմ օգնականների բացառիկ նվիրվածության ու աշխատասիրության մասին... Իմիրզեկում իմ գտնվելու ողջ ընթացքում որևէ անհաճո դեպք չի եղել: Ես հիմա եզրփնների մոտ եմ, Պետերբուրգ կժամանեմ միայն սեպտեմբերի կեսերին, եթե ավելի շուտ գալու անհրաժեշտություն չառաջանա»¹²: Ի դեպ, Ս. Պետերբուրգի արխիվի վավերագրերից մեկը, որտեղ ներկայացված է Ա. Քալանթարի կենսագրությունը, հաստատում է, որ «դեռևս ուսանողական տարիներին, նա՝ որպես պրակտիկանտ, մասնակցություն է ունեցել Անիի պեղումներին, իսկ 1912 թ. ամռանը Կայսերական ակադեմիայի կողմից գործուղվել է Երևանի նահանգ՝ Գառնիի մոտ գտնվող Իմիրզեկ գյուղի հնությունները և եկեղեցին ուսումնասիրելու համար: Միաժամանակ, Կայսերական ակադեմիայի Ասիական թանգարանի կողմից նրան հանձնարարվել է ազգագրական բնույթի տեղեկություններ հավաքել Երևանի և Կարսի նահանգներում բնակվող քուրդ-եզդիների, նրանց կենցաղի և կրոնի, ինչպես նաև նշված վայրերի հայկական հնության հուշարձանների մասին»¹³: Նկատենք, սակայն, որ Ասիական թանգարանի թանգարանապահի պաշտոնում Ա. Քալանթարի նշանակումը որոշ պահանջների պատճառով (խոսքը նրա զինվորական ծառայության վկայականի և համալսարանի ավարտական քննություններում ստացած գնահատականների թերթիկի ձգձգման մասին է): Այդուհանդերձ, Ա. Քալանթարի նշանակումը որոշ ժամանակով հետաձգվում է, ինչի մասին նա հայտնում է 1915 թ. մայիսի 12-ին Ն. Մադին հասցեագրած նամակում. «Չնայած այն հանգամանքին, որ Կարլ Գերմանովիչը (ակադեմիայի կադրերի գծով պատասխանատուն-Կ.Բ.) հուսադրեց, որ ինձ կիրավիրի 2-3 շաբաթվա ընթացքում, սակայն ամիսներով և անարդյունք սպասելով Թիֆլիսում և կորցնելով իմ պաշտոնին անցնելու հույսերը՝ Թիֆլիսում հայկական փետրվարյան համագումարից հետո ես մեկնեցի ռազմաճակատ, առաջին հայկական ջոկատ (գորավար Անդրանիկի հրամանատարությամբ-Կ.Բ.), որպեսզի գոնե կարճ ժամանակով դառնամ ռազմական գործողությունների ականատեսը և անձամբ հավաքեմ իրական պատերազմի մասին անհրաժեշտ նյութեր... Շնորհավորում եմ Վանի գրավման կապակցությամբ: Մեր ջոկատի մարտիկները ցավում են, որ առաջինը իրենք չեն մտել Վան: Անցյալ տարվա դեկտեմբեր ամսին առաջին հայկական ջոկատը հասավ նույնիսկ մինչև Արճեշ, սակայն ստիպված էր հետ վերադառնալ, դեկտեմբերի 24-ի ընդհանուր նահանջի

¹² СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, лл. 7-8.

¹³ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 351, л. 12.

պատճառով: Այդ ծանր պահին, - շարունակում է Քալանթարը, - չնայած Անդրանիկի գործադրած ջանքերին, ջոկատին չհաջողվեց օգնության հասնել... Այժմ արդեն այդ ամենը կարելի է կատարել առանց շտապողականության և լուծել մեր ջոկատի առջև դրված խնդիրը - ոչնչացնել Խալիլ բեյի ջոկատը, որը Դիլմանի ճակատամարտից հետո պատրաստվում էր դիմավորել մեզ»¹⁴:

Սակայն, չնայած պատերազմական այս բուռն իրավիճակին, Քալանթարը չէր դադարում ապրել իր գիտական հետաքրքրություններով. «...անցնելով Վանք (Դեհեր) գյուղի մոտով, որտեղ գտնվում է Սբ. Բարդուղիմեոս վանքը, - կարդում ենք Մառին գրած նրա հերթական նամակում,- հայտնում եմ, որ այն մեր հնագույն կառույցներից մեկն է VII-VIII դդ. և IX-X դդ. (գավիթ): Եկեղեցու հատակագիծը խաչաձև է, արձանագրությունները բացարձակապես հին են, կան հետաքրքիր հարթաքանդակներ, մանրամասն կգրեմ»¹⁵: Գտնվելով զինվորական ծառայության մեջ՝ այդուհանդերձ, Ա. Քալանթարը, կրկին դիմում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի վարչության գրասենյակին՝ հիշեցնելով իր՝ Ասիական թանգարանում աշխատանքի անցնելու մասին. «Փետրվար ամսից սկսած՝ ես 1-ին հայկական կամավորական ջոկատի կազմում գտնվում եմ ռազմական գործողությունների թատերաբեմում, ուստի հնարավորություն չեմ ունեցել ժամանակին ուղարկել իմ փաստաթղթերը: Այժմ կարող եմ Թիֆլիսից ուղարկել անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ ավարտական քննաթերթիկը, իր գնահատականներով հանդերձ, և զինվորական ծառայության մասին տեղեկանքը»¹⁶:

Աշխարհբեկ Քալանթարի հնագիտական գործունեության կարևոր դրվագներից էին Շիրակավանի պեղումները: Անիից 1914 թ. հուլիսի 5-ին Մառին ուղղած նամակում Քալանթարը հայտնում է, որ ծրագրում է երկուսից-երեք շաբաթով լինել Շիրակավանում՝ տեղի եկեղեցում հնագիտական անհրաժեշտ աշխատանքներ իրականացնելու համար. «Պալատական եկեղեցու չափագրումների այբումը պատրաստ է, սկսել ենք մաքրագիրն անել, կչափագրվի եկեղեցու գլխավոր պլանը՝ կցակառույցների հետ միասին... նախատեսվում է կտրվածքների և ճակատային մասի բոլոր դետալները կատարել մեծ մասշտաբով: Բացում ենք պալատական եկեղեցու մատուռի հյուսիսային պատը...»¹⁷: Ուշագրավ է, որ նամակում Քալանթարը «բողոքում է», թե «այցելուները, որոնց թիվը անցնում էր 600-ից, իրենից շատ ժամանակ են խլում, «...թեպետ անձամբ ես դա ժամանակի կո-

¹⁴ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, лл. 14-15.

¹⁵ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 15.

¹⁶ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 351, л. 3.

¹⁷ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 10 об.

րուստ չեմ համարում. նրանց մեծամասնությունը ուսուցիչներ են և ընդհանրապես մտավորականության ներկայացուցիչներ: Վերջերս այստեղ էին Թերլեմեզյանը (նկարիչ), Չեռքերյանը (ուսուցիչ-հրապարակախոս), Կյուպենկյանը (գրող), իսկ երեկ էլ բժիշկ Տաղավարյանը (իր հետ Համբարձում Առաքելյանը), որն ինձ խնդրեց իր ողջույնները հաղորդել Ձեզ: Շատերն են այստեղ ափսոսում, որ անձամբ չեն կարող տեսակցել Ձեզ»¹⁸: Իր մտահոգությունը հայտնելով նաև կառավարության որոշման կապակցությամբ՝ Քալանթարը ակնկալում է Մառի աջակցությունը: Վերջերս իրեն հայտնի է դարձել, որ կառավարությունը զինվորական կարիքների համար մտադիր է օտարել հսկայական տարածքներ Ջալալօղլիի այժմ Ստեփանավան-Կ.Բ) և Բանլիջի (Մարմաշենը-Կ.Բ.) մերձակայքում, որտեղ գտնվում են նաև Լոռի քաղաքի ավերակները և Մարմաշենը: «Ուստի, Նիկոլայ Յակովլևիչ, - գրում է Քալանթարը, - շտապում եմ հաղորդել Ձեզ այդ մասին: Իմ կարծիքով, այդ ամենը պետք է կանխել ժամանակին, որի համար, կարծում եմ՝ Դուք հնարավոր կգտնեք օգտագործել Ձեր կարճատև այցելությունը Թիֆլիս»¹⁹:

1914 թ. օգոստոսի 7-ին գրված նամակը Շիրակավանից էր. հավելենք, որ սկսվել էր Առաջին համաշխարհային պատերազմը: «Շուտով կավարտենք աշխատանքները, որոնք ստիպված ենք սկսել ամենաանբարենպաստ պայմաններում և մեծագույն դժվարությունների գնով: Ճիշտ է, Անին դեռևս ընդգրկված չէ ռազմական գործողությունների թատերաբեմում, սակայն պատերազմին է մեզ հասած դժվարությունների մեծ մասի մեղքը, - գրում է Քալանթարը Մառին: - Աշխատանքները, սակայն, չեն դադարեցվել: Մենք դեռևս մեր տեղում ենք, միայն Դանիչն այսօր մեկնեց, իսկ Արշակը (արշավախմբի անդամներն են-Կ.Բ) երեք օր առաջ էր հեռացել:

Մեր այստեղ գտնվելու ողջ ժամանակաընթացքում մենք վայելել ենք շիրակավանցիների հոգատարությունն ու բարեկամական զգացումները մեր հանդեպ: Ամսի 11-ին մենք պատրաստվում ենք այցելել Անի՝ Ձեզ շուտափույթ տեսնելու սպասումով: Ինձ թվում է, որ ավելի հարմար կլինի սկզբում տեղազննել Շիրակավանը և հետո արդեն ժամանել Անի, ուստի թախանձագին խնդրում եմ Ձեզ՝ նամակով կամ հեռագրով ինձ հաղորդել Ձեր՝ Ալեքսանդրապոլ ժամանելու օրվա մասին»²⁰:

Եվ թեպետ պատերազմն ավելի էր մոլեգնում, և ինքն էլ այդ պատերազմի մասնակիցն էր, Աշխարհբեկ Քալանթարը շարունակում է հնագիտական աշխատանքներ իրականացնել Անիում: Ընդ որում, նա նամակներով մշտապես մանրամասն տեղեկացնում էր Մառին՝ կատարվող աշխա-

¹⁸ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 11.

¹⁹ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 11 об.

²⁰ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, лл. 12-13.

տանքների մասին: Այսպես, ի պատասխան Մառի 1915 թ. հունիսի 12-ի նամակի, որը Քալանթարը ստացավ Բիթլիսում, նա մեկ շաբաթ անց՝ հունիսի 19-ին, գրում է. «Նախ և առաջ բոլորիս շնորհավորում եմ հաջող սկզբի համար... Ինչ վերաբերում է մեզ՝ խնդրում եմ լիովին հանգիստ լինել... պարապմունքները (տվյալ դեպքում՝ աշխատանքները -Բ.Կ.) գերազանց կերպով առաջ են գնում... Վերջերս մեզ հյուրընկալել էին Ալեքսանդրապոլի քաղաքապետ Կամսարականը իր ընտանիքի հետ միասին, ուսուցիչների մեծ խմբով. նրանք առանձնակի հետաքրքրությամբ դիտեցին ամեն ինչ... հատկապես ոգևորված էր պատվելի ծերուկ Կամսարականը և այժմ պատրաստվում է երկրորդ մեծ խումբը՝ 40-50 մարդ բերել Անի... Այստեղ էր նաև պրոֆեսոր Կոլցովի արշավախումբը... նրանք հեռացան բավարարված, ամեն ինչ դիտեցին մանրամասն, կինեմատոգրաֆիկ սարքով նկարահանեցին Անիի ընդհանուր տեսքը...»²¹:

Թիֆլիսից գրած նամակներից մեկում էլ (1-ը սեպտեմբերի 1915 թ.) Ա. Քալանթարը տեղեկացնում է, որ Բարձրագույն անվամբ գիտությունների կայսերական ակադեմիայի գրասենյակի վարչություն խնդրագիր է ուղարկել, որտեղ, որպես իր բնակության վայր Պետրոգրադում, իրեն թույլ է տվել նշել Մառի հասցեն: Նամակի վերջում տեղեկացնում է. «Ես գտնվում եմ Թիֆլիսում և կժամանեմ առաջին իսկ պահանջի դեպքում... եթե ինձ թույլատրվի, ես կշարունակեմ կամավորական լինել գործող բանակում՝ այլապես կժամանեմ Պետրոգրադ»²²:

Ի վերջո, 1915 թ. նոյեմբերի 6-ին Աշխարհբեկ Քալանթարին հանձնվում է Կայսերական ակադեմիայի վկայականը. «Սույնը տրվում է Կայսերական գիտությունների ակադեմիայի կողմից, անհրաժեշտ ստորագրությամբ և պետական կնիքով հանդերձ, Գիտությունների ակադեմիայի Ասիական թանգարանի կրտսեր գիտական թանգարանապահի հաստիքում Աշխարհբեկ Աղալոյի (Անդրեյի) Լորիս-Մելիք-Քալանթարովին՝ հավաստելով նրա անձը: Կայսերական գիտությունների ակադեմիայի գրասենյակի կառավարիչ, բարոն Ա. Շտակելբերգ...»²³:

Մեկ տարի անց Ա. Քալանթարը ստորագրել է մի փաստաթուղթ՝ հետևյալ բովանդակությամբ «Հազար ինը հարյուր տասնվեց թվականի նոյեմբերի 9-ին ես՝ ներքոստորագրյալս, հավաստում եմ այն մասին, որ մասոնական ոչ մի օթյակի և գաղտնի ոչ մի կազմակերպության չեմ պատկանում, ոչ Կայսրության ներսում և ոչ էլ նրանից դուրս, չեմ պատկանել և պարտավորվում եմ հետագայում ևս չպատկանել»²⁴: Ի դեպ, փաս-

²¹ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, лл. 18-19.

²² СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, лл. 16-17.

²³ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 351, л. 17.

²⁴ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 351, л. 8.

տաթղթում նա ներկայացել էր այսպես՝ Հայ բանասիրության մագիստրոս, Կայսերական գիտությունների ակադեմիայի Ասիական թանգարանի կրտսեր գիտական թանգարանապահ, տոհմիկ ազնվական Աշխարհբեկ Անդրեյի Լորիս-Քալանթար²⁵: Փաստաթղթին հաջորդում է նաև Ա. Քալանթարի երդման (1916 թ. նոյեմբերի 9-ին) տեքստը. թեպետ դա բոլոր աշխատակիցների համար պարտադիր արարողակարգ էր: Ուշագրավն այստեղ այն է, որ փաստաթղթում նշվում էր, որ Ա. Քալանթարի երդման արարողությունը կատարել է Պետրոգրադի հայկական Սբ. Եկատերինա եկեղեցու վանահայր Գրիգոր Տեր-Գրիգորյանցը²⁶:

Նամակներից մեկում (1917 թ. օգոստոսի 30-ին) Ա. Քալանթարը գրհունակությամբ հայտնում է. «Շտապում եմ թեկուզ հեռագրային հակիրճությամբ տեղեկացնել. որ մեր արշավախումբը բարեհաջող ավարտել է աշխատանքները, երեկ՝ օգոստոսի 29-ին ժամանել է Թիֆլիս: Ծրագիրն ըստ հնարավորության ամբողջությամբ կատարված է: Շրջանցել և մանրամասն դիտարկել ենք Վանի շրջանները (քաղաքն ու շրջակայքը), Հայոց ձորը, Արճեշը, Թիմարը, Բերկրին և Բայազետ քաղաքը: Հավաքվել է մեծաքանակ նյութ, բերում ենք ավելի քան 250 լուսանկարչական նեգատիվներ»²⁷: Խորհրդածության առիթ տվեց նամակի վերջին նախադասությունը. «Առայժմ Պետրոգրադ գնալ չի թույլատրվում (դրա պատճառը, հավանաբար, Ռուսաստանում կատարված հեղափոխության հետևանքով իշխանությունների ընդունած որոշումներն էին - Կ.Բ.), կմեկնեմ առաջին իսկ հնարավորության դեպքում»²⁸:

1917 թ. սեպտեմբերի 18-ին Թիֆլիսից Մառին գրած նամակից պարզ է դառնում, որ Ա. Քալանթարը վիրահատվել է. «Ապաքինվում եմ վիրահատությունից հետո և կգամ 10 օրից: Մտածում եմ բերել միայն արշավախմբի տպած լուսանկարները՝ նեգատիվները թողնելով Թիֆլիսում»²⁹: Այս նամակները Ա. Քալանթարը մեծանուն գիտնականին գրել է նախախորհրդային տարիներին: Հետագա նամակագրությունը արդեն վերաբերում է խորհրդային ժամանակաշրջանին:

Համագործակցությունը Ն. Մառի հետ խորհրդային իշխանության տարիներին

Անշուշտ, այս շրջանում ևս բավական բեղուն է եղել գիտնականների համագործակցությունը: Այս տեսակետից հատկանշական է Մառի կարծիքը

²⁵ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 351, л. 8.

²⁶ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 351, л. 9.

²⁷ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, лл. 21-22.

²⁸ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 22.

²⁹ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 24.

Ա. Քալանթարի գիտահետազոտական և գիտամանկավարժական արդյունավետ գործունեության մասին՝ գրված 1925 թ. մայիսի 26-ին: Այն ծավալուն և ուշագրավ փաստաթուղթ է, ուստի նպատակահարմար ենք գտնում ներկայացնել որոշ քաղվածքներ: Ահա, օրինակ, մի քանիսը. «Աշխարհբեկ Քալանթարը, հաջողությամբ ավարտելով արևելյան լեզուների դասընթացը հայ-վրացական-պարսկական գծով, 1912-1916 թթ. ընթացքում շարունակեց սովորել ինձ մոտ՝ որպես համալսարանի կողմից ընդունված սան, որտեղ և 1916 թ. քննություն հանձնեց հայագիտությունից, վրացագիտությունից՝ գիտական արվեստի գծով մագիստրոսի համար: Այստեղ էլ նա ավարտեց նաև հնագիտական ինստիտուտի դասընթացները 1912 թ.՝ հայ-վրացական բանասիրության գծով»³⁰:

«Համալսարանի պատերից ներս նա ստացել է կրկնակի տեսական պատրաստություն, իսկ պրակտիկ՝ ինձ հետ դաշտային աշխատանքներում, Անի քաղաքի հնագիտական պեղումների ընթացքում, որտեղ ունեցել է զգալի հաջողություններ, գիտական մոտեցում դրսևորելով պեղումների վերաբերյալ, ցուցաբերելով արձանագրությունների ընթերցման անբասիր գիտելիքներ, և որպես դրանց ընթերցման հուսալի մասնագետ՝ Կովկասում նա միակն է, որի վրա կարելի է հենվել, հատկապես, երբ հարցը վերաբերում է հայկական վիմագրական հուշարձանների ուսումնասիրությանը: Հայոց լեզվի իմացության մեջ նա բավական ուժեղ է տեսականորեն, իսկ ընդհանրապես գրեթե բացառություն է կովկասյան գիտական միջավայրի համար, բացի դրանից, նորը յուրացնելու և զարգացնելու առումով նա արտասովոր ընդունակություններ ունի,- գրում է Մառը,- ...տիրապետում է ժողովրդական կենդանի խոսքի անմիջական իմացությանը՝ բարբառների առանձնահատկությունների ընկալման լավ կռահումով»³¹:

«1918 թ. գտնվելով Թիֆլիսում, չնայած ճանապարհների փակ լինելուն՝ նա շարունակեց իր գիտական աշխատանքը Վրաստանում, հետո նաև Հայաստանում, - Ա. Քալանթարի գործունեության այդ շրջանի մասին հիշում է Ն. Մառը,- ...այժմ նա Հնությունների և հուշարձանների պետական պահպանության Կոմիտեի աշխատակից է, Կոմիտեի հանձնարարությամբ եղել է մի շարք հնագիտական արշավախմբերի ղեկավար... Կարևոր է նաև այն փաստը, որ ներկայումս նա Հայաստանում վերջին տարիներին հայտնաբերված մշակութային հուշարձանների ուսումնասիրության հսկայական փորձ ունի, որոնց բացահայտումը կամ առաջին ծանոթացումը իր վաստակն է: Բավական է ասել, որ միայն նորահայտ հու-

³⁰ СПФ АРАН, ф. 800, оп. 1, д. 1622, л. 1.

³¹ СПФ АРАН, ф. 800, оп. 1, д. 1622, л. 1 об.

շարձանների թվում երեք հազար արձանագրություններ են /հայկական/, - գրում է Մառը³²:

Անշուշտ, Հայաստանի հուշարձանների և հնությունների պահպանության կոմիտեում աշխատանքը Աշխարհբեկ Քալանթարից մեծ ժամանակ էր խլում գիտական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունից, այդուհանդերձ, նա շարունակում էր խորհրդակցել մեծանուն հայագետի հետ, հաշվի առնել նրա առաջարկությունները՝ չմոռանալով ամեն անգամ շնորհակալ լինել իր ուսուցչին: 1925 թ. օգոստոսի 5-ին արդեն Երևանից ուղարկած հեռագրում Ա. Քալանթարը շնորհակալություն է հայտնում Ռուսաստանի գիտությունների ակադեմիային՝ համագործակցության և աջակցության համար. «...հենց նոր եմ վերադարձել Արագածից... ջրի պաշտամունքի արժեքավոր նյութեր: Նյութերը նախապատրաստվում են, կուլարկեմ: Աշխարհբեկ»³³:

Բասարգեչարից (ներկայիս Վարդենիս) ուղարկած հեռագրերից մեկում Քալանթարը նշում է. «9 հունվարի 1926 թ. Արշավախմբի կողմից Բասարգեչարի շրջանում մեծ ժայռի վրա գտնվել են հնագույն անհայտ հիերոգլիֆներ: Աշխարհբեկ»³⁴: Մեկ ուրիշում տեղեկացնում է, որ 1926 թ. հունվարի 9-ին, «անցնելով Սևանա լճի հյուսիս-արևելյան ափով, Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի հնագիտական արշավախմբը հայտնաբերեց բոլոր տիպի մեգալիթների մեծ և բազմաթիվ խմբեր, հինգ վիշապներ Արդանիշի շրջանում, ջրով ծածկված հարյուրավոր հայկական արձանագրություններ (сотни армянских надписей погребения): Սրտագին ողջույն - Աշխարհբեկ»³⁵:

Մառին հասցեագրած **վերջին** նամակում (25 հունիսի 1931 թ.) Քալանթարը իր շնորհակալությունն է հայտնում նրան՝ Հայաստանին և Անդրկովկասին նվիրված ժողովածուն կազմողների մեջ իրեն ընդգրկելու համար: Քալանթարը հայտնում է, որ ինքն արդեն նախանշել է այն հոդվածները, որոնք պետք է տեղ գտնեն ժողովածուում, և ավելացնում է. «...իհարկե, եթե Դուք հավանություն տաք... Աշնանից ես ցանկանում եմ լինելու Ձեզ մոտ գիտական աշխատանքի համար,-գրում է այնուհետև Քալանթարը: - Ես արդեն ունեմ Մանկավարժական ինստիտուտի համաձայնությունը՝ ինձ 1931-1932 ակադեմիական տարում դասախոսություններ կարդալուց ազատելու համար: Լուսժողկոմատից ինձ խոստացել են ամեն տեսակի աջակցություն ...որպեսզի մինչ ժամանելս ձեռնարկեմ անհրա-

³² СПФ АРАН, ф. 800, оп. 1, д. 1622, л. 2.

³³ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 25.

³⁴ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 30.

³⁵ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 31.

ժեշտ միջոցներ և գամ ավելի պատրաստված՝ ինձ հետ վերցնելով բոլոր կարևոր նյութերը»³⁶:

Աշխարհբեկ Քալանթարը գիտության կազմակերպիչ էր բառի ամենալայն իմաստով. Դա է երևում է նաև այս հերթական նամակում, որտեղ նա գրում է. «Ես խիստ անհանգստացած եմ իմ երեք աշակերտների՝ Ձեր ղեկավարությամբ գիտական պատրաստվածության համաձայն զբաղեցրած պաշտոնների հարցով... Լիդիա Կրիևս, Կարո Ղաֆադարյան և Սուրեն Երեմյան... միանգամայն իրենց լավագույն կերպով են դրսևորել Կոմիտեում ինձ հետ կատարած աշխատանքներում ...Կարծում եմ՝ նրանց համար դժվար չի լինի բավարարել Ակադեմիայի ասպիրանտուրա ընդունվելու պահանջները, եթե, իհարկե, Դուք դա հնարավոր համարեք... Ինչ վերաբերում է Վաղարշապատի պեղումներին, ապա պետք է նշեմ, որ Ձեր ղեկավարությամբ արշավախումբը ամուր հիմքեր ունի ակնկալելու նյութական անհրաժեշտ աջակցություն այս ամռանը և աշնանը»³⁷:

Հավելենք նաև, որ Աշխարհբեկ Քալանթարը Մառին հասցեագրած բոլոր նամակներն ավարտել է մեծ հայագետի հանդեպ ունեցած երախտագիտական բառերով՝ Ձեզ նվիրված, Ձեր Աշխարհբեկ:

Եզրակացություններ

Հայագգի նշանավոր գիտնականի՝ Աշխարհբեկ Քալանթարի նամակները՝ հասցեագրված մեծանուն հայագետ Ն. Մառին, իրենց ուշագրավ բովանդակությամբ լիարժեք պատկերացում են տալիս ինչպես նրանց բազմաբեղուն համագործակցության մասին, այնպես էլ բնութագրում են հնությունների ու հուշարձանների պահպանության ուղղությամբ Հայաստանում իրականացված աշխատանքները:

Գրականություն

Քալանթար Ա. 2007, Հայաստան՝ Քարե դարից միջնադար, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 410 էջ:

Санкт-Петербургский филиал Архива Российской Академии наук (Ф. 800-Фонд Н.Я. Марра).

Ф. 800, оп. 3, д. 430, л. 28

Ф. 800, оп. 3, д. 430, л. 28 об.

Ф. 800, оп. 3, д. 430, л. 29

Ф. 800, оп. 3, д. 430, л. 1

Ф. 800, оп. 3, д. 430, л. 1 об.

³⁶ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, л. 26 об.

³⁷ СПФ АРАН, ф. 800, оп. 3, д. 430, лл. 26 об. 27.

- Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 2, լ. 2 օձ.
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, 3 օձ.
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 4
 Փ. 800, օպ. 3, ժ. 351, լ. 1
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 7
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 7 օձ.
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լլ. 7-8
 Փ. 800, օպ. 3, ժ. 351, լ. 12
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լլ. 14-15
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 15
 Փ. 800, օպ. 3, ժ. 351, լ. 3
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 10 օձ.
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 11
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 11 օձ.
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լլ. 12-13
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լլ. 18-19
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լլ. 16-17
 Փ. 800, օպ. 3, ժ. 351, լ. 17
 Փ. 800, օպ. 3, ժ. 351, լ. 8
 Փ. 800, օպ. 3, ժ. 351, լ. 8
 Փ. 800, օպ. 3, ժ. 351, լ. 9
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 22
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 24
 Փ. 800, օպ. 1, ժ. 1622, լ. 1
 Փ. 800, օպ. 1, ժ. 1622, լ. 1 օձ.
 Փ. 800, օպ. 1, ժ. 1622, լ. 2
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 25
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 30
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 31
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լ. 26 օձ.
 Փ. 800, օպ. 3, ժ. 430, լլ. 26 օձ. - 27

ԱՇԽԱՐՀՔԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

Կարեն Բայրամյան

Սանկտ Պետերբուրգում ուսանելու տարիներին Աշխարհբեկ Քալանթարը սերտորեն համագործակցել է իր ուսուցիչ և գիտական խորհրդատու, մեծանուն հայագետ Նիկողայոս Մառի հետ: Վերջինիս երաշխավորությամբ էլ

ապագա հնագետն ու վիճագրագետն ընդգրկվեց Անիի պեղումների գիտական արշավախմբում:

Երկու նշանավոր գիտնականների համագործակցությունը բավական արդյունավետ էր ոչ միայն հայագիտության զարգացման տեսանկյունից, այլև Ա. Քալանթարի՝ որպես գիտնական կայանալու առումով: Հայագի անվանի գիտնականը նամակներում մշտապես իր երախտագիտությունն է հայտնել Ն. Մառին: Մառին հասցեագրված նամակները ոչ միայն այդ ամենի վկայությունն են, այլև գիտական արժեքավոր տեղեկություններ են պարունակում: Դրանք հստակ պատկերացում են տալիս տվյալ ժամանակահատվածում Հայաստանում իրականացված հնագիտական աշխատանքների մասին: Նամակների մեծ մասը գրվել է 1910-1915 թթ.: Այդ տարիներին էր, որ Անիում և ընդհանրապես Արևմտյան Հայաստանում կատարվեցին հնագիտական կարևոր հայտնագործություններ:

Բանալի բառեր՝ Ա. Քալանթար, Սանկտ Պետերբուրգի արխիվ, նամակներ, Ն. Մառ, պեղումներ, արշավախումբ, հեռագրեր:

НЕОПУБЛИКОВАННЫЕ ПИСЬМА АШХАРБЕКА КАЛАНТАРА НИКОЛАЮ МАРРУ

Карен Байрамян

Во время учебы в Санкт-Петербурге Ашхарбек Калантар тесно сотрудничал со своим учителем и наставником, известным арменоведом Николаем Марром. Именно по его рекомендации Ашхарбек Калантар был включен в состав экспедиции в Ани. Сотрудничество между этими двумя выдающимися учеными было весьма эффективным не только с точки зрения развития отечественной науки, но и с точки зрения становления Ашхарбека Калантара как ученого. Великий армянский ученый в своих письмах всегда выражал благодарность Николаю Марру. Эти письма не только описывают отношения между двумя крупными учеными, но и в научном плане содержат весьма ценную информацию. Из писем можно составить четкое представление об археологических работах на территории Армении. Большинство писем Калантара относится к 1910 – 1915 годам. Эти годы были ознаменованы важными открытиями в Ани и в Западной Армении.

Ключевые слова– А. Калантар, Санкт-Петербургский архив, письма, Н. Марр, раскопки, экспедиции, телеграмма.

UNPUBLISHED LETTERS OF ASHKHARBEEK KALANTAR TO NIKOLAY MARR

Karen Bayramyan

During studies in Saint Petersburg Askharbek Kalantar worked closely with his teacher and mentor, the famous armenologist Nikolay Marr. It was his recommendation that A. Kalantar was included in the expedition of Ani excavations. Cooperation between these two outstanding scientists was very effective not only in sense of development of Armenian science, but also for standing of A. Kalantar himself. In his letters the great Armenian scientist always expressed gratitude to the teacher. These letters describe not only the relationship between two persons but provide also with valuable information of scientific nature. From these letters it is possible to make a clear idea about the archaeological works on the territory of Armenia. Most of the letters of Kalantar deal with the period from 1910 to 1915. These years were marked by important discoveries at Ani and in a Western Armenia

Key words – A. Kalantar, St. Petersburg Archive, letters, N. Marr, excavations, expeditions, telegrams.

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Գագիկ Սուքիասյան

Մանկավարժական գիտությունների դոկտոր
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Կոլտուրայի ֆակուլտետ
Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոն
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 13/ա
Էլ. փոստ՝ gagiksukiasian@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 18.03.2019, գրախոսվել է 31.01.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

XXI դարը սովորաբար անվանում են «տեղեկատվական հասարակարգի դարաշրջան»¹, որի զարգացման հիմքում, որպես գերխնդիր, պետք է լինեն օբյեկտիվ տեղեկատվության, գրադարանային-տեղեկատվական աղբյուրների ճկուն համակարգ և տեղեկատվության (գրականության) ազատ շրջանառություն՝ խթանելով սոցիալ-հաղորդակցական, գիտակրթական և հասարակության տեղեկացման գործընթացների զարգացումը: Այդ առումով, անշուշտ, անառարկելի են նաև տեխնոլոգիական և մեդիա տեղեկատվական միջոցների նշանակությունն ու որոշիչ դերը:

Սակայն նշված հասարակարգի ձևավորման ու զարգացման մեջ (թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս) տեղեկատվական կապերի ժամանակակից համակարգը չի կարող լինել հուսալի և արդյունավետ, եթե օգտվողները (ընթերցողները) չեն պատկերացնում դրա սահմաններն ու հնարավորությունները, չեն տիրապետում գրադարանային-տեղեկատվական մշակույթի բովանդակային էությանը²: «Տեղեկատվական մշակույթը» մարդկային գործունեության արդյունք է (բանավոր, գրավոր, էլեկտրոնային)՝ պայմանավորված դարերով ստեղծված մշակութային ժառանգության գոյությամբ: Եվ յուրաքանչյուր երկրի «տեղեկատվական մշակույթը» հենված է նախ և առաջ սեփական հոգևոր և նյութական մշա-

¹ Кастельс 2001; Уэбстер 2004.

² Գրադարանային-տեղեկատվական կրթության համակարգում նոր տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի կիրառման արդի միտումները 2014, Շահբազյան 2014, 321-329, Սուքիասյան 2013, 128-135, Гендина 2006.

կույթի արժեքների վրա՝ պահպանվելով գրադարաններում, մատենադարաններում և փաստաթղթատեղեկատվական այլ կենտրոններում: Իրենց բովանդակային ու կառուցվածքային առանձնահատկություններով, այդ հաստատությունների գլխավոր գործառույթներն են տարբեր ուղիներով ու մեթոդներով տեղեկատվական նյութերի ձեռքբերումը, մշակումը, ուսումնասիրությունը և սպասարկումը: Այսինքն, տեղեկատվությունն ու հաղորդակցությունը հասարակական անհրաժեշտություն են՝ կախված օբյեկտիվ դրսևորումներից և ընթերցողական պահանջներից:

Էլեկտրոնային-տեխնոլոգիական և մեդիա լրատվական միջոցների ազդեցությունները տեղեկատվական դաշտի և հասարակական կյանքի զարգացման վրա

Կարևորելով էլեկտրոնային-տեխնոլոգիական և մեդիա լրատվական միջոցների կիրառական նշանակությունը գրադարանային-մատենագիտական գործունեության մեջ և սոցիալ-հաղորդակցական համակարգերում³, քննենք արդի տեղեկատվական դաշտում և հասարակական կյանքի զարգացման վրա նաև այդ միջոցների թողած դրական և բացասական ազդեցությունները՝ ցույց տալով մշակութային ժառանգության նկատմամբ պատերազմների կործանարար հետևանքները, այն է՝ մշակութային եղենն իրականացնելու ճանապարհով ազգերի պատմական հիշողությունը ջնջելու, տեղեկատվական-հաղորդակցական կապերի զարգացման մեջ բազմաթիվ հանցագործ միտումները⁴ և դրանց դեմ պայքարի ձևերին:

Այսպես՝ ըստ հայկական հեռուստատեսային լուրերի, 2013-2014 թթ. գրանցվել է տեխնոլոգիական (համակարգչային) հանցագործությունների ավելի քան 102 դեպք («< 1», 18.IX.2014), համաձայն որոնց, հակերների կողմից ապօրինի ճանապարհով կողոպտվել ու հափշտակվել են փաստաթղթային-տեղեկատվական բազմազան աղբյուրներ՝ «կեղծ ծրագրեր կազմելու» և շրջանառության մեջ դնելու նպատակով: Նրանց գործունեությունից դուրս չի մնացել նաև պոռնոգրաֆիական բնույթի 800 նյութի մասսայականացումը: Հասարակական կյանքի համար խիստ վտանգավոր այդպիսի գործունեությունը, ըստ «Հայլուրի», անհանգստացրել է նաև քրեական ոստիկանությանը: Համաձայն «< 1»-ի (10.1 և 15.1.2014) լրատվության տարբեր երկրների վերաբերյալ քաղաքական և անձնական բնույթի մոտ 1 մլն. գաղտնագերծված փաստաթղթեր վիրտուալ ճանապարհով շրջանառության մեջ է դրել ամերիկացի Էդվարդ Սնոուդենը՝ հեղինակային իրավունքի խախտմամբ խթանելով տեղեկատվական և տեխ-

³ Գրադարանային-տեղեկատվական կրթության համակարգում նոր տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի կիրառման արդի միտումները 2014, Սուփիայան 2018:

⁴ Волковский 2003; Крылов 1997; Расторговев 2007.

նյութիական հանցագործության զարգացումը: Սնուդենի քայլը առիթ է տվել «անձնական բազմաթիվ հետապնդումների» («Շանթ», 26.XII.2013): Ըստ «< 1», «arm news» և «Россия 1» հեռուստատեսային հաղորդումների (22.VIII.2013)՝ Բրեյլի Մենինգը «Vikiliks»-ի միջոցով ամերիկյան գաղտնի հետախուզության վերաբերյալ հարյուրհազարավոր փաստաթղթային տեղեկություններ է տարածել, որի համար ցմահ բանտարկության փոխարեն դատապարտվել է 35 տարով: Իսկ «Վիկիլիքսի» հիմնադիր Ջուլիան Ասանժը, որը հայտնի է հազարավոր բազմաբնույթ գաղտնի փաստաթղթեր («անձնական քարտեր») տարածելու գործով («< 1», 21.XII.2012, 3.VII.2015), ի վերջո ենթարկվել է քրեական հետապնդման և դատապարտվել Անգլիայում («< 1», 4.II.2016): Հեռուստատեսային մեկ այլ տեղեկատվությամբ («arm news», 19.VIII.2014)՝ տեխնոլոգիական արդի դարաշրջանի ամենամեծ կիբերհանցագործությունը կապված է ԱՄՆ-ի խոշոր բուժաստատություններից մեկի հետ, որի «համացանցից չինացի հակերները հատուկ նպատակով օգտագործելու և տարածելու համար գողացել են 4,5 մլն անձնական տվյալներ», ինչը հերթական անգամ վկայում է էլեկտրոնային միջավայրում փաստաթղթային-տեղեկատվական ֆոնդերի անհսկելիության փաստի մասին: Հակերային լայնամասշտաբ հարձակումները ԱՄՆ-ի սոցիալական ցանցերի վրա շարունակվել են 2015 թ. («< 1», 5.VI.2015): Հաշվի առնելով անձնական տվյալների տարածման անօրինականությունը՝ ԱՄՆ-ի կոնգրեսում առաջարկվել է «Ազատության մասին օրենքում» մտցնել «Մարդկանց մասին տվյալների բազայի տարածման (իմացության) արգելափակում» կետը (ըստ «< 3»-ի՝ 24.V.2015): Ավելին՝ 2015 թ. հունիսի 3-ին ԱՄՆ-ի նախագահ Բ. Օբաման ստորագրել է օրենք՝ ընդդեմ «էլեկտրոնային լրտեսման» (էլեկտրոնային ուղիներով տեղեկատվության գաղտնի տարածման): Կիբերհանցագործության դրսևորումներից են նաև էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրների վրա լայնամասշտաբ հարձակումները, այսպես կոչված՝ «տեղեկատվական պատերազմները»⁵:

Ըստ ռուսական հեռուստահաղորդումների («Россия 1», 11.IX.2014), «հակերները զանգվածային գրոհ են կատարել համակարգչային ցանցերից 10 մլն. օգտվողների էլեկտրոնային փոստերի վրա՝ գողանալով անձնական և ֆինանսական կարևոր հետաքրքրություն ունեցող փաստաթղթեր ու տվյալներ»: Մեկ այլ օրինակ. անչափահասները ազատորեն օգտվելով համակարգչից՝ զբաղվել են փաստաթղթային կեղծ գործարքներով («Россия-1», 27.II.2015), որոնց նկատմամբ կիրառվել է խիստ հսկողություն: Իսկ Չինաստանում կիբերհանցագործները գողացել ու ոչնչացրել են 15 000 համակարգչային տվյալներ («Արմենիա», 19.VIII.2015):

⁵ Волковский 2003; Панарин 2003; Почепцов 2002; Поляков 2004.

Տեղեկատվական և սոցիալ-հաղորդակցական կապերի հիմնախնդիրները տեխնոլոգիական հանցագործությունների զարգացման համատեքստում

Ակնհայտ է, որ «տեղեկատվական պատերազմների» գլխավոր ռեսուրսը համացանցն է՝ բոլոր հնարավորություններով: Այդ համատեքստում, սակայն, ժամանակակից կրթության խնդիրը պետք է լինի ոչ միայն մասնագետների մտավոր զարգացումն ու նրանց տեխնիկապես զինելը, այլև՝ «հոգևոր դաստիարակությունը՝ որպես մարդկային բարձրագույն արժեք»⁶: Միայն այդպիսի անհատները ընդունակ կլինեն հակադրվել տեխնոլոգիական ճնշմանը (բռնությանը) և պաշտպանել տեղեկատվության ու հասարակության անվտանգությունը:

Վերը նկարագրված օրինակները հիմք են տալիս նաև պնդել, որ օբյեկտիվ տեղեկատվությունը կեղծ նպատակներով փոխանցվում է «ապատեղեկատվության դաշտ» վերարտադրվում է «տեխնոլոգիական նոր տեղեկատվություն», որոնց բացասական ազդեցությունները անձի տեղեկատվական և ընթերցողական մշակույթի ձևավորման⁷, ինչպես նաև քաղաքական, տնտեսական գրադարանային սպասարկման և գիտակրթական գործընթացների վրա անշտկելի են: Կարելի է եզրակացնել, որ, ի տարբերություն բնական աղետների հետևանքով կործանվող քաղաքակրթությունների, մարդկության նկատմամբ արագորեն աճող և լայնամասշտաբ զարգացող տեխնոլոգիական հանցագործությունները կարող են ավելի աղետալի չափերի հասնել և ապագայում հարցականի տակ դնել նաև կյանքի գոյությունը: Բացի նշվածներից, էլեկտրոնային միջավայրում ստեղծվող սոցիալական ցանցերը նույնպես աչքի են ընկնում բացասական կողմերով՝ պատճառ դառնալով համակարգչից անձի կախվածության, լեզվական աղավաղումների, տեղեկատվական դաշտում համակարգչին՝ իբրև «երկխոսության ձևաչափի» կեղծ պատկերացման: Նման հետևությունների են եկել հեռուստատեսային բանավեճի հրավիրված ռուս գրողներ, բժիշկներ, սոցիոլոգներ և դերասաններ («Мир», 21. VIII.2014), որոնց հետ չի կարելի չհամաձայնել: Օրինակ, մեկուսանալով տեղեկատվական մյուս աղբյուրներից, հատկապես «կենդանի» գրքից, անձը կամ սոցիալական խումբը չի կարող միայն համակարգչից («էլեկտրոնային գրքից») ստանալ լիարժեք և արժանահավատ (հաճախ իրականությանը չհամապատասխանող) տեղեկատվություն: Հետևապես, նրա(նց) մոտ չեն կարող ձևավորվել ստեղծագործական լայն հմտություններ, ճշմարիտ աշխարհայացք:

⁶ Запесоцкий, Марков 2015, 13.

⁷ Շահբազյան 2014, 321-329, Սուքիասյան 2013, 128-135, Вороничева 2011, 59-63.

Կալիֆոռնիայի համալսարանի (ԱՄՆ) գիտնականների կարծիքով մեծ է համակարգչի բացասական ազդեցությունը երեխաների ուղեղի վրա. նրանց զրկում է ընթերցանությունից, ինքնուրույն մտածելու ունակությունից, և նրանք կարող են «վերածվել շնչող ռոբոտների» («Կենտրոն», «arm news», 20.X.2014): Ընդհանրապես համակարգչի հետ մշտական կապը, աշխատանքի գերծանրաբեռնվածությունն ու գերհոգնածությունը մարդկանց մոտ առաջ է բերել նաև տեսողական խնդիրներ: Հաշվի առնելով այդ և միաժամանակ հեռուստատեսությամբ ցույց տալով համակարգչավարների գունատ և հոգնատանջ դեմքերը («arm news», 28.VIII.2014), բրիտանացիները առաջարկել են շաբաթվա աշխատանքային օրերը կրճատել՝ դարձնելով չորս օր: Անգլիացիների այս լուրջ առաջարկությունը տնտեսագիտության, գրադարանային-տեղեկատվական կամ տեխնոլոգիական գործունեության մեջ առայժմ չի քննարկվել: Բացի այդ, նկատի առնելով բջջային հեռախոսների հետ երեխաների կապը («Ար», 27.III.2016), (կորցնելով թանկագին ժամանակ -Գ.Ս.)՝ և սոցիալական ցանցերի խիստ վտանգավորությունը նրանց վրա («Ար», 18.IX.2015), անգլիացի սոցիոլոգները առաջարկել են մինչև 10 տարեկան երեխաներին արգելել օգտվելու համակարգիչներից: Դպրոցականների վրա համակարգիչների, սմարթֆոնների և պլանշետների ունեցած բացասական ազդեցություններին է անդրադարձել նաև Հ. Ավետիքյանը⁸: Դրանք են՝ կախվածություն համակարգչից, հոգեբանական լարվածություն, մտավոր զարգացման խանգարում, խզում ընտանիքից և այլն: Համաձայն մեկ այլ տեղեկատվության («Արմենիա», 1.II.2018)՝ Չինաստանում 20 ժամ համակարգչից օգտվող երիտասարդը կորցրել է օրգանիզմի կայունությունը՝ զրկվելով ոտքերի վրա կանգնելու կարողությունից: Դեպքը որակվել է որպես համակարգչի «մահաբեր» ազդեցություն մարդկանց առողջության վրա:

Այսպիսով, սոցիալ-հաղորդակցական համակարգում և տեղեկատվական գործունեության մեջ համակարգչի, որն հաճախ անվանում են «XXI դարի ամենամեծ համաճարակ», առավելություններն ու թերությունները ակնհայտ են: Տեղեկատվագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք չեն կարող իրականացնել նաև համակողմանի կրթություն՝ առանց գրքային մշակույթի առկայության: Մեր կարծիքով, ընթերցողի (քաղաքացու) նախապատրաստությունը տվյալ հասարակարգի ձևավորման մեջ՝ օբյեկտիվ տեղեկատվություն ձեռք բերելու և ընթերցանություն զարգացնելու գործում, անսահման մեծ են գրքի («փաստաթղթի») ու գրադարանի հասարակական դերերը:

⁸ Ավետիքյան 2017, 1:

Տեղեկատվական աղբյուրների պահպանման և սոցիալական անվտանգության ապահովման ժամանակակից հիմնախնդիրները «բոլորը բոլոր դեմ պատերազմի» մրցավազքի պայմաններում

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն ավանդական գրքի (գրադարանի), դժվար է առավելությունը տալ էլեկտրոնային (թվային) գրքին: Մեր կարծիքով, տեղեկատվական աղբյուրների ուղիղ «թվայնացումը» վտանգավոր է նրանով, որ էլեկտրոնային միջավայրում նախապես թույլ տված սխալները հեղինակները (սուբյեկտները) անհրաժեշտության դեպքում կարող են ուղղել կամ դրանցում նոր լրացումներ կատարել: Փաստորեն, այդպիսի գործունեությամբ բացասվում է *ստաջնային* տեղեկատվության օբյեկտիվությունը, և կասկածի տակ է դրվում *երկրորդային* տեղեկատվության արժանահավատությունը: Հանդես գալով որպես ավանդական (թղթային) գրքի պաշտպան՝ Ֆ. Բեգբեդերը գտնում է, որ «յուրաքանչյուր անհատ պետք է կարդա հենց թղթի վրա»⁹:

Անդրադառնալով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման սոցիոմշակութային հիմնախնդիրներին՝ Մ. Շահբազյանը նշում է, որ տեխնոլոգիական միջոցները, թեև հասարակական կյանքի զարգացման վրա ունեն դրական ազդեցություն, սակայն «ծնում են նոր սպառնալիքներ», նպաստում են «մարդկանց մեկուսացմանն ու օտարացմանը հասարակությունից», «դարձել են բռնության ու սպանության տարածման միջոց», բացասաբար են անդրադառնում «մարդկանց մտածողության ու հոգեկերտվածքի վրա»¹⁰:

Ակնհայտ է դառնում, թե որքան մեծ են գրադարանային-մատենագիտական ֆոնդերի պահպանման կարևորությունը¹¹ և «գրադարանների հումանիտար առաքելությունը տեղեկատվական հասարակության մեջ»¹²: Գրադարանային ֆոնդերը հասարակության հարստությունն են: Դրանք պետք է պահպանել նույնպիսի հոգատարությամբ ու սրտացավությամբ, ինչպես մենք պահպանում ենք մշակութային ժառանգության յուրաքանչյուր արժեք: Բայց պետք է նշել, որ գրադարանային ֆոնդերի (ավանդական և էլեկտրոնային) պահպանման, համալրման, հաշվառման և օգտագործման հարցերում այսօր ամեն ինչ չէ, որ բարվոք վիճակում է: Գրադարանային գործունեության այդ բնագավառում կան թերացումներ ու չլուծված խնդիրներ, որոնց մասին հանգամանորեն խոսելը դուրս է սույն հոդվածի սահմաններից:

⁹ Бегбедер 2014.

¹⁰ Շահբազյան 2014, 321-329:

¹¹ Столяров 2006.

¹² Соколов 2011, 8-15.

Սակայն ակնհայտ է, որ ներկա դարաշրջանում պետք է պահպանել տեղեկատվական դաշտի օրինականությունը, անվտանգությունը և ապահովել *հումանիտար և տեխնոլոգիական մտքի* զուգահեռ զարգացումը՝ նպաստելով տեղեկատվական մշակույթի լիարժեք կայացմանն ու նոր աշխարհայացքի ձևավորմանը: Այդպիսի գործունեության դեպքում, մեր կարծիքով, էլեկտրոնային (էկրանային) մշակույթը չպետք է դիտարկել տեղեկատվական գործունեությունից դուրս, այլ՝ փոխհաղորդակցության և փոխզարգացման մեջ: Դիտարկումները ցույց են տվել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների (համակարգիչներ, տպիչներ, բջջային հեռախոսներ և այլն) միջոցով տեղի են ունենում տեղեկատվության անօրինական տարածում, հեղինակային իրավունքի խախտումներ, ծաղկում է բազմատեսակ «փաստաթղթերի վերարտադրությունը», որի մի մասը վերաձվում է խոտանի՝ տեղեկատվական-տնտեսական համակարգերին մեծ վնաս հասցնելով: Սա վկայում է տեղեկատվական հասարակության և ժամանակակից տեխնոլոգիաների կառավարման մեջ օրենսդրության բացակայության մասին, ինչն իր հերթին բերում է նաև սոցիալ-տնտեսական և մանկավարժահոգեբանական բարդ հետևանքներ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վերջին տարիներին ավելի են շատացել համակարգչային-տեղեկատվական հանցագործությունները՝ շարունակելով առաջ բերել մի շարք խնդիրներ: Դրանք են՝ հեղինակային իրավունքի խախտումներ, անձնական տվյալների և տեղեկատվական աղբյուրների անօրինական «թվայնացում» ու տարածում, անձի և տեղեկատվության անվտանգության ոտնահարում, գաղտնալուծումներ ու ահաբեկումներ, որոնք լուրջ սպառնալիք են սոցիալական, քաղաքական, կրթական և մշակութային ոլորտների համար: Այդպիսի զարգացումներում, որոնք առկա են նաև Հայաստանում, երբ արտադրվում է «փաստաթղթերի» մեծ քանակ, դժվար է հղումների դեպքում որոշել դրանց անաչառությունը կամ գիտափրավական հիմնավորվածությունը: Սրանք անժխտելի փաստեր են, որոնք պահանջում են հետադարձ վերլուծություն:

Ի դեպ, ահաբեկումը հոգեբանական ազդեցության միջոց է անձի կամ հասարակության վրա: «Նրա գլխավոր օբյեկտը միայն զոհը չէ, այլ նաև նա, ով մնացել է կենդանի»¹³: Տեղեկատվության անվտանգության փորձագետ Ս. Մարտիրոսյանի հաղորդմամբ՝ միջազգային որոշ կազմակերպություններ, գաղտնի կապերի մեջ լինելով հակերների կամ տուրիստական կազմակերպությունների հետ, նրանց աջակցությամբ կարող են համացանցի միջոցով նպատակային հարձակում կատարել հետապնդվող անձի (սուբյեկտի) վրա՝ անկախ նրա գտնվելու վայրից («Շանթ» 1.11.2016):

¹³ Троицкая 2015, 148; Почепцов 1999.

Փաստորեն, խոսքը վերջին տասնամյակներում հասարակական կյանքի վրա ազդող հակասական գործընթացների մասին է, որոնց հստակեցման վերաբերյալ, մեր կարծիքով, պահանջվում են ընդհանուր մոտեցումներ:

Այդուհանդերձ, աշխարհի 100-ավոր երկրների (ԱՄՆ-ի, Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի) մեդիալրատվամիջոցները շարունակում են ահազանգել համակարգչային-տեխնոլոգիական համակարգերում իրականացված հակերային նոր հարձակումների մասին («Россия-1», 28.VI.2017)՝ շեշտելով «տեղեկատվական բազմազան աղբյուրների բռնագրավման, ոչնչացման և պատճառած հսկայածավալ վնասների մասին»: Օրինակ, ԱՄՆ-ի տվյալներով, 300 000 համակարգիչ ենթարկվել է հակերային հարձակման, և գողացել են կարևոր նշանակության «փաստաթղթեր» («< 1», 19.XII.2017): Իսկ Google ընկերությունը մեղադրվում է տեղեկատվական-տեխնոլոգիական համակարգերի վրա իշխող դերի և անօրինական գործունեության համար, որի հետևանքով Եվրոպական երկրները զրկված են համացանցում տեղեկատվական, իրավահավասար ծառայություններ մատուցելուց: Մեդիալրատվամիջոցների («Արմենիա» և «< 1», 27.VI.2017) տեղեկացմամբ, Google-ը «անազնիվ մրցակցության և անօրինական գովազդի համար տուգանվել է 2 մլրդ. 24 մլն. եվրոյով»: Ըստ քաղաքական մեդիատվյալների՝ 2017 թ. հակերների հասցրած վնասը աշխարհում կազմել է 400 մլրդ. դոլար («< 1», 27.IX.2017): Իսկ «Ֆեյսբուքը» գաղտնալսումների պատճառով կորցրել է 130 մլրդ. դոլար («< 1», 26.VII.2018):

Ակնհայտ է, որ XXI դարում կիբերհանցագործությունների մասին վերլուծությունները և դրանց դեմ միջազգային միասնական պայքարը դառնում են չափազանց անհրաժեշտ: Այսպես, 2016 թ. ՆԱՏՕ-ն 70 մլն. դոլար է հատկացրել կիբերհանցագործությունների դեմ պայքարելու համար («< 1», «PTP», 8.IX.2016): Իսկ Եվրոմիությունը (Եվրոխորհուրդը), Google ընկերությանը մեղադրելով մենաշնորհության համար և անազնիվ մրցակցության մեջ, տուգանել է 4 մլրդ. 300 մլն եվրո (որպես «հակամենաշնորհային տուգանք») (ըստ «< 1»-ի, 18.VII.2018):

Ստեղծված իրավիճակը կարելի է բնութագրել որպես «բոլորը բոլորի դեմ պատերազմ»:

Ժամանակակից կիբերհանցագործությունների դեմ ընդհանուր պայքար մղելու հարցը քննարկվել է նաև Ռուսաստանի Դաշնությունում: Ըստ «PTP»-ի (26.X.2017), գլոբալ հարձակումներ կատարելով տեխնոլոգիական համակարգերի վրա՝ հակերները ռուսական պետությանը հասցրել են 1 մլրդ. դոլարի վնաս՝ բռնագրավելով սոցիալ-տնտեսական, քաղաքական և ռազմական բնույթի կարևոր փաստաթղթեր: Այդ կապակցությամբ հրավիրված նիստում նշվել է, որ կիբերհանցագործությունների դեմ պայքարը և տեղեկատվության անվտանգության ապահովումը երկրի համար

ունեն ռազմավարական կարևոր նշանակություն: Տեղեկատվական աղբյուրների անվտանգությունը ապահովելու նպատակով և կիրքերհանցագործությունների դեմ գլոբալ մասշտաբով պայքար մղելու կոչով 2018 թ. հանդես է եկել նաև Մեծ Բրիտանիայի վարչապետ Թերեզա Մեյը:

Պատերազմները՝ որպես մարդկային զոհերի, գաղթի և մշակութային ժառանգության (տեղակատվահաղորդակցության օբյեկտների) ոչնչացման պատճառ

Համակարգչային-տեխնոլոգիական միջոցների բացասական ազդեցությունները նախադպրոցական, դպրոցական և հայ հասարակության վրա ընդհանրապես (սարսափազդու խաղերից մինչև ինքնասպանություններ և այլն) խստորեն քննադատվեց նաև ՀՀ Ազգային ժողովի 2018 թ. սեպտեմբերի 11-ի և նոյեմբերի 15-ի նիստերում («Հ 1», 11.IX և 15.XI.2018): Այդ տեսանկյունից վիճահարույց է դառնում Երևանում կայացած «Գլոբալ ինովացիոն ֆորում»-ում («Արմենիա», 4.XI.2018) առաջ քաշված «Մարդու և տեխնոլոգիայի միացման» գաղափարը, համաձայն որի, ապագա զարգացումներում մարդն ու տեխնոլոգիան «կձուլվեն և կդառնան մի ամբողջություն»: Հարց է առաջանում. իսկ ովքե՞ր են ղեկավարելու այդ «միասնությունը», և որո՞նք են կառավարման գործընթացի *հումանիտար ու տեխնոլոգիական մեթոդները*: Մինչդեռ համակարգչային-տեխնոլոգիական հանցագործությունները շարունակվում են 2019 թ.: Այսպես, ըստ arm news-ի (21.I.2019) աղբյուրների հակերները կոտրել են հայաստանյան 2000 համակարգչային կայքեր՝ ոչնչացնելով ֆինանսաբանկային կարևոր հաշիվներ և ֆեյսբուքյան տվյալներ:

Հարկ է նշել, որ բացի էլեկտրոնային-տեխնոլոգիական միջոցներից, մշակութային ժառանգության ու տեղեկատվական աղբյուրների (ռեսուրսների) կործանման և ոչնչացման պատճառ են դարձել Մերձավոր Արևելքում բռնկված պատերազմները: 2014 մարտի 21-ին Թուրքիայից Սիրիայի տարածք թափանցած թուրք ահաբեկիչները, ռազմական գործողություններ սկսելով, բռնի տեղահանման են ենթարկում սահմանամերձ հայաբնակ Քեսաբ գյուղը, ոմբակոծում են այն և թալանում հարյուրամյակներ այնտեղ բնակություն հաստատած հայ ժողովրդի նյութական և հոգևոր ժառանգությունը¹⁴: 2014 թ. մինչև այսօր Սիրիայի մայրաքաղաք Հալեպում, հայաբնակ այլ վայրերում, ինչպես նաև Լիբիայում ու Իրաքում (Մոսուլում) թուրք ահաբեկիչների և իսլամիստների կողմից հրթիռակոծվում ու հրկիզվում են դպրոցներ, եկեղեցիներ ու գրադարաններ («Հ 1», 5.VI.2014, «arm news», 7.I.2014, «Հ 1», 23.II.2015, «Երկիր», 15.IX.2015), բարբարոսաբար

¹⁴ Չոլաքեան 2014:

ոչնչացվում են պատմական և գեղարվեստական մշակույթի հուշարձաններ: Ըստ լրատվական աղբյուրների՝ «Իրաքի և Լեվանտի իսլամական պետության» գրոհայինները այրել են Մոսուլի կենտրոնական գրադարանը՝ ոչնչացնելով Իրաքի մշակութային ժառանգության մասը կազմող 10.000 տպագիր և ձեռագիր եզակի գրքեր¹⁵: Իսկ Անբար նահանգում իսլամիստ զինյալները ավերել են մի քանի գրադարան՝ ոչնչացնելով ավելի քան 100.000 գիրք (ն.տ.):

Ցավալիորեն, պետք է նաև արձանագրել, որ իսլամիստ ծայրահեղականները 2015 թ. հարձակվելով Իրաքի Ռամադա քաղաքի վրա՝ ջարդուփշուր են արել պատմական կարևոր նշանակություն ունեցող հնագույն հուշարձաններ, ոչնչացրել գրավոր մշակույթի հարուստ ժառանգություն: Ավելին՝ նույն թվականի սեպտեմբերի 1-ին իսլամիստները պայթեցրել և ամբողջովին հողին են հավասարեցրել Հին Պալմիրայի (Սիրիայում) պատմաճարտարապետական համալիրը՝ համաշխարհային քաղաքակրթության անգնահատելի արժեքներից մեկը: Ինչպես հայտնում են հայ և արտասահմանյան լրատվամիջոցները («< 1», «PTP», «CNN» և այլ), Պալմիրայի (Հին Թադմորի, հիմնված մ.թ. II դ.) մշակութային «մնացորդները» իսլամիստ-սիարեկիզների ձեռքից փրկվեցին 2016 թ. մարտի 24-27-ին՝ համանուն պատմական քաղաք-հնավայրի վրա սիրիական բանակի գրոհով ու գրավումով միայն: Իսկ Ուկրաինայում ծագած ներքաղաքական ճգնաժամի և 2013-14 թթ. այնտեղ ընթացած պատերազմի հետևանքով նույնպես ոչնչացվել ու ումբակոծվել են նյութական ու հոգևոր մշակույթի հսկայական արժեքներ: Ըստ ռուսական հեռուստատեսային հաղորդումների («PTP» 19-20.VIII.2014)՝ հրկիզվել են Դոնեցկ և Լուգանսկ քաղաքների մի շարք գրադարաններ, որոնցում (ինչպես վերոնշյալ գրադարաններում) քիչ չի եղել հայերին ու Հայաստանին վերաբերող գրականությունը: Հայտնի է նաև, որ 1980-ական թթ. վերջին և 90-ական թթ. արցախյան ազատագրական պատերազմի շրջանում կործանվել են ավելի քան 220 գրադարաններ, իսկ գրքային ֆոնդերի մեծագույն մասը ենթարկվել է թալանի կամ հրդեհվել է: Հիշյալ պատերազմի հետևանքով կրակոցների տակ են հայտնվել Կապանի և Ստեփանակերտի գրադարանները, որոնցում մինչև այսօր պահպանվում են մի քանի այրված («վիրավոր») գրքեր (նկ. 1): Հիշենք նաև, որ ադրբեջանցիների ձեռքով ոչնչացվել են նաև Հին Ջուղայի 1000-ավոր հայկական խաչքարեր...

Այո՛, պատերազմները մեծ չարիք են մարդկության համար, որոնց պատճառով, բացի հազարավոր մարդկային զոհերից, ազգերը ենթարկվում են նաև հալածանքների ու բռնի տեղահանման: Եթե ՄԱԿ-ի 2015 թ.

¹⁵ Մոսուլում իսլամիստները 10 000 եզակի գիրք են այրել (<<, 2015, փետրվարի 24, N 31, 3):

հունվարի տվյալներով աշխարհում կար 46,3 մլն. փախստական («arm news», 8.I.2015), ապա նույն թվականի հունիսին ռազմական գործողությունների հետևանքով փախստականների թիվն աշխարհում կազմել է 60 մլն. («Շանթ», 20.VI.2015), այդ թվում՝ 5 մլն. 500 հազարը՝ Սիրիայից (որոնցից 12 հազար հայ ներգաղթել է Հայաստան), իսկ 1 մլն. 300 հազարը՝ Ուկրաինայից: Այլ աղբյուրի համաձայն՝ պատերազմների և ահաբեկչության հետևանքներով փախստականների ու գաղթականների թիվը 2016 թ. կազմել է 21 մլն., այդ թվում՝ 3,5 մլն., երեխաներ («Արարատ», 20.IX.2016): Եթե ավելացնենք, որ «աշխարհում 781 մլն. մարդ գրել և կարդալ չգիտի» («arm news», 16.XII.2014), ապա գիտության, կրթության և դաստիարակության տեսանկյուններից առաջացած հարցերի լուծումները դառնում են գերխնդիր:

Բացի այդ, ըստ Նորվեգիայի փախստականների խորհրդի և մարդկանց տեղահանման մշտադիտարկում իրականացնող կենտրոնի զեկույցի՝ միայն 2016 թ. հակամարտությունների, բռնությունների ու բնական աղետների հետևանքով տեղահանված մարդկանց թիվը կազմել է ավելի քան 31 մլն.¹⁶, որոնցից ավելի քան 2,5 միլիոնը՝ Աֆրիկայից, 824 000-ը՝ Սիրիայից, 600 000-ը՝ Իրաքից, որոնք կարիք ունեն բազմակողմանի օգնության:

XXI դ. երկրորդ տասնամյակում տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով առևանգվել ու սպանվել են նաև հազարավոր լրագրողներ: Ըստ լրատվական աղբյուրների («< 1», 18.VII.2013)՝ 2013 թ. սպանվել է 600 լրագրող, որոնցից ավելի քան 40-ը՝ Սիրիայում: Իսկ դա նշանակում է, որ լրագրողներին սպանողները նրանց զրկել են ոչ միայն առաջատար տեղեկատվություն և կարծիք տարածելու իրավունքից, այլև՝ ժողովրդական զանգվածների իրավունքները պաշտպանելու իրավունքից: Այնուհետև, 2015 թ. իսլամիստ-ձայրահեղականների ձեռքով սպանվել է 65 լրագրող, նրանց մեծ մասը՝ Սիրիայում և Իրաքում, իսկ 45-ը գտնվում է անհայտության մեջ («Արարատ», 29.XII.2015): Լրագրողներ, որոնք կատարում էին իրենց մասնագիտական պարտականությունները:

Եզրակացություններ

Այսպիսով, ելնելով տպագիր հրատարակությունների և մեդիա լրատվական աղբյուրների ուսումնասիրություններից, կարելի է եզրակացնել.

- Տեղեկատվությունն ու հաղորդակցությունը հասարակական կյանքի շարժիչ ուժեր են: Ժամանակակից հասարակարգի համակողմանի զարգացմանը նպաստելու և տեղեկատվական մշակույթի, անձի և հասա-

¹⁶ ՀՀ 2017, մայիսի 24, N 93, 6:

րակության անվտանգությունը ապահովելու համար անհրաժեշտ է տեխնոլոգիական հանցագործությունների դեմ միջազգային պայքարի ուժեղացում, մյուս կողմից՝ հնարավոր բոլոր միջոցներով պետք է ձգտել կանխելու «բոլորը բոլորի դեմ» պատերազմների մրցավազքը:

- Պայքարելով տեխնոլոգիական (համացանցային) հանցագործությունների դեմ՝ չի նշանակում հրաժարվել տեխնոլոգիական միջոցների կիրառումից (համակարգիչներ և տեղեկատվական կապի այլ միջոցներ): Սակայն, դատելով բազմազան աղբյուրների տեղեկատվագիտական վերլուծությունից, չի կարելի նաև հաստատել, որ դրանք վտանգավոր չեն գիտակրթական և սոցիալական հաղորդակցությունների զարգացումների համար:

- Արդի մշակութային քաղաքականությունը պետք է ուղղված լինի ցանկացած երկրի տեղեկատվական ինֆրաստրուկտուրայի (մոդելի) կառուցմանը, տվյալ դեպքում՝ Հայաստանի, հայկական սփյուռքի և Արցախի մշակութային արժեքների անվտանգության ապահովմանը տեղեկատվական ռեսուրսների ինտեգրմանն ու օգտագործմանը, որոնք պահանջում են տեսամեթոդական հստակ մոտեցումներ:

- Գրադարանային-մատենագիտական և տեղեկատվական կենտրոնները, որպես սոցիալական ինստիտուտներ, պետք է համալրվեն համապատասխան բարձրագույն կրթությամբ մասնագետներով՝ հաշվի առնելով *մասնագիտական որակավորման չափանիշները* (Սուքիասյան 2018, 96-108), որովհետև նրանց մասնագիտական գործունեությունից է կախված տեղեկատվական օբյեկտների սպասարկման և սոցիալ-հաղորդակցական փոխադարձ կապերի զարգացման արդյունավետությունը բոլոր երկրներում, ներառյալ Հայաստանում:

Գրականություն

Ավետիքյան Հ. 2017, Սմարթֆոնն ու մեր երեխաները, Ազգ, 25 օգոստոսի, N 32 (5480), էջ 1:

Գրադարանային-տեղեկատվական կրթության համակարգում նոր տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի կիրառման արդի միտումները 2014, Հանրապ. գիտաժողովի զեկուց. Ժողովածու, կազմող, առաջաբանի հեղինակ և մասնագիտ. խմբագիր՝ Գ.Ա. Սուքիասյան, Երևան, «Էդիթ Պրինտ», 128 էջ:

2016-ին՝ ավելի քան 31 միլիոն տեղահանված, ՀՀ, 2017, 24 մայիսի, N 93, էջ 6:

Մոսուլում իսլամիստները 10 000 եզակի գիրք են այրել, ՀՀ, 2015, 24 փետրվարի, N 31, էջ 3:

Շահբազյան Մ. 2014, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման սոցիոմշակութային որոշ հիմնախնդիրներ, Կանխեղ, Գիտական հոդվածներ, Երևան, «Ասողիկ», էջ 321-329:

- Չղաքեան Յակոբ 2014, Քեսարի երեք օրերը, 21-23 մարտի, Երևան, «Էդիթ Պրինտ», 128 էջ:
- Սուքիասյան Գ.Ա. 2013, Տեղեկատվական մշակույթը տեխնոլոգիական զարգացումների համատեքստում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի «Գիտական տեղեկագիր», Մանկավարժ, N 1, էջ 128-135:
- Սուքիասյան Գ.Ա. 2018, Գիրքը, գրադարանը և ընթերցանությունը Հայաստանի պետական բուհերում: Ուսումնական ձեռնարկ, Գ.Ա. Սուքիասյան, Երևան, հեղ. հրատ., 112 էջ:
- Бегбедер Ф. 2014, Конец света: первые итоги/ Фредерик Бегбедер: пер. с франц. Е. Головиной, СПб., «Азбук», 448 с.
- Волковский Н.Л. 2003, История информационных войн, СПб., «Полигон», 258 с.
- Вороничева О.В. 2011, Читательская деятельность и культура чтения, Библиотекосведение, № 5, с. 59-63.
- Гендина Н.И. и другие 2006, Формирование информационной культуры личности: теоретическое обоснование и моделирование содержания учебной дисциплины, Москва, «Межрегиональный центр библиотечного сотрудничества», 511 с.
- Запесоцкий А.С. Марков А.П. 2015, Эпоха информационных войн и проблемы обеспечения духовной безопасности общества, Вопросы культурологии, № 4, с. 6-13.
- Кастельс М. 2000, Информационная эпоха, Москва, «ГУ ВШЭ», 608 с.
- Крылов В.В. 1997, Информационные компьютерные преступления, Москва, ИНФРА, «Норма», 285 с.
- Панарин И.Н. 2003, Технология информационной войны, Москва, «Академик-книга», 216 с.
- Поляков Ю.А. 2004, Информационная безопасность и СМИ, Москва, «ГУ ВШЭ», 320 с.
- Почепцов Г.Г. 1999, Информационно-психологическая война Москва, «Рефлбук; К.: Ваклер», 648 с.
- Почепцов Г.Г. 2002, Информационные войны, Москва, «Ваклер», 560 с.
- Расторгуев С.П. 2007, Основы информационной безопасности: учеб. пособие для высших учебных заведений, Москва, «Академия», 192 с.
- Соколов А.В. 2011, Библиотечный гуманизм и гуманистическая миссия библиотек в информационном обществе, Библиотечное дело, № 17, с. 8-15.
- Столяров Ю.Н. 2006, Защита библиотечного фонда: учеб. пособие, Москва, «Фаир-Пресс», 504 с.
- Троицкая С.И. 2015, Информационный террор: воспринимать или жить? Ростов н. Дону, «Феникс», 205 с.
- Уэбстер Фрэнк 2004, Теории информационного общества, пер. с англ. М.В. Арапова, Н.В. Малыхиной, Москва, «Аспект Пресс», 400 с.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գագիկ Սուքիասյան

Տպագիր և էլեկտրոնային (մեդիա) տեղեկատվական աղբյուրների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, թե արդի հասարակական կյանքի զարգացման վրա ինչ դրական և բացասական գործոններ են ազդեցություն թողնում: Մի կողմից՝ պատերազմների կործանարար հետևանքները (հատկապես Մերձավոր Արևելքում). դրանք պատճառ են դարձել հազարավոր մարդկանց մահվան, գաղթի, մշակութային եղեռնի, ինչպես նաև տեղեկատվական և սոցիալ-հաղորդակցական կապերի «խզման»: Մյուս կողմից՝ տեխնոլոգիական հանցագործությունների լայնամասշտաբ զարգացումները բացասական ազդեցություն են ունենում համաշխարհային մշակույթի և ընդհանուր քաղաքակրթության զարգացման վրա:

Այդպիսի իրադրություններում դժվար է որոշել նաև տեղեկատվական աղբյուրների անաչտությունն ու արժանահավատությունը, որոնց կիրառական նշանակությունը գիտության և կրթության բնագավառներում անվիճելի է: Ժամանակակից հասարակարգի համակողմանի զարգացմանը նպաստելու և տեղեկատվական մշակույթի, հեղինակային իրավունքի և հասարակության անվտանգությունը ապահովելու համար անհրաժեշտ է տեխնոլոգիական հանցագործությունների դեմ միջազգային պայքարի ուժեղացում:

Արդի դարաշրջանի մշակութային քաղաքականությունը պետք է ուղղված լինի ցանկացած երկրի տեղեկատվական ինֆրաստրուկտուրայի կառուցմանը, տվյալ դեպքում՝ Հայաստանի, հայկական սփյուռքի և Արցախի մշակութային արժեքների անվտանգության ապահովմանը, տեղեկատվական ռեսուրսների ինտեգրմանն ու օգտագործմանը:

Բանալի բառեր՝ տեղեկատվական մշակույթ, սոցիալական հաղորդակցություն, հեռուստատեսային լրատվություն, տեխնոլոգիական տեղեկատվություն, տեղեկատվական պատերազմ, տեխնոլոգիական հանցագործություն, գրադարանային-տեղեկատվական գործունեություն:

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ИНФОРМАЦИИ И СОЦИАЛЬНЫХ КОММУНИКАЦИЙ

Гагик Сукиасян

Сравнительный анализ печатных и электронных (медиа) источников позволяет выявить положительные и отрицательные факторы, влияющие на развитие современной общественной жизни. В ряду этих факторов следует указать разрушительные последствия войн (особенно на Ближнем

Востоке), которые привели к гибели людей, миграции, культурному геноциду и разрыву информационных и социально-коммуникационных связей, а также широкомасштабные технологические преступления, негативное воздействие которых на развитие мировой культуры и цивилизации также велико.

Информациологический анализ показал, что в таких ситуациях трудно определить также объективность и достоверность источников информации, прикладное значение которых в сфере науки и образования неоспоримо. Очевидно, что информация и коммуникация являются движущей силой общественной жизни. Для содействия развитию современного общественного порядка, обеспечения общественной безопасности, информационной культуры и защиты авторского права необходимо усилить международную борьбу с технологической преступностью и стремиться всеми возможными средствами к предотвращению войн «всех против всех».

Помимо этого культурная политика современной эпохи должна быть направлена на построение информационной инфраструктуры (модели) любой страны, в данном случае на обеспечение культурных ценностей и безопасности Армении, армянской диаспоры и Арцаха, интеграцию и использование их информационных ресурсов, которые требуют четких научно-методических и стратегических подходов, направленных на их будущее развитие. В этих процессах важную роль играют также библиотечно-библиографические центры.

Ключевые слова – телевизионная журналистика, информационная культура, социальная коммуникация, технологическая информация, информационная война, технологическое преступление, библиотечно-информационная деятельность.

MODERN PROBLEMS OF DEVELOPMENT OF INFORMATION AND SOCIAL COMMUNICATIONS

Gagik Sukiasyan

The article deals with the problems of the development of information relationships and social communications. Positive and negative factors affecting the development of the modern social life are shown based on the comparative analysis of print and electronic (media) sources. On the one hand, the devastating consequences of wars (especially in the Middle East) led to the death of thousands of people, migration, cultural genocide and the severance of information and socio-communication ties. On the other hand, there are large-scale technological crimes,

the negative impact of which on the development of world culture and civilization is also evident.

The information analysis showed that in such situations it is also difficult to determine the objectivity and reliability of information sources, the applied value of which in the fields of science and education is undeniable. It is obvious that information and communication are the driving forces of the public life. It is necessary to strengthen international struggle against the technological crime and to strive to prevent the wars of "all against all" by various possible means in order to contribute to the development of the modern public order and the provision of public safety, information culture and copyright.

We also think that the cultural politics of the modern era should be aimed at the construction of the information infrastructure (model) of any country, in the given case, ensuring the cultural values and security of Armenia, the Armenian Diaspora and Artsakh, integration and use of their information resources, which require exact scientific, methodological and strategic approaches aimed at the future development. The library and bibliographic centers also play an important role in these processes.

Key words – information, information culture, social communication, TV journalism, technological information, information war, technological crime, library and information activities.

**ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ
(Դ. Անանունի ծննդյան 140-ամյակի առթիվ)**

XX դարի առաջին քառորդի հայ հասարակական-քաղաքական, գրական-մշակութային կյանքի երևելի դեմքերից է Դավիթ Անանունը [Դավիթ Օհանի (Հովհաննեսի) Տեր-Դանիելյան]: Ծնվել է Լեռնային Ղարաբաղի Մեծ շեն (այժմ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան) գյուղում 1880 թ.: Սկզբնական կրթությունն ստացել է Շուշիի քաղաքային դպրոցում, ապա ինքնակրթությամբ լրացրել բացը: Աշխատել է Բաքվի նավթային ընկերություններում, այնուհետև իրեն նվիրել է հայ մամուլին ծառայելու գործին, մխրճվել գրական-հրապարակախոսական ասպարեզ՝ ծավալելով բեղմնավոր գործունեություն: Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության կարկառուն գաղափարախոսներից ու ղեկավարներից է, հիմնադրել և աշխատակցել է մի շարք պարբերականների, թողել ստեղծագործական հարուստ ժառանգություն: Ապրել է Թիֆլիսում, շրջել Հյուսիսային Կովկասի քաղաքներում: 1919 թ. բնակություն է հաստատել Երևանում, ակտիվորեն մասնակցել երկրի հասարակական-քաղաքական կյանքին, պետական մի շարք պաշտոններ վարել էջմիածնում ու Հայաստանի մայրաքաղաքում: Եղել է Երևանում ապրող ղարաբաղցիների Հայրենակցական միության վարչության նախագահ, Հայաստանի գրական ընկերության վարչության անդամ: Խառնակ տարիներին՝ 1919–1920 թթ., մի քանի անգամ եղել է Ղարաբաղում, ծանոթացել երկրամասում տիրող իրավիճակին, հանդես եկել հողվածներով, կատարել կենսական նշանակության հարցադրումներ¹: Իբրև «պրոլետարական հեղափոխության և խորհրդային իշխանության կատաղի թշնամի»՝ 1927 թ. ձերբակալվել է, ուղարկվել համակենտրոնացման ճամբար, այնուհետև աքսորվել է Ուֆա, ապա Աստրախան, որտեղ էլ 1943 թ. մահացել է: Արդարացվել է 1989 թ.²:

¹ Տե՛ս, օրինակ, Անանուն Դ. 1920, Ղարաբաղ, Հայաստանի կոոպերացիա, Երևան, № 17, սեպտեմբերի 15, էջ 684–690; Զաքարյան Ա. 2020, Դավիթ Անանուն (ծննդյան 140-ամյակի առթիվ): Ղարաբաղ, «Գիտություն», Երևան, № 2, փետրվար:

² Դ. Անանունի մասին մանրամասն տե՛ս Վիրաբյան Ա. 1991, Կյանք և ողբերգություն, Հայաստան, Երևան, 20.VI, Աբրահամյան Հ.Բ. 1998, Դավիթ Անանունի քաղաքական ճակատագիրը, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, № 1, էջ 19-30, Զաքարյան Ա. 2010, Հուշեր Դավիթ Անանունի մասին (ծննդյան 130-ամյակի առթիվ), Պատմաբանասիրական հանդես, Երևան, № 1, էջ 245-252, Գրիգորյան Հ., Հակոբյան Վ. 2019, Ուրվագծեր Դավիթ Անանունի կյանքի և գործունեության, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան, № 2, էջ 108-128, Զաքարյան Ա. 2020, Դավիթ Անանուն. մարդը և գործը (ծննդյան 140-ամյակի առթիվ), Պատմաբանասիրական հանդես, Երևան, № 1, էջ 90-127:

Դ. Անանունը սերտ կապեր է ունեցել ժամանակի հայ իրականության բազմաթիվ դեմքերի հետ: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում նրա առնչություններն Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հետ: Բերենք մի քանի խոսուն օրինակ: 1912 թ. Մոսկվայում հրատարակվող «Գարուն» գրական-քննադատական ամսանախի III գրքում (էջ 99–128) տպագրվել է Թումանյանի ստեղծագործությանը նվիրված Անանունի առաջին հոդվածը՝ «Անցյալի մեծարանքը (Հովհաննես Թումանյանի քնարը)» խոսուն վերնագրով³: Ի դեպ, 1911 թ. հոկտեմբերի 14-ին Բաքվից Մոսկվա՝ Կարեն Միքայելյանին գրած նամակում այս հոդվածի մասին կան հետաքրքիր տեղեկություններ⁴:

1913 թ. հունվարի 17-ին Հայ գրողների կովկասյան ընկերության վարչության նախագահ Հովհ. Թումանյանը և անդամ-քարտուղար Գյուտ քահ. Աղանյանը Դ. Անանունին տեղեկացրել են. «Վարչությունս սրանով հայտնում է Ձեզ, որ Ընկերությանս ընդհանուր ժողովը, համաձայն իր կանոնադրության 4-րդ հոդվածի, գաղտնի քվեարկությամբ ընտրեց Ձեզ Ընկերության անդամ»⁵:

1914 թ. հունվարի 3-ին Անանունը Բաքվից նամակով դիմել է Թումանյանին խնդրանքով՝ միջնորդել իր հեղինակած «Բանվորական նոր օրենքները» գրքույկի վրա գրաքննիչի կողմից դրված արգելքը վերացնելու համար⁶:

Դ. Անանունն ակտիվ մասնակցություն է ունեցել Թումանյանի գլխավորած՝ «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» աշխատանքներին: Այսպես, օրինակ, Հովհ. Թումանյանը 1918 թ. դեկտեմբերի 14-ին Թիֆլիսից զորավար Անդրանիկին հղած նամակում գրում է. «Գրաբերս՝ պ. Դավիթ Անանունը, մեր կողմից գալիս է լիազոր՝ Ղարաբաղում կազմակերպելու էս գործը (խոսքը Հովհ. Թումանյանի նախագահությամբ գործող «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի»⁷ աշխատանքը կազմակերպելու մասին է– Ա.Ը.): Խնդրում եմ աջակցություն ցույց տաս նրան, եթե հարկավոր լինի»⁸:

³ Հմմտ. Հովհաննես Թումանյանը ժամանակի գրաքննադատական մտքի գնահատությամբ (1890–1913), 2019, հ. 1 (Կազմեց, ծանոթ. և հրատ. պատրաստեց Եվա Մաջականյանը), Երևան, ՎՄՎ-Պրինտ, էջ 354–371:

⁴ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Կարեն Միքայելյանի ֆ., թիվ 732:

⁵ Դավիթ Անանունի նամակագրությունից 1984, Պատմաբանասիրական հանդես, Երևան, № 1, էջ 171:

⁶ Դավիթ Անանունի նամակագրությունից 1984, Պատմաբանասիրական հանդես, Երևան, № 1, էջ 171–172:

⁷ Քննիչ հանձնաժողովի մասին մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ Ա. Ջաքարյան, Երևան, 2005:

⁸ Թումանյան Հովհ. 1999, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Երևան, էջ 300:

Ստորև հրապարակում և գիտական շրջանառության մեջ ենք դնում Հովհ. Թումանյանի կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող Դ. Անանունի երկու հոդվածը: Առաջինը 1919 թ. փետրվարի 20-ին «Մշակ» թերթում տպագրված «Հարգանքի խոսք Հովհ. Թումանյանին» վերնագրով հոդվածն է՝ բանաստեղծի ծննդյան 50-ամյակի առթիվ⁹: Երկրորդ նյութը՝ «Հայաստանի կոպտերացիա» երկշաբաթաթերթում (N° 4, փետրվարի 29, 1920, էջ 126–128) տպագրված «Իմացության թախիծը (Հովհ. Թումանյան՝ «Քառյակներ», Թիֆլիս, 1920, գինը 30 ռ.)» վերնագրով քննադատական հոդվածն է:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

– 1 –

ՀԱՐԳԱՆՔԻ ԽՈՍՔ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Այսօր լրանում է հիսուն տարին այն մարդու, որի գլուխը վաղաժամ ալեհեր է դարձել, իսկ հոգին մնում է միշտ արի: Դա բանաստեղծ Հովհ. Թումանյանն է, բանաստեղծ՝ առանց որակումների: Ածականը այստեղ կարող է նսեմացնել, այլ ոչ թե բարձրացնել: Բայց ինչ որ մենք պիտի շեշտենք այնուամենայնիվ՝ դա այն է, որ Հովհ. Թումանյանի քնարը հենց սկզբից ներդաշնակ կապ և հնչյուններ է փնտրել իր և հայության հոգևոր աշխարհի մեջ, փնտրել և, որ ամենից գլխավորն է, գտել: Ազգային քանքար իր ողջ էությանմբ՝ Հովհ. Թումանյանը հեռու է, շատ հեռու ինքնագոհ ազգամոլությունից: Նրա ստեղծած հայը հարազատ է ամենիս: Այդ հայի հոգեկան աշխարհը մերն է իր գունագեղ բովանդակությամբ: Եվ մենք հրճվում ենք, երբ բանաստեղծի պատկերած հայը անցնում է մեր մտքի ու տեսողության դաշտով: Եթե ժպտում ենք նրա վրա՝ մեզ վրա ենք ժպտում: Եթե լաց ենք լինում նրա համար՝ մեզ համար ենք լալիս: Հովհ. Թումանյանը գերազանցապես ժողովրդական բանաստեղծ է, ժողովրդի խորքից ելած և՛ իբրև զանգվածային ընդերքի պտուղ՝ նա խոսքի գոհար է:

Դաժան հասարակական պայմանների մեջ է լրանում մեր բանաստեղծի ծննդյան հիսնամյակը: Մի ուրիշ բանաստեղծի – Խրիմյան Հայրիկի – քնարը արդեն տվել է մեր այսօրվա վիճակի պատկերը.

Կանցնի ծմեռ, կուգա գարուն

⁹ Այս հոդվածը կրճատումներով և տարընթերցված տպագրվել է «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919)» գրքում (Երևան, «Գիտություն», 2019, էջ 665–666):

Մեռելոց դաշտ ծաղկազարդի,
 Անջատ, անջատ ոսկերոտիք
 Շարժին հրաշիվք, կցին իրար
 Շունչ մի շնչե կենդանարար
 Հառնի կանգնե մեռելոց դաշտ...

«Մեռելոց դաշտը» – դա մեր հայրենիքն է, որ դեռ պիտի «հառնի» ու «կանգնե»: Սակայն այդ մեռելոց դաշտը այդպիսին է ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես: Պատերազմը և մեր գլխին տեղացած արհավիրքները ավերել են նաև հայի հոգին, մի վերք, որ ամենից կսկծալին է: Կարելի է կառուցել «բրած ու հատակած» քաղաքներն ու գյուղերը, կարելի է հերկել ու մշակել դաշտերն ու պարտեզները, բայց դժվարին գործ է վերականգնել հայի ավերված հոգու ունակությունները, նրան առաջնորդել դեպի հասարակական իդեալների և այլասիրության տաճարը: Այստեղ ընտիր հայ միտքն ու խոսքը ունեն կատարելու ամենից ծանր աշխատանքը: Պահ մի վարանում ենք և չենք հավատում հայ խոսքի այդ հրաշունչ ու բուժարար առաքելությանը, բայց երբ հիշում ենք խոսքի վարպետ Թումանյանին և նրա մյուս սակավաթիվ ընկերներին՝ այլևս ուղղվում է մեր կորացած մեջքը, և մենք հավատում ենք հայի պայծառ աստղին:

Մենք դեռ կպայքարենք!

Մեզ մխիթարող և առաջնորդող մարգարեներ են հարկավոր: Թող Հովի. Թումանյանը՝ իմաստուն դարձած իր հիսուն տարվա կյանքի փորձից՝ այսուհետ ևս կերտե ընտիր հայ խոսք՝ սփռվելու մեր վիշտը և ոգևորություն հաղորդելու մեր սրտին: Թող նա մեզ ուժ տա՝ մաքառելու երջանիկ ապագայի համար:

Պայծառ օրեր ենք մաղթում մեր Պառնասի զարդին:

Դ. Անանուն

«Մշակ» (Թիֆլիս), 20. II. 1919:

– 2 –

ԻՄԱՏՈՒԹՅԱՆ ԹԱԽԻԾԸ

(Հովի. Թումանյան՝ «Քառյակներ», Թիֆլիս, 1920, գինը 30 ռ.)

Հովի. Թումանյանի տաղանդի այս արտադրություններին կարելի է մոտենալ երկու եղանակով: Եղանակներից մեկը, դժվարինը, այն է, թե հասարակական որպիսի պայմանների ազդեցության տակ մեր բանաստեղծը եկել կանգ է առել դատավորի կոչման վրա: Այո, դատավորի, որի մեջ մարել է վրեժխնդրության կիրքը և որը իր համար կյանքի կանոն է դարձրել բոլոր իմաստությամբ բեռնավորված մարդկանց հայեցակետը – ամենը հասկանալ,

ամենը ներել: Մյուս եղանակը, հեշտագույնը, նրա քառյակների բովանդակության պարզ պատմումն է, համեմաձ որոշ կարգի դատողություններով, որոնք՝ նայած քննադատի կարողության ու շնորքին՝ կարող են այն միտքը հաղորդել ընթերցողին, թե բանաստեղծը բողոքում է մասկերության դեմ և քարոզում բանջարակերությունը: Այդպես է նայել, օրինակ, տասներկուերորդ քառյակին պ. Տ. Փիրումյանը «Աշխատավորում» տպագրած իր հոդվածի մեջ*։ Պարզ է, որ քննադատին այս դեպքում փրկում է նրա պարզամտությունը:

Մենք կարծում ենք, որ Հովհ. Թումանյանի քառյակներին կարելի է և պետք մոտենալ քննադատության առաջին եղանակով: Նրա անունը այլևս որակումներ չի ընդունում. բանաստեղծ է առանց տիտղոսների: Եվ քննադատից պահանջվում է պարզել, թե ինչ երևույթներ են գրավել բանաստեղծի ուշադրությունը, մրրկել նրա հոգին և վճռի արժանացել: Այս աշխատանքը անպայման դժվարին է և կարող է պատահել, որ քննադատը զոհ գնալ գռեհիկ բացատրությունների:

Մեր բանաստեղծը անուն է նվաճել նրանով, որ ազգային միջավայրի երևույթները իր տաղանդով կոկել է ու դարձրել գերազանցորեն մարդկային, ուրեմն և ընտանի բոլոր ազգերին: Տաղանդը ազգային նեղ շրջանակից նրան առաջնորդել է դեպի համամարդկային զգացումների ու խոհերի ասպարեզ: Այս բարերար հանգամանքին զուգադիպել է մարդկային ցեղի արդի վիճակը, երբ ավերվել են բոլոր ինքնամիոփ դրությունները և աշխարհի մի վայրում տեղի ունեցած երևույթը գալիս է մղումներ հաղորդելու հեռավոր անկյունների մարդկային համախմբումներին: Համաշխարհային ցնցումները գույն ու թափ են տալիս մեր կյանքին, հարկադրելով գրողին դուրս գալ տեղական կյանքի

* Խոսքը «Աշխատավոր» (Թիֆլիս) թերթի 1920 թ. հունվարի 29-ի համարում տպագրված Տ. Փիրումյանի «Գրական նկատողություններ» հոդվածի երկրորդ մասի՝ Հովհ. Թումանյանի «Քառյակներ» գրքույկի մասին է: Հեղինակը գրում է. «...նոր լույս տեսած «Քառյակները» ոչ մի նոր բան չեն ավելացնում մեր քանքարավոր բանաստեղծի տաղանդին: Սակայն արդարությունը պահանջում է ասել, որ պ. Թումանյանի այդ գրքույկում կա մի հատիկ, մեր գրականության մեջ դեռևս չպատահած սրտառույզ ու շատ ազդու նախադասություն (12-րդ քառյակը – Ա. Ձ.). ահա նա.–

Երազումըս մի մաքի
Մոտըս եկավ հարցմունքի,
Աստված պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ձագի ...

Հեղինակը կարող է պարծենալ, որ այդ քառյակով շատ հաջող բողոք է բարձրացնում կենդանիներ մորթելու սովորության դեմ, այսինքն քարոզում է վեգետարիական (բանջարակերական) փիլիսոփայություն: Ի դեպ, այդ օրերին Թումանյանի «Քառյակների» մասին հետաքրքիր դիտարկումներով հանդես է եկել Վ. Ահարոնյանը [«Հառաջ» (Երևան), 18.III.1920]:

անձուկ շրջանից և միտք հոգնեցնել տիեզերական երևույթների վրա: Բնությունը իր անողոք օրենքներով, մարդը բնության մեջ, մարդը մարդու կողքին – ահա հարցեր, որոնք մարդկային ցեղի պատմության սկզբից իրանց վրա են բևեռել բոլոր հեռաթափանց մտածողների միտքը և մնացել համարյա թե կուսական վիճակում: Մարդիկ եկել ու անցել են: Աշխարհը մնացել է նույնը: Եվ բանաստեղծը արձանագրում է այդ դրությունը հետևյալ քառյակում:

Հին աշխարհը ամեն օր
 Հազար մարդ է մըտնում նոր,
 Հազար տարվան փորձն ու գործ
 Ըսկըսվում է ամեն օր:

Այս հավիտենական միշտ հին ու միշտ նոր երևույթի հանդեպ բանաստեղծի իմացությունը շվարում է, անգամ արևելյան գունավորում ստանում, ունայնություն համարելով աշխարհը, որը «ոչում ոչ մընացել է, ոչ էլ կըմընա» ...

Հասնելով իր իմացությամբ այն եզրին, որ մարդը «հազար դարում հագիվ դառավ Մարդասպան», այսինքն հրաժարվեց մարդակերությունից և միայն սպանությունը համարեց իրան պատշաճ գործ, որ այժմ էլ «արնոտ ձեռքերով» նա հեռու է իր զարգացման վերջին փուլից – բանաստեղծը համակվում է խորին թախիժով և նկարում խաղաղավետ գրչով կյանքի այլանդակ ու տխուր կծկումները, մարդկանց թողնելով տեսնելու իրանց ձեռքի գործը, իրանց ոչնչությունը և տապակվելու անել կացության ոլորտում:

Երազումըս մի մաքի
 Մոտըս եկավ հարցմունքի
 Աստված պահի քո որդին,
 Ո՞նց էր համը իմ ծագի...

Ահա գոյության կռվի մի այլանդակ էջը: Փխրուն սիրտը չէ, որ ստիպել է բանաստեղծին խոսեցնել տալ մաքիին, այլ բնության անողոք դեմքը:

Երկու շիրիմ իրար կից՝
 Հավերժական լուռ դըրկից,
 Թախձում են պաղ ու խորհում
 Թե՛ ի՞նչ տարան աշխարհից:

Հող էիր ու հող դառնա՛ս, այս դաժան պատգամն է գալիս մարդու միտքը, երբ կարդում է բանաստեղծի քառյակը:

Եվ դարձյալ նույն ահեղ ու անողոք բնությունը և նույն խղճուկ ու թույլ մարդը: Կա նրա գլխին կախված բնության արհավիրքը, նա անզոր է խուսափելու բնության շոշափուկներից և այդ միևնույն ժամանակ ծվատում է իր և իր նմանների սիրտը:

Լինե՛ր հեռու մի անկյուն,
 Լինե՛ր մանկան արդար քուն,
 Երագի մեջ երջանիկ,
 Հաշտ ու խաղաղ մարդկություն:

Ո՞ր է այդ երանելի վիճակը: Բանաստեղծը միայն թախծում է այդ մասին, իսկ մարդը արնոտ ձեռքերով դեռ մաշում է մարդասպանության շրջանը:

Իմացության թախիժով բեռնավորված բանաստեղծը երկնքում չի փնտրում փրկության ու կատարելագործման միջոցները: Մարդն է դարձյալ, որ դժոխքի փոխարեն կարող է դրախտի հիմքը դնել հարազատ երամակի համար: Եվ բանաստեղծը դիմում է մարդու իմացության.

Է՛յ անխելք մարդ, երբ տի թողնես ապրողն ապրի սրտալի,
 Երբ տի ապրես ու վայելես էս աշխարքը շեն ու լի:

Այն ժամանակ, երբ անխելքը խելք մթերե, իսկ սա փորձությունների, գործնականի դժվար ուղին է, ուր մարդը հազարավոր դարերում է մարդակերությունից հասնում մարդասպանության: Այդ դժվար ուղին արյունվա է դարձնում ընտրյալների հոգին, մարգարեական շունչ է հաղորդում նրանց խոսքին, իսկ սովորական էակաները ունկնդրում են ընտրյալներին և ընկնելով ու բարձրանալով ընթանում կատարելագործման շավղով: Այսպիսով «հազար տարվա փորձն ու գործը» կրկնվում է ամեն օր:

Ընտրյալը, ներկա դեպքում բանաստեղծ Հովի. Թումանյանը, զգում է մարդկության չզգացածը և նրան կոչում դեպի կատարելագործում: Ճանաչիր շրջապատդ, ինքդ քեզ և քո ձեռքերի գործը, ասում է նա մարդուն, ճանաչի՛ր և կտեսնես, որ աշխարհը ոչ ոքի չի մնացել և պետք չկա այլանդակել փոխադարձ ինքնասպառումով նրա «շեն ու լի» հարկը:

Երանի՛ նրանց, որոնք հասել են իմացության այս կատարին և խաղաղավետ հոգով դիտում են մարդու արարքները, դիտում, թախծում և աղոթում...

Գ. Անանուն

«Հայաստանի կոոպերացիա» (Երևան), № 4, փետրվարի 29, 1920, էջ 126–128:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՈՄԻՏԱՍԱԿԱՆ [ժողովածու], հ. 3, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
հրատ., 2019, 267 էջ, 16 էջ նկար, նոտա:



Կոմիտասագիտության ասպարեզում ծանրակշիռ ներդրում ունեցող ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության հետ մեկտեղ (1960-2006), իրականացրել է հայ մեծ երաժշտի ժառանգության առանձին հարցերին նվիրված գիտական ուսումնասիրությունների հրապարակումը՝ «Կոմիտասական» խորագրով ժողովածուի երկու հատորներով (1969, 1981):

1969 թվականին՝ Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանի առթիվ, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչությունը լույս ընծայեց «Կոմիտասականի» առաջին հատորը, որի խմբագիրն էր Ռոբերտ Աթայանը:

Հատորը, որի խմբագրական կոլեգիայի կազմում էին Ռոբերտ Աթայանը, Գևորգ Գյոդակյանը, Նիկողոս Թահմիզյանը, Լևոն Հախվերդյանը և Մաթևոս Մուրադյանը, ընդգրկում էր Կոմիտասի երաժշտական ու գիտական աշխատանքների, ստեղծագործական ոճի և ստեղծագործությունների մեկնաբանության գերազանցապես տեսական ուսումնասիրություններ և հուշեր:

Նախատեսվում էր, որ նման հատորներ, նյութերի և հեղինակների ավելի լայն ընդգրկումով, պարբերաբար պիտի հրատարակվեին նաև ապագայում:

1981-ին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչությունը հրատարակեց «Կոմիտասականի» երկրորդ հատորը, որտեղ ընդգրկված էին Կոմիտասի կյանքի, գործունեության և ստեղծագործական հարցերին նվիրված հոդվածներ և ուսումնասիրություններ, ինչպես նաև Կոմիտասի ձեռագիր ժառանգության հրապարակումներ՝ «Անուշ» օպերայից և 1893 թ. հոգևոր երգերի ժողովածուից:

2019-ին լրացավ Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտն այդ տարեդարձը նշանավորեց ինչպես Մոսկվայում և Երևանում գումարված գիտական նստաշրջաններով, այնպես էլ «Կոմիտասականի» երրորդ հատորի հրատարակմամբ (գլխավոր խմբագիր՝ Աննա Ասատրյան):

Վաղուց սպասված հատորը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ ԳԱԱ հայագիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ, ինչի համար իմ խորին երախտագիտությունն են հայտնում Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին և անձամբ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանին:

Ի տարբերություն նախորդ հատորների՝ գրախոսվող ժողովածուն ունի միջգիտակարգային բնույթ և համախմբել է ինչպես երաժշտագիտության, այնպես էլ կերպարվեստագիտության, գրականագիտության և բալետագիտության ոլորտների առաջատար 14 մասնագետների:

Հատորում ընդգրկված հոդվածները և ուսումնասիրությունները, ինչպես և նախորդ հատորներում են, նվիրված են Կոմիտասի կյանքին, ստեղծագործությանը, երաժշտագիտական հետազոտություններին ու քանահավաքչական գործունեությունը: Սակայն ներկա հատորում հայ կոմիտասագիտության մեջ առաջին անգամ քննության առարկա է դարձել նաև Կոմիտասի կերպարի բացահայտումը հայ կերպարվեստում, երաժշտության և գրականության մեջ:

Կոմիտասականի գրախոսվող հատորը բացվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղայանի (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ) «Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» ուսումնասիրությամբ (էջ 7-24, 1 մամուլ նկար), որը հիմք դարձավ համանուն եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատկերագրքի ստեղծման համար: Գաղտնիք չէ, որ հայ մշակույթում բացառիկ տեղ ունի Կոմիտասի կերպարը: Կոմիտասի կերպարին են անդրադարձել հայ նկարիչներից ու քանդակագործներից շատերը կերպարվեստի տարբեր տեսակներում ու ժանրերում: Եվ Ա. Աղայանը հայ արվեստաբանության մեջ առաջին անգամ նման ընդգրկումով համակողմանիորեն ուսումնասիրել ու լայնորեն ներկայացրել է Կոմիտասի կերպարը հայ նկարիչների և քանդակագործների ստեղծագործության մեջ:

Գրախոսվող ժողովածուի առանցքում, բնականաբար, երաժշտագիտական ուսումնասիրություններն են:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ) «Արշակ Չոպանյանը Կոմիտասի ստեղծագործական ճակատագրում» ծավալուն հետազոտության մեջ (էջ 25-61), թերթելով Կոմիտասի և Ա. Չոպանյանի անձնական և ստեղծագործական շփումների էջերը, բացահայտել է այն մեծ ու նշանակալի դերը, որ ունեցել է հայ մեծանուն գործիչը հանճարեղ Կոմիտասի ստեղծագործական ճակատագրում, ինչպես նաև ձևակերպել Ա. Չոպանյանի ներդրումը կոմիտասագիտության մեջ: Ա. Չոպանյանը բարձր է գնահատել Կոմիտասի տաղանդն ու նրա կատարած գործը, իր հոդվածներով արժևորել է Կոմիտասի գործունեությունը և նպաստել նրա ստեղծագործության պրոպագանդմանը: «Անահիտ» հանդեսի էջերում Ա. Չո-

պանյանը, մի կողմից ներկայացրել է Փարիզում և Ժնևում Կոմիտասի ծավալած համերգային գործունեության լիարժեք համայնապատկերը, տպագրել տարբեր երաժիշտների կողմից Կոմիտասին նվիրված հոդվածներն ու գնահատականները, էջեր հատկացրել հուշագրություններին, մյուս կողմից հրատարակել Կոմիտասի երաժշտագիտական ուսումնասիրությունները և ինքնակենսագրությունը:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Արևշատյանը (<< ԳԱԱ արվեստի ինստիտուտ) «Կոմիտաս վարդապետ և Գրիգոր Գապասաքալյան. խազագիտական առնչություններ» ուսումնասիրության մեջ (էջ 62-76) արտահայտում է այն միտքը, որ Կոմիտասի խազագիտական արժեքավոր հետազոտությունների սևագրերի մեջ առյուծի բաժինը կազմում են Կոստանդնուպոլսում գործած՝ Նոր Ժամանակի ազգային երաժշտագիտական մտքի ակունքներում կանգնած երաժիշտ-տեսաբան Գրիգոր Գապասաքալյանի աշխատությունների հղումները, դրանցից արված մեջբերումները և համեմատությունները: «<Ետևաբար,- եզրակացնում է Ա.Արևշատյանը,- Գապասաքալյանի աշխատությունները եղել են Կոմիտասի սեղանի գրքերը, որոնք իբրև միջնադարյան երաժշտական գիտական և գործնական տեսության հանրագիտարան, մշտապես ուղղորդել են նրան իր խազագիտական հետազոտությունների ընթացքում» (էջ 76):

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Անահիտ Բաղդասարյանը (<< ԳԱԱ արվեստի ինստիտուտ) «Հնչյունի իմիտացիան Կոմիտաս վարդապետի ստեղծագործություններում» հետազոտության մեջ (էջ 77-90) բացահայտել է, որ «կոմիտասյան կետային նմանակումները թե՛ կետայնությամբ, թե՛ հարմունիկ՝ կվարտ-կվինտ-օկտավային կառուցվածքով, թե՛ մեղեդիական շարադրանքով, նաև հնչյունագրությամբ որոշակի աղերսներ ունեն XIX և հատկապես XX դարի կոմպոզիտորական արվեստի տարբեր ուղղությունների հետ (պուանտիլիզմ, դողեկաֆոնիա, գծայնություն, սոնորիկա), ավելին՝ դրանով իսկ հաճախ կանխում են XX դարի եվրոպական երաժշտության ինչ-ինչ երևույթներ» (էջ 90):

Գրախոսվող ժողովածուում տեղ են գտել հետազոտություններ, որոնք ևս մեկ անգամ փաստում են Կոմիտասի միջազգային ճանաչման մասին:

1909 թվականին ֆրանսիացի արևելագետ-հայագետ Ֆրեդերիկ Մակլերն այցելել է Էջմիածին, անձամբ ծանոթացել Կոմիտասի հետ և նրա մասին բացառիկ հուշեր թողել իր ճամփորդական ուղեգրության մեջ, ինչպես նաև «Երաժշտությունը Հայաստանում» արժեքավոր գրքույկում: << ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը (Իս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան) «Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը Կոմիտասի մասին» ուսումնասիրության մեջ (էջ 91-101) գիտական շրջանառության մեջ դրեց Մակլերի՝ Կոմիտասի անձին ու գործին տված գնահատականները, որոնք «կոմիտասագիտության համար մշտապես արդիական են»:

Կոմիտասի կերպարը խթանել է հայ գրականության առաջընթացը ևս: Նրան են նվիրվել բազմաթիվ չափածո և արձակ ստեղծագործություններ, որոնց մեջ բացառիկ տեղ են գրավում Պարոյր Սևակի «Անլռելի զանգակատուն» ու Եղիշե Չարենցի “Requiem Aeternam” պոեմները: Նշենք նաև Գուրգեն Մահարու «Երգ Կոմիտասին», Նաիրի Չարյանի «Կոմիտասին», Վահրամ Ալազանի «Գազել Կոմիտասին», Հովհաննես Շիրազի «Բեյթ՝ Կոմիտասին», Համո Սահյանի «Կոմիտասին», Ազատ Վշտունու «Կոմիտասին», Գեղամ Սարյանի «Դեպի կառափնարան», Վահագն Դավթյանի «Կոմիտաս» և այլ չափածո երկեր: Կոմիտասի կերպարը ներշնչանքի աղբյուր է դարձել նաև օտարազգի բանաստեղծների համար՝ Արսենի Տարկովսկի, Պավլո Տիչինա, Կայսին Կուլին... Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ազատ Եղիազարյանը (Ռուսահայկական (Սլավոնական) համալսարան) «Կոմիտասի կերպարը Եղիշե Չարենցի և Պարոյր Սևակի պոեմներում» հետազոտության մեջ (էջ 102-111) կոմիտասագիտության մեջ առաջին անգամ քննության է առել հայ նորագույն գրականության մեջ Կոմիտասի մասին գրված պոեմները, բացահայտել դրանց յուրահատկություններն ու տարբերությունները, որոնք պայմանավորված են ոչ միայն ժամանակով, այլև հեղինակների անհատականությամբ:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանը (<< ԳԱԱ արվեստի ինստիտուտ) «Բազմալեզվությունը և ինքնությունը հայ աշուղական ավանդույթում՝ Կոմիտասի դրոյթների լույսի ներքո» ծավալուն ուսումնասիրության մեջ (էջ 112-141) քննության է առել հայ ազգային երաժշտական ինքնության կոմիտասյան հարացույցը, որը, հեղինակի դիտարկմամբ, համահունչ ժամանակի գաղափարախոսությանը, անհամատեղելի էր տարբեր արևելյան լեզուներով ստեղծագործող աշուղների գործունեության հետ: «Կոմիտասի առաջնային գիտահետազոտական խնդիրները չեն սահմանափակել նրա ստեղծագործական հետաքրքրությունների լայն տեսադաշտը,- նկատում է երաժշտագետը,- որտեղ, բացի գեղջուկ և հոգևոր երաժշտությունից, ընդգրկված են միջնադարյան գուսանական, աշուղական և քաղաքային ժողովրդական երաժշտության նմուշները: Կոմիտասի երաժշտաբեմական մտահղացումների՝ «Վարդան», «Քաղաքավարության վնասները», «Սասնա Ծռեր» «Անուշ», ժանրային-թեմատիկ ուրվագծերում տեղ գտած անվանի աշուղներ Շիրինի, Ջիվանու հանրահայտ երգերն ու այլ բնութագրական օրինակներ յուրովի նախանշել են հայ կոմպոզիտորական արվեստում դրանց բեղմնավոր կիրառությունների բազմահուն ուղին» (էջ 141):

Բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանը (<< ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես») «Թոմաս Հարտմանը «Կոմիտասի անվան ընկերության» ստեղծման ակունքներում» հետազոտության մեջ (էջ 142-150) լուսաբանել է ռուս կոմպոզիտոր և դիրիժոր Թ. Հարտմանի դերը 1919թ. մայիսի սկզբին Թիֆլիսում հիմնված «Կոմիտասի անվան ընկերության» ստեղծման գործում, որի համար խթան դարձան ռուս երաժշտի «Կոմիտաս Վարդապետ» հոդվածը և Կոմիտասի մասին նրա դասախոսությունը:

Բանասիրական գիտությունների դոկտոր Սուսաննա Հովհաննիսյանը (ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ) «Կոմիտասը թումանյանական վավերագրերում» ուսումնասիրության (էջ 151-164) ներկայացրել է Կոմիտասի ստեղծագործության, նրա կյանքի և, մասնավորապես, Թումանյանի հետ բարեկամության մասին ուշագրավ և նորահայտ փաստեր, որոնք պահպանվել են թումանյանական վավերագրերում՝ բանաստեղծի և նրա մասին հոդվածներում, գրած և ստացած նամակներում, հուշերում, լուսանկարի ընծայագրում, բանաստեղծի ընտանիքի անդամների արխիվներում, պարբերական մամուլի էջերում և այլն:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Միեր Նավոյանը (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ) «Կոմիտասի երաժշտատեսական երկու հիմնադրույթ (ընդհանուր բնութագիր)» հետազոտության մեջ (էջ 165-188) նկատել է, որ «Կոմիտասի երաժշտագիտական գործունեության մեջ զուտ երաժշտատեսական հետազոտություններն ու դիտարկումները խիստ կարևոր նշանակություն ունեն նրա ողջ ժառանգությունն արժևորելիս: Այլ խոսքով՝ «Կոմիտաս տեսաբանն» էր, որ մեծ չափով պայմանավորեց «Կոմիտաս կոմպոզիտորի» երաժշտական լեզվամտածողության բացառիկ ինքնատիպությունը և առհասարակ «Կոմիտաս երկույթի» պատմական եզակիությունը հայ մշակութային իրականության մեջ» (էջ 165):

Ինչպես հայտնի է, Կոմիտասի բազմաճյուղ գործունեության ինքնատիպ դրսևորումներից են հայոց «Սասնա ծռեր» էպոսի երաժշտական բաղադրիչի կարևորումն ու գրառումը: Արվեստագիտության թեկնածու Տաթևիկ Շախկոյանը (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ) «Կոմիտասը և «Սասնա ծռեր» էպոսի երգերը» ուսումնասիրության մեջ (էջ 189-205) հիմնավորում է, որ հայոց էպոսի երգերի գրառման ավանդույթի հիմքը դրել է Կոմիտասը: «Ընդ որում, նկատում է հեղինակը, նա դրանք էականորեն է կարևորել, ինչը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ նա ծրագրել էր իրականացնել «Սասնա ծռեր» էպոսի վրա հիմնված օպերային ստեղծագործություն, ինչի վկայությունն են արխիվային ձեռագրերը» (էջ 205):

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյանը (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա) «Կոմիտաս վարդապետը և հայ կոմպոզիտորական դպրոցը» հետազոտության մեջ (էջ 206-226) արձանագրում է, որ «Կոմիտասն իմաստավորեց ժողովրդական երաժշտության օրինաչափությունները, կոմիտասյան ավանդույթների վրա խարսխվեցին հայ կոմպոզիտորական դպրոցն ու երաժշտատեսական միտքը: Ստեղծագործական այն սկզբունքները, որ նախանշեց Կոմիտաս Վարդապետը, արդիական են այսօր, և կլինեն նաև ապագայում» (էջ 225):

Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» ու Եղիշե Չարենցի “Requiem Aeternam” պոեմների հիման վրա 50 տարի առաջ՝ 1969 թ. կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը գրեց «Անտունի» բալետը, որի լիբրետոն կազմել էր բալետի արտիստ և բալետմայստեր Մաքսիմ Մարտիրոսյանը: Բալետի պրեմիե-

րան տեղի ունեցավ 1969թ. նոյեմբերի 20-ին Երևանի օպերային թատրոնում Մաքսիմ Մարտիրոսյանի բեմադրությամբ: Արվեստագիտության դոկտոր Նազենիկ Սարգսյանը (<< ԳԱԱ արվեստի ինստիտուտ) ««Անտունի»» առաջին բալետը Կոմիտաս վարդապետի և Մեծ եղեռնի մասին» ուսումնասիրության մեջ (էջ 227-244) բալետի՝ բալետմայստեր Մ. Մարտիրոսյանի բեմադրության տեսագրության (1988) և Մ. Մարտիրոսյանի ձեռագիր սցենարի տեքստի մանրազնին հետազոտության հիման վրա հայ բալետագիտության մեջ առաջին անգամ բացահայտել է բալետի ժանրային, ոճական, կառուցվածքային և մի շարք այլ առանձնահատկություններ և հիմնավորել, որ «Անտունիի» բեմադրությունը հայ բալետի պատմության մեջ չունի իր նմանակը ո՛չ նախկինում, ո՛չ էլ հետագայում՝ մինչև այսօր: Եվ ոչ միայն ուրիշ հայ բալետմայստերների, այլև իր իսկ՝ Մաքսիմ Մարտիրոսյանի ստեղծած վառ ու տաղանդավոր բեմադրությունների շարքում (էջ 229):


Արվեստագիտության թեկնածու Մարիաննա Տիգրանյանը (<< ԳԱԱ արվեստի ինստիտուտ) «Հարսանեկան օժիտի երգերը Կոմիտասի գրառումներում» հետազոտության մեջ (էջ 245-265) քննության առնելով կոմիտասյան հինգ նմուշները, եզրակացնում է, որ օժիտի խաղիկների ուսումնասիրված հինգ նոտային օրինակներն այն հատուկենտ պահպանված արժեքավոր նմուշներից են, որոնք մոտավոր պատկերացում են տալիս այդ հնամենի սովորույթի մասին և ավանդական հայկական հարսանեկան ծեսի երբեմնի ճոխության վկայությունն են:

«Կոմիտասական» ժողովածուն, անշուշտ, ծանրակշիռ ներդրում է հայ երաժշտագիտության մեջ և արտացոլում է կոմիտասագիտության արդի փուլը: Մինևույն ժամանակ, այն կապում է 1981 թվականին խզված՝ կոմիտասականների շղթան և շարունակում << ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական արժեքավոր ավանդույթներից ևս մեկը: Վստահ ենք, որ «Կոմիտասականի» չորրորդ հատորը շատ չի ուշանա:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՅԱՆ, Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, 49 էջ+38 էջ նկար:



Իր ծագման ու ձևավորման սկզբից ևեթ մարդկությունն ունեցել է և ունի խորհրդանշային մտածողություն: Ձևափոխված ու քողարկված խորհրդանիշներն ամենուր են՝ ժայռապատկերներում, պարի շարժումներում, նկարների գույներում, բանաստեղծությունների տողամիջում, ազգային ավանդույթներում, կրոնական ծեսերում, մինչև իսկ կենցաղային սովորույթներում: Մենք խորհրդանշի ենք վերածել այն, ինչ չենք կարողացել բացատրել, խորհրդանշի ներքո ենք թաքցրել այն, ինչ չենք ցանկացել բարձրաձայնել: Պատմության քառուղիներում մենք խորհրդանիշեր ենք ընտրում, որ ճանաչելի և նշանակալի դարձնենք ինքներս մեզ, մեր տոհմը, մեր ազգը, մեր պետությունը:

Իսկ երբեմն էլ սիմվոլներ ծնվում են:

Կոմիտասը հայ ժողովրդի համար ավելին է քան երգահանը, բանահավաքը, մանկավարժը կամ հետազոտողը: Նա մեր պատմության, մշակույթի և հոգեկերտվածքի խորհրդանիշն է: Իր ազգի նման ստեղծարար ու պրպտուն Կոմիտասը նույնպես մասնակից էր իր ժողովրդի մեծ դժբախտությանը: Հայության խեղաթուրված ճակատագիրը մեկընդմիջտ կտրեց Կոմիտասի ստեղծագործ ջիլը: Բայց այն, ինչ արդեն հասցրել էր անել Մեծ հայրը հավերժացրեց նրան մեր պատմության էջերում: Կոմիտասի կերպարը դրոշմվեց մեր ազգային հիշողության մեջ, դարձավ խորհրդանիշ և արարման ուժ տվեց հայ գրողներից, կոմպոզիտորներից, նկարիչներից և քանդակագործներից շատերին:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Արարատ Աղայանի «Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» գիրքը մեկտեղում է այն հայ արվեստագետներին, որոնք իրենց ստեղծագործության մեջ անդրադարձել են կոմպոզիտորի կերպարին: Գիրքը հրատարակվել է Կոմիտասի 150-ամյակի առթիվ՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ:

Նման պատկերագրքի կազմումը, հիրավի, դժվարին աշխատանք է, քանզի նախ և առաջ հեղինակին կանգնեցնում է բարդ ընտրության առջև՝ ի՞նչ ստեղծագործություններ ներառել և ինչպե՞ս հակիրճ ու միաժամանակ ընդգրկուն ներկայացնել ընտրված աշխատանքները: Այս հարցի լուծումն Արարատ Աղասյանը գտել է՝ գրքում տեղ հատկացնելով այն գործերին, որոնք առանձնանում են թե՛ գեղարվեստական արժանիքներով, թե՛ պատմամշակութային և վավերագրական նշանակությամբ: Գիրքը բացվում է խմբագրական մուտքով, որտեղ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը հաջողում է ամփոփ և բազմակողմանիորեն ներկայացնել Կոմիտասին, ինչպես նկարիչը ճեպանկար ստեղծելիս պատկերում է միայն ընդհանրական և ամենաբնորոշ գծերը, որոնք փոխանցում են գլխավորը: Պատկերագրքում ամփոփված 60 ստեղծագործությունները, չնայած նույնական թեմատիկ առանցքին՝ Կոմիտասի կերպարի ներկայացմանը, միաժամանակ, մեկը մյուսից խիստ տարբեր են թե՛ ժանրով ու ոճով, թե՛ կատարման եղանակով ու տեխնիկայով: Բնականաբար, հեղինակային համառոտ առաջաբանում հնարավոր չէր մանրամասն վերլուծության ենթարկել ներկայացված բոլոր աշխատանքները, ինչն իր խոսքում արձանագրում է Արարատ Աղասյանը: Մինևույն ժամանակ, հեղինակը, կոնկրետ շեշտադրումների միջոցով, մատուցվող նյութում տալիս է ճշգրիտ պատկերացում ներկայացվող ստեղծագործությունների մասին: Որոշ դեպքերում արվեստաբանը բարձրացնում է նաև հստակ հարցեր, ինչպես, օրինակ, Արմեն Չիլինգարյանի «Կոմիտասի թաղումը» էտյուդի թվագրման ճշգրտության խնդիրը կամ Հատիկ Գրիգորյանի գծանկարի թվագրման առաջարկը:

Պատկերագիրքն ինքնին ուշագրավ է նաև նրանով, որ այստեղ ներառված են ինչպես քաջաձանոթ գործեր, այնպես էլ քիչ հայտնի ստեղծագործություններ: Այսպես, օրինակ, եթե Սարգիս Մուրադյանի «Վերջին գիշերը: Կոմիտաս» կտավը լայն ճանաչում ունի՝ ընդգրկվելով նույնիսկ դպրոցական դասագրքերում, ապա Կարապետ Գյուլչակյանի (Գերաս) «Կոմիտասը» գրեթե անհայտ է նույնիսկ մասնագետների շրջանում: Նյութի ընտրության նման մոտեցումը նաև նոր հորիզոն է բացում հետագա ուսումնասիրողների համար:

Քանդակագործների ստեղծագործություններին անդրադարձն ընդգրկում է նաև Կոմիտասի՝ Հայաստանի սահմաններից դուրս՝ Դետրոյթում (հեղինակ՝ Արտո Չաքմաքչյան), Փարիզում (դիմաքանդակի հեղինակ՝ Արշավիր Եղիազարյան, մեծադիր արձանի հեղինակ՝ Դավիթ Երևանցի), Բվեբեկում (հեղինակ՝ Սամվել Լազարյան), Սանկտ Պետերբուրգում (հեղինակ՝ Լևոն Բեյբության) գտնվող հուշարձանները:

Պատկերագրքի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այն ամբողջությամբ եռալեզու է (հայերեն, ռուսերեն, անգլերեն): Սա զգալիորեն մեծացնում է ընթերցողների շրջանակը՝ գիրքն արժեքավոր դարձնելով ինչպես Հայաստանի ու սփյուռքի հետազոտողների և արվեստասեր հանրության համար, այնպես էլ ռուսալեզու և անգլախոս ուսումնասիրողների համար:

Ինչամբով ու հոգածությամբ կազմված այս պատկերագիրքը յուրօրինակ երախտիքի խոսք է հայ մշակույթի մեծ նվիրյալ Կոմիտասին:

ՄԱՆԵ ՄԿՐՏՉԱՆ

Արվեստագիտության թեկնածու

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՄԻՀՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, «ՎԻՇԱՊ» ՔԱՐԱԿՈԹՈՂՆԵՐԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԵՄԵՆՈՍՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Միհրականությունը Հին Աշխարհի կարևոր կրոնական ուղղություններից մեկն էր: Ձևավորվելով մի կողմից հնագույն պաշտամունքային հավատալիքների, գրադաշտական ուսմունքի, սեմական բնագանցության և հունական ռացիոնալիստական իմաստասիրության միաձուլման հետևանքով՝ այն աստիճանաբար սերտաճեց հելլենիստական դարաշրջանի ամենաարդիական և տիեզերական կրոնական համակարգին: Միհրականությունը բացառիկ նշանակություն ունեցավ Հին Հայաստանում, և պատահական չէ, որ այն ուղղակիորեն արտացոլվել է հայկական հիշողության շերտագրության մեջ:

Այս իմաստով բնական է, որ միհրականության վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ հետազոտություններ, որոնք ամփոփված են նաև հայերենով (հմմտ. Ե. Մարգարյանի 2014 թ. Երևանում լույս տեսած «Միհրականությունը հին աշխարհի քաղաքական և կրոնահոգևոր համակարգում. Կոմմազենե, Հայաստան, Հռոմ» գիրքը): Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ խնդիրները, որոնք վերաբերում են այս կրոնական ուղղությանը, ամենևին էլ չեն սպառվել: Նման խնդիրներից հատկապես կարևոր է համեմատաբար քիչ ուսումնասիրված միհրականության առաջացման և դրա սկզբնական դրսևորումների հարցը, որի պատասխանն անհրաժեշտ է փնտրել մի կողմից՝ հնագույն գրավոր և հնագիտական աղբյուրներում, մյուս կողմից էլ՝ ժողովրդական հիշողության մեջ: Ահա խնդիրների այս վերջին ոլորտին է նվիրված Գագիկ Մարտոյանի «Ժողովրդական միհրապաշտությունը և գարնանային տարեմուտը «Սասնա ծռեր»-ում» աշխատանքը (Երևան, «Վան Արյան» հրատ., 2018, 239 էջ), որն էլ այս ակնարկի հիմնական առարկան է: Այս աշխատանքում, միհրապաշտության համատեքստում, հեղինակը քննարկում է հայկական բանագիտությանը, ազգագրությանը և տոմարագիտությանը վերաբերող բազմաթիվ հարցեր: Այդ քննարկումների մեջ կարմիր թելի նման անցնում է հայկական վիշապի կերպարը, որն արտացոլված է ինչպես էպոսում, այնպես էլ հեքիաթում, բայց նաև հնագիտական նյութերում՝ հանձին հնագույն Հայաստանի կարևոր կոթողային հուշարձան վիշապաքարի: Ահա այս վերջին տեսանկյունից էլ կփորձենք ստորև վերլուծել աշխատանքը:

Մինչ բուն քննարկմանն անցնելը նշենք, որ Միհրի պաշտամունքի տեսանկյունից վիշապներին նախկինում անդրադարձել են Կ. Մելիք-Օհանջանյանը, Թ. Ավդալբեգյանը, Ֆ. Հասարը: Բուն վիշապաքարերը՝ Միհրի և ցլի պաշտամունքի ու պատկերագրության, ինչպես նաև քարից ծնվող հերոսի առասպելային հայացքով մասամբ քննարկել են Հ. Հակոբյանը, Ա. Պետրոսյանը, Լ. Աբրահամյանը: Գ. Մարտոյանի մոտեցման առանձնահատկությունը և նո-

րությունն այն է, որ, փաստորեն, Աստղիկից (Մ. Աբեղյան), Անահիտից (Ատրպետ) և Արայից (Գր. Ղափանցյան) բացի, նաև Միհրն է շեշտվում վիշապաքարերի բնույթի մեկնության համատեքստում:

Ըստ հայտնի տվյալների՝ Միհրը ծնվում է քարից կամ, դաշույնը և ջահը ձեռքին, առանձնանում քարից. դա տեսնում են լեռան վրա թաքնված հովիվները: Ցույը շրջում է լեռնային մարգագետիններում (Միհրը մեծ արոտավայրերի տեր է), Միհրը բռնում է նրա կոտոշներից և ցատկում վրան: Հետո նա դաշույնով սպանում է ցլին. ցլի ողնուղեղից առաջանում է ցորենը/բուսականությունը, արյունից՝ գինին: Ցլի սպանությունը պիտի կրկնվի դարերի վերջում ու առաջ բերի նոր համաշխարհային կարգ: Միհրը առաջինն է նստել լեռների գագաթների վրա, որտեղ կան խոր լճեր, և որտեղից նա վերահսկում է ստորին աշխարհը (Միհրը կապված է նախնական ջրերի հետ): Միհրի կացարանը Հարա լեռն է: Հոգիները ևս հոծ բազմությամբ բնակվում են բարձր լեռներում: Ահա ցլասպան Միհրի հիշյալ հատկանիշները, Ք.ա. III հազ. վերջից սկսած, արտացոլված են հնագիտական նյութերում, որոնց թվում են վիշապաքարերը (էջ 38-39, 55-57, 176, 220): Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ վիշապաքարերի վրա պատկերված զոհաբերված ցլի և նրա բերանից դուրս եկող ջրի պատկերի համեմատությունը սպանված ցլի ու նրա բերանից դուրս եկող ջրի միհրական պատկերագրության հետ հեղինակն արել է արդեն 2004 թ. Երևանում լույս տեսած իր մեկ այլ՝ «Հայոց դիցարանի գլխավոր եռյակը» գրքում (էջ 63):

Ըստ հեղինակի՝ վիշապաքարերի պատկերագրությունն ամբողջապես միտված է ձմռան և Ցլի նկատմամբ Արևի տարած հաղթանակի փառաբանմանը: Ելնելով այն ժողովրդական հավատալիքից, թե վիշապաքարերն ընկալվել են նաև որպես օղուզի = եզան/ցլի գերեզմաններ, հեղինակը գրում է, թե «սեղանատիպ» վիշապաքարը մի հուշասյուն է, որն առնչվում է եղանակային փոփոխությունների հետ: Հնարավոր է, որ դրանք եղանակների փոփոխության հետ բարձրացվել և իջեցվել են: Իջեցված վիճակում, սրբազան խնջույքների ժամանակ, վիշապաքարը կարող էր ծառայել և՛ որպես ցլի զոհասեղան, և՛ որպես ցլի միսը ճաշակելու համար նախատեսված սեղան: Այս իմաստով պատահական չէ Հայկական լեռնաշխարհում բազմաթիվ Սեղանասարերի առկայությունը, որոնք հիշվում են նաև «Սասնա ծռեր»-ում: Նման սեղաններ, որոնց վրա սպանված ցլի մարմինն էին ճաշակում, հայտնի են հռոմեական շրջանի միթրեոմներից (էջ 170-172):

Հեղինակը վիշապաքարերը չի համարում բարձրարվեստ գործեր և դրանց պատկերագրությունը համեմատում է միհրական տավրոքտոն պատկերների հետ, որոնք արտահայտում են բոլորին արդեն հայտնի խորհրդանիշը և մանրամասների կարիք չունեն: Վիշապաքարը առավելապես մոտենում է կոնցեպտուալիստական արվեստին, երբ երևույթը ճանաչելու համար կարևորվում է դրա խորհրդանիշը, քան բուն օբյեկտի ռեալականությունը: Տվյալ դեպքում ոչ թե ցլին մանրամասն պատկերելն է եղել քանդակագործի նպատակը,

այլ ցլագոհաբերման գաղափարը հուշելը, որից հետո մոտ կանգնած ծիսարարի մտապատկերում հառնել է ցլային դիցաբանության ողջ ընթացքը (էջ 168):

Ելնելով վերջին շրջանի հնագիտական հետազոտությունների և համապատասխան լանդշաֆտային վերակազմությունների արդյունքից՝ հեղինակը գրում է, թե վիշապաքարերի միջավայրը հուն. *տեմենուսի* տպավորություն է ստեղծում (բնակավայրերից և առօրյայից հեռու սրբազան տարածք, որտեղից կարելի է մի աշխարհից մյուսը ներթափանցել = axis mundi): Վիշապաքարերը նման սրբազան տարածքների կենտրոնում են գտնվում, ինչպես սուրբ մասունքը՝ տաճարում (=բնության մեջ): Նման տարածքները համեմատվում են միթրեոմների հետ, որոնք գտնվում էին լեռներում՝ քարայրների, ջրավազանների, աղբյուրների և առվակների մոտ, քանի որ ջուրը համապատասխան ծիսակատարությունների կարևոր բաղադրիչն էր (էջ 165-167):

Աշխատանքում Միհրը, վիշապի կերպարը և ընդհանրապես դիցաբանական երևույթները ներկայացվում են օրացուցային-տոմարական-օդերևութաբանական համատեքստում, որով ինչ-որ տեղ հեղինակը շարունակում է միջնադարյան հայ հեղինակների (հմմտ. Եզնիկ I. ԻԵ, Թովմա Արծրունի III. Ը, Թ) ոճը: Թեև «աստղաբաշխական մոտեցումը» աշխատանքում չափազանցված է, սակայն, ի տարբերություն աստեղային երկնքի տվյալները չարաշահող այլ՝ առավելապես սիրողական մակարդակի հեղինակների, Գ. Մարտոյանը համաձայնեցնում է իր տվյալները հնագիտական վերլուծությունների և թվագրությունների հետ և հաճախ ելնում դրանցից, որը մեթոդապես արդարացված է: Այսպես, վիշապաքարերի թվագրության վերաբերյալ, իր ստացած հաշվարկները համընկնում են հնագիտական վերջին տվյալների հետ, ըստ որոնց՝ դրանք վերաբերում են Ք.ա. III-II հազ. սահմանին (էջ 164, 168-169, 204-205): Հնագիտական տեսանկյունից այս ժամանակահատվածը կարևոր կլիմայական, տնտեսական, մշակութային, քաղաքական և աշխարհայացքային փոփոխությունների մի շրջան է, որն էլ ենթադրում է հեղինակը՝ ելնելով իր նյութից: Այստեղ կցանկանայինք նաև շեշտել, որ միհրականությունը հետազոտելիս աստղաբաշխական հենքի օգտագործումը ինչ-որ տեղ արդարացվում է, քանի որ այս ուսմունքում Կենդանակերպի մեկնությունները խաղացել են կարևորագույն դեր, իսկ միհրական սրբավայրերն էլ եղել են որոշակի աստղագուշակարաններ (այս մասին գրում է նաև Ե. Մարգարյանը հիշյալ աշխատանքում, էջ 154-168):

Նախահելլենիստական Հայաստանի հոգևոր մշակույթի երևույթները մեկնելիս միհրականության ընդգծումը, ինչպես նաև Հայաստանում գոյություն ունեցած յուրահատուկ/նախնական միհրականության առկայության մասին տեսակետ զարգացնելը, կարծում ենք, արդարացված է ոչ միայն այն պատճառով, որ քարից ծնվող վիշապային աստվածության մոտիվի նախնական տարբերակը, ինչպես գրում է հայտնի գերմանացի խեթագետ Ֆ. Հասսը, «ձևավորվել է Ք. ա. II հազ. սկզբներին Վանա լճի և Կովկասի միջև ընկած շրջանում» (Hethitische Berggötter und hurritische Steindämonen, Mainz am Rhein,

1982, S. 213), իսկ ըստ հելլենիստական ավանդության՝ Հայաստանը համարվել է Միհրի հայտնության (էպիֆանեայի) վայրը, այլև այն պատճառով, որ Հայաստանում և նրա անմիջական հարևանությամբ առկա են միհրականության ոճի պատկերացումների գոյության անընդհատական տվյալներ: Օրինակ, ակնհայտ է միհրականության որոշակի առկայություն ուրարտական միջավայրում և նույնիսկ դրանից առաջ. հիշենք, որ Միհրի հնագույն վկայությունը Միթրաշիլ ձևով հանդիպում է Ք. ա. XIV դ. խեթա-խուդիական արքայական պայմանագրում՝ միտանիական-հնդիրանական այլ աստվածությունների անունների հետ մեկտեղ, ինչպես նաև Ալալախի, Նուզիի, Բողազքոյի թեոֆոր անվանաբանության մեջ (Ե. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 138-144):

Այս տեսանկյունից վիշապաքարերի առնչումը միհրականությանը ավելի է հնացնում այդ ուսմունքի նախնական ձևերի գոյության հնարավորությունը: Հաշվի առնելով Միհրի քարածնության և ցլասպանության մոտիվները, նրա՝ բարձր լեռների և լեռնային մարգագետինների ու լճերի հետ առնչության հանգամանքը, հիրավի չի բացառվում, որ սինկրետիկ պաշտամունքների հետ առնչվող վիշապաքարերը, ի թիվս այլոց, կարող են կապված լինել նաև նախամիհրական կրոնական ընկալումների հետ:

Կարծում ենք, հեղինակը ճիշտ է արել վիշապային լանդշաֆտների և տեմենոսների համեմատությունը: Հայկական սրբավայրերի մասին խոսելիս Ե. Մարգարյանը նույն աշխատության մեջ (էջ 138-140) իրավամբ նկատել է, որ դրանք նման էին հին ճապոնական սինթո սրբատեղիներին, որոնք աստվածների և բնության ուժերի անձեռակերտ բացօթյա պարզ պաշտամունքային վայրեր էին: Իրանում նման սրբատեղիները կոչվում էին *այադանա*, Հին Հունաստանում՝ *տեմենոս*, որոնք հիմնականում բնակավայրերից հեռու էին, նաև լեռներում, բարձունքների վրա և ներկայացված էին բազիլիներով: Այդպիսին էին նաև միհրական սրբավայրերը՝ մեհյանները, որոնց բնորոշ էին համապատասխան ուխտագնացություններ:

Այս տեսանկյունից Գառնիի տաճարի միհրական լինելու հանգամանքը կարող է պատասխան տալ այն հարցին, թե ինչ գործ ունի այդ տեմենոսի տարածքում վիշապաքարը, որի վրա ուրարտական արքա Արգիշտի I-ը Ք.ա. VIII դ. պիտի թողներ իր սեպագիր արձանագրությունը:

Հաջողված է հեղինակի այն կարծիքը, թե եղանակների փոփոխության հետ վիշապաքարը կարող էր բարձրացվել և իջեցվել, իսկ իջեցված վիճակում, սրբազան խնջույքների ժամանակ, օգտագործվեր որպես գոհասեղան կամ ցլի միսը ճաշակելու համար նախատեսված սեղան: Համենայն դեպս, վերջին շրջանի մեր պեղումները Արագածի հարավային բարձունքներում (Տիրինկատար) ցույց են տալիս, որ այդ կոթողները կարող էին բարձրացվել և իջեցվել ու նույնիսկ՝ թաղվել:

Չընդունելով հեղինակի տեսակետը վիշապաքարերի ոչ լիարժեք արվեստի գործ լինելու մասին, կարծում ենք, որ շատ ճիշտ է այդ կոթողները կոնցեպտուալիստական արվեստի տեսանկյունից դիտարկելը: Ընդհանրա-

պես, պարզ մոնումենտալիզմը, խորհրդանշանային մոտեցումը, ավելորդ ձևերի բացակայությունը Հայկական լեռնաշխարհի բոլոր ժամանակաշրջանների արվեստի կարևորագույն առանձնահատկությունն են:

Վիշապները և դրանց մարմնավորում վիշապաքարերն այն բացառիկ հուշարձաններն են, որոնց մասին հիշողությունն արտացոլված է հայկական էպոսում և հեքիաթներում: Այս իմաստով հեղինակի առասպելական սյուժեների համեմատությունները վիշապաքարերի հետ լիովին արդարացված են:

Այստեղ, լրացնելով հեղինակին, կցանկանայինք շեշտել, որ միհրականության ցլա/վիշապային կողմ որոշակի համադրության եզրեր ունի զրադաշտականության հետ: Ժ. Դյումեզիլը իր «Հնդեվրոպացիների գերագույն աստվածները» հայտնի գրքում (ռուսերեն թարգմանությունը լույս է տեսել Մոսկվայում, 1986 թ.) ցույց է տալիս, որ Ահուրամազդայի ստեղծած և Զրադաշտին ենթարկվող դրական «ցլի ոգին» էական դեր է խաղում այս կրոնական համակարգում: Ինչպես միհրականության մեջ, այդ նախնական ցլի մահվանից հետո նրա արյունից առաջանում է խաղողի վազը: Զրադաշտը «ցուլ» է անվանում նրանց, ովքեր արարում են աստվածության կամքը: Գուպատշահը՝ զրադաշտականության հոգևոր հայրը նախահայրենիք Արիանա վեջայից, մարդացու է, որ միշտ ծովի ափին է, որտեղ զոհ է մատուցում և օրհնված ջրով հեղումներ իրականացնում: Նրա ընկերը՝ Սրոշը, չար ուժերի դեմ պայքարողն է, հոգևոր և աշխարհիկ հասարակության հավասարակշռողը, նույնպես կիսացու է և զոհաբերություններ ու հեղումներ է անում սուրբ ջրով: Նա թռչնի (աքլորի) միջոցով մարդկանց կոչում է խոհեմության. եթե չլինեն այդ զոհաբերությունները, աշխարհը կկորցնի իր հավասարակշռությունը (էջ 105-108): Ամեն գիշեր Ահրիմանն ուղարկում է իր ուժերին իրականացնելու կործանող գործառույթը. դեպի ծովերը՝ դրանց չորացնելու, դեպի սպիտակ համան՝ որ մեռյալները չկենդանանան, դեպի լեռները՝ քանի որ վերջիններս կազմում են երկրի առանցքը: Այս ամենը կանխելը ձկան և թռչնի հիմնական խնդիրն է: Վերջիններս ի հայտ են գալիս, ի թիվս այլոց, խառնէակների և վիշապների կերպարներում: Այսպես, գերբնական ուժ ունեցող Կարա ծուկը բնակվում է ծովի խորքերում և ջրային կենդանիներից ամենահարգվածն է: Նա մասամբ կապվում է ամպրոպի աստվածության հետ, իսկ նրա ինքնությունը սահմանվում է որպես «Յլաձուկ» (Gāw-Māhik), որի գոռոցը վերացնում է չարի նկատմամբ վախը: Նրա հիմնական գործառույթը հավերժության համան կրող Կենաց ծառը Ահրիմանից պահպանելն է: Կենաց ծառի հետ են առնչվում նաև թռչունները, օրինակ՝ Սեն-Մուրվ թռչունը, որը նստում է համաշխարհային ծովի մեջտեղում գտնվող կենաց ծառի վրա, իսկ նրա շարժումներից ընկած սերմերը տարածվելով՝ նպաստում են անձրևի բազմապատկմանը (այս մասին հմմտ. H.W. Haussig, Wörterbuch der Mythologie, Bd. IV, Stuttgart, 1974/1982, S. 343-347):

Ավելացնենք նաև, որ միհրականության նման զրադաշտականությանը ևս սկզբնապես տաճարական կառույցներ բնորոշ չեն եղել, պաշտամունքն ու զոհաբերությունները (արևին, լուսին, հողին, կրակին, ջրին, քամիներին) ի-

րականացվել են բաց երկնքի տակ՝ լեռներում. գերագույն աստվածությունների (Արամազդի և Անահիտի) պաշտամունքային կենտրոնները նույնպես գտնվել են բարձր լեռներում, որի մասին վկայում է արդեն Հերոդոտոսը (I, 131):

Հիշյալ նկարագրությունները, ընդհուպ Տլաձկան բացառիկ հիշատակությունը, էապես զուգադրելի են վիշապաքարերի վերաբերյալ հայտնի հնագիտական տվյալների հետ: Ընդ որում, թեև զրադաշտականության և միհրականության վիշապային ընկալումներում կան որոշակի տարբերություններ (օրինակ՝ ցուլը զրադաշտականության մեջ զուտ դրական կերպար է, հակառակորդ չունի, բացակայում են ցլասպանության սյուժեն և կենդանակերպային բնույթը), այնուամենայնիվ, բազմաթիվ առանձնահատկություններով դրանք համընկնում են: Մի կողմից՝ այդ ընկալումների զգալի մասը կարող է ունենալ արխայիկ/նախնական/համընդհանուր՝ հնդիրանական կամ հնդեվրոպական գուցե նաև սուբստրատային ծագում: Մյուս կողմից էլ հայտնի է, որ զրադաշտականությունն ինքն առատորեն օգտվել է Միհրի պաշտամունքից, որն իր արևային դիցաբանությամբ, անշուշտ, ավելի արխայիկ է: Եվ ահա այստեղ է, որ կարևորվում է ժողովրդական միհրապաշտության ենթաշերտը, որը պահպանվել է հայկական հիշողության մեջ և արտացոլված է գլխավորապես «Սասնա ծռեր»-ում և հրաշապատում հեքիաթում, որտեղ, ինչպես գրում է Գ. Մարտոյանը իր «Օձավիշապ արևի դիցաբանությունը» գրքում (Երևան, 2001, էջ 11), «վիշապը ներկայացնում է բնության մահացման և տիեզերական քաոսային ուժեր: Նրա պարտությամբ (քարացմամբ) սկսվում է նոր տարվա տոնակատարությունը, և աշխարհում հաստատվում կարգ ու կանոնը: Ժողովուրդը, վիշապաքարեր կանգնեցնելով, այդպես է կամենում տեսնել վիշապին, որն ամբողջ ձմեռ իրենց էր քարացած պահել»:

Քննարկվող աշխատանքը զերծ չէ նաև որոշ բացթողումներից: Այսպես, հիմնականում հղված չեն շրջանառվող նկարները: Գրականության ցանկը միասնական ձևով չէ տրված՝ մեկ գրվում են հեղինակների անունները, մեկ սկզբնատառերը (որը դժվարացնում է նրանից օգտվելը): Աշխատանքն ունի մեծ վերջաբան, բայց ոչ եզրակացություններ. դրանք կարևոր կարող էին լինել հեղինակի վերջնական պատկերացումները հասկանալու համար: Աշխատանքն էապես կշահեր, եթե լինեին անվանացանկեր: Օգտագործված չեն թեմային ուղղակիորեն վերաբերող մի շարք հեղինակների աշխատանքներ՝ հայկական հեքիաթի (Ս. Գուլակյան, Ե. Ջաքարյան, Թ. Հայրապետյան), էպոսի (Գր. Գրիգորյան, Ա. Սահակյան), նախաքրիստոնեական կրոնի (Ն. Էմին, Ա. Կարիեր, Կ. Կոստանյանց) համատեքստում: Այնուամենայնիվ, հեղինակին հաջողվել է նկատել միհրականության, վիշապաքարերի և վերջիններիս մշակութային համատեքստի մի շարք կարևոր առանձնահատկություններ և էական լրացումներ կատարել:

ԱՐՄԵՆ ԲՈՐՈՒՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ 16-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում 2019 թ. նոյեմբերի 20-22-ը տեղի ունեցավ երիտասարդ գիտնականների 16-րդ միջազգային գիտաժողովը՝ «*Հնագիտություն, ազգաբանություն, բանագիտություն: Միջգիտակարգային մոտեցումներ*» խորագրով: Գիտաժողովի հիմնական նպատակն էր Հայաստանի ու այլ երկրների երիտասարդ հետազոտողներին համախմբելը՝ ներկայացնելու իրենց հետազոտության նյութը և արդյունքները, փոխանակելու մասնագիտական փորձառությունն ու գիտելիքները տվյալ դաշտի այլ հետազոտողների հետ: Գիտաժողովը կրում էր միջմասնագիտական բնույթ՝ ընդգրկելով հնագիտություն՝ իր հարակից ենթաճյուղերով, նաև պատմություն, աղբյուրագիտություն, երկրաբանություն, ազգագրություն, մշակութային և սոցիալական մարդաբանություն, բանագիտություն գիտաճյուղերը:

Եռօրյա գիտաժողովի 10 նիստերի ընթացքում լսվեց 37 զեկուցում, որոնք ներկայացրին երիտասարդ հետազոտողներ Հայաստանի (մեծ մասամբ ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) և արտասահմանի (Վրաստան, Ռուսաստան, Իրան) տարբեր գիտական հաստատություններից:

Առաջին օրը բացման խոսքով հանդես եկավ և ներկաներին ողջունեց ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը: Գիտաժողովի մասնակիցներին ողջունի խոսք ուղղեց նաև ինստիտուտի երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ Աստղիկ Բաբաջանյանը:

Նստաշրջանի ընթացքում լսվեցին զեկուցումներ՝ Հայաստանի և տարածաշրջանի հնագիտությանը և հարակից ոլորտներին առնչվող ուսումնասիրությունների ընդգրկմամբ՝ նյութը ներկայացնելով ժամանակագրական սկզբունքով՝ սկսած վաղ բրոնզի դարից մինչև ուշ միջնադար: Առաջին երեք նիստերը նվիրված էին բրոնզ-երկաթիդարյան հասարակությանը վերաբերող տարաբնույթ հարցերի քննարկմանը՝ նախկինում պեղված նյութերի նորովի մեկնաբանմամբ: Զեկուցումների մի մասն էլ վերաբերում էր նորահայտ հուշարձանների ներկայացմանը: Հնչեցին ելույթներ հետևյալ թեմաներով՝ «*Օդապարուկների» առաջացման օջախի և տարածման խնդիրը*» (Մարիամ Շախմուրադյան, ՀԱԻ), «*Կառնուրի կուր-արաքսյան բնակատեղիի և դամբարանադաշտը՝ ըստ 2016-2017 թթ. պեղումների արդյունքների*» (Լևոն Աղիկյան, ՀԱԻ), «*Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան բնակատեղիի օբսիդիանի աղբյուրները՝ pXRF վերլուծությամբ*» (Ալեքսան Զուհարյան, ՀԱԻ), «*Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունը*» (Մարիամ Սարիբեկյան, ՀԱԻ), «*Անտրոնների կառավարման ռազմավարությունը տեղամարտի և կոլիսիոյան մշակույթներում*» (Քեթևան Դավիթաշվիլի, Թբիլիսիի պետական համալսարան), «*Կիկլոսյան ամրոցների ֆենոմենը՝ Արագածի հարավային և*

հարավարևելյան լանջերի ամրոցների օրինակով» (Հենրիկ Դանիելյան, անկախ հետազոտող), «Արարարյան դաշտի հյուսիսը եզերող աշտարակապիպ կառույցները» (Լևոն Մկրտչյան, Մեծամոր պատմահնագիտական արգելոց-թանգարան), «Ռեզիդենցիայի դամբարաններն՝ ըստ Լորուրի հողեր դամբարանադաշտի տվյալների (մ.թ.ա. 2-րդ հազ. վերջ-1-ին հազ. 1-ին քառ.)» (Անի Սարատիկյան, ՀԱԻ), «Անվավոր փոխադրամիջոցին պատկանող մի առարկայի՝ երիթակի շուրջ: Հնագիտական և ծիսական համալիրների վերականգնման փորձ» (Բենիկ Վարդանյան, ՀԱԻ), «Բրոնզե գոյիներ պարունակող դամբանների սոցիալ-ժողովրդագրական ուսումնասիրության հիմնախնդիրները» (Սոնա Մանուկյան, ՀԱԻ), «Նոր Կարմիրավան գյուղի 2016-2018 թթ. պեղումների հիմնական արդյունքները» (Նժդեհ Երանյան, ՀԱԻ), «Կապանի Շահումյան բանավանի դամբարանադաշտի մեկուկես հավաքածուն և դրա վերականգնման առանձնահատկությունները» (Ներսես Մամիկոնյան և այլք, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ):

Հնագիտության բաժնի վերջին երկու նիստերը վերաբերում էին անտիկ, միջնադարյան և նոր ժամանակաշրջանների նյութական մշակույթին. «Արցախի Տիգրանակերպի անտիկ դրոշմազարդ խեցեղենը» (Արմինե Գաբրիելյան, ՀԱԻ), «Հայաստանի միջնադարյան քարե տապանները» (Դիանա Միրիջանյան, ՀԱԻ), «Վարդանանց սրբավայրեր. սամանումը և ուսումնասիրության խնդիրները» (Տիգրան Ալեքսանյան, ՀԱԻ), «Պատմական Սոթքի Արեգունի գավառակի միջնադարյան հուշարձանները» (Ավետիս Գրիգորյան, ՀԱԻ), «Պատմական պանթեոններում թաղումների անհատականացման մեթոդները» (Ելենա Վասիլևա, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության ինստիտուտ), «Տաթևի Մեծ անապատի վիմագրերը» (Արսեն Հարությունյան, ՀԱԻ) և «Արարարյան դաշտի հողաշեն ժառանգությունը» (Համազասպ Աբրահամյան, ԵՊՀ): Այնուհետև գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին ազգաբանության ուղղությամբ՝ բաժանվելով թեմատիկ խմբերի: Առաջին խմբում միավորվեցին հետևյալ զեկուցումները. «Ֆորմալ և ոչ ֆորմալ կրոնական ինքնությունը և պրակտիկան: Ինչ է նշանակում միաժամանակ լինել եզդի և ուղղափառ քրիստոնյա» (Բորիս Կոմախիձե, Թբիլիսիի պետական համալսարան), «Ավանդական եզդիական համայնքներում կրոնափոխված եզդիները» (Սեյդեդինասիմ Ֆաթեմի, Հայ-ռուսական համալսարան), «Կրոնական վարքագծի որոշ առանձնահատկությունները Թեհրանի և Լոս Անջելեսի հայկական համայնքներում» (Լուսինե Տանաջյան, ՀԱԻ):

Սիյուրքին առնչվող հարցերը քննարկվեցին «Հայրենիքի վերստեղծումը սիյուրքում. Լոս Անջելեսի հայ համայնքի օրինակով» (Սոնա Ներսիսյան, ՀԱԻ) և «Աշխարհաբային միգրացիայի մեկնած հայ կանանց դերային առանձնահատկություններն ընդհանրում» (Սոնա Մելիքջանյան, ՀԱԻ) զեկուցումներում:

Հաջորդ թեմատիկ խմբում ներկայացվեցին «Կրթության դերը սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի գործընթացում» (Գայանե Հա-

կորյան, ՀԱԻ), «Կրթությունը՝ Երևանի երիտասարդության արժեքային կողմնորոշիչների համակարգում» (Սյուզաննա Բարսեղյան, ՀԱԻ), «Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը» (Լուսինե Անգելուշ, ՀԱԻ): Շարունակելով քաղաքային մշակույթի թեման հանրային տարածքների ընկալման և օգտագործման առումով՝ հնչեցին «Երևան քաղաքի նոր հանրային տարածքները՝ 2018 թ. քաղաքական փոփոխություններից հետո» (Լևոն Մարգարյան, ՀԱԻ) «Բարեարներն ու բարեգործությունը հեղինակաբարձային Հայաստանի հուշարձանային քաղաքականության համարեքստում» (Գարիկ Աթանեսյան, ՀԱԻ), «Արտմային թանգարանից եկեղեցի: Խորհրդային ուրուպիան և հեղինակաբարձային փոխակերպումները Մեծամոր քաղաքում» (Համլետ Մելքումյան, ՀԱԻ) զեկուցումները:

Առանձին թեմաներ առնչվում էին ազգաբանության/պատմությանը, ինչպես օրինակ՝ «Գրաֆիկի երևույթը միջնադարյան վիմագրերում» (Ամալյա Դիլանյան, Հայկ Հակոբյան, ՀԱԻ), «Տնտեսական զբաղմունքները ուշմիջնադարյան Հայաստանում՝ ըստ 17-րդ դարի պատմագիրների. ազգագրական դիտանկյուն» (Քրիստինե Պապիկյան, ՀԱԻ), «Մեղրով հաղորդության արխիվ դրսևորումները հայոց եկեղեցական և ժողովրդական ծիսակարգերում» (Հասմիկ Աբրահամյան, ՀԱԻ), «Մահը համացանցում. Սգի ու վշտի նոր պրակտիկաները ֆեյսբուքում» (Սմբատ Հակոբյան, ՀԱԻ):

Վերջին նիստում ներկայացվեցին բանագիտական զեկուցումներ՝ «Հացի հետ կապված ծիսախորհրդանշային դրսևորումները հայ բանավոր ավանդության մեջ» (Ալինա Կիրակոսյան, ՀԱԻ), «Կենդանիները հեքիաթներում ու հավատալիքներում» (Լիլիթ Մկրտումյան, ՀԱԻ) և «Ծիսականացումը «Սասնա ծռեր» վեպի կատարման մեջ» (Աննա Պողոսյան, ՀԱԻ):

Յուրաքանչյուր նիստի ավարտին ակտիվ քննարկումներով, խորհուրդներով ու դիտողություններով հանդես եկան հնագիտության և ազգագրության տարբեր ոլորտների փորձառու մասնագետները:

Գիտաժողովի փակմանը ելույթ ունեցան ինստիտուտի տնօրեն Պ. Ավետիսյանը, փոխտնօրեն Ա. Բոբոխյանը, ԳԱԱ թղթակից անդամ Լ. Աբրահամյանը: Տարբեր խնդիրների լուսաբանումը ժամանակի ու տարածության մեջ հղեց այն առաջարկը, որ առաջիկայում կազմակերպվեն թեմատիկ գիտաժողովներ՝ բարձրացրած հարցերն ավելի նեղ մասնագիտական ու ավելի հանգամանորեն վերլուծելու/քննարկելու համար: Ինստիտուտի տնօրենը ևս մեկ անգամ ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ նշեց, որ այսօր երիտասարդ հետազոտողների ներկայացրած թեմաները և դրանց նորովի մոտեցումները բարձր է գնահատում, քանզի դրանք շատ դեպքերում ուսանելի են նույնիսկ ավագ սերնդի համար:

ԱՍՏԴԻԿ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

АВЕТИК ИСААКЯН И РОССИЯ
(К 145-летию со дня рождения поэта)

Великие поэты не принадлежат только породившему их народу – они становятся достоянием всего мира, уникальной частицей всеобщей мировой культуры. Судьба выдающегося Мастера новой армянской литературы Аветика Исаакяна (1875-1957) показательна как пример взаимовлияния и взаимообогащения литератур, как пример плодотворного воздействия традиций, в частности, русской литературы на многовековую армянскую.

Имя Ав. Исаакяна приобрело широкую известность в начале XX века в основном благодаря переводам. О великом поэте Армении одними из первых в литературной критике написали Юрий Веселовский, Александр Блок и Валерий Брюсов. Творчеству армянского писателя, его связям с Россией и русской литературой позднее были посвящены статьи, эссе, очерки и заметки Николая Тихонова, Ильи Эренбурга, Павла Антокольского, Корнея Чуковского, Сергея Шервинского, Веры Звягинцевой и многих других. Все это сыграло исключительную роль в популяризации творчества Ав. Исаакяна в России.

Молодой Исаакян еще в 1894 г. писал в своем «Дневнике»: «Под кровительством русских мы как одно целое будем развиваться и крепнуть, при том, что в самой России в один прекрасный день установится конституционная власть. И это будет замечательно... Я пролью свою кровь под знаменами России и спасу свою родину от огня, резни и голода. Надо проповедовать это, и надо поддерживать Россию». Эти пламенные строки юноши – первые, где сформулирована подсказанная жизнью и кровавыми, уже чреватými будущим геноцидом событиями в Турецкой Армении девяностых годов XIX века, мысль о добровольном союзе Армении с Россией. Они поражают точностью исторического предвидения, глубиной и реалистической трезвостью, опираются на многовековой опыт многострадального народа, столетиями лишённого государственности и все более рассеивающегося по свету. А патриоту родины Аветику еще нет и двадцати лет от роду...

Ав. Исаакян, как и другие видные деятели армянской литературы, прекрасно осознавал огромную разницу между собственно русским народом, передовой прослойкой его интеллигенции и проводившим жесткую и по-

рой вероломную колониальную политику подавления национального духа и идеи независимости самодержавием, душившим даже маломальские проявления свободомыслия армян в любом уголке своей могущественной империи и порой входившим в роковые для армян сделки с вековечным врагом Армении – Турцией. И тем не менее поэт был уверен, что заветы Исаэла Ори, Нерсеса Аштаракеци, Хачатура Абовяна, Микаэла Налбандяна и других видных патриотически мыслящих деятелей не устарели: союз с Россией казался ему единственным условием существования родного армянского народа, находящегося по воле судьбы на стыке враждующих веками миров, – христианского и радикального мусульманского... И веками любой неверный шаг стоил Армении моря пролитой крови и жестокого насилия, невосполнимых людских и территориальных потерь. Он мудро разделял зерна высокой российской духовности от плевел развратной политики российского самодержавия. В итоге духовная Россия восторжествовала в сердце армянского поэта.

Русские переводы поэзии Аветика Исаакяна – одна из интереснейших страниц многовековых армяно-русских отношений, в частности, литературных связей, представленная выдающимися поэтами своего времени: Александром Блоком, Валерием Брюсовым, Вячеславом Ивановым, Константином Бальмонтом, Борисом Пастернаком, Анной Ахматовой, Николаем Тихоновым, Павлом Антокольским, Верой Звягинцевой и более поздними переводчиками.

Важной вехой в деле издания Ав. Исаакяна на русском стал 1907 год, когда в Москве вышел в свет восторженно принятый обществом сборник «Армянская муза» с большой подборкой стихотворений поэта, а затем и его первая книга на русском языке «Цветы Араза». Среди удачных работ – перевод И. Буниным стихотворения «Моя душа объята тьмой полночной», знаковые переводы Брюсова и Блока в антологии «Поэзия Армении» (1916), с которой, собственно, и начинается полноценный «русский Исаакян».

Брюсов перевел для антологии поэму «Абул Ала Маари», стихотворения «Сорванную розу ветке не вернуть», «Твоих бровей два сумрачных луча», «Безвестна, безымянна, позабыта» и др. Со временем именно брюсовский перевод поэмы «Абул Ала Маари» стал, по мнению критики, своеобразным «литературным памятником, вошедшим в золотой фонд русской переводческой культуры», хотя есть и другие, более поздние оригинальные варианты (например, Павел Антокольский). Высоко оценил труд Брюсова и сам Исаакян.

Александр Блок занимает особое место в поэтической жизни Исаакяна. Образы поэзии армянского поэта, ее национальные черты, художе-

ственные особенности преломлялись в творчестве Блока, входили в его поэтическую систему, определяли типологическую общность поэтических миров обоих поэтов, тот внутренний нерв, который связывал их. Широко известна оценка Блока поэзии Исаакяна: **«Исаакян – поэт первоклассный. Может быть, такого светлого и непосредственного таланта теперь во всей Европе нет»**¹. Это было сказано еще в 1916 году о сыне народа, только что пережившего ужас Геноцида в Османской империи. Народа полувырезанного, но не побежденного ни мечом, ни словом! К блоковским переводам армянский поэт относился как к собственным произведениям, и в новых русских изданиях своих книг всегда предпочитал видеть именно переводы Блока. Среди них – «От родимой страны удалился», «Мне грезится: вечер мирен и тих», «Был бы на Аразе у меня баштан», «Быстролетный и черный орел», «Уж солнце за вершиной гор», «Караван мой бренчит и плетется», «Я увидел во сне: колыхаясь, виясь», «Да, я знаю всегда – есть чужая страна», «Словно молнии луч, словно гром из туч», «Ночью в саду у меня», «В разливе утренних лучей», «Схороните, когда я умру». Они стали для Исаакяна своеобразным эталоном художественности при оценке последующих русских переводов его поэзии.

Замечательны переводы Н. Тихонова, весьма удачно представившего русскому читателю такие стихи армянского поэта, как «Колокол свободы», «Эй, отчизна-джан, как прекрасна ты», «Вишневый цвет снегов белей» и др. Примечательны переводы, выполненные Б. Пастернаком, который выбрал лишь стихотворения армянского поэта, перекликавшиеся с его собственными душевными переживаниями, духовно близкие ему. Среди них – «Душа – перелетная бедная птица», «У кого так поет ретивое», «Песня Заро».

Наиболее удачные переводы поэзии Ав. Исаакяна по праву вошли в сокровищницу русского переводческого искусства. Все русские поэты, когда-либо переводившие Исаакяна, были околдованы совершенством, философской мудростью, лаконичностью, виртуозностью и красочностью его великой поэзии. Еще в начале XX века Валерий Брюсов, близко ознакомившись с творчеством Исаакяна при работе над антологией «Поэзия Армении», высоко оценил армянского поэта и включил его вместе с Иоаннисианом и Туманяном в яркое «трехзвездие» на небе армянской литературы. А в советские годы Николай Тихонов, очарованный гением всенародно любимого художника слова Армении, написал в эмоциональном порыве стихотворение «Аветику Исаакяну».

¹ Авик Исаакян 1988, Аветик Исаакян и Россия. По дневникам, записным книжкам, письмам, пер. с арм., Москва, «Советский писатель», 304 с., с. 232.

*Послушай хор сердечных голосов
На высоте, прозрачным утром рано,
То песня гор, полей, ручьев, лесов,
Иль то звучат стихи Исаакяна.*

*Да, то стихи, что леса веселей,
Звучней ручья и ветра над Севаном,
В них мир труда, любовь родных полей,
Все, что зовут в стихах Исаакяном.*

*И виден нам народный их исток,
Родник студеный, бьющий на поляну,
И календарный шепчет нам листок,
Что вновь весна пришла к Исаакяну.*

*Пускай пришла осеннею тропой,
Мы говорим сквозь даль ее тумана:
Пусть вечно бьет под вечною весной
Нам стиховой родник Исаакяна.*

Армянский поэт в свою очередь в переводческой деятельности обращался к творчеству М. Лермонтова, Н. Некрасова, И. Никитина, С. Надсона, М. Горького. Переводческая работа Ав. Исаакяна над русской поэзией также повлияла на собственно армянскую литературу. Интерес к русской литературе проявился у Исаакяна также в серьезнейших статьях о Крылове, Пушкине, Гоголе, Чехове, Брюсове, Горьком, Шолохове и других выдающихся мастерах художественного слова. Весьма примечательно и символично, что ни об одной иноязычной литературе Исаакян не написал столько, сколько о литературе русской, и ни одна литература, после родной армянской, не нашла в его душе такого живого отклика, как русская.

Одним из первых в армянской критике обратившийся к русской литературе, Исаакян, несомненно, своими статьями и заметками во многом способствовал популяризации ее в Армении, среди интеллигенции, в образованных слоях армянского общества как в России, на Кавказе, так и в Европе.

Основные вехи жизни поэта, несмотря на то что он долго жил в Европе, все же вплетены были в российскую действительность, а «русская ориентация» поэта обусловлена прежде всего его пониманием жизненно важной роли передовой, подлинно демократической и свободной от пут

шовинизма и колониализма России для судеб армянского народа. Надо полагать, духовно-культурное и политическое единение армянского и русского народов, Армении и России рассматривалось Аветиком Исаакяном как реальное, спасительное и животворное не в сиюминутном раскладе, а в долгосрочной исторической перспективе. История бурного и кровавого XX века и довольно сумбурно и непредсказуемо начавшегося на наших глазах XXI века как бы подтверждает предвидения и раздумья выдающегося поэта Армении.

РОБЕРТ БАГДАСАРЯН

Доктор филологических наук

ՎԻՄԱԳՐԵՐԻ ՀՄՈՒՏ ՎԵՐԾԱՆՈՂ (Գագիկ Սարգսյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)



Նկ. 1. Վիմագրագետ Գագիկ Գ. Սարգսյանը Հառիճավանքում (2015 թ.)

Լրացավ անվանի վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանի գործի արժանի հետևորդ Գագիկ Սարգսյանի ծննդյան 70-ամյակը: Արդի հայ վիմագրագիտության երախտավոր, պատմական գիտությունների թեկնածու Գագիկ Գվիդոնի Սարգսյանը ծնվել է 1950 թ. հունվարի 20-ին Երևանում: 1967 թ. ավարտել է Երևանի Ստ. Շահումյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել և 1972 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ պաշտպանելով «Հավուց թառի վիմական արձանագրությունները» խորագրով ավարտական աշխատանքը (ղեկավար՝ Պարույր Մուրադյան):

Ուսումն ավարտելուց անմիջապես հետո Գ. Սարգսյանն աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնում՝ որպես ավագ լաբորանտ (1998-ից՝ ավագ գիտաշխատող): Կարճ ժամանակահատվածում հայոց քարեղեն սկզբնաղբյուրների հմուտ վերծանողն իր ուշադրությունը սևեռում է միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգևոր ու մշակութային կենտրոն Թեղենյաց վանքի ուսումնասիրման խնդրին՝ 1977-ին հրատարակելով իր անդրանիկ հոդվածը՝ «Արձանագրություն Թեղենյաց վանքից»: Հոդվածի խնդրո առարկան Թեղենյաց վանքի համեմատաբար լավ պահպանված միակ շինության՝ գավթի կառուցման վիմագրի ի նորո վերծանումն էր, որի շնորհիվ հստակեցվել է կառուցման Հայոց ՈԾՁ.

(1207) թվականն ու լուսաբանվել մեկենասի՝ Պատրոնիկի որդի Վահրամ Զավուշի եկեղեցաշեն գործունեությունը (ԼՀԳ, 1977, Հ^մ 8, էջ 100-107): Ընդամենը երկու տարի անց՝ 1979 թ., վիմագրագետ Գագիկ Սարգսյանին վստահվեց նշված մենաստանի հնագիտական պեղումները ղեկավարելու պատասխանատու գործը, որն իրականացվեց մինչև 1989 թ., ապա որոշ ընդմիջումներով շարունակվեց մինչև 2011 թ.: Նախքան պեղումները Գ. Սարգսյանն իր առաջին հոդվածում փաստում է, որ «Թեղենյաց վանքի պատմության լուսաբանման առումով արժեքավոր են պահպանված երկու տասնյակից ավելի վիմական արձանագրությունները, որոնցից առ այսօր միայն մեկն է հրատարակվել» (ԼՀԳ, 1977, Հ^մ 8, էջ 101): Պեղումների շնորհիվ հայտնաբերված դարձյալ շուրջ երկու տասնյակ վիմագրերը կարծես թե նախանշեցին վիմագրագետի հետազոտությունների հետագա բուն շրջանակը, այն է՝ պատմական Նիգ և Վարաժնունիք գավառների վիմագրական ժառանգության համալիր ուսումնասիրությունը, որն 1986-ին պաշտպանեց որպես թեկնածուական ատենախոսություն՝ «Պատմական Նիգ և Վարաժնունիք գավառների վիմական արձանագրությունները» (ղեկավար՝ Բաբկեն Առաքելյան): Հետագայում այն պիտի ամբողջացվեր «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի ներկա ՀՀ Կոտայքի մարզն ընդգրկող դեռևս անտիպ պրակում:

Դառնալով Թեղենյաց վանքի հնագիտական պեղումներին՝ կցանկանալիք պատեի առիթն օգտագործելով որոշ մանրամասներ հաղորդել մեծանուն գիտնականի հետազոտությունների վերաբերյալ: 1990 թ. հրատարակված հաշվետու հոդվածում Գ. Սարգսյանն իրեն հատուկ բժախնդրությամբ մանրամասն ներկայացրել է հուշարձանախմբի պեղված շինությունները՝ գրատունը, ենթադրյալ մատենադարանը, Կաթողիկե և վաղմիջնադարյան քառախորան եկեղեցիները, հնագիտական գտածոներն ու նորահայտ վիմագրերը: Վերջիններիս առումով վիմագրագետը նշում է, որ պեղումների շնորհիվ ի հայտ եկած վիմագրերը թեպետ հիմնականում ամբողջական չեն և ունեն հողմահարված հատվածներ (ՊԲՀ, 1990, Հ^մ 2, էջ 188), այդուհանդերձ, հատկապես նվիրատվական և շինարարական բովանդակություն ունեցող բնագրերն էապես նպաստում են այս վանական կենտրոնի միջնադարյան կյանքի լուսաբանմանը:

Գ. Սարգսյանի վիմագրագիտական պրպտումները չեն սահմանափակվել միայն Թեղենյաց վանքի կամ Կոտայք-Արագածոտնի հուշարձանների ուսումնասիրությամբ: Ավելի վաղ, վիմագրերի հետազոտությանը զուգընթաց, նա ակտիվ մասնակցություն է ունեցել միջնադարյան Հայաստանի նշանավոր վանական համալիրների ու եկեղեցիների հնագիտական պեղումներին, ինչպիսիք են Վահանավանքն (1972-1975) ու պատմական Արտաշատը (1973), Սպիտակի վիմափոր բնակավայրը (1977-1979) («Գիտություն և տեխնիկա», 1980, Հ^մ 4, էջ 21-26), հետագայում՝ Գոգարանի (2007-2008) (Aramazd, 2015, vol. IX, issue 1, էջ 41-57) ու Միրաքի (2012-2013) (Aramazd, 2015, vol. IX, issue 1,

էջ 177-193) վաղմիջնադարյան, ինչպես նաև Վարդենիկի Ս. Աստվածածին (2001) (Սարգսյան, Մելքոնյան, Հագեյան, 2003) եկեղեցիները:

Գ. Սարգսյանի ավանդը մեծ է նաև պատմամշակութային հուշարձանների պահպանության խնդիրների հետազոտության բնագավառում, որի առիավատյան 2005 թ. հրատարակած մենագրությունն է: Ներածականում գիտնականն իրավամբ փաստում է այն, որ «յուրաքանչյուր ժողովրդի համար պատմամշակութային ժառանգության նկատմամբ տածած վերաբերմունքն ազգային դիմագծի բնորոշիչ է» (Սարգսյան, 2005):

Մեծանուն գիտնականի գործունեությունը նշանավորվում է նաև մեր նախորդների գիտական ժառանգության արժեքավոր էջերը հրատարակության պատրաստելու կամ վերահրատարակելու շնորհակալ գործով: Սրանցից նշելի են հատկապես երկուսը. մասնագիտությամբ բժիշկ, նշանավոր տեղագիր ու ազգագրագետ Քաջբերունու (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան) «Ճանապարհորդական նկատողություններ» հոդվածաշարը հրատարակվել էր «Փորձ» (1876-1879) և «Արարատ» (1889-1890) պարբերականների իրար հաջորդած տարբեր համարներում: Գագիկ Սարգսյանի, ինչպես նաև հնագետներ Արամ Քալանթարյանի և Հուսիկ Մելքոնյանի աշխատասիրությամբ այն ամբողջացվել է մի գրքում, ծանոթագրվել ու համալրվել անվանացանկերով (Քաջբերունի, 2003): Հնագիտական, վիմագրական, ճարտարապետական ու ազգագրական հարուստ նյութ պարունակող այս աշխատությունը հիրավի մնայուն գործ է բազմաթիվ վանքերի ու եկեղեցիների տեղորոշման, անվանաբանության, հավատալիքների ու սովորույթների և, իհարկե, վիմագիր սկզբնաղբյուրների քննության տեսանկյունից:

Մյուսը հնագետ Աշխարհբեկ Քալանթարի «Վանստան» աշխատության հրատարակությունն է (մասնակցությամբ՝ Հ. Մելքոնյանի), որն ամփոփում է մեծանուն հնագետի՝ Նիկողայոս Մառի առաջարկով դեռևս 1912 թ. իրականացրած հնագիտական պեղումների հետևանքով ի հայտ եկած վիմագրական նյութը՝ 67 արձանագրություն (ևս 9-ը ընդօրինակվել է 1996 թ.՝ Գ. Սարգսյանի և Հ. Մելքոնյանի կողմից վանքում և շրջակայքում ուսումնասիրություններ իրականացնելիս, ընդհանուր՝ 76 վիմագիր): Գ. Սարգսյանի և Հ. Մելքոնյանի հեղինակած «Աշխարհբեկ Քալանթարը վիմագրագետ» իր բնույթով ներածական շարադրանքում գիտնականներն ըստ արժանվույն ներկայացրել են Քալանթարի վիմագրագիտական վաստակը՝ հաստատելով, որ «վիմագիր նյութի հմուտ տիրապետումը նրան հնարավորություն էր տալիս առավելագույնս հիմնավորելու իր հնագիտական, պատմագիտական եզրահանգումները» (Քալանթար, 2007, էջ 99):

Վերոշարադրածից ավելի քան պարզ է, որ Գ. Սարգսյան վիմագրագետի աշխատությունների բուն ատաղձը միջնադարյան Հայաստանի «քարե մատյաններն» են՝ իրենց բազմաբնույթ ու բովանդակալից հարցադրումներով: Իր մի քանի տասնյակ արժեքավոր հոդվածներում Գ. Սարգսյանն անդրադարձել է միջնադարագիտության այնպիսի հարցերի, ինչպիսիք են կուղակ-

կրպակների նվիրաբերումը վանքերին (ՊԲՀ, 1977, Հ^մ 3, էջ 269-276), կանոնաիրավական նորմերի վիճազրական դրսևորումները (ՊԲՀ, 2006, Հ^մ 2, էջ 109-133), ինչպես նաև բազմաթիվ հոգևոր կենտրոնների վիճագրերի համալիր կամ առանձին օրինակների միջոցով ճշտել է դրանց հիմնադրման, նորոգման, հայտնի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների գործունեության և այլ հարցերի առնչվող պատմական իրողություններ: Իբրև այդպիսիք՝ Գ. Սարգսյանի հետազոտությունների շտեմարանում իրենց մնայուն տեղն ունեն Կեչառիսի, Հավուց թաղի, Գիուկ-Բոլորահարի, Չորուտ-Իշխանավանքի, Նորավանքի, Արտավազավանքի, Ջրառատի Ս. Կարապետ եկեղեցու վիճագրերի հիմամբ իրականացված արժեքավոր դիտարկումները:

Ուրախությամբ պետք է արձանագրենք, որ Գագիկ Սարգսյանն այսօր էլ շարունակում է գիտության բնագավառում իր առաքելությունը, և շատ շուտով հայագետների սեղանին կդրվի նրա կազմած «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի հերթական՝ ՀՀ Կոտայքի մարզի 1000-ից ավելի վիճագրերն ամբողջացնող պրակը:

2006-2019 թթ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական գծով փոխտնօրենի պաշտոնն զբաղեցրած Գ. Սարգսյանն այսօր ղեկավարում է նույն ինստիտուտի վիճագրության բաժինը (2011-ից): Ջերմորեն շնորհավորում ենք մեր ուսուցչին ծննդյան 70-ամյակի առթիվ՝ մաղթելով քաջառողջություն և նորանոր բացահայտումներ հայ վիճագրագիտության անդաստանում:

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

К 85-ЛЕТИЮ ЭММЫ ПЕТРОСЯН



Эмма Хачатуровна Петросян родилась 29 декабря 1934 г. в семье историка армянской авиации, гвардии полковника Хачатура Сергеевича Петросянца, в г. Баку. По окончании школы в г. Куйбышеве она поступила в Тбилисский государственный университет на филологический факультет, а позже перевелась на тот же факультет Ереванского государственного университета. В 1957 г. она поступила в аспирантуру Сектора истории и теории искусств (с 1958 г. – Институт Искусств) АН АрмССР. Её руководителем стала выдающийся армянский этнограф и этнохореолог Србуи Степановна Лисициан. С

1960 г. по сей день Эмма Петросян работает в Институте археологии и этнографии Национальной Академии наук.

Эмма Петросян является одной из лучших и достойных учениц и продолжателей дела Србуи Лисициан в области этнографии и этнотанцеведения. В 1969 г. она защитила кандидатскую диссертацию на тему «Театральные и плясовые черты в средневековых армянских миниатюрах» по специальности «театральное искусство». В 1989 г. ей была присуждена научная степень доктора исторических наук за исследование «Ритуальная и театральная зрелищная система армян».

Невозможно перечислить все организованные ею научные экспедиции, в которых она приняла личное участие. Э. Петросян побывала практически во всех районах Армении, а также в целом ряде районов и сёл Нагорно-Карабахской автономной области (1985, 1986 гг., ныне Нагорно-Карабахская Республика), Джавахка, Нахичеванской АССР (1983 г.), в некоторых районах Казахстана по приглашению Ленинградского отделения Института этнографии им. Миклухо-Маклая (Москва). Ее полевые записи отличаются методологически стройным и мастерски построенным опросом информантов – представителей крестьянского населения, описывающих и показывающих образцы народного творчества, рассказывающих о поверьях, обрядах, умением находить к ним правильный подход (а это достаточно сложно), фиксацией огромного по объему материала.

Эмма Петросян – автор более чем 150 статей, посвященных армянской средневековой миниатюре, мифологии, народному театру и танцу,

балету. В активе ученого многочисленные выступления на международных симпозиумах, конгрессах в различных странах мира. Она чтит память своего руководителя – Србуи Лисициан, бережно сохраняя и систематизируя ее архив. Благодаря усилиям Э. Петросян было опубликовано исследование С. Лисициан «Армянские старинные пляски» (где она является составителем и редактором), Ереван, АН Арм. ССР, 1983 (посмертное издание).

Эмма Хачатуровна подготовила новое поколение этнохореологов. И в этой области можно только удивляться её готовности передать своим ученикам, аспирантам не только знания, но и подыскать необходимую литературу, архивные документы и даже «подарить» свои идеи. С 1972 по 1976 г. она читала лекции по истории танца в Государственном педагогическом институте им. Х. Абовяна. С 2002 г. по сей день преподает в Славянском университете этнологию и этнопсихологию.

Научная биография Эммы Петросян включает в себя и редакторскую работу, оппонирование диссертаций, активное участие в деле сохранения истоков армянского танцевального фольклора, в разработку и пропаганду методологии записи танцевального фольклора по системе Лисициан.

Создание ансамблей народного танца – еще одна важная сфера деятельности Эммы Хачатуровны. Особо отметим ансамбль «Васпуракан», созданный на основе аутентичного фольклора в Араратском районе (1969 г.), организацию трех групп по обучению плясового, песенного и словесного фольклора в Республиканском центре эстетического воспитания детей и юношества (1980–1986 гг., Ереван). По программе ЮНЕСКО она руководила проектами по сохранению нематериальных ценностей в регионе Ширак (2002 г.) и «Армянский дудук» (2004 г.), вела теле – и радиопередачи о танцах.

Одним из направлений, являющихся объектом многолетнего и многоаспектного исследования Эммы Хачатуровны, является армянский народный театр. За многие годы ею зафиксированы (и таким образом сохранены для потомков) и проанализированы такие типы и элементы армянского народного театра, которые уже давно позабыты в народе. Применение же сравнительного анализа позволило выявить типологию и различие обрядов, театрализованных игр армян с теми же видами фольклора других народов, что помогает установить сходство, к примеру, ряда армянских и древнегреческих танцев.

В монографии Эммы Петросян «Боги и ритуалы Древней Армении» (Ереван, Зангак-97, 2004) путем многовекторного анализа рассматривает-

ся ритуально-мифологическая и театральнo-зрелищная система древнеармянской цивилизации.

В книге представлена реконструкция ряда древнейших армянских мифов и ритуалов. В центре внимания – основной миф малоазийско-южнобалканского ареала о поединке Громовержца с его Противником. Автор использует широкий спектр ряда гуманитарных наук для восстановления ритуально-мифологической и театральнo-зрелищной системы армян. Метод сравнения армяно-фригийско-греческих мифологем, привлечение данных семитского мира расширяют наши знания о древнейших верованиях и обрядах.

Представлены варианты индоевропейского мифа «Сотворение мира», главные действующие лица которого – бог грозы Торк, его сын дракон и неверная супруга. Ключевые события сюжета – поединок бога грозы с драконом, убийство дракона и сотворение мира из хаоса. Ряд мотивов этого мифа были выявлены армянскими исследователями ранее, но реконструкция древнеармянского ритуала впервые была предложена Э. Петросян (на основе привлечения текстов мифов, заговоров, загадок и песен, содержания танцев, обрядов, театрализованных представлений). Вместе с тем в работе была использована методика структурного анализа, разработанная К. Леви-Строссом, Вяч. Вс. Ивановым, В.Н. Топоровым.

В отзыве выдающегося лингвиста Вяч. Вс. Иванова об исследовании Э. Петросян отмечено: «Работа представляет собой талантливое новаторское исследование, использующее широкий спектр современных методов ряда гуманитарных наук (сравнительное языкознание, история мифологии, театроведение) для получения возможности восстановить обрядовые истоки армянского театра».

В исследовании Эммы Петросян «Праздники армян в контексте европейской культуры» (Ереван, «Тигран Мец», 2012) впервые на русском языке рассмотрены традиционные обряды армян конца XIX – начала XXI вв. Книга имеет четкую структуру: приводится описание христианского праздника согласно сюжету Евангелия, далее – дохристианские и христианские народные варианты обрядов, передававшихся устно из поколения в поколение. Впервые в армянской этнографии автор приводит данные календарных обрядов европейских народов и показывает, что обрядность армян вписывается в круг традиций всего христианского мира. Доказывается, что в ряде случаев у армян сохранились более архаичные варианты обрядов, благодаря чему этнографы могут реконструировать некоторые утерянные страницы традиций европейских народов.

Исследования, посвященные армянскому средневековому искусству, появляются на книжных полках магазинов и библиотек не так уж часто, несмотря на то, что на сегодняшний день этот пласт культуры представляет большой интерес для читателей самых различных профессий. Поэтому книга Эммы Петросян «Театр в средневековых армянских миниатюрах» (Ереван, «Тигран Мец», 2014), безусловно, заслуживает внимания.

Средневековая миниатюра, как объект исследования, заинтересовала Э. Петросян почти с самого начала ее научной деятельности. Несколько аспектов, связанных с выявлением элементов театральной культуры, были представлены в ее первой монографии «Театральные черты в средневековых армянских миниатюрах», опубликованной в сборнике «Армянская этнография и фольклор» (т. 7, 1975 г.).

«Театр в средневековых армянских миниатюрах» – это многоплановое исследование, опирающееся на методы осмысления и интерпретации материалов, принятых в различных областях гуманитарных наук – театроведение (включая танцеведение), этнографию, лингвистику, сравнительное искусствоведение. Объектом исследования являются миниатюры из армянских рукописей XII-XVII вв., в которых, с точки зрения автора, отражены театральные сюжеты.

В девяти основных главах книги – «Хоран как вид исполнительской площадки», «Образцы грима и масок», «Сцены из театральных представлений», «Обычай дрессировки и ряжения в различные образы», «Выступления акробатов, танцоров и комедиантов», «Отражение театрализации в церковных сюжетах», «Танец и некоторые музыкальные инструменты», «Церковная сцена как исполнительская площадка», «Реконструкция структуры средневекового театра» – раскрываются и анализируются три основные темы. Первая из них – устройство сценической площадки в соответствии с тем, как она представлена в армянской средневековой миниатюре, а именно – реальные и мифологические истоки формирования прототипа сценической площадки – хорана. В последующих нескольких разделах книги выявляется специфика грима и масок, ряжение в образы различных животных и фантастических существ, традиционно уходящие в древнейшие времена и связанные с определенными культовыми ритуалами.

Реконструкция облика средневекового светского и, особенно, церковного театра – один из самых интересных разделов исследования, особенно в части сценического воплощения библейских и евангельских сюжетов. Мистерии и миракли, столь распространенные в период средневековья в Западной Европе, согласно автору, были также частью культуры армянского народа, что отразилось в армянской средневековой миниатюре,

хотя по мнению ряда других исследователей, их появление в армянской культуре относится к более позднему периоду, а некоторыми учеными и вовсе опровергается.

Генетическая и типологическая связь церковных ритуалов и обрядов с театрализованными действиями вообще и дохристианского периода, в частности, безусловно, обосновано и убедительно представлена автором.


К несомненным достоинствам исследования относится сравнительный анализ армянской и западноевропейской театральной культуры. И сегодня Эмма Хачатуровна Петросян продолжает свою научно-исследовательскую деятельность в сфере реконструкции истоков Переднеазиатского карнавала.

Поздравим же маститого этнографа, мифолога, доктора исторических наук Эмму Хачатуровну Петросян со славным юбилеем и пожелаем ей здоровья, плодотворной исследовательской деятельности, новых интересных научных публикаций.

САРГСЯН НАЗЕНИК

Доктор искусствоведения

ԳՈՐԾԻ ՆՎԻՐՅԱԼԸ



Հայ ժողովուրդը զրկվեց Հայրենիքի պաշտամունքով ապրող նվիրյալ գավակներից մեկից: Հուշարձանագետ Սամվել Կարապետյանի վաղաժամ մահը ծանր հարված հասցրեց ողջ հայությանը և հայ գիտամշակութային կյանքին:

Հուշարձանագետ, հայրենագետ Սամվել Գևորգի Կարապետյանը աշխարհ էր եկել մի առաքելությամբ՝ տոհմականչի և ազգի աներկյուղ ոգու ծայնը տեղ հասցնելու առաքելությամբ: Հենց ինքը դարձավ նվիրյալ առաքյալն իր իսկ առաքելության:

Այսօր մեզ հետ չէ հայրենի կաճաններով քայլող նվիրյալ հայը, որն արդեն իսկ լեզենդ էր դարձել կենդանության օրոք: Նա ամբողջ կյանքը, կարողությունն ու առողջությունը նվիրեց պաշտելի Հայրենիքին՝ նրա յուրաքանչյուր հատվածում որոնելով հայկական հետքերը, ուսումնասիրելով և բացառիկ ու ցնցող տեղեկություններ հրամցնելով հայությանը:

Սամվել Կարապետյանը ծնվել է 1961 թ. հուլիսի 30-ին Երևանում՝ Վան-Վասպուրականի Արճեշ գավառի Բերդաղ գյուղից սերված Բաղդասար պապի գերդաստանում: Մանկուց փորձում էր ճանաչել Մեծ Հայրենիքից մեզ բաժին

հասած Հայաստանի ամեն սարն ու ձորը, քանդված վանքն ու կանգուն եկեղեցին, ամեն քարն ու թուփը:

1978 թ. ավարտել է Երևանի Միսաք Մանուշյանի անվան N 48 միջնակարգ դպրոցը: Դեռևս դպրոցական տարիներից էր սկսել իր ճամփորդությունները երբեմն դասընկերների հետ, երբեմն էլ՝ մենակ:

Դպրոցն ավարտելուց հետո, անսալով մոր հորդորներին՝ նա փորձում է ուսումը շարունակել Երևանի պետական համալսարանում, սակայն կտրվում է հենց «ԽՍՀՄ պատմություն» առարկայից: Երջանկացած այդ փաստով՝ 17-ամյա պատանին ուսապարկի մեջ է դնում Մակար Բարխուտարյանցի «Արցախ» աշխատությունը և սկսում իր առաջին ճամփորդությունը Հայաստանից դուրս, առաջին անգամ՝ դեպի Արցախ աշխարհ, որն այն ժամանակ Ադրբեջանի կազմում էր: Այդ դաժան և վտանգավոր ժամանակներում նժարի վրա էր դրել՝ աշխատել Վրաստանում, թե՛ Ադրբեջանում: Առաջնայինը համարեց Ադրբեջանը. չէ՞ որ այնտեղ ըստ էության առ ըստ անհետանում էին հայկական հուշարձանները: 1978-1980 թթ. Սամվել Կարապետյանն աշխատել է Երևաննախագիծ ինստիտուտում՝ որպես բանվոր, 1980-1997 թթ.՝ ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գլխավոր վարչությունում (այժմ՝ գործակալություն)՝ որպես տեխնիկ, ավագ տեխնիկ, ճարտարապետ, ավագ ճարտարապետ: 1978 թթ. ի վեր սկսում է զբաղվել Արցախի (այդ թվում՝ Հյուսիսային Արցախի) և Կուրի ձախափնյա շրջանների (Բուն Աղվանք) հուշարձանների և բնակավայրերի պատմության ուսումնասիրությամբ: 1978-1987 թթ.՝ մինչև Արցախյան ազատամարտի սկիզբը, բազում խոչընդոտներով լի ճամփորդությունները հաջորդում էին միմյանց: Նա միակն է, որ ոտքով շրջել է Կուրի ձախ ափին գտնվող հայաբնակ վայրերում և թղթին հանձնել Երկիր մուրակից օր օրի անհետացող հայկական հարյուրավոր պատմական հուշարձանների՝ վանքերի, եկեղեցիների, բերդերի, կամուրջների, տների, աղբյուրների, գերեզմանոցների, խաչքարերի, տապանաքարերի լուսանկարները, չափագրել դրանք: Սամվելը եղել է Հյուսիսային Արցախի գրեթե բոլոր բնակավայրերում: Եվ այդ ամենի համար, ավա՛ղ, շատ թանկ վճարեց. կորցրեց առողջությունը, վատացավ տեսողությունը, էլ չենք խոսում ահռելի նյարդային լարվածության մասին. չէ՞ որ ամեն ճամփորդության ժամանակ օրերով, երբեմն էլ շաբաթներով «հյուրընկալվում» էր «եղբայրական» Ադրբեջանի ազգային անվտանգության նկուղներում:

Մինչև 1990 թ. մեկը մյուսին հաջորդում էին մեծ նվիրյալի գիտարշավները երբեմն շատ լավ, երբեմն բացառապես վատ պայմաններում: 1978-1989 թթ. ընթացքում Սամվելը խորհրդային Ադրբեջանի տարածքում կատարել է մոտ 40 ճամփորդություն:

Նշենք նաև, որ մինևույն հետաքրքրությունը և նպատակն ուներ ևս մեկ նվիրյալ հայ՝ Գերմանիայում բնակվող ճարտարապետ Արմեն Հախնազարյանը: Իրարից անկախ և առանց իրար ճանաչելու՝ երկու հայորդիները նույն աշխատանքն էին կատարում, մեկը՝ Թուրքիայում (Արևմտյան Հայաստան)

տան և Կիլիկիա), մյուսը՝ Վրաստանում և Ադրբեջանում: Երկուսն էլ «հայկական հուշարձանների որս» էին անում, փորձում ժամանակից առաջ ընկնել և բեկոր առ բեկոր հավաքել ամեն թույն վանդալների ձեռքով ոչնչացվող հայկական արժեքները: Արմեն Հախնազարյանն արդեն հասցրել էր թուրքական պետության համար կոչվել «անցանկալի անձ», և արգելվել էր նրա մուտքն այդ երկիր: Տարիներ հետո՝ 2015 թ., նույն բախտին էր արժանանալու նաև Սամվել Կարապետյանը, այս անգամ՝ եղբայրական Վրաստանում:

Օրերից մի օր նախախնամությունը պիտի ծանոթացներ երկու հայրենանվեր անձնավորություններին: Սկսած 1990 թ.՝ Արմեն Հախնազարյանն ու Սամվել Կարապետյանը որոշում են համագործակցել:

1990-1993 թթ. հուշարձանագետն անցնում է Վրաստան, Ջավախքից հասնում Բոլնիս, Մառնեուլ, Դմանիս, ինչպես նաև Ախալցխա և Կախեթ: Այստեղ ևս լուսանկարում է դեռևս չոչնչացված հայկական հետքերը, կարդում արձանագրությունները, փշուր առ փշուր ամբարում և թղթին հանձնում յուրաքանչյուր սրբազան մասունք:

Արցախյան ազատամարտի ժամանակ, երբ մեկը մյուսի հետևից ազատագրվում էին հայոց շրջանները, Սամվել Կարապետյանը, թողնելով դեպի Վրաստան կատարվող ճամփորդությունները, հաղթանակած զինվորների հետևից մտնում էր Արցախի տվյալ շրջանը, լուսանկարում այն ամենը, ինչ դեռևս չէր հոշոտել թուրքը: Թանկ էր ամեն թույն. չէ՞ որ տարածքները վերադարձնելու շշուկներ կային:

1998 թ. Հայաստանում պետական գրանցում ստանալուց հետո Սամվել Կարապետյանը ստանձնում է դեռևս 1978 թ. Գերմանիայում Արմեն Հախնազարյանի հիմնած Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (հետագայում՝ հիմնադրամ) Երևանյան գրասենյակի տնօրենի պարտականությունները՝ դրանք սիրով կատարելով մինչև կյանքի վերջը:

2000 թ. փետրվարի 22-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն երջանկահիշատակ Լևոն Հախվերդյանի բարի կամեցողությամբ Արվեստի ինստիտուտի հարկաբաժնում տեղի է ունենում ՀՃՈՒ հ/կ գրասենյակի բացումը: Անվանի հուշարձանագետն օրավուր ծավալվող աշխատանքները պատշաճ մակարդակով առաջ տանելու համար ներգրավում է մասնագետների, ինչպես նաև սկսնակների: Սկսվում են տասնամյակների ընթացքում կուտակված բազմաթիվ նեգատիվների, պոզիտիվների, լուսանկարների, չափագրությունների, քարտեզների և հարակից այլ նյութերի թվայնացման, մամուլից քաղված և արխիվային նյութերի մշակման աշխատանքները:

Շուրջ տասը տարվա ընթացքում կատարվում են ահռելի աշխատանքներ, բազմաթիվ գիտարշավներ դեպի Արևմտյան Հայաստան, Վրաստան, Իրան, Արցախ, Հյուսիսային Կովկաս, Հնդկաստան և այլուր: Այս ամենի շնորհիվ իրար հետևից լույս են տեսնում նվիրյալ հայորդու աշխատությունները:

Սամվել Կարապետյանը թեև արդեն վատառողջ էր, սակայն որոշել էր շուքով նշել հիմնադրամի՝ Երևանյան գրասենյակի բացման 20-ամյակը: Մեծ

հուզմունքով և հույսով էր սպասում այդ օրվան: Ցավոք սրտի, փետրվար ամիսը կորստաբեր դարձավ հիմնադրամի աշխատակիցների և հայության համար: 2009 թ. փետրվարի 19-ին հավերժացավ Արմեն Հախնազարյանը, իսկ 2020 թ. փետրվարի 27-ին՝ Սամվել Կարապետյանը:

Ողջ կյանքի ընթացքում Սամվել Կարապետյանն արեց ամեն հնարավորն ու անհնարինը: Հեղինակ է ավելի քան 500 հոդվածների, որոնցից շուրջ 100-ը հրատարակվել են Հայաստանի և արտերկրի գիտական հանդեսներում: 1989 թ. եղել է Հայաստանի ճարտարապետությանը նվիրված իտալական շարքի 19-րդ՝ «Ուրարթադ» հատորի համահեղինակներից («Documenti di Architecture Armena»):

Նրա հեղինակած շուրջ երկու տասնյակի հասնող աշխատություններն անվերջ կարելի է թվարկել՝ «Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը» (1997), «Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները» (1998), «Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում» (1999). լույս է տեսել նաև ռուսերեն՝ «Памятники армянской культуры в зоне Нагорного Карабаха» (2000) և անգլերեն՝ "Armenian Cultural Monuments in the Region of Karabagh" (2001), «Թիֆլիսի քաղաքագլուխները» (2003). լույս է տեսել նաև ռուսերեն՝ «Мэры Тифлиса» (2003), «Հյուսիսային Արցախ» (2004). լույս է տեսել նաև անգլերեն՝ "Northern Artsakh" (2007), «Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն», «Հայերը Կախետում» (2004), «Ջավախք» (2006). լույս է տեսել նաև անգլերեն՝ "Javakhk" (2011), «Հուշագրական ժառանգություն», «Անի-1050» (2011), «Ադրբեջանը քաղաքակրթությունից դուրս» (2017) և այլն:

Ս. Կարապետյանի գործունեության թագն ու պսակը, սակայն, կազմում է «Հայաստանի պատմություն» 36-հատորյա գրքաշարը՝ նվիրված Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակի ոգեկոչման 100-ամյակին: Գրքաշարի նպատակն է Հայաստանի պատմությունն առաջին անգամ ներկայացնել գավառ առ գավառ, յուրաքանչյուրը՝ գյուղ առ գյուղ (սրբազան Հայրենիքի 10.000 բնակավայրերը): Հատորներից յուրաքանչյուրը նվիրված է պատմական Հայաստանի (Մեծ և Փոքր Հայքերի) մեկ կամ մի քանի գավառներին: Ցավոք, ցարդ լույս է ընծայվել ընդամենը չորս հատոր՝ հ. Ա «Հայոց ձոր» (2015), հ. Բ «Սալմաստ» (2017). լույս է տեսել նաև անգլերեն՝ "Salmast" (2019), հ. Գ «Արձկե» (2018), հ. Դ «Մռավականք» (2019):

Ազգի նվիրյալ, ազգագրագետ, վիմագրագետ Սամվել Կարապետյանը հզոր կամք և եռանդ ունեցող մշակութային արժեքների պահապանն էր, որ թողեց անչափելի ժառանգություն:

Պարզ ու հասարակ էր, համեստ: Ազնվական կեցվածք ուներ: Ո՛չ կոչումների էր ձգտում, ո՛չ տիտղոսների և աթոռի: Որոշ մարդիկ չէին սիրում նրան ճշմարիտ խոսքի համար: Սակայն նա անաղմուկ և աննկատ շարունակում էր իր գործը: Հասկացողը հասկանում էր, գնահատողը՝ գնահատում:

«Վանքերի տղեն»... այսպես էին կնքել նրա անունը: Չկա առավել մեծ ուրախություն, երբ գնահատանքը տալիս է հասարակ ժողովուրդը: Ամենամեծ կոչումը նրա համար ժողովրդի սերն էր, հարգանքն ու համակրանքը:

Նրան շնորհված տիտղոսներն ու մրցանակները, շքանշանները ևս քիչ չեն, ինչպես, օրինակ, պարգևատրվել է ԼՂՀ կառավարության «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով՝ Ազգային կենսագործունեության և բարգավաճման առաջընթացին նպաստող ակնառու նվաճումների համար (2001), «Հյուսիսային Արցախ» աշխատությունն արժանացել է ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան ամենամյա գրական մրցանակին (2004), Պուրճ Համուտի Հայ կաթողիկե Մեսրոպեան Արուեստից վարժարանի կողմից արժանացել է գնահատանքի և երախտագիտության գրի (2004), Հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում «Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն», «Հայերը Կախսթում» և «Ջավախք» աշխատություններն արժանացել են ՀՀ Նախագահի մրցանակին (2007): Պատմական Հայաստանի տարածքում կատարած ծավալուն ուսումնասիրությունների և հայ ինքնության պահպանության գործում ունեցած բացառիկ ծառայության համար Ս. Կարապետյանը պարգևատրվել է ՀՀ Ազգային ժողովի պատվո մեդալով և Պատմական հուշարձանների հնավայրերի ուսումնասիրման և վերականգնման գործում ունեցած զգալի ավանդի համար՝ ՀՀ Մշակույթի նախարարության պատվոգրով (2008), Հայկյան մրցանակաբաշխության ժամանակ նրան շնորհվել է Հատուկ մրցանակ՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարեիցի միջոցառումների շրջանակում իրականացված՝ «Եղեռն եղեռնից հետո» ծրագրի համար (2015), Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից պարգևատրվել է «Մոմիկ ճարտարապետ» ոսկե մեդալով՝ Հայկական ճարտարապետության ուսումնասիրության և հանրահռչակման գործում ներդրած նշանակալի ավանդի համար (2016) և այլն:

Անդառնալի է ազգանվեր հայրողու կորուստը թե՛ ընտանիքի ու հարազատների, թե՛ ընկերների ու գործընկերների և թե՛ հայրենիքի համար: Նրա ստեղծած գիտական հսկա ժառանգությունը կհավերժի հայկական ճարտարապետության երկնածիրում:

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՃՈՒ հիմնադրամի աշխատակից

Մեծ հայրենասեր, հայ ճարտարապետության նվիրյալ Սամվել Կարապետյանը ծառայեց իր ընտրած գործին՝ ներդնելով մտքի ողջ կարողությունն ու եռանդը: Սերը հայ մշակույթի նկատմամբ Սամվել Կարապետյանի կյանքի տարերքն էր, և նա այն մարմնավորեց իր թողած գիտամշակութային ժառանգության մեջ՝ հարյուրավոր հոդվածների, տասնյակ աշխատությունների և գիրք-ալբոմների տեսքով:

«Լրաբեր հասարակական գիտությունների» խմբագրակազմ

Հայերեն բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփեյան
Ռուսերեն բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седя Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 1012
Ստորագրված է տպագրության 05.06.2020 թ.:
Տպագրական 29.62 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 05.06.2020 г.
29.62 печ. л. Тираж – 200. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Signed for printing 05.06.2020
29.62 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24c
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>
Электронная почта журнала: Iraber@sci.am
Official site of the Journal: <http://Iraber.sci.am>
E.mail of the Journal: Iraber@sci.am